



Կիլիկիայի հայկական թագավորությունը 1198–1375 թթ.



Աղանայի վիլայեթը 20-րդ դարի սկզբին

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՀՐԱԶԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Յ Ե Ր Ի
ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ
ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ
ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ
(1909 թ. ԱՊՐԻԼ)

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2009



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Հեղինակն իր երախտագիտագիտությունն է հայտնում Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հայկական բաժանմունքին և հատկապես հայ մշակույթի նվիրյալ ղեկավար Զավեն Եկավյանին՝ սույն աշխատության տպագրությունը սիրահոմաբ հովանավորելու համար:

Գիրքը հրատարակության է երաշխավորել ԵՊՀ Հայագիտական կենտրոնը

Միմոնյան Հրաչիկ

U 504 Հայերի դանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ).- Եր.: ԵՊՀ հրատարակչություն, 2009, 436 էջ + 96 էջ ներդիր:

Գրքում ներկայացված է Կիլիկիայի հայերի 1909 թ. ապրիլյան ջարդերի ու դրանց առնչված իրադարձությունների պատմությունը: Այդ ջարդը հայ ժողովրդի անօրինակ ճակատագրի, նրա դաժան մարտիրոսության մի նոր ցնցող վկայություն էր: Աշխատության մեջ տեղ են գտել նաև մի շարք վայրերում հայոց ինքնապաշտպանական մարտերի նկարագրությունները:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, պետական ու քաղաքական գործիչների, ընթերցողների լայն շրջանների համար:

ԳՄԴ 63.3 (22)

ISBN 978-5-8084-1075-6 © Միմոնյան Հրաչիկ, 2009 թ.

© ԵՊՀ հրատարակչություն, 2009 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Թուրքական ռոնակալության տակ հայ ժողովուրդն ամբողջ կես հազարամյակ ենթարկված էր դաժան հալածանքների ու ջարդերի: Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ ազգային ու կրոնական անհանդուրժողականությունը հատկապես ցայտուն դրսևորվեց սուլթան Աբդուլ Համիդի՝ ավելի քան երեք տասնամյակ տևած ուժիմի օրոք: Այդ միապետի կամքով էր, որ արևմտահայ (թուրքահայ) ժողովուրդը 1895-96 թթ. ենթարկվեց լայնածավալ կոտորածների, որոնց զոհ գնաց շուրջ 300 հազար մարդ, քարուքանդ եղան ու քայքայվեցին հազարավոր բնտանիքներ, ամայի դարձան Հայաստանի հարյուրավոր բնակավայրեր:

Թվում էր, թե այդ ահավոր ոճրագործությունից հետո պետք է փոքր-ինչ հանդարտվեին ջարդարարների կրքերը: Հայերն սկսեցին այդպես մտածել հատկապես 1908 թ. հուլիսին տեղի ունեցած Օսմանյան հեղափոխությունից հետո, երբ իշխանության գլուխ անցած «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը թուրքիան հռչակեց ազատության, հավասարության և եղբայրության երկիր: Հայ ժողովուրդն անմնացորդ նվիրումով փարվեց օսմանյան պետության վերածնության գործին:

«Եղբայրության» կարգախոսով խանդավառված հայությունը հաղիվ էր սկսել հավատալ ազատ ու ապահով կյանքի կարելիությանը, երբ իր նորածին հույսի միամտության մեջ հանկարծակիի եկավ և Օսմանյան հեղափոխության հաղթանակից ընդամենը 9 ամիս հետո նորից կանգնեց նահատակության իր վաղեմի ճակատագրին դեմահանդիման: Վառվուռն հույսերի ու ակնկալիքների կարճատև հրավառությունից հետո խարված ու ջախջախված պատրանքների վրա փչեց կործանիչ հողմը:

Փրկության բոլոր դռները բախած ու մերժված, բոլոր ելքերը փոր-

ձած, բայց հիասթափված հայությունը դատապարտված էր նոր ահա-
վոր փլուզման:

Իշխանական լծակներ պահպանած համիդականները և երկրի
քաղաքական իրադրությունը տիրապետած «սահմանադրական»
երիտթուրքերը հայերի նկատմամբ հերթական յայնածավալ ոճրա-
գործություն ձեռնարկեցին այս անգամ կայսրության մի առանձին
վերջրած տարածքում:

Հայոց նոր գողգոթայի ասպարեզ եղավ Կիլիկիան: Մանրամասն
մշակված ծրագրով և եղակի դաժանություններով, 1909 թ. ապրիլին այս-
տեղի հայությունն ենթարկվեց արյունալի ջարդի, որը կատարվեց սառ-
նասիրտ հետևողականությամբ ու մարդասպանության բոլոր միջոց-
ների գործադրմամբ: 10-12 օրում կյանքից դրկվեց 30-35 հազար հայ,
ուրիշ հազարավորներ մեռան վերքերից, սովից ու հոգեկան ցնցում-
ներից, շատերը փախան ու ապաստան գտան տարբեր երկրներում:
Իսկ ապրողների սրտերում մինչև մահ մխում էին անբուժելի վերքերը:

Կիլիկիահայերի դարհուրելի ջարդը հայ ժողովրդի անօրինակ ճա-
կատագրի, նրա դաժան մարտիրոսության մի նոր ցնցող վկայություն
էր:

Դրանում ընթերցողը կհամոզվի՝ թերթելով գրքի էջերը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԿԻԼԻԿՅԱՆ ՋԱՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅՆ ԱՂԲՑՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կիլիկիահայերի 1909 թ. ջարդերի պատմությունը գրելիս հե-
ղինակն օգտվել է արխիվային վավերագրերից, հրատարակի-
վրա եղած գրական աղբյուրներից և ժամանակի մամուլից:

Կիլիկյան հայոց ողբերգությունների մասին գրական աղբյուրների
մեծ մասը հուշագրություններ են, որոնք չնչին բացառություն-
ներով, լույս են տեսել կոտորածների տարում (1909 թ.) կամ
դրան հաջորդած երկու-երեք տարիներին (1910-1912 թթ.):

Եվրոպական և ուսական մամուլի տվյալների հիման վրա
1909 թ. Բաքվում ուսերեն լույս տեսավ Շ. Յ. ծածկանունով
հեղինակված «Աղանայի սև օրերը» («Адапские черные дни») գրքույկը,
ուր 40 էջերում տրված է կիլիկյան ջարդերի համառոտ
ուրվագիծը:

Հայության նոր մեծ ողբերգությունների առաջին ընդարձակ
նկարագրողը Սուրեն Պարթևյանն էր (զատրքևոյցի Միսակ
Պարտիզյանյան): Նրա «Կիլիկիան արհաւիրքը» գիրքը (Կ.
Պոլիս, 1909) կիլիկիահայոց ջարդի մասին առաջին հուշագրու-
թյունն է՝ գրված հայրենասեր հայորդու սրտի անեզր տվայ-
տանքով: Այս բացառիկ արժեք ունեցող գիրքը ներկայացնում է
ջարդի ամբողջ դարհուրանքը՝ իր բոլոր սարսափներով ու
քստմենքի պատկերներով: Կոտորածների օրերին հեղինակը
եռանդուն աշխատանքի էր լծվել՝ մահվան երախից փրկելու
կենդանի մնացած աղգակիցներին:

1910 թ. Բոստոնում (ԱՄՆ) լույս տեսավ Աղանայի վիլայեթի

Հայոց թեմակայ առաջնորդ **Մուշեղ եպիսկ. Սերոբյանի** «Ատանայի ջարդը և պատասխանատուները» գիրքը, ուր նա անառարկելի փաստերով ցույց է տվել, որ վիլայեթի կառավարիչներն են հանդիսացել կոտորածի անմիջական կազմակերպիչները:

Ջարդից շատ շանցած՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը մայրաքաղաք Կիլիկիա էր գործուղել նշանավոր գրող ու հասարակական գործիչ **Ջապել Եսայանին**, որը տեղում ծանոթացել էր վերապրածների անտանելի վիճակին, յսել ղժբախտ մարդկանց դառնակսկիծ պատմությունները և այդ բոլորը հոգու մրմուռով ու տաղանդավոր գրչով արտացոլել «Աւերակներուն մէջ» (Կ. Պոլիս, 1910) հուշապատումում:

Նույն 1909 թ., բայց կոտորածներից ամիսներ անց (հոկտեմբեր), Կիլիկիա է գալիս Կ. Պոլսի «Ազգանուէր հայուհեաց ընկերություն» գործուղած **Արշակուհի Թեոդիկը**, որն այդտեղ մնում է բավական երկար և իր տեսածն ու յսածը արտացոլում է «Ամիս մը ի Կիլիկիա. կցկտուր նոթեր» (Կ. Պոլիս, 1910) շուրջ 40 պատկեր պարունակող պատումի մեջ:

«Հայ լեռ: Կարմիր դրուագներ Կիլիկիոյ աղէտէն» (Կ. Պոլիս, 1912) գրքի հեղինակ **Գրիգոր Գուտուլյանն** ընթերցողներին է հանձնել բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ:

Ներսես եպիսկ. Դանիելյանը ջարդի օրերին և հատկապես դրանից հետո բարոյական ու հոգևոր քարոզներով ապավեն է եղել կոտորածից վերապրածներին, հատկապես հայ այրիներին ու որբերին: Իր այդ քարոզների մի մասը նա ղեկավարել է 1912 թ. Կ. Պոլսում տպագրված «Կաթիլ մը ջուր այրած սրտերու» գրքում:

Մեծ արժեք են ներկայացնում այն օրերին Աղանայի ինքնապաշտպանության ղեկավարներից բնիկ հաճրնցի ղեկագործ, 1915-ի եղեռնի նահատակ **Հակոբ Թերզյանի** «Ատանայի կեանքը» (Կ. Պոլիս, 1911) և «Կիլիկիոյ աղէտը» (Կ. Պոլիս, 1912) հուշագրական պատմւմները, որոնք ժամանակին բարձր գնահատականի են արժանացել մի շարք մտավորականների կողմից: Կիլիկիոյ Սահակ կաթողիկոսը գրել է, որ Հ. Թերզյանն «իր ականատեսի նկարագրով և պաշտօնական վկայականներով լուրջ ու արժանահատ պատմագրի մը ծանրախոհ տպաւորութիւնը կը դրոշմէ ամէնուն վրայ: Կիլիկիայի հարազատ

դաւկի մը քրտնաջան, պրպտող, աւերակներու և մոխիրներու տակէն յոյս աշխարհ հանող կենդանի պատկերն է Մեծ եղեռնին, որ մշտնջենաւոր նախատինքր պիտի մնայ քսաներորդ դարու բազմազով քաղաքակրթութեան և անգոյ մարդասիրութեան»: Հակոբ Թերզյանին հասցեագրած նամակում Եղիշե արք. Դուրյանը նշում էր. «Սրտի մեծ վերածմունքով կարգացի «Կիլիկիոյ աղէտ»-ը: Գիրքիդ ճերմակ էջերէն ոչ թէ կարմիր գիծ մըն է որ կ'երկարի, այլ անոր արիւնոտ թերթերուն մէջէն խոտվրով մը կը դիտուի սև ժապաւէնի մը յայն սողոսկումը»: Իսկ Մաղաքիա արք. Օրմանյանը, արժևորելով հեղինակի կատարած գործը, շեշտում էր. «Դուք այ, սիրելի՛, իբրև մօտէն գիտակից մը և խղճամիտ պրպտող մը, ուզեցիք զայն (կոտորածը: - Հ. Ս.) յուսաբանել, և համարձակ կ'ըսեմ թէ լիագոյն և կատարելագոյն աշխատութիւն մը յաջողած էք գլուխ հանել: Դուք ոչ քերթողական արուեստ և ոչ բանաստեղծական թռիչքներ ունիք Ձեր աշխատութեան մէջ, անոնցմէ աւելի ազդու են ստոյգ պատմութիւններ և մանրամասնաւ նկարագրութիւններ ու լիագոյն տեղեկութիւններ, որոնցմով ճոխացած են Ձեր աշխատութեան չորս մասերը...», (տե՛ս Հ. Թերզյանի «Կիլիկիոյ աղէտը» գրքի հավելվածը): 1915 թ. Հակոբ Թերզյանը հայ մտավորականների հետ Կ. Պոլսում ձերբակալվում է, արքորվում Այաչ, ապա Չանդրըրը, ուր և սպանվում է: Ականատեսի ու եռանդուն գործչի ճշմարիտ ու անսխալ դիտարկումներով գրված «Կիլիկիոյ աղէտը» գիրքը սույն աշխատության հեղինակին մեծապես օգնել է ճշգրտելու իրադարձությունների հաջորդականությունը, արժևորելու աղետի օրերին հայ կազմակերպությունների ու անհատների կատարած դերը:

1919 թ. Կ. Պոլսում լույս տեսավ «Ատանայի եղեռնը. տեղեկագիր **Ցակոբ Պապիկեանի**» աշխատասիրությունը, որին հատուկ անդրադարձ կլինի սույն ուսումնասիրություն հետագա էջերում:

Նույն թվականին լույս տեսավ **Վահան Բյուրջճյանի** «Հայկական Կիլիկիա» (Նյու Յորք, 1919) գիրքը՝ ստեղծված խնդրո առարկա թեմային վերաբերող Վենետիկի Մխիթարյանների դանազան հրատարակությունների ուսումնասիրություն հիման վրա:

1922 թ. Կ. Պոլսում լույս տեսավ **Գրիգոր Գուտուլյանի** «Կի-

լիկեան աշխարհագրութիւն» դասագիրքը, որն ուսումնասիրողներին օգնում է ստուգելու տարածաշրջանի առանձին բնակավայրերի տեղագրութիւնը և տեղանունները (տուպոնիմ):

Ուսումնասիրողների համար կարևոր աղբյուր է «Կիլիկեան կսկիծներ, 1903–1915» ժողովածուն (Քեյրութ, 1927), ուր ղետեղված են Կիլիկիո կաթողիկոսական դիվանից հանված վավերագրեր, նամակներ և այլ նյութեր: Ժողովածուի փաստաթղթերի զգալի մասը վերաբերվում է Ադանայի 1909 թ. ջարդերին: Հատկապես մեծ արժեք են ներկայացնում կոտորածներից հետո Կիլիկիայից ծայր առած տարագրութեանը վերաբերող նյութերը:

Կիլիկիայի կոտորածներից ավելի քան 40 տարի անց լույս տեսավ Ադանայի հայ ավետարանականների հոգևոր հովիվ **Վերապատվելի Համբարձում Յ. Աշճյանի** «Ատանայի եղևոնը և Գոնիայէ յուշեր» (Նյու Յորք, 1950) ծավալուն հուշապատումը: Հեղինակն իր պաշտոնի բերումով եղել է իրադարձութիւնների կենտրոնում և ամենայն մանրամասնութեամբ նկարագրել տեղի ունեցած սարսափները, վիշապի ոչ իսլամ կրոնապետների ծավալած աշխույժ գործունեությունը՝ աղետոյաների անտանելի վիճակը որոշ չափով թեթևացնելու ուղղությամբ:

1970 թ. Լիբանանում տպագրվեց **Բյուզանդ Եղիայանի** «Ատանայի հայոց պատմութիւն» մեծածավալ (1061 էջ) աշխատությունը, որի 211–310–րդ էջերը նվիրված են 1909 թ. աղետին: Ուսումնասիրողների ուշադրությունից չպիտի վրիպի **Հակոբ Չոլաքյանի** եռահատոր «Քեսապ» աշխատությունը, որի Ա և Գ հատորներում (Հայեպ, 1995, 2004) էջեր են նվիրված հայարնակ գյուղաքաղաքի 1909 թ. ապրիլյան պատուհասին: Նույն հեղինակի «Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը» (Անթիլիաս, 2006) պատմաաղագրական ուսումնասիրության մեջ անդրադարձ է արված Հայեպի կուսակալության արևմտյան մասում գտնված Անտիոքի վարչական տարածքի Ռուճի հովիտի հայկական բնակավայրերի, նույն հովիտին հարակից Քեսապի ու չրջակա հայ գյուղերի բնակչության կրած տառապանքներին:

Մի առանձին հատված են կազմում Հայեպի վիշապի թիւն և հատկապես դրա կազմում գտնված Ջեյթուն ավանին նվիրված ուսումնասիրությունները և հուշագրությունները: Հիշատակելի

են՝ **Աւետիս Պերպերեան**, Հայոց պատմութիւն (Կ. Պոլիս, 1871), **Յակոբ Յ. Ալլահվերտեան**, Ուլիսիա կամ Ջեյթուն, լեռնային աւանի Կիլիկիա: Նկարագիր տեղական, կենսարանական, բանասիրական և լեզուարանական (Կ. Պոլիս, 1884), **Համբարձում Առաքելեան**, Ջեյթուն: Տեղադրական, աղագրական և վարչական տեսութիւն (Թիֆլիս, 1896), **Մնացական Սեմերճեան** (Ջեյթունցի), Ջեյթունի անցեալէն և ներկայէն (Վիեննա, 1900), **Յակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը (Կ. Պոլիս, 1912), **Մամիկոն Վարժապետեան**, Յուշիկը Ջեյթունի (Մարդուան, 1912), **Էմմանուէլ Ոսկերիչեան**, Կիլիկեան յուշեր (1907–1929 թթ.) (Հայեպ, 1930), **Գրիգոր Հ. Գալուստեան** (Կիլիկեցի), Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Ջեյթուն (Նյու Յորք, 1934), **Միսաք Միսեոեան** (Մ. Ուլնեցի), Պատմութիւն Ջեյթունի (1409–1921) (Լիբանան, 1996):

Նշված ուսումնասիրություններից դատ, սույն աշխատության հեղինակը կրկին ու կրկին անդրադարձել է հայագիտության հսկայի՝ **Հայր Ղևոնդ Ալիշանի** անխոնջ տրնությունների արգասիք՝ համբավաբար ու հրաշակերտ «Միսուան» երկասիրություններ, որը նվիրված է Կիլիկիայի աշխարհագրությանը և Ռուսիայանց կամ Հայակիլիկիո պատմությանը: Այդ ուսումնասիրությունը վիթխարի մի կոթող է, հայ մատենագրության պարճանքներից մեկը, որի մեջ Հայր Ալիշանը մեծ խնամքով ի մի է ժողովել այն բոլոր տեղեկությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապ ունեն Կիլիկիայի պատմության հետ:

Ալիշանի «Միսուանի» խոր ազդեցությունները, ճանապարհորդների վկայությունների և եվրոպացի հետազոտողների ուսումնասիրությունների, մասնավորապես **Վիթալ Բինեի** (Vital Cuinet) ֆրանսերեն եռահատոր աշխատության («La Turquie d'Asie, Géographie Administrative, Statistique, Descriptive et Raisonnée de chaque province d'Asie-Mineure», Paris, 1891)՝ **Ադանայի և Հայեպի վիշապի** նվիրված Բ հատորի IV գրքի հիման վրա է ստեղծվել «Արարս» հանդէսի մատենաշարով 1894 թ. Պե-

* Թարգմ.՝ «Ասիական Թուրքիա. Փոքր Ասիայի յուրաքանչյուր կուսակալության վարչական, վիճակագրական, նկարագրական և համակարգված աշխարհագրություն»:

տերություն տպագրված «Կիլիկիա. փորձ աշխարհագրությունների արդի Կիլիկիոյ» գիրքը: Այս ձևոնարկից ընթերցողը կարող է մանրամասն տեղեկություններ քաղել Կիլիկիայի աշխարհագրություն, բնակիչների կենցաղի, առևտրի ու արհեստների, երկրի բնական հարստությունների, բերքերի, պտուղների, կենդանական աշխարհի, չեն ու անչեն կառույցների, ավեր ու կանգուն բերդերի ու եկեղեցիների մասին:

Հիշատակության արժանի է նշված հանդեսի Բ գրքում (Սանկտ Պետերբուրգ, 1893) ղեկավարված **Վահան Գյուրքչյանի** (Բակուրան) հեղինակած «Մի տեսություն հայկական Կիլիկիոյ հարստությունների մրայ» ուսումնասիրությունը (էջ 31-64): Հեղինակի մի շարք հարցադրումների հետ համաձայն չլինելով, չի կարելի, սակայն, նրան արժանին չմատուցել նյութի խորագրին քննության ու շատ ղեպքերում պատմական երևույթների անսովոր մեկնարանությունների և եղրակացությունների համար:

Մեզ համար օգտակար է եղել **Գրիգոր Միքայելյանի** «Կիլիկիայի հայկական պետություն պատմություն» (Երևան, 2007) մեծարժեք աշխատությունը:

Կիլիկիահայոց 1909 թ. կոտորածների և դրանց թողած հետևանքների մասին ուսումնասիրողներին հսկայական նյութ է մատակարարում ժամանակի հայկական մամուլը, որի էջերը հեղեղված են սարսափազդու նկարագրություններով: Տեղի ունեցած իրադարձություններն օրեցօր յուսարանվել են Կ. Պոլսի «Բիզանդիոն» (հայոց պատրիարքարանի պաշտոնական օրգան), «Արևելք», «Սուրհանդակ», «Ժամանակ», Իզմիրի, Կարինի (էրզրում), Տրապիզոնի և Օսմանյան կայսրության ուրիշ քաղաքների հայ թերթերում ու հանդեսներում, ուստի մամուլի գրեթե բոլոր օրգաններում («Մշակ», «Հորիզոն», «Կովկասի լրագրեր» և այլն): Մեծաքանակ նյութեր կան ժամանակի ուսական, եվրոպական և ամերիկյան մամուլի էջերում:

Հետագա տասնամյակներին կիլիկյան աղետի մասին հոգվածների և ոչ մեծ թվով ուսումնասիրությունների հեղինակների համար հիմք են հանդիսացել ինչպես ջարդերի ականատեսների, այնպես էլ հայաստանի արխիվներում պահպանվող վավերագրերը: Դեռևս չուսումնասիրված ու չօգտագործված մեծաթիվ փաստաթղթեր են պահպանվում Հայաստանի ազգային արխի-

վում (ՀԱԱ), Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձևագրերի գիտահետազոտական ինստիտուտում (Մատենադարան), Ե. Ջարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (ԳԱԹ), որոշ նյութեր կան Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում (ՀՅԹԻ): Նշված արխիվներից հայտնաբերված և Կիլիկիայի 1909 թ. կոտորածներին վերաբերվող փաստաթղթերի մի մասը ղեկավարված է «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» ("Геноцид армян в Османской империи") բարձրարժեք ժողովածուի մեջ (Երևան, 1966): Կոտորածների մասին հավանաբար նյութեր կան Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի արխիվում, որից օգտվելը ներկայումս հայ ուսումնասիրողների համար, հասկանալի պատճառներով, անհնար է:

Կիլիկիայի 1909 թ. ղեպքերն անբավարար են ուսումնասիրվել ինչպես խորհրդային ժամանակներում, այնպես էլ անկախությունից հետո: Տպագրվել են ոչ մեծ թվով հոդվածներ, որոնցից չահեկանորեն առանձնանում է պրոֆ. **Ազատ Համբարյանի** «Կիլիկիայի 1909 թ. կոտորածները» գրվածքը («Պատմաբանասիրական հանդես» (Երևան), № 4, 1988): Խնդրին անդրադարձ է եղել նաև առանձին հավաքական աշխատություններում (տե՛ս օրինակ՝ «Հայ ժողովրդի պատմություն», հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, հտ. III, Երևան, 1976, հտ. VI, Երևան, 1981) և մենագրություններում: Այդպիսի մենագրություններից են՝ **Մատուր Աղայան**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից (Երևան, 1976), **Մակիչ Արզումանյան**, Հայաստան, 1914-1917 (Երևան, 1969), նույնի՝ «Դարավոր գոյամարտը (Երևան, 1989), **Արամայիս Մնացականյան**, Հայ ժողովրդի ողբերգությունը ուսու և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ (Երևան, 1965), **Վարդան Պարսամյան**, Հայ ժողովրդի պատմություն (Երևան, 1967), **Հայկազ Պողոսյան**, Ջեյթունի պատմությունը. 1409-1921 (Երևան, 1969): **Ռուբեն Գասպարյանի** «Հայկական կոտորածները Կիլիկիայում» (Երևան, 2005) աշխատությունը, որն ընդգրկում է 19-րդ դարի 90-ական թթ. - 1921 թ. ժամանակաշրջանը, ներառել է նաև կիլիկիահայերի 1909 թ. ջարդերին նվիրված գլուխը:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱՆՑՑԱԼԻՑ

Կիլիկիան (նաև Կարամանիա) գտնվում է Փոքր Ասիայի հարավարևելյան անկյունում, Կիպրոս կղզու դիմաց: Դրա բնական սահմաններն են, հարավից՝ Միջերկրական ծովը, որ օղակաձև ափերով կազմում է Տարսոսի գոգը, և Ալեքսանդրեթի (Խոսոսի կամ Հայոց) ծոցը, արևելքից՝ Ամանոսի լեռնաշղթան, որ հյուսիս-արևելքից ձգվելով հարավ-արևմուտք՝ պարսպում է Ալեքսանդրեթի (Հայոց ծոց) արևելյան ափերը և վերջանում է Ռաս-էլ-Նանդիր հրվանդանով¹:

Իր դիրքի և բնությունից պատճառով Կիլիկիան բաժանվում է երկու մասի՝ հարավարևելյան մասը, որ մի ընդարձակ ու բերրի դաշտավայր է, կոչվում է Դաշտային Կիլիկիա (Cilicia Pedias) կամ «Չուխուր օվա» (ոմանց կարծիքով, այս դաշտը Հոմերոսի «Իլիականում» երգված Ալեյան դաշտն է), իսկ արևմտյան մասը, որ անհարթ, ժայռոտ ու լեռնային մի երկիր է, երիզված Տավրոսի լեռնաշղթայով, կոչվում է Քարուտ Կիլիկիա² (Cilicia Tracheia):

Կիլիկիայի վաղ անցյալի իրական պատմությունը միաձուլված է առասպելաբանությունից հետո:

Գտնվելով Եվրոպայի և Ասիայի հատման կետում ու շատ մոտ Աֆրիկային (Եգիպտոսին), ունենալով մեծապես շահավետ աշխարհագրական դիրք (գեղեցիկ ու խաղաղ ծովախորշ, անմատչելի լեռներ ու կիրճեր, պտղաբեր դաշտեր)՝ Կիլիկիան դարձել է շարունակ խաղաղացի և կարևոր պատմական դեր: Իր տարանցիկ ուղիներով դեռ հնուց բաց պատուհան էր դեպի արտաքին աշխարհ: Դրա ծովափնյա քաղաքները հանդիսանում էին Փոքր Ասիայից հույնացիների արտահանման և եվրոպական ապրանքների ներմուծման միակ դուռը³:

«Կիլիկիա» անվան հարցում գիտնականների շրջանում միաբանություն չկա: Մի կողմ թողնելով առասպելաբանական տար-

¹ Տե՛ս «Կիլիկիա, փորձ աշխարհագրությունից արդի Կիլիկիոյ», Պետերբուրգ, 1894, էջ 16-17:

² Տե՛ս Համբարձում Առաքելյան, Ջեյթուն: Տեղագրական, ազգագրական և վարչական տեսություն, Թիֆլիս, 1896, էջ 6-7, Գրիգոր Գուտուպեան, Հայ լեռ: Կարմիր դրուագներ Կիլիկիոյ աղէտէն, Կ. Պոլիս, 1912, էջ 9, Գրիգոր Հ. Գալուստեան (Կիլիկեցի), Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Ջեյթուն, Նյու Յորք, 1934, էջ 3-4:

³ Տե՛ս Գրիգոր Գուտուպեան, Հայ լեռ: Կարմիր դրուագներ Կիլիկիոյ աղէտէն, էջ 15:

բերականները՝ շատերը հավանական են համարում այն տեսակետը, թե «Կիլիկիա» անվանումը ծագել է երրայերեն «խիլիի» (կիլիի) բառից, որը նշանակում է «քարուտ»: Ուրիշները գտնում են, որ Կիլիքս անունով մի փյունիկեցի զորավար հաստատվել էր այս երկրում և նրա անունով էլ կոչվել էր Կիլիկիա:

Տարբեր ժամանակներում այս երկրին փոփոխակի տիրել են փյունիկեցիները, ասորիները, պարսիկները, հույները, հռոմեացիները, բյուզանդացիները, հայերը, եգիպտական սուլթանությունները և, վերջապես, օսմանյան թուրքերը:

Վաղնջական ժամանակներից Հայաստանը չէր ունեցել ծովեր, նաև՝ անվտանգ ու խաղաղ նավարկության գետեր: Եղած գետերը հարմար չէին բեռներ տեղափոխելու համար, որովհետև անցնում էին բազմաթիվ անհարմար սահանքներով, միաժամանակ, դրանց փրփրաբաշ հոսանքները ղժվարանցանելի պատնեղներ էին, որոնք երկրի տարբեր մասերի միջև հաղորդակցությունը մեծապես խոչընդոտում էին: Ընդհանրապես, Հայաստանի տնտեսական զարգացմանը շատ էր խանգարում հարմար ճանապարհների և հաղորդակցությունների սակավությունը, որը հիմնականում բացատրվում էր լեռնային երկրի ուղիղ-ֆի խիստ կտրտվածությունով:

Ահա թե ինչու հայերը ամենահին ժամանակներից ձգտել են դեպի բաց ջրեր, դեպի ծով, նպատակ ունենալով հաղորդակցություն մեջ մտնել և առևտրական կապեր հաստատել հեռու և մոտիկ քաղաքակիրթ ազգերի հետ:

Թե ո՞ր դարից են հայերը գաղթել Կիլիկիա, ղժվար է որոշել, բայց անկասկած է, որ այս երկրամասում նրանց հիմնավորման սկիզբը թաղված է անհիշելի ժամանակների մեջ:

Դեռ հեռավոր դարերում հայերն իրենց պատրաստած լաստերով Տիգրիս և Եփրատ գետերով հասնում էին Բաբելոն: Բայց Միջերկրականի ափերը հասնելու համար նրանք պետք է ընտրեին Կիլիկիայի ուղղությունը: Փյունիկեցիների հետ աշխույժ կապեր հաստատած հայ առևտրականների մի մասը հիմնավորվում էր Պոնտոսի ափերին ու Կիլիկիայում: Բնակություն համար այս հարմար վայրերը դեպի իրենց էին քաշում հայ գաղթականների նորանոր զանգվածներ:

Որքան Մայր Հայաստանը ենթարկվում էր ավերումների և

ասպատակությունների, նույնքան մեծանում էր գաղթը ղեպի արևմուտք, նամանավանդ ղեպի Կիլիկիա: Հայերի թիվը Կիլիկիայում այնքան է ավելանում, որ թվական տեսակետից նրանք ձևով են բերում գերակշռություն և այդ երկիրը նրանց համար դառնում է մի նոր հայրենիք: Ռուրիկյան իշխանական տոհմի մեծ իշխաններից մեկի՝ Ռուրեն իշխանի, գլխավորությամբ 1080 թ. հաստատվում է Կիլիկիայի հայկական պետականությունը, իսկ 1198 թ. Ռուրիկյան իշխանությունը հռչակվում է թագավորություն: Կիլիկիայի հայկական պետության ինքնիշխանությունը տևում է մոտ երեք դար:

Կիլիկիայի հայկական պետությունը միջնադարյան լատին պատմիչներն անվանում էին «Փոքր Հայաստան», երբեմն էլ պարզապես «Հայաստան» (“*Arménia Minor*”, “*Arménia*”, “*Ermenie*”), իսկ հայկական աղբյուրներում այդ պետությունն անվանվում էր «Հայոց աշխարհ», «Կիլիկիո տուն», իսկ Սիս մայրաքաղաքի անունով՝ նաև «Սիսուան»¹: Իր ծաղկման ժամանակաշրջանում (13-րդ դար) այդ պետության տարածությունը կազմում էր 40.000 քառ. կմ, իսկ բնակչության թիվը մոտենում էր մեկ միլիոնի²:

Ունենալով բարենպաստ աշխարհագրական դիրք, կլիմայական նպաստավոր պայմաններ, հայրենաչեն հայկազուն բնակչություն, հաստատած լինելով ծավալուն կապեր և միջպետական փոխհարաբերություններ Եվրոպայի և Ասիայի շատ երկրների հետ, Հայկական Կիլիկիան դարձել էր ժամանակի տնտեսապես զարգացած պետություններից մեկը:

Կիլիկիայի տնտեսական բարգավաճումը, գյուղատնտեսություն և արհեստների առաջընթացը զարկ էին տվել քաղաքների զարգացմանը: Երկրի մեծ և միջին քաղաքների թիվը հասնում էր տասի, որոնցից առանձնապես հայտնի էին Սիս մայրաքաղաքը, Անադարրան (Անավարդա), Միսիս (Մամեստիա), Միջերկրականի ամենաաշխույժ նավահանգիստներից Այասը (Էգեսա), ևս երկու նշանավոր նավահանգիստներ՝ Կոոփկոսը և

¹ Տե՛ս Գրիգոր Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2007, էջ 5-6:

² Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հտ. III, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան, 1976, էջ 671-673:

Անամուրը: Եղած նավահանգիստների, կամուրջների, ճանապարհների կարգի բերումը և նորերի կառուցումը մեծապես նպաստեցին ներքին ու տարանցիկ առևտրի դարգացմանը: Ստեղծվել էր առևտրական հզոր նավատորմի, որը Կիլիկիան ծովային ուղիներով կապում էր Ջենովայի, Վենետիկի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Ղրիմի, Մերձավոր Արևելքի և Առաջավոր Ասիայի երկրների հետ: Այս նավահանգիստը դարձել էր պետության տարանցիկ առևտրի ծովային դարպասը:

Առևտրական քարավանները Կիլիկիայից ծովային ու ցամաքային ուղիներով զանազան երկրներ էին արտահանում բամբակ, հացահատիկ, անտառանյութ, անասուններ, չոր միրգ, ձիթապտուղ, համեմունք, հանքային նյութեր: Կիլիկիա էին ներմուծվում մետաքսեղեն, զարդեղեն, ղենք, օճառ և այլն¹:

Պետության տարածքում շրջանառություն մեջ էին տարբեր երկրների դրամներ, բայց ներքին առևտուրը հիմնականում տեղի էր ունենում Կիլիկիայում հատված ոսկյա, արծաթյա և պղնձյա դրամներով:

Հայկական Կիլիկիայում բարձր զարգացման էին հասել կրթությունը, գիտությունը, գրականությունը, արվեստը: Գոյություն ուներ հասարակական և մասնավոր դպրոցների լայն ցանց: Նախնական ուսումնառությունը (3-4 տարի տևողությամբ) ձրի էր և շատերին մատչելի: Միաժամանակ զարգանում էին նախորդ դարերում ստեղծված բարձրագույն տիպի կրթական կենտրոնները, հիմնադրվում էին նորերը: Հանդես էին գալիս անվանի ուսուցիչներ և ուսուցչապետեր, որոնց ջանքերով համալսարանները վերածում էին գիտության կաճառների: Դրանցից հատկապես մեծ հռչակ էին ձևով բերել Դրադարկը, Մաչկևորը, Պատյահոնը, Արեգը, Շուղըրը, Սկևտան և ուսումնագիտական ուրիշ կենտրոններ, որոնցում բուռն զարգացում ապրեցին գիտության զանազան ճյուղերը՝ մատենագրությունը, պատմագրությունը, փիլիսոփայությունը, լեզվաբանությունը, տոմարագիտությունը, երկրաչափությունը, թվաբանությունը, մշակույթի համարյա բոլոր բնագավառները՝ բանաստեղծությունը, երաժշտությունը, նկարչությունը, թատրոնը, ճարտա-

¹ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հտ. III, էջ 731-732:

սանական արվեստը: Գիտություն և արվեստի գործիչներն իրենց արարչագործություններով հարստացնում էին հայ ժողովրդի հոգևոր գանձարանը¹: Սուրբ մտածողներ էին Վահրամ Ռարունին և Ներսես Լամբրոնացին, գիտական ու գրական մեծ վաստակ են թողել օրենսգիր Սմբատ Սպարապետը, մատենագիր Գրիգորիսը, պատմիչներ Վարդան Արևելյին և Հելթունը, առակագիր Վարդան Այգեկցին, մշակույթի անանց արժեքներ են ստեղծել բանաստեղծ ու արձակագիր Ներսես Շնորհալին, նկարիչներ Թորոս Ռոսլինը և Սարգիս Պիծակը, երգահաններ Կոստանդին Սրիկն ու Հովսեփ Դրագարեկցին և շատ ուրիշներ:

Կիլիկիայի հայկական թագավորությունը կենտրոնացված և բավականին զորեղ մի պետություն էր: Ռուրիկյան մեծ իշխաններն ու թագավորներն իրենց անթևերի կամքով ու անզորում ջանքերով, արթնություններ ու դիվանագիտական նուրբ քայլերով կարողանում էին խուսանալ տարրեր կողմերից եկող թշնամական ուժերի միջև, ապահովել երկրի անվտանգությունը և ժողովրդի խաղաղ գոյությունը: Շրջապատված լինելով թշնամի պետությունների օղակով և միշտ գտնվելով արտաքին ներխուժման վտանգի առջև, Կիլիկիայի հայկական պետությունն ստիպված էր ունենալ մի քանի տասնյակ հզոր զինվորներից կազմված կանոնավոր զորեղ բանակ: Բանակի կազմում գերակշռում էր հեծելազորը: Հայ հեծյալները շատ կողմերով նման էին արևմտանվորապական ասպետներին, հանդերձավորված էին խաչակիրների պես: Կիլիկիայի հայկական բանակը խնդիր չունր նվաճելու ուրիշ երկրներ, նրա նպատակը թուրք-սելջուկյան և մոնղոլական արշավանքներից պետություն, դրա սահմանների պաշտպանությունն էր: Դրա վկայություններից էր ողջ երկիրն ընդգրկող պաշտպանական կառույցների լայն ցանցի ստեղծումը: Միայն լեռնային մասերում կար ավելի քան 100 ամրոց, դրանց մեծ մասը կառուցվել էր Կիլիկիայի հայկական պետության գոյության ժամանակաշրջանում: Ամենազխտավոր բերդամրոցներն էին Վահկան, Լամբրոնը, Կուկլակը և Կապանը²: Բազմաթիվ ամրոցներ էին կառուցվել նաև երկրի զաչտավայրային մասերում, գետաբերաններին և նավահանգիստներում:

¹ ՀԱԱ, ֆոնդ 56, ցուցակ 15, գործ 576, թերթ 67:

² Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հտ. III, էջ 673:

Ամբողջ 300 տարի օտար նվաճողներից պաշտպանելով ինքնիշխան երկիրը, հայ զինվորականությունն իր քաջարի գործերով և ազատագրական պայքարի փառահեղ զբաղմունքով վերականգնում էր հայոց անցյալի մարտական փառքը:

Երբ Մայր Հայրենիքում հայերը մեծ մասամբ զրկված էին ազգային պետականությունից, Կիլիկիայի հայկական պետությունն երեքդարյա գոյությունը հայ ժողովրդի անկախությունն ապահովելու և շինարար գործունեությունն փառավոր ապացույցն ու հաստատումը եղավ:

Սակայն եգիպտացիների, սելջուկ-թուրքերի, մոնղոլների, բյուզանդացիների և խաչակիրների սպառազեն ուժերի դեմ մղված տևական պատերազմներից և ներքին գժտություններից թուլացած Հայկական Կիլիկիան, ի վերջո, տեղի տվեց: Եգիպտոսի սուլթանությունն զորքերը 1375 թ. վերջնականապես նվաճեցին Կիլիկիան՝ վերացնելով հայկական ինքնիշխանությունը:

Կիլիկիայի հայկական թագավորության կործանմամբ փակվեց հայ ժողովրդի պետական գոյությունն և այս նշանավոր էջը:

Արյունահեղ պատերազմների ընթացքում կոտորվել էր Կիլիկիայի հայ բնակչության մի մասը, ոմանք, պետականությունն անկումից հետո, անկարող լինելով տանել տիրողների բարբարոսությունները, գաղթեցին այլ երկրներ, շատերն ենթարկվեցին բռնի կամ կամավոր դավանափոխության: Քիչ հայերի հաջողվեց ամրանալ Տավրոսի (Կուլ) կրճրին և երկար ժամանակ պահպանել ինքնավար վիճակ: Մինչև 19-րդ դարը Ձեյթունում (Ույնիա) և Կիլիկիայի մի քանի ուրիշ լեռնավայրերում հայ համայնքները պահպանել էին իրենց կիսանկախ գոյությունը:

Օսմանյան թուրքերը 1487 թ. նվաճեցին Կիլիկիան: Նրանց տիրապետության ներքո Կիլիկիա հին անունը մոռացության տրվեց և ամբողջ այդ երկիրը կոչվեց Ադանայի վիլայեթ կամ նահանգ: Ինչպես բուն Հայաստանում, նույնպես և Կիլիկիայում հայ ժողովրդին երկար դարերով բաժին ընկան օտարի դաժան լուծը, տնտեսական, քաղաքական և մշակութային զահավեժ անկումը:

Թուրքական տիրապետության հետագա դարերում Կիլի-

կիայի հայտնությունը մեծ ջանքերի գնով կարողանում էր պահպանել իր ազգային գոյությունը և էթնիկ դիմագիծը՝ դիմակայելով թուրք, թուրքմեն, քուրդ, իսկ ավելի ուշ՝ նաև չեքոսլովակացի զինվորների ճնշմանը:

Կիլիկիան 19-րդ դարի կեսերից աստիճանաբար վերականգնում էր իր պատմական դերը՝ ձեռք բերելով տնտեսական ու ռազմավարական կարևոր նշանակություն: Նա աստիճանաբար ստանում էր միջազգային շուկայի կարևորություն: Դրան է՛լ ավելի լայն չափերով պիտի նպաստեր Բելոյին-Բաղդադ-Բասրա երկաթուղու կառուցումը: Եթե Սուեզի ջրանցքը հեշտացրել էր հաղորդակցությունը դեպի բրիտանական թագի մարզարիտ Հնդկաստան և դեպի Մայրազույն Արևելք, ապա մոտ ապագայում Կիլիկիայով անցնող այդ երկաթուղին վերստեղծելու էր Եվրոպայի և Ասիայի միջև հնում եղած ցամաքային ճանապարհը: Կ. Պոլսից սկսած՝ երկաթուղին արդեն հասել էր Ադանայի վիլայեթի արևմտյան կողմում գտնվող Կոնիա: Դա նպաստելու էր, որպեսզի Կիլիկիան իր աշխարհագրական դիրքի շնորհիվ դառնար չափազանց կարևոր երկրամաս:

Բաղդադի երկաթուղին լայն հեռանկարներ պետք է բացեր նաև բուն Հայաստանի համար: Դրա գործարկումից հետո երկաթուղիների կառուցում էր սկսվելու նաև հայկական նահանգներում: Այդ ժամանակ Կիլիկիան դառնալու էր այն վայրը, որը Եվրոպայի հետ էր կապելու մի կողմից Հնդկաստանը, մյուս կողմից՝ Օսմանյան կայսրության հայկական նահանգները: Այլ խոսքով, եթե Կիլիկիան դառնալու էր համաշխարհային շուկային մեծապես աջակցող կարևորագույն տարածք, նույնքան, և գուցե ավելի, կարևորություն էր ստանալու Հայաստանի համար:

ԹՌՈՒՑԻԿ ԱԿՆԱՐԿ ԿԻԼԻԿԻԱՑԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՑԻՆ ԿԱԶՄԻ, ԹՎԱՔԱՆԱԿԻ ՈՒ ՀԱՎԱՏՔԻ ՄԱՍԻՆ

Տարասեռ էր Կիլիկիայի ազգարնակչության կազմը: Այնտեղ ապրում էին բնիկներ և եկվորներ: **Բնիկ տարրերը** կազմում էին հայերը, որոնք ժառանգներն էին Ռուրիկյանց թագավորության ժամանակի հայերի, հույների, որոնք ժառանգներն էին Բյուզան-

դական կայսրության հույների և այստեղ հայտնվել էին հայերից շատ առաջ. քրդերը, որոնք Կիլիկիայում հայտնվել էին դեռ 9-րդ դարում, հայուկ քրդերը (քրդացած հայեր), որոնք իրենց բարբերով ավելի վայրենի էին, քան քրդերը, պողան ցեղը, որը նույնպես հայկական ծագում ուներ, բայց բարբերով հայուկ քրդական ցեղախմբերից ավելի մեղմ էր¹: Հայուկ քրդերի ցեղախմբերի և պողան ցեղի անդամներն իրենց մարդարանական կառուցվածքով, դիմագծերով ու սովորություններով նման էին ո՛չ թուրքերին և ո՛չ էլ քրդերին: Ավանդության համաձայն, դրանք սերված են հայ Արչակունիներից:

Կիլիկիայում **եկվոր տարրերը** կազմում էին թուրքմենները, որոնք 11-րդ դարում, սելջուկյան արչավանքների ժամանակներից, հաստատվել էին այդտեղ և իրենց թվով Ադանայի ու Հալեպի վիլայեթների ազգարնակչության զգալի մասն էին կազմում: Նույնը պետք է ասել նաև թուրքմեններին ազգակից յուրուք և աֆչար (ավանդության համաձայն, սրանք նույնպես սերված էին հայերից) ցեղերի մասին: Թուրքմենների մեծ մասը թափառաչրջիկ էր: Եկվոր էին թուրքերը կամ օսմանլիները, որոնք Կիլիկիայում հաստատվել էին 16-րդ դարում: Թեև սրանց թիվն այստեղ աննշան էր, բայց նրանք էին իշխող տարրը. բոլոր մյուսները նրանց ենթակա էին: Չեքոսլովակացիները, որոնք Կովկասյան լեռներից այստեղ էին գաղթել սկսած 1864 թվից, սկզբում ապրում էին ասպատակությամբ, բայց 3-4 տասնամյակ հետո աստիճանաբար ընտելացել էին երկրագործությանը: Լավ երկրագործներ էին Ադանայի վիլայեթի դաշտային մասում ապրող ասորի աղանդավորները, որոնց կրոնը նման էր եզդիների կրոնին: Եզդիների պես աղանդավորներ էին նաև սակավաթիվ զղրաչները: Ամռան հնձի ժամանակ մեծ թվով անսարի (այլի) արարներ էին գալիս Կիլիկիա²: Կային մի քանի հաղար պարսիկներ: Վերջապես, որոշակի թիվ էին կազմում թափառաչրջիկ գնչուները: Նկատի ունենալով փիճակագրության անմխիթար փիճակն այն ժամանակվա Թուրքիայում, անհնար էր բնակչության ճշգրիտ թվեր նշել ինչպես ամբողջ կայսրության մասշտա-

¹ Տե՛ս **Համբարձում Առաքելեան, Զեյթուն...**, էջ 41-42:

² Տե՛ս նույն տեղում:

րով, այնպես էլ առանձին-առանձին նահանգների, այդ թվում Կիլիկիայի վերաբերյալ: 19-րդ դարի 80-ական թվերից սկսած՝ Թուրքիայում պաշտոնական փիճակագրությունը ծառայում էր քաղաքական նպատակների, կեղծվում էր հատկապես քրիստոնյա ազգերի թիվը՝ այն մեծապես պակասեցնելով և, ընդհակառակը, արհեստականորեն բարձրացնելով մահմեդականների, հատկապես թուրքերի թիվը:

Կիլիկիայի հայ բնակչությունը տարրեր աղբյուրներում ցույց է տրված միմյանցից շատ տարրերվող թվերով: Չեն համընկնում պաշտոնական փիճակագրության՝ եվրոպացի ճանապարհորդների (Վիկտոր Լանգյուա, Էլիզի Ռեկյու, Դեիս, Բարբի, Մանգուտ, Դեսիև և ուրիշներ), հայ կրոնական հաստատությունների (Կ. Պոյսի Հայոց պատրիարքություն, Սիսի կաթողիկոսություն) և անհատների (Մերենց, Հայկունի և այլք) բերած թվերը:

Թուրքական 1892 թ. պաշտոնական փիճակագրության համաձայն, Կիլիկիայում հայերի թիվը մոտավորապես 150.000 էր՝ ներառելով միայն առաքելականներին, մինչդեռ այնտեղ կար կաթոլիկ և ավետարանական հայերի զգալի բաղաձայնություն¹: Նշենք նաև, որ հայերի թվաքանակի մեջ չէին հաշվվում հայուկ ու պողան կոչվող հայածագում քրդերը, որոնք մտցված էին մուսուլմանների թվի մեջ:

Այս հանգամանքները նկատի ունենալով՝ Համբարձում Առաքելյանը Կիլիկիայի (Աղանայի ամբողջ վիլայեթի և Հայկալի վիլայեթի մի մասի) բնակչության ընդհանուր թիվը 1896 թ. հաշվում էր մոտավորապես 500.000, իսկ միայն հայությունը՝ 150-200.000²: Աղանայի վիլայեթի մահմեդականների (թուրք, թուրքմեն, քուրդ, ֆելլահ, չերքեզ, աֆշար, յուրուք) և քրիստոնյաների (հայ, հույն, ասորի, քաղղեացի) թվաքանակը 1909 թ. սկզբին մոտավորապես հավասար էր³:

¹ Կիլիկյան աղետից առաջ կայսրությունում անցկացված վերջին մարդահամարը կատարվել էր 1892 թ.:

² Աղանայի թեմի առաջնորդարանի 1905-1915 թթ. ղեկավարակա Քերովրե Փափազյանը միայն Հայ առաքելականների թիվը նշում է մոտ 125.000 հոգի, տե՛ս **Քիզանդե Եղիայան**, Ատանայի Հայոց պատմություն, Անթիլիաս, 1970, էջ 296:

³ Տե՛ս **Վեր. Համբարձում Առաքելյան**, Ձեյթուն..., էջ 48-49:

⁴ Տե՛ս **Վեր. Համբարձում Յ. Աշեան**, Ատանայի եղեռներ և Գոնիայի յուշեր, Նյու Յորք, 1950, էջ 14:

Կիլիկիայի հայ բնակչությունը հավատարի տեսակետից բաժանված էր կրոնադավանական երեք մեծ խմբի՝ իրենց ճյուղավորումներով: Կիլիկիահայերը հիմնականում առաքելականներ էին, նկատելի թիվ էին կաղմում նաև հայ կաթոլիկները և ավետարանականները: Ամբողջ 150 տարի (1293-1441 թթ.) հայոց ընդհանրական կաթողիկոսի աթոռը գտնվում էր Կիլիկիայում, աթոռանիստ ունենալով Հոռոմկյա բերդը, հետո՝ Գրաղարկ վանքը, վերջապես՝ Ռուրինյանց փառազարդ մայրաքաղաքը՝ Սիսը: Երբ 1441-ին ընդհանրական կաթողիկոսությունը տեղափոխվեց Էջմիածին, Կիլիկիո կաթողիկոսությունը, դարձյալ աթոռանիստ ունենալով Սիսը, շարունակեց իր գոյությունը՝ իրրև կաթողիկոսություն «Տանն Կիլիկիոյ»:

Մի կողմից Կիլիկիո աթոռի ներքին պառակտումները, մյուս կողմից թուրքական իշխանությունների հալածանքներն ու սահմանափակումները Սիսի կաթողիկոսությունը հետագա դարերում հասցրին քայքայման վիճակի: 19-րդ դարի վերջին այդ կաթողիկոսությունը բոլորովին ամայի էր, քարուքանդ էին ողջ Կիլիկիայի, մանավանդ Սև լեռան հոչակավոր վանքերը, որոնք ժամանակին յույսի ու մտքի մի-մի տաճար էին:

Եթե հունական և հայկական տիրապետությունների շրջանում Տարսոն, Միս, Այաս, Միսիս, Անավարդա, Ալեքսանդրեթ հոչակավոր ու փառահեղ քաղաքներում ծաղկում էին կրթությունը, գիտությունները, արվեստը, զրականությունը, ապա թուրքերի տիրապետության պայմաններում և Կիլիկիո կաթողիկոսության դարավոր ճգնաժամի պատճառով անկման մեջ ընկավ կիլիկիահայոց կրթական գործը, վերացան գիտության ու արվեստի օջախները:

20-րդ դարասկզբին կիլիկիահայոց կրթության գործը ցավալի վիճակի մեջ էր: Թեև նախորդ տարիներին Կ. Պոյսի Հայոց միացյալ ընկերությունը ջանքերով Կիլիկիայում, հատկապես Մարաշում, բացվել էին մի շարք դպրոցներ, սակայն դրանց գոյությունը երկար չէր տևել: Այնպես որ, եղած փոքր ու անբարեկարգ ազգային դպրոցները, չունենալով անհրաժեշտ նյութական միջոցներ, հազիվ քարշ էին տալիս իրենց գոյությունը: Գոնե

մխիթարական էր, որ կաթողիկ ու բողոքական օտար առաքելությունները Կիլիկիայի տարրեր քաղաքներում (Տարսոն, Մարաշ, Այնթապ, Ադանա, Հաճրն) հաստատել էին դպրոցներ ու քոլեջներ՝ մեծ մասամբ կրոնական ուղղություն:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Կիլիկիայի ջարդերի օրերին ամբողջ Անատոլիան բաղկացած էր 21 վիլայեթից (նահանգ, կուսակալություն): Յուրաքանչյուր վիլայեթ բաժանված էր մի քանի սանջակի կամ մութասերիֆություն, որը ուսական վարչական բաժանմամբ համապատասխանում էր գավառին: Սանջակները բաժանված էին կազանների (գավառամաս), կազան՝ նահիանների (գյուղախումբ), նահիան՝ քարիանների (գյուղ):

Այդ բոլոր վարչական միավորներն ունեին իրենց ղեկավարները: Վիլայեթի գլուխ էր կանգնած ընդհանուր կառավարիչը՝ վալին (գեներալ-նահանգապետ), որին նշանակում էր կենտրոնական կառավարությունը և նստում էր վիլայեթի գլխավոր քաղաքում: Սանջակի գլուխը մութասերիֆն էր (գավառապետ), իսկ կազայի կառավարիչը գայմագամն էր: Նահիայի կառավարիչը մուղիրն էր (պրիստավ), իսկ քարիայի ղեկավարը՝ մուխթարը (տանուտեր): Մութասերիֆին, գայմագամին և մուղիրին նշանակում էին կենտրոնական նահանգական իշխանությունները, իսկ մուխթարին ընտրում էր գյուղի համայնքը:

Պատմական Կիլիկիայի տարածքի մեծ մասի վրա Ադանայի վիլայեթն էր, իսկ նրա մյուս, ավելի փոքր մասն ընդգրկված էր Հայեպի վիլայեթի մեջ:

1865 թ. Օսմանյան կայսրությունում կատարված վարչական նոր բաժանման արդյունքում Ադանայի վիլայեթի տարածությունը 15000 քառ. մղոն կազմեց: Նա բաժանվեց 4 սանջակի, որոնք պարունակում էին 19 կազա՝ 49 նահիայով: Ահա Ադանայի վիլայեթի այդ վարչական դրույթյան պատկերը, որը պահպանվել էր կիլիկյան աղետի օրերին.

Ադանայի սանջակ - Կազաները՝ Ադանա, Մերսին, Տարսոն (Տարսուս), Կարախայի:

Ջերեզ-Բերեքեթի սանջակ - Կազաները՝ Յարփուղ, Էրզին, Իսլաշիե, Բուլանրիս, Նասսա, Պայաս (Փայաս):

Կոզանի (Գոզանի) սանջակ - Կազաները՝ Միս, Ֆերե (Վահկա), Հաճրն, Կարս (Ղարս):

Իչլի (Իչլի կամ Սելեկիա) սանջակ - Կազաները՝ Սիլիֆրե (Սելեկիա), Գյուլնար, Անամուր, Էրմենեկ, Մութ:

Ադանայի վիլայեթի զգալի մասը կազմող հարթավայրով անցնում ու ոռոգում էին Տավրոսի լեռներից սկիզբ առնող մեծ ու փոքր գետեր. գլխավորները չորսն են՝ **Կալիկաղնոս** (Գևոսու, Սիլիֆրե սու), որը արևմուտքից հոսում է դեպի արևելք, **Կյուղնոս** (Բերդան, Տարսուս չայ), **Միհուն** (Սարուս) և **Ջիհուն** (Ջահան, Պիրամուս): Վերջինս Կիլիկիայի ամենամեծ գետն է, որը հոսում է երկրի արևելյան կողմով: Իր մեծությամբ՝ երկրորդը Միհունն է: Առաջինը՝ Սելեկիայի, երկրորդը՝ Տարսոնի, երրորդը՝ Ադանայի և չորրորդը՝ Միսիսի մոտից անցնելով՝ թափվում են Միջերկրական ծով:

Ադանայի վիլայեթը 20-րդ դարի սկզբին ուներ կարևոր քաղաքներ ու ավաններ՝ Միսր, Հաճրն, Միսիսը, Մերսինը, Հասան-

¹ Տե՛ս **Համբարձում Առաքելյան**, Ձեյթուն ... էջ 35: Նշենք, որ կիլիկյան ջարդերից հետո 1913 թ. տեղի ունեցած Օսմանյան կայսրության վարչական նոր բաժանման հետևանքով Ադանայի վիլայեթն ունեցավ 5 սանջակ, որոնցից մեկն ինքնավար էր, այսինքն՝ մյուս սանջակների համեմատությամբ օժտված էր տեղական կառավարման ավելի մեծ իրավունքներով: Այս անգամ էլ սանջակներն, իրենց հերթին, բաժանված էին կազանների և նահիանների: Ըստ այդ վարչական բաժանման՝ Ադանայի վիլայեթը հետևյալ տեսքն էր ստացել. 1. **Ադանայի սանջակ**: Կազաները՝ Ադանա, Ջեյհան, Կարախայի, Յուսուրթայք: 2. **Կոզանի (Միս) սանջակ**: Կազաները՝ Կոզան (Միս), Հաճրն, Ֆերե (Վահկա), Կարս (Կարս-Չուրկաղիրլիք): 3. **Ջերեզ-Բերեքեթի (Փայաս) սանջակ**: Կազաները՝ Ջերեզ-Բերեքեթ, Դևոթ-Յոլ (Չորք-Մարդպան), Իսլաշիե, Բախշե (Բուլանրիս), Նասսա: 4. **Մերսինի սանջակ**: Կազաները՝ Մերսին, Տարսոն (Տարսուս) (տե՛ս Kemal H. Karpat, Ottoman Population: 1830-1914. Demographic and Social Characteristics. London, 1985, p. 172): 5. **Իչլի ինքնավար սանջակ** (առանձնացվել է Ադանայի սանջակից): Կազաները՝ Իչլի, Անամուր, Գյուլնար, Մութ (տե՛ս նույն տեղում, p. 184):

բեյլին, Օսմանիեն, Գեորթ-Յոլը, Համիդիեն և այլն: Դրանցից Մերսինը բավականին հարմար նավահանգիստ լինելով՝ նաև Ադանայի վիլայեթում օտարերկրյա հյուպատոսներին նստա-
վայրն էր: Ադանա քաղաքն այս նավահանգստի Վենի՝ Կնայված էր երկաթուղով, որը հնարավորություն էր տալիս, հիմնականին վի-
լայեթի կենտրոնը Մերսինից ծովով ուղիղ՝ հարաբերակցության մեջ լինի կայսրության մայրաքաղաք Կ. Պոլսի հետ:

Ադանայի վիլայեթի բնակչության մեծ մասը կապված էր գյուղատնտեսության հետ: Վիլայեթի դաշտային մասի գյուղա-
ցիությունն զբաղվում էր հացաբույսերի, բամբակի, բրնձի, ծխախոտի, բազմատեսակ բանջարեղենի մշակությամբ: Մեծ տարածություններ էին զբաղեցնում խաղողի այգիները, նարնջի ու կիտրոնի պարտեզները: Լեռնային մասերում գյուղացիների հիմնական զբաղմունքն անասնապահությունն էր, անտառային բերքերի ու փայտի արտահանությունը՝ հիմնականում հարևան նահանգներ:

Գյուղացիական տնտեսություններին պատկանող հողերի կողքին արդեն ձգվում էին մասնավոր սեփականատերերի լայ-
նատարած ագարակները (չիֆթլիկները): Եվրոպայից ստացվող երկրագործական կատարելագործված մեքենաներն արագորեն հեղաշրջում էին առաջացնում գյուղատնտեսության վարման եղանակների մեջ: Դրան զուգարվում էին, Թուրքիայի մյուս շատ վայրերի համեմատությամբ, Ադանայի վիլայեթի հաղորդակցու-
թյան լայն հնարավորությունները, նաև այն՝ որ դաշտային աշխատանքների ժամանակ չիֆթլիկներում, հարուստ գյուղա-
ցիների մոտ և գյուղատնտեսական բերքի վերամշակման ձեռ-
նարկություններում սեղոնային աշխատանք կատարելու համար կայսրության տարբեր վիլայեթներից, հատկապես Արևմտյան Հայաստանից, գալիս էին տասնյակ հազարների հասնող աշխա-
տողներ: Այդ ամենը օրրստօրն նպաստում էր տնտեսության առաջադիմությունը:

Դաշտային Կիլիկիան, այսինքն՝ Ադանայի վիլայեթի Չուխուր

օվա կոչվող դաշտը շատ բարերար էր, այնտեղ արտադրվում էին բամբակ, չուշմա, ցորեն, գարի, բրնձ, նարինջ, կիտրոն, թու-
րինջ, ծխախոտ, չաքարեղեգ, խաղող և շատ ուրիշ գյուղատնտե-
սական մթերքներ:

Վիլայեթի հայերն զբաղվում էին ինչպես երկրագործու-
թյամբ, այնպես էլ արհեստներով ու վաճառականությամբ: Ար-
հեստավորների 85%-ը հայ էր, մնացածը՝ հույներ և թուրքեր¹: Երկրի պտղաբերությունը, ծովային առևտրի բնօրինակ առավե-
լությունները, եվրոպական արտադրության գնալով ուժեղացող թափանցումը այն հիմնական պատճառներն էին, որոնցով առա-
ջադիմության ջատագով և բնությունից ուշիմ հայը ձեռք էր բե-
րում տնտեսական առաջնակարգ դիրքեր:

Ինչպես նկատեցինք վերը, եթե Ադանայի ամբողջ վիլայեթն իր 4 սանջակներով պատմական Կիլիկիայի տարածքի հիմնա-
կան մասը էր, ապա Հայկաի վիլայեթի միայն հյուսիսարևմտյան խոշոր մասը ժամանակին պատկանել էր Ռուրիկյան հայկական իշխանությանը: Այս վիլայեթի մի շարք կազաններ (Անտիոք, Ալեքսանդրեթ, Հայեպ) դուրս էին եղել Կիլիկիայի սահման-
ներից, չնայած ունեցել էին հոծ հայ բնակչություն, որը եկեղե-
ցական-վարչական տեսակետից պատկանել էր Սիսի կաթողի-
կոսությունը:

Մինչև կիլիկյան կոտորածը՝ Հայեպի վիլայեթը (նահանգը) վարչականորեն բաժանված էր 3 սանջակի (գավառի) և 22 կա-
զայի (գավառամասի), որոնք էին.

Հայեպի սանջակ - Կազաները՝ Հայեպ, Այնթապ, Քիլիս, Բեյ-
յան, Ալեքսանդրեթ, Անտիոք, Հարեմ, Զիսր-Շուդուր, Իդլիբ, Մաարբաթ-Նուուման, Բահր-Զերրույ, Մեմրիջ, Բակկա:

Ուրֆայի սանջակ - Կազաները՝ Ուրֆա, Ռումեկալ (Հոռմ-
կլա), Սուրուճ, Բիրեջիկ:

Մարաշի սանջակ - Կազաները՝ Մարաշ, Այրիստան, Զեյ-
թուն, Անդերին, Բազարջիկ:

¹ Տե՛ս Հրաչեայ Աճառեան, Տաճկահայոց հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915 թ.), Նոր Նախիջևան, 1915, էջ 57:

¹ Տե՛ս Համբարձում Առաքելեան, Զեյթուն..., էջ 14-15:

Այս 22 կաղանները պարունակում էին 24 նահիա¹:

1911 թ. երկրում տեղի ունեցած վարչական փոփոխությունների արդյունքում փոփոխություն տեղի ունեցավ նաև Հայկալի նահանգում²:

Նշված բոլոր տարածքները համարյա ամբողջովին լեռնային են, բացի Մարաշ քաղաքի մոտից սկսվող Բազարջիկի հարթավայրից, որը պտուղների, խաղողի, հացարույսերի, բամբակի ու բրնձի արտադրությունը մրցում էր Ադանայի վիլայեթի հետ:

Հայկալի վիլայեթի անտառները յի էին կաղնու և սոսու ծառերով, հաստարուն բնկուղենիներով, որոնց հատումից ու մշակումից հետո պատրաստի նյութերն արտահանվում էին չրջակա գավառներ ու արտասահման՝ բերելով մեծ եկամուտներ:

Վիլայեթի հարմար լեռնադաշտերը հնարավորություն էին տալիս զբաղվել խաչնարածությունը և անասնապահությունը:

Հայկալի վիլայեթը հայտնի էր նաև երկաթահանքերի մշակմամբ և երկաթագործությունը, որոնք ամբողջովին հայերի ձեռքին էին: Երկաթի հանքաքարի հիմնական մասը տալիս էին Ջեյթունի լեռները, ուր հանքաքարը թեև մշակվում էր տնայնագործական-նահապետական եղանակներով, բայց ստացված երկաթը նշանակալի էր իր ծավալով և հայտնի էր բարձր որակով:

Չունենալով հաղորդակցություն քիչ թե շատ բարվոք վիճակ՝ Հայկալի վիլայեթի բնակչությունը չրջապատից մեծապես

մեկուսացված էր, ուստի ստիպված դարգացրել էր ձևերի բանավածքները, բրդի ու բամբակի վերամշակման և զրանցից կտորեղեն պատրաստելու տնայնագործական ջուլհականոցները հաղարներով էին հաշվվում: Պատրաստի արտադրանքը ոչ միայն սպառվում էր տեղում, այլև արտահանվում էր վիլայեթի սահմաններից դուրս, նաև՝ արտասահման:

Չնայած այդ ամենին՝ վիլայեթի լեռնային մասերի բնակիչները, մանավանդ զեյթունցիները, շատ նեղվում էին սակավահողությունից, և դրա պատճառով, դաշտային աշխատանքների ժամանակ հաղարներով իջնում էին հարևան Ադանայի բարերը դաշտը՝ օրավարձով աշխատելու:

Հայկալի նահանգի հայերը նույնպես ենթարկվեցին ջարդերի, թեև ոչ այնպիսի ծավալներով, ինչպես Ադանա քաղաքում և նահանգում:

Եթե Ադանա քաղաքում և նահանգում տեղի ունեցած կոտորածների հիմնական դերակատարները թուրքերն էին, ապա Հայկալի նահանգում՝ հավասարապես թուրքերը, թուրքմենները և քրդերը:

Հայկալի վիլայեթի չորս սանջակներից երկուսը՝ Մարաշի և Հայկալի սանջակներն առանձնանում էին հայերի մեծաթվությունը: Չորս սանջակներից ամենախոշորում՝ Մարաշում, բնակչություն մեծամասնությունը հայ էր: Այս սանջակին հարում էին Հայկալի սանջակի մեջ մտնող և Այեքսանդրեթի ծոցի արևելյան կողմում տարածված մի քանի գավառակներ՝ դարձյալ բազմամարդ հայ բնակչությունը:

Հայություն մեծադանգված լինելու շարժառիթից ելնելով՝ հանգամանորեն կներկայացնենք հենց նշված երկու սանջակներում տեղի ունեցած դեպքերը:

Կիլիկիայում՝ թե՛ Ադանայի և թե՛ Հայկալի վիլայեթներում, կային բոլոր նպաստավոր պայմանները, որպեսզի դրա բազմադր բնակչությունն ապրեր մարդավայել կյանքով: Բայց ինչպես սուլթանական բռնակալության օրոք, այնպես էլ երիտթուրքական ռեժիմի ժամանակ այդ հնարավորությունն անհնարին էր իրականություն դարձնել:

¹ Տե՛ս **Համբարձում Առաքելյան**, *Ջեյթուն...*, էջ 35-36:

² Այդ նոր վարչական բաժանմամբ՝ Հայկալի վիլայեթն ունեցավ չորս սանջակ (գավառ): Չորս սանջակներից մեկն ինքնավար էր և ուներ ինքնիշխանություն որոշակի զբոսորդմանը: Վիլայեթի վարչական բաժանումն այսպիսի պատկեր ուներ. 1. **Հայկալի սանջակ**: Կազաները՝ Հալեպ, Իսկենդերուն (Ալեքսանդրեթ), Իզլիբ, Անթարիա (Անտիոք), Բար, Բեյլան, Ջիսր-Շուգուր, Հարեմ: 2. **Ջերեյ-Սեմանի սանջակ**: Կազաները՝ Ջերեյ-Սեման, Մաբրութ-Նուուման, Մուսրեջ (Մուսրիջ): 3. **Այնթապի սանջակ**: Կազաները՝ Այնթապ (Այնթապ), Քիլիս, Ռումկայե (Հոռմկյա): 4. **Մարաշի ինքնավար սանջակ** (առանձնացվել էր Հայկալի սանջակից): Կազաները՝ Մարաշ, Այրիստան, Ջեյթուն, Գեոքսուն (Կոկիսոն), Բազարջիկ (տե՛ս Kemal H. Karpat, *Ottoman Population: 1830-1914. Demographic and Social Characteristics*, London, 1985, pp. 176, 186):

ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՂԵՏԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1909 թ. ապրիլին Կիլիկիայի Հայությունն ապրեց ահասար-
սուտ ողբերգություն. նրա արյունով ներկվեց Հարադատ երկիրը:

Որո՞նք էին այն հիմնական պատճառները, որ խայամներին,
հատկապես թուրքերին, հերթական յայնածավալ ոճրագործու-
թյան մղեցին Կիլիկիայում:

Սկսենք նրանից, որ **Հայերի և թուրքերի միջև փո-
խադարձ անվստահությունը**, որ մինչև 1908 թ. Օսմանյան
հեղափոխությունը հասնում էր ցեղային ատելություն, դեռևս
հաղթահարված չէր: 1908 թ. Հուլիսին Միջհատյան սահմանադ-
րությունը վերականգնելուց հետո Կիլիկիայի ոչ միայն հեռավոր
գավառների, այլև քաղաքների բնակչության հետամնաց զանգ-
վածները մնացել էին դրանից անիրազեկված: Միայն ականջի
ծայրով նրանք քիչ թե շատ լսել էին, որ սահմանադրություն
ասելով ամենից առաջ պետք է հասկանալ ազատություն, բայց
թե ի՞նչ ազատություն մասին է խոսքը, ո՞ր կողմից է դա գալու
և ո՞ւմ է հասցեագրված – որևէ զաղափար չունենին: Դրա փո-
խարեն, սակայն, տղետ զանգվածի միտքը խոնկված էր այն խո-
սակցություններից, թե սահմանադրության հայտնություն մեջ
խառն է ճարպիկ Հայերի մատը, և եթե դա այդպես է, ապա այդ
սահմանադրություն կոչվածից միայն ու միայն վատ բան պետք
է սպասել: Թուրքերն ու քրդերը հատկապես բորբոքված էին, որ
սահմանադրությունը Կիլիկիայի Հայերին և մյուս քրիստոնյա-
ներին օժտել է իրենց հետ հավասար իրավունքներով: Ինչպե՞ս
թե՛ երեկվա գետնամած ու դողահար հայր այսօր իրենց հավա-
սա՞ր: Անկարելի է, անընդունելի ու վրդովեցուցիչ: Նրանց ուղեղ-
ներին հասու չէր, որ անհավատն ու արհամարհելին, ինչպիսին
հայն է, կարող է հավասար լինել իրենց: Մուսուլմանները չէին
պատկերացնում, որ իրենք կարող են պատիժ ստանալ միայն
այն չնչին բանի համար, որ թալանել կամ սպանել են երեկվա
ստրուկ ռայային, պղծել նրա բնտանեկան սրբությունները:
Նման արգելքը նրանք բնկալում էին որպես իրենց անձի այլա-
նում, որպես ողբերգություն նման մի բան:

Կոտորածների գլխավոր պատճառներից մեկը մահմեդա-
կանների **կրոնամոլությունն** էր: Օսմանյան կայսրություն մեջ
բազմազան էին ոչ միայն ազգերը, այլև կրոնները՝ իրենց
այլազան ճյուղավորումներով: Հիմնական կրոններն էին իսլամը,
քրիստոնեությունը և հուդայականությունը, որոնք գտնվում էին
միմյանց հետ մշտական անհաշտության մեջ: Այս կրոնները
դավանողներից ամեն մեկը զաղափար անգամ չունեի մյուս
երկու կրոնների մասին, բայց դրանք դիտում էր թշնամու աչքով:

Սահմանադրության թշնամիները առիթը բաց չէին թողնում
«աղատություն ստացած» քրիստոնյաների դեմ զրգոելու մտա-
վոր խավարի մեջ խարխավող խայամ զանգվածին, զանազան
անհեթեթ առասպելներով հրահրելու նրա նախնական բնազդ-
ները՝ թե «վտանգված է մեր սուրբ կրոնը», «անխղճարար
բռնարարված են արևափայլ սուլթանի աստվածատուր իրա-
վունքները», և որ սահմանադրության պատճառով երկիրը
կանգնելու է կործանման եզրին: Եվ որպես այդ բոլորի սկզբնա-
պատճառ, մատնացույց էին արվում քրիստոնյաները և ամենից
առաջ՝ «անհավատ» ու «անամոթ» հայերը:

Չարաղետ դեր խաղաց կառավարող Իթիհահազ վե թերաքըր
կուսակցության թիմու **ազգայնամոլությունը** (չովինիդ): Չնա-
յած ժեռն թուրքերն իրենց գործունեությունն սկսել էին հենվե-
լով օսմանցիություն զաղափարների վրա, բայց իշխանությունը
գրավելուց հետո բռնել էին ազգայնամոլություն ուղին:

Թեև երիտթուրքերի կուսակցության մեջ ընդգրկված էին
նաև ուրիշ, այդ թվում քրիստոնյա, ազգությունների ներկայա-
ցուցիչներ, բայց սրանք այստեղ էլ համարվում էին երկրորդա-
կան կարգի մարդիկ: Կուսակցության թուրք անդամները
միմյանց դիմում էին գարդաշ (եղբայր) անվանումով, իսկ հայ
անդամներին կոչում էին Լֆենդի, ասենք՝ Մուստաֆա զարդաշ
և Ուաչատուր Լֆենդի: Երբ հայազգի երիտթուրք գործիչներից
մեկը Իթիհահազ կազմակերպության իրենց կոմիտեում բողոքել
էր Լֆենդի հորջորջման դեմ, թուրք ատենապետն ասել էր. «Ո՛չ,
Հարիբ Լֆենդի՛, թուրքերը եղբայր են, իսկ դուք՝ Լֆենդի»,
այսինքն՝ ուղել էր ասել, թե քրիստոնյա երիտթուրքերը թուրք

երիտթուրքերին հավասար չեն¹:

Հին կարգերի մոյնոանդ պաշտպանների դեմ Կիլիկիայի «նոր» իշխանությունները դասիչ որևէ միջոց չէին ձեռնարկում: Միջնադարյան խավարամիտ հայացքները դավանողները միանգամայն ազատ էին իրենց գործողություններում, իսկ Իթթիհադի տեղական կաղնակերպությունները բացարձակապես չէին հետաքրքրվում, թե սահմանադրության բովանդակությունից որքանով են տեղյակ յայն գանգվածները, ուստի և մարդատյաց գաղափարները չեզոքացնելու համար որևէ հակաքարոզություն չէին ձեռնարկում: Նրանք փստահ էին, որ իրենց շրջապատում չկան այնպիսի ուժեր, որոնք հանդես գային իրենց դեմ: Իսկ այդ համոզվածության հիմնական պատճառներից մեկն այն էր, որ ինչպես ամբողջ երկրում, նույնպես և Կիլիկիայում երիտթուրքերը շարունակում էին չլացած մնալ, թե ինչպե՞ս եղավ, որ հեղափոխության անակնկալ հաղթանակով իրենց հաջողվեց դարձանայի հեշտությունը հասնել իշխանության:

Թուրքերի ու քրդերի անուս ու տգետ գանգվածները Կիլիկիայի հակասահմանադրական ուժերի համար հանդիսացան այն պարարտ հողը, որի վրա փարթամորեն աճեցին ազգայնամոլության թունավոր պտուղները:

Գեո 1908 թ. հոկտեմբերին «Մշակ» թերթի խմբագիրներից Համբարձում Առաքելյանը կանխագուշակում էր հին թուրքերի կողմից հնարավոր հեղաշրջման և երիտթուրքերի իշխանության տապալման հնարավորությունը, միաժամանակ տազնապ հայտնում, որ նման պարագայում թուրքահայությունն անխուսափելիորեն կհայտնվի նոր արհավիրքների առջև: Նա գրում էր.

«Եթե, դժբախտարար, նոր ուժիմը չկարողացավ հաստատել իր ցանկացած կարգը, եթե Թուրքիայում ունակցի առաջ եկավ և Աբդուլ Համիդի վայրագ ու հայաջինջ ուժիմը նորից գլուխ բարձրացրեց, ի՞նչ կլինի թշվառ հայ ժողովրդի վիճակը...»²:

¹ Տե՛ս Վեր. Համբարձում Յ. Աչճեան, Ատանայի եղևոնը... էջ 152-153:

² «Մշակ» (Թիֆլիս), № 228, 16 հոկտեմբերի 1908 թ.:

Հայնաձավայ ոճրագործությունների մյուս գլխավոր պատճառն եղավ Կիլիկիայից հեռացած հայ գաղթական գյուղացիների մի մասի վերադարձը:

Հայերի 1895-1896 թթ. դանգվածային կոտորածների ժամանակ և դրան հաջորդած տարիներին Հայաստանի, Թուրքիայի և այլ վայրերի, այդ թվում Հայկական Կիլիկիայի, հարյուրավոր գյուղեր դատարկվել էին և դարձել թուրքերի, քրդերի ու չերքեզների սեփականություն: Եվ ահա՝ 10-12 տարի առաջ իրենց բնակավայրերից քշված կիլիկիահայերից շատերն այժմ, հեղափոխությունից հետո, իրավունք ստանալով, սկսել էին վերադառնալ և իրենց գյուղերում վերահաստատվելու թույլտվություն պահանջել: Իշխանություններն սկզբում ընդառաջ էին զնացել և մի քանի գյուղերից քրդերին տեղահանելով, դրանք հանձնել էին նախկին տերերին: Բայց այդ գործընթացը շատ շուտով կանգ էր առել:

Բանն այն էր, որ քրդերը և թափառաչրջիկ մյուս ցեղերը, հաստատվելով հայկական գյուղերում, դարձել էին նստակյաց կամ կիսանստակյաց, քիչ թե շատ ընտելացել էին երկրագործությունը, իսկ որոշ տեղերում նույնիսկ սկսել էին վար ու ցանք անել՝ հայերի հողերն այլևս իրենցը համարելով: Ուրիշի սեփականությունը զավթած հատկապես քրդերի շրջանում ծայր առած դժգոհության ու դայրույթի ալիքն իր սուր ծայրով ուղղվեց հայ ներգաղթողների և ընդհանրապես հայերի դեմ: Բարձրացած ընդհանուր դժգոհության ալիքը իշխանություններին ստիպեց քրդերին տեղահանելուց ձեռք քաշել: Տեղի իշխանությունները հայտարարեցին, թե իրենց ուժերից վեր է հայերին իրենց բնակավայրերը վերադարձնելու հարցի լուծումը, իսկ Կ. Պոլսի երիտթուրքական կառավարությունը համաձայնություն տվեց ընդհանրապես օրակարգից հանելու խնդիրը:

Կիլիկիայի հետադիմական ուժերը կարողացան առավել արդյունավետ գործածել ներկայացած առիթը և այն ծառայեցնել իրենց մարդատյաց քարոզներին՝ իր եռման բարձրակետին հասցնելով նորարևակ ցեղերի դժգոհությունը կառավարության և այրող ատելությունը հայերի նկատմամբ:

Հավանական պատճառներից էր նաև այն, որ Թուրքիայի գանաղան անկյուններում Հայերը շարունակում էին պարծենկոտ գրգռումներ անել, ինչպես նաև առաջինը պայքար սկսել սուլթան Արդուլ Համիդի ինքնակալ ռեժիմի դեմ և առաջ բերել 1908 թ. օսմանյան հեղափոխությունը¹: Սահմանադրությունից ծնվել էր կիլիկիահայոց հիմար խանդավառությունը: Նշանավոր բանաստեղծ և հազվագյուտ լրջմիտ քաղաքական գործիչ Վահան Թերեյանն այսպես էր այն հայ քաղաքական գործիչներին ու մամուլի օրգաններին, որոնք «յիմարօրէն կը ծափահարէին» և այդ «ծափերուն աղմուկին մէջ կը խնդրէին ամէն յորջ մտածում, անկարող դառնալով ո՛րեւէ բանի վրայ խորհելու անգամ»²: Ինչպես Կ. Պոլսում, Իզմիրում և այլուր, Ադանայի հայ բնակչությունը նույնպես զրկում էին պարզամիտ ու անմեղսունակ թատերգություններ, որոնց մոտիվները փոխառնված էին ազգային պատմության ավանդավիպային շրջանից: Ոմանք իրենց տների պատերը դարդարում էին հին-հին դարերի հայ ազգային հերոսների՝ ուռուցիկ ուռնանտիգմով գծած պատկերներով և այլն³: Հայ գործիչներից ոմանք չէին կշռում իրենց ասելիքն ու գրելիքը: Այս կամ այն հայ քաղաքական խմբակցություն ցուցամոլական ընթացքը, ամբարտավան հայտարարությունները և չարչիական «ոսկյամճիւթիւնը» արտաքուստ անհաճո տպավորություն էին ձգում հայերի նեղմիտ զրացիների վրա: «Թերեւս այդ էր պատճառը, - կարդում ենք խնդիրն արծարծող մի աշխատություն մեջ, - որ խոհուն [հայ] առաջնորդներն իսկ ինկած էին միամիտ ու խանդավառ ցուցամոլություններից մէջ», առանց նկատի առնելու հետադեմ ու մոլեռանդ շրջապատը, որն «առաջին վերապահ ու զգոյշ էր իր արտայայտություններից մէջ հանդէպ նոր սահմանադրութեան: Մեր առաջնորդները փոխանակ խոհակա-նութեամբ ու շրջահայեաց կերպով պատրաստելու միամիտ ու անզիտակից հայ ժողովուրդը, իրենք ալ քշուեցան հոսանքէն,

¹ Տե՛ս «Կոհակ» (Կ. Պոլիս), № 1, 30 մայիսի 1909 թ.:

² «Շիրակ» (Կ. Պոլիս), № 14-15, 16 մայիսի 1909 թ., էջ 298:

³ Տե՛ս նույն տեղում, № 16, 25 մայիսի 1909 թ., էջ 335:

իրենք ալ խելագարած՝ առաջ նետուեցան պարապ ու սնուտի ցոյցերու և կեցցէներու անձնատուր»¹: Բնականաբար, Թուրքիայի գանաղան անկյուններում, այդ թվում Կիլիկիայում, թուրք և քուրդ վերնախավը և ընդհանրապես մուսուլման ամբոխը հայերի նկատմամբ լցվել էին ատելություններ ու վրեժխնդրություններ: Եվ այժմ, երբ հարմար առիթ էր ներկայանում, նրանք իրենց վրեժը յուծում էին²:

Վերջապես, Կիլիկիայի եղբրական ղեպրերի խորացմանը և աղետի ծավալմանը մեծապես նպաստեց 1909 թ. մարտի 31-ին սկսված հետադիմական շարժումը Կ. Պոլսում:

Այս ընդհանուր պատճառներից բացի, Կիլիկիայում ծագել էին նաև ուրիշ՝ տեղական պատճառներ:

Այդ պատճառների թվում չարաղետ ղեկ խաղաց Ադանա քաղաքում հրատարակվող, իրեն չափավոր համարող «Իթի-դալ» («Չափավորություն»): - Հ. Ս.) թերթը, որն արհեստ էր դարձրել քրիստոնյաների դեմ սաղրանքներ տարածելը, հատկապես հայերի դեմ մահմեդական ամբոխին գրգռելը:

Չարաչահելով մամուլի ազատության մասին հայտարարությունները՝ թերթն իր էջերից-անընդհատ ժայթքում էր հայության դեմ ուղղված հորդառատ մաղձ, բարեպաշտ մուսուլմանին և տգետ ամբոխին համոզում էր, թե հայերն ուզում են կործանել թուրքերի պետությունը և իրենց իշխանությունը հաստատել մուսուլմանների վրա:

Թերթի սանձարձակ հակահայ քարոզչությունը հնարավոր էր, որովհետև երկիրը թեև հայտարարվել էր սահմանադրական, բայց ըստ էության մնացել էր նախկինը՝ իր կարգ ու սարքով, մարդկային փոխհարաբերություններով, իշխանական բռնություններով, ժողովրդական զանգվածների տգիտությունը ու թշվառությունը: Թուրքիան միայն անունով էր ղեմկրատական, այն «սահմանադրական էր» միայն Կ. Պոլսում, իսկ կառավար-

¹ Տե՛ս Լէօ, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Հտ. Բ, Փարիզ, 1935, էջ 60:

² Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1988, էջ 14:

չական ձևով և հասկացություններով առաջվա պես բռնակալական էր զավատներում, այդ թվում՝ Կիլիկիայում:

Երկրորդ տեղական պատճառը պետք է տեսնել **Կիլիկիայի վարչախմբերի գործունեություն** մեջ: Հետադուրյան ժամանակները ցույց են տալիս, որ թուրք ղեկավարները Ադանայից մինչև Անտիոք տեղյակ էին, որ քրիստոնյաները կոտորածի են ենթարկվելու: Նրանք ոչ միայն որևէ արգելք չհարուցեցին արյունարբու խուժանի առջև, այլև ամեն կերպ խրախուսեցին ու առանձին դեպքերում նույնիսկ նրան առաջնորդեցին անգն ու անպաշտպան հայերի դեմ: Աննշան բացառություններով՝ Կիլիկիայի բոլոր պետական պաշտոնյաները, մեծ թե փոքր, այդ սև օրերին ամեն կերպ քաջայերև են սպանություններն ու կոդուպուտը:

Կիլիկիայում նույնպես, ինչպես կայսրություն մեջ ամենուր, նախկին ուժեղ ներկայացուցիչները, իրենց պաշտոնները պահելու համար, մտել էին Իթթիհատ կուսակցություն մեջ, հայտարարելով, թե սահմանադրություն ջերմ պաշտպաններ են: Իրականում, նրանք մնացել էին որպես միապետություն մոլի կողմնակիցներ:

Քաղաքական իրավիճակի փոփոխություն էին սպասում նաև իրենց աթոռներից զրկված մեծ ու փոքր նախկին պաշտոնյաները: Մի կողմ քաջված՝ նրանք ականատես էին երկրի ներքին կյանքի ելևէջներին և ամեն վայրկյան պատրաստ էին, պահը ներկայանալու դեպքում, անցնել Կարմիր սուլթանի կողմը, ոտնատակ տալ սահմանադրությունը և փորձել տեր դառնալ որևէ պաշտոնի՝ անգամ կյանքի գնով: Այդ նպատակը հետապնդելով, նախկինները քարոզչական խույ աշխատանք տանելով, վրեժի թույն էին սրսկում ամբողջ երակների մեջ և նրան տրամադրում սահմանադրականների ու, առաջին հերթին, սահմանադրությունը ջերմորեն պաշտպանած հայերի դեմ: Եվ երբ մարտի 29-ին միապետականները Կ. Պոլսում բացահայտորեն հանդես եկան սահմանադրության դեմ և 1908 թ. հուլիսի 11-ից ի վեր առաջին քարը նետեցին Իթթիհատի վրա, այնժամ շարժվեցին նաև Կիլիկիայի վարչախմբերը՝ ստանալով պաշտոնագուրկ նախնիների լիաբուռն քաջայերանքը: Եկել էր հին հաշիվները մաքրելու ժամանակը և պետք էր օգտվել թանկագին բույսերից:

Վերջապես, Կիլիկիայի աղետի տեղական լուրջ պատճառներ

րից մյուսն առնչվում էր **հայերի տնտեսական վիճակին**:

1895-1896 թթ. ջարդերի ընթացքում կիլիկիահայերը նույնպես կրել էին մարդկային ու նյութական ոչ քիչ կորուստներ: Բայց հետագա 10-12 տարիների ընթացքում Կիլիկիան համեմատաբար խաղաղ վայր էր եղել հայերի համար, քան բուն Հայաստանի գավառները: Գերագույն տրնությունը նրանք կարողացել էին վերականգնել իրենց տնտեսությունը, շարունակել էին առաջադիմել առևտրի և արհեստների ասպարեզներում, տիրացել էին բավական լավ դիրքերի, տեղ-տեղ նույնիսկ հասել իմական առավելություն: Այդ ամենին նպաստել էր այն համաձայնքը, որ ավերակ ու սովի մատնված Հայաստանից արտագաղթած հազարավոր հայեր Կիլիկիա էին եկել ապրուստի միջոցներ հայթայթելու և հաստատվել էին այնտեղ: Ինչպես թուրքերի, նույնպես և հայերի ազարակները զաշտային աշխատանքների ժամանակ դեպի իրենց էին գրավում տասնյակ հազարավոր բանվորների, որոնց բացարձակ մեծամասնությունը հայեր էին: Դրսից եկած բանվորական մեծամթիվ ձեռքերի շնորհիվ Ադանայի բարերը զաշտն սկսել էր ստանալ իր նախկին նշանակությունը:

Արդար վաստակով կարճ ժամանակում հայերի ձեռք բերած տնտեսական աճն առաջ էր բերել մահմեդականների դժգոհությունը: Գյավուրի գեղեցիկ հարսը, գեղեցիկ ձին, գեղեցիկ զգեստը գրգռում էին թուրքերը ջղերը: Սրանց անցնելու ժամանակ գյավուրը պարտավոր էր ոտքի կանգնել: Թուրքը հալածում էր նրան, բայց հայը բռնակալություն ծանր շղթաների տակ անգամ շարունակում էր զարգանալ ու տարածվել: Թուրքերը և քրդերը չէին կարողանում հանդուրժել, որ իրենց ենթակա մի ազգ, քրիստոնյա դրացին, բարգավաճ է, ունի լավ ընտանիք, հանգստավետ տներ, չեն այգիներ ու ազարակներ, լիառատ խանութներ, իսկ իրենք շարունակում են մնալ միջնադարյան խավարում: Հայերի հետ մրցելու անկարողությունը մի կողմից նրանց մոտ առաջ էր բերում թերարժեքություն անհաղթահարելի բարդույթ, մյուս կողմից՝ վրեժի խոր զգացումներ: Թուրքերի ու քրդերի խեղճ նայվածքը, մթին ու լուռ զգացումները միշտ արթուն էին և սպասում էին հայի ունեցվածքին տեր դառնալու երանելի օրվան:

Հայության վերելքն անհանգստություն և տագնապ էր առաջ բերել նաև թուրք կառավարություն և Կիլիկիայի վարչախմբի մոտ: Նրանք եկել էին այն եզրակացություն, որ Հայերի առաջնությունը կանգնեցնելու համար մի միջոց կա միայն՝ նրանց ոչնչացնել՝ ջարդն սկսելով Աղանայից, ուր Հայերի դիրքը, թե՛ իրրև վաճառական, թե՛ իրրև գործարանատեր ու հողատեր, աչքի ենկնող երևույթ էր:

Ոճիրը կանխամտածված էր. կոտորածների կազմակերպիչները նախապես գործողությունների մանրամասն ծրագիր էին մշակել: Նրանց գերնպատակը Կիլիկիան լիովին հայաթափելն էր. Հայերի բոլոր բնակավայրերը, ունեցվածքն ու հողերը սեփականացնելը: Որպեսզի կոտորածից փրկված Հայերը հետագայում իրենց բնակություն վայրերը չկարողանային վերադառնալ, պետք էր նրանց տները հնարավորինս չուտ հրդեհի մատնել:

Ինչպես ընթերցողը կտեսնի, Կիլիկիայի հարյուրավոր ոչ միայն խառը բնակչություն ունեցող հայաբնակ գյուղերի, այլև զուտ հայկական գյուղերի նախկին անուններից համարյա բան չէր մնացել: Ընդհար էր դրված ջնջել ղեռես գործածություն մեջ գտնվող մի քանի բնակավայրերի հայկական անվանումները ևս, ինչպես նաև լճերի, գետերի, սարերի բոլոր հայկական տեղանունները: Այդ միջոցով Կիլիկիան, որ մի ժամանակ հայկական էր, պետք է զուտ թուրքական դառնար՝:

Դրված նպատակին հասնելու համար նախատեսված էր Հայերին ոչնչացնել ընտանիքներով, որպեսզի գերդաստանից որևէ մեկը չազատվեր ու հայրենի օջախ վերադառնալու փորձ չաներ: Ցուցում էր տրված ջարդն սկսելուն պես առաջին հերթին անխնա կոտորել տղամարդկանց, գլխավորապես երիտասարդներին, որոնք կարող էին գլխացավանքի պատճառ դառնալ, ինչպես նաև անվանի ու հարուստ մարդկանց, որոնց ազդեցիկ խոսքով ու նյութական միջոցներով հնարավոր էր, որ դիմադրություն օջախներ ստեղծվեին: Պետք էր անհնարին դարձնել Հայերի միմյանց օգնություն գնալը, ուստի փակվելու էին գյու-

* Նշենք, որ Կիլիկիայի դաշտային մասի Հայությունը «յեզուն կտրելու» սպանալիքի տակ ղեռես ուշ միջնադարում ստիպված է եղել խոսել միայն թուրքերեն և 3-4 սերունդ հետո մոռացել մայրենին:

դամիջյան ճանապարհները և լիովին դադարեցվելու էր երթևեկությունը: Ծովափնյա բնակավայրերում արգելքներ չէին ստեղծվելու եզրատուս և ավելի հեռու փախչողների առջև:

Տղամարդկանց կոտորելուց հետո հայկական բնակավայրերում կմնային կանայք, ծերերն ու երեխաները, որոնց հաշվահարդարը մեկ-երկու օրվա խնդիր կարող էր լինել: Ըստ որում՝ կանայք և, մանավանդ, գեղեցիկ աղջիկները «արդարացի» բաժանվելու էին արյունալի գործողություններն իրականացնողների միջև: Նույն կարգով սրանք ստանալու էին թալանված արժեքավոր իրերը՝ յուրաքանչյուրն իր դրսևորած եռանդի ու դաժանություն չափի համեմատ: Հայերի տներում մնացած ոչ արժեքավոր իրերը, տների հետ, պետք է հանձնվեին կրակի բոցերին՝ այնտեղ ապրած Հայերի հետքն անգամ կորցնելու համար:

«Բիւղանդիոն» (Կ. Պոլիս) թերթի № 3719-ում (17 (30) դեկտեմբերի 1908 թ.), «Ատանայի քաղաքային վիճակը» վերնագրով և «Թղթակից» ստորագրությունը տպագրված՝ Ատանայից ստացված հոդվածում կարդում ենք. «Բռնապետություն օրով մեր վիլայեթը աւելի խաղաղ վիճակ մը ունէր քան թէ հիմա: Եւ կարգ մը իրողութիւններ տակաւ մեզի սա համոզումը կազմել կու տան, թէ Սահմանադրութեան կատակերգութիւնը հետզհետէ ողբերգութեան արիւնտ տեսարաններ ցուցադրելու պատրաստուած է»: Հոդվածագիրը հայտնում է, որ «Ճէպէլի (Ջերել-Բերեքթ: - Ն. Ս.) գիւղերէն շփոթութեանց եւ կոտորածի վախեր» ծագել են, ապա նկարագրում Աղանայում և Միսիսում հայ-թուրք կենցաղային վեճերի հիման վրա առաջացած լարվածությունը և իշխանավորների կողմնակցությունը ի նպաստ թուրքերի: Երբ Աղանայի թեմի առաջնորդ Մուչեղ եպիսկ. Սեբրեյանը բողոքում է կուսակալին, սա վրդովված չպրտում է սրբազանի երեսին. «Ի՞նչ է, կարծում եք՝ մեռե՞լ ենք»:

Եվ այսպես, արյունի ու հրդեհի մրրիկ պիտի պայթեր Կիլիկիայան աշխարհի վրա՝ մեռցնելով ամեն հայի, փյոյով ամեն երդիկ, մարելով ամեն օջախ:

Թուրքերի կրոնական մոլեռանդությունը բորբոքելու և Հայերի կոտորածի առիթ ստեղծելու նպատակով, ջարդի կազմակերպիչների ցուցումներով՝ Աղանայի Ուլու Ջամիի (Մեծ մզկիթ) դռանը գիշերով աղտեղություն են քսում: Առավոտյան դա մեծ հուզում առաջ բերեց Հավատացյալների շրջանում: Մզկիթ եկած թուրքերը, անեծքներ տեղալով բանից անտեղյակ Հայերի հասցեին, երգվում էին անպատասխան չթողնել և անպայման վրեժ լուծել:

Այդ առթիվ Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Բ Խապայանը Աղանայի հայոց թեմի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսին ուղարկած գրություն մեջ ցավով և տագնապով նշում էր, որ սաղրիչներն արյուն խմելու իրենց գաղանթությանը հազուրդ տալու համար իրենց իսկ ձեռքով պղծում են սեփական սրբությունները, ասելով, թե դա հայն է արել: Նրանք դարերով այս մեթոդին հետևած են՝ և այժմ էլ շարունակում են հետևել:

1909 թ. մարտի կեսերին մի խումբ ելուզակներ Աղանայի իրենց թաղերում գոռում-գոչյուններով ցեղակիցներին փողոց հանեցին այն պատճառարանությամբ, թե «Քրիստոնյաները ծրագրել են այս գիշեր պաշարել ու ոչնչացնել մեր զորամասը: Արթո՛ւն և պատրա՛ստ կացեք»: Թուրք բնակիչները, սոսկայի իրարանցման մեջ, ամբողջ գիշերն անցկացրին դրսում: «Մինչդեռ ասդին, - գրել է աղանահայերից մեկը, - [մեր] թաղերուն մէջ անցուղարձէն անտեղեակ, կը քնանայինք մեր անկողիններուն մէջ»²:

Քաղաքում շինծու լուրեր էին տարածվել, թե Աղանայում և Մերսինում հայերը ռազմաշունչ երգեր են երգում: Սաղրիչ լուրերի թվում էր և այն, թե մի հայ եպիսկոպոս, պտտվելով Կիլիկիայի դաշտում, ժողովրդին խրատ է կարգում քիչ ուտել,

քիչ ծխել, վաճառել ամեն ինչ, նույնիսկ հագի ղզեստը, և զենք գնել, ավելին, որ այդ նույն հոգևորականը յուսանկարվել է՝ գլխին արքայական թագ դրած:

Օրերից մի օր էլ լուր տարածվեց, թե «Հաճրնի հայերը ապստամբել են և շարժվում են Աղանայի վրա»: Թուրքերը դարձյալ տագնապի մատնվեցին:

Այս և մյուս բոլոր սաղրանքների ժամանակ նահանգի կառավարչությունը որևէ միջոց չէր ձեռնարկում դրանց հեղինակներին բացահայտելու և պատժելու համար:

Երբ իշխանությունները համոզվեցին, որ անվերջ հերյուրանքներով ու ստերով դժվար է հայերի դեմ դանգվածարար հանել հավատակիցներին, այս ու այն տեղ անհատ հայերի սպանություններ կազմակերպեցին:

Քաղաքում ստեղծված թուրքական մի գաղտնի կազմակերպության պատկանող խմբերից մեկի անդամները, մարտի 15-ից սկսած գիշերները ցրվում են հայկական թաղերում, հանդիպած հայերին ձեռնում ու խոշտանգում, հափշտակում նրանց մոտ եղած դրամը և այն ամենն, ինչ ունեին իրենց մոտ: Երկու-երեք օր հետո այդ խումբը հայերին համարձակորեն կողոպտել սկսեց նաև ցերեկները¹:

Այդ կազմակերպությունների խմբերից մի ուրիշը, որի պարագլուխն էր Կարա Ալի անունով մեկը, դարանակայելով քաղաքի եզերքին, հարձակվել էր դաշտից եկող հայ մշակների վրա, ձեռնել ու թալանել: Երկու օր հետո նույն խումբը հարձակվել էր քաղաքից դուրս գտնվող և լիբանանցի Շաքեր Բուլթրոսին պատկանող բամբակագործի գործարանի հայ աշխատողների վրա և դարձյալ կողոպտել²:

Տագնապալի լուրեր էին գալիս նաև նահանգի ուրիշ վայրերից:

Մարտի 16-ին Միսիսից կառքով Աղանա եկող երեք հայեր քաղաքից 8-10 կմ հեռավորության վրա ենթարկվում են հար-

¹ «Կիլիկիան կակիծներ - Վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական ղիւանէն», Բեյրութ, 1927, էջ 73-74:

² Ցակոբ Յ. Քէրզեան, Կիլիկիոյ աղէտը, Կ. Պոլիս, 1912, էջ 12:

¹ Տե՛ս Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, Բոստոն, 1910, էջ 46:

² Տե՛ս նույն տեղում:

ճակման: Ելուդակները կառքից իջեցնում են նրանց, ասելով, որ «գյավուրներն իրավունք չունեն կառք նստելու» և որ «այս անամոթները» իրենց տեսնելով կառքը չեն կանգնեցրել, չեն իջել և գլխիկոր չեն բարեկեց: «Բիւզանդիոն» գրում էր, թե «ասիկա կը յիջեցնէր Շէրիաթի այն հին բարի ժամանակները, երբ թուրք մը ճամբան կեսավուրի մը պատահէր, իր շայակի բևոն անոր քամակը կը դնէր կամ ոտքերը նոր կօշիկ մը տեսած ատենը, ասիկա կեսավուրի մը չի պատշաճիր ըսելով, կ'առնէր ու փոխարէնը կու տար իր հին կօշիկը: Կառքը կանգնեցուցած թուրքերը Շէրիաթ ըսելով այս հին բարի ժամանակներուն կ'ակնարկէին»¹: Ճանապարհորդներին ձեռնարկով ու կիսամետ վիճակի հասցնելով, ոճրագործները հեռանում են:

Մարտի 17-ին Օսմանիեից Հաճըն գնացող երեք հայ ջորեպաններ հռոտովեցին Միսի մոտերքում: Ոճրագործները հայտարարեցին, թե իրենք այդ հայերից վրեժ են լուծել այն բանի համար, որ նրանց ազգը պաշտպան է կանգնած սահմանադրութեանը, որը գալիս է ոտնատակ տալու Շերիաթը: Նույն ժամանակ Կարս-Բազարի մոտերքում անհետացան Գրիգոր Տատրյան և Եփրեմ Պուրճազյան անուններով երկու հայ, որոնց մարմինները գտնվեցին միայն մի ամիս հետո, մի ամայի տեղում:

Հաճընից Կեսարիա տանող ճանապարհի վրա, Կազբել կոչվող տեղը ոճրագործները մարտի 18-ին հարձակվում են 10 հայ որբուհիների վրա, որոնք ամերիկացի միսիոներների ուղեկցութեամբ Հաճընից Կեսարիայի ամերիկյան որբանոց էին տեղափոխվում: Միսիոներների աչքի առաջ նրանք բռնաբարում են բոլոր աղջիկներին և հեռանում:

Միսից Աղանա տանող ճանապարհին մի խումբ իսլամ ավազակներ մարտի 19-ին հարձակում են գործում հայ երթևեկների վրա, որոնք տարբեր վերքեր ստանալով, հազիվ կարողանում են իրենց նետել Աղանա: Հաջորդ օրը Տարսուսի ամերիկյան քոլեջի ուսանողներից անտիոքցի 18-ամյա Առաքել Բերրերյանը Համիդիեի մոտերքում հանդիպում է մի խումբ թուրքերի, որոնք

սկզբում նրան դաշունահարում են, ապա ատրճանակի հինգ կրակոցով սպանում²: Մարտի վերջերին ոճրագործները ազատ, համարձակ իրենց գործը տեսնում էին արդեն Աղանա քաղաքի կենտրոնական թաղերում: Խժղժուխությունները գնալով փտանգավոր ծավալներ էին բնորոշում³:

Հակառակ բազմաթիվ բողոքներին, կառավարությունը որևէ հանցագործի ձերբակալելու փորձ անգամ չարեց:

Ջարդն սկսելուց առաջ թուրք ու քուրդ ոճրագործներն արդեն լուծել էին զինվելու խնդիրը:

Իշխանությունների անմիջական հրահանգներով պետական պահեստներից դուրս էին բերվել մեծաքանակ զինատեսակներ, հիմնականում ժամանակի տարրեր տիպի հրացաններ ու ատրճանակներ ու հանձնվել հրոսակներին: Վերջիններս զինված էին նաև տանը եղած ավանդական զենքերով՝ սրերով ու դաշույններով: Խուժանն իր զինանոցը նախապես համալրել էր նաև հայերին և մյուս քրիստոնյաներին ոչնչացնելու զիվային մի քանի տեսակի ինքնաշեն գործիքներով: Աղանայի ոճրագործների չար մտքի արտադրանքն էր, օրինակ, սուր ու կեռ ծայրով երկաթե ձողը՝ քրիստոնյաների գլուխներին հարվածելու և ուղեղները դուրս թափելու համար:

1909 թ. մարտի երրորդ տասնօրյակում ամեն ինչ պատրաստ էր. կա՛ր ջարդերի մանրամասն մշակված ծրագիր, կա՛ր արյունայի գործը գլխավորելու կառավարչությունից վճռականությունը, և կա՛ր կազմ ու պատրաստ ամբոխը, որը միայն հրամանի էր սպասում: Մնում էր մի առիթ՝ սանձազերծելու ոճիրը:

Եվ այդ չարագուշակ առիթը ներկայացավ:

Աղանա քաղաքի հայկական թաղամասերից մեկում՝ Շաբանիե (որը նաև կոչվում էր Թոսրաղա Գալեսի) աղքատ թաղամասում էր բնակվում Բալու գյուղաքաղաքից եկած և այդտեղ հաստատված Կարապետի ընտանիքը: Նրա նոր ամուսնացած

¹ «Բիւզանդիոն» (Կ. Պոլիս), № 3825, 29 ապրիլի (12 մայիսի) 1909 թ.:

¹ Տե՛ս Գրիգոր Գուտուպեան, Հայ լեռ..., էջ 34:

² Տե՛ս «Արևելեան մամուլ» (Իզմիր), № 17, 21 ապրիլի 1909 թ., էջ 492-495:

20-ամյա* որդին՝ ՀՅԴ անդամ Հովհաննեսը, մարտի 21-ի երեկոյան աշխատանքից տուն վերադառնալիս, ճանապարհին հանդիպում է մի թուրք ոճրախմբի՝ հայտնի հայաստաց ափազակ Իսֆենդիարի գլխավորութեամբ: Կանգնեցնելով երիտասարդին և չըջապատելով նրան՝ թուրքերը սպառնազին պահանջում են այդտեղ իսկ բավարարութիւն տալ իրենց անասնական կրքերին, որից հետո նույն նպատակով ժամանակավորապես իրենց հանձնել կնոջը: Պատվասեր և ըմբոստ երիտասարդը կտրականապես մերժում է ստոր առաջարկները, որին հետևում են նրա ծեծն ու ջարդը: Ուշակորույս երիտասարդին թողնելով ճանապարհին ընկած, ոճրագործները հեռանում են:

Հետևյալ օրերին Հովհաննեսը բողոքով դիմում է ոստիկանութիւն, դատախազութիւն և նույնիսկ կուսակալին՝ պահանջելով պատժել Իսֆենդիարին և նրա խմբի անդամներին, բայց նրան լսել անգամ չեն ուղում և ծաղրանքով դուրս են վռնելով ամեն տեղից՝:

Ափազակ Իսֆենդիարը և նրա հանցակիցները տեղեկանալով, որ Հովհաննեսը բողոքել է իշխանութիւններին ու ոչ մի պաշտոնյայից աջակցութիւն չի ստացել, ավելի գոտեպնդված, որոշում են սպանել նրան՝:

Իմանալով ոճրագործի մտադրութեան մասին՝ Հովհաննեսը այլ ելք չի տեսնում, քան դիմել իր կյանքն իր ձեռքով պաշտպանելու միջոցին: Այդ նպատակով նա շուկայից գնում է հինգհարվածանի մի փոքրիկ ատրճանակ և պահում իր մոտ:

Մեկ շաբաթ հետո, մարտի 27-ի երեկոյան, Իսֆենդիարն իր երկու արբանյակների հետ թաքնվում և սպասում է ճանապարհի այն հատվածում, որտեղով աշխատանքից տուն պիտի վերադառնար Հայ երիտասարդը: Երբ Հովհաննեսը մոտենում է, ոճրագործները մերկացրած դաշույններով և ատրճանակները հանած՝ դուրս են գալիս թաքստոցից ու հարձակվում նրա վրա: Հայ երիտասարդի աղաչանք-պաղատանքները չեն օգնում: Տես-

նելով, որ կյանքի վերջին րոպեներն են, Հովհաննեսը, տեղից պոկվելով, հանում է ատրճանակը և սկսում կրակել իրեն տանջողների վրա: Առաջինն ափազակապետ Իսֆենդիարն է անչնչացած փոփում գետնին, իսկ նրա ենթականերից մեկը ծանր, մյուսը թևթև վերքեր են ստանում: Ինքը՝ Հովհաննեսը, փախչելով աղատվում է՝:

Դեպքի հաջորդ օրն իսկ, մարտի 28-ի առավոտյան, մեջտեղ ելան հայերին ջարդելու համար առիթ փնտրող թուրքերը: Վերցնելով Իսֆենդիարի դիակը՝ նրանք սկսեցին պատեցնել թուրքական թաղերով մեկ, որից հետո գերեզմանոցում կատարվեց մարդաչատ թաղում: Եղան հուղիչ, զրգոյչ դամբանականներ, որից հետո հուղարկվորները դիմեցին Շաարանիե թաղը, պաշարեցին Կարապետի տունը և նրանից պահանջեցին հանձնել որդուն: Պարզ էր, որ այդ դեպքում երիտասարդին անմիջապես ըզկտելու էր գաղանացած ամբոխը: Երբ ծնողներն ու կինը հայտնեցին, որ չգիտեն, թե ուր է Հովհաննեսը, թուրքերի մի խումբ հարձակվեց և ոտքի տակ տվեց նրանց, ապա խուժեց տուն և ամբողջովին ավերակեց՝:

Այդ լարված պահին, մարտի 28-ին, թուրքերին ավելի զրգոելու համար, սաղրիչները Սաաթխանեի հրապարակի մոտերքում սպանում են Լուիթֆիկ անունով մի կեսարացի հայի, որի թլպատված լինելու մասին նախապես տեղեկութիւն էին ունեցել: Մարդասպաններն անմիջապես սկսում են քաղաքով մեկ տարածել, թե «գյավուրներն էլի մի նոր իսլամի են սպանել և որոշել են մեզ ամենքիս ջարդել»: Բոլոր թուրքական թաղերը դայրույթից սկսում են եռալ: Քինոտ սրտերը վրեժ էին ուզում: Նրանցից մի քանի հարյուր հոգի հավաքվում են կառավարչատան մոտ և պահանջում «իսլամի արյունը լվանալ գյավուրների արյունով»: Սպանվածին ճանաչող մի քանի թուրք կասկած են հայտնում, թե նա կարող է հայ լինել: Կառավարչութիւնում ստիպված որոշում են դիակը ենթարկել բժշկական քննութեան և

* Որոշ աղբյուրներում՝ 17-18-ամյա:

¹ Տե՛ս «Գրօզակ» (Ժնև), № 5, մայիս, 1909, էջ 54:

² Տե՛ս «Բիւզանդիոն», № 3815, 17 (30) ապրիլի 1909 թ.:

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3809, 9 (22) ապրիլի 1909 թ., նույն տեղում, № 3815, 17 (30) ապրիլի, 1909 թ.:

² Տե՛ս Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 19-20:

կանչում են Քերովըն Զեզվեջյան անունով բժշկին, որը դիա-
ղնոսթյունից հետո համարձակություն է ունենում հայտարա-
րելու, թե սպանվածը հայ է՝ ատաղձագործ Լուիթֆիկը, որին
ինքը մի քանի օր առաջ ենթարկել է վիրարուժական գործողու-
թյան, միաժամանակ ցույց է տալիս հանգուցյալի թևի վրայի
խաչանչանը¹:

Քայց բժշկի հավաստի վկայությունը բավական չի լինում
հանդարտեցնելու կրքերը: Վրեժխնդիր լինելով՝ թուրքերն
սկսում են հայերի սպանություններ քաղաքի տարրեր մասերում:

Մարտի 30-ին մեռավ երկու վիրավոր թուրքերից մեկը: Մու-
սուլմանների հուղմունքը հասավ գազաթնակետին: Այս մահա-
ցածի թաղումը նույնպես կատարվեց հսկա թափորով: Գերեզ-
մանատանն ամբոխը նորից գոռում-գոչում էր, նորից եղան
բազմաթիվ հրահրիչ դամբանականներ: Քաղաքի հայերին ջար-
դելու կոչեր էին արվում արդեն: Թաղումից հետո թափորը
կրկին ուղղություն վերցրեց դեպի Շաարանիե՝ պատրաստ
տակնուվրա անելու ամբողջ թաղը: Այնտեղի հայ բնակիչները,
մատնված ահ ու սարսափի, քաղաքի կենտրոն փախան:

Միաժամանակ, Աղանայի հաղարավոր ուրիշ թուրքեր,
դուրս գալով փողոցներ ու հրապարակներ, հայերի հասցեին
ամենագազրելի հայհոյանքներ ու սպառնալիքներ տեղալով,
չարժվեցին դեպի նահանգապետի նստավայր և պահանջեցին՝
ամեն կերպ ու ինչ գնով էլ ուղում է լինի, գտնել և դատաստանի
ենթարկել «գյավուրի ձագին»: Կուսակալ Մեհմեդ Զեզվեջյանը ոչ
միայն որևէ միջոց չձեռնարկեց կարգը վերականգնելու համար,
այլև, իր հերթին, յուր լցրեց կրակի վրա, է՛լ ավելի զրգուկով
առանց այն էլ ավերից դուրս եկած ամբոխին:

Մարտի 31-ին ամերիկացի միսիոներ Վիլյամ Ն. Չեմբրսը,
բժիշկ Համբարձում Սալիբյանը և Աղանայի հայ ավետարանա-
կանների հոգևոր հովիվ վերապատվելի Համբարձում Աչճյանը
գնում են կուսակալի մոտ և խնդրում միջամտել դեպքերին ու
կարգը վերականգնել: Արդուլ Համիդի պալատում քարտուղար

¹ Տե՛ս Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը և պատասխանատուները, էջ 49:

աշխատած Զեզվեջյանը հայերի դեկավարներից անդրդվելիորեն
պահանջում է «չտապ գտնել և իրեն յանձնել յանցագործին»:
Վերջիններս պատասխանում են, որ որևէ մեկը չգիտի նրա տե-
ղը, և որ մարդ ձերբակալելու պարտականությունը իրենցը չէ,
այլ իշխանություններինը¹: Նույն ժամերին կուսակալին լուր է
հասնում, որ Հովհաննեսը հասցրել է նավ նստել, հեռանալ Թուր-
քիայի սահմաններից ու հանգրվանել Կիպրոսում: Նա, բորբոք-
ված, իր մոտ է կանչում վերապատվելի Աչճյանին, սպառնում ու
նախազգուշացնում, որ պահանջը չկատարելու դեպքում քաղա-
քի հայերը ծանր են հատուցելու: Վերադառնալով իր եկեղեցին,
վերապատվելին, ահ ու սարսափի մատնված, ասում է. «Կու-
սակալին բերանը լաւ չի գտայ, սոսկայի վտանգի մը առջեւ կը
գտնուինք»:

Մարտի 31-ի լույսը բացվեց՝ իր հետ բերելով թուրքերի իրա-
բանցումն ու գոռում-գոչյունը և սարսուռից սսկված հայերի լե-
ղաճաք դարհուրանքը:

Տեսնելով, որ նահանգապետ Զեզվեջյանը ի վիճակի չէ բան-
տարկելու հայ երիտասարդին, թուրք ամբոխը, «գյավուրի լա-
կոտին» գտնելու պատրվակով, մտնում է հայկական թաղերը և
սկսում տների խուզարկումը: Հայտնաբերվում է մի քանի հրա-
զեն: Դա նոր առիթ է մատուցում թուրքերին, որոնք, չըջվելով
իրենց թաղերում, այդ հատուկենտ զենքերը ցուցադրում են ցե-
ղակիցներին և հայտարարություններ անում, թե հայերը քաղա-
քի թուրքերի վրա հարձակվելու ու նրանց կոտորելու լայն
պատրաստություններ են տեսել: Միաժամանակ, նրանք իրենց
թաղերում «գործի վրա» էին, զենք էին փոխադրում և բաժա-
նում իրար միջև, այս ու այն կողմ վազվղելով՝ վերջին պատրաս-
տություններն էին տեսնում:

Իր հերթին, վարչախումբը չըջակա գյուղերից հազարավոր
թուրքեր կանչեց Աղանա՝ օգնություն: Կեսօրին հատուկ խմբերն
սկսեցին նշաններ անել հայերի տների ու վաճառանոցների վրա:
Մյուս կողմից, չարաղետ դեր կատարեցին թուրք հոգևորական-
ները. մոլլաները մզկիթներից զրգուկ էին «հավատացյալներին»

¹ Տե՛ս Վեր. Համբարձում Յ. Աչճյան, Ատանայի եղեռնը..., էջ 148:

վայրենի բնագղները և նրանց ղենքի կոչում՝ «Հղփացած գյափուրներին դատաստանի ենթարկելու» համար:

Հայերն իրենց գլխին կախված ջարդի մղձավանջից ահուղողի մեջ էին: Ծատերը, սակայն, դեռ լավ չէին բմբոնում, թե ի՞նչ է կատարվում իրենց շուրջը, ինչո՞ւ են թուրքերն այդպես իրար անցել: Իսկ ովքեր հասկացել էին, միամտորեն վստահ էին, որ եթե մուսուլմանները հանկարծ փորձեն ղենք գործածել, ապա տեղի «բարեխնամ», «սահմանադրական» կառավարչությունն անմիջապես զորք կհանի և հակասահմանադրական ամեն մի կույթ կճնչի:

Նախքան արյունալի գործողությունների ղիմելը, մարտի 31-ի երեկոյան, մոլեռանդ խուժանը հավաքվեց նահանգապետարանի առջև և նահանգապետ Ջեաղ բեյից պահանջեց հայերին ջարդելու պաշտոնական հրաման տալ: Վերջինս դեռ նույն օրվա առավոտյան հեռագիր էր հղել Կ. Պոլիս և ջարդն սկսելու թույլտվություն խնդրել. ուստի խուժանապետերին հորդորեց քաշվել տները և պատրաստ սպասել, մինչև որ մայրաքաղաքից կգա իր հեռագրի պատասխանը:

Հաղարավոր ոճրագործներից կազմված խուժանն սկսեց ղժգոհել ու վայնասուն բարձրացնել: Բուպեններ անց, բազմութունը գոռում-գոչյունով հարձակվեց նահանգապետարանի շրջակայքում պատահած քրիստոնյաների վրա՝ արյունլվա աննլով նրանց: Տասնյակ հայեր վերքեր ստացան: Մոլեռանդ ամբոխը, կանգնած քաղաքի փողոցներում ու հրապարակներում, կազմ ու պատրաստ, հրամանի էր սպասում:

Մարտի 31-ի լույս ապրիլի 1-ի գիշերը հայությունն անցկացրեց տազնապալի պահեր, սարսափի մեջ: Իրր քիչ էր օսմանյան պետությունում հայածանքի ու շարչարանքի դատապարտված ազգի ղավակ լինելը. հիմա էլ կյանքից ղրկվելու սպառնալիքն էր նորից ցցվել հայի առջև:

Ընղամենը 2-3 ժամ հետո ժայր էր առնելու սոսկալի աղետը, բացվելու էին հայկական նահատակությունն նոր ու ցնցող տեսարանները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԴԵՐԸ ԱԴԱՆԱ ՔԱՂԱՔՈՒՄ

Վրա հասավ պահը, երբ արյունի ու հրղեհի մրրիկը պիտի տարածվեր Կիլիկիայով մեկ՝ տասնյակ հաղարավոր հայերի ղերեղմանելով ու հաչմանղամելով:

Աղանա՛ ... Կիլիկիայի այս քաղաքը ահուղի ոճրի հատուկ անուն ղարձավ: Հայերի համար նա ղարձավ ղաղանությունն հրեչավոր մի հուշարձան՝ իր մեջ ամփոփած թուրքի վրիժառությունը, քրղի վայրենի բնագղները և եվրոպացիների երեսպաշտությունը: Աղանայի ջարղերն ամենասոսկալիներից էին, որ երրեկ պատահած էին Օսմանյան կայսրությունն մեջ: Դրանք թուրք և քուրղ տղետ ամբոխի համար լինելով օրենքով ու կրոնով նվիրաղործված մի սրբաղնաղործություն՝ ղալիս ու եվրոպացու համար ղառնում էին լոկ հետաքրքրարժան մի տեսարան՝ աննախաղեպ ոճիրները ղիտելու ու ղոհերի կողքով անտարրերությունը անցնելու:

Աղանա՛ քաղաքը համանուն վիղայեթի վարչական կենտրոնը լինելով՝ նաև տնտեսական ու մչակությունն խոշոր կենտրոնատեղի էր: Դրա ղոյությունը հաչվվում էր ավելի քան 2000 տարի:

Կիլիկիայի այս ամենամեծ քաղաքը 1909 թ. սղղրին ուներ 66.000 բնակիչ, որից թուրք՝ 25.000, Ֆելլահ (ալեի արաբ)՝

* Ենթաղղում է, որ «Աղանա» բառը ձևափոխված տարրերակն է փյունիկերեն «աթան» բառի. որը նչանակում է «ուռենի»: Քաղաքի հիմնաղղման ժամանակ նրա արեկյան կողմով անցնող Միհուն գետի եղերքներում իրր ուռենիների անտառներ են եղել:

15.000, հայ՝ 22.000 (ըստ որում լուսավորչական՝ 20.000, ավետարանական՝ 1500, կաթողիկե՝ 500), հույն՝ 2000, ասորի՝ 1000, մարոնի՝ 600, քաղղեսցի՝ 400: Ամեն տարվա զարնանը, դաշտային աշխատանքների ժամանակ, Թուրքիայի տարրեր նահանգներից ու հատկապես Թուրքահայաստանից Աղանա քաղաք և չրջակա գյուղեր էին գալիս 40-50.000 աղքատ մշակներ ու գործավորներ՝ օրական մի քանի փարա չահեյու համար¹: Այդ էր պատճառը, որ երբ սկսվեց ջարդը, Աղանայում և չրջակայքում ավելի շատ հայեր կային, քան մյուս բոլոր ազգերի ներկայացուցիչները միասին վերցրած:

Ջարդից առաջ Աղանան ուներ 18 մզկիթ, 8 եկեղեցի, որոնցից 3-ը պատկանում էր Հայաստանյայց առաքելական եկեղեցու համայնքին, մեկը՝ հայ ավետարանական և մեկը՝ հայ կաթողիկե համայնքներին, մեկական եկեղեցի ունեին հունական, ասորական ու քաղղեսական համայնքները²:

Համայնքներն ունեին իրենց դպրոցները: Հայ համայնքի կրթարանները երկուսն էին՝ Մուշեղյան-Աբգարյան և Աշխենյան վարժարանները: Հայ երեխաների մի մասը հաճախում էր միսիոներական դպրոցներ՝ ֆրանսիական հիսուսյան միսիոներների և աղջիկների վարժարանները, ամերիկյան միսիոներության աղջկանց բարձրագույն վարժարանը: Քաղաքում գործում էր նաև պետական Մեքթեպ-ի Սուլթանի բարձրագույն վարժարանը, ուր հաճախում էին տարրեր ազգերի պատանիներ ու երիտասարդներ: Այս բոլոր դպրոցներում կրթությունը

¹ Այդ ժամանակվա Աղանա քաղաքի բնակչության թվի և ազգային կազմի վերաբերյալ տարրեր աղբյուրներում տարրեր տվյալներ են բերված: Օրինակ՝ մի փաստաթղթում նշված է, որ 1909 թ. սկզբին քաղաքն ուներ 80 հազար բնակիչ, որի կեսը իսլամ էր, մյուս կեսը՝ քրիստոնյա: Վերջիններս, ըստ այդ աղբյուրների, բաժանվում էին չորս հատվածի՝ 5-6 հազար օրթոդոքս, 1500 ավետարանական, նույնքան կաթողիկե և 20-25 հազար հայ լուսավորչական: Ըստ որում՝ ավետարանականների և կաթողիկեների մեծ մասը հայեր էին (տե՛ս Մատենադարան, Արշակ Ալրոյաջյանի արխիվ, Թղթապանակ 4, վավերագիր 736):

² Տե՛ս Վեր. Համբարձում Յ. Աչճեան, Ատանայի եղեռնը..., էջ 14:

³ Տե՛ս նույն տեղում:

ղրված էր բավականին բարձր մակարդակի վրա¹: Քաղաքի բոլոր վարժարաններում սովորողների թիվն անցնում էր 4000-ից²:

Ինչպես Թուրքիայի մյուս քաղաքներում, Աղանայում նույնպես հայկական մասը բոլորովին անջատ էր Թուրքականից և համարվում էր քաղաքի առավել բարեկեցիկ ու զեղեցիկ մասը: Նա հյուսիսից ու արևմուտքից եզերված էր Փեյլահական (արաբական), կրետական ու հունական թաղերով, իսկ արևելքից ու հարավից՝ Թուրքերի թաղերով:

Աստիճանաբար Աղանա էր մուտք գործել գործարանային կյանքը: Քաղաքում աշխատում էին բամբակաղտիչ, օդու, կղմինդրի գործարանները, թեյ մանող և բյազ գործող 9 ֆարրիկա: Այդ ձևոնարկություններում աշխատում էր մինչև 2000 բանվոր: Օրավարձով աշխատող բանվորների թիվը հասնում էր մի քանի հազարի³:

Ինչպես նշվել է վերը, Աղանայի կոտորածը դեպքերի պատահական հաջորդականությունից հետևանք չէր, այլ՝ լավ մշակված ծրագրի գործադրություն: Թուրքերն ու քրդերը նախապատրաստված էին, մինչդեռ հայերն անտեղյակ էին նրանց նպատակներից: Թուրքն ու քուրդը հայերին սկսեցին խփել նույն ժամերին ոչ միայն Աղանա քաղաքում ու վիլայեթում, այլև ողջ Կիլիկիայի տարածքի վրա:

Աղանա քաղաքի ջարդին նախորդած ժամերին վիլայեթի ուրիշ վայրերի թուրք ղեկավարներն արդեն գիտեին, թե ինչ է այնտեղ կատարվելու: «Այսօր Աղանայում մի բան է յինելու», - դեմքի խորհրդավոր արտահայտությունը շնչում էին նրանք միմյանց ականջին:

Այդ նույն ժամերին քաղաքի մահամեղականների խանութների վրա փակցվել էր «Խայամ դյուքանը» ազդագիրը՝ մահամեղականների ու քրիստոնյա վաճառականների խանութները միմյանցից զանազանելու համար:

¹ Տե՛ս Վեր. Համբարձում Յ. Աչճեան, Ատանայի եղեռնը..., էջ 14:

² Տե՛ս Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը և պատասխանատուները, էջ 50:

³ Տե՛ս «Հորիզոն» (Թիֆլիս), № 64, 23 մարտի 1910 թ.:

ԱԴԱՆԱ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ՋԱՐԴԸ

1909 թ. ապրիլի 1 (14): Չորեքշաբթի էր, Չատկի չորրորդ օրը:

Թուրք պատանհներ ու երիտասարդներ վաղ առավոտից սկսել էին վազվզել և քաղաքի թաղերով մեկ «ստույգ լուրեր» տարածել: Մեկն ասում էր, թե անցած գիշեր Հայերը բռնել են մի թրքուհու, տարել այգիները և բռնաբարելուց հետո կտրել ստինքները, որից հետո՝ սպանել: Մյուսը տարփողում էր, թե Հայերից մեկը, մտնելով թուրք հարևանի տունը, ջարդել է ողջ ընտանիքը: Եվ այսպես շարունակ:

Չնայած դրան, Հայերի մեծ մասը ապրիլի 1-ի առավոտյան, ամեն օրվա պես, անցնում է իր գործին. հաղարավոր մշակներ մեկնում են այգիները, բազմաթիվ երկրագործ բանվորներ՝ ազարակները, վաճառականները բացում են խանութները, որոնց մի մասը գտնվում էր քաղաքի կենտրոնական շուկայում, բացվում են նաև ս. Հարության տոնի՝ Չատկի, առթիվ մի քանի օր փակ մնացած հայ ազգային, ինչպես նաև քրիստոնեական մյուս հարանվանություններին պատկանող վարժարանները:

Ժամը 10-ին մոտ շուկա խուժեցին թուրքերի, քրդերի, չերքեզների ու կրետացի իսլամ գաղթականների խմբեր՝ զինված բռնությամբ, թրերով ու դաշույններով, կացիններով և ուրազներով: Նրանք բոլորը, առանց բացառություն, գլխներին սպիտակ փաթեթներ էին կապել և կազմ ու պատրաստ սպասում էին հրամանի¹:

Տագնապի վրա՝ Հայոց ազգային առաջնորդարանում ժողովի հավաքվեցին քաղաքի քրիստոնյա կրոնական պետերն ու աշխարհական երևելիները: Այստեղ անմիջապես մի պատվիրակություն կազմվեց կուսակալ Մեհմեդ Զեադ բեյի մոտ գնալու համար: Պատվիրակությունը մեկնելով նահանգապետություն, կուսակալից խնդրեց կոտորածների փտանգի առաջն առնել: Կուսակալը հանդիմանեց պատվիրակներին՝ ասելով, թե ինքրորակ է փտանգ չի տեսնում և բարձրացված տգեղ տազնապն ի

զուր է: Նա պատվիրակություն անդամներին խորհուրդ տվեց անմիջապես մեկնել շուկա և «վախկոտ» քրիստոնյաներին հորդորել հանգիստ դրազվել իրենց առևտրական գործով²:

Իսկ շուկայում գնալով ավելանում էր զինված խուժանի թիվը: Հայերն ստիպված էին խանութները կողակել: Արագորեն փակվեցին բոլոր վարժարանները և աշակերտները շտապեցին տները: Ամենքը սարսափի էին մատնվել և փակվել տներում: Առևտրի ողջ հրապարակը մնաց թուրք խանութպաններին, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում զինավաճառները: Վերջիններս խանութների առջև խոնավել էին հարյուրավոր բաշիրողուկներ՝ զենք ձեռք բերելու համար: Թուրք զինավաճառները զենքերը վաճառում էին մի քանի անգամ էժան գներով, իսկ շատերին՝ նվիրում ձրի: Երբ սրանց խանութները դատարկվեցին, խուժանը հարձակում սկսեց Հայերի կողպած զինավաճառանոցների վրա, տապալեց զոները և զավթեց բոլոր զենքերը:

Այս ամենը կատարվում էր ոստիկանների ու զինվորների աչքի առջև, «որոնք կատարեալ անտարբերությունեամբ և խորհրդաւոր ժպիտներով ականատես կ'ըլլային այս ամէնուն»³: Շատ չանցած՝ սրանք միացան զինված խուժանին³:

Նահանգապետ Զեադ բեյի ստիպողական հորդորներով շուկա եկավ քրիստոնյա և իսլամ կրոնական պետերից կազմված մի խումբ, որի մեջ էին Հայ առաքելականների առաջնորդական փոխանորդը, Հայ կաթողիկե եկեղեցու ժողովրդապետ Հարություն վրդ. Քեքիլեյանը, Հայ ավետարանականների վերապատվելի և ուրիշ հոգևորականներ, ինչպես նաև Հայ երևելի անձինք, որոնց թվում էր հասարակական գործիչ, պետական ու աղջային բազմաթիվ պաշտոններ վարած Դավիթ Էֆենդի Ուրֆայանը, Հայտնի վաճառական Հարություն Շատրիկյանը (Շատարեյան): Թուրքերից խմբի մեջ էր Բաղդադի գաղե Արզուլ Կադեր Էֆենդին, որի հայրը այդ նույն ժամին, իր հետն ունենալով խոջաններից ու խուժանապետներից կազմված մի խումբ,

¹ Տե՛ս Վեր. Համբարձում Յ. Աշճեան, Ատանայի եղևոնը..., էջ 16:

² Յակոբ Յ. Քէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 28:

³ Տե՛ս «Ախուրեան» (Ալեքսանդրապոլ), № 28, 17 ապրիլի 1909 թ.:

¹ Տե՛ս «Դրօշակ», № 5, մայիս, 1909, էջ 54:

չրջում էր չուկայի թուրքերի խանութների առջևով և ինչ-որ հրամաններ տալիս:

Փամբ 10³⁰-ին (թուրքաց 4³⁰-ին) չուկայում հրացանաձուլ-թյուն սկսվեց: Ամեն ինչ իրար խառնվեց: Քիչ անց չղթայագերծվեց փոթորիկը: Հայերը՝ մեծ թե փոքր, առևտրական թե զենորդ, բնաջնջվում էին: Նահանգապետի՝ չուկա ուղարկած խմբի անդամ Արդուլ Կադեր էֆենդիի տված նշանով՝ մի քրդի ձեռքով սպանվեց Գավիթ Ուրֆայանը, որը քաղաքի հայերի պարծանքն էր՝ իր բնական ձիրքերով, ազնիվ ու վեհանձն բնավորությամբ¹:

Բաշիրոգուկները, անմեղ մարդկանց արյունը ոթելուց հետո, կոտրատեցին խանութների դռներն ու փեղկերը և կողոպտեցին զրանցում եղած զրամն ու ապրանքները: Այս կողոպուտը բավական զրաղեցրեց ջարդարարներին և նրանց ժամանակ չթողեց անմիջապես հարձակվելու մոտակայքի քրիստոնյաների տների վրա:

Այդ նույն պահին կոտորած էր սկսվել չուկայի շրջակա թաղերում, իսկ Թոսրաղա Գալեսի (Շաարանին) զուտ հայկական աղքատարնակ փոքր թաղը տակնուվրա էր լինում²: Պտտվելով թաղով մեկ՝ ջարդարարների ոհմակը կանչառում էր վայրենի հիշոցներ հայերի, նրանց հավատի հասցեին, ապա իրենց վերջին մարգարեի անունը բարձրագոչելով՝ խուժում էր տները և կատարում «սրբազան պարտք»³: Թաղում աներեակայելի իրարանցում ու խուճապ էր, ճիչ ու աղաղակ, վայնասուն: Միաժամանակ ամեն կողմից լսվում էին ջարդարարների կանչերն ու կոհինչները: Ահա նրանցից մեկը, որ գոռոգոռում էր. «Մա՛հ գյավուրներին, թող չքանան նրանք, նրանց ինչքը, հողը, տունը, կինը և աղջիկները մե՛ղ են պատկանում: Չկա՛ պատիժ մեր արարքների համար: Այդպե՛ս է կարգադրել խալիֆը [կամ մարգարեի հաջորդը], այդպե՛ս ենք ուզում մենք՝ քրիստոնյաների տերերը»: Հրոսակները կատարյալ վայրագությամբ անխնա

կոտորեցին մեծ ու փոքր, կին թե երեխա: Երբ նրանք «գործն» ավարտած, «հաղթական» կեցվածքով դուրս էին գալիս հայերի տներից, նրանց սրերից ու դանակներից արյուն էր կաթկթում:

Թոսրաղա Գալեսի թաղում ջարդը վերջացնելուց հետո հերթը հասավ թուրքական թաղերում ապրող հայերին, որոնցից որևէ մեկը չփրկվեց: Թալանվում էին խանութներն ու տները: Սոսկայի վայնասունով՝ թուրքերը, քրդերը, չերքեզները, արդալ, գնչու, կրետացի զաղթականները կացիններով ու զանազան գործիքներով խորտակում էին դռները և տանում ամեն ինչ: Անվերջանալի էր կողոպուտի մասնակից կանանց ու երեխաների թիվը, որոնք ապրանքները տանում էին այս ու այն կողմ և անմիջապես վերադառնում նոր կողոպուտի: Հայերի խանութները մինչև վերջին թելը դատարկելուց հետո հրձիգները դրանք մատնում էին կրակի:

Մինչ թուրքական թաղերի հայերի խանութների ու տների թալանը շարունակվում էր, զինված ամբոխը, բաժանված խմբերի, հարձակում սկսեց քաղաքի կենտրոնի վրա, ուր հայերի թիվն ավելի շատ էր: Այստեղ էլ աներեակայելի իրարանցում սկսվեց: Գահիճները սպանում էին հայերին հրացանների ու ատրճանակի կրակոցներով, կացիններով ու դանակներով, բրերով ու զաչույններով, մահակներով ու քարերով: Նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր որքան հնարավոր է շատ հայ սպանել, որպեսզի տիրեր նրա ունեցվածքին: Պատահում էր, որ նրանք հայերի ունեցվածքի համար նույնիսկ իրար էին սպանում, իսկ հետո հայտարարում, թե հայերն են արել¹:

Ջարդն առաջ էր գնում ամբողջ թափով՝ ընդգրկելով նույնիսկ կառավարչատան մերձակայքը, ուր կուսակալ Ջևադ բեյի ներկայությունը սպանվեց նաև Հարություն Շատրիկյանը²: Ամենուր խողխողված դիակներ էին, դեռ չլերդացած արյան առվակներ: «Օգնություն, օգնություն» աղաչանք-պաղատանքները մնում էին օդում կախված: Մանուկների յալագին ձայներն ու կանանց աղիողորմ աղաղակները կորչում էին հրազենների և

¹ Տե՛ս «Բիզանդոն», № 3843, 21 մայիսի (3 Հունիսի) 1909 թ.:

² Տե՛ս «Գարուն», (4. Պոլիս), № 17, 19 մարտի (2 ապրիլի) 1909 թ.:

³ Տե՛ս «Դրօշակ», № 5, մայիս, 1909, էջ 54:

¹ Տե՛ս «Գարուն», № 17, 19 մարտի (2 ապրիլի) 1909 թ.:

² Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1988, էջ 15:

վայրագ խուժանի գոռում-գոչումների մեջ:

Բոյաջյան ընտանիքի բոլոր տղամարդկանց սպանելուց հետո եղևնազորձները բռնարարեցին տանը գտնվող կանանց ու աղջիկներին, ապա նրանց արյունոտ ներքնաղզեստները կախեցին պատուհաններին, իսկ բռնարարվածներին կիսամերկ շարելով փողոցում՝ խուժանին ցուցադրարար հրավիրեցին նույն բանն անելու¹:

Խուժելով Յաղ-Ջամի մզկիթի՝ Թաղի Յափուջի Գեորգի տունը՝ արյունածարավներն ահավոր չարչարանքներով սպանեցին այնտեղ գտնվող 15 տղամարդկանց: Պառկեցնելով գետնին՝ դանակներով բացում էին կենդանի զոհերի կրծքերը, հանում թորերը և նետում նրանց կանանց, մայրերի ու դավակների առջև²:

Հերթը հասավ հայկական մյուս թաղերին: Կոտորածն սկսելուց երկու ժամ հետո միայն այդտեղի հայերը հասկացան, որ իրենց կյանքը կախված է հակառակորդի խուժուժ քմայքից, տեսան ու համոզվեցին, որ իրենց պաշտպանող որևէ ուժ չկա: Պարզ դարձավ, որ այդ ամենը կազմակերպել է վարչախումբը, ապա իր զորքերով ու ոստիկաններով միացել փողոցի խուժանին: Միայն այնժամ հայերը դիմեցին ղեկի³:

Մի խումբ երիտասարդներ, շուրջ 100 հոգի, որոնք նոր կարգերի օրոք, «ազատութեան» առաջին ամիսներին ղեկ էին գնել, տներից դուրս եկան և ղեմառղեմ կանգնեցին փողոցները բռնած հազարավոր արյունակղակ ջարդարարների առաջ: Ճայթեցին հայերի առաջին համադարկերը, և երևսա ու մայր սպանող ամբոխը, տեսնելով հայ տղաների հանդգնությունը, սարսափահար, բռնեց փախուստի ճանապարհը⁴: Փախչելիս՝ նրանք տագ-

նապահար բացականչում էին. «էրմենի ֆեղայիների գեյիյո՛ր» (Հայ ֆեղայիներն են գայիս: - Հ. Ս.): Մինչդեռ նրանց հայածոցների մեծ մասն առաջին անգամ էր ձեռքը հրազեն վերցրել: Ինչեից, այդ պահից սկսվում էր երեքօրյա իսկական պատերազմ՝ երկու կողմերի համար մեծ կորուստներով:

Հայերի համառ դիմադրությունը կոտրելու համար կառավարչությունը Միջագետքից եկած և բամբակի դաշտերում աշխատող 20 հազար քրդերին քաղաք բերել տվեց և, դինապահեստը բացելով, նրանց դիմեց: Ջինված քրդերն անմիջապես միացան թուրք խուժանին և համատեղ գրոհի գնացին հայերի դիրքերի վրա: Մի խումբ հայորդիներ կովում էին այնպիսի քաջություն, որ տեղի եվրոպացիների հիացմունքը չարժեք էին:

Այդ առաջին հաջող դիմադրությունը ոգեշնչեց տներում փակված և իրենց փախճանին սպասող մեծ ու փոքր հայ տղամարդկանց ու կանանց, որոնք ձեռքն առած տանը եղած տաք կամ սառը ղեկքերը՝ նույնպես փողոց իջան՝ պատրաստ կովով մեռնելու:

Երիտթուրք կառավարությունը Աղանայի նման մի կարևոր նահանգի ղեկավար էր նշանակել կործանարար սաղրանքների վարպետ, հայաջինջ Մեհմեդ Ջևադ բեյին: Նահանգի դինվորական հրամանատարությունը հանձնված էր Ելդրդի դժոխային ծրագրերի գործադրության հայտնի գործիչներից մեկին՝ Մարաչի հայերի 1895-1896-ի ջարդը կազմակերպած ֆերիք՝ Մուստաֆա Ռեմզի փաշային, որը կարծես Աղանա էր ուղարկվել Ջեյթունում իր կրած պարտություն վրեժը հայերից լուծելու համար: Նահանգի ոստիկանության հրամանատարությունը հանձնված էր մի անուս ու մոլեռանդ անձնավորության՝ Ահմեդ բեյին:

Ջարդարար խմբերի արյունարբու ղեկավարները, հայերի դիմադրությունից դարմացած ու դայրացած, լցվեցին հատուցման նոր ցասումով: Նրանք հավաքվեցին նահանգապետարանում և պահանջեցին լրացուցիչ մեծաքանակ ղեկք տրամադրել մինչև վերջին մուսուլմանին դիմելու համար:

Այդ պահին նահանգապետ Ջևադ բեյը հավաքել էր իր ստորադրյալ զավառական պաշտոնյաներին և հրահանգներ էր

¹ Ֆերիք - մարչալ:

¹ Մատենադարան, Մատթեոս Իզմիրլյանի արխիվ, մատյան 34, թղթ. 14, փավ. 475:

² Յաղ-Ջամի և Ուլու-Ջամի մզկիթները նախապես հայկական եկեղեցիներ են եղել:

³ Մատենադարան, Մատթեոս Իզմիրլյանի արխիվ, մատյան 34, թղթ. 14, փավ. 475:

⁴ Նույն տեղում:

⁵ Տե՛ս Հրաչեայ Աճառեան, Տաճկահայոց հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915 թ.), Նոր Նախիջևան, 1915, էջ 58:

տալիս, որ նահանգում սկսված կոտորածների ժամանակ պետք է պաշտպանել միայն օտարահայտակներին, իսկ տեղի քրիստոնյաների նկատմամբ լինել անողոք, ջարդերի ընթացքում ամեն կերպ խրախուսել «կտրիճներին»¹:

Նահանգապետը, որ մի քանի ժամ առաջ կարգադրել էր զենք բաժանել նորակոչ ռեզիլիներին (պահեստի զինվորներ), առատաձեռն եղավ նաև նահանգապետարան եկած խուժանապետների նկատմամբ՝ նրանց պահանջները լիուլի բավարարելով: Նրա կարգադրությամբ՝ նորից բացվեց քաղաքի գլխավոր դորանոցը, և ամբոխին հանձնվեց հսկայաքանակ զենք՝ հրացաններ, մաուզերներ, անդուկներով փամփուշտներ: Ջենքերի նոր խմբաքանակներ ստացան նաև Միջագետքից եկած և բամբակի արտերում աշխատող 20.000 քրդերը²:

Եթե հասարակ ջարդարարները և նրանց հետ գործակցող զինվորական տարազ հագած ուրիշ ստահակներ ուղածի չափ զենք ու ռազմամթերք էին ստացել, ապա հայերը, ունենալով հնացած տեսակի զենքեր և ռազմամթերքի մեծ պակաս, անելանելի վիճակի մեջ էին: Արձակած ամեն մի զնդակի տեղը հնարավոր չէր լրացնել:

Հավելյալ զենք ու զինամթերք ստանալուց հետո ոճրախմբերը հավաքվեցին Վալիզե սուլթան մզկիթի մոտ, ուր կրոնավորների հրահրիչ ազդեցությունից ու կովի կոչերից հետո հազարավոր ամբոխը, հոճանների, սոֆիանների* և շեյխների առաջնորդությամբ պատրաստվեց վճռական գրոհի:

Ապրիլի 1(15)-ն մինչև երեկո անցավ ստահակների անկանոն հարձակումներով ու քրիստոնյաների բուռն դիմադրությամբ: Փոքրաթիվ հայ մարտիկները անասելի քաջությամբ կռվում էին: Օգտվելով զրանից՝ բնակիչները թաղերի կենտրոնը քաշվեցին: Հրացանակիր տղամարդիկ, որոնց թիվն ընդամենը

173 էր, կենտրոնի կարևոր կետերում զիրքեր բռնեցին և վճռական կովի պատրաստվեցին 30 հազարից ավելի զինված ամբոխի դեմ³: Այդ փոքրաթիվ քաջերի դիմադրությունն չնորհավ է, որ Աղանայի մնացած հայությունը առժամանակ աղատվեց լիակատար ոչնչացումից:

Վրահասած մութը պաշարվածներին չունչ առնելու հնարավորություն տվեց: Բայց թշնամին որոշել էր անգամ մի ժամ նրանց հանդիստ չթողնել: Քանի որ սուրն ու հրացանը չէին անում այն, ինչ ուղում էին թուրքերն ու քրդերը, ուստի դիմեցին բարրարոսություն վերջին միջոցին՝ հրձիգություն: Ամբողջ Աղանայի նահանգում հայերի տները, եկեղեցիները, դպրոցները, հասարակական շենքերը կրակի մատնելու համար կատարյալ կարգապահությամբ պատրաստվել և հրահանգավորվել էր ավելի քան 500 հրձիգ: Կուսակալության կառավարչությունում Աղանա քաղաքի հատակագծի վրա նշանակված էին այն շինությունները, որոնք առաջին հերթին պիտի մոխիր դառնային:

Շուտով կրակե բոցերը քրիստոնյաների թաղերի չորս բոլորը բարձրացան: Մի քանի տասնյակ տներ, ճարճատյունով այրվելով, մոխիր դարձան՝ իրենց մեջ բոցակիղելով անմեղ մարդկանց: Երբ փոքրիկ երեխաները լացով ու աղաղակով փորձում էին վառվող տներից դուրս փախչել, նրանց հետևից որոտում էին հրացանները, և բոլորը տապալվում էին գետնին: Դրան հետևեց թուրքերի նոր հարձակումը, որն առաջվանից ավելի բուռն էր, ավելի սարսափազդու: Մինչև առավոտ մարդիկ անցկացրին հրդեհի ամենալափ լեզուներով պաշարված և հրացանների ճարճատյունների տակ: Իսկ հայ կոփողներն առաջ էին տանում դիմադրության գործը՝ ամրացնելով զիրքերը:

Այդ պահին էր, որ Կ. Պոլսից ստացվեց ներքին գործերի նախարարության խորհրդական Ազիլ բեյի՝ Կիլիկիայի ողջ պաշտոնությունն ուղղված հետևյալ հեռագիրը. «Մեծագույն ուշադրությամբ պետք է հոգ տարվի, որ վնաս չհասնի օտար կրոնա-

¹ **Ցակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 38-39:

² Տե՛ս նույն տեղում:

¹ Մատենադարան, Մատթեոս Իզմիրլյանի արխիվ, մատյան 34, թղթ. 14, վավ. 476:

² Տե՛ս **Հրաչեայ Աճառեան**, Տաճկահայոց հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915 թ.), էջ 58:

* Սոֆիա - մուսուլմանական կրոնական դպրոցի ուսանող

կան հաստատություններին և հյուպատոսարաններին»¹:

Դա, բոտ Հուլիան, միայն հայերին ջարդելու հրաման էր:

Ջարդի երկրորդ օրվա (ապրիլի 2, հինգշաբթի) յուսադեմին թուրքերը մի պահ դադարեցրին հրացանաձգությունը, բայց արշալույսը բացվելուց պես նորից սկսվեցին թշնամու հարձակումները՝ կրկնապատիկ ուժով:

Եթե առաջին օրը ջարդարարներն առանց խտրության սպանում էին բոլոր քրիստոնյաներին, ապա երկրորդ օրվա առավոտյան խիստ հրաման էր եկել շղիպչել հույներին, և յուրաքանչյուր հույնի տան վրա, իրրե նշան, բարձրացվել էր դրոշակ: Բայց այդ հրամանը մինչև նահանգի բոլոր կողմեր հասնելը բավական թվով հույներ զոհվեցին:

Այդ նույն ժամերին, ամբոխին էլ ավելի զրգուկու համար, փողոցներում սպանված հայերի զլխին փաթաթում էին սպիտակ լաթեր՝ ցույց տալու համար, թե որքան շատ են սպանված իսլամները:

Աղետյալներով մինչև բերան լցված էին հայոց ս. Աստվածածին, ս. Ստեփանոս, հայ կաթողիկ. հայ ավետարանական, ասորի, մարոնի եկեղեցիները: Կեսօրին մոտ պարզ դարձավ, որ հայերի փրկությունը կարող է լինել միայն օտարահպատակ քրիստոնյաների հաստատություններում ու տներում: Նրանք զլծասրտությամբ ապաստան տվեցին աղետյալներին, որոնք խուռներամ խուժեցին ամերիկացիների աղջկանց վարժարանը, հիսուսյանների, մայրապետների, միսիոներների տները, ռուսական հյուպատոսարանի թարգման (Արթևիս) Արթև Յանգույի բնակարանը, ամերիկացի միսիոներ Վիլյամ Ն. Չեմբրսի և ուրիշ օտար քրիստոնյաների տները: Օրվա ընթացքում հայերին պաշտպանելիս կյանքից զրկվեցին ամերիկացի միսիոներներ զոկտ. Դեյվիդ Ռոջերզը և Հենրի Մորերը², ծանր վիրավորվեց Փրանսիացի հիսուսյան հոգևորական հայր Սարաթինն:

Իրենց փտանգի ենթարկելով՝ հայերին մեծ օգնություն ցույց տվեցին հատկապես ասորիները: Երբ հայերը հասել էին ասորի եկեղեցու մոտ, վրա հասած խուժանը, սպանելով մի քանիսին,

¹ Յակոբ Յ. Քերզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 38:
² Տե՛ս «Նյու Յորք թայմս», 2 մայիսի 1909 թ.:

մյուսներին հնարավորություն չէր տալիս ներս մտնելու: Տեսնելով այդ՝ եկեղեցու մոտ հավաքված ասորի տղաներն ատրճանակներով ջարդարարներին զգուշացրին, որ եկեղեցի կմտնեն միայն իրենց դիակների վրայով: Ոճրագործներն ստիպված տեղի տվեցին, և հայերը պատսպարվեցին ասորաց եկեղեցու մ:

Բացառություն էին կազմել հույները, որոնք կառավարչության հրահանգով իրենց տների վրա կանխապես կախել էին կարմիր դրոշներ կամ կտորներ՝ հայերից տարբերվելու համար: Որպես իշխանությունների հանդեպ երախտագիտություն, հույները հայերին ապաստան չտվեցին³: Ավելին, նրանք, իրենց տներում նստած, պատուհանների մոտ, հանգիստ դիտում էին, թե ինչ է կատարվում դրսում, և Աստծուն փառք էին տալիս, որ հայ չեն ծնվել: Եղան ղեպքեր, երբ իրենց մոտ ապաստանելու փորձ արած զժրախտներին նրանք հանձնում էին խուժանին:

Այդ արյունամած երկու օրերին Մերսին նավահանգստային քաղաքում նստած եվրոպական հյուպատոսներից որեկ մեկը տեղից չչարժվեց, չաշխատեց որեկ մի բանով նպաստել, որպեսզի վերջ ունենա սոսկումը: Ջարդերի երկրորդ օրը միայն բրիտանական հյուպատոս Դաուլի Ուիլիս (Daughty Wylie), Աղանայում սկսեց վալիի տրամադրած թուրք զինվորներով չրջագայել կոտորածի վայրերում, որպեսզի կարողանա իր ներկայությամբ ազդել ջարդարարների վրա⁴: Բայց դա էլ անօգուտ անցավ, ավելին, թուրքերը վիրավորեցին հյուպատոսին ու նրա ձիուն⁵: Ըստ Աղանայում իր անձնական ներկայացուցիչ Թրիփանի վկայության, Ուիլիս մինչ այդ ձախողեցրել էր մեծ տերությունների զորքերի ափհանումը մարտանավերից՝ Կ. Պոլսի բրիտանական դեսպանության հետ փոխանակած գաղտնագրված հեռագրերից հետո⁶ (նա նաև մասնակցեց առաջին ջարդից հետո Աղանայի հայերի ղեկավարի հավաքման գործին)⁷:

³ Տե՛ս Յակոբ Յ. Քերզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 44-45:
⁴ Տե՛ս «Արևելեան մամուլ», № 17, 21 ապրիլի 1909 թ., էջ 497:
⁵ Տե՛ս «Հորիզոն», № 52, 9 մարտի 1910 թ.: Թուրքերը հայտարարեցին, թե հյուպատոսի վրա հայերն են կրակել:
⁶ Բիւզանդ Եղիայեան, Ատանայի հայոց պատմութիւն, Անթիլիաս, 1970, էջ 250:
⁷ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3827, 1 (14) մայիսի 1909 թ.:

Հայերը օրեր թվացող ահուկի վայրկյաններ ու ժամեր անցկացրին գիշերը: Թշնամին նորից կատաղի հարձակումներ սկսեց երրորդ (ուրբաթ) օրվա՝ ապրիլի 3-ի յուսարացին: Գիշերվա ընթացքում մարդասպանների շարքերը մեծապես ստվարացել էին: Զինված, սպանությունների կողմատի մարմաջով տարված հազարավոր թուրքեր ու քրդեր շտապել էին և գիշերը հասել Ադանա ոչ միայն վիլայեթի գյուղերից ու քաղաքներից, այլև ավելի հեռուներից:

Իսկ հայերի ռազմամթերքը բոլոր առ բոլոր սպառվում էր, մանուկները սովից մեռնում էին, կոկոզ փոքրաթիվ տղաները մահու շափ հոգնել էին: Նրանցից շատերն արդեն ընկել էին թշնամու գնդակներից կամ ծանր վիրավորվել: Նահատակվածների թվում էր ինքնապաշտպանություն հերոսներից Տիգրան Լեֆենդի Պղտիկյանը:

Հայկական թաղերի սահմանները գնալով նեղանում էին և փրկություն հույսի վերջին նշույր հայվում էր: Այդ ճգնաժամային պահին այսպես է ներկայացրել պաշտպանություն նշանավոր ղեկավարներից Հակոբ Թերզյանը, մահվան դուռը հասածներն «իրարու յանցանք կը ներէին, դաւակները իրենց ծնողաց ձեռքերը կը համբուրէին, ամուսիններ իրարու փարած կու յային անդադար»¹: Իսկ թշնամու հրացաններն արդեն պայթում էին մի քանի տասնյակ մետրի վրա:

Որևէ ելք այլևս չտեսնող և բոլորովին հուսահատած մահապարտներից մի քանի հոգի հավաքվեցին խորհրդակցություն, ուր որոշում ընդունվեց վերջին քայլն անել՝ դիմել հայերի հետ միջոց ջերմ հարաբերություններ պահպանած թուրք երեւելիներից Թաքելի դադե Օսման բեյին և թախանձագին աղերսել, որպեսզի նա գնա նահանգապետարան ու անձամբ հայերի համար զթույլություն խնդրի կուսակալից: Անմիջապես, մի քանի երիտասարդներ դիմեցին հայոց թաղի կենտրոն, ուր այդ պահին գտնվում էր Օսման բեյը: Նա իր մարդկանցով այդտեղ էր եկել ոճրագործ ոճմակների ներխուժումից հայերի տները պաշտպանելու համար:

¹ Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 52:

Թուրքերի մեջ հազվագյուտ մարդ էր բարի սրտի տեր Օսման բեյը: Առանց ժամանակ կորցնելու՝ նա անմիջապես գնում է նահանգապետարան և Մեհմեդ Զեադ բեյի առանձնասենյակ մտնում: Այդ պահին վային, գլխին հավաքած խուժանասլետներին, քննարկում էր սրանց հետագա անելիքները: Օսման բեյը ներկայացնում է հայերի գրավոր խնդրանքը և իր կողմից պահանջում դադարեցնել կոտորածը: Հայերի խնդրանքում մասնավորապես ասված էր. «Աստուծոյ, Մարգարէին եւ Թագաւորին սիրոյն վերջ տրուի այս կոտորածին, եւ որոշապէս ըսէք, թէ մեզմէ ինչ կը պահանջէք: Եթէ ձեր պահանջը գործադրելի բան է՝ ամենայն սիրով, սակայն եթէ անգործադրելի է՝ որէք ինչ որ կ'ուզէք, միայն թէ դադարեցնել տուէք կրակը, եւ եթէ կարելի է հասկացողութեան մը գալ՝ ջանանք այդ մասին»²:

Կուսակալը և նրա արբանյակները սկզբում կտրականապես մերժում են առաջարկը: Օսման բեյը խստիվ բողոքում է, ասելով, որ ինքը հավատացյալ է և կատարվածը անաստվածություն ու ոճրագործություն է համարում: Վերջապես, Զեադ բեյի գլխավորությամբ, եղևոնապետերը դինազադարի համաձայնություն են տալիս, պայմանով, որ հայերը մեղայագիր ստորագրեն:

Վերադառնալով՝ Օսման բեյը հայերին ավետիս է բերում, միաժամանակ առաջարկում, որ իրեն միանան մի քանի հայ երեւելիներ, միասին գնան կառավարչություն և կատարեն հատուկության ձեակերպումները³:

Մինչ կատաղի կոիվը շարունակվում էր, ազնիվ ու պատվավոր թուրքը, իր հետ առած մի քանի հայ երեւելիների, իր թիկնապահ զինվորների պաշտպանությամբ, թուրքերի թաղերով, հսկա խուժանի միջից անցնելով՝ հասնում է կառավարչական պաշտոնատուն: Զեադ բեյի նախագահությամբ տեղի է ունենում թուրք և հայ երեւելիների հանդիպումը, որի ընթացքում հաշտություն է կայացվում հետևյալ պայմաններով. 1) Երկու կողմերն անմիջապես դադարեցնում են հրացանաձգությունը, 2) Հայերը պարտավոր են երեք օրվա ընթացքում լիովին դինամիկալ և

¹ Վեր. Համբարձում Յ. Աշճեան, Ատանայի եղևոնը..., էջ 19:

² Տե՛ս Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 52:

ղենքի մինչև վերջին միավորը հանձնել իշխանությունը, 3) Քաղաքի պաշտպանությունը հանձնվում է նոր եկած զորքին, որը պիտի ոչնչացնի բոլոր պաշտպանական պատնեղները և չրջիկ պահակներ կարգի թե՛ հայկական և թե՛ թուրքական բոլոր թաղերում¹:

Հայերը չհամարձակվեցին թուրքերի զենքերի մասին խոսել, որովհետև մինևույնն է, լսող չէր լինելու, և, վերջապես, «Մեղճ թուրքերին որտեղի՞ց զենք, նրանց միակ զենքը սոփան է (փայտը)»,- կպատասխանեին նրանց:

Ստորագրվում ու կնքվում է «Հաշտության պայմանագիրը», որի զորությունները թուրքերն այսուհետև հայերին կոտորելու իրավունք չպիտի ունենային, իսկ հայերն էլ, ի նշան երախտագիտության իրենց մուսուլման հարևանների հանդեպ, պարտավորվում էին բոլոր զենքերը հանձնել նշված ժամանակում:

Դրանով կոտորածը վերջ է գտնում: Ազանայի առաջին ջարդը 1909 թ. ապրիլի 1-ի չորեքշաբթի ժամը 10³⁰-ին (թուրքաց 4³⁰-ին) սկսելով, տևել էր մինչև ապրիլի 3-ի ուրբաթ օրվա ժամը 13-ը (թուրքաց ժամը 7-ը), այսինքն՝ 50 ժամ անդադար:

Հաշտության պայմանագիրը կնքելուց հետո թուրք երևելիները «կեղծ ու պատիր՝ յուզայական համբույրներ փոխանակեցին և ապա քաղաքին մէջ չըջելու ելան՝ դադրեցնելու համար յարձակումներն ու դիմադրությունները»², - վերհիշել է Հակոբ Թերզյանը:

Հուզայական համբույրներն ուղեկցվում էին դինամիտի մասին պահանջը հիշեցնելով: Դա էր խաղաղություն ստանալու միակ ու անփոփոխ գինը: Բայց զենքի մինչև վերջին միավորը կառավարությունը հանձնելը կարող էր ճակատագրական լինել կենդանի մնացած մյուս բոլոր հայերի համար: Դա կյանքի կամ մահվան խնդիր էր: Որևէ երաշխիք չկար, թե զենքերը հանձնելուց հետո նոր կոտորած չի լինելու: Հենց դա էր պատճառը, որ հայերը չէին կարողանում վերջնական վճիռ կայացնել:

¹ Տե՛ս «Հորիզոն», № 52, 9 մարտի 1910 թ.:

² **Յակոբ Յ. Թերզյան**, *Կիլիկիոյ աղէտը*, էջ 54:

Եվ ահա, զործին միջամտում է Մերսինի բրիտանացի հյուպատոս Դաուիթի Ուիլյին և իր կառավարությունն անունից հայ ղեկավարներին վստահեցնում, թե «այլևս որևէ վտանգ չկա, ուստի զենքերը պետք է հանձնել»: Ծուտով Կ. Պոլսի պատրիարքարանից նույնպես հեռագիր է հասնում զենքերը հանձնելու պահանջով: Նույնպիսի դիրք է բռնում նաև Ազանայի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսը:

Այս պարագայում հայ երևելիները նահանգապետարանից դուրս գալով՝ իջնում են հրապարակ: Իջնում են ու անմիջապես ձեռնարկում աղգակիցների դինամիտի մար: «Բերե՛ք, հանձնե՛ք զենքերը,- բղավում էին նրանք: - Հաշտությունն է, հաշտությունն»: Զուր է անցնում երիտասարդների բողոքը: Լսող չկար: Զենքերը հավաքվում են և հանձնվում իշխանությունը:

Միայն զրանից հետո դինվորները պաշտպանության տակ առան քրիստոնյաների դպրոցները, աղոթատեղիները, թաղերը:

Եթե հայերը ապրիլի 3-ին իրենց զենքերը հանձնած չլինեին, գուցե և Ազանայում տեղի չունենար երկրորդ, է՛լ ավելի լայնածավալ ջարդը. քանի որ թշնամին չպատճառարանված մեծ կասկածներ ու վախ ուներ հայերի ուժի մասին:

Զարդից հետո իսլամ երևելիներից ոմանք խմբերով այցելում էին հայերի հավաքատեղիները՝ «ցավակցություն հայտնելու», բայց իրական նպատակը նրանց մասին տեղեկություններ քաղելն էր: Այդ խմբերից մեկն այցելել էր Ազանայի հայ ավետարանականների եկեղեցի և զրույցի բռնվել նրանց հոգևոր հովիվ վերապատվելի Համբարձում Աշճյանի հետ: Երբ թուրքերից մեկն սկսեց անիծել «ցավալի ղեպքերի պատճառ եղողներին», վեր. Աշճյանն ասաց.

«Էֆենտի՛, մենք այս աղէտալի դէպքերուն պատճառ եղողներուն անէ՛ծք չենք կարողար, այլ կ'ըսենք, թէ Աստուած տեսնէ և զատէ զանոնք: Բայց այսու հանդերձ ձեզի բսելիք մը ունիմ: Դուք ինչո՞ւ մարդ մը իր ազգութեան և կրօնքին տեսակէտով կը դատէք: Ազգութիւնը աստուածային կարգադրութիւն է: Աստուած ինձի չհարցուց, թէ ո՞ր ազգութեամբ ծնիլ կը փափաքէի, և թէ ընե՛ր՝ թերևս ուրիշ ազգութիւն մը բնտրէի: Ես յանցաւոր

չեմ երբ հայ ծնած եմ. դուք այ առաւելութիւն մը չունիք թուրք ծնած ըլլալնուդ համար: Այս աստուածային կարգադրութիւն է եւ անփոփոխ: Կրօնքն այ ժառանգութիւն մըն է, ինչպէս նաեւ անհատական համոզման խնդիր: Ես քրիստոնէայ եմ, որովհետեւ քրիստոնէայ բնտանիքէ մը ծնած եմ եւ կամ քրիստոնէութիւնը ուրիշ կրօնքներէ աւելի նախընտրած եմ: Դուք այ իսլամ բնտանիքի մէջ ծնած ըլլալնուդ համար եւ իսլամութիւնը մարդկութեան ամենավերջին եւ ամենակատարեայ կրօնքը դաւանած ըլլալնուդ համար իսլամ էք: Դուք ազատ էք այդպէս մտածելու, սակայն չիտակ չէ որ այդպէս չմտածողները դատապարտէք: ... Մարդիկը պէտք է իրենց նկարագրին եւ բնթացքին համաձայն դատել եւ ոչ թէ անոնց ազգութեան եւ կրօնքին տեսակէտով: Պիտի ուղէի աւելցնել նաեւ թէ այս ժողովուրդը աւարառութեան եւ կողոպուտի մի՛ վարժեցնէք: Այս վիճակը պատճառ կ'ըլլայ որ անոնք յետադիմեն, ծոյլ եւ աւաղակարարոյ ըլլան եւ ուրիշներու ստացուածքին վրայ աչք ունենան: Երբ մեր ստացուածքը չմնայ՝ ձերինին կը սկսին»:

Իրրե պատասխան՝ թուրքերն ասում են. «Այո՛, քարոզիչ է Փենտի՛, ձեր ըսածները չիտակ են, պէտք է այդպէս ըլլայ: Բայց տէր Աստուած, ո՞վ է ըսողը և ո՞վ լսողը: Լսելն ուրիշ բան է, ըսելը՝ ուրիշ: Մարդկանց դժուարութիւնը ճշմարտութիւնը տեսնելէն աւելի դայն գործադրելու մէջ է»¹:

Ոմանց թվում էր, թե կոտորածների ու թալանի հակում ունեցող թուրք և քուրդ զանգվածների կիրքն արդեն հասել է իր գագաթնակետին և հնարավոր է, որ այն, հագեցած, կանգ է առել: Բայց այդ հույան ու ակնկալիքն խարուսիկ էին:

Ապրիլի 4-ը Ադանա քաղաքում բացվեց «խաղաղությամբ», որի զինը հայերից խլված հազարավոր կյանքերն էին:

Քաղաքը մի գարհուրելի տեսարան էր ներկայացնում: Անթիվ անհամար դիակներ հոշոտված ու արյունաքամ թափված էին փողոցներում, կախված ծառերի վրա, բարձրացրած ցցերին...¹: Անչնչացած մարմինները բզկտված էին, զեմքերն՝ այլանդակված, առանց քթի, առանց ականջների, առանց շրթունքների: Մեռելների շարքերը լրացրել էին հարյուրավոր մանուկներ, որոնք իրենց շունչը փչել էին խենչալների ծայրերին... Հաղարավոր փրավորներ կիսամեռ բնկած էին այս ու այն կողմ, իրար վրա: Որդեկորույս խելագար մայրերը դիակների դարձղարձումների մեջ վայնասունով փնտրում էին իրենց դավակներին²: «Իսկ խուժանին ամենէն սրտոտները եկած էին ու հրճուանքով կը դիտէին արիւնահեղութեան դաշտին վրայ իյնող անմեղ հայ նահատակները»³:

Վալի Մեհմեդ Զեադ բեյը հրամայեց մուսուլմանների դիակները թաղել մեծ թափորներով, իսլամի բոլոր սովորություններով և կարգով: Միաժամանակ կարգադրեց որքան հնարավոր է արագ անհետացնել հայերի նկատմամբ կատարված վայրագությունների հետքերը: Այդ նպատակով, շատ չանցած, տասնյակ սայլեր շարժվեցին փողոցներով: Սայլապանները և ուրիշ գործավորներ սկսեցին հավաքել դիակները ու նետել սայլերի վրա: Երբ դիակների բուրգերը դիզվում էին, սայլերն ուղղություն էին վերցնում դեպի քաղաքի արևելյան կողմից անցնող Սիհուն գետի ափը: Այստեղ սպասում էին թուրք և քուրդ մշակներ, որոնք սայլապաններին օգնում էին ջրի մեջ նետելու դիակները: Սայլապանների մի մասը սայլերը քշում էր գետի մյուս ափի հետ

¹ Վեր. Համբարձում Յ. Աշճեան, Ատանայի եղևոնք..., էջ 22-23:

¹ Տե՛ս «Ախուրեան», № 28, 17 ապրիլի 1909 թ.:
² Տե՛ս «Հորիզոն», № 52, 9 մարտի 1910 թ.:
³ Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 56:

կապող կամրջի* վրա և մեռյալների մարմիններն այնտեղից նետում գետը¹:

Փողոցներում անօգնական ընկած ծանր վիրավորներից շատերին ևս, սայլապանները վերցնում և արդեն մեռածների հետ չպրտում էին սայլերի վրա: Սրանց մեջ էր, օրինակ, քաղաքի հայտնի ճանապարհորդ հարգանքին արժանացած, կիրթ ու բարեհամբույր Տիրան էֆենդի Առաքելյանը: Տարաբախտ մտավորականի աղաչանք-պաղատանքը որևէ նշանակություն չունեցավ, և նրան նույնպես նետեցին գետի հորձանքի մեջ²:

Տարվա այդ եղանակին, ձնհալի պատճառով, Սիհուն գետը գարնանային վարարումով հոսում էր հեղեղումով ու ափնակոծումով, և անմեղ հայերի դիակների երկար շարքերը, խառնի-խուռն թավախլով, քշում-տանում ու թափում էր ծովը՝ Աղանա քաղաքից 20 կմ հեռու³: Ջարդերից շարաթներ հետո այլանդակված դիակներ էին հայտնաբերվում Կիպրոսի ծովափում⁴:

Կենդանի մնացած հայերը հասել էին թշվառություն վերջին սահմանին: Շուրջ 20.000 հոգի՝ անտեր ու անտուն, ապաշար ու խեղճություն, սպասում էին անորոշ վաղվան: Չորս օր անոթի մնացած բաղնուխոնքը միարևրան մրմնջում էր՝ «Հաց, հաց»:

Վերջապես, հինգերորդ օրը ժողովրդի մեծ մասը մտավ իր ավերակ կամ կանգուն մնացած տները: Իսկ անթիվ վիրավորներ դարձան էին սպասում: Ս. Ստեփանոս եկեղեցու բակում գտնվող աղջկանց վարժարանը հիվանդանոցի վերածվեց, ու վիրավորներն այնտեղ փոխադրվեցին: Նույն նպատակին ծառայեցին Աշխենյան և Մուշեղյան-Աբգարյան վարժարանները:

* Սիհուն (Սարուն) գետի վրայի կամուրջը, որն րստ ավանդություն, կառուցել էր հոռմեական կայսր Ադրիանոսը մ. թ. 2-րդ դարում, վերանորոգել է ընդհանրական կայսր Հուստինիանոսը 6-րդ դարում, ուներ 30 մետր երկարություն՝ 24 կամարներով (տե՛ս Վեր. Համբարձում Յ. Աշճեան, Ատանայի եղևոնը... էջ 13, Բիզանդ. Եղիայեան, Ատանայի հայոց պատմություն, էջ 37):

¹ Մատենադարան, Արշակ Արպոյանյանի արխիվ, թղթ. № 4, վավ. 736:

² Տե՛ս նույն տեղում, նաև Բիզանդ. Եղիայեան, Ատանայի հայոց պատմություն, էջ 237:

³ Տե՛ս «Դրօշակ», № 5, մայիս, 1909, էջ 56:

⁴ Տե՛ս «Բիզանդիոն», № 3841, 19 մայիսի (1 Հունիսի) 1909 թ.:

Բայց վիրավորների բուժման խնդիրը շատ բարդ էր, դի անհրաժեշտ դեղամիջոցներ և գործիքներ չկային:

Այդ հուսահատություն և դարհուրանքի միջոցին անգնահատելի օգնություն հասան Աղանայում գործող օտար միսիոներները, հատկապես ֆրանսիացի հոգևորականները, որոնք իրենց մոտ եղած դեղամիջոցները հանձնեցին նորաբաց հիվանդանոցին, իսկ իրենք «հիանդներու ետևէ ինկած՝ հոս-հոն կը վազէին պատգարակներով ու կառքերով»¹:

Այդ բարեգործական քայլերը արյունալի ջարդից կենդանի մնացած հայերի համար մխիթարական էին: Դրանց զալիս էին գումարվելու հետևյալ հանգամանքները ևս՝ թեպետ գավառներից շարունակում էին կոտորածի յուրեր հասնել Աղանա, և անընդհատ նորանոր փախստականներ էին լցվում քաղաք, բայց հայերն արդեն սկսել էին հավատալ ու միմյանց հուսադրել, թե շարիքը բոլորովին անցել է. նրանք «իրենց ձեռքին» ունեին կնրված «ղաշնագիր», որի համաձայն՝ թուրքերն «այլևս զրկված էին» անգն հայերին կոտորելու իրավունքից: Դարավոր միամտությամբ ինչո՞ւ չպիտի հավատային, որ այլևս կոտորած չի լինելու: Այդ հավատից մղված՝ նրանցից ոմանք կամաց-կամաց հեռանում էին եվրոպական հաստատությունների բակերից, ուր ապաստան էին գտել և դեռ շարունակում էին լցված մնալ հաղարներով. քաղաքի կայազորի զինվորները կանոնավոր շրջագայում էին փողոցներում և կարգը «պահպանում». վերջապես, ինչ-որ տեղ մխիթարական էր նաև այն, որ կոիվների ժամանակ տուժել էին նաև թուրքերը, որոնք հայերի չուրջ 1500 նահատակի՞ զիմաց տվել էին գոնե 300-400 սպանված:

Բայց թուրքերը, հայերին հակառակ, ջարդից հետո բոլորովին այլ կերպ էին դատում: Ամենից առաջ նրանց չափազանց անհանգստացնում էր այն հանգամանքը, որ իրենց չէր հաջողվել Աղանայում հայերին արմատախիլ անել ամբողջապես, դեռևս մնացել էին հատ ու կենտ կանգուն տներ, որոնք չէին

¹ Ցակոր Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 59:

* Այս թվի մեջ հաշվում էին նաև 200-300 ասորի և հույն, որոնք սպանվել էին իրենք քրիստոնյաներ կամ թյուրիմացաբար նմանակվել էին հայերի:

կողոպտվել: Նրանք հակված չէին հանդուրժելու այդ վիճակը, մանավանդ որ գավառներից գալիս էին իրենց համար հուսադրող նորանոր տեղեկություններ, որ այնտեղ «գործերը հաջող են գնում»: Վախ չկար, թե գավառի հայերը կարող են դիմված խմբեր կազմել և օգնության գալ Ադանայի իրենց ազգակիցներին: Զարգարարների համար ամենակարևորը, սակայն, այն էր, որ քաղաքի հայերն այլևս դինավաճի էին և եթե նույնիսկ ունենային մի քանի կտոր դենք, դրանցով չէին կարող ոչինչ անել, ու բոլորին կարելի կլիներ ուղղակի մորթոտել սառը զենքերով:

Այդ բանը հայերը քաջ գիտակցում էին: Թե վհատությունն ու հուսալքությունը որքան խորն էին նրանց մոտ, վկայում է հեռագրի այն շարադրանքը, որ ապրիլի 6 (19)-ին կազմել էին Ադանայի քրիստոնյա հոգևոր պետերը՝ Օսմանյան պառլամենտի Պատգամավորական ժողովի նախագահ Մուստաֆա Նուրի բեյին ուղարկելու համար: Պոլսի կացությունն մասին բոլորովին անտեղյակ լինելու պատճառով հեռագիրը չուղարկվեց, բայց պահպանվեց շարադրանքը, որն ունի հետևյալ բովանդակությունը.

«Երեսփոխանական ժողովոյ նախագահ Մուսթաֆա Նուրի Պէյ էֆենտիին. –

Ենթարկուեցանք ա՛յնպիսի անգթութիւններու և հալածանքներու, որոնք տեղի ունեցած չէին ճենկիդ խանի և Թիմուրլէնկի ժամանակները: Ժողովուրդ մը, որ խաղաղութեամբ և օրէնքի հնազանդութեամբ կ'ապրէր, հակառակ խղճմտանքի ու արդարութեան՝ անպատմելի բարբարոսութեանց զոհ եղաւ: Կողոպուտ, կրակ և ջարդարարութիւն կործանումն ու աւերածութիւնը կատարեալ բրին: Մնացորդներուս կը սպառնան անօթութիւնն ու հիւանդութիւնը: Ատանայի նահանգը ոչ իսլամ բնակչութեան համար մեռելաստանի և աւերակոյտի վիճակ մը ստացաւ: Իսլամ ժողովուրդին ոչ իսլամ ժողովուրդներու վրայ այսպէս անողորմ յարձակումը թոյլատրող կառավարութեան մը այդ անուան արժանի ըլլալուն յըջօրէն կը տարակուսինք: Ուստի, պաղատագին կը խնդրենք որ, յանուն արդարութեան, օրէնքի և մարդասիրութեան, առանց ժամանակ կորսնցնելու.

մասնաւոր պատուիրակութիւն մը դրկուի մեր վիճակը քննելու, մեր վնասները դարմանելու և պատասխանատու պաշտօնեաները մահուամբ պատժելու համար»¹:

Կայացնելով կարճատև խաղաղություն հայերի հետ՝ թուրքերը ժամանակը գործածեցին Ադանայի շուրջը հավաքելու թուրք գյուղացիների և վրանարնակ ու թալանչի քրդերի նորանոր խմբեր, որոնք գյուղերից ու սարերից քաղաք իջան և ջարդարարների շարքերը համայնեցին:

Զարդը դադարելուց երկու օր անց, ապրիլի 5-ից սկսած, Սիհուն գետի բերանից դեպի արևմուտք գտնվող Մերսին նավահանգիստ հետզհետե ժամանեցին ֆրանսիական «Վիկտոր Հյուգո», անգլիական «Սեյփիրը», գերմանական «Լորլեյ», իտալական «Պիեմոնթե» զրահակիր (cuirases) նավերը, իսկ ապրիլի 9-ին ժամանեցին ռուսական մեկ նավ և ամերիկյան երկու զրահանավ: Քանի որ ջարդերը սպառնում էին անցնել Մերսին, հենց դա էլ Կիլիկիայի ափերին ռազմական նավերի մոտենալու առիթ էր տվել: Նավերի անձնակազմերը կարեկցանքի ամենափոքր իսկ քայլ չարեցին. նրանք մարդկանց մոտ տպավորություն ստեղծեցին, թե զվարճանքի են եկել: Նավերը շարվել էին իրարից որոշակի հեռավորության վրա՝ էլեկտրական լույսերով ողողված: Տախտակամածներին զվարճալի խաղեր ու ներկայացումներ էին անցկացվում:

Եվրոպացիների այդ անհոգ տրամադրությունն անդրադառնալով՝ Կ. Պոլսից Կիլիկիա եկած Արչակուհի Թեոդիկը, որ ափ էր իջել Մերսինում, ամիսներ հետո գրում էր.

«Այս սխրալի պատկերին հանդէպ խոհուն ու մտամփոփ, վերջիչումը կ'ունենամ յեղակարծ Ապրիլի օրերուն, երբ օտար մարտանաւեր եկան շարուիլ այս ջուրերուն վրայ, իրենց մեծ թնդանօթներուն՝ սպառնագին այլիմաստ ու անհետեւանք կոթողումով: Քաղաքակիրթ աշխարհներէ ուղարկուած երկաթէ այդ հղօր ոչնչութիւնները հետերնին բերած էին մարդեր, որոնք պաշտօնն ունէին օրն ի բուն՝ դիտակներ աչքերնուն՝ ծովափի

¹ Վեր. Համբարձում Յ. Աչճեան, Ատանայի եղեռնը..., էջ 21:

Հայ թշուառութիւնը դիտելու անկարեկիր, կամ ծովախորշին մէջ ծփծփուն հէզ հայ դիակները լուսանկարելու, իսկ գիշերը, ներսն էյեկտրական ջահերու լոյսով՝ աշխարհիկ վարկպարագի ցնծութեանց անձնատուր ըլլալու, անհոգ, անտարբեր, առանց մազի չափ փոյթ ընելու թէ անդին, ճ՛հ, անդին, գնդակներ կ'անձրելէին անդադար, սուրեր կը չողային աջուձախ, ու հայու արիւնն էր, որ կը հոսէր, ու կրակն էր, որ կը յափէր ամենածախ: Ու խորհիլ թէ այդ ամէնքը պիտի դադրէին, պիտի մարէին, եթէ զրահապատ այդ պատկառելի զանգուածներէն նաւազներ ուտքերնին դնէին ցամաք, իրենց պետերուն հրահանգովը սպառնաղէտ:

Ու չորին, ու հաղարաւորներ անկացան մահերուն ամէնէն՝ զատնագոյններով, ու չէն ու բարգաւաճ երկիր մը փճացաւ, կործանեցաւ հիմնայատակ»¹:

Օտարների այս պահվածքն իր էությամբ լինելով անմարդկային, «պատճառ եղաւ որ վանտայր աւելի համարձակ ճօճէ իր սուրը»²: Քաջալերված խուժանը «նետուեց իրագործելու նոր ջարդեր»³:

Ազանայի հայերի ջարդից անցել էր 5 օր, այսինքն՝ ապրիլի 8-ն էր, երբ պարզ դարձավ, որ հայերին սպասվում են նոր սարսափներ: Դրա ցայտուն վկայությունը «Իթիղալ» «աղատական» թերթի 1909 թ. ապրիլի 7-ի համարն էր, որը լույս էր տեսել սովորականից մի քանի անգամ մեծ տպաքանակով և առավոտից ձրի տարածվում էր քաղաքի մուսուլման բնակչության մեջ: Համարի էջերը ծայրից ծայր լցված էին հայերի դեմ ուղղված հողվածներով ու նյութերով՝ քենով, վայրենի ատելություններով, զրպարտություններով չաղախված: Զարդի ողջ պատասխանատվությունը թերթը բարդում էր դժբախտ հայերի վրա՝ նրանց մեղադրելով օրինական իշխանությունների դեմ ապստամբություն բարձրացնելու համար:

Համարի քաղաքական բաժնում զետեղված «Մի սոսկալի

ապստամբություն» վերտառությունը հողվածի հեղինակ Իսմայիլ Սեֆան հայերին որակում էր վայրենի ոճրագործներ, որոնք, մեծաքանակ զենք կուտակելով, մինչև ատամները դինված, քաղաքի թուրքերի վրա հարձակումներ են գործել և նրանցից հաղարավորների դիակները փողոցներում փռել: Նա գրում էր, թե գյավուրները հատկապես անխղճարար կոտորել են թուրք կանանց, մանուկների, ծերերի՝ ուշադրություն չառնելով նրանց սրտակեղեք խնդրանքները, ճիչերն ու հեծկտանքները: Իբր հայերը ծրագրված հրդեհի են մատնել նաև թուրքերին պատկանող բաղնիքներով հույակապ տներ և զրանք վերածել ավերակների, զրպնով իսկ սարսափ սփռել չորս կողմը, որպեսզի զրանց տերերը փորձ չանեն վերադառնալ ու տեր կանգնել իրենց օջախներին: Այդ ամենի պատճառը հողվածագիրը համարում էր այն, որ երիտթուրքական հեղափոխությունից հետո հայերն այնքան են երես առել, որ այլևս չեն ուզում իսլամների հետ ապրել և. «մեզ ոչնչացնելով՝ ուզում են ամբողջ նահանգին տեր դառնալ և թուրք պետությունից անջատ ապրել»: «Տեսնենք, թե վերջն ինչ պիտի լինի: Անխելք հայերը կործանեցին մե՛զ էլ, հայրենի՛քն էլ, իրենց էլ: Դժբախտ Ազանան այս աղետն էլ տեսավ»¹:

Ապրիլի 1-3-ին թուրքերի կողմից հայերի կոտորածը վերափոխելով հայերի կողմից թուրքերի կոտորածի և նախապատրաստվող նոր ջարդերն ի սկզբանե արդարացնելու համար, Իսմայիլ Սեֆան գուժում էր, թե հայերն ամբողջովին չեն հանձնել իրենց զենքերը, ուստի բացառված չէ, որ, «նրանք մի նոր արյունահեղություն սարքեն»²:

«Հայերը կարո՞ղ են պետություն ստեղծել» վերնագրով հողվածում, նրա հեղինակ Բյուրեան Նուրին գրում էր, թե երախտամոռ հայերն ապստամբեցին իրենց իսկ «հավասարություն» և «եղբայրություն» պարզեցած հեղափոխության ու դրա հոչակած սկզբունքների դեմ: Նրանց նպատակը անկախ պե-

¹ «Իթիղալ» (Ազանա), 7 ապրիլի 1909 թ.:

² Նույն տեղում:

¹ Արշակունցի Թէոդիկ, Ամիս մը ի Կիլիկիա, Կ. Պոլիս, 1910, էջ 13, 15:

² «Անահիտ» (Փարիզ), № 11-12, մարտ-ապրիլ, 1909-1910, էջ 273:

³ Տես «Հորիզոն», № 52, 9 մարտի 1910 թ., Ցակոր Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 61:

սուլթյուն ունենալն է, չեչտում էր հողվածագիրը, ապա ավել-
յացնում, թե «հիմարներն անգամ չեն հավատում, որ երկու մի-
լիոնից էլ պակաս թիվ կազմող հայերը, որոնք ցրված են այս ու
այն կողմ, իրենց ուժով ու ղեկի գործառնումը կկարողանան
հաղթանակի հասնել և անկախ պետություն ստեղծել»¹: Շեշտե-
լով, որ հայերը հատկապես նպատակ ունեն «իրենց պետու-
թյունը ստեղծել Ադանայի նահանգում կամ հին Կիլիկիայում»,
Բյուրեան Նուրին շարունակում էր. «Եթե հայերն ուզում են պե-
տություն ունենալ, ապա այդ պետության տարածքը պետք է
փնտրեն ոչ թե Օսմանյան կայսրության մեջ, այլ Աֆրիկայի
ավաղուտ անապատներում և զաղթեն այնտեղ: Այլապես,
ցրված ու բաժանված մնալով Պոլսի, Իզմիրի, Ադանայի, Հայկաի,
Դիարբեքի, Բիթլիսի, Վանի նման տեղերում, նրանք իրենց
փափագին չեն հասնի»²:

Բյուրեան Նուրիի այդ հողվածը նկատի ունենալով, «Բի-
զանդիոնը» գրում էր. «Մինչև և՛ որ մեր արիւնն ու արցունքը
պիտի հոսի «հայկական թագաւորութեան» մը ցնորական,
զառանցական վարկածին անունով, որուն դուք չէք հաւատար,
և որուն չէք կրնար հաւատալ որ հայերն այնքան ապուշ ըլլան
հաւատալու համար...»³:

«Լուրեր նահանգից» բաժնում տպագրված «Նառնաչիֆ
երևույթներ» վերնագրով հողվածի հեղինակ Իհսան Ֆիքրին
ստում էր, թե «այս օրերին Մարաշից, Հաճրնից, Նարբերդից,
Տիգրանակերտից և Անատոլիայի հայաբնակ գավառներից
այնքան [զինված] հայեր են թափվել [Ադանա], որ այժմ քաղաքի
ամեն մի հայ ընտանիքում տեղավորված է 5-10 ընտանիք»⁴:
Իրողությունը, սակայն, այն էր, որ ջարդի օրերին դանադան
վայրերից Ադանա էին թափվել տասնյակ հազարավոր թուրքեր,
քրդեր և ուրիշ մուսուլմաններ:

¹ «Իթիդալ», 7 ապրիլի 1909 թ.:

² Նույն տեղում:

³ «Բիզանդիոն», № 3823, 27 ապրիլի (10 մայիսի), 1909 թ.:

⁴ «Իթիդալ», 7 ապրիլի 1909 թ.:

Հողվածագիրը համոզված էր, թե որևէ մեկի մտքով չի անցնի,
որ թուրքերն են մեղավոր ստեղծված խառնաչիֆի համար:

Այնուհետև «Իթիդալի» էջերում մեկը մյուսին հաջորդում
էին թվով 20 ուրիշ հողվածներ ու նյութեր, որոնք, խմբագրու-
թյան հավաստիացմամբ, իբր «ստացված են» քաղաքի փո-
ղոցներից ու գավառից: Ստերով ու զրպարտություններով
հագեցած այդ նյութերը թերթի համարում ղեկավարված էին
այսպիսի սաղորիչ վերնագրերով. «Դեպքի սկզբնավորումը»,
«Մի ոճիր», «Մի երկրորդ ոճիր», «Լրտեսը», «Զինվորների
անբավարար լինելը և իսլամների անգն վիճակը», «Հայերն
իրենց տներում, իսկ իսլամները փողոցներում», ««Օսմանյը»
լրագրի թղթակցի սպանությունը» և այլն: «Քաղաքի փողոցնե-
րից» և «գավառից» «ստացված» այդ բոլոր նյութերի հիմնա-
կան բովանդակությունը մեկն էր՝ «հազարավոր խեղճ ու կրակ
իսլամներ մորթվել են տմարդի ու անաղուհաց հայերի ձեռքով»:

Եթե թերթի խմբագիրը հայերի ջարդին չէր մասնակցել
հրացանով կամ դաշույնով, ապա իր գրչի տակից ելած ստապա-
տիր հողվածներով, հատկապես թերթի ապրիլի 7-ի համարի
լույսընծայումով, հանդիսացավ Ադանայի է՛լ ավելի կատաղի
երկրորդ ջարդի գլխավոր զրդիչներից ու կազմակերպիչներից
մեկը՝ խուժանին հորդորելով սկսած գործը հետևողականորեն
մինչև վերջ հասցնել:

Ո՞վ կարող էր երևակայել, որ ժողովրդի դարգացմանը սա-
տարելու կոչված մի թերթ կարող էր կույր ամբոխի գազանային
բնազդների այդ աստիճան գրգռիչը լինել:

Ապրիլի 8-ին Ադանայում Կ. Պոլսից ստացվեց ազատարար
բանակի հրամանատար Մահմուդ Շեքեթ փաշայի հեռագիրը,
թե Կ. Պոլսի հակահեղափոխական սուլթանական ուժերի դեմ
չարժվող իր բանակի մի զորամաս Դեղե-Աղաջից ուղարկել է
Ադանա: Հեռագիրը, որ բազմացվել ու տարածվել էր ժողովրդի
մեջ, անհուն ցնծություն պատճառեց քաղաքի կենդանի մնացած
հայերին, որոնք կարծում էին, թե «փրկիչ զորամասը» հատուկ
ուղարկված է իրենց անվտանգությունն ապահովելու համար:
Բայց այս անգամ էլ նրանք չարաչար սխալվեցին:

Ապրիլի 12-ի կեսօրին, Երկու գնդից բաղկացած զորամասը Աղանա Հասալ¹: Կարծեցյալ փրկիչներին հայերը որոտրնդոտ ծափերով դիմավորեցին և «կեցցե»-ներով մեծարեցին: Շատերն իրար համբուրում էին, կարծելով, թե մղձավանջն արդեն անդադրանալիորեն անցյալի գիրկն է անցել: Խնդճերն ինչ իմանային, որ չուտով մի նոր, է՛լ ավելի սոսկալի աղետ է գալու իրենց գլխին:

Ջորամասն անցնելով հայկական թաղերից հեռու՝ գնաց և բանակեց քաղաքից դուրս, բացօթյա տեղ*:

ԵՐԿՐՈՐԴ ԶԱՐԴԸ ԱԴԱՆԱ ՔԱՂԱՔՈՒՄ

Աղանայի առաջին կոտորածից (1-3 ապրիլի 1909 թ.) ընդամենը 9 օր հետո՝ ապրիլի 12-ին նույն քաղաքում սկսվեց քրիստոնյաների երկրորդ ջարդը:

Պատասխանատու թյունը տեղական իշխանությունների և կենտրոնական կառավարության վրայից վերցնելու նպատակով, թուրք կեղծարարները, նենգափոխելով փաստերը, ջարդի մեղքը բարդում են հայ քաղաքական կուսակցությունների վրա: Նրանցից մեկը՝ Դամար Արիջօղլուն գրում է. «Կասկածից վեր է, որ երկրորդ խառնակությունն առաջ բերեցին հայ քաղաքական գործիչները, նպատակ ունենալով առիթ ստեղծել օտար միջամտության համար»²:

Իրականում դեպքերն այսպիսի ընթացք են ունեցել:

Ինչպես վերը նշվեց, ապրիլի 5-9-ին Մերսին նավահանգիստ էին ժամանել և խարխալս գցել եվրոպական երեք երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի, ինչպես նաև Ռուսաստանի գրահանավերը: Թեև այդ նավերի անձնակազմերը չէին միջամտել Կիլիկիայում ծայր առած արյունալի դեպքերին, բայց նրանց լուր ներկայությունը լուրջ երկյուղ էր հարուցել թուրքե-

¹ Տե՛ս «Նյու Յորք թայմս», 29 ապրիլի 1909 թ.:

* Աղանա եկած թուրքական «աղատարար» զորամասի անձնակազմի թվի վերաբերյալ գրականության մեջ տարբեր թվեր են նշված՝ 200-ից մինչև 2000:

² Damar Aricoğlu, Hatıralarım - Milli Mucadele Çukurova'da, Fransız İşgali ve Nanti Savaşlar, İstanbul, 1961, s. 54.

րի մոտ. նրանք սպասողական փիճակի մեջ էին, քանի որ Կ. Պոլսում և կայսրություն քաղաքներում ու գավառներում դեռ չկար պարզություն, թե ուրե՞ր են հաղթելու մայրաքաղաքում Արդուլ Համիդի կողմնակիցների և երիտթուրքերի միջև շարունակվող զինված ընդհարումների ընթացքում:

Այս պայմաններում Կիլիկիայի թուրքերի համար ծայրահեղորեն անցանկալի էր իրենց ծովափին ունենալ մի օտար, հզոր ուժ՝ հանձինս եվրոպական դրահակիր նավերի: Նրանք մտածում էին, որ, հավանաբար, հայերի ջարդերի յուրերը հասել են Եվրոպա, և քրիստոնյա պետություններն իրենց նավերն ուղարկել են իրենց հավատակից հայերին օգնելու և մուսուլմաններից վրեժ լուծելու համար: Ամբոխն սկսել էր եվրոպական հնարավոր միջամտությունից և տերությունների ռազմական ուժերի վրեժխնդրական գործողություններից սարսափել: Ջարդարարներն ինչ իմանային, որ Եվրոպայի համար հայի արյունը համարյա ջուր է, որ հանուն հայություն փրկության որևէ երկիր իր գեթ մի զինվորը դեռ չի զոհարել: Բայց ոճրագործի սիրտը միշտ դողի մեջ է լինում, այդ օրերին այդպես էր նաև Կիլիկիայի թուրքերի պարագայում:

Թուրք երևելիները, գլուխ գլխի տալով, նահանգապետից պահանջեցին բոլոր ջանքերը գործադրել՝ գրահանավերը Կիլիկիայի ջրերից հեռացնելու համար, այն պատճառարանությամբ, թե դրանց ներկայությունը գրգռում է մուսուլմանների նյարդերը և կարող է քրիստոնյաների հետ նոր ընդհարումների պատճառ դառնալ: Ջրահակիրները, որ հատուկ նպատակներով չէին հայտնվել Կիլիկիայի ափերին, նահանգապետի պահանջից հետո բարձրացրին խարխալսները և ապրիլի 10-ին Մերսինի նավահանգստից հեռացան¹:

Դրանից հետո ջարդարարների պետերը մի մտավախություն ևս ունեին. և՛ իրենք նոր կոտորած սկսեն, ի՞նչ դիրք կարող է բռնել երիտթուրքական հրամանատարությունը ուղարկած վաչտը, որը բանակել էր քաղաքից դուրս՝ Սիհուն գետի եզերքին:

¹ Տե՛ս «Հորիզոն», № 52, 9 մարտի 1910 թ.:

Եվ սկսվում է ետուն աշխատանք զորամասն իրենց կողմը գրավելու համար: Այդ դիտավորությունները նրանք մարդիկ են ուղարկում բանակատեղ, որոնք ստապատիր յուրեր տարածելով և մոլեռանդություններով յի քարոզներով դիմավորներին գրգռում են հայերի դեմ:

1909 թ. ապրիլի 12 (25)-ը կիրակի օր էր:

Թուրքերի մի մեծ բազմություն առավոտից խմբվել էր քաղաքի ժամացույցի աշտարակի (Սաաթլխանե) հրապարակում և հանրահավաք սկսել: Ելույթ ունեցողները լուսանկարներ էին թափում բոլոր քրիստոնյաների հասցեին, բայց բոլոր հայհոյանքների ու անեծքների կենտրոնում հայն էր, հայությունը: Հերթական ելույթ ունեցողը խուժանին կոչ էր անում «այդ անիծյալ ազգի արմատը կտրել», քանի որ, «եթե նրանց վերջը չտրվի, մենք երբևէ հանգստություն չենք ունենա»:

Նույն օրվա երեկոյան քաղաքով մեկ լուր տարածվեց, թե մի հայ պատանի փորձել է Յադ-Ջամի մզկիթը կրակի մատնել: Թուրք երիտասարդները վազվզում էին իրենց թաղերում և հեասպառ կանչում, թե «հայ ֆիդայիները հարձակումներ են սկսել թուրքական թաղերի վրա և իսլամներին անխնա ջարդում են, օգնություն հասեք»:

Մի թուրքի տնից սաղրանքի նպատակով արձակվում են ատրճանակի զնդակներ, որն առիթ է ստեղծում լուր տարածելու, թե հայերը զնդակներն արձակել են բանակած երիտթուրքական զորամասի վրա՝ դիմավորներ սպանելու նպատակով:

«Ազատության բանակի» այդ զորամասի դիմավորները, մի մարդու պես, զորանոցից կատաղաբար դուրս են թափվում փողոց և շտապ ուղղություն վերցնում դեպի քաղաքի հայոց թաղը: Նրանց հետևում են ռեզիմենտներ (պահեստի դիմավորներ) և ամբոխը: Հրացաններն առած՝ դիմավորներն շտապում են «փրկելու իսլամներին»: Իսկ սրանք, որ առաջին ջարդով գոհացած չէին, սկսեցին դիմավորներին աղիողորմ բողոքել իրենց «ղժրախտ կյանքից»: «Շատ բարեպատեհ է ձեր ներկայությունն այստեղ, -

ասում էին նրանք դիմավորներին: - Հայերը կործանեցին մեր տները, մզկիթները հրդեհեցին, անասելի տանջանքների ենթարկեցին մեզ. իսկ մենք չկարողացանք մեր վրեժը լուծել: Գոնե դուք լուծեք...»: Այս ստերի վրա ավելացնում էին նորերը. իրր գետափին հայերն սպանել են մի դիմավորի, մի ուրիշ դիմավորի էլ վերավորել են, իրր Սալջրյար թաղում հարձակվել ու ջարդել են բոլոր իսլամներին¹: Ջորամասը ազանահայերին ամենամեծ վնասը հասցնողն եղավ՝ իր հրամանատարների գլխավորությամբ: Ջորքի այդ միակողմանի միջամտությունը հայերն այլևս ոչինչ չէին կարող հակադրել:

Տեղ հասնելով՝ դիմավորները մի քանի բոպում չրջապատեցին «թչնամի» հայոց թաղերը և առանց հարց ու փորձի սկսեցին հրացանային համազարկերը²: Անխնա կոտորածը տեղի էր ունենում փողոցներում, հրապարակներում, տներում: Վայրկենապես փշուր-փշուր էին լինում տների դռները, պատասպարվածները խողխողվում կամ լլկվում էին³:

Անօրինակ ռճիրներ էին գործում ոչ միայն թուրքերը, այլև նրանցից ոչ պակաս, եթե ոչ ավելի, սարերից իջած քրդերը, որոնք իրենց զբաղում էին որպես ամենավայրենի, ամենաստոր արարածներ, որ կարող էր մարդը երևակայել⁴:

Շուտով մարդկային կյանքի մրուրը կազմող խուժանն անցավ իր սիրած զրադմունքներից մեկին՝ հայկական թաղերի բոլոր կողմերում կրկին բարձրացան կրակե լեզուներն ու ծուխը: Հրդեհումներին մասնակցում էին նաև դիմավորները, որոնցից կազմված հրձիգ խմբերը տակառներով պատրաստի նավթը լցնում էին տների վրա և կրակը մոտեցնում: Հայ կանանց ու երեխաների հոգեվարքի հոնդյունները, ողբն ու կսկիծը, անմեղների վայնասունն ու օգնություն աղաղակները, հրազենների ձայները և հրդեհների ճարճատյունը, խառնված իրար, մի ան-

¹ Տե՛ս Վեր. Համբարձում Յ. Աչճեան, Ատանայի եղեռնը..., էջ 25:

² Տե՛ս «Իրօշակ», № 5, մայիս, 1909, էջ 55:

³ Տե՛ս «Հորիզոն», № 52, 9 մարտի 1910 թ., «Արարատ» (ս. էջմիածին), № 4, ապրիլ, 1909, էջ 381:

⁴ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3820, 23 ապրիլի (6 մայիսի) 1909 թ.:

¹ Տե՛ս Վեր. Համբարձում Յ. Աչճեան, Ատանայի եղեռնը..., էջ 25:

տանելի քառս էին ստեղծել¹: Վառվող տներից դուրս փախչողները կամ պատուհաններից նայել հանդգնողները հրացանադարկ էին լինում. իսկ նրանք, ուվրեր սիրտ չէին անում տներից դուրս գալ, ողջ-ողջ այրվում էին կրակի բոցերի մեջ: Մարդկային երևակայությունն անընդունակ է բմբռնելու. թե ինչպե՞ս է, որ բնությունն այդքան շարունակություն էր հյուսել մարդկային կերպարանքով այդ էակների հոգու մեջ: Բանականությունն ու տրամաբանությունը խամբում էին ամբոխի անեղր ոճրագործությունների առջև:

Առավել սոսկային այն էր, որ եթե առաջին ջարդի օրերին, ինչպես արդեն նշվել է վերը, Աղանայի հայերը ղենք ունեին և դիմադրություն էին ցույց տալիս, այժմ դինամիտ էին: Այդ էր պատճառը, որ հիմա խուժանը որևէ վախ չունեի և ազատ-համարձակ մոտենում էր յուրաքանչյուր տան և կատարում իր ոճիրները: Չունենալով դիմադրության որևէ հնարավորություն, դժբախտ մարդիկ հրդեհի բոցերի մեջ խելակորույս վազվզում էին այս ու այն կողմ, հետո, շատ չանցած, կրակով բռնկված, փոփում էին գետինին: Իսկ մարդակերները նայում էին այդ սարսուղացի տեսարաններին և ցնծություն դիվային ձայներ արձակում:

Եկեղեցիներից ոչ հեռու տներում գտնվողների մի մասը, պատերի մեջ անցքեր փորելով՝ կարողացավ իրեն այդ աղոթատները գցել: Տարարախտ հայերը, ահագին բազմություններ, կուտակվել էին հայ առաքելական, հայ կաթոլիկ, հայ ավետարանական, ասորիների եկեղեցիների և դպրոցների մեջ:

Հրդեհի լեզուները ճյուղավորվելով ու տարածվելով՝ արագություններով իրենց մեջ առան նաև հայոց մեծ շուկան և նրա հարակից տները, լափելով հայի ունեցվածքն ու կյանքը:

Նույն բախտին արժանացան 5000-ից ավելի հայ գյուղացիներ, որոնք շրջակա գյուղերից, ջարդված ու թալանված, հասել էին Աղանա և մերկ ու քաղցած թափվել քաղաքի փողոցներում ու բակերում: Երբ սկսվել էր կոտորածը, նրանցից մի քանի

¹ Տե՛ս «Արևելյան մամուլ», № 22, 26 մայիսի 1909 թ., էջ 517:

հարյուր հոգի լեղապատառ փախել ու մտել էր Մուշեղյան-Արզարյան վարժարանի շենքերից ներս: Այրվելու ժամանակ նրանց արձակած ճիչերն ու ողբաձայն գոչումները տարածվում էին չորս կողմը՝ սարսուռով պատելով հայերի սրտերը¹:

Ս. Ստեփանոս եկեղեցում ապաստանածներից մեկը նկարագրել է այնտեղի վիճակը յույս 13-ի գիշերը: «Երկսեռ ժողովուրդն ամբողջապես ծունկի եկած աղեկատուր ձայներով և լաց ու կոծերով «Տէր ողորմեա» կր կանչէր եւ դուրսը խուժանը եկեղեցուց վրայ ... քարիւղ կը սրսկէր ջրհաններով ... Եկեղեցուց առաջնորդարանը կրակ առած էր: Եկեղեցուց բակն այ կլլել անկարելի դարձաւ, որովհետեւ կարգը եկեղեցիին եկած էր: Տաճարին ներսը սոսկայի տարով՝ խեղդող մուխ մը սկսաւ լեցուիլ: Հակառակ ամբողջապէս քարաչէն ըլլալուն, ջերմութեան սաստկութենէն գմբէթը, պատերն ու մարմարեայ սիւներն ճաթեցան: Ժողովուրդն այլեւս յուսահատ սկսաւ միաձայն պոռայ «Օգնութիւն, օգնութիւն, խղճացէ՛ք, կ'այրուինք»: Կիները արիւն արցունքներով «Գթացէ՛ք մեզ» կը կանչեն, այրերը «լուծիւն» կը գոչեն, մանուկները շնչահեղձ կ'ըլլան, գոռում, գոչում, աղմուկ և իրարանցում ճշմարիտ դժոխքի մը վերածած էին Սր. Ստեփանոս եկեղեցին»²:

Սևարախտ հայերն աղիողորմ ողբով լալիս էին, սրտակեղք «Տե՛ր, ողորմյա՛» աղաղակում, «մեղա՛-մեղա՛» բացականչություններով թնդացնում օդը... Բայց ի՞նչ օգուտ, ո՞վ պետք է օգնության հասներ նրանց: Հայի Աստվածը: Ո՛չ, խույ էր նա՛ Աստվածը, որին այնպիսի մոլեռանդություններ հայերը պաշտում էին: Քրիստոնեությունն ընդունելուց ի վեր երեւի թե ոչ մի ժողովուրդ այնքան եկեղեցիներ ու վանքեր չէր կառուցել, որքան կառուցել էր հայ ժողովուրդը՝ 16 դար շարունակ դրանց պատերից ներս փառարանելով Հիսուսին, չորքելով նրա պատկերների առջև՝ փրկություն աղոթքներ մրմնջալով: Ո՞ր էր նրա գլխարտությունը, եթե դա կար: Իսկ եթե կար, բայց հրաժարվում էր ձեռք մեկնել մահվան երախտ ընկած մեծ ու փոքրին՝

¹ Տե՛ս «Հորիզոն», № 52, 9 մարտի 1910 թ.:

² Յակոբ Յ. Քերզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 103:

ուրեմն անխիղճ, անգութ էր նա:

Ո՛չ եկեղեցում փակվածների աղաչանք-պաղատանքները, ո՛չ դառնադի լացն ու կոծր չէին կարող փրկել ճակատագրից լքվածներին: Ոնկալորույս տղամարդիկ ու կանայք, երեխաներն ու ծերերը, ողջերն ու փրավորները, իրար փաթաթված, ածխանում էին: Բոլորը հրո ճարակ դարձան:

Ամբողջ հորիզոնը շառագունած էր: Բոցերը բարձրանում էին քաղաքի բոլոր կողմերի վրա: Այդ օրը Աղանայի դանազան մասերում միայն եկեղեցիների կրակների մեջ այրվեցին 1000-ից ավելի հայեր:

Եկեղեցիներից բացի, մյուս ապաստարանները օտարերկրյա միսիոներական դպրոցների, հիվանդանոցների և այլ հաստատությունների շենքերն էին: Ավետարանականների ու կաթոլիկների դպրոցներում իրար վրա լցված էին երեք հազարից ավելի հայեր և ուրիշ քրիստոնյաներ: Անհնար էր նստել, առավել ևս՝ պառկել: Դժբախտներն օրեր շարունակ մնայու էին գամված ոտքերի թաթերի վրա՝ առանց սննդի ու ջրի: Նույն պատկերն էր օտարերկրացիներին պատկանող բարեգործական, բժշկական և այլ կարգի հաստատությունների շինություններում: Ապաստարանների բոլոր հարկերը լցված էին ժանտահոտ օդով: Անտանելի էր հատկապես կանանց ու աղջիկների վիճակը: Այդ գեհնում երեխաներ էին աշխարհ գալիս՝ մեռած կամ կիսամեռ: Օտարերկրյա նշված հաստատությունների վրա արձակված զնդակներից ամեն ժամ մարում էին տասնյակ կյանքեր:

«Գազանաբարոյ խուժանը, - գրել է Աղանայի երկրորդ ջարդի ականատես Ներսես եպիսկոպոսը, - ո՛չ մէկ բան պակաս ձգեց: Ատ հոգեսարսուտ վայրկեաններուն՝ ա՛խ, քանի՛քանի՛ դժբախտ մայրեր խելագարեցան: Թերեւս երկինք ու երկիր իրենց ստեղծուած օրերէն ի վեր՝ այսպիսի ճիւղային, այսպիսի ահռելի բարբարոսութեան մը ականատես չէին եղած»¹:

Ինչպես ասվեց, Կիլիկիայի ափերում գտնվող եվրոպական երեք երկրների ու Ռուսաստանի ռազմանավերի անձնակազմն-

րը թեև չէին միջամտում ծավալված արյունահեղ դեպքերին, բայց Աղանայի երկրորդ ջարդն սկսվելու առաջին իսկ օրը Մերսինի նավահանգստում այդ նավերից ցամաք իջան մի քանի տասնյակ սպաներ ու նավաստիներ և ուղևորվեցին Աղանա: Այստեղ նրանք սոսկալի տեսարանների ականատես եղան:

Ֆրանսիական «Ֆիգարո» թերթը տպագրել էր Կիլիկիայի ջրերին մոտեցած «Վիկտոր Հյուգո» դրահակրի վրա ծառայող, Մերսինում ափ իջած ու այնտեղից Աղանա գնացած Փրանսիացի մի ծովային սպայի նամակները՝ քաղաքում տեսած սարսափների նկարագրություններով: Ապրիլի 11-ի նամակում սպան գրում էր. «Գետը շարունակում էր ծովը տանել հազարաւոր դիակներ, որոնք նետուած էին այնտեղ: Նրանք լողում էին գետափի մօտ: Ես տարրերեցի 4-5 տարեկանից ոչ մեծ մի աղջկայ դիակը, նոյնպէս մի տղամարդու դիակ, որի ձեռքերն ու ոտքերը կտրուած էին և ճղուած՝ վերեւից ներքեւ, կարծես թէ մորթուած անասուն լինէր: Եւ այն բոպէին, երբ ևս այս նամակն ևմ ուղարկում, տեղեկանում եմ, որ չնայելով այն բանին, որ քաղաքում երեւացել են եւրոպական համազգեստներով մարդիկ, չնայելով այն բանին, որ եւրոպական երեք դինուորական նաւերի հրամանատարները այցելեցին Աղանա եւ խիստ զգուշացումներ արեցին թուրքական վալիին, այնուամենայնիւ, սպանութիւնները և հրդեհումները չեն դադարում»²:

Նույն զիչերը մեծ թափով շարունակվում էր զոհված հայերի դիակների հավաքումը ու Սիհուն և Զիհուն գետերը թափելը³: Միայն Սիհուն գետը արդեն տարել և ծովն էր թափել չուրջ 3000 դիակ³: Ականատեսներից մեկը՝ Փրանսիացի լրագրող, ազգությամբ հույն Ա. Աղոսիդեսը գրում էր. «Ալեքսանդրեթի ծովածոցը երբեք չէր տեսել շնաձկների այդպիսի ներխուժում: Սպանները՝ օրեր շարունակ դիտելով այդ տեսարանը, կա-

¹ «Ֆիգարո» թերթից կատարած հայերեն թարգմանությունը տե՛ս «Մշակ», № 93, 5 մայիսի 1909 թ.:

² Տե՛ս «Դրօշակ», № 5, մայիս, 1909, էջ 54:

³ Տե՛ս Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, Դ. տարի, Կ. Պոլիս, 1910, էջ 32:

* Նկատի ունենալով ծովածոցում գտնված եվրոպական ռազմանավերի անձնակազմերի սպանելին:

¹ Ներսէս եպիսկոպոս, Դանիէլեան, Կաթիլ մը ջուր այրած սրտերու, Կ. Պոլիս, 1912, էջ 50-51:

տարեցին բազմաթիվ նկարահանումներ»¹: Նույն բանը վկայում էր «Գրոշակի» թղթակիցը, գրելով, որ հազարավոր դիակներ արդեն ծովը հասած լինելով, եվրոպական զրահանավերից «աստեղ յուսանկարները կ'առնեն առանց ամչնալու»²:

Այն ժամանակ, երբ սայլերով Սիհուն և Զիհուն գետերը թափած հայերի դիակները յոգում էին ծովի վրա, այդ նույն պահերին տնից-տեղից զրկված, իրենց սիրելիները կորցրած հազարավոր հայ որբեր, տղամարդ ու կին, մերկ ու սովատանջ թափառում էին Աղանայի շրջակա լեռներում, ամենուրեք բախվելով հրացաններով ու յաթաղաններով զինված մարդասպանների: Այդ օրհասական ժամերին ահարեկ հայերի համար փրկություն խարխիս եղած իտալական և ֆրանսիական նավերը մոտենում էին կիլիկյան ափերին և թնդանոթի նշաններով խեղճերին կանչում էին ու տեղափոխում Բեյրութ:

Ապրիլի 12-13-ին Աղանայի վիայեթի ափերին եվրոպական երկրների նոր ռազմանավեր մոտեցան: Ապրիլի 12-ին Մերսինում խարխիս գցեց բրիտանական «Տրայմֆ» հաճանավը³, իսկ հաջորդ օրը՝ ֆրանսիական «Ժյուլ Միշլեր» ու «Ժյուլ Ֆերրի» մարտանավերը, «Լա վերիթե» և իտալական «Ֆերրուչիո» հաճանավերը: Բայց եվրոպական այս մարտանավերի ներկայությունը նույնպես վայրագությունների դադարեցման արգելք չեղավ:

Երկրորդ օրվա՝ ապրիլի 13-ի արևածագի հետ հրացանաձգությունը նորից սկսվեց: Ս. Ստեփանոս եկեղեցու պատի մեջ անցք փորելով, այնտեղից հայերի մի մասը փախուստ տվեց ոչ հեռու գտնվող ասորաց փոքրիկ եկեղեցի, ուր կոտորածից փրկված ասորիները խոնվել էին՝ սպասելով իրենց վախճանին: Հայերը դեռ նոր էին հասել այդ եկեղեցու բակը, երբ մի քանի հարյուր զինված թուրքեր հարձակում գործեցին այնտեղ ապաստանած ասորիների և բակում կուտակված հայերի վրա:

¹ «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1988, էջ 16:

² «Գրոշակ», № 5, մայիս, 1909, էջ 56:

³ Մարտանավի հրամանատարն օրեր անց «կր յայտնէ, թէ Սիհուն գետը բազմաթիվ դիակներով լեցուն է» («Բիզանդիոն», № 3822, 25 ապրիլի (8 մայիսի) 1909 թ.):

Ներս մտնելով եկեղեցի՝ խուժանն սկսեց անողորարար կոտորել ասորի տղամարդկանց, կանանց, երեխաներին, սպանեց քահանային: Վերջում կրակի մատնեց եկեղեցին ու կից դպրոցը: Իսկ բակում խոնված հայերը, մի քանի զոհ տալով, չփոթահար փախան դեպի ս. Ստեփանոս եկեղեցի:

Կեսօրն անց մարդասպաններն ուժեղացրին հարձակումը եկեղեցիների վրա, ուր ապաստանած հայերից որեւէ մեկն այլևս հույս չուներ, թե կենդանի է մնալու: Միայն հրաչքը կարող էր որեւէ բան փոխել:

Կյանքին հրաժեշտ տալու վերջին վայրկյաններին էր, որ փրկություն չող երեաց: Քաղաքի ֆրանսիական եկեղեցու հովիվ Փրեր Անթուան Դիոսկորը և Մեծ Բրիտանիայի հյուպատոս Դաութի Ուիլին օգնություն եկան զժբախտներին: Այս երկու եվրոպացիները մի երիտասարդ թուրք սպայի խնդրել էին իր զինվորներով պաշտպանություն տակ առնել կոտորվող քրիստոնյաներին: Եվ սպան այդ խնդրանքը կատարել էր. նրա հրամանով՝ զինվորները պատնեչ ստեղծեցին ջարդարարների առջև: Հազարավոր քրիստոնյաներ զուրս եկան եկեղեցիներից ու թաքստոցներից և իրենց կյանքի ապահովությունը հազվագյուտ վեհանձն ֆրանսիացուն վստահեցրին: Իսկ վայրագ խուժանը անոթի, կատաղի գազանի պես հեռվից հեռու դիտում և սպասում էր հարմար պահի, որպեսզի զինվորների հեռանալու դեպքում վայրկենապես նոր ոճիրներ ձևոնարկեր: Բայց սպան վճռականորեն էր տրամադրված: Նա հրոսակներին սպառնում էր, թե զինվորներին կհրամայի կրակ բացել իրենց վրա:

Մահից փրկվածները հավաքվեցին հիսուսյանների եկեղեցում և նրա շրջակա տարածքում: Բայց քիչ անց այս եկեղեցին նույնպես կրակի մատնվեց: Դրանից հետո Դաութի Ուիլիի և Անթուան Դիոսկորի խնդրանքով վալին թուլյատրեց հայերին բերել կառավարական պաշտոնատանը հարակից պարտեզ:

Հայերի շարանը զինվորների ուղեկցությամբ ուղղություն վերցրեց դեպի այնտեղ՝ թուրքական թաղերով ու մզկիթների կողքով անցնելով: Ճամփի եզրերին հավաքված խուժանը հաղար ու մի հայհույաններով ու նախատինքներով յուտանք-

ներ էր թափում տառապյալ հայերի շարքերի վրա, անիծում հայոց խաչն ու կրոնը, սահմանադրությունը և այն բերողներին: Իսկ խուժանապետերը ծաղրանքով դիտում էին թշվառներին, անիծում ողջ մնացածներին:

Աղանայի հայ ավետարանականների հոգևոր հովիվ վեր. Համբարձում Աչճյանը, որը հայերի այդ շարանի մեջ էր, հետագայում սրտի կակիծով գրել է. «Այս հսկայ բաղձութեան ... ենթարկուած նախատինքն ու ծաղրանքը խօսքով կամ գրիչով նկարագրել կարելի չէ: ... Կր կարծեմ թէ Բարեկոն գերի տարուող հրեաներ իսկ այսքան չպախարակուեցան: Դժուար բան է առանց պատճառի և յանցանքի խեղճութեան և նախատինքի ենթարկուիլ և անոնց համբերել: Տէ՛ր Աստուած, դուն համբերութիւն տուր»¹:

Երբ շարքերը տեղ հասան, կառավարչության պաշտոնատան պատուհանին երևացին կուսակալ Մեհմեդ Ջևադ բեյը և վիլայեթի ղինված ուժերի հրամանատար Մուստաֆա Ռեմզի փաշան՝ շրջապատված արբանյակ դահճապետերով: Իրրև ծաղր, կուսակալը մերկ ու բորիկ, սոված ու լլկված հայերից պահանջեց «գինաթափ լինել»: Եվ դա այն ղեպքում, երբ նա, ականջը պահած Պոլսի կողմը, սպասում էր արդուհամիդյան հեղաշրջման վերջնական հաղթանակին, որպեսզի ջարդի ենթարկի Կիլիկիայի հայության մնացորդին:

Մինչ պաշտոնատան առջև թափված շարքերը հերթական ստորացումների էին սպասում, կուսակալը կարգադրեց մի քանի հայերի կացիներ հանձնել և նրանց ձեռքով քանդել սահմանադրության հռչակումից հետո կառուցված ազատության կամարը:

Այդ հրամանը կատարելուց հետո կիսակենդան շարքերը կուսակալի հրամանով սկսեցին աղոթել Արդուլ Համիդի ողջության ու փառքի համար: Աղոթքից հետո Ջևադ բեյն իր նստավայրից հայերին հրամայեց ամբողջ ձայնով գոչել՝ «Մեշրութիեթ գահը օյսուն, փաղիչահըմ չոք յաչա»²: Դրանից հետո միայն կուսակալը հայտարարեց, թե գյավուրները ազատ են և կարող են իր աչքից չքվել:

¹ Վեր. Համբարձում Յ. Աչճեան, Ատանայի եղևոնը..., էջ 26:

² Կորչի՛ սահմանադրությունը, շատ ապրի՛ մեր թագավորը:

Լույսի ու ազատության ծարավի հայորդիների գլուխները, որ Օսմանյան հեղափոխությունից հետո մի պահ միամտաբար բարձրացել էին, հիմա լիովին ջախջախված էին:

Այս սրտամաշ տեսարանների հանդեպ արյունարբու ոճրագործներն իրենց լիբր հաղթանակի արյունոտ գինարուլքն էին վայելում:

Առաջին և երկրորդ կոտորածներից ազատված, կյանքի ու մահվան միջև տատանվող, անտեր ու տարարախտ 20 հազարի չափ երկսեռ հայեր, որոնք անցել էին հրի ու սրի միջով, կառավարչության պարտեղից դուրս թափվեցին, բայց իսկույն չվարմնացին, թե ո՞ւր են գնալու: Մի պահ վարանելուց հետո, ղինվորների ուղեկցությամբ նրանք ուղղվեցին ղեպի իրենց թաղերը՝ կատաղած ոհմակների հիշոցների, խնդմնդանքի և ծաղրական ականարկների տարափի ներքո: Լուռ ու մունջ և գլխահակ, վերջապես տեղ հասան:

Տեսարանը դարհուրելի էր: Հրդեհի էր մատնվել քաղաքի երեք քառորդը¹: Քաղաքը քանդված, հրկիզված շենքերի սև անտառ էր հիչեցնում: Հայկական թաղերի ամրակուռ ու փառավոր կառույցները մոխրացած էին, փլատակների վերածված: Բոցերի ճարակ էր դարձել մոտ 3500 տուն՝ հազարավոր անմեղների աճյուններ իրենց տակ թողնելով: Նույնպես և հայոց փառապանձ դպրոցները, հայոց շուկաները: 30 հազար բնակչություն ունեցող հայկական գլխավոր թաղում կրակի լեզուները չէին հասել միայն մի քանի տների, կանգուն էր մնացել միայն մայր եկեղեցին: Պղծվել էին բոլոր եկեղեցիները, խորտակվել էին սեղանները և խաչերը, թալանվել էին սուրբ անոթները, ամեն սրբություն ոտնատակ էր արվել: Այրվել ու կործանվել էին քրիստոնյա բոլոր ոչ հայկական եկեղեցիները, բացի հունաց եկեղեցուց, որը գտնվում էր քրիստոնյաների թաղերի ծայրամասում: Հրդեհի էին մատնվել նաև այդ թաղերում գործող օտար հաստատությունները²: Ամբողջ քաղաքով մեկ ցրված էին հազարավոր քրիստոնյաների այրված ու այլանդակված, գնդակա-

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3806, 6 (19) ապրիլի 1909 թ.:

² Տե՛ս «Տարազ» (Թիֆլիս), № 5-6, մայիս-հունիս, 1909:

Հար կամ սրատված դիակներ: Գետին տապալվածներից շատերը կիսամեռ էին, հոգևորքի մեջ: Փողոցներում ու բակերում բազմաթիվ վայրենի շներ, խմրված դիակների շուրջ, հոշոտում էին անշնչացած կամ դեռ հոգևորքի մեջ գտնվող մարմինները: Այնպիսի առատությունը էր արյուն թափվել, որ անցորդը փողոցով չէր կարող անցնել առանց ուտքերն արյունոտելու¹:

Աղանայում մշտական բնակվող քաղաքացիներից երկրորդ ջարդի ժամանակ զոհվել էր 3500 հոգի, որոնցից հայեր՝ 2500, այլ քրիստոնյաներ՝ 500, մահմեդականներ՝ 500: Բացի այդ, քաղաքում սպանվել էր ուրիշ տեղերից եկած և այնտեղ ժամանակավոր աշխատանք գտած 1000 հայ: Նրանցից 635-ը խարբերոցի էր, 37-ը՝ մալաթիացի, կեսարացիներ էին 263-ը, արարկիրցիներ՝ 17 հոգի, բալուցիներ՝ 50: Քաղաքից որոշ հեռավորության վրա գտնվող մի քանի ազարակներում աշխատող 200 հայերից սպանվեցին 194-ը (փրկվել էր միայն մի բնտանիք): Այսպիսով, Աղանայում և նրա արվարձաններում սպանվել էր 3700 հայ²:

Քանի որ Աղանայի երկրորդ ջարդի ժամանակ զորքն ամբողջությամբ անցել էր մահմեդական բնակչության կողմը, ապա այս անգամ հայ զոհերի թիվը համարյա տասնապատիկ գերակշռում էր մահմեդական զոհերի թվին: Հենց այդ ժամանակ վնասվեցին և ուրիշ ազգությունների պատկանող քրիստոնյաները, գլխավորապես՝ հույները:

Աղանա քաղաքի քրիստոնյաների առաջին և երկրորդ ջարդերի վերը նշված կազմակերպիչներից ու իրականացնողներից բացի, պատմությունը մեզ հասցրել է ուրիշ հայակերների անունները ևս, որոնցից էին՝ Քանի գաղն Սայիդը, Քերիմ աղան, Կերկելի Ալին, Բայրաքդար գաղն Բեքիրը, Վանյր Ահմեդը, Արիֆ գաղն Էսադը, Թեքելի Արդուլահը, Դարբաղ գաղն Հաջի Ալին ու Ռեուֆը, Համալ գաղն Հասանը, Իրրահիմ Ռասրխը, Բոսնայր Սայիհն ու Մեհմեդը, Բամբուկչի Մոտիլին, Ղասսար գաղն Հուսեինը և ուրիշներ¹: Նշված թուրք, քուրդ, չերքեզ ջարդարարներից իր գա-

ղանություններով հետ չէր մնացել գնչուների ցեղապետ Արդուլ Քերիմը:

Երբ Թուրքիայի մյուս ժողովուրդների մեջ գահի փոփոխությունը հույներ էր արթնացրել լավ ապագայի համար, հայությունը, սակայն, վիճակված էր նորից ընկղմվելու խորին սգի մեջ: Կրկին հոշոտվել էին նրա զավակները՝ մորթվել կամ կենդանի այրվել:

Աղանայի կոտորածը վերջնականապես թաղեց թուրքահայության վիճակը բարեկամելու հնարավորության մասին եղած պատրանքները:

Հայն ի՞նչ կարող էր անել: Նա աշխարհում որևէ սրտացավ բարեկամ կամ հովանավոր ուներ: Այս անպաշտպան, անօգնական դրությունը հայի համար ո՞վ էր ստեղծել: Ո՞րն էր ելքը...

Արյունամած սև օրերին հայերը չէին կարողանում այդ հարցերին պատասխան տալ: Հիմա՞ էլ վիճակված էր բավարարվել հառաչանքներով ու լացով: Ի՞նչ է՝ նրանց միայն մնում էր Հին Եսրայելի նման կոծել և մոխիր ցանել իրենց գլխին, ողբա՞լ իրենց զավակների, մայրերի, հայրերի, եղբայրների ու քույրերի եղերական մահը: Միայն այդքա՞ն: Կա՞ր ապրել շարունակելու հույսի նշույլ: Արդյո՞ք այս անիծյալ պետությունը մեջ իրենց չի սպասում ավելի մեծ արհավիրք:

Ժամանակը ցույց կտար:

¹ Տե՛ս **Սուրէն Պարթեւեան**, Կիլիկեան արհաւիրքը, Կ. Պոլիս, 1909, էջ 38-39:

¹ Տե՛ս «Հորիզոն», № 52, 9 մարտի 1910 թ.:

² Տե՛ս նույն տեղում, № 64, 23 մարտի 1910 թ.:

ԳԼՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԱԴԱՆԱՑԻ ՎԻՍՅԵԹԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՈՒ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ

Աղանայի վիլայեթի քաղաքներում ու գյուղերում ծայր առած ջարդերը նույնքան սոսկալի էին, որքան կենտրոնում:

Կոտորածները Աղանա քաղաքից արագորեն տարածվեցին նույնանուն նահանգի բոլոր կողմերում, բացառությամբ Իչիլի սանջակից, որտեղ հայեր չկային, ավելի ճիշտ՝ կային չափազանց քիչ թվով¹:

Այստեղ նույնպես ամեն ինչ ծրագրված էր ու կազմակերպված: Կարծես մի գաղտնի ուժ նահանգի տարածքում հմտորեն ղեկավարում էր մարդասպանների արյունալի գործողությունները:

Ջարդն իրականացնողները երևք մակարդակի էին՝ ծրագրողներ, ղեկավարողներ և գործադրողներ:

Գավառների դրությունն ավելի սոսկալի էր մի շարք պատճառներով. այնտեղ չկային հաղորդակցության անհրաժեշտ հնարավորություններ, դրսից օգնություն ստանալու մասին մտածելն անգամ ավելորդ էր, թուրքը չէր վախենում եվրոպական միջամտությունից, հյուպատոսներից ու միսիոներներից, ինչպես դա կարող էր տեղի ունենալ քաղաքներում, հատկապես նավահանգիստներում: Այդ իսկ պատճառով՝ նա ամբողջապես տեր էր իր դոհին, նրա հետ կարող էր վարվել այնպես, ինչպես թեկադրում էր իր հաճույքը: Այստեղ նույնպես կատարվում էին ամենասանձարձակ ոճրագործություններ: Ինչպես Աղանա քաղաքում, առավել ևս վիլայեթի գավառներում, ամբոխը չէր մտածում հաղթանակ ձեռք բերել իր արյունով ու զոհաբերու-

¹ Տե՛ս «Արևելեան մամուլ», № 22, 26 մայիսի 1909 թ., էջ 517:

թյամբ, այլ աշխատում էր նախ դինամիտի հայերին, որից հետո սկսել կոտորածը: Շատ տեղերում դա օրինաչափ էր դարձել: Այդպիսի ղեկավարում փողոցի դինված խուժանին աջակցում էին նույն գյուղի կամ նույն քաղաքի թուրք հարևանները, որոնք հայերին երգվում էին իրենց հարևանություն անկեղծություն, կուրծք էին ձեռնում սուրը մարդարեւին վկայակոչելով և Ղուրանի վրա ուխտելով, որ եթե հայերը ղենքերը հանձնեն, ապա չարիքը կվերջանա, և իրենք ամեն ինչ կանեն, որ հայի գլխից մի մաղանգամ չպակասի: Թշնամիներով շրջապատված հայերը, որոնք սկզբում մտադիր էին դիմադրել, «բարի» հարևանների խրնդրանք-աղաչանքներից հետո ղենքերը հանձնում էին: Եվ վայրկենապես տեսարանը փոխվում էր. շողոքորթ հարևանը գազան էր դառնում, դիմում գյուղը շրջապատած խուժանին և վայրի ու հաղթական աղաղակներով նրան ներս առաջնորդում:

Գավառներում գործում էր մի ուրիշ օրինաչափություն ևս: Գյուղերի գերակշիռ մասում ծավալված իրադարձությունները հար և նման էին իրար, նույնանման սարսուղացիչ պատկերները հաջորդում էին մեկը մյուսին: Տանջված ու տառապած հոգիներին ամենուր բղկտում էին արյամբ արբեցած հրեշածին ոճրագործները և խրախճանքներ սարքում ողջակիզված հաղարավոր ծաղիկ կյանքերի շուրջ: Ուստի հնարավոր չէ ներկայացնել, թե ինչպես էին սպանվում անմեղ հոգիները, ինչպես էին պղծվում բոլոր սրբությունները, ինչպիսի անլուր ոճիրներ էին կատարվում, քանի որ դրանք կլինեին անվերջ կրկնություններ, որոնցից, ցավոք, ամբողջովին խուսափելն անհնարին եղավ սույն ուսումնասիրության մեջ:

Հայկական բնակավայրերում և խառը բնակչություն ունեցող գյուղերում տեղի ունեցած ջարդերին անդրադառնում ենք միայն թուրքիկ՝ ղեկավարը համառոտագրելով:

Սոսկալի էր **Գոգ-Օլուզի** ճակատագիրը:

Գյուղը գտնվում էր Տարսոնից ութը ժամ հեռավորություն վրա (նոտքով), ղեպի հյուսիս-արևելք, բարձր բլրի ստորոտում: Բազմաթիվ թուրքական գյուղերով շրջապատված Գոգ-Օլուզն ուներ խառը բնակչություն, որից 70 տունը հայեր էին: Հայ գյուղացիները դինված էին և ունակ պաշտպանելու իրենց:

Ազանայի ղեպքերի յուրը տեղ հասնելուն պես տեղի թուրքերն անմիջապես համախմբվեցին և, հայ քահանային դիմելով, ասացին. «Մենք անդեն ենք, այդ իսկ պատճառով վախենում ենք, թե չլինի հայերը հանկարծ սխալ թույլ տան և հարձակվեն մեզ վրա»: Ելնելով դրանից՝ նրանք հայ գյուղացիներին առաջարկեցին «նույնպես դիմաթափ լինել»: Ուարվելով իրենց հարևանների շողոմ խոսքերից ու միամիտ հավատ տածելով նրանց «խաղաղասիրությունը»՝ հայերը հանձնեցին իրենց բոլոր ղենքերը, որպեսզի թե՛ «անդորրություն լինի» և թե՛ իրենք պատասխանատվությունից զերծ լինեն:

Գոգ-Օլուզի խուժանը հենց դրան էր սպասում: Գյուղի մուֆթիի հրամանով տեղի են ունենում չտեսնված վայրագություններ:

Բռնելով մի հայի՝ թուրքերը նրան հրամայում են խաչակնքել: Երբ մարդը կատարում է հրամանը և աջ ձեռքով խաչակնքում է, արյունարբուները կտրում են այդ ձեռքը, հետո ստիպում են, որ նա խաչակնքի ձախ ձեռքով, և կտրում են նաև այդ ձեռքը: «Հիմա ոտքերով խաչ հանի», - հրամայում է մի ճիվաղ: Խնդճը, բնականաբար, անկարող էր կատարել հրամանը: «Նշանակում է՝ ոտքերդ քեզ պետք չեն», - ասում են դահիճները, կտրում երկու ոտքերը և այդ վիճակում նետում կոյանոցի հորը¹:

Սկսվում է զանգվածային բռնարարություն՝ աղջիկը հոր, քույրը եղբոր, կինը ամուսնու աչքի առջև: Միաժամանակ,

¹ Տե՛ս Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 673:

առանձնացնում և սպանում են տղամարդկանց մի մասին, որոնց դիակները վրա շարունակվում է կանանց բռնարարությունը: Այս վայրագությունն միջոցին աղիոգորմ լացող և իրենց մայրերից բնականորեն բաժանվել չուող երեխաներին դահիճները ոտքերից բռնելով՝ գլուխները դարկում էին քարերին և սպանում²:

Հղի կանանց վրա գործադրած վայրագությունների ահոյի տեսակներից էր այն, որ նրանցից ոմանց արգանդի մեջ ատրճանակ էին պարպում, ասելով. «Տղաներին սատկացնենք ներսում... իսկ ոմանց արգանդի մեջ լցնելով վառող՝ բռնկեցնում էին»³:

Բռնարարվածների մեջ կային մինչև 8-9 տարեկան աղջիկներ, որոնցից ոմանք յլկուճի էին ենթարկվում հակարճական կերպով, ինչպես նաև փոքրիկ տղաներ՝ նույնիսկ 4-5 տարեկան: Այս վայրագությունն ընթացքում երեխաներից շատերը մեռնում էին տեղում, կային նաև ապշահարներ ու խենթացածներ, որոնք էլ ինքնասպան էին լինում³:

Այդ դժնի ժամին հայերին «օգնություն եկած» ուստիկանները, գյուղ մտնելով, հայտարարեցին, թե իրենք ի գորու չեն զսպելու խուժանը: Ուստի ջարդի մնացորդացին առաջարկեցին թողնել գյուղը և ապաստանել հարևան թուրքական գյուղերում: Սկսվեց անգեն բնակչության խուճապահար փախուստը տարբեր ուղղություններով:

Մեծ սարսափները ղեռ առջևում էին: Գոգ-Օլուզից փախած 71 գյուղացի հավաքվել էին Բուջազ անունով մոտակա թուրքական գյուղում: Բայց դա հանգրվան ու փրկություն չեղավ: Գյուղապետը, մոտենալով հայերին, հայտնեց, թե ինքն անկարող է պաշտպանել նրանց, ուստի առաջարկեց մի ուրիշ գյուղ հեռանալ:

Սարսափահար մարդիկ, ծայրաստիճան գարհուրանքի մեջ, հեռացան Բուջազից, մտան մոտակա Ինջիր-Կետիկ թուրքաբնակ գյուղը՝ պատսպարվելով գոմերի ախոռներում:

¹ Տե՛ս Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 671-672:

² Տե՛ս նույն տեղում, էջ 672:

³ Տե՛ս նույն տեղում:

Հաջորդ օրվա առավոտյան գյուղ եկավ Արդույ Ազիմ անու- նով ձիավոր ոստիկանը՝ իր հետ ունենալով ավաղակների մի խումբ: Նրա կարգադրությամբ՝ ենթակաները գոմերից դուրս բերեցին թշվառներին և գյուղից դուրս քշեցին: Ախտոների մութ անկյուններում թաքնված 11 հոգի հրաչքով աղատվեցին Ջար- դից, իսկ մնացած 60 հոգին, սարսուռով համակված, չըջապատ- ված մարդասպանների ոհմակով, սպասում էր իր վախճանին:

Հրոսակները հայերին առաջնորդեցին դեպի Յանրք-Գրչլա թուրքարնակ գյուղը: Այստեղ նրանցից մի քանիսը գերիներից ջուղեցին մոտ 15 զեղեցկագույն հարսների ու կույսերի, ինչպես նաև 5-6 ղեռատի տղաների և խմբից դատեցին: Որպես ավար նրանց նստեցնելով գրաստների վրա, թուրքերն «իրենց սեփա- կանություն» հետ ճանապարհվեցին տուն: «Մեր Ահմեդ աղան դավակ չունի, այս տղային տանեմ նրա համար, իսկ այս աղջիկն էլ իմն է. ոչ մեկին չեմ տալու», - ասում էր ատամնաթափ մի ձիվաղ: «Այս հարսներն էլ ես կտանեմ», - ծղրտում էր տասնյակ կարկատաններով «հագուստի» մեջ խցկված մի ուրիշը:

Սևարախտների մեջ էր նաև 17 տարեկան նորապսակ մի հարս՝ նրբագեղ ու չքնաղաղեմ Պերճուհին՝ Ահարոն անունով 22 տարեկան իր ամուսնու հետ: Թուրքերի տմարդի խոսակցու- թյուններից ցնցված՝ զեղեցկուհի Պերճուհին պատկերացնում է մոտալուտ արհավիրքը, և իր պատիվն անաղարտ պահելու հա- մար աղերսանքով դիմում է ամուսնուն՝ խնդրելով գրպանից հանել դանակը և կտրել իր պարանոցը: Թշվառ ամուսինը սի- րասուն կնոջն աղաչում է իրեն չմղել այդ անօրինակ քայլին, բայց նա մնում է անդրդվելի, և արտասովսառն աչքերով կրկին ու կրկին թախանձագին աղաչում է իրականացնել խնդրանքը: Ամուսինն ստիպված կատարում է կնոջ վերջին իրավիճակը¹, իսկ հետո անձնասպան է լինում:

Գեղեցիկ հարսներին, պարմանուհիներին և պատանյակ տղաներին դատելուց հետո մնացած գերիները դատապարտված էին խուժանի քմայքին: Դեռ չհասած Յանրք-Գրչլա, մարդա-

սպաններն սկսեցին իրենց խրախճանքը: Կացինները փայլում էին օդի մեջ և իջնում դոհերի գլխին, թևերին, մեջքին: Տղամարդ- կանց լալագին հառաչանքները խառնվել էին կանանց ճիչերին ու երեխաների դառնակակիծ ձայներին: Գաղաններից ամեն մեկն անում էր այն, ինչ ուզում էր: Օրինակ՝ մի գառամյալ ծերու- նու քարչ տալով նստեցրին քարի վրա և, գլխին նավթ լցնելով, մոտեցրին լուցկին: Թշվառ ծերունին, մի քանի քայլ անելուց հետո, տապալվեց բոցերի մեջ: Դա Գոգ-Օյուզի քահանան էր:

Այնուհետև սկսվեց անգթություն վերջին արարը: Կենդանի մնացած գերիները, կիսախողջող կամ անղամահատ վիրավոր- ները, զնդակահարվածները, բոլորը միասին զիզվեցին իրար վրա: Քառասունհինգ հոգի էին՝ մեծ մասամբ չափահաս այրեր ու երիտասարդներ՝ իրենց ընտանիքներով: Դժբախտների վրա և չորս բոլորը դասեցին դուրարծարծ խոփներ ու կրակ տվեցին: Բոցն լեղունները և թանձր ծուխը երկինք բարձրացան՝ դեպի «գթասիրտ» Աստված: Մի վկայագրում կարդում ենք. «Բոցի մեջ էն կր լսուհին մանկան սուր ճիչեր, մայրական աղելսարչ գոչեր ու օրհասականի սրտաճմլիկ հառաչներ. մեկը կիսայրած հագուստով կր փորձել փախչիլ հնոցի սաստկությունն էն, միսը կիսախանձ իրանով վերստին ճիզ մը կ'ընէր վտանգէն աղատե- լու: Այս քստմնելի տեսարանին առջև ի՞նչ ուրախութիւն կր զգար մարդկային վայրագութիւնը, որ իւրաքանչիւր գոհի ճիչե- րուն թուրք խուժանը կր պատասխանէր ծիծաղներով և վրէժի լուտանքներով: Ու երբ վերջապէս ճիչն ու գոչը դադրած էին, այլևս չէին լսուեր հառաչանքներ ու հոնդիւններ, դիակներու բլուր մը կր մխար, որուն ձենձերահոտովը կը կշտանար երկին- քը, առանց խոռվուելու իր անսպառ համբերութեանը մէջ»:

Վրա հասած մութը ծածկեց Գոգ-Օյուզի հայերին պատկա- նած շենքերի ցցված սև պատերը: Հայկական թաղը չկար այլևս, այն ավերակույտ էր:

Սարսափազդու դեպքեր տեղի ունեցան Աղանայի սանջակի Արդողլու գյուղում², որը գտնվում էր Միսիս քաղաքից մի քանի

¹ Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 173:

¹ Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 176:

² Տե՛ս С. 3., Адацкие черные дни, Баку, 1909, с. 10-13.

կիրոմետրի վրա, Զիհուն գետի եզերքին, ուներ խառը բնակչու-
թյուն (66 տուն հայ, 30 տուն թուրք): Հայերն ունեին եկեղեցի ու
վարժարան: Զարդի միջոցին գյուղում կային 242 պանդուխտ հայ
մշակներ¹:

Լսելով, որ ապրիլի 1-ին Աղանայում սկսվել է հայերի կոտո-
րած, գյուղի թուրքերն սկսեցին իրենց ընտանիքները մոտակայ-
քի թուրքարնակ գյուղերը տեղափոխել: Գուշակելով գայիք
արհավիրքը՝ հայերը նրանցից խնդրեցին չհեռանալ, մտածելով,
որ իրենց կողքին ապրող, իրենց հետ աղ ու հաց կիսած հա-
րևանները վտանգի դեպքում իրենց աջակից կլինեն: Բայց
նրանք հեռացան՝ անվտանգության որևէ երաշխիք չտալով հայ
հարևաններին:

Ապրիլի 3-ին, ուրբաթ առավոտյան, գյուղի դիմաց ձիավոր-
ների մի մեծ խումբ երևաց: Մեկ-երկու ժամ հետո ուրիշ հեծյալ
խմբեր մոտեցան գյուղին և պաշարեցին: Ծատ չանցած՝ ձիա-
վորներին միացան գյուղից հեռացած թուրք տղամարդիկ՝ հետի-
ոտն ու հեծյալ: Արհավիրքի վտանգը կախվեց Արզոյլուի վրա:

Հայ երիտասարդները տրամադիր էին կռվելու և մեջտեղ բե-
րեցին ունեցած զենքերը՝ 5 մաուզեր, 60 փութեր, ինչպես նաև
չիֆթե և թյուֆենեկ հրացաններ²: Բայց գյուղի ջոջը՝ Բաղդադոյ-
լու Կարապետը, վճռականապես դեմ արտահայտվեց երիտա-
սարդների մտադրությունը և, սարսափից խելքը կորցրած,
գոռոգոտում էր. «Մեզի՞նչ է մնացել իսլամի դէմ կռուիլ... Զիֆթե-
ներով դու՞ կը դարնուի, մարդ չզարնուիր. մէկ թիֆէնեկի դէմ
քսան մարթին կայ մեր դիմացը... Ճիտերնիս ծոնեք, գէնքերնիս
յանձնեք ու իրենց ողորմութեանը վրայ յուսանք»³:

Երիտասարդները շարունակում էին պնդել դիմադրություն
անհրաժեշտությունը վրա, ասելով. «Մեռնիլը մէկ անգամ է, այ-
սօր թող մեր վերջին օրը ըլլայ, բայց սիլահները չձգենք. ո՞ր

¹ Տե՛ս Զապէլ Եսայեան, Աւերակներուն մէջ, Կ. Պոլիս, 1910, էջ 87:

² Տե՛ս նույն տեղում:

³ Ղուշ - թոչուն:

⁴ Զապէլ Եսայեան, Աւերակներուն մէջ, էջ 88:

⁵ Սիլահ - զենք:

օրուան պահեր ենք մեր կտրիճութիւնը, ո՞ր օրին համար բեր-
ներնուս կտրելով գներ ենք այս ղէնքերը...: Մեր կիները, մեր դա-
ւակները մեր բաղուկներուն են ապաւինել, ի՞նչ երեսով ձեռ-
քերնիս պարապ պիտի երեսնանք իրենց»¹:

Բայց դուր էին փաստարկներն ու խնդրանքները: Բաղդա-
դոյլու Կարապետն անդրդվելի էր: Նա դրոշակ պարզեց և գյուղը
անձնատուր հռչակեց:

Թշնամին կեսօրին մոտ գյուղ մտավ և բոլոր զենքերը հա-
վաքեց: Սկսվեց ջարդը: Եղեռնագործներն ամենից առաջ ան-
գթորեն սպանեցին բոլոր տղամարդկանց: Զոհ գնացին նաև
բոլոր արու երեխաները: Մի քանի դպրոցական աշակերտների
եկեղեցու պատերի վրա կողք-կողքի խաչաձև գամելուց հետո,
դահիճները, մնացած բոլոր երեխաների վրա նավթ թափելով,
այրեցին: Անմեղ մանուկները, կրակի բոցերով բռնկված, այս ու
այն կողմ էին վազվզում՝ փրկվելու հույսով:

Դրանից հետո թուրքերը մի տեղ հավաքեցին բոլոր կա-
նանց, նրանց շարեցին կարգով, ապա ընտրեցին հարյուրի չափ
մանկամարդ աղջիկների ու նորահարսերի և, իրար մեջ բաժանե-
լով, անմիջապես վայրենարար վրա պրծան ու բոլորի աչքի
առջև, ոտքի վրա, սկսեցին բռնաբարել: «Փողոցի շուններն ան-
գամ այն աստիճան կը քոտ ու անամօթ չէին կրնար ըլլալ»².
գրում է ականատեսը:

Կտտորածի, նախճիրի և ամեն այլանդակությունների մեջ
հատկապես առանձին եռանդ էին դրսևորել արդօղլվեցի թուր-
քերը՝ հայերի համազուգացի երեկվա «բարեկամները»: Նրանց
ձեռքով՝ իր տան մեջ անլուր չարչարաններով սպանվեց նաև
Բաղդադոյլու Կարապետը՝ աչքերի առջև կնոջ, դավակների,
հարսների ու թոռների մեռնելը տեսնելուց հետո³:

Դժբախտ կանանց մի մասին թուրքերը գերի տարան ու
կրոնափոխ արեցին, մնացածներն «ազատություն ստացան» և

¹ Տե՛ս Զապէլ Եսայեան, Աւերակներուն մէջ, էջ 88:

² Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 180:

³ Զապէլ Եսայեան, Աւերակներուն մէջ, էջ 88:

խուճապով թափվեցին շրջանի քրիստոնյարնակ Միսիս՝ մերկ, քորիկ, սովահար:

Ամեն տեսակ հրեշազորություններ կատարելուց հետո ջարդարարները տները կողոպտեցին, ապա գյուղը կրակի մատնեցին: Տները փառելուց հետո այրում էին նաև այն երկրագործական գործիքները, որոնք չէին կարողացել տանել¹: Արգոզյուն ավերակների կույտի վերածվեց: Մորթոտվել էր 422 հայ, որից 180 տեղացի և 242 եկվոր²: Գերի տարված կանանց թիվը 200-ի չափ էր: Գյուղի հայ արու մարդկանցից փրկվել էր միայն մի մանկահասակ տղա, որը, սակայն, ջարդից շատ չանցած՝ մեռավ հիվանդությունից: Արգոզյուտի հայոց արմատը կտրվեց:

Նույնքան, եթե ոչ ավելի, աղետալի եղավ Աղանայի արևելյան կողմում, Ջիհուն գետի եզերքում գտնվող Միսիս (հին պատմական Մամեստիա, է՛լ ավելի հին անունն էր Մոպսուեստիա) գյուղաքաղաքի ճակատագիրը:

Լինելով հոռոմեական տիրապետության ժամանակների քաղաք՝ ջարդի օրերին Միսիսը նահիայի կենտրոն էր: Բնակչության մեծամասնությունն իսլամ էր, իսկ 150 տուն՝ հայեր և ուրիշ քրիստոնյաներ³:

Ապրիլի 1-ին, չորեքշաբթի օրը, երբ գյուղում ստացվել էր աղանահայոց կոտորածների լուրը, շրջակայքի թուրքական գյուղերի խուժանը, միացած տեղի թուրքերին, ոտքի կանգնեց և առաջին հերթին հարձակվեց Միսիսի վերին թաղի վրա, որն ամբողջովին բնակեցված էր հայերով: Մտնելով խանութներն ու տները՝ ոճրագործները նախ ամեն ինչ կողոպտեցին, ապա սկսեցին ջարդել թաղի բնակիչներին:

Մյուս թաղերի հայերը և ոչ հայ քրիստոնյաները (հույներ, ասորիներ) այդ օրը կոտորածից փրկվեցին շնորհիվ Միսիս եկած մի թուրք հազարապետի՝ Լուիֆի բեյի: Այդ մարդասեր ղինվորականը խուժանին սպառնաց ամենախիստ պատիժների ենթարկել, եթե համարձակվի նոր հարձակումներ կատարել

հայերի վրա: Նա մի քանի մեծահարուստ թուրքերի պատվիրեց իրենց տներում ապաստան տալ հայերին և պաշտպանել խուժանից: Սրանք կատարեցին հազարապետի կարգադրությունը՝:

Հինգշաբթի և ուրբաթ օրերին գյուղը քիչ թե շատ հանգիստ էր. ղինվորները հայերի տները պաշտպանություն տակ էին վերցրել: Բայց ուրբաթ օրվա վերջին լուր տարածվեց, թե հազարապետն իր զորամասով պիտի հեռանա և մեկնի Հաճըն՝ պաշտպանելու համար այնտեղ փտանգված քրիստոնյաներին, հատկապես եվրոպացի 7 քաղաքացիներին: Միսիսի երևելի հայերը ղինեցին հազարապետին՝ աղաչելով չմեկնել, համոզված, որ հակառակ պարագայում իրենց կյանքը փտանգի է ենթարկվելու: Ձինվորական հրամանատարը հայտնեց, որ դա կախված չէ իրենից, բայց մեկնելիս իր մոտ կանչեց թուրքերի ղեկավարներին ու ստիպեց երդում տալ, որ հայերին ձեռք չեն տալու: Սրանցից խոստում առնելով՝ նա ապրիլի 4-ին իր զորամասով ճանապարհվեց Հաճըն՝ գյուղում զորամասից մի փոքր ջոկատ թողնելով: Հազարապետի հեռանալը ճակատագրական եղավ Միսիսի քրիստոնյաների համար:

Մինչև ապրիլի 10-ը հայերը և մյուս քրիստոնյաները հիմնականում փակված էին տներում՝ շատ անհանգիստ և փչերի վրա:

Ապրիլի 11-ի երեկոյան թուրքերի մոտ արտակարգ եռուզեռ սկսվեց: Զինված ամբոխը հաջորդ օրը, երկուշաբթի առավոտյան, հարձակում սկսեց Միսիսի մյուս հայ թաղերի վրա: Ուուժանին էր միացել թուրք հրամանատարի՝ գյուղում թողած ղինվորական ջոկատը: Վերհիշելով այդ սև օրը՝ մահից փրկված հայերից մեկը պատմել է.

«Դժբախտ քրիստոնեաներս լեղապատառ սկսանք ծակ է ծակ մտնել: Եւ սակայն ո՞ւր պահուիլ կամ փախչիլ եւ ինչպէ՞ս ազատիլ կարելի էր: Ամէն կողմէ պաշարուած էինք: Հրացանները կը պայթէին, գնդակները կը շառաչէին, կացիներով դուռերը կը խորտակէին եւ մուներտիկները ջարդի հրաւէր կը կարգային»²:

¹ Տե՛ս «Արեւելեան մամուլ», № 22, 26 մայիսի 1909 թ., էջ 517:

² Տե՛ս «Հորիզոն», № 64, 23 մարտի 1910 թ.:

³ Տե՛ս նույն տեղում:

¹ Տե՛ս Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 182:

² Նույն տեղում, էջ 185:

Ապրիլի 12-ին Հայերը հավաքվեցին մի քանի խոչոր տներում: Կատաղիները հարձակում սկսեցին հենց այդ տների վրա: Հովհաննես Թերզյանի տանն ապաստանած 25 երկսեռ հայերից որևէ մեկը չփրկվեց. հրդեհի մատնված տան մեջ բոլորն այրվեցին:

Մինչ բոցավառ թշվառները ահարկու ոստումներ էին անում, վայրագ խուժանը դիվային ծիծաղով պար էր բռնել¹:

Այնուհետև թուրք երևելիներից մեկն իր տուն հրավիրեց հրոսակներին և պատվիրեց սպանդի ենթարկել այդտեղ գտնվող ավելի քան 180 քրիստոնյաներին, որոնց մեծ մասը այրեր էին: Մարգարեի անունը կանչելով՝ նրանք անմիջապես «գործի» ձեռնարկեցին և կես ժամվա ընթացքում սպանդի ենթարկեցին բոլորին:

Հերթը հասավ մյուսներին: Մեծ մասը կրետացի թուրք զաղթական, ջարդարարները հարձակվեցին Շեքի էֆենդու տան վրա, ուր ապաստանել էին մոտ 200 հայ և այլ քրիստոնյաներ: Թրքուհի տանտիկինը փորձեց մարդասպանների հարձակմանն ընդդիմանալ, բայց ամուսինը, վրա հասնելով, ներս հրա-վիրեց ոհմակին, որն ամենասոսկալի վայրագություններով ջարդուկտոր արեց տանը հավաքվածներին: Ամենաանգույթ խժոժությունների զոհ գնաց նաև այնտեղ գտնվող, Կիլիկիո աթոռի միարաններից Միքայել ծայրագույն վարդապետ Աջապահյանը, որ նախօրյակին գործով Միսիս էր եկել: Նրան կենդանի կտորկտոր արեցին:

Բերբեր Գարրիելի կինը՝ Մարիամը, ջարդն ու հրդեհը սկսվելուն պես իր 12-18 տարեկան 5 աղջիկ զավակներին ի մի ժողովելով, ասում է. «Ես գիտեմ գլխիս գալիքը, ամուսինս պիտի մեռնեն, յետոյ դիս ու աղջիկներս պիտի առևանգեն, սակայն անոնց աղջիկ չեմ տար»: Այս մայրն իր աղջիկների մաղերն իր ձեռքով իրար կապելով, նրանց ձգում է կրակի մեջ, և երբ տեսնում է, որ նրանք այրվեցին, ինքն էլ նետվում է կրակի մեջ և ողջակիղվում²:

Սև բախտի արժանացան այն բաղձաթիվ քրիստոնյաները, որոնք Եփրեմ աղայի տանն էին ապաստանել: Տնից դուրս բերելով ընդարձակ բակ՝ ոճրագործները բոլորին կոտորեցին: Դրանց մեջ էր պոլսեցի մի արստրական՝ դոկտ. Դավուդը, որը բավական դիմադրեց դահիճներին, բայց, ի վերջո, ընկրկեց: Հրաշքով փրկված մի հայ կին պատմել է. «Աչքիս առջևի սպաննեցին ամուսինս, չորս կտրիճ զաւակներս ու մէկ հատիկ աննման փեսասս՝ հաճրնցի Յարութիւն Մախսեանը, որ մեծ համբաւ հանած էր իր քաջութեամբը: Լաց, կոծ, աղաղակ, իրարանցում ամէն կողմ պատեց ևւ անկէ ետքը ինչ բլլայս չեմ գիտեր...»³:

Ամեն տեղ սարսափելի տեսարաններ էին: Տներից մեկում տաքացնելով թոնիրը՝ ոճրագործները դրա մեջ նետեցին արու մանուկների և կափարիչով փակեցին թոնրի բերանը: Երբ դադարել էին երևեսաների ճիչերը, ոճրագործներն սպանեցին այդ ամենին ականատես ծնողներին²:

Ընդհանրապես՝ Միսիսում քչերն սպանվեցին հրաղենով: Մեծ մասը զոհ գնաց կացիների հարվածներին կամ կրակի լեզուներին: «Մարդիկ» խնայում էին փամփուշտները...

Միսիսում չկար եկրոպացի ոչ մի ընտանիք, եկրոպական ոչ մի դրոշ, որի հովանու տակ հայերը կարողանային ապաստան գտնել:

Միսիսի հայերի կորուստը կաղմեց 350 սպանված: Կրակի էր մատնվել հայերի 80 տուն³:

Այդ ամենից հետո դահիճները մի թուրքի տուն հավաքեցին ջարդից փրկված փոքրաթիվ կանանց և սկսեցին խուզարկել՝ մարմինների վրայից հանելով քիչ-միչ մնացած զարդեղենները: Խուզարկություն ժամանակ թուրքերը գտան կնոջ դգեստով մի տղամարդու՝ սայլապան Միսակին, որին, տնից դուրս բերելով, տեղնուտեղը զնդակահարեցին: Դրան հետևեց մի ուրիշ անբըակայելի ոճիր. մայրերի ձեռքերից խլեցին բոլոր երևեսաներին, նույնիսկ օրորոցի մանուկներին, և բոլորին մեռցրին:

¹ Տե՛ս Արշակուհի Թէոդիկ, Ամիս մը ի Կիլիկիա, էջ 137:

² Ցակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 672:

¹ Ցակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 188:

² Նույն տեղում, էջ 674:

³ Տե՛ս «Հորիզոն», № 64, 23 մարտի 1910 թ.:

Վերջում մնացել էր այդ ամենից քարացած, լեզուները կապված 10-11 կին¹: «Փոքրաթիւ կիներս,- վկայել է այդ հայուհիներից մեկը,- օրերով մնացինք թուրքի մը տունը, ուրկէ Ատանա փոխադրուեցանք եւ հիմա չենք ուզեր անգամ մ'այ տեսնել այն անիծեալ վայրը»²:

Միսիսի Ջարդից մեկ ամիս հետո այնտեղ եկած Ջապել Եսայանը ցնցված էր տեսածով: «Մեռած քաղաք, գերեզմանային լուծիւն...,- գրել է նա: - Պատմական Մամեստիան, հին դարերու քաղաքակրթութիւնը իր հնադարեան բեկորներով ու քանդուած պայտաներով, դարմանքով ու դարհուրանքով կը նայէի ... աւերակներուն վրայ»³: «Միսիսի մէջ հայ չէր մնացեր ... բացի մէկ քանի երկաթագործներէ, որոնք մահմետական դարձուցեր ու պահեր էին իրենց մօտ, որովհետեւ ուրիշ երկաթագործ չի կայ հոս...»⁴: Այդ երկու հայ երկաթագործներին ողջ էին թողել «իրենց (թուրքերի: - Ն. Ս.) ղէնքերը նորոգել տալու, դանակները սրել տալու համար»⁵:

Աղանա քաղաքի կոտորածների լուրը ապրիլի 1-ի երեկոյան հասել էր նույնանուն սանջակի Շեյխ-Մուրադ գյուղը, որը գտնվում էր Ջիհուն գետի մոտերքում, ուներ 45 տուն՝ 200 հայ բնակիչներով:

Ապրիլի 2-ի առավոտյան Շեյխ-Մուրադի դիմաց գտնվող փոքրիկ **Աղզը-Քեոյուք** հայկական գյուղի վրա հարձակվեցին շրջակա Արաբ-Քեոյ և Դանըլման գյուղերի թուրքերը, ջարդեցին գյուղի 200-ի հասնող բնակիչներին, թալանեցին ու հրդեհեցին բնակավայրը:

Այդ ամենը տեղի էր ունենում Շեյխ-Մուրադ գյուղի բնակիչների աչքերի առջև, որոնք իրենց տանիքների վրայից ահ ու դողով դիտում էին դրանք:

Հերթը հասավ **Շեյխ-Մուրադին**: Ապրիլի 2-ի երեկոյան թուրքերը շրջապատեցին գյուղը և սկսեցին հրացանաձուլելու:

¹ Տե՛ս «Հորիզոն», № 64, 23 մարտի 1910 թ.:

² Յակոբ Յ. Քէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 188:

³ Ջապել Եսայան, Աւերակներուն մէջ, էջ 139:

⁴ Նույն տեղում, էջ 141:

⁵ «Բիւզանդիոն», № 3821, 24 ապրիլի (7 մայիսի) 1909 թ.:

նր: Փոքրիկ գյուղը ոչ թե հուսահատվում, այլ համախմբվում է: Երիտասարդները, դինված որսորդական հրացաններով, դիրքավորվում են գյուղի տարրեր տեղերում և թշնամուն փոխադարձում կրակոցներով: Հարձակվողները հետ են քաշվում¹:

Մի բուռ հայերի հանդուգն դիմադրությունը կատաղեցնում է թշնամուն, որ վճռում է գյուղի վրա գրոհել բաղձապատկված ուժերով: Երկրորդ օրը՝ ապրիլի 3-ի առավոտյան, մի քանի հազարից բաղկացած ձիավոր և հետիոտն խուժանն ամեն կողմից պաշարում է գյուղը: Ջարդարանները հավաքվել էին շրջակա Խայրլը, Թաշճը, Քիլիս-Քեոյ, Չոթլու, Կարա-օղլան, Չանագլը, Բերմեղ, Հյույուկ և Գեմի-Սյուրեն թուրքական գյուղերից:

Թեժ կոխ է սկսվում: Հայ երիտասարդները գյուղը պաշտպանում են անձնուրացությամբ: Կեսօրին մոտ թշնամին մտնում է գյուղի ծայրամասային տները: Պաշարվածների ռազմամթերքը պակասում է, և նրանք ստիպված այն ծախսում են խնայողաբար: Չնայած դրան, կտրիճները չեն հուսահատվում. նրանք բնակչությանը քաշում են գյուղի կենտրոն և տասնապատկում դիմադրությունը: Բաշիրոգուկները մտնում են բնակիչներից դատարկված 50 տները, կողոպտում, ապա՝ այրում²:

Չդիմանալով հսկայական թվով թշնամու ճնշմանը՝ հայերը թողնում են գյուղը և ամրանում ոչ հեռու գտնվող ամուր ու բարձր պատերով շրջապատված շինություն մեջ: Խուժանը մտնում է գյուղ, թալանում ու հրդեհում հայերի տները, ապա հարձակվում հիշյալ շինություն վրա, բայց, հանդիպելով բուռն դիմադրության, ստիպված հետ է քաշվում:

Երրորդ օրը՝ ապրիլի 4-ի առավոտյան, թուրքերը նոր հարձակման են անցնում ավելի բաղձաքանակ ուժերով: Գիշերը Յաղջը-Քեոյ, Ավրադ-Մեղերի, Քյութլուքլը գյուղերի գյուղացիները եկել էին կողոպուտից մնացած ինչ-որ բաներ տանելու:

Նույն օրվա կեսօրին հաղարավոր բաղձությունն անցավ հարձակման և սկսեց շրջապատվածներին նեղել: Վերջիններս նկատել էին պատի տակ ընկած ջրի մի երկաթե խողովակ, որի

¹ Տե՛ս «Հորիզոն», № 54, 11 մարտի 1910 թ.:

² Տե՛ս С. 3., Адацкие черные дни, с. 21.

մի ծայրը փակելով, մյուս ծայրից լցրել էին վառող ու սկսել ահռելի պայթյուններ հանել օդի մեջ: Տգետ խուժանք, կարծելով, թե պաշարվածները թնդանոթ ունեն, փախուստի է դիմում:

Հինգերորդ օրը՝ կիրակի առավոտյան, պաշարվածների փամփուռներն սպառվելու վրա էին, իսկ թշնամու ուժն ավելի էր մեծացել. քանի որ Աղանայի առաջին կոտորածը դադարած լինելով, այնտեղից մեծ թվով թուրքեր օգնություն էին եկել ցեղակից հրոսակներին: Չնայած դրան, հայերը որոշել էին մինչև վերջին հնարավորությունը դիմադրել: Այդ օրը տասնյակ գրոհներ եղան, բայց հայերին հաջողվեց ամեն անգամ թշնամուն հետ չպրտել: Վերջապես, մութն ընկնելիս, հայերի ռազմանյութը կատարելապես սպառված էր: Այս պայմաններում հնարավոր մի ելք կարող էր լինել՝ գիշերը փորձել ճեղքել շրջապատումը և դեպի Աղանա փախչել:

Մութ գիշերին, 200 հոգանոց երկսեռ բաղմունքներ, մեծ ու փոքր, դուրս գալով շինությունից, լուռ ու մունջ հեռացավ:

Անցել էր մի քանի ժամ, երբ փախստականները ճանապարհին հանդիպեցին մինչև ատամները գինված հրոսակների մի հեծյալ խմբի: Պահը փտանգներով լի էր, բայց տեղի ունեցավ անսպասելին. հաճրնցի քաջ երիտասարդ Գրիգորը մոտենում է ձիավորներին և մաքուր թուրքերենով բարձրաձայն նրանց ահ է տալիս, ասելով, թե «հիմա ձեզ՝ գյավուրներիդ, շանսատակ ենք անելու»: Հանկարծակիի եկած ձիավորներն անմիջապես հայտնում են, թե իրենք չերթեղներ են, նույնպես մուսուլմաններ, որ զնացել են մասնակցելու Աղանայի քրիստոնյաների ջարդին և հիմա այս կողմերում պտտվում են գյավուրներ փնտրելու և կոտորելու համար: Չերթեղները հեռանում են, և խումբը, ազատված սոսկալի փտանգից, շարունակում է ճանապարհը¹:

Լույս երկու շաբթի վաղ առավոտյան հայերը, հոգնած, սոված ու տառապած, մտնում են Աղանա: Նրանց տեղավորում են Մուշեղյան-Արզարյան վարժարանի շենքերում, այն վարժարանի, որը մի քանի օր հետո, Աղանայի երկրորդ կոտորածի օրերին,

¹ Տե՛ս **Ջապէլ Եսայան**, Աւերակներուն մէջ, էջ 91-92:

հրդեհի մատնվեց, և այնտեղ եղած հարյուրավոր գյուղացիների հետ հրո ճարակ դարձան շեյխ-մուրադցիներից շուրջ 50 հոգի¹:

1909 թ. ապրիլի 1-12-ն ընկած ժամանակահատվածում Աղանայի վիլայեթի բաղմաթիվ ուրիշ հայկական բնակավայրերի վրա նույնպես կատարվեցին հարձակումներ, որոնց պատճառով եղան սպանություններ, գերեվարումներ, տեղի ունեցան հրդեհումներ ու ավերմունքներ: Ձոհվեցին նաև գործի բերումով տարրեր գավառներից եկած և թուրքական գյուղերում գտնվող շրջիկ հայ վաճառականները:

Ընդամենը 15-20 տուն կար **Աղզը-Բեոյուք** հայկական գյուղում, որը, ինչպես նշել ենք, գտնվում էր Շեյխ-Մուրադ գյուղի դիմաց: Ապրիլի 1-ին շրջակայքի գյուղերի գինված ավազակախմբերը շրջապատում են Աղզը-Բեոյուքը և բնակիչներին առաջարկում հանձնվել: Շեյխմուրադցիները սուրհանդակի միջոցով աղզը-բեոյուքցիներին առաջարկում են գիշերը ճեղքել շրջապատումը և իրենց մոտ անցնել: Վերջիններս որոշում են գյուղից դուրս չգալ, հույս ունենալով լեղու գտնել հարձակվողների հետ և իրենց ողջ ունեցվածքը կամովին նրանց հանձնելով՝ փրկվել: Հետևանքն այն եղավ, որ հաջորդ օրը գյուղ մտնելով՝ թուրքերը բարրարոսաբար սպանեցին բոլորին:

Եղկելի դեպքեր եղան Աղանա քաղաքից ոչ հեռու գտնվող **Խայրլը** գյուղում: Այստեղ էր բնակվում Արզայ Խայոյի աղջիկը՝ վայրագ թրքուհի Սենեմ խանումը: Գործի դնելով իր ունեցած ազդեցությունը գյուղի ու հարևան բնակավայրերի թուրք բնակիչների վրա՝ նրանց միջոցով հավաքել է տալիս Խայրլըի և շրջակայքի խառը բնակչություն ունեցող գյուղերի երկսեռ համարյա բոլոր հայերին, նրանցից ջուկում է գեղեցիկ աղջիկներին ու հարսներին և նվիրում իր ուղած թուրք տղամարդկանց, իսկ մնացած կանանց իր հրամանով լցնում են գյուղի մեծ փուռը և, նավթ լցնելով գլխներին, հրկիզում: Այնուհետև ճիվաղ թրքուհին կարգադրում է բոլոր տղամարդկանց տանել գետեղերք, ուր իր ձևորով բոլորին մեկ-մեկ մորթում է ու ջուրը թափում՝ «սիրտը

¹ Տե՛ս **Ցակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 200:

հովաքնելու համար»: «Ահա կին մը, - գրել է Հակոբ Թերղյանը, - որուն անիծակ կիսանդրին կ'արժէ որ ցուցադրուի համաշխարհային ցուցահանդէսներու մէջ իբրև քսաներորդ դարու անգթութեան մարմնացումը կնոջական տարադին տակ»¹:

Սանջակի **Գաղը-Քեոյ** մահճեղական գյուղում կար ընդամենը 10-15 հայ բնտանիք: Աղանայի ապրիլի 1-ի ջարդը ողբնչել էր գյուղի թուրքերին, որոնք առիթը ձեռքից բաց չթողեցին բոլոր անհավատներից աղատվելու համար: Նախաձեռնությունն իր վրա վերցրեց տեղի իմամը: Բոլոր հայերին հավաքում են նրանցից մեկի տան բակում, թոկերով կապկպում և պատրաստվում մորթել: Տարաբախտները վերջին բուրջին ծնկաչոր աղաչանք-պաղատանքներով խնդրում են ի տրիտուր մահճեղականությունը ընդունելու՝ իրենց կյանք բաշխել, բայց մերժվում են: Իմամի հրահանգով՝ բոլորն անխտիր սպանվում են սրերով ու դանակներով:

Գեմի-Սյուրեն փոքրիկ գյուղի հայ բնակիչները, տեսնելով, որ թուրքերն արդեն չըջափակել են իրենց, զենք վերցնելուց այլ ելք չեն տեսնում: Թուրքերը պահանջում են շտապ դինաթափվել, բայց կտրուկ մերժման հանդիպելով, անցնում են հարձակման: Չորս օր տևած հերոսական դիմադրությունից հետո հայերը, սպառնելով ռազմամթերքը, մեծ ու փոքրով հավաքվում են մի տան մեջ և հրկիղում այն: Բոլորը հրդեհի ճարակ են դառնում:

Աղանայի չըջակա ազարակներից էր **Ամիր-Թաթմանը**, ուր աշխատում էին 168 հայ և 20 հույն: Ապրիլի 2-ին թուրք խուժանը, հարձակվելով, օղակի մեջ է առնում բոլորին և սկսում կոտորածը՝ սրերով, չամփուրներով, գավազաններով, քարերով: Սպանվում է 180 հոգի, աղատվում է 4 հույն, որոնք թաքնվել էին խոտերի մեջ: Երկու հույն և երկու հայ անհետ կորել էին: Ազարակը կողոպտվել ու ավերվել էր:

Հարձակվելով 60 տուն ունեցող **Ինջիլլե** գյուղի վրա՝ թուրքերն ամբողջովին այն կողոպտեցին ու հրդեհեցին, ապա

սկսեցին բնակիչներին ոչնչացնելու գործը: Համարյա բոլոր տղամարդիկ սպանվեցին, իսկ կանայք ու աղջիկներն առևանգվեցին: Մի քանի հոգու միայն հաջողվեց փախչելով փրկվել: Հայկական գյուղը դադարեց գոյություն ունենալ:

Մահճեղական ցեղերով ամբողջական չըջապատման մեջ էր գտնվում **Քրիստիան-Քարիասի (Քրիստիան-Քեոյ)** գյուղը, որը 70 տուն հայ բնակչություն ուներ: Բնակավայրը մի գեղատեսիլ վայրում էր՝ թաղված նարնջի ու կիտրոնի այգիներում: Վայրենիները մտնում են Քրիստիան-Քարիասի, կողոպտում ու ավերում, սոսկալի տանջանքներով կոտորում գյուղացիների մեծ մասին, իսկ կանանց ու աղջիկներին տանում իրենց հետ:

Հարձակվելով **Կարադաշի** պետական կայվածքի վրա, որտեղ հիմնականում հայ բանվորներ էին աշխատում, թուրքերը նրանց բոլորին հավաքելով լցնում են կայվածքի շինություն մեջ և փորձում հրդեհել: Կայվածքի թուրք կառավարիչը չի համաձայնում կրակի տալ շենքը, ուստի տարաբախտ հայերին դուրս են բերում բակ և այնտեղ բոլորին այրում: Նույն կայվածքում դեռ կենդանի մնացած 30-ի չափ հայերին, մուղիի կարգադրությամբ, դաժանորեն սպանում են փայտերով¹:

Տարսոնից մի քանի կիլոմետր հեռավորության վրա էր գտնվում **Գեոզալթ (Քեոզալթ)** հայաբնակ գյուղը, իսկ չըջակայքում կային բազմաթիվ ազարակներ, ուր տարբեր օրերի աշխատում էին 250-300 բանվորներ: Տարսոնի գայմագամը և նրա հետ մի ազդեցիկ խոջա գալով գյուղ՝ բնակիչներին հրամայում են շտապ դինաթափվել, որը և անհապաղ կատարվում է: Դրանից հետո սկսվում է ջարդը: Գաղանություններն այն աստիճանի են հասնում, որ բռնարարվում են նույնիսկ 7-8 տարեկան երկսեռ բոլոր երեխաները: Գյուղի բնակիչներին՝ մեծից փոքր, կոտորելուց հետո թուրքերն անցնում են ազարակների ավերմանն ու բանվորների ջարդին: Վերջիններիս շարում են մի շինություն պատի տակ և սկսում մորթել առանձին-առանձին: Այդ դարհու-

¹ Ցակոր Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 251-252:

¹ Մատենադարան, Արշակ Ալրոյաջանի արխիվ, թղթ. 4, վավ. 739:

րկի ու գեհնեական գործողությունը տեղի էր ունենում բոլորի աչքի առջև: Անմեղ մարդկանց արձակած սրտակեղևը աղաչանքներն ու գոռում-գոչումները օդը բռնել էին: Դրանք մեկի-մեկի կյանքից զրկվողների վերջին հոնդուններն էին¹:

Գեոդալթում և շրջակայքում սպանվել էր 553 մարդ: Զոհվածների մեծ մասը (353 մարդ) 15-36 տարեկան էր: Մեռցվածներից 55-ը մանկահասակ երեխաներ էին, 45-ը՝ կանայք ու օրիորդներ:

Բազմաթիվ զոհեր տվեց Աղանա և Մերսին քաղաքների արանքում գտնվող՝ Կիլիկիայի Հնագույն քաղաքներից **Տարսոնը (Տարսուս)**, որը Աղանայի սանջակի գավառակներից մեկի կենտրոնն էր²:

Տարսոնը Փոքր Ասիայի Հնագույն քաղաքներից մեկն էր, որը փյունիկեցիներն էին հիմնադրել: Մ. թ. սկզբներից այն դարձել էր հելլենիստական աշխարհի մտավոր հայտնի կենտրոններից մեկը՝ իր բարձրակարգ համայնարանով, հին աշխարհում ճանաչում ստացած գիտնականներով, հատկապես փիլիսոփաներով: Հետագա դարերում քաղաքը գիտություն և լուսավորության կենտրոնի իր վաղեմի փառքն աստիճանաբար կորցրեց:

Թթենու, ձիթենու, նարնջենու և կիտրոնենու այգիների մեջ թաղված քաղաքն արտակարգ գեղեցիկ տեսք ուներ: Բնակիչների թիվը մոտենում էր 20 հազարի, որոնցից 2500-ը հայեր էին³: Հայ քաղաքացիները գլխավորապես բարձրակարգ արհեստավորներ էին, իսկ ոմանք փոքր խանութներ ունեին:

Տարսոնում կրքերը բորբոքվեցին Աղանայի ջարդի հաջորդ օրն իսկ: Երկու-երեք օր քաղաքում շրջում էին ամենատարբեր

սաղրիչ լուրեր: Միաժամանակ, խոջաները, մոլլաները և մի քանի դինվորականներ դինված խմբեր էին կազմակերպում:

Ապրիլի 2-ի առավոտյան Աղանայից եկած գնացքը այստեղ ժամանելուց անմիջապես հետո քաղաքում իրարանցում սկսվեց. գնացքից իջած մի քանի հոգի վայնասուն բարձրացրին, թե Աղանայում հայերը ջարդում են իսլամներին:

Նրանցից մեկը գոչում էր. «Ատանան հրոյ ճարակ եղած է, մենք ինչո՞ւ անփոյթ մնանք, մենք այ Տարսոնը վառենք»⁴: Այդ լսելով՝ թուրքերը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի տեղական մասնաճյուղի նախագահ Շեքեթի, «Արար կյուրի» նախագահ Համիդի, կեսարացի Յաղջը Ադիդի և բժիշկ Այի Ռեֆիքի գլխավորությամբ շարժվեցին դեպի դինանոց:

Ապրիլի 3-ին խժովություններն ու կոչերը շարունակվում են: Քաղաքում շրջում էին ամենատարբեր սաղրիչ լուրեր: Գրգռված իսլամների մի մասը, ղեկը ստանալով, ցրվում է քաղաքի բոլոր կողմերի վրա՝ իրր փակելու այն 1500 հայ ձիավոր ֆիդայիների ճանապարհը, որոնք «գալիս են գրավելու Տարսոնը»:

Ապրիլի 4-ին թուրքերը փողոցներ դուրս եկան՝ քաղաքը «հայերից մաքրելու» վճռականությամբ: Թշնամական սրից փախչող հայերի մի խումբ հայոց ս. Պողոս Առաքյալի եկեղեցի մտավ: Շուրջ 50 տարսոնցի հայեր փրկության հույսով ապաստանեցին ամբրիկյան միսիոներությունը պատկանող «Սեյնթ Պոլ» քոլեջում⁵, որը բաց էր ամեն ազգի և կրոնքի երիտասարդների համար: Նրանց մի մասը կուտակվեց գլխամասային շենքում, իսկ մեծ մասը՝ հարակից շենքում: Բայց դա նրանց չփրկեց: Բաշիրոզուկները նախ շրջապատեցին հարակից շենքը և կրակի մատնեցին: Բոցերի մեջ այրվեց զժրախտների մեծ մասը, մյուսները փորձեցին փախչել տարբեր ուղղություններով, բայց վրա հասած մարդասպանները զնդակներով, բրերով ու կացիններով նրանցից մի քանի տասնյակ կյանքեր խլեցին: Դրանից հետո խուժանը կրակի տվեց ս. Պողոս Առաքյալի եկեղեցին՝

¹ Տե՛ս Մատենադարան, Արշակ Ալրոյաջյանի արխիվ, թղթ. 4, վավ. 739:

² Տե՛ս «Գարուն» (4. Պոլիս), № 17, 19 մարտի (2 ապրիլի) 1909 թ.:

³ Տե՛ս «Հորիզոն», № 64, 23 մարտի 1910 թ.: Մի ուրիշ աղբյուրում Տարսոնի հայերի թիվը 1908 թ. հաշվվում էր 3139 (տե՛ս **Ցակոբ Ց. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 162-ի տողատակը): Մի երրորդ աղբյուրի համաձայն՝ քաղաքի բնակչության թիվը 12 հազար էր, որոնցից 3500-ը հայեր էին (տե՛ս **Ցակոբ Ց. Ալլահվերտեան**, Ուլնիա կամ Զէյթուն, լեռնային առան ի Կիլիկիա: Նկարագիր տեղական, կենսաբանական, բանասիրական և լեզուաբանական, 4. Պոլիս, 1884, էջ 3):

⁴ Տե՛ս «Բիզանդիոն», № 3815, 17 (30) ապրիլի 1909 թ.:

⁵ Տե՛ս «Արարատ», № 7-8, Հուլիս-օգոստոս, 1909, էջ 666, 671-674:

այնտեղ գտնվող բոլոր հավատացյալներով՝

Այնուհետև ոճրագործները չրջապատեցին ամերիկյան քոյե-
ջի գլխամասային շենքը: Քոյեջի տնօրեն դուկտ. Թոմաս Քրիս-
տին այդ պահին գտնվում էր Աղանայում, բայց նրա աղնիվ տի-
կինը՝ Քարմելայթ Քրիստին վեհանձնորեն ու քաջարար պաշտ-
պանություն տակ առավ իր մոտ ապաստանած հայերին և
նրանց փրկեց ստույգ մահից:

Այդ նույն պահին հայտնվեց մի թուրք՝ Տարսոնի Թերքե
թաղի բնակիչներից Քերբայաի զաղև էսաղ անունով: Այս թուր-
քը հանցագործ անցյալ ունեցող եղևոնագործ էր, որը բանտե-
րում շատ տարիներ էր անցկացրել: Եվ ահա տեսնելով անմեղ
հայերի նկատմամբ իր չուրջը ծավալված ոճրագործությունները՝
այս մարդը կերպարանափոխվում է, նրա հոգում հառնում է
խիղճը: Նա հավաքում է փողոցներում փրավոր ընկած 30-ի
չափ այրերի, կանանց ու մանկանց, նրանց հասցնում իր աղքա-
տիկ բնակարանը, կապում վերքերը և կերակրում: Չբավարար-
վելով զրանով՝ նա կրկին դուրս է գալիս փողոցներ և կրակի
բոցերից փրկում Տարսոն փախած աղանացի հինգ տիկիներին,
մի քանի պանդուխտ բեռնակիրների, նաև բնիկ տարսոնցիների
և նրանց բոլորին նույնպես հասցնում իր տուն:

էսաղին հետևում են տարսոնցի ուրիշ երկու թուրքեր՝ Գյու-
վենդ զաղև Մուխթարը և Մոմոճան անունով նրա ընկերը: Առա-
ջինը փրկում է 23, երկրորդը՝ 50 հայ, որոնց պահում են իրենց
տներում մինչև ջարդի վերջը:

Երբ զաղարում է կոտորածը, երախտագիտություն լեցուն
աղանացի հայուհիները ցանկանում են էսաղին նվիրել ոսկե մա-
տանի և այլ ոսկյա զարդեր, բայց նա վեհանձնարար մերժում է²:

Տարսոն քաղաքում սպանվել էր մոտ 100 հայ³, իսկ արվար-
ձանների հետ՝ 560, որոնցից 160 հոգին Գոզ-Սյուզ գյուղից էին:
Քաղաքի հայերի 800-ից ավելի տները մեկ-մեկ կողոպտվել ու

հրո ճարակ էին դարձել¹: Դրանց կողքին գտնվող հույներին
պատկանող տներից որևէ մեկը չէր տուժել²: Տարսոնի նյութա-
կան վնասը հաշվվում էր 500.000 ոսկի³:

Արյունայի դեպքեր էին սկսվել **Մերսինում**:

Միջերկրականի ափի օրըստօրև առաջադիմող Մերսինը
(երբեմնի Ջեփյուսոն) նաև Աղանա քաղաքի դուռն էր, որի
հետ երկաթուղով միացած էր և գտնվում էր նրանից 6 ժամ հե-
ռավորության վրա: Եվրոպացի հյուպատոսներից շատերն
այստեղ էին գտնվում: Մոտավորապես 15.000 բնակչություն ու-
նեցող Մերսինում ապրում էր 1000 հայ, մնացածները՝ հույներ,
եգիպտացիներ, գլխավորապես թուրքեր էին:

Երբ Աղանայի ջարդերի յուրը հասնում է Մերսին, հայերը
փակվում են իրենց տներում, ոմանք էլ ապաստանում են եվրո-
պական հյուպատոսություններում:

Բայց բոլորին չէ, որ հաջողվում է մտնել եվրոպացիների
հովանու տակ:

Ապրիլի 13-ին սկսվում են հարձակումներ տներում փակված
հայերի վրա: Լսելով այդ մասին՝ Կ. Պոլսում ոռոսաց ղեսպան
Իվան Ալեքսեևիչ Ջինովկը Հայֆայի դիմաց կանգնած ոռոսական
«Ուրալեց» մարտանավի հրամանատարից պահանջում է անմի-
ջապես Մերսին ուղևորվել:

Տեղ հասնելուն պես մի խումբ ոռուս նավաստիներ ափ են
իջնում: Նրանք տեսնում են մի տան մեջ բանտարկված 8-10
տարեկան երկսեռ մոտ 70 հայ երեխաների, որոնց թուրքերը
հավաքել էին այրելու համար: Նավաստիների խմբի գլխավորը
թուրքերից պահանջում է բացել տան դուռը, բայց մերժում է
ստանում: Այնժամ նա սպառնում է հրացանազարկություն:
Թուրքերը փախչում են: Նավաստիները, ջարդելով տան դուռը,
բոլոր երեխաներին դուրս են բերում, հասցնում Իսկենդերուն և

¹ Տե՛ս Ե. Կ. Տարսոն, *Экономическая политика Османской империи в Закавказья накануне и в годы Первой мировой войны*, изд. АН Армянской ССР, Ереван, 1962, с. 174.

² Տե՛ս «Բիւզանդիոն», № 3815, 17 (30) ապրիլի 1909 թ.:

³ Տե՛ս նույն տեղում, **Յակոբ Յ. Թէրզեան**, *Կիլիկիոյ աղէտը*, էջ 166:

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3815, 17 (30) ապրիլի 1909 թ.:

² Արշակունցի Թէրզեի, Ամիս մը ի Կիլիկիա, էջ 197:

³ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3823, 27 ապրիլի (10 մայիսի) 1909 թ.:

տեղի հույների խնամակալությունը հանձնում:

Դեպքի մասին Կ. Պոլսում ոուսաց ղեկավար Ի. Զինովևր 1909 թ. ապրիլի 22-ի գրությունը հայտնել էր իր երկրի արտաքին գործերի նախարարությունը¹:

Բարեբախտաբար, հուզումը բուն Մերսինում երկար չի տևում, բայց քաղաքից դուրս 17 հայ է սպանվում²:

Այլըստանդրեթի ծոցի արևմտյան եզրերում գտնվող, կիտրոնենու ու նարնջենու այգիների մեջ թաղված և թիկունքում լայնատարած այգիներ ունեցող գեղատեսիլ **Այասը**՝ (Հունաց՝ էգեասը) փառավոր անցյալ էր ունեցել: Քրիստոնեությունն առաջին դարերում հայոց արքեպիսկոպոսական աթոռանիստ էր եղել: Կիլիկիայի հայկական թագավորության ժամանակներում Այասը եղել է չեն ու վաճառաչա՝ քաղաք՝ պետություն «սիրտը», որը պաշտպանված էր երկու հզոր բերդերով՝ մեկը ցամաքային, մյուսը՝ ծովային: Այասը Կիլիկիայի հայոց թագավորական նավահանգիստ էր՝ *Portus Agacie domine Regis Ermenie* անունով: Կիլիկիայի վաճառականները այստեղից ճամփորդում էին «այաս» և «լայասեն» տիպի նավերով: 1322-ին սուլթան ալ-Նասեր Մուհամմեդի հրամանով եգիպտական բանակը կործանեց այս նավահանգիստը, բայց Կոստանդին Բ-ի օրոք Այասը կրկին անցավ հայոց ձեռքը: Սուլթան Սուլեյմանի օրոք օսմանցիները 1522-ին գրավեցին քաղաքը, որն աստիճանաբար խամբելով, հետագա դարերում կորցրեց իր նշանակությունը և 1909 թ. ապրիլյան Զարդի օրերին ընդամենը մի փոքրիկ ավան էր՝ շուրջ 4000 բնակչով, որոնցից մի քանի տասնյակը հայեր էին: Ապրիլի 2-ին վերջիններիս տները զավթում են, և զրացի թուրքերը բոլորին սրի են քաշում³:

¹ Տե՛ս «Բաների Հայաստանի արխիվների» (Երևան), № 2 (102), 2003, էջ 16:

² Տե՛ս «Հորիզոն», № 64, 23 մարտի 1910 թ.:

³ Մանրամասն տե՛ս «Հայկական Կիլիկիա», Նյու Յորք, 1919, էջ 16-20, 39-60:

⁴ Տե՛ս «Արևելք» (Կ. Պոլիս), № 7090, 5 մայիսի 1909 թ.:

Աղանայի նահանգի չորս սանջակներից ամենաչափ մարդկային կորուստներն ու ավերմունքներն եղան Զերեյ-Բերեքեթի սանջակում: Այստեղի հայկական գյուղերն այնպիսի բարրարություն չէին ունենում, որ զրանց հետքն անգամ չմնաց: Հիմնահատակ ոչնչացվեցին նույնիսկ արտերն ու այգիները:

Զերեյ-Բերեքեթի սանջակի մեծ կորուստների հիմնական պատճառները երեքն էին. 1) Սանջակը Կիլիկիայի ամենաբարեբեր շրջաններից մեկն էր, և դա մեծապես գրգռել էր հայ գյուղերի հարևան մահմեդական գյուղերի բնակիչների նախանձը, նրանց մղել տիրանալու հայերի հողերին, 2) Մեծ թվով փոքր հայ գյուղեր իրարից հեռու էին, չունեին հաղորդակցվելու պայմաններ, չընդհանրված էին մահմեդական բնակավայրերով, մի բան, որ կոիվների օրերին հայերին խանգարում էր միմյանց օգնություն հասնել և համախմբվել, որի պատճառով ամեն գյուղ ստիպված էր հազարների հասնող խուժանի միայնակ ու մեկուսի դիմակայել, 3) Սանջակի մութասերիֆը Մեհմեդ Ասաֆ էսադ ընդ կոչվող մի զազանարար հայատյաց թուրք էր, որն անձամբ ղեկավարում էր ջարդերն ամբողջ սանջակում:

Էրզրնի գավառակ: Զերեյ-Բերեքեթի սանջակի հյուսիսարևմուտքում տարածված այս գավառակում էր գտնվում **Օսմանիե** գյուղաքաղաքը, որն ուներ 3500 բնակիչ, որից 900-ը հայեր էին⁴: Վերջիններս հիմնականում Վաճառքի վերաբնակներ էին, որոնք զբաղվում էին երկրագործությամբ, չեղանապահությունով, արհեստներով ու վաճառականությամբ: Ծնորհիվ իրենց ջանասիրությունը, նրանք քիչ թե շատ բարեկեցիկ կյանք ունեին:

Սահմանադրության հրապարակումից առաջ Օսմանիեի հայերը ճնշված վիճակում էին. նրանց արգելված էր նույնիսկ եկեղեցու դանգը հնչեցնել (որպես բացառություն թույլատրված էր միայն տոն օրերին, այն էլ տեղի իշխանությունից մասնավոր համաձայնությամբ և դանգի շատ մեղմ հնչյունով): Սահմանա-

⁴ Տե՛ս **Յակոբ Յ. Ալլահվերտեան**, Ուլիսիա կամ Զէյթուն..., էջ 57:

դրույթյան ազդարարումից հետո հայերն սկսել էին ամեն օր հնչեցնել եկեղեցու դանգր և հավատացյալներին հրավիրել աղոթելու, համարձակորեն ձի նստել, ինչն անհնար էր նախկին ռեժիմի ժամանակ, բացել էին յարան-րնթերցարան, անդամակցել էին երիտթուրքերի տեղի ակումբին և այնտեղ ելույթներով հանդես էին գալիս: Այդ ամենը խիստ ղժզոհույթյուն էր առաջ բերել գյուղաքաղաքի թուրքերի մոտ, որոնք վրդովված ասում էին, թե «երկիրը գյավուրների ձեռքն է անցնում»:

Ապրիլի 1-ի երեկոյան թուրք երեկելիներից Հաջի Հուսեին էֆենդու հրավերով տեղի թուրքերի նշանավոր անձինք նրա տանը հավաքվեցին ժողովի, որին մասնակցում էին նաև տեղական կառավարչությունն պաշտոնյաներից մի քանիսը: Որոշում ընդունվեց դիմել շրջակա թուրքական գյուղերի տղամարդկանց՝ գիշերով փութալ Օսմանիև՝ մասնակցելու հայերի կոտորածին և ունեցվածքի կողոպուտին: Անմիջապես գյուղեր մարդիկ ուղարկվեցին, որոնք հայտնեցին ժողովի որոշման մասին:

Գիշերային արտասովոր իրարանցումը սարսափի մատնեց հայերին: Նրանց ղեկավարները փորձեցին պարզել պատճառը, բայց գյուղին մոտեցած թուրք զինվորական ջոկատի հրամանատարը երդվեց, որ հայերի դեմ որևէ մեկը մտադիր չէ քայլ կատարել, և որ գիշերային իրարանցման պատճառն այն էր, որ Փայասի բանտի բանտարկյալները փախել են, որոնց բռնելու համար պահեստի զորք է ժողովվում: Իրականում, սակայն, Փայասի բանտարկյալները ոչ թե փախել էին, այլ բանտի ղեկավարությունը կարգադրությամբ ազատ էին արձակվել, զենք ստացել և նետով մասնակցելու հայերի կոտորածներին¹: Թուրք զինվորական հրամանատարի հավաստիացումները, թե պահեստի զորք հավաքելու նպատակը Փայասից փախած բանտարկյալներին բռնելը և բանտ վերադարձնելն է, չհանգստացրին հայերին և նրանք այս անգամ ստիպված դիմեցին գայմագամին: Սա նույնպես իր մոտ գնացած հայերի պատվիրակությունը հայտարարեց, թե «հոգ մի՛ արեք, անհանգստանալու հարկ չկա»:

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3824, 28 ապրիլի (11 մայիսի) 1909 թ.:

միայն թե չմոռացավ ավելացնել, թե «հայերը շատ վատ են արել կոտորելով Աղանայում, Միսիսում և Համիդիեում ապրող բոլոր մահմեդականներին»¹: Թեև հայերն ինչ-որ չափով հանգստացել էին գայմագամի խոսքերից, բայց մնում էին տարակուսանքի մեջ՝ հրոսակների հետզհետե համախմբումը տեսնելով:

Ապրիլի 2-ի վաղ առավոտյան Օսմանիև թափվեցին շրջակա գյուղերի հազարավոր թուրքեր, որոնք թմբուկի ձայնի տակ սկսեցին հավաքվել շուկայում: Ամրոխտ առջև գրգռիչ ելույթներ ունեցան թուրք ղեկավարները, որոնք գայմագամի նման ստում էին, թե Աղանայում, Միսիսում և Համիդիեում հայերը կոտորել են համարյա բոլոր մուսուլմաններին: Թեև գյուղերից եկած թուրքերի մեծ մասը դինված էր, բայց տեղի զինվորական պետի կարգադրությամբ զինանոցից հանվեցին և բաժանվեցին 1000 հրացան ու մեծաքանակ փամփուշտներ: Հրոսակները, իբրև երախտագիտություն արտահայտություն, օղում հրացաններ պարպեցին, միաժամանակ հասկացնելով, որ զենքերը գործի դնելու լիովին պատրաստ են: Շուկայում գտնվող հայերը փախան և խուժեցին եկեղեցի ու հայ երեկի Պազայանի տունը:

Քիչ անց, իջեցված հրամանի համաձայն, թուրքերը հարձակման անցան Օսմանիևի վերին թաղերի վրա, որի բնակիչների մեծ մասը հայ ավետարանականներ էին: Առջևից գնում էր զորքը՝ խուժանին առաջնորդելով ղեպի «սրբազան գործ»՝ ղեպի սպանություն ու ավեր:

Այդ պահին տեղի ավետարանականների ժողովասրահում էին գտնվում Այնթապից ու Մարաշից եկած 17 հայ ավետարանական պատվելիներ, որոնք Օսմանիևում գիշերելուց հետո շարունակելու էին ճանապարհը ղեպի Աղանա, ուր ապրիլի 4 (17)-ին մասնակցելու էին ավետարանական «Հոգևոր պետերու կիրիկեան միութեան» ժողովին: Նրանց մեջ էր նաև գերմանական համալսարանավարտ, Այնթապի քոլեջի ուսուցիչ պրոֆ. Սարգիս Լեոնյանը: Թուրքերը, մտնելով ժողովասրահ, դանակ-

¹ Զապէլ Եսայեան, Աւերակներուն մէջ, էջ 182:

ներով կոտորեցին բոլոր կրօնավորներին¹: Նրանցից 2-3 հոգի, որոնք փորձում էին փախչել, հանդիպեցին դուան մոտ կանգնած «բաջարի» զինվորների, և զնդակահար եղան:

Պատվելիներին կոտորելուց հետո, գաղաղած ամբոխը, շարունակելով հարձակումը, մտավ թաղի տները և դանակների տակ առավ բոլոր հայերին:

Վերին թաղը ջնջելով, ոճրագործները թերվեցին ղեպի հայ առաքելականներով բնակեցված ներքին թաղը: Բուպենների ընթացքում չըջապատվեց և հրդեհի մատնվեց եկեղեցին, որի ներսում հավաքված էին 250-ից ավելի երկսեռ շնչեր²: Սոսկայի ճիչեր արձակելով՝ գոռում-գոչյուններով նրանք այրվում էին բոցերի մեջ, իսկ դրսում խուժանը դժուր-դուրանայի տակ խրախուժանքի պար էր բռնել: Եկեղեցու կրակներից հրաչքով փրկվածներից մեկը պատմել է. «Ջարդարար ոհմակի ղենքերու շաչիւնը, զինուորական փողահարութիւնները, հրդեհներու մարդակեր բոցերուն ճարճատիւնները, տաւոյ-գուռնաներու ձայները, այրուողներու սրտակակիծ ճիչերն ու խուժանին վայնասունները իրարու խառնուած՝ ահուկի վիճակ մը ստեղծած էին...»³:

Արյունարրուները եկեղեցու հենց դուան առջև պատռում էին կրակի լեզուներից փախչող կանանց որովայնները և սաղմերը դուրս թափում: Ողջ մնացած քանի-քանի մանուկների նրանք նետեցին կրակի մեջ, քանի-քանիսը կեր դարձան փողոցների շներին:

Եկեղեցու մեջ 250 հոգու այրելուց հետո վայրագ խուժանը մյուլաղիմ՝ Քեմայի, Ֆեթթահ զաղե Ահմեդի, իր ձեռքով հայոց վարժարանի ուսուցիչ Ղադարոս Քերոմիյանին սպանած դարթին Քեմայի, սայլապան Նուրիի, Մեհմեդ Այի բեյի զլխավորությամբ հարձակվեց Պազայանի տան վրա, ուր պատսպարվել էին երեք տասնյակ տղամարդ և բազմաթիվ կանայք, երեխա-

ներ: Բոլորին բակ դուրս բերեցին: Ընկնելով մարդասպանների ոտքերը՝ կանայք աղաչանքով նրանց խնդրում էին գոնե խնայել երեխաներին, բայց միայն ծաղրանքի էին արժանանում: Բոլոր դժբախտները կտոր-կտոր եղան ուրազների, կացիների, բրերի, դաշույնների ու թրերի հարվածներով⁴:

Հայկական գույց թաղերն ամբողջապես կործանելուց հետո ջարդարարները խուղարկում էին Օսմանիեի բարեսիրտ թուրքերի տները՝ հայերի փնտրելով: Մի մարդասեր թուրքի տանը նրանք գտան 50-ի չափ հայ տղամարդկանց և նույնքան կանանց ու երեխաների, որոնց բոլորին սպանեցին: Հայ 17 երիտասարդներ փախել ու ապաստանել էին հեռագրատանը, որի թուրք վարիչը նրանց թաքցրել էր շենքի տանիքի տակ: Ջարդից հինգ օր անց նրա տան թուրք սպասուհին, դուրս գալով թաղ, հարայ է տալիս, թե հեռագրատանը գյավուրներ կան: Խուժանապետ Հաջի Հուսեին էֆենդին, տանիք բարձրանալով, հայ տղաներին համոզում է ցած իջնել և ղենքերը հանձնել՝ խոստանալով նրանց կյանքը խնայել: Երիտասարդներն իջնում են և անմիջապես չըջապատվում: Հուսեինի հրամանով՝ բոլորը մորթվում են Արար Մեհմեդ անունով ճիվաղի ձեռքով: Սամվել Մթրպյանի կոկորդը կտրելուց հետո այս մարդակերպ գաղանը ավերով խմում է դուրս ժայթքող արյունը, ապա գոչում. «էյ-համտուլիլլահ, կեավրը քանը իչտիմ, արթըր էոյմեմ...»² (Փա՛ռք Ալլահին, անհավատի արյուն խմեցի, է՛յ չեմ մեռնի...):

Ահա և մի ուրիշ սարսափելի պատկեր. Օսմանիե եկած ոստիկանական ջոկատի հրամանատարը ենթականերին կարգադրում է ջոկատի Սարգիս անունով միակ հայ ոստիկանին տանել հրապարակ և ամբողջովին մերկացնել: Այդպես էլ արվում է: Շուտով հրապարակ է գալիս նաև ոստիկանապետը և այնտեղ գտնվողներին բարձրաձայն «հրավիրում է» գյավուրի մարմնից մի-մի կտոր միս պոկելու: Այդ տեսարանին ականատես հայերից մեկի Կ. Պոլիս ուղարկած նամակում կան այսպիսի տողեր. «Հարիւրաւորներ կը թափին խեղճին վրայ և՛ դանակներով իր

¹ Տե՛ս **Բիզանդ Եղիայան**, Ատանայի հայոց պատմութիւն, Անթիլիաս, 1970, էջ 240:

² **Ջապէլ Եսայան**, Աւերակներուն մէջ, էջ 91-92:

³ **Յակոբ Յ. Քէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 198-199:

⁴ Մյուլաղիմ - լեյտնանտ:

¹ **Յակոբ Յ. Քէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 198-199:

² Նույն տեղում, էջ 199:

միսերը կը փրցնեն կտոր-կտոր. հէզ զոհն անլուր տանջանքն-
րով կը փչէ հողին»¹: Այդ նամակին անդրադարձած «Բիւզան-
դիոն» թերթը գրում էր. «Այս աղետարէզ ղէպերը յսելով մարդ
չի գիտեր թէ ո՞ւր կ'ապրի՝ Ափրիկէի կամ Օվկիանիոյ մարդա-
կերներու՞ն թէ՞ զայսերու ու գաղաններու վոհմակի մը մէջ»²:

Հայերի կորուստը կազմեց 1000-ից ավելի սպանված: Երջա-
կա գյուղերից եկած թուրքերը մի քանի տասնյակ հայու հիններ
իրենց հետ տարան՝ իրեն ավար:

Օսմանիեում գործված վայրագությունները Կիլիկիան եղևոնի
գյուխգործոցներ էին:

Ազանայի հարավարևելյան կողմում, Զերեյ-Բերեքթի սան-
ջակի էրզինի գավառակում էր գտնվում **Համիդիե** գյուղաքա-
ղաքը (աղետից հետո այն վերանվանվեց Զիհան):

Ոչ հեռվում Ռուրիկիան ժամանակների Ամուղա ամրոցն էր,
որը հսկայարեւձ ու կարկառուն վեհությամբ կարծես կիլիկիա-
հայոց դարավոր բողոքն էր հղում առ երկինք: Նախկինում այն
Լեոնկլա (Լեոնի բերդ) էր կոչվել, բայց հիմա կրում էր Յըլան-
Կալա (օձարեւրդ) աղավաղված անունը:

Համիդիեն ուներ 1000 տուն բնակիչ, որից 150 տունը հա-
յերինն էր: Սրանք ունեին փոքր, արհեստանոցներ, դպրոց,
եկեղեցի: Ջարդի օրերին Համիդիեում գտնվում էին մոտ 1500
պանդուխտ հայեր:

Ազանայում սկսված կոտորածի յուրը Համիդիե հասավ նույն
օրը՝ ապրիլի 1-ին: Երբ պաշտոնատանը այդ մասին ստացված
հեռագիրը թուրք պաշտոնյաները շուրջով ու մեծ հետաքրքրու-
թյամբ կարդում էին, նույն տեղում ծառայող հայ Մարկոս
էֆենդու այն հարցին, թե դա ի՞նչ հեռագիր է, նրան կոպիտ
պատասխանում են՝ «Դա քեզ չի վերաբերում»: Հայ պաշտոն-
յան զարմացած նւյում է, թե հեռագիրն ինչպիսի իրարանցում
է առաջ բերել գործընկեր թուրքերի մոտ:

Տեղացի թուրքերը, չվստահելով առանց այն էլ իրենց
ունեցած ուժերի մեծ զերակչոթյանը, օգնության կանչեցին

հարևան բնակավայրերի քուրդ աշիրեթներին:

Այդ օրն իսկ՝ հեռագիրն ստանալուց մի քանի ժամ հետո,
սկսվում է հայերի ջարդը, որի առաջին կոչն անում է Կ. Պոլսից
եկած Հաջի Հինդին: Նրան է միանում տեղի մուֆթին՝ Սարր
Մեհմեդը, իսլամ հավատացյալներին կոչ անելով անողոր ու դա-
ժան լինել: «Երկու տարեկանից վեր ոչ որի մի՛ խնայեք, գնդակն
ափսոս է, խփե՛ք կացնով», - հորդորել էր նա: Շուտով գայիս է
նաև էրզինի կաղայի գայմագամ Նուրէդդինը, որը հավարում է
տեղի դատավորներին ու թուրք երևելիներին, նրանց հրամայում
անձամբ գլխավորել կոտորածը և բարձրաձայն պատվիրում հա-
մարձակ լինել, խիղճը դեն նետել և արյուն ոթել որքան կարելի
է շատ: «Սպանեցե՛ք տղամարդկանց, իսկ գույրն ու կանայք
մերն են ու մերը»¹:

Ոտքի ելած թուրքերը նախ հարձակվեցին եկեղեցու վրա և
սպանեցին Կարապետ քահանա Թելլայանին: Բուպենը անց
նրանք պաշարեցին շուկան և ջարդեցին քրիստոնյա վաճառա-
կաններին, որոնցից միայն 13 հոգի կարողացավ փախչել և իրեն
զցել կառավարչատուն, հուսալով, որ այնտեղ ապահով կլինի:
Բայց կառավարչատանը նրանք բոլորն սպանվեցին պաշտոն-
յաների աչքի առաջ և նրանցից ոմանց մասնակցությամբ: Շու-
կան և քրիստոնյաներին պատկանող բոլոր խանութները կողո-
պուտի ենթարկվեցին: Դրանից հետո ջարդարարները ձեռնար-
կեցին Համիդիեի հայ բնակչության ղանգվածային կոտորածը:

Տեսնելով այդ ամենը՝ ահ ու դողի մատնված թաղերի մեջ
գտնվող քրիստոնյաները փորձեցին հավաքվել իրար զլլսի,
փակվել մեկ-երկու բնօրհան տներում և պատրաստվել դի-
մադրության: Բայց կոահելով այդ մտադրությունը՝ թուրքերը
հրացանային կրակի տակ առան քրիստոնեարնակ թաղերի փո-
ղոցները և արգելեցին մի տեղում նրանց համախմբվելը:

Այդ գործողությունը կատարելուց հետո արդեն հեշտ էր
առանձին-առանձին հաչիվ տեսնել գյավուրների հետ:

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3827, 1 (14) մայիսի 1909 թ.:

² Նույն տեղում:

¹ Եղիշե Զարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան
(ԳԱԹ), Գրիգոր Զոհրապի ֆոնդ, № 2175/11. թ. 2:

Գաղաղամբ ամբոյսը, Սարը Կաղի մականունով մուֆթի-դատավոր Մեհմեդի, Մուհիդդին ու Ֆարիս Եղբայրների և ուրիշ խուժանապետների գլխավորութեամբ, հարձակման անցավ հայկական թաղերի վրա և սկսվեց արյունալի ջարդը:

Երջապատելով մարաշցի Ղաթրի տունը, ուր ապաստանել էին 200-ի չափ հայեր, ջարդարարները հրդեհեցին այն: Հուսահատ դիմադրությունից հետո բոլորը վառվեցին, մոխրացան¹:

Այնուհետև հրոսակները վրա պրծան մյուս տների վրա: Խելակորույս կանայք խուժանի մեջ նշմարելով իրենց ծանոթ դրացիների՝ նրանց պաղատում էին և զթություն հայցում իրենց զավակների համար: Ամեն կողմից լսվում էին սրտակեղեր աղաղակներ՝ «տղոցս խնայեցե՛ք», «զավակիս խնայեցե՛ք», «խղճացե՛ք մեզի»: Բայց ո՛չ զուժ, ո՛չ խղճմտանք: Բղավոցները, լացն ու կոծր բռնել էին օդը: Ավելին, «ծանոթ դրացի» տղամարդկանցից շատերը 6-10 տարեկան երկսեռ մանուկների վրա կրքերը հագեցնելուց հետո նրանց սրախողխող էին անում իրենց կյանքի վերջին սպասող ծնողների աչքի առջև²:

Զապել Եսայանը ջարդից օրեր անց գրույցներ էր ունեցել մահից հրաշքով փրկված համիդիեցի մի քանի հայ կանանց հետ: Վերջիններս նրան անհավատալի բաներ էին պատմել:

Նրանցից մեկը ողբաձայն ասել էր.

« - Ոճրագործները դարհուրելի արբեցութենէ մը բռնուած էին. հոնդալով ու ոռնալով կը յարձակէին նոյն իսկ մոլորած տղոց վրայ, աչքերնին դարձած, մարդկային ոեւէ զգացումէ զրկուած, անանուն գաղաններու պէս էին: Այսօր երբ կը վերջիչեմ այդ պատկերները, դժուարիս կու գայ հաւատալու նոյն իսկ ինծի որ աչրովս տեսայ, թէ իրականութիւնն են անոնք»:

Մի ուրիշ կնոջ պատմածից.

« - Տան մը մէջ ապաստանած էինք 40-50 հոգի: Երիտասարդները դիմադրեցին, բայց ի դուր: Թշնամիները ամէն կողմէ կը բղխէին և անթիւ էին: Վերջապէս կրակի տուին, երեք գա-

ւակներս այ դարկին. ամէն մէկ քայլիս երեքէն մէկը ինկած կը տեսնէի: Տղոցս դիակները մնացին ճամբուն վրայ...»:

Մի երիտասարդ կնոջ պատմածից.

« - Մեր ապրիլը անէ՛ծր մըն է... Ամէն օր քանի մը անգամ կը մեռնինք՝ միտքերնիս բերելով եղածները ու տեսնելով մեր սիրելիներուն ոճրագործները: Ամէնքն այ մեղի ծանօթ էին, անունով կը ճանչնային, ու դիակները քննելով կը հասկնային թէ որո՞նք սպաննուած չեն և կը սպասէին որ երեւան գան ... սպանելու համար»:

«- Զեռքիս մէջ սպաննեցին իմ եավրո՛ւս,- կը գոչէ ուրիշ կին մը արտասուելով,- ամէնքն այ մեռած էին ու ես ու վերջին տղաս մնացած էինք: Դեռ պզտիկ էր, հաղի տասը տարեկան. արիւնով թաթխուած էի, բայց չէի գիտեր թէ ի՞մ, թէ՞ զաւակներուս արիւնն էր որ ժայթքած էր վրաս: Երբ տանը մէջ բոլոր ձայները մարեցան, ոճրագործներէն մէկը դէպի մեզ եկաւ. ձեռքի կացինը մինչև կոթր կարմրած էր արիւնով:

Մէկ հատս մնաց, խնայէ՛, ըսի:

Աղջի՞կ է, հարցուց:

Քօղս վերցուցի ու ծածկեցի տղուս գլուխը:

Այո, ըսի, աղջիկ է:

Միջոց մը կեցաւ. աչքերը վարանելով կը նայէին մէյ մը ինծի, մէյ մը մանչուս, որուն ձեռքը կը դողար ձեռքիս մէջ: Յանկարծ ծոնցաւ, քղանցքը բարձրացուց, հաստատեց սևոր, ու կացինի մէկ հարուածով սպաննեց...»¹:

Այս պատմածներից ընկճված ու հուսահատած Զապել Եսայանը գրում էր.

«Դժնդակ լոռութիւն մը յաջորդեց այս խօսքերուն. բոլոր ներկաներուն աչքերը ապակիի պէս կը վառէին. տենդով ու գայրոյթով հրահրուած էինք ու արտասուքը կը պտտէր մեր բրբերուն վրայ»²:

Լիովին բնաջնջվեցին օտար տեղերից եկած մշակները,

¹ Արշակունհի Թէոդիկ, Ամիս մը ի Կիլիկիա, էջ 142:

² Տե՛ս «Արեւելք», № 1707, 25 մայիսի 1909 թ.:

¹ Զապել Եսայան, Աւերակներուն մէջ, էջ 218-220:

² Նույն տեղում, էջ 220:

որոնցից մոտ յոթանասուն հոգի փրկվելու հույսով մտել էր մի մարագ: Շուտով վրա հասած թշնամին կրակի մատնեց թաքստոցը՝ բոցակեղ անելով բոլորին: Այդտեղ զոհվածների թվում էին էվերեկցի Մկրտիչ, Կարապետ, Սարգիս, Հաջի և Սիմոն Աղազարյան հինգ եղբայրները:

Երեկոյան դեմ՝ քրիստոնեական թաղերի մի մասն այլևս գոյություն չուներ: Սուժանն սկսեց գրոհել կենտրոնական թաղի վրա: Եվ այստեղ, կիլիկյան ջարդերի օրերին քրիստոնյաներից առաջինը համիդիեցի հայերն էին, որ զենքի դիմեցին: Թաղի կենտրոնում գտնվող մարաչցի Հովհաննեսի տանը խմբված հայերը դիմադրեցին հարձակվողներին: Բավական էր նրանց հրացանների մի քանի ճայթոցը, որպեսզի մարդասպանները միմյանց կոխկրտելով փախչեն: Այդ դիմադրությունն շնորհիվ թուրքերը չկարողացան ցերեկվա ընթացքում մոտենալ հայկական թաղերին, բայց դրա փոխարեն գիշերը կրակի մատնեցին այնտեղի մի քանի տներ, այդ թվում՝ մարաչցի Հովհաննեսի տունը:

Երկրորդ օրը նույնպես հրոսակներին չհաջողվեց հաղթական դուրս գալ. քանի որ հայերը որոշել էին պատվով մեռնել և դիմադրում էին բազմապատկված եռանդով: Ուրիշ միջոց չգտնելով՝ թուրք երեկիները մարդիկ ուղարկեցին հարևան մուսուլմանական գյուղերը և այնտեղից օգնություն պահանջեցին, թե «չո՛ւտ վրա հասեք, այնպես քրիստոնյաները մեզ բոլորիս կկոտորեն»:

Երրորդ օրը չրջակա գյուղերից անթիվ-անհամար մարդասպաններ ու թալանչիներ եկան թափվեցին Համիդիե և անմիջապես հարձակման անցան հայերի տների վրա: Վեց ժամ անընդհատ ու քաջարար կռվելուց հետո երբ վերջացավ դինամիթերը, հայերն ստիպված հանձնվեցին: Զարդարարները, գայլերի նման, ուրախություն ճիչերով հարձակվեցին անզեն մարդկանց վրա՝ որևէ մեկին կենդանի չթողնելու դիմային մոլուցքով: Կոտորածը կատարվում էր անասելի դաժանություններով ու ամենաստոր մեթոդներով: Նույնիսկ օրորոցի անմեղ մանուկներից որևէ մեկը չփրկվեց: Առանձին դաժանություններ աչքի էին ընկ-

նում հարևան գյուղերում հաստատված դրիմցի թաթար ասպատակիչները և հատկապես Յարսուվատ գյուղից Համիդիե խուժած՝ Ռուսաստանից գաղթած նոգայ թաթարները, որոնց կրծքի տակ դուլյոն իսկ չէր մարել վայրագություններից բոցը Կիլիկիա գալուց հետո էլ: Գաղանարար ջարդարարները, մանուկների ոտքերից բռնած, գլուխները ջախջախում էին՝ խփելով քարերին ու պատերին, ցից հանում սփիների ծայրերին, նետում խարույկների մեջ...

Այդ տարտարոսից կարողացան փրկվել 750 կին ու երեխա՝ շնորհիվ ֆրանսիացի Սարաթիկների ընտանիքի զթասություն:

Սարաթիկները Համիդիեում հաստատվել էին 35 տարի առաջ՝ իրենց հետ եվրոպական մշակույթ և մարդասիրություն բերելով բարրարոսություն այդ անապատ: Տիկին Սարաթիկն այստեղ հիմնադրել էր բամբակագործ գործարան, ուր աշխատում էին տարբեր ազգությունների տասնյակ աղքատ մարդիկ:

Իմանալով, որ Սարաթիկներն իրենց մոտ պատասպարել են մեծ թվով կանանց ու երեխաների, մարդասիրող ռեճակը հարձակվեց նրանց տան վրա՝ փորձելով խորտակել դոները և ներս մտնել: Տիկին Սարաթիկն, ամուսինը՝ Դոգեն, իրենց դուստրը՝ Անթուանեթը, որդին՝ Շարյը, ամեն միջոց գործադրեցին հեռացնելու դիմված ամբոխին, որն, ուր որ է, տուն պիտի խուժեր: Այդ պահին էր, որ Շարյը դիմեց հանդուգն քայլի. աները կանգնեց տան սեմին, և ձևով մարդասպաններին ցույց տալով չենքի վրա ծածանվող ֆրանսիայի եռագույն դրոշմը, գոչեց. «Դուք կարող եք ներս մտնել իմ դիակի՝ վրայով»: Սուժանն ստիպված նահանջեց¹:

Անիծյալ գյուղաքաղաքում արձակ համարձակ պտտվում էին «գործն ավարտած» ճիվաղները՝ հոխորտալով իրենց քաջությունները: Իսկ Համիդիեի մոլորություն այդ ժամանակ մեկական դուրուչ էր բաժանում մարդասպաններին՝ գյավուրների դիակ-

¹ Արշակունցի Թեոդիկ, Ամիս մր ի Կիլիկիա, էջ 142:

ները հավաքելու և Զիհուն գետը թափելու համար: Ամեն կողմ քառամնկի ղեմքեր էին վխտում:

Երբ վրա հասավ երեկոն, Համիդիեում գտնվող 3000 հայերից կենդանի էր մնացել 840 հայ, որոնցից 750 կին ու երեխա ապաստանել էին Սարաթիենների տանը: Մի ամբողջ ամիս նրանք մնացին այդ ասպնջական հարկի տակ, ինչպես նաև բամբակադտիչ գործարանում՝ կերակրվելով նրանց ջրաղացների այլուրով և ունեցած վերջին ուտեստներով¹:

Մի փոքր մխիթարական էր նաև, որ բավական թվով հայեր թաքնվել էին մի բարի թուրք կայվածատիրոջ մոտ, որը մոտ 20 օր պահելուց ու կերակրելուց հետո՝ նրանց հանձնել էր բարեխնամ կաղամակերպություններին:

1909 թ. հոկտեմբերին Կ. Պոլսից Կիլիկիա եկած Արչակուհի Թևոդիկը երախտագիտական այց է կատարում Սապաթիենների ընտանիքին: Զրույցի ժամանակ տիկին Սարաթիեն նրան պատմում է ապրիլյան անասելի չարագործություններից բաղձաթիվ մանրամասներ: «Երևակայությունից դուրս բան է պատահածը, ասում է Փրանսուհին: Մոսկայի բան էր: Մինչև գերեզման անհնար է գեթ մի վայրկյան մոռանամ հայերին պատահածը»:

Համեմատարար քիչ կորուստներ ունեցան **Էրզին** թուրքական գյուղում գտնվող հայերը, որի համար նրանք պարտական էին գյուղի մուֆթիին, տեղի երևելիներից Մուսա Լֆենդուն և, հատկապես, քսանամյա թուրք երիտասարդ Մեհմեդին:

Ապրիլի 1-ին ժամը 11-ին Զերեյ-Բերեթեթի սանջակի մութասերիֆ իթթիհադական Ասաֆ Էսադ բեյն Աղանայից հեռագիր է ստանում, թե չուտով քրիստոնյաների ջարդ պիտի լինի, ուստի մուսուլմանները պետք է ղինվեն: Կատարելով այդ ցուցումը՝ նա անմիջապես կարգադրում է ղենք բաժանել ցեղակիցներին:

Ապրիլի 2-ին ղեռնորթույցի չորս հայ, որոնք պանիր գնելու համար գալիս էին Էրզին, ճանապարհին ենթարկվում են հարձակման և սպանվում: Զգայով, որ հայերին ջարդելու վտանգը միանգամայն գործնական կերպարանք է առնում, Էրզինի

մուֆթին և Մուսա Լֆենդին հավաքում են գյուղում գտնվող և արտագնա աշխատանքի եկած 200-ի շափ հայերին և նրանց տեղավորում խանի (պանդոկ) մեջ՝ պաշտպանելու խուժանի հարձակումներից: Իմանալով այդ մասին՝ ղինված ամբոխը, որին միացել էին մի քանի խոջաներ, անցնում է հարձակման: Տեսնելով, որ դուրթյունը գնալով ծանրանում է և հնարավոր չի լինելու կոտորածից փրկել հայերին, նշված մարդասեր մուսուլմանները, վտանգելով իրենց կյանքը, կարողանում են խանից նրանց փոխադրել բանտի շենք, որն ուներ ամուր պատեր, ուստի ավելի ապահով էր: Չնայած դրանով հայերի պաշտպանությունն ամրապնդվել էր, բայց բանտում նրանք լիովին զրկված էին դրսից սննդամթերք ստանալու հնարավորությունից: Քաջ գիտակցելով, որ բանտում փակվածները երեք-չորս օր հետո, չղիմանալով սովին, հարկադրված, այնտեղից դուրս են գալու, խուժանը պաշարել էր շենքն ու գիշեր-ցերեկ համբերությունամբ հսկում էր, որպեսզի որևէ մեկը չկարողանա դուրս պրծնել:

Չորրորդ օրը սոված պաշարյալների համար կյանքն արդեն անկարելի էր: Եվ ահա, այդ պահին էր, որ Էրզինում հիմնավորված քսանամյա մի թուրք տղա՝ մարաչցի Մեհմեդը, վտանգի ենթարկելով կյանքը, գրեթե ամեն ժամ անխոնջ եռանդով ուտեստ էր հասցնում բանտ: Ավելին, իր ունեցած միակ խնայողությունը՝ հինգ օսմանյան ոսկին, որ նա տնտեսել էր երկու-երեք տարի Կիրակոս անունով հայ վարպետի մոտ աշխատելիս, հանձնում է սովյալներին:

Էրզինում գտնվող հայերը, որոնց թվում գերակշռում էին պանդուխտները, իրենց կյանքի համար պարտական էին այդ թուրք նորահաս երիտասարդին:

Անդրադառնալով թուրք տղայի մարդավայել կեցվածքի փաստին, Զապել Եսայանը գրել է. «Ի՞նչ ճահանչն էր նա առ թշնամիքն մթազնած խղճմտանքին մեջ. ո՞ր էր աղբիւրը այդ լոյսին՝ որ դրդած էր Մէհմէտները անջատուիլ խուժանին զանգուածային անգիտակցութենէն ու անոր խորտակող եւ քանդող ոյժին ղէմ կանգնիլ առանձինն ու յաղթական դառնալ...»¹:

¹ **Յակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 194, **Արչակուհի Թևոդիկ**, Ամիս մը ի Կիլիկիա, էջ 148:

¹ **Զապել Եսայան**, Աւերակներուն մէջ, էջ 212:

Միսից Ադանա երկարող ճանապարհի վրա էր շուրջ 90 տնից բաղկացած **Սայ-Գեչիտ** թուրքարնակ գյուղը: Այնտեղ հայ ընտանիք չկար, բայց 30-ի չափ հայ պանդուխտներ գյուղում դրադվում էին կոչկակարություն, դարբնություն, պայտագործություն և համեստ կարելով: Նշենք նաև, որ Միսից մի քարավան էր մեկնել Ադանա, որի հետ էին բաղամթիվ հայեր, այդ թվում հայ ավետարանական քարոզիչներ, որոնք նույնպես գնում էին մասնակցելու Ադանայում գումարվելիք «Հոգեուր պետերու կիլիկեան միություն» համաժողովին: Զարդի օրը քարավանը կանգ էր առել Սայ-Գեչիտում՝ գիշերելու:

Ապրիլի 2-ին, երբ մութը վրա էր հասել, թուրքերն սկսեցին պատրաստություններ տեսնել: Արշայույսը դեռ չբացված՝ նրանք «գործի» անցան: Երկու մոլլա մինարեթից բարձրաձայն սկսեցին գյուղով մեկ կանչել. «Թուրքե՛ր, ինչի՞՞ կը սպասում, ջարդեցե՛ք հայերին»: Այս խոսքերին հաջորդեց կատաղի հրացանաձգությունը հայերի վրա, ապա անխնա կոտորածը սառը զենքերով: Անդեն հայ տղամարդիկ, որոնք շվարել էին և չգիտեին ինչ անել, միայն ականատես էին կանանց լալահառաչ աղաչանքներին ու երեխաների աղիողորմ կանչերին: Քիչ անց դադարեցին բոլոր աղաղակները և լուռություն տիրեց: Բոլոր հայերը՝ և՛ պանդուխտները, և՛ պատահաբար գյուղում հայտնվածները, այդ թվում ավետարանական հոգևորականներն, արդեն զրկված էին կյանքից: Աղատվել էր միայն մի հայ տղամարդ, որը 18 վերք ստանալով, արյունովա ու նվաղած հասել էր Միս և փրկվել՝:

Եղևոնագործությունը շարունակվում էր էրզինի գավառակի ուրիշ գյուղերում ևս:

Հարձակվելով **Էքիզլեր** գյուղի վրա, որը 50 տուն հայ բնակչություն ուներ, ջարդարարներն սպանում են 200 հոգու, կողոպտում ամեն ինչ, կանանց ու աղջիկներին բռնաբարում, ապա նրանցից գեղեցիկներին սեփականացնում փրճակահանություն միջոցով:

Գաթըլար հայկական գյուղի 100 տները կողոպտվում և

¹ Տե՛ս Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 214-215:

հրդեհվում են, սպանվում է մոտ 400 հոգի: Կոտորվածների կեսից ավելին լինում են երեխաները: Զարդից փրկվածները դանազան կողմեր են փախչում: Գյուղը երկրի երեսից վերանում է:

Քեռը-Ղայս 50 տուն ունեցող գյուղն ամբողջովին ավերվում է համիդիկ քրդերի ձեռքով:

Ամբողջապես այրվում է **Թուրինջլի** գյուղը, որի 20 տուն հայ բնակիչներից որևէ մեկը չի փրկվում:

Զերիլ 150 տուն ունեցող հայարնակ գյուղի վրա հարձակվելով՝ թուրքերն ու քրդերը ոչնչացնում են թե՛ բոլոր տները և թե՛ բոլոր բնակիչներին:

Էքբեզ գյուղի հայ բնակիչները, ջարդից փրկվելու համար, ապաստանում են լատին կրոնավորների վանքում, իսկ խուժանն առանց որևէ արգելքի մտնում է Էքբեզ, կողոպտում տներն ու խանութները, սպանում 10-ից ավելի մարդ, առևանգում և իսլամացնում հայուհիներին:

Ընդամենը 15 հայ ընտանիք ունեցող **Ֆասըլը** գյուղ մտնելով՝ թուրքերը հրդեհում են բոլոր տները, մոտ 100 բնակիչներից սպանում 60 հոգու, իսկ 15 հոգու կրոնափոխ անում:

Հրոսակախմբերը միևնույն խժոժությունը ու վայրագությունը ոչնչացրին էրզինի գավառակի մյուս հայկական բնակավայրերը նույնպես, այդ թվում՝ **Կարապյուլներ**, **Քեոյոլուն-Բոչայը**, **Կարա-Հեոյուք** գյուղերը՝ սրի քաշելով բնակիչներին:

Դեռթ-Յուլի գավառակ: Սանջակի այս գավառակի կենտրոնն էր **Դեռթ-Յուլ** (**Չորք-Մարզպան**) գյուղաքաղաքը, որի հայ բնակիչները միանգամայն հաջող կռիվներ մղեցին թշնամու դեմ՝:

Դեռթ-Յուլը գտնվում էր Ադանայի հարավային կողմում, Ալեքսանդրեթից հյուսիս, Միջերկրական ծովից ոչ հեռու, պատմական Փայաս ամրոցի մոտերքում: Ավանը թաղված էր նարնջենիների և թթենիների այգիների մեջ:

Դեռթ-Յուլն ուներ 800 տուն, որոնցից մի քանի տասնյակը պատկանում էին թուրքերին²: Հայ բնակչությունը հաշվվում էր

¹ Տե՛ս С. З., Адаские черные дни, с. 24-26.

² Տե՛ս **Հրաչեայ Աճառեան**, Տաճկահայոց հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915 թ.), Նոր Նախիջևան, 1915, էջ 59:

չուրջ 5000 հոգի: Գյուղացիները հիմնականում զբաղվում էին նարնջի մշակությամբ և շերամի արտադրությամբ: Այդ մեծ գյուղն իր քաջ ու անվահեր հայ բնակչությամբ միշտ պատկանանք էր ներշնչում շրջապատի թուրքական գյուղերին, միաժամանակ հայկական փոքրիկ գյուղերին մշտապես հոգատարություն ցուցաբերում¹:

Մինչ ապրիլի 2-ր Դեորթ-Յոյի բնակչության կյանքը սովորականի պես ընթանում էր խաղաղ ու հանգիստ, և որևէ փտանգի նշան չկար:

Բայց ահա ապրիլի 2-ին **Քեոփրյուջեք** անունը կրող ազգաբազնի դաշտում սպանվում է երկու հայ, ինչպես նաև կողոպուտի ու ավերման են ենթարկվում Դեորթ-Յոյի շրջակայքի հայկական փոքրիկ գյուղերն ու չիֆթլիկները (ազարակները)²:

Անկարող լինելով դիմադրել վայրագ խուժանին՝ գյուղացիները թողնում են ամեն ինչ, փախչում դեպի Դեորթ-Յոյ՝ ճանապարհին բազմաթիվ զոհեր տալով:

Երբ դեորթյուցիները լսեցին Ադանայի կոտորածի և շրջակա հայկական գյուղերի ավերումների ու բնակիչների սպանությունների մասին, իրենց համար պարզ դարձավ, որ աղետը մոտենում է: Ամեն տեսակ բռնություններից իրենց պաշտպանել իմացող գյուղացիները վճռեցին թշնամուն մինչև վերջ դիմադրել³:

Անմիջապես, գյուղից հեռու, խոցելի տեղերում փորվում են խրամատներ և սարքվում պատնեշներ, շուրջ 170 դիրքերի վրա կարգվում են պահակախմբեր՝ յուրաքանչյուրը 10-ական մարդով: Ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար կազմվում է զինվորական խորհուրդ, որի մեջ մտնում են առաջացած տարիք ունեցող մարդիկ, գյուղի ազաներ, ինչպես նաև մի քանի բնիկներ և իրենց համարձակությամբ հայտնի երիտասարդներ: Անգործ չեն մնում հոգևորականները, որոնք իրենց քարոզներով ոգևորում են բնակչությանը և նրան կռվի կոչում: Պարմանուհիներն աշխատում էին արհեստանոցներում, վառող պատրաս-

¹ Տե՛ս «Հորիզոն», № 55, 12 մարտի 1910 թ.:

² **Զապէլ Եսայեան**, Աւերակներուն մէջ, էջ 204:

³ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3828, 2 (15) մայիսի 1909 թ.:

տում և պարկուճների մեջ լցնում: Նույնիսկ պատրաստվեցին մի քանի փայտյա «թնդանոթներ»՝ ամուր կապկպված թուկերով:

Ապրիլի 3-ի առավոտյան թուրքերն սկսեցին հրդեհել Դեորթ-Յոյի արվարձանները: Հրձիգներից շատերը դրացի թուրքերն էին, որոնք նախորդ օրը երդումներ էին արել, թե իրենք երբևէ ձեռք չեն բարձրացնի եղբայր հայերի վրա:

Դեորթ-Յոյից ոչ հեռու գտնվող **Նաջարլի** գյուղում ապրում էին ավելի քան 100 տուն հայեր և 15 տուն նեստորական ասորիներ⁴: Ապրիլի 3-ի վաղ առավոտյան գյուղը շրջապատվում է մեծաթիվ հրոսակներով: Համազյուղացի թուրքերը փորձում են հայերին համոզել զենքերը հանձնել՝ և ավելորդ արյունահեղություն չհատնալ: Լավ ըմբռնելով այդ միջնորդության արժեքը՝ հայերը բացարձակապես մերժում են: Սկսվում է հարձակում գյուղի վրա, և թուրքերն անմիջապես հանդիպում են բուռն դիմադրության: Կռիվն ամբողջ օրն է տևում: Երկյուղ կրելով թշնամու բազմաքանակ լինելուց՝ բնակիչները գիշերն աննկատ թողնում են գյուղը և Դեորթ-Յոյ փախչում: Ուղին տառապալից էր: Կանայք իրենց մեջքին տանում էին կողովներ՝ լցված մանկիկներով՝ մի քանի երեխա մի կնոջ շայակին: Ճանապարհին թշնամին դուրս է գալիս զեմ առ զեմ: Նաջարլիցի տղամարդիկ, պաշտպանելով կանանց ու երեխաներին, մարտի են բռնվում, պատռում թշնամու շղթան և, զգալի կորուստներ տալով, ապրիլի 4-ի կեսօրին մտնում են Դեորթ-Յոյ⁵: Թուրքերը, խուժելով բնակչությունից դատարկված Նաջարլի, կողոպտում են մինչև վերջին ասեղը, ապա կրակի մատնում բոլոր տները: Գյուղը մոխրակույտի է վերածվում:

Համեմատարար քիչ կորուստներով հաջողվեց Դեորթ-Յոյ

⁴ **Զապէլ Եսայեան**, Աւերակներուն մէջ, էջ 207-208:

⁵ Տե՛ս **Արշակուհի Թէոդիկ**, Ամիս մը ի Կիլիկիա, էջ 177:

* Ի տարբերություն Կիլիկիայի հայ բնակավայրերի ճնշող մեծամասություն, Դեորթ-Յոյում հայերը քիչ ու միջ զենք ունեին և զրա համար պարտական էին այդտեղ կազմակերպական աշխատանք տարած հնչակյան հայտնի գործիչ Մլխո Շահենին (տե՛ս **Մանուկ Գ. Ճիզմէճեան**, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրեդոն, 1930, էջ 88):

⁵ Տե՛ս **Արշակուհի Թէոդիկ**, Ամիս մը ի Կիլիկիա, էջ 177:

մտնել նաև գյուղաքաղաքի հյուսիսարևմտյան կողմում գտնվող և 400 տուն ունեցող գուտ հայարնակ **Օջազը (Օջախը)** գյուղի հայ բնակիչներին:

Ապրիլի 2-ին հարևան Ղուղու-Ուջր և Իջադիև գյուղերի կրե-տացի գաղթականները հարձակում են գործում Օջազըի վրա: Դեորթ-Յոլից շտապ եկած կտրիճների զինված խումբը կանգ-նեցնում է հարձակվողներին: Օգտվելով դրանից՝ օջազյրցիները, առնելով միայն ղենքերը, երևեսաներին ու կանանց, փախչում և ապաստանում են Դեորթ-Յոլում՝ ճանապարհին 15 զոհ տալով¹:

Նույն ճակատագիրն է ունենում հարևան **էոզերլի (Օզարլի)** 200 տուն ունեցող հայկական գյուղը: Այստեղի բնակիչները նույնպես ժամանակին կարողանում են անցնել Դեորթ-Յոլ՝ իրենց հետ տանելով ղենքերը: Թուրքերը մտնում են էոզերլի, կողոպտում և հիմնահատակ ավերում գյուղի բոլոր տները:

Թուրք և քուրդ ավազակախմբերը կոտորում են հայ և թուրք բնակչություն ունեցող **Տեյի-Քեոյ** գյուղի հայերի մեծ մասին, գյուղից ոչ հեռու գտնվող Իսկանդարյան էֆենդու ագարակում աշխատող բոլոր հայերին (61 հոգու), ապա շինությունները հրդեհում: Հարձակվողներն անխնա ջարդում են նաև մեկ օրով գյուղում հանգրվանած շուրջ 60 հաճրնցի մանր վաճառականնե-րի, որոնք գործով Աղանա էին գնում: Տեղի հայերի մի մասը (59 հոգի) ջարդից փրկվում է շնորհիվ մի համագյուղացի մահմեդա-կանի՝ Բայթարո Այի էֆենդու, որը նրանց պատսպարում է իր տանը, ապա ուղեկցում Դեորթ-Յոլ:

Այսպիսով, Դեորթ-Յոլում կուտակվում է շրջակայքի հայ գյուղերից փախած ավելի քան 11.000 հոգի: Անտուն ու անտեր մնացած այդ բոլոր գյուղացիները թե՛ կովի և թե՛ հաջորդած օրերին պատսպարան, սնունդ ու մխիթարություն են գտնում ղեորթյուրցիների մոտ և վերջիններիս եղբայրական վերաբեր-մունքը փոխհատուցում են միանալով նրանց ու հերոսաբար կովելով բազմամրոխ խուժանի դեմ:

Դեորթ-Յոլի վրա հարձակումները զլխավորում էր Ջերել-

Բերեքեթ գավառի մութասերիֆ (գավառապետ) Մեհմեդ Ասաֆ էսադ բեյը: Նա սադրիչ լուրերով գավառի ամեն կողմում հա-կարրիստոնեական շարժումներ էր առաջ բերել, ավերել ամբողջ շրջաններ և հիմա իր ողջ ուժերը կենտրոնացնում էր Դեորթ-Յոլի դեմ: Նա պետական հրացաններով զինել էր կողոպուտի տենչով տարված 20 հազարի հասնող խառնիճադանջ վայրագ խուժանի, զինվորների, ռեզիֆների և Ալեքսանդրեթի ծոցի մյուս կողմում գտնվող Փայասի քրեական բանտից արձակված ավա-զակների:

Ասաֆ էսադի ուժերը գյուղի վրա են գալիս «Յաչասըն փադիչահըմրդ Արդուլ Համիդ» գոչելով, հրացանների համա-դարկերով և ունեցած զինվորական թնդանոթի որոտներով: Դիրքերում ամրացած հայ կտրիճները անցնելով պատենչների հետևը՝ սկսում են բուռն դիմադրություն ցույց տալ, թշնամու կրակին պատասխանել կրակով, որին արձագանք էին տալիս փայտե ինքնաչեն թնդանոթները: Կովին ինքնամոռաց քաջու-թյամբ մասնակցում էին Դեորթ-Յոլում ապաստանած շրջակա գյուղերի հայերը:

Ուժգին դիմադրության հանդիպած թուրքերը նահանջում են, կարգի բերում շարքերը, նորից ու նորից հարձակումների դի-մում, բայց միշտ էլ կորուստներ տալով՝ հետ են քաշվում: Դա տևում է ամբողջ երկու օր, մինչև որ համոզվում են, որ ճակա-տային կովով անկարող են գյուղ մտնել: Եվ նրանք ուրիշ, իրենց արժանի ստոր միջոցի են դիմում:

Ուժեղացնելով ճնշումը՝ թշնամուն հաջողվում է գրավել Դեորթ-Յոլի արևելյան կողմում սարքած պատենչները: Այդ մա-սով էր անցնում Պադ Բուչիից եկող և Դեորթ-Յոլով անցնող հորդառատ գետակը, որի հունը թուրքերը կարողանում են փոխել Ինջև Արաբ անունով խուժանապետի կարգադրությամբ¹:

Սովի մատնված ժողովուրդն ենթարկվեց ավելի ծանր արհավիրքի: Անտանելի ծարավը հաղթահարելու համար գերմարդկային ճիգեր էին անհրաժեշտ, և հայերը պետք է նաև

¹ Տե՛ս «Հորիզոն», № 54, 11 մարտի 1910 թ.:

¹ Տե՛ս Արշակունի Թէոդիկ, Ամիս մը ի Կիլիկիա, էջ 179:

այդ փորձությունը դիմանային: Նրանք շարունակում էին դիմադրել բազմահաղարանոց հակառակորդին: Ավելին, ամեն ջանք գործադրելով՝ հայ երիտասարդները քաջարար գրոհում են արևելյան պատենչների վրա, հետ խլում գետակի փակված հատվածը և ջուրը բնական հուն ուղղում: Պաշարված հայերը մի կարճ ժամանակ հաղեցնում են ծարավը, բայց թուրքերն իրենց ուժերը կենտրոնացնում են գետակի ծայրին ու դարձյալ փակում ջրի հունը: Դրությունը հետզհետե դառնում է անտանելի. ավելի քան 5 հազար մարդ ջուր չունեն: Գյուղացիներն ստիպված են լինում փորել ջրհորներ, շատերը, մեծ փտանգներ հանձն առնելով, գիշերը հասնում են գետի որևէ հատված և մի քանի տիկերով ջուր բերում: Մարդիկ խմում էին «ամէն կարգի ջուրեր, չորացուցեր էին թունաւոր և գարշահոտ ճահիճները, որոնց կանանչորակ և լպրծուն ջուրը կ'ըսէին թէ «տաք էր արինի պէս»»: Բայց այդ բոլոր ջանքերը չէին կարող վիճակը փոխել: Ամեն կողմից լավում էր «ջուր, ջուր» հոգոցը: Գետակի շեղած հատվածի հսկողությունը թշնամին է՛լ ավելի է ուժեղացնում, որի պատճառով հայերը օրեր շարունակ մնում են առանց ջրի: Այդ ընթացքում տեղի են ունենում երկուստեք փոփոխակի հաջողություններ և հակահարձակումներ: Հայերը բոլոր ջանքերը թափում են ջրի հունին չորած թշնամուն քշելու համար՝ դինվորական կանոններով, նաև՝ խորամանկ գործողություններով: Տեղի են ունենում կատաղի կռիվներ, բայց դրությունը չի փոխվում, իսկ թշնամին սպասում էր, թե պաշարվածներն ե՞րբ են հասնելու հուսահատություն և հանձնվելու իրենց վրեժխնդրությունը: Հայերն այդ մասին մտածել անգամ չէին ուզում: Տեղի էին ունենում նորանոր հերոսություններ, լինում էին բազմաթիվ ճակատագրական պահեր, բայց Դեորթ-Յոլն առաջվա պես մնում էր անդրդվելի:

Հայերի հաջող գործողություններից կատաղած՝ Ասաֆ էսաղ բեյն իր բազմաքանակ ուժերը համալրում է թուրքերից, չերքեզներից, քրդերից, կրետացի և բուսնիցի թուրք զաղթա-

կաններից կազմված նորանոր ավազակախմբերով և դիմում վճռական գրոհի:

Վառոդը հատելու պատճառով սպառվելու վրա էին ինքնապաշտպանություն հնարավորությունները: Դրան գումարվում էր այն, որ ինն օր ջրից զրկված լինելով, հայերը տոչորվում էին ծարավից. առանց ջրի մնալը հատկապես կործանարար եղավ երևեսանների համար: «Փորրիկ տղաքը մեռեր էին ահուկի տանջանքներով ու ամէնուն երակներուն մէջ կարծես կրակ վառուած, ջերմէ կ'այրէին ու լեղունին կը չորնար բերաններուն մէջ»¹: Այդ օրհասական պահերին հայերի ղեկավարները որոշում են դիմել վերջին միջոցին՝ օգնություն խնդրել Ջերբեյ-Բերբեթի օտար հյուպատոսներից, որոնց նստավայրը Դեորթ-Յոլից ոչ հեռու գտնվող ծովահայաց Ալեքսանդրեթ քաղաքն էր: Զինվորական խորհուրդն առանձնացնում է 20 խիղախ երիտասարդների, որոնք գիշերով դուրս գալով ավանից, ուղղություն են վերցնում դեպի Ալեքսանդրեթ: Նրանցից 19-ը ճանապարհին ընկնում է հրոսակների ձեռքը և հոշոտվում: Միայն մեկին է հաջողվում տեղ հասնել, ներկայանալ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի հյուպատոսներին, նրանց տեղեկացնել Դեորթ-Յոլի վիճակը և օգնություն խնդրել: Վերջիններս, սակայն, կարևորություն չեն տալիս խնդրանքին, և շարունակվում է պաշարվածների կենաց ու մահու գոտեմարտը:

Դեորթ-Յոլի դինվորական խորհուրդը որոշում է գիշերային վճռական հարձակման դիմել և փորձել շրջափակումը ճեղքել: Այդ նպատակով նախօրոք պատրաստվում են փամփուշտներ, դարբնոցներում կոփվում են երկաթե տեղեր, որոնցով պետք է կանայք ու աղջիկները դիմվեն ու պաշտպանվեն: Ճակատագրական հարձակման ծրագիրը, որ կազմել էր դինվորական խորհուրդը, հետևյալն էր. գյուղից միանգամից դուրս են գալու բոլորը՝ մինչև վերջին շունչը՝ թե՛ տեղի բնակիչները և թե՛ գյուղում ապաստանած՝ շրջակայքից եկած փախստականները. առաջին շարքերում լինելու էին իրենց քաջությունը առափել

¹ Զապէլ Եսայեան, Աւերակներուն մէջ, էջ 209:

¹ Զապէլ Եսայեան, Աւերակներուն մէջ, էջ 209:

աչքի ընկած հրացանակիր երիտասարդները և միջին տարիքի տղամարդիկ. նրանց հետևելու էին մնացած բոլոր տղամարդիկ՝ զինված ինչով հնարավոր էր կռվել. նրանց հաջորդելու էին տեղերով ու մանզաղներով զինված ծերունիները, կանայք և աղջիկները: Բոլորը երգվել էին մեռնել քաջի պես, բայց երբևք ծնկի չգալ ոսոխի առջև. փախչողը դիտվելու էր ստոր դավաճան և արժանանալու էր ընկերոջ գնդակին. որևէ կին կամ աղջիկ չէր առևանգվելու և նման դեպքում վերջ էր տալու կյանքին. մարտում ընկած տղամարդկանց փոխարինելու էին կանայք և կռվելու էին մինչև վերջին շունչը:

Դեորթյուցիները ապրիլի 8-ին նկատում են, որ մի նավ է մոտենում ծովեղբերին: Դա անգլիական «Դայանա» չոզենավն էր: Մի պահ երկուստեք դադարում է հրացանաձգությունը: Լուր է հասնում Դեորթ-Յոլ, թե անգլիացիները պահանջում են մարդիկ ու դարկել ծովեղբերի Չայր գյուղը՝ բանակցելու համար: Հայ պատվիրակները հասնում են նշանակված վայրը, ուր նրանց առաջարկվում է զինաթափվել՝ փոխարենը ստանալ ջուր և խաղաղություն: Մերժում ստանալով՝ նավը հեռանում է: Հրացանաձգությունը վերսկսվում է ավելի ուժգին թափով¹:

Իրար են հաջորդում պաշարման ու կռվի օրերը, բայց դրսից որևէ օգնություն ոչ ոք այլևս չէր սպասում: Այդ ժամանակ էր, որ Դեորթ-Յոլում հայտնվեց օջազլըցի մի թուրք՝ Բայթար դաղն Հասան անունով, որը հավաքել էր այս ու այնտեղ ցրված, բարբարոսներից թաքնված 70-ի չափ հայերի և պատենչների միջով նրանց հասցրել Դեորթ-Յոլ: Ջարդից հետո Դեորթ-Յոլ եկած Արչակուհի Թեոդիկը նրան երախտիքի այս խոսքերն է հղել. «Ու խորհի՛ր թէ վագրերու և բորենիներու գարչելի այդ ջուրներուն մէջ կրնայ գտնուիլ եղեր մարդ մը՝ իր կեանքն իսկ վտանգի դնող, հարստահարեալ հայերու փրկագործումին համար: Նոյն այդ վեհոգի թուրքը կը մատուցանէր դեռ Տէօրթ-Եօլի հայոց այնպիսի՝ անգին ծառայութիւններ՝ որոնց քով ազատուած քանի մը տասնեակ անձերու կեանքն իսկ եւ իսկ ոչինչ կ'արժէր: Յայ-

¹ Տե՛ս Արչակուհի Թեոդիկ, Ամիս մը ի Կիլիկիա, էջ 187-188:

սօր յարգանքով ու երախտագիտութեամբ բերան կ'առնէ Տէօրթ-Եօլցին «Պայթար դատէ» անունը»¹:

Այլքսանդրեթի հյուպատոսներն, այնուամենայնիվ, որոշում են մի ելք գտնել հայերին օգնելու համար: Խորհրդակցելով՝ նրանք դիմում են օսմանյան երկրորդ բանակի հրամանատարին, որը 500 զինվոր է տրամադրում²: Ջորամասը ճանապարհ է ընկնում անգլիացի միսիոներ Բենեթի գլխավորությամբ և Փրանսիացի ու իտալացի հյուպատոսների համաձայնությամբ:

Ապրիլի 11-ի երեկոյան զորամասը տեղ է հասնում և ցրում խուժանին:

Այսպես ավարտին հասավ Դեորթ-Յոլի հերոսական էպոպեան: Խաղաղությունը հաստատվեց հայերի գերմարդկային դիմադրությունն ու եվրոպացի հյուպատոսների աջակցություն չնորհիվ:

Թշնամու տասնօրյա անդադար հարձակումների ընթացքում հայերը կորցրել էին ընդամենը 6 մարդ, մինչդեռ հարևան այն հայկական գյուղերում, ուր դիմադրություն չէր եղել, բնակիչներից զոհվել էր ավելի քան 600 հոգի³:

Դեորթ-Յոլի վրա հարձակումը և պաշարումը թանկ նստեց թուրքերի վրա, որոնք 400-ից ավելի զոհ տվեցին⁴:

Օգնության եկած զորամասը գյուղում տեղավորվելուց մի քանի օր անց բնակիչներից պահանջեց զինաթափվել, բայց դեորթյուցիները, ի տարբերություն Կիլիկիայի շատ վայրերի «բարեխիղճ» հայերի միամտություն, որևէ զենք չհանձնեցին:

Բախչե (Բուլանըխ) գավառակ: Սոսկալի դեպքեր տեղի ունեցան Ջերել-Բերեքեթի սանջակի Բախչե գավառակում:

Գավառակի **Հասանբեյլի** մեծ ու հարուստ գյուղն ուներ 385 տուն, որից 300-ը հայ առաքելական էր, 65-ը՝ հայ ավետարանական, 20-ը պատկանում էր մահմեդականներին:

¹ Տե՛ս Արչակուհի Թեոդիկ, Ամիս մը ի Կիլիկիա, էջ 181:

² Տե՛ս նույն տեղում, էջ 188:

³ Տե՛ս ԳԱԹ, Գրիգոր Ջոհրապի ֆոնդ, № 2175/1, թ. 2:

⁴ Տե՛ս նույն տեղում:

Հայերի ընդհանուր թիվը 2190 էր¹:

Ապրիլի 2-ի իրիկնադեմին գյուղը պաշարվեց Տիգրանակերտից, Խարբերդից, Այնթապից, Մարաշից, Մալաթիայի կողմերից եկած 10.000-ից ավելի քրդերով ու թուրքերով²: Հաջորդ օրը՝ ապրիլի 3-ին, նրանք Հարձակման անցան: Ոճրախմբերին զլխավորում ու թև էր տալիս Բախչևի մուֆթի Իսմայիլը: Հայերը դիմեցին ինքնապաշտպանություն, և բուռն ընդհարում սկսվեց: Թշնամին հարավարևմտյան կողմից գյուղը կրակի բռնեց: Քառասունի չափ քաջամարտիկ հայ տղաներ, գյուղապետ Կիրակոս աղա Քեչիչյանի որդի Պետրոսի առաջնորդությամբ, դուրս գալով գյուղից, անվահերարար նետվեցին թշնամու վրա՝ մեռնելու պատրաստ: Հաղարավոր վախկոտ խուժանը, հանկարծակի եկած, անկանոն ու իրար կոխկրտելով, ցիրուցան եղավ լեղապատառ:

Պարտությունից կատաղած թուրք-քրդական ուժերը, կարգի բերելով իրենց չարքերը, նոր հարձակման պատրաստվեցին: Ուժերն անհավասար էին, ուստի գիշերը ժողովուրդը լեռների ճանապարհը բռնեց: Ժամեր անց թշնամին կրկին մոտեցավ գյուղին, և տեսնելով, որ այնտեղ չունչ չկա, սկսեց կողոպուտը, ապա հրդեհեց տները:

Լեռներ փախածները երկար չեն մնում այնտեղ: Ապրիլի 4-ին լուր առնելով, որ թուրքերի վառողը սպառվել է, վերադառնում են գյուղ: Ճանապարհին նրանք չրջապատվում են թշնամու ահագին ուժերով: Լեռները բարձրանալիս իրենց հետ գեներալ վերցրած հայ տղամարդիկ կենաց ու մահու կովի մեջ են մտնում: Թողնելով դիակներ՝ թուրքերը փախուստի են դիմում, իսկ հասանելիցիցիները վերադառնում են գյուղ³:

Հետևյալ օրը՝ ապրիլի 5-ին, թշնամին կրկին ընդհուպ մոտեցավ գյուղին: Լիովին սպառված էր հայերի զինամթերքը, և գյուղում մնալն անիմաստ էր: Այդ իսկ պատճառով գյուղացիները

նորից բարձրացան լեռները¹: Բայց ոչ բոլորն են հասցնում հեռանալ գյուղից: Հասանելիի հայակեր մուֆթիի և հարյուրապետ Քեյ աղայի հրամանի վրա սպանվում են գյուղում մնացած համարյա բոլոր հայերը, այդ թվում գյուղի Պետրոս Քեչիչյան, Ներսես Պողոսյան և Հովհաննես Քեչիչյան քահանաները: «Բիզանդիոնում» լույս տեսած հոդվածում կարդում ենք. «Քահանաներէ տէր Ներսէս գնդակով մը գետին կը փոռի և երբ տակաւին ողջ էր, նախ քարով ակոսները կը կոտորեն և յետոյ գլուխը կը ճղմեն: Կ'ուղեն առեւանգել տէր Ներսէսին. կոյս աղջիկը, խեղճը սարսափահար մօրը կը փարի, անխիղճ հրէշները հոն աղջկան կուրծքին վրայ կը խողխողեն մայրն ու կը տանին դինք. այժմ կը գտնուի Գայփաք գիւղին մէջ՝ Ապպասըն օղլու Ալի Քէհեային տունը, որուն հետ բռնի կ'ամուսնացնեն: Էնթիլի գիւղէն Յովհաննէս աղայի աղջիկն ալ այսպէս առեւանգուած է և կը գտնուի Արփայը Հիւյիւք՝ Գրսսաճըզ Իպօի տղուն քով: Ասոնք յականէ յանուանէ յառածներն են, իսկ շատերուն տեղն ալ, անունն ալ անծանօթ է: Տէր Յովհաննէս քահանան կը սպաննեն ողջ-ողջ, բերնին մէջ վառօղ թխմելով ու կրակ տալով»²:

Ելուդակներն այնուհետև գայլերի պես ընկան փախստականների հետևից: Հենց լեռներում ծավալվեցին ամենաաղիողորմ տեսարանները: Պատահածին տեղնուտեղը գնդակահարում էին: Ականատեսը պատմել է. «...Անթի, մերկ ու սարսափահար փախչողները չեն գիտեր թէ ո՞ւր երթան, որո՞ւ դիմեն: Մայրն իր զուակները կը փնտռէ, զուակներ իրենց մայրերէն լքուած կը ճչան, անխիղճ վոհմակներ կը հալածեն այդ խեղճերը. ամէնէն խննէջ վայրագութեամբ կը բռնաբարեն ու կը պղծեն գեղաղէմ կոյսեր ու հարսեր և կը սպաննեն այրեր: Պատուախնդիր հայ կիներ իրենց եղբայրներուն, իրենց ամուսիններուն կ'աղերսեն որպէս զի իրենց ձեռքով սպաննեն զիրենք ու թող չտան որ զոհ ըլլան մոլեկան կիրքերու. շատեր կը կատարեն անոնց փափաքն և յետոյ իրենք ալ կը խողխողուին անգթօրէն

¹ Տե՛ս «Հորիզոն», № 66, 25 մարտի 1910 թ.:

² Տե՛ս «Բիզանդիոն», № 3836, 13 (26) մայիսի 1909 թ.:

³ Տե՛ս «Հորիզոն», № 54, 11 մարտի 1910 թ.:

¹ Տե՛ս «Բիզանդիոն», № 3836, 13 (26) մայիսի 1909 թ.:

² Նույն տեղում:

անոնց դիակներուն վրայ»¹: Որևէ տղամարդ չփրկվեց: Կանանցից զատում էին զեղեցկուհիներին ու փախցնում, իսկ մնացածներին կոտորում էին տղամարդկանց հետ: Լեոներում և անտառներում հասանբեյիցիների որսը շարունակվեց մի ամբողջ ամիս:

Հրդեհվել էին բոլոր տները, իսկ մարդկային կորուստը կազմում էր 285 սպանված: Կոտորածից ազատվածները՝ չուրջ երեք տասնյակ տղամարդիկ և 200-ի չափ այրիացած կանայք, բաժանվեցին երեք խմբի և փախան դեպի Ֆնտրճագ, Դեորթ-Յոլ ու Այնթապ: Ֆնտրճագ փախչողներից հոշոտվեցին մի քանիսը, իսկ Դեորթ-Յոլ և Այնթապ գնացողներից փրկվեց միայն 4-5 հոգի, մնացածներն այս ու այն տեղ խողխողվեցին²:

Հասանբեյին կործանելուց հետո խուժելով 124 տուն ունեցող զուտ հայարնակ **Լափաջը (Լափաչը)** գյուղը՝ թուրքերն ու քրդերը վերջ են տալիս բնակավայրի հետագա գոյությունը: Նահատակվում է 149 մարդ, սպանվում են նաև Հովհաննես Քեչիչյան ու Ղևոնդ Քեչիչյան քահանաները: Վերջինս թաքնվել էր հրկիզված եկեղեցու մի անկյունում, բայց երկու օր անց խուզարկության միջոցին նրան գտնում են և տեղնուտեղը գնդակահարում: Գեղեցիկ կանանց ու աղջիկներին առևանգում են, կողոպտելուց հետո բոլոր տները հիմնահատակ ավերում են³:

Հայությունը գրեթե ամբողջովին բնաջինջ եղավ **Ուտուր** գյուղում: Այստեղ ապրում էին 140 տուն առաքելական, 38 տուն ավետարանական հայեր, 18 տուն իսլամ դավանողներ:

Հարձակումը հանկարծակի էր. հարվածը ամենից առաջ հասցվեց շուկայում, խանութներում և դաշտում աշխատողներին: Գյուղի իսլամներն անմիջապես միացան դրսից եկած ոճրախմբերին, և սկսվեց ընդհանուր ջարդը: Ամեն մարդ սպանվեց իր գործի վայրում, ամեն տուն ունեցավ իր կորուստը, ողբն ու կոծը: Ամենաստակալի չարչարանքներով նախ սպանվեցին երի-

տասարդ տղաները: Գյուղում մի դիմադրող եղավ միայն՝ Պողոս աղա Փոլաղյանի մեծ բնուանիքը: Տան վրա հարձակմանը թուրքերի հետ մասնակցեցին չերքեղները: Սրանք, դիմադրությունից կատաղած, տունը գրավելուց հետո սրի քաշեցին ամբողջ մեծ գերդաստանը: Հրաչքով փրկվեց միայն 12 տարեկան մի պատանի⁴:

Ուտուրն կողոպտվեց ու հրդեհի մատնվեց: Գյուղում սպանվածների ընդհանուր թիվն էր՝ 186 տղամարդ, 5 կին, 25 երեխա: Աղջիկներն ու հարսները գերի տարվեցին: Նրանց մեծ մասը բռնություններով կրոնափոխվեց, մնացածները մի քանի ամիս թուրքերի ու քրդերի տներում պահվելուց հետո «մեծահոգարար» ազատ արձակվեցին:

Կոտորածից փրկվածները փախչում են սարերը՝ իրենց հետ տանելով երեխաներին: Փոքրիկները մեռնում են սովից, մնացածները ցրվում են տարբեր ուղղություններով:

Գավառակի կենտրոն **Բախչե (Բուլանըխ)** գյուղաքաղաքում հաշվվում էր 128 տուն հայ (824 հոգի) և 65 տուն մահմեդական: Հարևան թուրքական և քրդական գյուղերի խուժանը հավաքվում է գյուղաքաղաքի չուրջ և պատրաստվում հարձակվել: Բախչեի թուրք բնակիչներն անմիջապես միանում են նրանց: Խուժանին առաջնորդում էին ավանի մուֆթի Իսմայիլը և նրա եղբայրը: Տեղի Վահան քահանան և դատարանի անդամ Պողոս աղան դիմում են գայմագամին և խնդրում միջոցներ ձեռնարկել: Սա նրանց հանգստացնում է, թե գյուղում կան ռեզիֆներ (պահեստի զինվորներ), որոնք «թոյլ չեն տայ անկարգություններ»⁵: Իսկ թուրք երեկյինները հայերին հանգստացնում էին ասելով. «Բարամրդ բարանրդ իյե կեչինմիչղե, բի՞ղ մի կեչինեմիյեջեյիդ»⁶: «Այս մզլոտած խօսքերէն վերջ,- գրել է ականատեսը,- մեր ղռները ափ կ'առնէին, և ահ ու ղղղի մատնուած խեղճ կի-

¹ «Բիւզանդիոն», № 3836, 13 (26) մայիսի 1909 թ.:

² Տե՛ս **Գրիգոր Գուտուրեան**, Հայ լեռը..., էջ 50-52:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 52:

⁴ Տե՛ս **Գրիգոր Գուտուրեան**, Հայ լեռը..., էջ 53:

⁵ «Բիւզանդիոն», № 3836, 13 (26) մայիսի 1909 թ.:

⁶ «Եթե մեր նախնիք կարողացել են իրար հետ հաշտ ապրել, մե՞նք չպիտի կարողանանք ապրել»:

ները, աղջիկներն ու մանչերը կը սրտապնդէին այդ նենգ հայակերները»¹:

Ապրիլի 2-ի առավոտյան հայ աղաները և ուսուցիչ Գրիգոր Գուտուլյանը հավաքվում են Վահան քահանա Տեր Ստեփանյանի տանը՝ խորհելու անելիքների մասին: Ժողովում երկու տեսակետ է հայտնվում, փորձառու մարդիկ փրկելու թյունը տեսնում էին ինքնապաշտպանություն մեջ, իսկ միամիտները միայն մի ելք էին տեսնում՝ մղկիթում ապաստանել և կառավարությունը դիմել: Վերջին առաջարկի հեղինակները ջոջ աղաներն էին, որոնք գտնում էին, թե պետք է աղաչանք-պաղատանքներով դիմել պաշտոնյաներին և բեյերին՝ փրկելու ժողովուրդը կոտորածից: Դա նման էր ծովում խեղդվողի՝ օձին փաթաթվելուն: Ժողովում անցավ վերջին առաջարկը: Գուտուլյանը վերհիշել է. «Թուրք ղոնները պտտելով ի դուր կը ջանայինք կակղեցնել քարացած անգութ սիրտերը: Տեղակային, կայուածոց տեսուչին և բոլոր կառավարական պաշտօնէից տուները պտտեցանք, աղաչեցինք, պաղատեցանք, բայց ի դժուր, անօգուտ էր ամէն ինչ և յուսահատ վերադարձանք: Զարդի ծրագիրը վաղուց պատրաստուած էր, կը մնար միայն գործադրությունը»²:

Ինքնապաշտպանություն համար հայերն ընդամենը մի քանի զենք ունեին: Թեև հայկական ազգային հեղափոխական կուսակցությունների տեղի անդամները ժամանակին ջանքեր էին գործադրել որպեսզի գյուղացիները զենք ձեռք բերեն, բայց ամեն անգամ հանդիպել էին գյուղի ջոջերի դիմադրությանը: Վերջին բոլակին հայերը հետզհետե գիտակցություն են գալիս, բայց արդեն ուշ էր: Անդեն մարդիկ սկսեցին բնազդաբար համախմբվել քիչ-միչ զենք ունեցողների տներում:

Ավանի հայերի և թուրքերի հարաբերություններն արդեն ամբողջովին խզված էին, բոլորովին դադարել էր երթևեկը: Բախչևի ամբողջ հայությունը փոթորկից առաջ պապանձվել էր, սակվել: Մեռելային լուծվածը՝ բոլորն սպասում էին մոտալուտ աղետին:

¹ Գրիգոր Գուտուլյան, Հայ լեռ... էջ 37:

² Նույն տեղում, էջ 38:

Խուժանն արդեն ոտնում էր հեռվից: Գիշերը որևէ մեկը չընեց: Մուֆթի Իսմայիլը, «Մուհամմեդե սալավաթ» ոտնալուծ, իր հետևում ունենալով հարյուրավոր ջարդարարների, հայերի Գագերյեր թաղը մտավ: Ահարեկ մի խումբ հայեր դիմում են գյուղաքաղաքում գտնվող գերման միսիոներու հիններին, որոնք, սակայն, խուժանի սպառնալիքների տակ, իրենց դուր փակում են ապաստան աղաչողների դեմը և ամենքը ղոհ են գնում վայրագ մոլեռանդությունը¹:

Տեր Վահանը և Պողոս աղան, ճարահատ, ապաստանում են մղկիթներից մեկում, բայց այնտեղից նրանց դուրս են բերում ու քահանային գնդակահարում հենց մղկիթի մոտ: Քիչ անց տեսնելով, որ նա ղեռ չնշում է, մարդասպանները «կը կտրեն անոր գլուխը ու ամբողջ օրը փողոցներուն մէջ իրարու կը նետեն անյուր յիշոցներով: Նոյն կերպով կը սպաննուի Պողոս աղա...»²:

Այդ գործողությունը «հաջողություն» վերջացնելուց հետո կույր մոլեռանդության ղոհ ամբոխը դիմում է հետագա եղեռնագործությունների: Նա պատրաստ էր կատարելու մուֆթի բոլոր առաջադրանքները, կամքն ու պատգամը: Նրա ազդանշանի վրա երիցս «Սուլթան չո'գ յաչա» պոռալով՝ խուժանը հրդեհեց հայոց եկեղեցին ու դպրոցը, ապա մտավ մահվան դատապարտված հայերի օջախները: Սուրն ու հուրը սկսեցին ամեն բան լափել: Հայերից շատերը, ոճրագործների ձեռքը կենդանի չընկնելու համար, ինքնակամ նետվում էին բոցերի մեջ:

Փայթաջի՝ էռմեր անունով մի բորենի, կացինը ձեռքն առնելով, հռչատեց ու ջարդուփչուր արեց գետին ընկած 30-ից ավելի վիրավորների՝ բոլորի գլուխներն անջատելով մարմիններից³:

Ծնողներից արդեն զրկված փոքրիկները, այդ ահեղ տեսարաններից ու հրացանների որոտացող պայթյուններից չվարած, քարերի ու պատերի տակ սմքած նվաղել էին, ուրիշները սրտաճմրիկ կսկիծներով վազվզում էին այս ու այն կողմ՝ իրենց մայ-

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3836, 13 (26) մայիսի 1909 թ.:

² Նույն տեղում:

³ Փայթաջի - Կացնի (թուրքերեն՝ փայթա) գործի՝ սպանելու վարպետ:

⁴ Տե՛ս Գրիգոր Գ. Գուտուլյան, Հայ լեռ... էջ 43:

րերին փնտրելով: Շուտով փոքրիկներից որևէ մեկը կենդանի չմնաց¹:

Իսկ Բեռլին-Բաղդադ երկաթգծի կառուցման վրա աշխատող գերմանացիները հաճույքով դիտում էին հայ գյուղացիների կոտորածի քստմնելի տեսարանները²:

Ապրիլի 3-ի լույս 4-ի զիչերը շարունակվում է սպանողը:

Ապրիլի 4-ի առավոտյան ահուկ տեսարան էր բացվել գյուղաքաղաքի վրա: Բախչեն մոխրացել էր, միայն տեղ-տեղ մխում էին տակավին սևացած պատերով հայոց տները: Թուրքերն ու քրդերը հավաքում էին դիակները և նետում հայերին պատկանող ջրհորները:

Երբ սկսվել էր ջարդը, հայերից ոմանք փախել էին լեռները: Ապրիլի 6-ից սկսած՝ քրդերն ու թուրքերը խմբերով դուրս եկան մարդորսի՝ անտառում, քարերի խոռոչներում, թփուտների մացառների մեջ թաքնված և օրեր ի վեր սոված թշվառներին գտնելու և նրանց կյանքը խլելու համար:

Բախչեի ջարդի օրերին զուլումի ենթարկվեցին նաև հարևան հայկական բնակավայրերը:

Ոչ հեռու **Էնթիլի** 36 տուն ունեցող գյուղը մատնվեց թալանի, բնակիչներից սպանվեց 26 հոգի (22 տղամարդ և 4 կին):

Հարևան **Սայ-Քուռնու** գյուղի բնակիչները, մինչև ջարդարար խմբերի մոտենալը, կարողանում են փախչել՝ ճանապարհին մի քանի զոհ տալով: Թշնամին թալանում է գյուղը և հրդեհում բոլոր 17 տները:

Գեոք-Չայիր գյուղում բնակվում էին 15 տուն (114 հոգի) հայ և 30 տուն մահմեդական: Վերջիններս հարձակվում են հայ հարևանների վրա, նրանցից սպանում 15 հոգու, շատերին վերքեր պատճառում, ապա բոլոր կենդանի մնացածներին հեռացնում բնակավայրից:

Հարձակվելով 30 տուն ունեցող դուտ հայաբնակ **Գոյակ (Կոյակ)** գյուղի վրա՝ թուրքերն ու քրդերը սպանում են շուրջ 40 հոգու, կանանց ու աղջիկների մեծ մասին առևանգում: Ջարդից

¹ Տե՛ս **Գրիգոր Գուտուկեան**, Հայ լեռ... էջ 44:

² Տե՛ս նույն տեղում, էջ 42-43:

հրաչքով փրկվածները փախչում են լեռները, ուր մեծ մասն սպանվում է հետապնդողների կողմից կամ մեռնում սովից:

Ընդամենը 9 տուն ուներ հայաբնակ **Գրզալ** գյուղը, որի երկու կողմերի վրա բարձրանում էր Աղջա-ղաղ կոչվող լեռը: Դրա ստորոտում էր գտնվում 40 տուն ունեցող հարևան մի թուրքական գյուղ, որի բնակիչները, խմբեր կազմած, զիչերով հարձակվում են Գրզալի վրա, բնաջնջում մեծ ու փոքրին՝ տեր դատնալով նրանց ունեցվածքին³:

Չուտ հայաբնակ գյուղ էր Բախչեից ոչ հեռու **Ցանըք-Գեյիր-մենը**՝ ունենալով 25-30 բնտանիք: Այդ բնակավայրից երեք-չորս կիլոմետր հեռավորության վրա էր գտնվում 200 տուն ունեցող Բիլեյլիք-Գրյրգյար թուրքաբնակ գյուղը: Դրա բնակիչները, ապրիլի 4-ին միանալով զրացի մուսուլմանական գյուղերից եկած խուժանին, հարձակում գործեցին Ցանըք-Գեյիրմենի վրա, նախապես փակելով բոլոր ելքերը: Սրի քաշվեց ողջ բնակչությունը, իսկ գյուղը կողոպտվեց ու կրակի մատնվեց²:

Սառնրից ոչ հեռու **Գոյակ, Գեոք-Չայիր** և ուրիշ մի քանի փոքր գյուղերի վրա հարձակվողների մեջ էին շրջակայքի Թարաղյար, Գուչջու, Չոթլու, Փիրիջիքլի, Էյրեյլի, Գրմթլը, Ալուրոդլու, Յուգբումլու, Ղարխն, Ղարաչաղլը, Աղջա-Գոյուն և այլ գյուղերի թուրքերը, որոնք հայերի ջարդ իրականացրին: Աղջիկները, զեղանի կանաչք ու հարսները առևանգվեցին: Շատ քչերին հաջողվեց փախչել և ապաստանել Ֆնտրճագում³:

Բախչեից ոտքով կես ժամվա հեռավորության վրա էր գտնվում 10 տնից բաղկացած **Սարըլար** գյուղակը, որը գրեթե կպած էր Սավրանլը կոչվող թուրքական գյուղին: Կիլիկյան արհավիրքի օրերին բացառիկ ղեպք էր, որ հարևան գյուղի թուրքերն արիություն ունեցան փոքրամասնություն կազմող և իրենք իրենց պաշտպանելու հնարավորություն չունեցող սարըլարցի հայերին թևի տակ առնելու: Կարևոր չէ, թե սավրանլըցի թուր-

¹ **Գրիգոր Գուտուկեան**, Հայ լեռ... էջ 54:

² Տե՛ս նույն տեղում, էջ 55:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 56:

քերն ինչի՞ց զրդված նման ազնիվ մարդասիրություն զրսևորեցին՝ առաջնորդվելով խղճմտանքով, թե՛ հետազայում իրենց սպասվող հնարավոր փտանգներն ու շահերը նկատի առնելով: Կարևորն այն է, որ մարդկային կյանքեր փրկվեցին¹:

Բախչե գավառակի գյուղերից **Գուշուխ** (23 տուն) բնակիչների մի մասը կարողանում է փախչել ու ապաստանել Դեորթ-Յուլում, մնացածներն սպանվում են, և գյուղը դադարում է գոյություն ունենալ:

Իսլահիեի գավառակ:

Ջերեյ-Բերեքեթի սանջակի Իսլահիե գավառակում աղետի են ենթարկվում 5 գյուղ և 10 ազարակ:

Քիչնազ գյուղի 39 տուն (265 հոգի) բնակիչներից սպանվում է 40 մարդ, բոլոր տները կողոպտվում են, իսկ դրանցից 28-ը հրդեհի է մատնվում: Ոչ հետու գտնվող և 108 տուն ունեցող **Քեսնե** գյուղն ավերվում է հիմնահատակ, բնակիչներից սպանվում է 47 տղամարդ և 4 կին:

Գավառակի կենտրոն **Իսլահիե** գյուղի հայերը ժամանակին փախչում են սարերը և ազատվում: Գյուղի շրջակայքում գոյություն ունեին բազմաթիվ ազարակներ՝ յուրաքանչյուրը մի քանի տներով: Դրանցից էին՝ **Քյուրդ-Բախչեսի**, **Քյունեղներ**, **Աբիդին-Փաչա** և **Գուրֆալը** ազարակները, որոնք միասին ունեին 61 տուն: Սուժանը հարձակվում է, և որևէ զիմադրություն չի լինում: Սպանվում է 50 տղամարդ և 2 կին: Բոլոր շինությունները, կողոպտվելուց հետո, հրդեհի բաժին են դառնում: Նույն բախտին են արժանանում հարևան **Դաղ-օղլու-Մեհմեդ** և **Բոստանաղա**՝ ընդամենը 12 տուն ունեցող ազարակները, ուր սպանում են 4 տղամարդու և ոչնչացնում ազարակները:

Հակառակ Քիչնազ և Քեսնե գյուղերի, Իսլահիե գավառակի յուրաքանչյուրը 50 տուն ունեցող **Հաջի-Չավուչ** և **Քեզլերեն** գյուղերը խուժանին զիմադրում են հերոսարար: Այս գյուղերի հայերի խիղախ ու հանդուգն հարձակումները ուժգին տպավո-

րություն են թողնում շրջակայքի քրդերի վրա, որոնք հետագայում հիացմունքով պատմում էին նրանց քաջագործությունների մասին:

Նշված երկու գյուղերի շուրջը գտնվող **Գումարլու**, **Պալյան էֆենդի**, **Սարը-Մազ** ազարակներում կար մոտ 70 տուն, որոնցում ապրում էր շուրջ 400 բանվոր: Թուրքերը և քրդերը հարձակվում են ազարակների վրա ու կատարում սարսոեցուցիչ ոճրագործություններ. բանվորներին կախում են ծառերից, գնդակահարում, այրում կրակի բոցերում, մինչև անգամ խաչում կաթսաների մեջ: Ազատվել էր 150 հոգի, մնացած բոլորն սպանվել էին: Դավիթ էֆենդու՝ նշված ազարակներից որոշ հեռավորության վրա գտնվող 6 ազարակներում աշխատող 60 տեղացի և 70 եկվոր բոլոր բանվորներն սպանվեցին, իսկ ազարակները հրդեհվեցին:

Նույնպիսի խժոժություններով ու վայրագություններով ոչնչացվեցին նաև Բախչե ու Իսլահիե գավառակների բոլոր մյուս փոքր հայկական բնակավայրերը՝ **Գուրդլար**, **Գայփաք**, **Քեչլեր**, **Քյուրդ-Տալաղըն** և ուրիշ գյուղեր, որոնց բնակիչները կոտորվեցին կամ փախան, հրդեհվեց շուրջ 1300 տուն:

ԿՈՋԱՆԻ (ԳՈՋԱՆԻ) ՍԱՆՋԱԿ

Կոզանի գավառակ:

Այս գավառակի (նաև սանջակի) գլխավոր բնակավայրը **Սիս** քաղաքն էր, ուր գտնվում էին Կիլիկիո կաթողիկոսության Աթոռն ու մայրավանքը:

Սիսը հոռմեացիների տիրապետության ժամանակներում նրանց կարևոր հենակետերից մեկն էր եղել. պահպանված մի հսկա ամրոցի ավերակները այդ էին վկայում: Հետագայում քաղաքը կորցրել էր վաղեմի նշանակությունը և Կիլիկիայի երկրորդական քաղաքներից մեկը դարձել:

Հայերն արյունալի օրեր տեսան նաև Սիսում:

¹ Գրիգոր Գուտուպեան, Հայ լեռը... էջ 55:

Ջարդի նախօրյակին Միսն ուներ 3700 բնակիչ, որոնցից 700-ը մահմեդական էր¹: Բնակչության հիմնական զբաղմունքներն էին՝ երկրագործությունը, այգեգործությունը, մանր վաճառականությունը, արհեստները: Ստեղծարարի զգալի մասը վարձու աշխատողներ էին:

Աղանայի ղեկավարի յուրը ոտքի հանեց չրջակա մուսուլմանական գյուղերի բնակիչներին՝ շուրջ 8000 հոգու², որոնք մտադրվեցին իրենց չրջապատի հայ տարրն իսպառ բնաջնջել:

Միսի հայերի դեմ թուրքերի ապրիլի 2-ին սկսած հարձակումն օրեր տևեց:

Ամենազանգվածային հարձակումը տեղի ունեցավ ապրիլի 6-ին, երեք՝ հարավային, արևմտյան և հյուսիսային կողմերից: Հայոց խմբերի համառ դիմադրությունը չնորհիվ հրոսակները նահանջեցին: Հաջորդ օրվա նոր հարձակման ժամանակ հայ երիտասարդները ձեռնամարտի դիմեցին, որին չդիմանալով, հակառակորդը դարձյալ բռնեց փախուստի ճանապարհը³:

Միսի պաշտպաններից պարտություն կրած թուրքերը հարձակվեցին չրջակա մեծ ու փոքր մոտ 20 հայկական գյուղերի վրա, կողոպուտի ու հրդեհի մատնեցին, բազմաթիվ ազարակներ կրակի բոցերում մոխրացրին: Դրանցից էին **Թլան** (15 տուն), **Ուճաֆիկ-էորա** (40), **Թեքիրչե** (17), **Սալը Փունար** (10), **Աղզամ** (30), **Ցավը էֆենդի** (5), **Վերին Չոքաբլի** (40), **Ներքին Չոքաբլի** (60), **Ալափունար** (45 տուն) գյուղերն ու ազարակները⁴:

Թշնամու գրոհները հետ մղելուն զուգընթաց Միսում տենդագին աշխատանք էր տարվում սովի առաջն առնելու համար: Հատկապես կարևորություն էր ստացել կերակրելը քաղաք խուժած հազարավոր փախստականներին, որոնք օրեր շարունակ հացի երես չէին տեսել: Այդ գործում չափազանց մեծ եղավ կանանց դերը. նրանք նվիրումով ու անձնվիրությամբ գիշեր ու

¹ Տե՛ս «Հորիզոն», № 72, 1 ապրիլի 1910 թ.:

² Տե՛ս **Հրաչեայ Աճառեան**, *Տաճկահայոց հարցի պատմությունը* (սկզբից մինչև 1915 թ.), էջ 59:

³ Տե՛ս «Բիւղանդիոն», № 3836, 13 (26) մայիսի 1909 թ.:

⁴ Տե՛ս նույն տեղում:

ցերեկ աշխատում էին, կերակուրներ պատրաստում և հազարավոր սովյալների բաշխում: Նրանց էր վստահված նաև բազմաթիվ հիվանդներին ու վիրավորներին խնամելը:

Միսի ինքնապաշտպանությունից ժամանակ այնտեղ էր գտնվում Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսը, որը մեծ դեր ունեցավ այդ ճակատագրական օրերին: Նրա հրամանով բացվեցին վանքի ամբարները և այնտեղ եղած ամբողջ հացահատիկն ու մյուս մթերքները բաժանվեցին սովահարներին ու քաղաքի պաշտպաններին: Նա լինում էր կովի առաջին գծում, իր հորդորներով ու խրատներով ոգեշնչում մարդկանց, որոնք նրան երդում էին տալիս մինչև վերջին հնարավորությունը դիմադրել թշնամուն:

Ինքնապաշտպանությունից օրերին արտակարգ խիզախություն դրսևորեց Կիլիկիո Աթոռի միաբաններից Ղևոնդ ծ. վարդապետ Թուրսարգիսյանը: Երիտասարդ հոգևորականը միշտ կովի առաջին գծում էր, նրան դժվար էր դատել ակամա մարտիկներից: Ստացած վերքերից նա երկար ժամանակ գամվեց անկողնուն և մահացավ 1910 թ. հուլիսին՝ Կ. Պոլսի ս. Փրկիչ ազգային հիվանդանոցում:

Միսի հայ բնակչությունը համեմատաբար քիչ կորուստներով դուրս եկավ ինքնապաշտպանական կովից: Դրա պատճառներից մեկն այն էր, որ քաղաքի հայերի համեմատությունը մահմեդականների թիվը մեծապես փոքր էր, որի պատճառով վերջիններս երկյուղում էին չմտածված քայլերի դիմել: Ավելին, երբ Միսի չրջակայքում նոր էր սկսվել հայերի ջարդը, քաղաքի թուրք երեւելիները նույնպես իրենց ստորագրությունները դրեցին հայերի կազմած և գավառապետին ուղղված զրավոր դիմումի տակ: Այդ դիմումով նրանք պահանջում էին ձեռք առնել հարկ եղած միջոցները իրենց կյանքն ու գույքը պաշտպանելու համար, և դրան հասնելու միակ գործնական հնարքը տեսնում էին այն բանում, որ գավառի իշխանությունները զինեն բոյորին՝ առանց ազգային խտրականությունից, որպեսզի կարելի լինի քաղաքում եղած փոքրաթիվ զորամասի հետ պաշտպանվել բազմաքանակ բաշխողուկներից: Պատահական չէ, որ երբ հրոսակները չրջապատել էին Միսը, զորամասը բռնել էր զիրքերի

մի մասը, իսկ հայ և թուրք քաղաքացիները՝ մյուս¹:

Միսում ի հայտ եկած այդ երևույթը բոլորովին եզակի էր ամբողջ Կիլիկիայի, գուցե և ողջ Թուրքիայի համար:

Միսում և չրջակայքում հայերը տվել էին հետևյալ կորուստները. Միսում սպանվել էր 200 հոգի, որից 28-ը՝ տեղացիներ, մնացածը՝ զրսից եկած բանվորներ կամ գյուղերից փախած գյուղացիներ: Շրջակայքում սպանվել էր մոտ 700 մարդ²:

Միսի կաթողիկոսությունը նյութական մեծ կորուստներ էր կրել: Վանքի եկամտի գլխավոր աղբյուրը Թլանի ագարակն էր, որի գործավոր-մշակներին սրախողխող անկույց գատ ավարա-ոտները քչել-տարել էին կովերն ու գոմեշները, ապա հրդեհել շինությունները: Այլևս եկամուտ չունենալով պահելու վանքի ժառանգավորաց դպրոցը, Սահակ կաթողիկոսը փակեց այն և արձակեց ուսանողներին³:

Կողանի գավառակում, Հաճրնից հյուսիս, Միհուն գետի ակունքների շրջանում էր գտնվում խառը բնակչությամբ (70 տուն հայեր, 30 տուն մահմեդականներ) **Ռումլու** գյուղը: Հաճրնի ղեպքերի օրերին գյուղի մուղիբը հեռանում է: Հաջորդ օրը՝ ապրիլի 5-ին, մահմեդականները հարձակումներ են սկսում հայերի տների վրա: Նրանց միանում են զրսից եկած թուրքերը: Սկսվում է ջարդը: Հայերը դիմադրություն ցույց չեն տալիս: Կոտորածի ժամանակ զորքը նույնպես անմասն չի մնում, իսկ ուղիքները, դինված կառավարական ղեկերով, կողոպուտի ու կոտորածի ժամանակ առաջնորդում են խուժանին: Տալով 25 զոհ՝ մնացած գյուղացիները փախչում են Հաճրն: Գյուղի բոլոր հայերի տները կողոպտվում և այրվում են:

Նույն գավառակի 28 տուն հայ բնակչությամբ **Ռաստրխան** գյուղը նույնպես նման բախտ է ունենում, այն տարբերությամբ, որ այստեղի բոլոր հայերը կարողանում են ժամանակին փախչել

և ապաստան գտնել հարևան չերքեղական գյուղում: Չերքեղ-ները նրանց տեղավորում են, մի քանի օր կերակրում, հետո հանձնում պատկան մարմիններին: Ռաստրխանը ավերակվում է և դաղարում գոյություն ունենայ:

Հաճրնի գավառակ:

Կիլիկիայի ամենահայաչառ բնակավայրը Կողանի սանջակի Հաճրն գավառակի կենտրոն **Հաճրն** (հին **Հարգա**) քաղաքն էր:

Կիլիկիայի Ռուբինյան թագավորության օրերից գոյություն ունեցող Հաճրնը գտնվում էր Ադանայից 100 վերստ դեպի հյուսիս: Ջարդի նախօրերին քաղաքում հաշվվում էր 5000 տուն, որից միայն 60-ն էր մահմեդական¹: Հայ բնակչությունը առաքելական էր, ավետարանական և կաթոլիկ: Հայերի հիմնական դրաղմունքը բազմազան արհեստներն էին: Հաճրնցի հայ վարպետների հոշակը վաղուց դուրս էր եկել Կիլիկիայի սահմաններից շատ հեռու²:

Չնայած քաղաքը չրջապատված էր խաղողի այգիներով և թավուտ անտառներով, բայց հաճրնցին ստիպված էր աշխատանք որոնել Ադանայի և Հայկաի նահանգների գանաղան տեղերում, քանի որ ո՛չ անտառային գործը և ո՛չ էլ արհեստներով զբաղվելը չէին թեթևացնում նրա բնտանիքի հոգսերը: 19-րդ դարի 70-90-ական թվականներին հաճրնցի հայերից խլած բերքատու հողերի վրա հիմնվել էին չերքեղական գյուղեր, և Հաճրնի չափահաս արական բնակչության 3/4-ը ստիպված էր գնալ օտարություն՝ չրջակայքի գավառներում բանեցնելով իր արհեստները կամ զբաղվելով բանվորությամբ:

Ապրիլի 4-ին Հաճրնն արդեն չրջապատված էր բաշիրոզուկներով, որոնց թիվը մի քանի հազարի էր հասնում:

Նախորդ օրերին քաղաքի իսլամները թողել էին իրենց տները և ապաստան գտել մոտակա թուրքական գյուղերում: Հաճրնի առաջնորդ Ներսես ծ. վարդապետ Դանիելյանը հրաման էր ար-

¹ Տե՛ս «Հորիզոն», № 54, 11 մարտի 1910 թ.:

² Տե՛ս նույն տեղում, № 72, 1 ապրիլի 1910 թ.:

³ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3836, 13 (26) մայիսի 1909 թ.:

¹ Տե՛ս «Արարատ», № 5-6, մայիս-հունիս, 1909, էջ 527:

² Տե՛ս **Ցակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 232-ի սողատակը:

ձակել վնաս չտալ ոչ մի իսլամի կյանքին ու գույքին: Չնայած դրան, քաղաքից դուրս, իսլամների շրջանում լուր-գրպարտութիւններ էին տարածվել, թե Հաճընի հայերը կրակի են մատնել քաղաքի մղկիթը, կառավարչութիւն չենք, թուրքարնակ թաղը, որտեղ մնացած արու բնակիչներին բնաջնջել են, իսկ կանանց ու աղջիկներին մերկացնելով՝ պատեցնում են փողոցներով, ծաղր ու ծանակի ենթարկում և այլն:

Պարզ էր արդեն, որ ծանր օրեր են սպասվում: Վտանգն օրրատօրն սաստկանալու վրա էր: Հայերը որսի հրացաններից զատ ուրիշ զենք չուներին:

Առաքելական և այլադավան հայերի միջև Հաճընը միշտ եղել է կրօնական անհանդուրժողականութիւն ու ներքին երկպառակութիւնների վայր: Չնայած դրան, հաճընցիները միասնաբար դիմավորեցին թշնամուն՝ մոռացած ներքին հակառակութիւնները:

Ապրիլի 5-ի հարձակումը հետ մղվեց: Ապրիլի 7-ին տազնապար կրկին ուժեղացավ, որի պատճառով հայերի կրօնական առաջնորդը նամակով դիմեց սանջակի բինբաշուն (հաղարապետ), որ գա և քաղաքը պաշտպանի, բայց սա բանտարկել է տալիս նամակը բերողներին, որոնք համարձակվել էին այդպիսի խնդրանքով դիմել իրեն: Հայերը նոր կովի պատրաստվեցին¹:

Հաճընից հեռացած թուրքերը, որոնց միացել էին շրջակայքի բազմաթիվ գյուղերի հաղարավոր իսլամներ, հարձակման անցան: Ամեն կողմից հրազենների գնդակները կարկուտի պես տեղում էին հայ պաշտպանների վրա:

Այդ նույն ժամանակ Հաճընում մնացած 60 տուն թուրքերին առաջնորդը վերցրել էր իր հայրական հովանավորութիւն տակ՝ երկյուղ կրելով, թե միզուցն դայրացած բոպեին հայերը կմոռանան իրենց դրացիական պարտականութիւնները և կկոտորեն բոլորին:

Պաշարչայ վիճակում արտակարգ մարդկայնութիւն հանդես բերեց ամերիկացի անձնավեր միսիոներ օրիորդ Ռոզ Լամբերթը, որն ամենախիստ տոնով հեռագրեր հղեց Մերսինի բրիտանական հյուպատոսին՝ պահանջելով շտապ միջոցներ ձեռնարկել փրկելու Հաճընի հայերին^{*}:

Հայերը հերոսաբար շարունակում էին ինքնապաշտպանութիւնը մինչև ապրիլի 13-ը: Ապրիլի 15-ին, վերջապես, կառավարական մի զորամաս Լուիթֆի բեյի հրամանատարութիւնով հասավ Հաճընից վերև ս. Սարգիս լեռան ստորոտը:

Տասներկու օր մի քանի հազար դինված թուրքերի դեմ քաջարար կովելու շնորհիվ Հաճընի հայութիւնը զերծ մնաց ջարդից:

Չնայած դրան, Կիլիկիայի ջարդերի օրերին ամենից մեծ կորուստներ կրողների մեջ էին հաճընցիները: Կոտորածի վայրերում չուներնալով մնալուն կայաններ, Կիլիկիայի տարրեր վայրերում սպանվեցին արտագնա աշխատանքներ կատարող 1600 հաճընցիներ¹:

Հաճընի մոտ գտնվող հայկական **Շար** փոքր գյուղը ապրիլի 3-ին շրջակա թուրքարնակ և քրդարնակ գյուղերի բնակիչների հարձակմանը ենթարկվեց: Հայերը, որոնց զինանոցը բաղկացած էր 8-10 որսորդական հրացանից և 4-5 ատրճանակից, որոշեցին մինչև վերջ դիմադրել: Մի քանի ժամ տևած կովում փամփուշտներն սպառվեցին: Գյուղացիները ձեռքն առան կացինը, տապալր, երկաթն և փայտյա ձողերը՝ վերջին մարտը տալու հրոսակներին: Նրանց համար միանգամայն անսպասելի փոխվեց իրադրութիւն ընթացքը. հարևան չերքեղական գյուղը ձեռք

^{*} Ռոզ Լամբերթը ոչ միայն հայերին անմոռանալի ծառայութիւններ մատուցեց Հաճընի պաշարման ժամանակ, այլև բազմաթիվ հայ երկսեռ որրերի երկար տարիներ կատարչայ գուրգուրանքով խնամեց: Ամերիկա վերադառնալով՝ նա հրատարակեց «Հաճըն և հայկական կոտորածները» («Hadjin and the Armenian Massacres») գրքույկը՝ կիլիկյան ջարդի, մանավանդ Հաճընի պաշարման ու ինքնապաշտպանութիւն համատար նկարագրութիւնը:

¹ **Զապէլ Եսայեան**, Աւերակներուն մէջ, էջ 150-151:

¹ Տե՛ս «Հորիզոն», № 55, 12 մարտի 1910 թ.:

մեկնեց հայերին: Նրա մի քանի տասնյակ տղամարդիկ, չերքեզ Ասյան բեյի գլխավորությամբ, օգնության եկան Շարին: Նրանք ջարդարարներին ստիպեցին թողնել գյուղի պաշարումը՝ սպառնալով այնպես կրակի տակ առնել նրանց: Չերքեզները փրկեցին հայերին:

Միայն արևելյա գտնվող թուրքարենակ **Կարս-Քազար (Գարս-Քազար, Ղարս-Քազար)** գյուղաքաղաքում բնակվում էր շուրջ 1000 հայ, որոնց մեծ մասը հաճրնցի ու մարաչցի էր: Քանի որ կլիման վատ էր, ուստի նրանք միայն ձմռանն էին մնում այդտեղ, իսկ գարնան կեսերից վերադառնում էին իրենց գյուղերը և մնում մինչև աշնան կեսերը:

Կարս-Քազարն այն բնակավայրերից էր, որի հայ բնակչությունը գետնաքարոշ սարսափով անձնատուր չեղավ ոճրագործներին, այլ խիղախարար ծառայած թշնամու դեմ՝ իր պատիվն ու կյանքը պաշտպանելով: Կարս-Քազարի ինքնապաշտպանության մարտիկները, չնայած իրենց փոքր թվին և ունեցած զենքի ու դինամիթերի սահմանափակ լինելուն, գործեցին այն հրաշքներից մեկը, որ պարծանքով կարող ենք արձանագրել կիլիկյան ջարդի սև օրերի ցավագին պատմության էջերից մեկում:

Ապրիլի 2-ի վաղ առավոտյան Ջին* Թորոս անունով մի հայ գալիս է Կարս-Քազար և իմաց է տալիս, որ 2000-ի չափ թուրքեր, ղինված «Մարթին» հրացաններով, շուտով հարձակում են գործելու գյուղի վրա:

Ո՞վ էր այդ մարդը: Նա ոստիկան էր: Տեսնելով, որ իր գործընկեր թուրք ոստիկանները պատրաստություն են տեսնում զրավելու Կարս-Քազարը, Ջին Թորոսը փախչում և չնչասպառ հասնում է այնտեղ: Դեպքի ամբողջ տեղությունը ընթացքում նա մնում է Կարս-Քազարում: Ստանձնելով ինքնապաշտպանության բնդհանուր ղեկավարությունը՝ նա մեծ հմտությամբ կազ-

մակերպում է զինադրույթյան գործը: Անմիջապես ոտքի է հանում բոլոր հայերին, նրանցից շուրջ 200 հոգու կենտրոնացնում դպրոցի և քար ու կրով կառուցված մյուս շենքերում: Այդ շինություններում տեղավորվում են հիվանդներն ու երեխաները, ինչպես նաև չրջակա գյուղերից փախած 600 հայ բնտանիքներ: Նրա ցուցումով՝ տեղի հայ վաճառականներն իրենց պահեստներից մեջտեղ են բերում ուտեստեղեն: Հացամթերքն ու մյուս ուտեստները խնայողաբար օգտագործելու համար խիստ վերահսկողություն է սահմանվում: Այդ ամենից դատ, Ջին Թորոսը հանդես է բերում անձնական անվահեր քաջություն: «Սանդաղատանք է լայու պատրաստ են ամէնքը», - գրել է Ջապել Եսայանը: - Երէկուան աննչան ոստիկանը, թերեւս հոգիով ու մարմինով թրքացած հայր յանկարծ կ'արթննայ իր ազգային ցաւին մէջ, ու իրենց նախախնամութիւնը կը դառնայ»:

Թուրքերը հարձակվում են և սկսվում է ինքնապաշտպանական կռիվը: 4000 հայերն, բնդամենը 26 «Մարթին» և մի քանի տասնյակ որսորդական հրացան ունենին: Կար նաև 4 թիթեղյա տուփ վառոդ, որը կռվի ժամանակ մեծ դեր ունեցավ. պաշտպանները հրացանների դատարկ պարկուճները կրկին լցնում էին կապար ու վառոդ և կրակում: Դա հնարավորություն տվեց երկար զինադրել:

Ոճրախմբերի առաջին հարձակումն իսկ զենք բռնելու բնդունակ բոլոր տղամարդկանց համառ զինադրույթյան է հանդիպում: Թշնամին հետ է մղվում նկատելի կորուստներով: Այդ օրը հակառակորդի երկրորդ հարձակումը նույնպես անհաջողության է մատնվում:

Հայերի համար բարերախտ այդ բնթացքի գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ Կարս-Քազարի թուրքերը չմիացան հարձակվող զրոսեցի իրենց ազգակիցներին: Դա նույնպես Կիլիկիայի ողբերգական օրերի բացառիկ, գրեթե եզակի, զրվագնեցից մեկն էր:

¹ Այդ մասին տե՛ս Արշակուհի Թէոդիկ, Ամիս մը ի Կիլիկիա, էջ 146-147:
^{*} «Ջին» բառացի նշանակում է՝ աներևույթ ոգի, փոխարևարար՝ հազվագյուտորեն քաջ, անվախ:

^{*} Կարսազարցի հայերը:
¹ Ջապել Եսայան, Աւերակներուն մէջ, էջ 160-161:

Հաջորդ օրվա՝ ապրիլի 3-ի առավոտյան աղոթքից հետո «Մուհամմեդն սալավաթ» աղաղակներով թուրքերը խուժում են Հայոց թաղերից ներս, թալանում բոլոր տներն ու խանութները, ապա 60 տուն ու 100 խրճիթ կրակի մատնում: Դրանից հետո նրանք հարձակվում են ժողովրդի վրա: Զին թորոսը կարգադրում է համբերել և կրակով չպատասխանել, մինչև որ խուժանք որոշ հեռավորության վրա կխոնկի այն շենքերի շուրջ, որոնցում պատսպարված են Հայերը: Թշնամին մի քանի անգամ փորձ է անում հրդեհի մատնել պատսպարված ժողովրդին, բայց չի հաջողվում, որովհետև հայ հմուտ նշանադրները նրանց չեն թողնում շենքերին մոտենալ: Հրոսակների համբերությունն ի վերջո հատնում է, և նրանք դանգվածային հարձակման են անցնում ամրացված տների վրա: Հայերը նրանց դիմավորում են փոթորկալի կրակով: Թշնամին հետ է չարտվում՝ անիծելով Զին թորոսին, որ ի դերև էր հանել իրենց չար խորհուրդը:

Այդ հաղթանակից հետո Հայերը փակված մնացին ամրացված շենքերում, մինչև որ Միսից տեղ է հասնում հիսնապետ Հյուսնիի գլխավորած և 40-50 զինվորից բաղկացած ջոկատը: Տեղի թուրք երեկիներից Մուսա աղան և Վելի էֆենդին միանում են կառավարական ղորամասին, որը օրվա վերջին կարողանում է ցրել խուժանին: Պաշարված Հայերը զինվորների պաշտպանության ներքո դուրս են գալիս շենքերից, իսկ շրջակա գյուղերից Կարս-Քաղարում ապաստանած բոլոր Հայ գյուղացիները վերադառնում են իրենց բնակավայրերը:

Բայց ուրախությունը երկար չի տևում, քանի որ պարզվում է, որ դրսում գտնվող տասնյակ կարսբաղարցի հայեր սպանվել են: «Հաղիս թէ մեր սիրտերը կը բարախէին յաղթանակի երջանկութիւնով, երբ ցաւի ու լացի աղաղակներ բարձրացան, - այդ պահի հայ կանանց հոգեկան տառապանքի մասին պատմել է ինքնապաշտպանության մարտիկներից մեկը: - Զուակներն կորսնցուցած մայրեր մազերնին կը փետուրտէին ու մեզի դէմ կը սրտմտէին, թէ ինչու թոյլ չտուինք որ մէկ գիշերուան մէջ իրենք ալ մեռած ըլլային ու աչքերնին չբացուէր այլևս

այս սեւ աշխարհին վրայ»¹:

Ահա այսպես Կարս-Քաղարի հայությունն աղատվեց ստույգ կոտորածից՝ շնորհիվ Զին թորոսի անձնական քաջության ու հմուտ ղեկավարության և ինքնապաշտպանության մարտիկների անվահերության:

Շար-Դերեսի հայկական գյուղը, որն ուներ 130 տուն (որից 74-ը պատկանում էր Հայ ավետարանականներին), ապրիլի 7-ին շրջապատում են թուրքերը: Բնակիչները համառորեն դիմադրում են, տալիս 34 զոհ, այրվում են 77 տուն և համարյա բոլոր խանութները, կործանվում է Հայ առաքելական եկեղեցին:

Սառը բնակչությամբ **Երև-Քախան** գյուղն ուներ Հայերին պատկանող 130 տուն (որից 40-ը ավետարանական էին): Թեև Երև-Քախանի վրա եկած ոճրագործների հարձակումը հաջողվում է կանգնեցնել բանակցությունների միջոցով, բայց, այնուամենայնիվ, սրանք մինչ այդ արդեն հասցրել էին գյուղի ծայրամասում 14 հոգու սպանել:

Կարսի գավառակի ամենաաղքատ գյուղերից մեկը **Կալե-Դերեսին** էր, որը փրկվեց հարևան Երև-Քախան գյուղի թուրքերի օգնությամբ, որոնք կանգնում են խուժանի ճանապարհին:

Ֆեքեի գավառակ:

Ռուբինյանների ժամանակից մնացած Վահկա ամրոցի հարակից տարածքում էր գավառի կենտրոն **Ֆեքե (Վահկա)** գյուղը: Ընդամենն ուներ 203 տուն, որից 178-ը պատկանում էր Հայերին: Ավարառուներին չի հաջողվում մտնել գյուղ, որովհետև տեղի գայմազամբ արզելյ է հարուցում նրանց ճանապարհին, բայց գյուղից դուրս հասցնում են 10 հոգու սպանել:

Գուլթազլին սարսափելի վերջ է ունենում: Թուրքերը խուժում են գյուղ և կոտորում բնակիչներին, նույնիսկ մի հոգի մահից չի փրկվում:

Կարսից 35 կիլոմետր հեռու գտնվող **Մյուրֆետ** գյուղի 32 տուն ունեցող հայությունը ստիպված էր դիմակայել 4-5 հազար ավարառուների գրոհին: Բարեբախտաբար, Մյուրֆետի թուր-

¹ Զապէլ Եսայան, Աւերակներուն մէջ, էջ 158-159:

քերք չեղոք մնացին և թիկունքից չէին խփում հայերին: Ավելին, գյուղը բացարձակ կործանումից փրկեց համազյուղացի Հուսեին Էֆենդու որդի Մահմուդ խոջան, որն իր կողմնակիցներով պաշտպան կանգնեց հայերին և դրսից եկած ջարդարարներին հանեց գյուղից¹:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ԶԱՐԴԵՐԸ ՀԱԼԵՊԻ ՎԻԼԱՅԵԹՈՒՄ

Թեև Կիլիկիայի աղետը ծանոթ է իրրև Ադանայի ջարդ, բայց նրան զոհ գնացին նաև Հայեպի վիլայեթի շատ քաղաքների ու գյուղերի հայեր՝ տալով անձի և ինչքի մեծ կորուստներ:

Արդեն նշել ենք, որ Կիլիկիայի մյուս՝ Հայեպի վիլայեթը ուներ երեք սանջակ (գավառ)՝ Հայեպի, Ուրֆայի և Մարաշի:

ՄԱՐԱՇԻ ՍԱՆՋԱԿ

Սանջակի կենտրոնը Մարաշ քաղաքն էր, որը նաև նույնանուն գավառի կենտրոնն էր: Ենթադրվում է, որ նա հնագույն Գերմանիկ քաղաքն է: Մարաշ քաղաքը աղետի օրերին 50-55 հազար բնակիչ ուներ: Քաղաքացիներից մոտավորապես 20 հազարը հայեր էին, մեծ մասը՝ առաքելական:

Ադանայի կոտորածների յուրև առած Մարաշի թուրք պաշտոնյաները հայերին և մյուս քրիստոնյաներին չէին վարանում ազդարարել, թե նրանց կոտորելու հրամանն արդեն տրված է, և խնդիրը միայն այն է, թե ինչպես պետք է մեռնեն գյավուրները¹:

Մարաշի հայերը ապրիլի 5-ին տեղեկացան, որ քաղաքի մահմեդականներն ավարտել են նախապատրաստությունները և ժամեր անց հարձակվելու են քրիստոնեական թաղերի վրա: Լուրերից սարսափած՝ նրանք փակվեցին իրենց տներում:

Խուճապի պահին քաղաքի Չարչը-Բաչը և Սերայ-Ալթը

¹ Տե՛ս Զապէլ Եսայեան, Աւերակներուն մէջ, էջ 175-176:

¹ Տե՛ս Յակոբ Յ. Քէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 276:

չուկաների արհեստանոցներում աշխատող երկաթագործ և ուրիշ արհեստներով զբաղվող մուսուլմանները հարձակվեցին փախչող հայերի վրա, սպանեցին նրանցից 9-ին, իսկ 19 հոգի վիրավորվեց, որոնցից մի քանիսը շուտով մեռան:

Բարերախտարար, հաջողվեց խոտվարարական հետագա խլրտումների առաջն առնել: Մարաշի թուրք երեկիներին Բա-յադիղ դաղև Գաղրի փաշան պաշտոնատուն գնալով՝ պահանջեց կարգը վերականգնելու խիստ միջոցներ ձեռնարկել: Բացի այդ, լուր տարածվեց, թե ղեկթունցի քաջագուն հայերը որոշել են գալ քաղաքի վրա՝ եթե թուրքերն ու քրդերը փորձ անեն կոտորելու մարաշցի հայերին: Այդ երկու հանգամանքներն իրենց ազդեցությունն ունեցան, և խուժանը զսպվեց, թեև հասցրեց քաղաքի այլևայլ մասերում 18 հայի սպանել:

Մարաշ քաղաքում սկսված տագնապների օրերին խլրտումներ սկսվեցին նաև Մարաշի գավառում:

Այս գավառում առաջին գոհերը եղան այն քրիստոնյաները, որոնք, քարավան կաղամած, Մարաշից Աղանա էին գնում: Երբ քարավանն անցնում էր Մարաշին սահմանակից Բախչև գավառակի տարածքով, չրջակա թուրքերը հարձակում գործեցին: Ճամփորդներից ոմանք սպանվեցին, ուրիշները, հարձակվողների ձեռքից փախչելով, ապրիլի 3-ին հասան Մարաշ:

Այդ նույն պահին թուրքերն ու քրդերը արդեն հարձակումներ էին սկսել Մարաշի չրջանի հայաբնակ գյուղերի վրա:

Առաջինը տուժեցին Սարըլար և Գեոք-Ջեիզ գյուղերը: **Սարըլարում** սրի քաշվեցին 15 տարեկանից բարձր բոլոր տղամարդիկ, իսկ կանայք ու երեխաները բաժանվեցին քրդերի միջև: **Գեոք-Ջեիզում** նույնպես բոլոր տղամարդիկ սպանվեցին:

Լայնածավալ արյունահեղություն ղիմեցին էլ-օղլու-Չազալլը գյուղի թուրքերը: Նրանք նախ սպանեցին Աղանա գնալու ճանապարհին գյուղում գիշերած 34 խարրերից հայ վաճառականներին, ապա զանազան չրջաններից այնտեղ գտնվող և օրավարձով աշխատող 200-ից ավելի բանվորների սրի քաշեցին¹:

Նույն թուրքական գյուղի ղիմված խուժանը, որի թվում քիչ չէին կանայք, հարձակում գործեց մերձակա Քեչիֆլի, Չազր-օղլու, Ֆնտրճագ և Դերև-Քեոյ հայաբնակ գյուղերի վրա:

Քեչիֆլի գյուղի վրա հարձակվելով՝ թուրքերն սպանում են 7 հոգու և շատերին վիրավորում: Դա տեսնելով՝ հայերը լցվում են եկեղեցի և պատրաստվում ինքնապաշտպանություն, բայց, բարերախտարար, ջարդարարները ցրվում են և պատսպարվածները կոտորածի արհավիրքից ազատվում են, թեև 70 տուն թալանվում ու հրդեհվում է:

Մարաշի գավառի ամենամեծ հայ գյուղը **Ֆնտրճագն** էր, որը գտնվում էր Մարաշ քաղաքից 22 կմ վրա, ուներ 400 տուն՝ 2500 բնակչություն: Ապրիլի 4-ի առավոտյան՝ հրոսակախմբերը սկզբում գյուղ մտնելու համարձակություն չեն ունենում, բայց ապրիլի 5-ին, այնուամենայնիվ, հարձակում են գործում: Գյուղացիներն անմիջապես գրավում են դիրքեր և հետ մղում խուժանի մի քանի զրոհները: Ֆնտրճագը կորուստներ չի տալիս, իսկ թշնամին, գյուղի մոտերքում թողնելով բավականաչափ դիակներ, գնում չրջապատում է Չազր-օղլու գյուղը:

Թեև հաղթական, բայց սովահար ու թշվառություն մատնված ֆնտրճագցի հայերը, հարարերական խաղաղություն հաստատվելուց հետո թափվում են Մարաշ՝ պահպանելու համար իրենց գոյությունը:

Ընդամենը 32 տուն ունեցող **Չազր-օղլուի (Չազրլար)** վրա հարձակվելով՝ թուրքերը և քրդերը մի քանի հոգու սպանում են, բայց մնացածներին հաջողվում է լքել գյուղը և ապաստան գտնել Ֆնտրճագում: Հրոսակները բոլոր տները կողոպտում և կրակի են մատնում¹:

Չարդից լիակատար դուրս մնաց քաջ ու հպարտ **Ջեյթունը** (Ուլնիա)՝ իր 12 հայաբնակ գյուղերով: Այստեղ արյուն չհոսեց և նա ոչ էլ հարկադրված էր ղիմելու ինքնապաշտպանություն: Ջեյթունցի անուր բավական եղավ սարսափ ազդելու չրջապատի ավազակարար խառնամբոխի վրա:

¹ Տե՛ս «Հորիզոն», № 72, 1 ապրիլի 1910 թ.:

¹ Տե՛ս **Ցակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 262-264:

Զեյթունը կազմում էր Հայկալի վիլայեթի Մարաշ սանջակի չորս կադաներից մեկը: Զեյթուն ավանը և Մարաշը, իբրև Հայա-չատ երկու կարևոր կենտրոններ, իրար հետ կապված էին մոտ դրացիությունը ու քաղաքական ղեկավարում: Կարծում են, որ «Զեյթուն» տեղանունը առաջ է եկել արաբերենից թուրքերենին անցած ղեյթուն (ձիթենի, ձիթապտուղ) բառից, քանի որ կիլիկիայի այդ մասում ձիթենիների մեծ տարածքներ կան:

Երբ Ռուսիայանների հաստատած թագավորությունը կործանվեց, և Կիլիկիան թուրքերի լծի տակ ընկավ վերջնականապես, ազատարար չհայերը, որոնք չէին համակերպվում նոր իրավիճակին, իրենց բնակավայրերից հեռանալով՝ ապաստանեցին Զեյթունի բարձրաբերձ ու անառիկ բնական ամրություններում՝ ամուր կպած Տավրոսի կրճրին:

Կիլիկիայի հայկական թագավորության ժամանակներից մնացած այդ բնկորը երկար ժամանակ ապրում էր ինքնիշխան ու ազատ՝ իր ուրույն սովորություններով և օրենքներով:

Զեյթունցիներն նահապետական ու բարոյական մի չարքաշ ժողովուրդ էր, պարզ կենցաղավարություն ունեւր, ապրում էր համախումբ կյանքով, բավարարվում քչով, քանզի իր արդար հացը վաստակում էր զառը քրտինքով՝ դրազվելով այգեգործությունը, ջորեպանությունը, կոշկակարությունը, համետագործությունը, ատաղձագործությունը, դարբնությունը, զինագործությունը¹: Զեյթունցու ըմբոստանալու և կովելու ոգին նրան դարձրել էր վառող պատրաստելու փնտրված վարպետ, նրա պատրաստած վառողը մրցում էր անզամ անզլիական ամենամաքուր վառողի հետ²:

Զեյթուն ավանի և զավառակի բոլոր հայերը, չնչին բացառություններով, պատկանում էին Հայ առաքելական եկեղեցուն³:

¹ Տե՛ս Մամիկոն Վարժապետեան, Յուշիկք Զեյթունի, Մարզուան, 1912, էջ 13:

² Տե՛ս «Արև» (Կահիրե), 13 մարտի 1936 թ.:

³ Տե՛ս Գրիգոր Հ. Գալուստեան (Կիլիկեցի), Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու Յորք, 1934, էջ 96:

Բնական ամրություններով պատնեչված, ժայռերի վրա հիմնված Զեյթունի տները, ամֆիթատրոնի նման իրար վրա շարված, բարձրանում էին վեր՝ քառակուսի ձև տալով բնակավայրին:

Ավանը բաժանված էր չորս թաղի՝ արևելյան կողմում Շովրոյան (կամ Պողպայիր), հարավային կողմում՝ Յաղուրյան (կամ Գարկուր), հյուսիսային մասում՝ Յենի-Գունիա (կամ Վերի), այս երեք թաղերի մեջտեղում՝ Սուրենյան (կամ Միջին): Թաղերից ամեն մեկն ուներ իր թաղագլուխը: Սրանք նաև անվանվում էին իշխաններ, որոնք ավանդույթի համաձայն որդվոց որդի հաջորդում էին միմյանց¹:

Թաղերն ունեին սահմաններ և բոլորովին անկախ էին իրարից: Յուրաքանչյուր թաղի ժողովուրդը և զավառակի՝ թաղին պատկանող գյուղերի բնակիչները առավելապես ակնածում էին իրենց իշխաններից. մյուս թաղերի իշխանների խոսքը նրանց համար պարտադիր չէր²:

Թաղերի միջև կռիվներն անպակաս էին, բայց դրանք անմիջապես վերջ էին գտնում, երբ երևան էր զալիս արտաքին վտանգը: Այդ դեպքում բոլորը միանում էին, մոռանում իրենց քինախնդրություններն ու կռիվները և ամուր բոունցքվում՝ միասնական ջանքերով թշնամուն արժանի և չեչտակի հակահարված տալու համար³:

Զեյթունն ուներ չորս հոյակապ եկեղեցի՝ յուրաքանչյուր թաղն իրենը: Եկեղեցիներից ամեն մեկն ուներ մեկ երկսեռ նախակրթարան⁴, կար նաև տղայոց կենտրոնական վարժարան և հայուհյաց վարժարան՝ աղջիկների համար:

Զեյթունցու նկարագրի ամենացայտուն կողմերն էին արիությունը, աղնվությունը, արժանապատվությունը բնածին զգա-

¹ Տե՛ս Յակոբ Յ. Ալլահվերտեան, Ուլիսիա կամ Զեյթուն..., էջ 57:

² Մամիկոն Վարժապետեան, Յուշիկք Զեյթունի, էջ 11:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում:

ցումը, միմյանց օգնելու պատրաստակամությունը:

Շատ է պատահել, որ օսմանյան գորքերը գեյթունցիներին հպատակեցնելու համար գրոհել են արծվարույնը, բայց ամեն անգամ ուժգին բախվել են նրա կրծքին և հետ գլորվել:

Բայց 19-րդ դարի սկզբներից փիճակը փոխվում է: Թուրքական կառավարությունը չէր կարող հանդուրժել մի փոքր հայ համայնքի համարյա անկախ գոյությունը, ուստի որոշում է ռազմական միջամտությունը «չտկել գրությունը»: Հարձակումներ են սկսվում լեռնականների վրա, որոնք զնալով դառնում են հաճախակի և վերածվում չղաղարող կոիվների:

Ձհասնելով շոշափելի արդյունքի՝ թուրքական զորքերն արծվարույնը երկարատև շրջափակման են ենթարկում: Պաշարման հետևանքով մի բուռ լեռնականներ, սովի հարկադրանքի տակ, ստիպված են լինում ընդունել կառավարության ներկայացրած նոր պայմանը՝ դառնալ հարկատու՝ տարեկան 60.000 դուրուչ վճարելով: Դրա հետևանքով Ձեյթունը վերածվում է մի օսմանյան գավառակի՝ իր թուրք գայմագամով: Մինչ այդ հարկերից ազատ գեյթունցիներն այժմ պետք է օգտվեին միայն այն իրավունքներից, որոնցով օժտված էին շրջակայքի մահմեդականները: Չնայած դրան, լեռնավայրի հայերը պահպանում էին ազատորեն զենք կրելու՝ սուլթանների իրենց տված իրավունքը:

Ավելին, գեյթունցիները ժամանակի ընթացքում հրաժարվեցին տերությունը հարկ վճարելուց, որին հաջորդեցին կառավարական զորքերի նոր հարձակումները՝ տիրապետելու համար Ձեյթունի բնակավայրը: Բայց ամեն անգամ զորքերն անհաջողություն էին կրում ու նահանջում:

Թուրքական զորքերի առավել ուժգին հարձակումներ եղան 1850 և 1862 թվականներին:

Այդ ժամանակ կատարվեցին Ձեյթունի գավառակի հայ բնակչությանը դուրս մղելու և այնտեղ մահմեդականներ բնակեցնելու, այսինքն՝ տարածքի ժողովրդագրական կազմը փոխելու առաջին փորձերը: Դա առաջ բերեց գեյթունցիների համառ դիմադրությունը: Լեռնականներն 1862 թ. ապստամբեցին, և

սկսվեցին ծանր կոիվներ, որոնց ընթացքում նրանք կատարեցին հերոսական բազում սխրանքներ և թուրքական բանակն ի վերջո ջարդուփչուր արեցին:

Ձեյթունի վերջնական նվաճմանը սկիզբ դրվեց 19-րդ դարի 70-ական թվականների վերջերից: Իր նպատակին հասնելու համար, կառավարությունը բնակավայրի հենց կենտրոնում կառուցեց մի մեծ գորանոց, որում մշտապես տեղակայվեց 800 հոգանոց մի զորամաս: Ջորանոցի կառուցման առաջարկն արել էր թուրքամոլ մի հայ՝ Նուրյան Էֆենդին: Բազմաքանակ զորամասով կաշկանդված գեյթունցիներն ստիպված էին համակերպվել նոր վիճակին, թեև նրանց հոգում ազատության կայծր երրեր չմարեց: Նրանք շարունակում էին դիմված մնալ և նախկինի պես հաջողությամբ կատարել շրջակայքի հայկական բնակավայրերի ավանդական պաշտպանի դերը:

Այսպես, երբ Մարաշի կառավարիչ Վեյսի փաշան 1885-1886 թթ. սկսել էր դաժանորեն հարստահարել շրջապատի հայկական բնակավայրերը, գեյթունցիներն օգնության շտապեցին իրենց ազգակիցներին. և, կովի բռնակով իրենց դեմ ուղարկված զորամասերի հետ, նրանց ջարդ տվեցին: Այդ ղեպքից հետո Վեյսի փաշան ստիպված էր, գոնե ժամանակավորապես, հակահայկական ձեռնարկներից հրաժարվել:

Ձեյթունը ծանր ժամանակներ ապրեց 1890-ական թվականների սկզբներից: Դա այն շրջանն էր, երբ Հայկական հարցը նորից հրապարակ էր իջել, իսկ թուրքական կառավարությունը Եվրոպայից եկած ձայները փորձում էր լուցնել բոլոր միջոցներով: Հայոց բողոքները լսողելու այլևայլ միջոցների հետ, սուլթան Աբդուլ Համիդը գործի դրեց նաև Ձեյթունը վերջնականապես քարուքանդ անելու ծրագիրը: Նրա հանձնարարությամբ՝ ղեպի Ձեյթուն է շարժվում մի մեծ գորախումբ՝ Սալիհ փաշայի գլխավորությամբ: Ջորքը նստում է լեռնականների կողքին և նրանց ամեն տեսակ նեղություններ պատճառում: Նպատակը թափանցիկ էր. սաղրանքների միջոցով սպառել հայերի համբերությունը և զորամասի դեմ գործողությունների մղել նրանց: Ի վերջո այդպես էլ լինում է. համբերությունը հատած

գեյթունցիները հանդես են գալիս գորքի դեմ, որը թեթև ընդհարումից հետո ընկճվում է և հեռանում գորանոցից: Բայց փաշայի հրամանով գորախումբը հարձակվում է չրջակայքի հայկական գյուղերի վրա ու ավերում, կոտորում հարյուրավոր գյուղացիներին: Վերադասավորելով ուժերը և համայրելով շարքերը՝ թուրքական զորքը նորից գալիս է ավանի վրա: Չհամարձակվելով հարձակվել՝ նա երկարատև պաշարման է ենթարկում ավանը, որի սովի մատնված բնակիչներն ի վերջո ստիպված են լինում համաձայնել, որ թուրքական զորամասը կրկին բանակի գյուղաքաղաքի գորանոցում: Այդ կերպ Չեյթունը խուսափում է ավերումից:

1895-1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ Չեյթունը նույնպես խիստ վտանգվեց. նրա վրա շարժվեց 30-հազարանոց մի բանակ էդհեմ փաշայի գլխավորությամբ: Սկսվեցին ահեղ կոիվներ, որոնց ընթացքում թուրքերը ծանր պարտություն կրեցին լեռնական հայերից: էդհեմ փաշան ստիպված էր եվրոպացի հյուպատոսների միջամտությամբ հաշտություն կրնքել և իր զորքով անփառունակ կերպով հեռանալ Հայկափ վիլայեթի սահմաններից*:

Այդ կովից հետո Չեյթունի չրջակայքի թուրքական փոքրիկ գյուղերի բնակիչները, երկյուղ կրելով գեյթունցիներից, թողնում են իրենց տները և ապահովության նպատակով ապաստանում թուրքական ավելի մեծ գյուղերում:

Իսկ հերոս լեռնականների ղեկավարները, իրենց նախապապերի թողած ավանդներին անդավաճան, հենված սեփական իրական ուժի վրա, թե՛ հեռագրով և թե՛ նամակատարների միջոցով հրահանգներ էին հղում դանադան թուրք պաշտոնյաների՝ նրանց պատվիրելով չհամարձակվել ձեռք տալ չրջակա գյուղերի հայերին՝ սպառնալով լեռներից իջնել և հարստահարիչներից ցասումով վրեժ լուծել:

* Ինչպես տեսնում ենք, իրենց ազատության համար Չեյթունի հայերը միայն 19-րդ դարում թուրքական բռնապետության դեմ ապստամբել են չորս անգամ՝ 1819-ին, 1861-1862-ին, 1872-ին և 1895-1896-ին: Այդ բոլոր ապստամբություններին հետևել են անդադրում կոիվներ օսմանյան զորքերի դեմ:

Մի աղբյուրի համաձայն, Չեյթուն ավանում կար 1600 տուն՝ 12 հազար հայերով¹: Այլ աղբյուրներում ևս բերված է այս նույն թիվը՝ պակաս կամ ավել տարրերով²: Իսկ ամբողջ գավառակը բաղկացած էր 32 հայկական և թուրքական գյուղերից ու ազարակներից, ուներ 21500 բնակիչ, որոնցից հայեր էին 18500-ը, մնացածները՝ թուրքեր³:

Եվ ահա այժմ, երբ Ադանայի 1909 թ. ապրիլի կոտորածի առաջին յուրերը հասան Չեյթուն, խոր ցավ ու զայրույթ պատճառեցին լեռնականներին: Միաժամանակ, նրանց պարզ դարձավ, որ ջարդերը չեն սահմանափակվելու Կիլիկիայի կենտրոնով, այլ տարածվելու են չրջակա գավառներում:

Չեյթունը նախապատրաստվեց կովին: Ամրացվեցին գյուղաքաղաքի դիրքերը: Շուրջօրյա հերթապահություն սահմանվեց Չեյթուն եկող ճանապարհների վրա: Մի հուշագրության մեջ կարդում ենք. «Կր ցնցուի դեյթունցին, ամբողջ շարաթ մը մեր հագուստով և կօշիկը՝ փոսթալը ոտքեր[ն]ուս կը սպասենք ոտքի վրայ փողոցներուն և Չեյթունի եղերքի ճամբաներուն»⁴:

Անկարող լինելով մտածել Ադանային օգնության հասնելու մասին՝ գեյթունցիներն իրենց ողջ ջանքերն ուղղեցին չրջակա հայարնակ վայրերի պաշտպանությանը: Նրանք ի վիճակի չէին ապաստան տալ ազգակիցներին, քանզի իրենք էլ հաց չունեին⁵: Ուստի գեյթունցիները առաջնորդները չրջակա բոլոր գյուղերի հայերին հրահանգեցին չհեռանալ իրենց տներից՝ խոստանալով վտանգի դեպքում անմիջապես օգնության հասնել:

Մերձակա չրջաններում կոտորածները չեզոքացնելու նպատակով գեյթունցիները դիմում են գայմազամին, պահանջելով կտրուկ միջոցներ ձեռք առնել և թույլ չտալ, որ անկարգություններ առաջ գան: Փոխանակ կատարելու իր պաշտոնական

¹ Տե՛ս Գրիգոր Հ. Գալուստեան (Կիլիկեցի), Մարաշ կամ Գերմանիկ... էջ 96:

² Տե՛ս Չեյթունցի, Չեյթունի անցեալէն եւ ներկայէն, Վիեննա, 1900, էջ 22:

³ Տե՛ս Մամիկոն Վարժապետեան, Յուշիկը Չեյթունի, էջ 12-13:

⁴ Միսաք Միսեռեան (Մ. Ուլնեցի), Պատմութիւն Չեյթունի (1409-1921), Լիբանան, 1996, էջ 295:

⁵ Տե՛ս «Սուրհանդակ» (Թիֆլիս), № 40, 9 ղեկտեմբերի 1909 թ.:

պարտականությունը, գայմագամը, երկյուղ կրելով զեյթունցիներից, իր նատավայրից փախչելով, պատսպարվում է զորանոցում: Հայերը պահանջում են, որ գայմագամը թողնի զորանոցը և ձեռնարկի իր պաշտոնի կատարմանը, բայց նա զիջելով գաղտագողի փախչում է Մարաշ և Հայտնում, թե զեյթունցիները փորձել են իրեն սպանել, սակայն կարողացել է հաղիվհաղ փրկվել:

Հույսները կտրելով իրենց գայմագամից՝ զեյթունցիներն, ստիպված, անմիջական բանակցությունների մեջ են մտնում չրջակայքի պաշտոնյաների հետ, պահանջում պահել նախկին քիչ թե շատ տանելի հարաբերությունները, թույլ չտալ, որ զրանք խաթարվեն՝ սպառնալով հակառակ դեպքում անպատիժ չթողնել պատասխանատուներին:

Պաշտոնյաները և թուրքերն ընդհանրապես, հասկանալով, թե ինչ են նշանակում այդ սպառնալիքները, ամեն կերպ հանգստացնում էին զեյթունցիներին: Ծատ վայրերում, մահճակալանների խնդրանքով, տեղի հայերն անմիջական հաղորդակցություն մեջ են մտնում զեյթունցիների հետ, նրանց խնդրում հանգիստ մնալ, հավատացնելով, որ իրենց մոտ խաղաղ է և որևէ վտանգ չի սպառնում: Հատկապես Մարաշի կառավարիչն ամեն ջանք թափեց խարելու և հանդարտեցնելու զեյթունցիներին: «Մարաշի ժողովուրդը հանգիստ է, և որևէ զեպք չի պատահել», - զեյթունցիների ականջն անդադրում սղոցում էր նա: Բայց զեյթունցին չէր հաշտվում իր հոշոտվող արյունակիցների ճակատագրի հետ, ամեն միջոց ու հնարք խորհում էր գոնե ազատելու Մարաշի հայությունը:

Միսի կաթողիկոսական փոխանորդ Վաղարշակ Ծ. վարդապետ Արչակունին, իշխանագույնները, աղաները և դպրոցների ուսուցիչները Ձեյթունում հավաքվելով ժողովի՝ վճռեցին Մարաշի կառավարչին վերջնագիր ներկայացնել: Ժողովից հետո նրանք սպառնական ազդու հեռագրեր հղեցին Մարաշ: Պատասխանը չուշացավ. կառավարչի խնդրանքով՝ Մարաշի առաջնորդական փոխանորդ Սահակ քահանա Տեր-Պետրոսյանը, Ահարոն Ծիրեջանի, Հակոբ աղա Ուրլագյանի, պարոններ Նազարեթ և Արմենակ Բիլեզիկյանների, Կոստան Էֆենդի Վարդապետյանի,

Հաղարապետյանի, Չորրաջյանի, հայ և թուրք ուրիշ մեծամեծների ստորագրություններով Մարաշից Ձեյթունի երևելիներին հղվեց աղաչական հեռագիր, թե Մարաշում ամեն բան երանելի է: «Ի սկզբն Բրիտանիայի» Ձեյթուն թող չշարժի», - ասված էր հեռագրում: Թեև Ձեյթունը չզնաց Մարաշի վրա, բայց միայն նրա գոյությունը քաղաքի հայությունը փրկեց ջարդից:

Մարաշի և չրջակա գյուղերի հայությունների փրկության համար կարևոր նշանակություն ունեցավ զեյթունցի նշանավոր մարդկանց երևալը նշված վայրերում: Ամեն զոհողություն և անձնվիրություն չխնայեցին Ձեյթունի իշխանագույններից, աղաներից և Բաղաբական ժողովի անդամներից Նազարեթ Էֆ. Յենիգյունյանը, Ուաչիկ Էֆ. Յաղուբյանը, Պապա աղա Բասիլոսյանը, Սարգիս և Կարապետ Պալճյան Էֆենդիները, Աստվածատուր աղա Անդրեասյանը, Հովհաննես Էֆ. Ահարոնյանը, Հակոբ Էֆ. Թաշճյանը և այլք³:

Ձեյթունին ոչ միայն մոտիկ, այլև հեռու տեղերի հայերն այդ օրհասական վիճակում գոնե մտովի իրենց փրկությունը կապում էին այդ ավանի հայերի օգնության հետ: Այո՛, կարելի է ասել, որ ամբողջ Կիլիկիայի հայոց հույսը մնում էր Ձեյթունը: «Աղանայի երգի» մեջ կիլիկիահայր սրտնեղած հարցնում էր. «Ինչո՞ւ չի շարժիր ապառաժ Ձեյթուն»: Բայց զեյթունցին ո՞ր մի կողմի վրա շարժվեք, ինչպե՞ս փրկեք հարյուրավոր կիլոմետրերի վրա հարավ, հյուսիս, արևելք, արևմուտք գտնվող իր ազգակիցներին:

Ձեյթունցիներն, իհարկե, ձգտում էին շարժվել ամեն կողմի վրա և օգնել ազգակիցներին՝ առանց կարևորություն տալու հետևանքներին: Բայց տեղի երևելիները և Վաղարշակ Ծ. վարդապետը միացյալ ջանքերով կարողացան ղսպել ու հանգստացնել նրանց:

Ձեյթունի անունն իսկ ջարդից փրկեց հարևան **Ֆրնուզ (Ֆոռնոս, նախկին Ոժոտ)** և **Դեռնկալե** հայկական գյուղերին՝

¹ Տե՛ս **Միսաք Միսեռեան** (Մ. Ուլնեցի), Պատմութիւն Ձեյթունի (1409-1921), էջ 294:

² Տե՛ս **Գրիգոր Գուտուպեան**, Հայ լեռք..., էջ 64:

³ Տե՛ս նույն տեղում:

որտեղ որևէ դեպք տեղի չունեցավ:

Զեյթունի և Մարաշի մոտերքն ընկած՝ հայերով ու չերքեզներով բնակեցված և մահմեդական բնակիչներով շրջապատված **Անդերունի (Էնդերունի)** գավառակը, ղեյթունցիների սպառնալիքի շնորհիվ քիչ զոհ տվեց: Այս գավառակում հարձակման ենթարկված **Անդերուն, Էջեմլի, Շիվիլգի (Շեքեքլի), Չաքուրղաջ, Դեյիրմեն-Դերե** գյուղերը թեև թալանվեցին, բայց մարդկային լուրջ կորուստներ չունեցան¹: Հակառակ դրա, կորուստներ ունեցան **Անըջըք** (35 տուն) և **Արդատլի** (40 տուն) գյուղերը՝ առաջինը տալով 20, երկրորդը՝ 4 սպանված:

Անդերունի գավառակում ավելի մեծ էին **Պնդուզ (Բանդուզ)** 70 տուն և **Կապան (Կեպեն)** 250 տուն ունեցող գյուղերի կորուստները: Պնդուզը տվեց 35, Կապանը՝ 60 սպանված (մեծ մասը՝ գյուղից դուրս վայրերում): Երկու գյուղերն էլ կողոպուտի ենթարկվեցին²:

Նույն Անդերունի գավառակի մեջ էր գտնվում Զեյթունից ոչ հեռու **Կոկիսոնի (Գեոքսյուն)** շրջանը իր յոթ գյուղերով: Շրջանի ամենամեծ գյուղը՝ Կոկիսոնը, ուներ 350 տուն, որից 107-ը հայերինն էր³:

Ապրիլի 4-ին շրջանի մյուս գյուղերի բնակիչները փախչելով՝ թափվում են Զեյթուն, իսկ նրանց տները կողոպտվում են: Փախուստի ժամանակ կորուստներ են տալիս **Դեյիրմեն-Դերե, Քիլիճ (Քիրիչ-Փունար)** և **Ջամս-Նեյուք** գյուղերի հայերը:

Կոկիսոնի բնակիչները մնում են իրենց տեղում՝ հույս ունենալով, որ գյուղում տեղակայված զորամասն արգելք կլինի հարձակումներին:

Սակայն ապրիլի 5-ին շրջակա գյուղերի ավարառուները հարձակվում են Կոկիսոնի վրա: Հայերը դիմում են Մարաշի սանջակի կառավարչություն՝ օգնություն խնդրելով, բայց օգնություն չի գալիս: Իմանալով այդ մասին՝ ղեյթունցիները դի-

¹ Տե՛ս Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 265:

² Տե՛ս «Հորիզոն», № 73, 2 ապրիլի 1910 թ.:

³ Տե՛ս նույն տեղում:

մում են Կոկիսոնի գայմազամին (քանի որ իրենց գայմազամը փախուստի մեջ էր)՝ առաջարկելով խուժանին ղսպել: Գայմազամը, որը լավ էր գիտակցում, թե ինչ արժեք ունի ղեյթունցիների խոսքը, խորհրդակցում է շրջանի զինվորական հարյուրապետի հետ և համատեղ որոշում են ընդունում կանգնեցնել հարձակվողներին, ու այդ նպատակով պահակախմբեր են կարգում գյուղ եկող ճանապարհների վրա: Բայց երկյուղ կրելով, որ խուժանը կարող է գիշերը գյուղ մտնել, գայմազամը կարգադրում է հայ կանանց ու երեխաներին բաժանել գյուղի մահմեդականների տների վրա, և խստիվ պատվիրում է նրանց խնամել: Գյուղի հայ տղամարդիկ մնում են իրենց տներում՝ պաշտպանելու: Տեսնելով, որ այլևս ոչինչ անել չեն կարող, ավարառուները թողնում ու հեռանում են:

Իսկ ղեյթունցիներն իրենց մոտ ապաստանած Կոկիսոնի շրջանի մյուս հայկական գյուղերի գյուղացիներին առաջնորդում են հայրական օջախներ և, կողոպտիչներից հետ առնելով կողոպտված ապրանքները, վերադարձնում են իրենց տներին:

Կոկիսոնի շրջանի գյուղերից ամենամեծ կորուստները տվեց **Դուլուք** գյուղը, որի տներից 119-ը հայերինն էր, 31-ը՝ մահմեդականներին: Ապրիլի 5-ին շրջապատվում է գյուղը, իսկ ներսում գնք են վերցնում համագյուղացի թուրքերը: Գյուղում տալով 31 զոհ՝ հայերը փախչում են լեռները¹: Մի քանի օրից իջնելով՝ նրանք տեսնում են իրենց ունեցվածքը կողոպտված, իսկ տները՝ ավերակ, որոնց կիսատ-պոատ վերականգնումը տարիներ է տևում:

Թշնամու տարրեր ուժգնությամբ հարձակումներ եղան նաև գավառի Մխայ (նախկին Ավագկալ), Ալարաշ (նախկին Արեգին), Ենիջե-Կալե, Մուճուգ-Դերեսի, Արարյը, Քեթթեքլի, Եղիալար, Չյուրյուք-Գոզ, Տեմրեք, Փունար-Բաշը, Քիթիլի-Թաղ, Կանչի (Չուզուր-Հիսար, Չուխրասար), Եփեսոս (էֆսոս, Յարփուղ), Բերդուս, Բեչեն և այլ մեծ ու փոքր հայաբնակ գյուղերի,

¹ Տե՛ս «Հորիզոն», № 73, 2 ապրիլի 1910 թ.:

գյուղակների, ագարակների վրա, որոնց մեծ մասը վերջացավ ձախողումով¹:

Մարաշի սանջակի մեջ էին գտնվում նաև Այրիստան և Բաղարջիկ գավառակները, որոնց տարրեր վայրերում ապրում էր մոտավորապես 8000 հայ²: Այս գավառակներում նույնպես որևէ ղեպք տեղի չունեցավ:

Մարաշ քաղաքի և շրջակա գյուղերի կորուստը կազմել էր չուրջ 800 մարդ³:

Ի մի բերելով Մարաշի սանջակի ղեպքերը՝ իրավամբ կարող ենք հաստատել, որ ղեյթունցիներից ունեցած վախն էր պատճառներից մեկը, որ Մարաշի սանջակը համեմատաբար զերծ մնաց զանգվածային ջարդերից, սպանություններն ու կողոպուտը սահմանափակվեցին մի քանի շրջաններով: Նույնը, սակայն, չի կարելի ասել հարևան Հայկաի սանջակի Անտիոք, Քեսապ և Բեյլան գավառակների մասին, որոնք Ձեյթունից բավական հեռու էին ընկած:

ՀԱԼԵՊԻ ՍԱՆՋԱԿ

Հայկաի սանջակում հայերի ջարդերը ծավալվեցին երեք գավառակներում՝ Անթաքիայում, Քեսապում և Բեյլանում:

Սանջակի հարավային կողմում էր **Անթաքիա գավառակը**, որի կենտրոնը Անթաքիա (Անտիոք) գյուղաքաղաքն էր, որտեղ մշտաբնակ հայերի թիվը հաշվվում էր 800 հոգի: Գավառակի բաղամթիվ ագարակներում ամեն տարվա զարնան սկզբից աշխատում էր այլ տեղերից եկած 500-ից մինչև 800 բանվոր, որոնց գերակշիռ մասը հայեր էին:

Ադանայի ջարդի լուրերը գավառակ հասնելով, ահ ու սարսափի մատնեցին գյուղաքաղաքի հայերին: Ապրիլի 6-ին՝ երկուշաբթի օրը, կողպելով խանութները, հայ առևտրականներն շտապեցին փակվել տներում: Կեսօրին մոտ թուրքերը և քրդերը

հարձակում գործեցին Անտիոքի հայոց առաջնորդարանի վրա, ներխուժեցին չենք և սպանեցին կաթողիկոսական փոխանորդ Արսեն վրդ. Հարությունյանին, Կտուց անապատի միարանու-թյունից հյուր եկած Գանիկ ծերունազարդ վարդապետին, Արմենակ քհն. Տոնաթոսյանին, Անտիոքի այնտեղ հավաքված հայ երևելիներին, եկեղեցու բոլոր անոթներն ու կահ-կարասին կողոպտեցին: Նույնը նահատակ կրոնավորների դիակները քաշկրուտելով պտտեցրեց փողոցներով ու շուկաներով և մուսուլմաններին կոչ արեց բնաջնջել բոլոր քրիստոնյաներին: Քաղաքի 1000 հայերից չուրջ 700-ը կտտորվեց¹: Հարձակումները տարածվեցին գավառակով մեկ և ամբողջ գիշեր շարունակվեցին: Ջարդի կազմակերպիչներն էին Անտիոքի մութասերիֆը, թուրք երևելիներ Հյուսնի աղան, Նալեֆ աղա զադե Վահիդը, Բերեքեթ զադե Րիֆաթը, Բերեքեթ զադե Ռեշիդը²: Շրջանի հայության հիշողություն մեջ 1909-ի աղետն ամրագրվեց «Թալանտ» (Թալան: - Հ. Ս.) անունով³:

Մի քանի ժամվա ընթացքում ամբողջապես բնաջնջվեցին Անտիոքի դժբախտ հայությունը և փոքրամասնություն կազմող ասորի բնակչությունը: Անտիոքի մոտով անցնող Աասի (Որոնդես) գետը լցվեց քրիստոնյաների դիակներով: Գավառակում հայ գրեթե չմնաց. հայ բնակիչներից միայն 20 հոգի ազատվեց՝ վիրավոր ու հիվանդ: Սպանվածների թիվը 1200 էր:

Բոլոր քրիստոնյաներին ջարդելուց հետո իսլամները քարուքանդ արեցին և հրդեհեցին հայ առաքելական և հայ ավետարանական եկեղեցիները, ինչպես նաև ասորիների աղոթատները:

Անտիոքի շրջակայքի ագարակների բանվորությունը, սարսափած գավառում ծավալված արյունալի ղեպքերից, փախավ ու ապաստանեց սահմանակից **Անտիոք քաղաքում**: Չորս կողմից հարձակվող թուրք-քրդական հրոսակներին ապրիլի 6-ին միացել էին տեղի թուրքերի ավաղակախմբերը, որոնք տակնու-

¹ Տե՛ս Վեր. Տիգրան Ջ. Նրլուպեան, Ոսկեմատեան Հայ աւետարանական միութեան, Հտ. Ա, Բեյրութ, 1950, էջ 335:

² Տե՛ս Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 255-256:

³ Տե՛ս Յակոբ Չուլաքեան, Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը (պատմա-աղագրական ուսումնասիրություն), Անթիլիաս, 2006, էջ 108:

¹ Տե՛ս Գրիգոր Հ. Գալուստեան (Կիլիկեցի), Մարաշ կամ Գերմանիկ..., էջ 57:

² Տե՛ս Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 262-264:

³ Տե՛ս «Հորիզոն», № 73, 2 ապրիլի 1910 թ.:

վրա արեցին հայկական թաղը, կողոպտեցին ու այրեցին այնտեղի տները: Ամենարիտ տանջանքներով ջարդվեցին քաղաքի տեղաբնիկ հայերի մեծ մասը (600 հոգի)² և դրսից եկած բանվորները: «Հաղարաուր թուրք եւ յոյն տուներու մէջէն 80 տուն խեղճ հայութիւնը ջոկել, ջարդել – կատաղութեան, վայրագութեան վերջին աստիճանն է ա՛յ (ասո՞նք այ ապստամբած էին, ասո՞նք այ պոմպաներ եւ թնդանօթներ ունէին)»³:

«Նյու Յորք թայմս» օրաթերթը տպագրել էր ականատեսի պատմածը Անտիոքի ղեպքերի մասին, ուր հաստատվում էր, թե երբ խուժանը Անտիոքում սկսեց հայերին բնաջնջել, մի մեծ խումբ քրիստոնյաներ ապաստանեցին մի պանդոկում: Իսլամ պանդոկապետը դուր ծածկեց և պանդոկը շրջապատած խուժանին յայտարարեց, թե ներսում ոչ ոք չկա: Մի պահ հավատալով պանդոկատիրոջ խոսքերին, ջարդարարները հեռացան, բայց շուտով վերադարձան և, Մուհամմեդ մարգարեի անունը կանչելով, խուժեցին պանդոկ ու բնաջնջեցին այնտեղ ապաստանած բոլոր քրիստոնյաներին: Երբ մարդասպանները դուրս էին գալիս պանդոկից, նրանց բոլորի սրերից ու դանակներից արյուն էր կաթկթում: Թերթն այնուհետև հարունակում էր. «Հիւանդ փոքրիկ տղայ մը սարսափէն պինդ կառչեր էր հօր պարանոցին: Հայրը, պատուաւոր ու աշխատասէր ջորեպան մը, ամէն կողմ դարձաւ ու ամէն ջանք գործ դրաւ իր փոքրիկն ազատելու համար, բայց կոնակին հասցուած հարուածներու տակ ինկաւ մեռած: Երբ սպանուած հօր դիակը պատուհանէն դուրս նետեցին, հերթը հասաւ փոքրիկին, որու արմուռնկն արդէն ջախջախուած էր գնդակով: Երկու հաստամարմին ճիւղներ մօտեցան անոր, հրացանի կոթով ամբողջ ուժով հարուածեցին կուրծքին, ապա երկու անգամ դաշունահարելէ յետոյ՝ հոգևարքի մէջ գտնուող երախային վերցուցին ու պատուհանէն դուրս նետեցին հօր դիակի վրայ»⁴:

¹ Տե՛ս «Արևելեան մամուլ», № 20, 12 մայիսի 1909 թ.:

² Տե՛ս «Բիւզանդիոն», № 3827, 1 (14) մայիսի 1909 թ.:

³ Տե՛ս նույն տեղում, № 3836, 13 (26) մայիսի 1909 թ.:

⁴ Հոդվածի թարգմանությունը տե՛ս «Կոչնակ» (Բոստոն), 23 հոկտեմբերի 1909 թ.:

Անթաքիայի գավառակի և նույնանուն քաղաքի հայերի և ասորիների մնացորդացը փրկվել էին Փրանսիական նավերի անձնակազմերի մարդասիրական վերաբերմունքի շնորհիվ:

Փրանսիական «Նիժեր» շոգենավը խարխալ էր նետել Լաոնակայի առջև:

Ապրիլի 11 (24)-ի երեկոյան Բեյրութի Փրանսիացի հյուպատոսը նավապետ Լաֆոնից խնդրեց նավն անհապաղ տանել Լաթաքիա և վերցնել ջարդերից մաղապուրժ քրիստոնյաներին: Ծոզենավն իսկույն մեկնեց և հետևյալ առավոտ տեղ հասավ: «Նիժերի» վրա գտնվող Փրանսիացի մի ուղևոր Կ. Պոլսի «Բիզանդիոն» թերթի թղթակցին տվել էր ընդարձակ հարցազրույց, որից բերում ենք հետևյալ հատվածը. «Կէսօրին, «Նիժէր» Պասիթի ծովածոցին մէջ խարխալս նետեց, հնար եղածին չափ եզերքին մօտ եւ երկու մեծ նաւակները ծով իջեցուց Փրանսական դրօշակով: Ծովեզերքը մարդ մը չէր երեւեր, բայց կը կասկածէինք թէ խեղճ փախստականներն հոս ապաստանած են եւ վախերնէն բոլորներու ետին պահուրտած են, ուստի որոշուեցաւ թնդանօթ արձակել, որպէս զի ծովեզերք իջնեն: Թնդանօթի հինգ հարուածով բաղմութիւնը սկսաւ ծովեզերք խուժել և շատերը կեանքերնին փրկելու աճապարանքէն տեղական նաւակներու մէջ նետուեցան, եւ նաւավարներն որոնք ամէն տեղ եւ ամէն ատեն միեւնոյնն են, կ'աշխատէին այս խեղճերուն հագուստներն անգամ խլել, եւ արգելք կ'ըլլային որ «Նիժէր» մտնեն: Վերջապէս նաւապետ Լաֆոն, բոլոր փախստականները ներս առաւ, այն ինչ հիւպատոսը ծովեզերքը կը հսկէր:

Այս փախստականներուն թիւը 2211-ի կը հասնէր, որոնց մէջ շատ թուով տղաքներ կային, ամէնքն այ անօթի, ծարաւ եւ կիսամերկ: Իսկույն ամէնուն այ մեծ խնամք տարուեցաւ. թէ՛ հրամատար նաւապետ Լաֆոն եւ թէ՛ սպաները, թէ՛ բոմբիւէր Արմասը եւ թէ՛ նաւաստիները մեծ անձնուիրութիւն ցուցուցին:

Տեսարանը շատ յուզիչ էր եւ աղեխարշ. ես անկարող եմ նկարագրել: Երեսակայեցէ՛ք թէ մտքի ի՞նչ կացութեան մէջ կը գտնուէին այս խեղճերը, որոնք մահը մօտէն տեսած են, եւ մէկ վայրկեանէն միւսը մեռնելու վախ ունին: Գնդակներու տարափին տակ, հուրի եւ սուրի արհաւիրքէն վերջ, յանկարծ կը վերա-

ծնին շոգենաւուն մէջ, ֆրանսական փառապանծ դրօշակին պաշտպանութեան տակ: Կու լային, դիրար կը գրկէին, և չէին գիտեր ի՞նչ կերպ արտայայտել իրենց անսահման ուրախութիւնը: Քօմիսէրն առատ սնունդ բաշխեց ամէնուն, և երեխաներուն այ առատ կաթ, վասն զի մայրերուն կաթերը կտրուած էին: Դարձեալ կը կրկնեմ, «Նիժէր» շոգենաւուն մէջ ամէնուն ալ ընթացքը հիացում ազդեց և երբեք չպիտի դադրիմ այս հիացումն ամէն տեղ բարձրաձայն պոռայէ:

Պէտք է ասանկ պարագաներու մէջ գտնուիլ, որոնք պատմական տխուր էջեր կը կազմեն, զգալու համար այն դառն յուզմունքը՝ զոր զգացինք շոգենաւուն մէջ: Այսչափ վիշտերու, կործանման ու յուսահատութեան հանդէպ, ամէնէն եսամոլ սիրտերն անգամ կը յուզուէին և արցունքի կաթիլներ կը հոսէին անոնց աչքերէն»¹:

Ճանապարհին հանդիպելով ֆրանսիական «Ժյուլ Ֆերրի» հաճանավին, «Նիժերի» նավապետը տեղեկացրեց, թե ինչ բազմութիւն է փոխադրում: Տեղեկանալով, «Ժյուլ Ֆերրի» նավապետը փոխեց մարտանավի ճանապարհը և ուղղութիւն վերցրեց դեպի Քեսապ: Այստեղ անձնակազմը ժողովեց 1800 հայ փախստական և հասցրեց Լաթաքիա²:

Անթաքիայի գավառակի և նույնանուն քաղաքի հայերի ջարդից ոգևորված՝ հրոսակները որոշեցին նույնն իրականացնել **Քեսապի գավառակում**:

Ապրիլի 2-8-ը թուրքերը և թուրքմենները Զիսր-Շուղուրի գայմագամի և Օրդուի նահիայի մուղիրի գլխավորութեամբ ավերում են գավառակի **Գարադուրան, Էքիզ-Օլուք, Քեորքունա, Չաքալջոք, Չինար, Դուզ-Աղաջ, Բաղջաղազ, Կայաջոք և Ուայիթ** փոքրիկ հայկական գյուղերը, որոնց բնակիչները, զոհեր տալով ապաստանում են գավառակի կենտրոն Քեսապ գյուղում:

Ապրիլի 9-ին 15000-ի հասնող թուրք, թուրքմեն, քուրդ, բաղձայնգոյ խառն ամբոխը պատրաստվում է հարձակվել 1200 տուն ունեցող³ **Քեսապ գյուղի վրա**:

Ջարդարանների գլխավոր նպատակն էր կողոպտել գյուղը, որի շուկան մրցակից էր Զիսր-Շուղուրի և Անտիոքի շուկաներին: Կողոպտիչների հսկա բաղձութիւնը նախ հավաքվում է Օրդու թուրքարնակ և թուրքմենարնակ գյուղում, որի ողջ բնակչութիւնը ոտքի է կանգնում: Այստեղ են շտապում չրջակայքի բնակավայրերի՝ Հարեմ, Անտիոք, Զիսր-Շուղուր, Բայրը, Բուջաք գյուղախմբերի բաղձութիւնները, և ամբոխի թիվն արագ մեծանալով, հասնում է շուրջ 30 հազարի⁴:

Ապրիլի 10-ին հրոսակախմբերը քուրդ Շերիֆ աղայի գլխավորութեամբ⁵ Օրդուի կողմից մտնում են Քեսապի չրջան: Կարճատեղի դիմադրութիւնից հետո, հաջորդ օրը քեսապցիների մի մասը հավաքվում է Բասիթի ծովափում, որոնց ֆրանսիական զրահանավերը ժամանակավորապես փոխադրում են Լաթաքիա⁶: Բայց ոչ բոլոր քեսապցիներին է հաջողվում ծովափ իջնել և նավ նստել: Նրանց զգալի մասը, հիմնականում կանայք ու երեխաներ, իրենց զցում են մերձակա լեռները: Դրանցից շատերը ճանապարհին ընկնում են մարդասպանների ձեռքը և ավարտում կյանքը⁷: Առեւտրով և կանայք ու աղջիկներ: Բազմահազար ավարառուները կողոպտում են Քեսապը, որից հետո հրդեհում են շինութիւնները: Հրդեհված տների փլատակների տակ են մնում հիվանդներ ու հաշմանդամներ⁸:

Սամվել Քել-Պողոսյանը կնոջ հետ ապաստանել էր Քեսապից ոչ հեռու լեռան վրա: Սուլթանը, վրա հասնելով, դանակի հարվածով ազդրից վիրավորում է կնոջը, որն այլևս անկարող է լինում փախչել: Ամուսինը փարվում է սիրեցյալին և փորձում պաշտպանել եղեռնագործների նոր հարվածներից: Նրան մորթում են և կնոջ աչքի առջև մասերի բաժանում: Կնոջը բռնաբարելուց հետո նրան հասցնում են դանակի մի քանի հարված և, մեռած կարծելով, հեռանում: Վիրավոր կինը քաչկոտվելով բարձրանում է Զերել-Ազրայի գագաթը, վեց օր մնում այնտեղ՝

¹ «Բիւզանդիոն», № 3824, 28 ապրիլի (11 մայիսի) 1909 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում, № 3827, 1 (14) մայիսի 1909 թ.:

⁴ Տե՛ս **Հակոբ Չոլաքեան**, Անտիոքի մերձակայ... էջ 108:

⁵ Տե՛ս «Արարատ», 5-6, մայիս-հունիս, 1909, էջ 539:

⁶ Տե՛ս **Յակոբ Չոլաքեան**, Անտիոքի մերձակայ... էջ 108:

⁷ Տե՛ս «Հորիզոն», № 73, 2 ապրիլի 1910 թ.:

⁸ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3823, 27 ապրիլի (10 մայիսի) 1909 թ.:

ձյունով հագուրդ տալով ծարավին¹: Եղի-Դերն կոչված վայրում մի քանի քուրդ ընկնում են 18-ամյա մանկամարդու հի Ֆերիդե Բասմաջյանի հետևից: Աղջիկը փախչում է և ուժասպառ հասնում մի ժայռի գագաթին, իսկ ոճրագործներն արդեն հայտնվել էին մի քանի քայլի վրա: Փրկելու համար իր պատիվը՝ Ֆերիդեն գահավեժ եղերքից իրեն նետում է անդունդը: Սերովրե Ղազարյանի կինը փախուստի միջոցին արու զավակ է ծնում: Հետապնդողների վախից՝ խելահեղ մայրը լքում է նորածնին ու փախչում: Օրիորդ Ֆերիդե Արեյանը Քեսապի մերձակա մի վայրում պաշարվում է տասնյակ թուրքերի կողմից, բայց քարերով աննկարագրելի քաջությամբ պաշտպանում է իր պատիվը և կարողանում է փախուստի դիմել: Քեսապցի հինգ կանայք ութ օր շարունակ պատսպարվել էին մի քարայրում՝ սոված ու ծարավ: Թաքստոցի տեղը ջարդարարներին հայտնի չանելու համար՝ նրանցից մեկն ստիպված խեղդել էր իր մեկ տարեկան արու զավակին:

Շուրջ 2000 հոգի շարունակում էին թափառել **Սուեղիայի (Սվեղիա, Սուելդիա, Մուսալեռ, Զերել-Մուսա)** ամայի եզերքներին: Նրանք փրկվեցին իտալացի Փրանչիսկյան մի վարդապետի և Փրանսիացի փոխհյուպատոս էդգար Ժեոֆրուայի հերոսական ջանքերով: Սրանք այդ ահաբեկ բազմությանը, ինչպես վերը նշվեց, առաջնորդեցին Փրանսիական «Նիժեր» շոգենավը և նույն երկրի երկու մարտանավեր, որոնք նրանց փախցրին **Լադրիա (Լաթարիա)**²:

Քեսապը տակնուվրա անելուց և 200 հոգի սպանելուց հետո հրոսակները ձեռնարկեցին շրջակա քրիստոնեարնակ մյուս վայրերի մարդկանց կոտորածին: Ավերվում են Անտիոքի հարավում՝ Օրդուի նահայրում գտնվող **Արֆալի, Ցամաղի և Գոչի (Գեոչյու)** հայաբնակ գյուղակները³: Անցնելով Աասի գետը՝ նրանք բարձրացան **Զերել-մուսա լեռները՝ հարձակվելու շրջակայքի քրիս-**

տոնեարնակ գյուղերի վրա: Բայց Սուեղիայի մուղիի Սեոքելի Սալիկ Լֆենդու ձեռք առած միջոցների շնորհիվ՝ խուժանն ստիպված ցրվեց և 11 հազար քրիստոնյա ազատվեց ստույգ ջարդերից:

Քեսապի և շրջակա գյուղերի ջարդերից փախած 6000 հայ հանգրվանեց **Լաթարիայում**: Բարերախտարար, նրանց ճանապարհին էլ հանդիպեց մի մարդասեր՝ **Լաթարիայի մութասերիֆ արար Մուհամմեդ Ալի** բեյը: Նա ոչ միայն պաշտպանություն տակ առավ փախստականներին, այլև քեսապցիներին անձամբ ուղեկցեց նրանց գյուղերը և **Լաթարիա վերադարձավ՝ նրանց տեղափոխելուց հետո միայն**¹:

Անտիոքի մերձակա **Ռուճի հովտի երկու հայաբնակ գյուղերի վրա հարձակվողներն** զգուշացան ջարդեր կատարելուց՝ Հայկապում **Ֆրանսիայի և Իտալիայի հյուպատոսների՝ Հայկալի վալիի վրա** գործադրած ճնշումների շնորհիվ: Դրանք **Գնիե (Ղնեյ)** և **Ցակուբիե** գյուղերն էին, որոնք ապրիլի 10-ից պաշարվել էին շրջակայքի թուրքերով և թուրքմեններով²:

Հերթը հասավ **Բեյլան** գավառակին:

Իսկենդերունից Հայկապ տանող ճանապարհին էր գտնվում գավառակի հայաբնակ **Գրրըզ-խան** գյուղը, ուր հաշվվում էր հայերի 90 և մահմեդականների 5-6 տուն: Բնակիչներն զրազվում էին ոչ միայն գյուղական աշխատանքներով, այլև արհեստներով ու առևտրով:

Շրջակա 12 գյուղերի թուրք, չերքեզ, քուրդ տղամարդիկ և, նրանց միացած, այդ գյուղերում հաստատված կրետացի գաղթականները ապրիլի 5-ին հարձակվեցին **Գրրըզ-խանի վրա**³: Գյուղացիները որոշում են դիմադրել: Ութ ժամ կռվելուց հետո հայերի ղեկավարությունն է մոտենում համազուգացի մահմեդականների «պատվիրակությունը», որն սկսում է նրանց համոզել ղեկերը հանձնել իրենց՝ երզում-հավատ անելով, թե իրենք երբև թույլ չեն տա, որ խուժանը մտնի գյուղ, և եթե այդպիսի փորձ լինի, ղեկերն անմիջապես կվերադարձնեն տերերին, իսկ

¹ Տե՛ս «Բիզանդիոն», № 3823, 27 ապրիլի (10 մայիսի) 1909 թ.:

² Տե՛ս **Սուրեն Պարթևեան**, Կիլիկիան արհաւիրքը, էջ 43:

³ Տե՛ս **Ցակուբ Զուլաբեան**, Անտիոքի մերձակայ..., էջ 94, 108:

¹ Տե՛ս **Ցակուբ Յ. Թերզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 257: Քեսապցիների ինքնապաշտպանության և Լաթարիա տեղափոխման մասին մանրամասն տե՛ս **Ցակուբ Զուլաբեան**, Քեսապ, հտ. Ա, Հայկապ, 1995, էջ 89-98:

² Տե՛ս **Ցակուբ Զուլաբեան**, Անտիոքի մերձակայ..., էջ 108-112:

³ Տե՛ս «Բիզանդիոն», № 3818, 21 ապրիլի (4 մայիսի) 1909 թ.:

իրենք կմիանան հայերին՝ հարձակվողների ճանապարհը համատեղ փակելու համար: Միամիտ գյուղացիները, հավատ տածելով հարևան թուրքերի խոստումներին, ղենքերը հանձնում են: Անմիջապես յուր է ուղարկվում դրսում սպասող ավաղակախմբերին, որոնք շրջապատում են գյուղը, առնում հրացանային կրակի տակ, ապա խուժելով այնտեղ՝ սկսում են իրենց արյունոտ խրախճանքը: Ոճրագործները նախ բոլոր հայերին բռնափակում են մեծ տներից մեկում: Դրան հաջորդում են կողոպուտը և գյուղի հրդեհումը: Այրվում են բոլոր տները, 28 խանութ, 2 փուռ, 3 սրճարան, 1 հյուրանոց, 15 պանդոկ (խան)¹:

Դրանից հետո գյուղի մեծ տան մեջ փակված հայերից զատում են զեղեցիկ կանանց ու աղջիկներին և տանում իրրև ավար: Մնացած բոլորին, խուժանի խմբերով շրջապատված, գյուղից հանում և հասցնում են ոչ հեռվում գտնվող իսլամական մի ուխտատեղի, որի շրջակա տարածքը պատկանում էր Մուստաֆա անունով մի փաշայի: Հենց նրա հրամանով՝ բոլոր տղամարդկանց, թվով 82 հոգու, այդտեղ սպանում են: Ասպատակիչներն իրենց գործած ոճիրների մեջ հետ չէին մնում Քեսապում արյան բաղնիքներ սարքած ոճրագործներից՝ չխնայելով անգամ մանկահասակ երեխաներին: Մարդասպաններն, այնուհետև, մնացած 250 հոգուն՝ այրիացած կանանց ու որբերին հանձնեցին փաշայի «գլխությանը»՝ որպես ստրուկների: Կանանց մեծ մասին՝ ավելի քան 200 հոգու, փաշան քրդերին նվիրեց²:

Գրբըգ-խանի ջարդի ժամանակ չարագործները տանջանքներով սպանեցին նաև ոչ հեռու գտնվող հայկական գյուղերի բազմաթիվ տղամարդկանց, որոնք բնակավայրերից դուրս էին՝ դաշտում, այգիներում, ջրաղացներում:

Գրբըգ-խան գյուղի շրջակայքում էին գտնվում Աթըգ, Գանլը-Դերե, Սարը-Չինար, Սողանջը, Մեզկիթեոնի և Հաջի-Մուսալը գյուղերը: Գյուղացիները, քրդերի հարձակումներին չզիմանալով, ձգում են իրենց տները և փախչում ու կուտակվում

գյուղախմբի կենտրոնում գտնվող **Բեյլանում**: Դատարկված գյուղերը քրդերն ամբողջովին կողոպտում ու այրում են:

Սոսկայի ղեպքերից սարսափահար՝ Բեյլան եկած գյուղացիները տեղացիների հետ քաշվեցին տները և ապրիլի 5-10-ը մնացին փակված՝ սիրտ չանկելով դուրս գալ: Հայեպի նահանգի կենտրոնից գյուղին ուղարկվեց 9 զինվոր՝ Բեքիր չավուչի գլխավորությամբ: Զինվորները նոր էին Հայեպից հասել Բեյլան, երբ Աթըգ գյուղի կողմից քրդերը զանգվածաբար հարձակում գործեցին Բեյլանի վրա: Զինվորները կատարյալ անկեղծությամբ ու անձնվիրությամբ կանգնեցին քրդերի դեմ և նրանց ցրեցին: Գայմագամի հրամանով՝ Գրբըգ-խան գյուղում տեղակայված 40 զինվորները նույնպես հասան Բեյլան, և հայերն ազատվեցին ամբողջական կոտորածից¹:

Անտիոքից հարավ, ծովեզերքին էին գտնվում **Սուեղիայի** կաղայի հայաբնակ վեց գյուղերը՝ **Վակըֆ, Յողուն-Օլուք, Բիթիաս, Ողըբեգ, Քերուսիե, Հաջի-Հարիրյի**: Գյուղախմբում ապրում էր մոտ 5 հազար հայ, որոնք գերազանցապես զբաղվում էին շերամապահությամբ:

Երբ քրդերն ու թուրքերը հարձակման անցան գյուղախմբի վրա, շատ գյուղացիներ գյուղերում չէին, այլ սովորականի պես գործով գնացել էին Անտիոքի կողմերը: Նրանք այնտեղի և շրջակա հայաբնակ գյուղերի ջարդի ժամանակ զոհվեցին ամբողջությամբ:

Քեսապի ջարդից հետո հրոսակախմբերը փորձեցին հարձակվել Սուեղիայի վրա, բայց, բարեբախտաբար, այդ ժամանակ գյուղախմբի դիմաց մի բրիտանական մարտանավ էր հայտնվել: Դրա ներկայությունը սարսափի մատնեց ջարդարարներին, որոնք իրենց մտադրությունից ստիպված հետ կանգնեցին: Մարտանավը վերցրեց լեռներ փախած և այնտեղից իջած ու ժողովված մոտ 1600 մարդու, հիմնականում հարսներ, աղջիկներ ու մանուկներ և Իսկենդերուն տեղափոխեց²: Սուեղիայի հայու-

¹ Տե՛ս **Յակոբ Յ. Քէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 258:

² Նույն տեղում:

¹ Տե՛ս **Յակոբ Յ. Քէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 260-261:

² Տե՛ս «Բիւզանդիոն», № 3836, 13 (26) մայիսի 1909 թ.:

թյան մի մասը փրկվեց անխուսափելի ջարդից:

Բայց դա սփոփանք չէր, քանի որ Սուեդիայի գյուղախմբից դուրս գտնվող չրջակա գյուղերում 500-ի չափ հայեր բնաջինջ եղան, այդ թվում՝ չուրջ 100 մուսայեոցիներ¹: Աստի գետը հայերի հարյուրավոր դիակներ տարավ ու ծով թափեց:

Ջարդից փրկվածները փախան ու ապաստանեցին լեռներում՝ օրեր շարունակ սովի ու տանջանքների ենթարկվելով:

Սուեդիայի տագնապը կիլիկյան 1909 թ. ապրիլյան ջարդերի եզրափակիչ իրադարձություններից մեկն էր: Ողբերգությունն ավարտը կարծես մոտենում էր:

Այստեղ ևս հարկ է չեչտել, որ Հայկափ վիլայեթում բնակություն հաստատած ֆրանսիացիները, հատկապես պաշտոնյաները, հայերին հնարավոր օգնություն ցույց տվեցին: Հայկափ ֆրանսիական հյուպատոսությունը բազմիցս պաշտոնապես դիմել էր վալիին՝ ջարդարարների նկատմամբ անդիջում կեցվածք բնդունելու պահանջով: Ավելին, հյուպատոս Ֆերդինանդ Ֆերիեի փափուկ սիրտը չդիմացավ հայերի գաղանային ջարդերի տեսարաններին: Մարդասեր Դիվանագետն Երիտասարդ տարիքում մեռավ վշտից՝ կիլիկիահայերի սրտում անմոռանալի հիշատակ թողնելով²:

Ինչ խոսք, բոլոր հիմքերը կային, որ 1909 թ. ապրիլի առաջին կեսին Կիլիկիայում՝ Ադանայի և մասամբ Հայկափ նահանգներում սանձազերծված վայրագությունները տարածվեին Փոքր Ասիայի ամեն կողմերը՝ տասնյակ հազարավոր կյանքեր խլելով:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանում ստացված տագնապալի նամակներն ու հեռագիրներն ահագանգում էին, որ Թուրքիայի ասիական նահանգներում տեղակայված զորքերում եռանդուն քարոզչություն են մղում հին թուրքերը և մահմեդական հոգևորականությունը, իսկ երիտթուրքերի շրջանում տեղի են ունենում հակաքրիստոնեական, մանավանդ հակահայկական խլրտումներ: Գահրնկեց արված սուլթան Աբդուլ Համիդի սիրելի

որդի Բուրհանեղդինը Փոքր Ասիայում կողմնակիցներ էր հավաքագրում՝ սուլթանական գահը հոր համար վերանվաճելու նպատակով:

Թուրքիան հրարխի վրա էր և ամեն բույս կարելի էր նոր ճզնածամի սպասել: Կ. Պոլսում մեծ անհանգստություն էին առաջացրել օտար ղեկավարների այն հայտարարությունները, որ եթե մինչև 1909 թ. մայիսի սկիզբը անկարգությունները Փոքր Ասիայում վերջ չգտնեն, իրենց պետությունների զորքերը ցած կրեբեն այնտեղ:

Բարեբախտաբար, սկսված խոռվությունները Փոքր Ասիայում չփերածվեցին արյունահեղություն, ջարդերը սահմանափակվեցին Կիլիկիայով: Ադանայի և Հայկափ նահանգներին սահմանակից կամ ոչ հեռու Կեսարիայի, Էվերեկի, Թոմարոյի, Կոնիայի, Սերաստիայի, Արարկիրի, Նարբերդի, Ակնի և նույնիսկ մինչև Տիգրանակերտ ձգվող տարածքների քրիստոնյաները, մանավանդ հայերը, փրկվեցին դանդաժային կոտորածներից:

Մի շարք շարժառիթներից դատ՝ դրա հիմնական պատճառն այն էր, որ Պոլսում և նրա շուրջը ծավալված արդուհամիդյան շարժումը պարտություն էր կրել, և Բարձր Դուռը հայտարարել էր, թե միջոցներ է ձեռնարկելու աղետի տարածումը դապելու համար:

Ձնայած դրան, բուն Հայաստանի հայությունը համոզված չէր, թե Կիլիկիայի հայերի ողբերգությունը չի կրկնվելու իր միջավայրում: Կեսարիայից Կ. Պոլսում ստացված մի նամակում կարդում ենք. «Ատանայի և չրջակայից սոսկալի ջարդերը շատ գէշ կերպով ազդած են մեր միտքին և մեր շիղերուն: Ո՛չ մէկուն բերանը կը բացուի, և գրեթէ ամէնքս ալ յուզմունքէ հիւանդ ենք: Ամէն մարդ այս ազգայիններուն կրած սոսկալի և մինչ ցարդ պատմութեան մէջ նմանը չունեցող աղէտը՝ ճիշդ իր իրեն ուղղուած կը համարէ, և միշտ վախի մէջ է թէ արդեօք ուրիշ տեղեր ալ պիտի յուսի՞ն ասանկ գոյժեր: Թուրք մուսուլմանութիւնը պէ՞տք է յափրացած, կշտացած նկատել Կիլիկեան Հայ պատուական տարրին փճացումով: Ո՞վ գիտէ, եթէ Օսմ. Պատ-

¹ Տե՛ս «Ազգակ» բացատիկ (Բեյրութ), 1 հունվարի 2009 թ., էջ 149:

² Տե՛ս Արշակունցի Թէոդիկ, Ամիս մը ի Կիլիկիա, էջ 148:

մութևան հետևինք ուշի ուշով, կը տեսնենք որ ամէն բարենորոգում կամ բարենորոգմանց խոստում հետք քրիստոնէից ջարդ բերած է: Կարելի է որ այս պատճառաւ է որ կ'ըսեն Փրանսացիք. *Les massacres sont corollaires aux réformes*»¹:

ԳԼՈՒՆ ԶՈՐՐՈՐԴ

ԱՐՀԱՎԻՐՔԻՆ ՀԱԶՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ

Ջարդը վերջանալուց հետո կիլիկիահայոց ղեկավարները մնացել էին չվարած: Մի ժամանակվա շեն երկիրն այժմ տնքում էր ավերակների տակ: Ծխում էին քաղաքներ, գյուղեր, դաշտեր: Այնքան լայնածավալ ու սոսկալի էր աղետը, որ թվում էր, թե որևէ գործ ձեռնարկելն այլևս ավելորդ է: Սովոր, թշվառությունը, մերկությունը տիրում էին միահեծան, արցունքն էր վազում մարդկանց աչքերից: Ամենուր հուսահատական էր կացությունը: Իր այս ցավալի վիճակի մեջ ժողովուրդն անդեկ էր մնացել: Սիսի կաթողիկոս Սահակ Բ Սապայանը կորցրել էր հեղինակությունը և չգիտեր իր անելիքները. իսկ հասարակական գործիչները չէին իմանում ինչից սկսել:

Այն օրերի սարսուղագեցիկ դեպքերն ուսումնասիրողները վկայում են, որ կատարված ոճիրները, որոնց անրնդունակ են ամենադադրելի կենդանիները՝ բորենիներն անգամ, անյսելի և աննախընթաց են մարդկային պատմության մեջ: Մարդկային մտքի ընթացքը կասեցնող քստմնելի տեսարաններին սպառիչ բնութագիր տալու համար չափազանց աղքատ է որևէ մեկ աղզի կամ ցեղի լեզուն: Ականատեսներն իրենց պատմածներով ցնցող եղելութուններ են ներկայացրել արյունոտված սրտով: Նրանցից մեկը ջարդից հետո գրում էր, որ «այդ հրէշները կիններու ծունկին վրայ ամուսինները կը մորթէին, մայրերու կուրծքին վրայ ծծկեր մանուկները կը խողխողէին և անոնց թոքերը պատառոտելով՝ խելակորոյս մայրերուն կը կերցնէին, կամ մայրերու ստինքները կտրելով՝ զաւակներու բերանը կը դնէին՝ ստիպելով ուտել. անոնք եղբորը առջև քոյրը կը բռնարարէին, ամուսինին առջև՝ կինը, հօրը առջև՝ դուստրը, ու կը ստիպէին

¹ «Բիւզանդիոն», № 3824, 28 ապրիլի (11 մայիսի) 1909 թ.: Թարգմանությունը՝ «Ջարդերը բարենորոգությունների ուղեկիցներն են»:

Հայ աղջիկները մերկանդամ դժոխային պարի մը չըջանակ կաղ-մել և վրանին քարիւղ թափելով կը բռնկեցնէին թշուառ գոհե-րը. անոնք որ ամսացող դիակներն իսկ կը յիշէին և կամ տաանրվեց տարեկան Հայ կոյսեր անգթարար մորթելով՝ անոնց արեան բաղնիք կը սարքէին չրեր ճիւղ թրքուհիի մը ամու-թիւնը բուժելու յիմար ակնկալութեամբ»¹:

Ջարդի և հրդեհի երեսից մոխրի վերածված Աղանա քաղա-քում մեծ դժվարութիւններ կային պատսպարելու վերապրող-ներին և չըջակա գյուղերից այդտեղ խուժած ժողովրդին: Մի փոքրիկ սենյակում իրար վրա թափված էին 15-20 հոգի, որոնք դուրկ էին սննդից՝ չխոսելով հագուստի և վառելիքի մասին:

Համատարած հուսահատութեան այդ պայմաններում, այ-նուամենայնիվ, պետք էր ինչ-որ բան անել: Չէ՞ որ անհրաժեշտ էր կոտորածներից վերապրած հայերի գոնն մի մասին փրկել սո-վից ու համաճարակներից: Իսկ դա կարելի էր անել միայն ու միայն յարված ու անձնվեր աշխատանքով:

Քանի որ կիլիկյան աղետի օրերին ամենաչափ զոհեր տվել էր Աղանա քաղաքի հայութիւնը, ուստի Հայ եկեղեցու և հայ-կական հասարակական կազմակերպութիւնների ջանքերն ա-ռաջին հերթին այնտեղ կենտրոնացվեցին:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՂԵՏՅԱԼՆԵՐԻՆ

Աղանայի կոտորածներից փրկվածներն ապրիլի 13-ին վի-լայեթի կառավարչական պաշտոնատան հարակից պարտեզը թողնելով՝ ուղղութիւն վերցրին քաղաքից դուրս, երկաթուղա-յին կայարանի կողմը: Ճանապարհին նրանց թուլատրվեց լցվել հույն թրիփանի հարուստ եղբայրներին պատկանող բամբա-կազտիչ գործարան² (եղբայրներից մեկը նաև բրիտանական հյուպատոսարանի թարգմանիչ էր), իսկ մնացածներն ապաս-

տանեցին դրա հարևանութեամբ գտնվող մի ուրիշ գործարա-նում, որի տները գերմանացիներ էին:

Թրիփանիների գործարան մտած և բակում խոնված, իրար վրա դարսված տառապակոծ հայերը բախտավոր էին, որ կեն-դանի են մնացել:

Կեսօրին գործարանի շուրջ խմբվել էին հարյուրավոր ջար-դարարներ, որոնք ներս մտնելու հարմար բոպի էին սպասում: Բարերախտարար, հայտնվեցին զինվորներ, որոնք կանգնեցին հրոսակների դեմ:

Վիճակը նույնն էր նաև գերմանացիների գործարանում, որի շուրջը նույնպես վխտում էին ջարդարարների խմբերը¹:

Ապրիլի 14-ի երեկոյան, թուրք զինվորականներից մեկը, մտնելով թրիփանիների գործարան և կանգնելով մի բարձր տեղ, սկսեց բարձրաձայն հայտարարութիւններ անել: Նա ասում էր, որ մեծ ոճրագործ սուլթան Արդուլ Համիդն այսօր գահընկեց է եղել և նրա փոխարեն սուլթան է կարգվել Մեհմեդ Ռեշադը: «Այլևս մի՛ վախեցեք, մենք՝ ազատական զինվորներս, եկել ենք ձեզ պաշտպանելու: Այսուհետ դուք ազատ եք, ուստի ազդիթն՝ք մեր նոր վեհապետի կյանքի համար»:

Ամենքի ուրախութիւնն անսահման էր: Ամեն ինչ երազ էր թվում: Արհապիրքի օրերի հետ բաղդատմամբ թվում էր, թե հիմա սկսվում են բարօրութեան ու երանութեան օրեր:

Ջարհուրելի օրերից հետո այժմ, ապրիլի 14-ին, բոլորի հոգսը մի կտոր բան ուտելն էր: Թշվառութիւնն անսահման էր կիլի-կիայի բոլոր հայկական գյուղերում ու քաղաքներում: Աղանայի, Տարսոնի, Համիդիի, Լաթաքիայի, Քեսապի, Հասանբեյի, Գոգ-Օլուքի և ուրիշ շատ տեղերի հայերից բացօթյա խոնված էին 40000 սովյալներ՝ ենթարկված ցերեկվա տոթին և գիշերվա ցրտին: Դրան գումարված էին հաղորդակցութեան արգելքը, սովյալներին ու հիվանդներին ահարեկելու ճիվաղային, սպանիչ դրութիւնը և այլն: «Հա՛ց, հա՛ց», - լսվում էր չորս կողմից: Հաց, միայն հաց էին խնդրում բոլորը: Մանավանդ փոքրիկ երեխանե-

¹ «Հայրենիք» (Բոստոն), № 34 (539), 17 օգոստոսի 1909 թ.:

² Տե՛ս «Բիւզանդիոն», № 3823, 27 ապրիլի (10 մայիսի) 1909 թ.:

¹ Տե՛ս «Դրօշակ» (Ժնև), № 5, մայիս, 1909, էջ 55:

րի անոթութեան ճիշդ բղկում էին մեծերի վիրավոր սրտերը¹:

Դառնագին բան է խորհել, թե Կիլիկիայի խրոխտ ու պերճաչուք քաղաքի՝ Ադանայի հայութիւնը, որը երբեք աղքատներ չէր ունեցել, ամենին չէր իմացել, թե ինչ է ուրիշից մի բան խնդրելը, առավել ևս՝ մուրալը, այժմ, ահռելի աղետից հետո, ստիպմամբ էր հանուր հայութեան ձեռք կարկանդակ և աջակցութիւն հայցել:

Վերապրող սովյալների մեջ էին տեղի ամենահարուստներն ու երեւելիները, որոնք տասնյակ հազարավորների հետ մի պատառ հաց էին աղբսում:

«Արեւելեան մամուլը» գրում էր. «Ասկից գրեթէ ամիս մը առաջ առտին աննկարագրելի խինդ ու խնծիղներով ողողուած աղնուատոհմ ընտանիքներ, այսօր ... անլուր աղէտէն մազապուրծ ողջ մնացածներն այ աշտում հացին կարօտը կը քաշեն ... Նախկին փարթամ Ատանայի ուրուանկարը կը մնայ միայն: Երէկի ոսկեճամուկ արդուզարդերու վէտվէտքին մէջ եղած զեղուհիներն ու պերճութեամբ սոնքացող պարմանիները, աւա՛ղ, թերեւս այսօր գրգռեալներ այ չեն կրնար գտնել իրենց մերկութիւնը ծածկելու»²:

Ապրիլի 15-ի կեսօրին Մերսինի նավահանգստում խարխալ գցած բրիտանական զրահանավի բժիշկը, իր հետ վերցրած մի քանի հիվանդապահներ, եկավ Ադանա և առաջինը միջոցներ ձեռնարկեց քրիստոնյաներին սովից փրկելու համար: Իրենց հետ բերած գումարով նրանք մի քանի հարյուր պարկ ալյուր գնեցին և սովյալներին հանձնեցին:

Տեղեկանալով աղգակիցների վիճակին՝ Մերսինի հայերը նույնպես անմիջապես ալյուր հավաքեցին և Ադանա ուղարկեցին: Տասնյակ փոքր գործի գցվեցին սովատանջ ժողովրդին կշտացնելու համար: Բացի այդ, այս ու այն տեղից գտնված թիթեղների վրա «թխում» էին խմորը և կիսահում շտապ բաժանում³: Թրիփանի եղբայրների և զերմանական գործարաններում ապաստանածներին օգնութեան հասան նաև ուրիշ տեղերից:

Օգնելու համար որեւէ ջանք չէին խնայում ֆրանսիացի հիսուսյան հայերն ու քույրերը, Ադանայի անգլիացի հյուպատոսը, նրա տիկինը, Մերսինում կայանած բրիտանական մարտանավի սպաները, ամերիկացի միսիոներ Վիլյամ Ն. Չեմբրսը, Թրիփանի եղբայրները, զերմանացի գործարանատերերը և ուրիշներ:

Առաջիններից եղբայրական ձեռք մեկնեցին հույները, որոնք ոչ միայն իրենց ունեցած ուտեստեղենից տրամադրեցին հայկական կազմակերպութիւններին, այլև Ադանայում կազմեցին մի մասնախումբ՝ հույների շրջանում հանգանակութիւն կազմակերպելու համար: «Բիւզանդիոն» հայտնում էր, թե Բեյրութի հույները ևս կազմել էին մի նպաստամատուց մարմին և կիլիկիահայ աղետյալների համար հանգանակութիւն էին կատարում⁴: Նույն թերթը գրում էր. «Մեր յոյն հայրենակիցներուն եղբայրական այս ազնիւ զգացումներն երախտագիտութեամբ կը համակեն զմեզ և խորապէս պիտի յուզեն բոլոր սրտերն որ Կիլիկիոյ իրենց եղբայրներուն ու քույրերուն կը կակճան»⁵:

Չանագան բարեգործական հիմնարկներ սկսեցին 75.000 մարդու նպաստներ բաժանել⁶:

Առաջին քայլերն արվեցին ջարդից փրկված պանդուխտներին Ադանայից իրենց ծննդավայրերը փոխադրելու համար: Նրանք Ադանայում տվել էին ամենաչատ զոհերը, նույնիսկ տեղացի հայերից ավելի շատ: Ականատեսը նկարագրել է այն պահը, երբ հազարավոր պանդուխտների արձանագրում էին՝ իրենց օջախներն ուղարկելու համար:

«Նախ էրիկ մարդիկը յառաջ կ'անցնին: Ցնցոտիներու մէջ, կիսամերկ, բոպիկ, այրած, կոտած ղէմքերով, թափած կամ խոխացած մաղ ու մօրուքով, քստմնելի ու աղետարչ կերպարաններ են, որոնց վրայ նայուածքդ կ'արիւնի: Ոմանք կաղ, խեղանդամ, ցուպերու կրթնած, ուրիշներ՝ հիւանդոտ, հեւալէն, հոնդալէն, քաշկոտուելէն կու գան, կանգ կ'առնեն առջեւնիս, յարգալից, աղաչաւոր, գրեթէ երկրպագու կեցուածքով մը»⁷:

¹ ՏԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թթ. 8-9:

² «Արեւելեան մամուլ», № 22, 26 մայիսի 1909 թ., էջ 519:

³ ՏԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թ. 14:

⁴ Սուրէն Պարթեւեան, Կիլիկեան արհաւիրքը, Կ. Պոլիս, 1909, էջ 128:

Շատերը եկել էին Վանից, Տիգրանակերտից, Սերաստիայից, Կեսարիայից, մանավանդ Ռարրերդի գյուղերից: Չարսանջակի առաջնորդական տեղապահ Հ. Պոլսի հայոց պատրիարքարանին տեղեկագրել էր, թե Կիլիկիայի աղետին 400 չարսանջակցի գործավոր սպանված է¹: Մեծ էր նաև հաճրեցիների թիվը, որոնց կորուստը ամենից ահուկին եղավ Աղանայում:

Նույն ականատեսը արձանագրային սեղանին մոտեցող մի աղետյալի հարցրել է.

«- Դու՞ն ուրտեղացի² ես:

- Մչեցի, աղա՛:

- Ինչո՞ւ ելեր հոս եկեր ես քու երկրէդ...

- Մեր երկիրը վաստակ չի կայ, եկեր եմ ընչպարութեան...

Ու տաժանքոտ հեւք մը առնելէ ետքը, կը ձայնէ.

- Մեռանք, է, մեռանք, է...

Բողոքախառն վշտի ահաւոր ու կողկողազին աղաղակ, որ այդ մարդուն ցամքած կուրծքէն կը փրթի, բայց որ Հայաստանի խուլ ու ցաւատանջ խորերէն կու գայ կարծես, եւ ըսել կ'ուզէ. «Ա՛յ մեռանք, ա՛յ չենք կրնար դիմանալ այս դուրսմին, այս թշուառութեան, ա՛յ հերիք չէ՞ ... Մեռանք, է՛...»²:

Այդ ծանրագույն պահին վիրավորներին առաջինն օգնութեան հասան Կիլիկիայում գործող եվրոպական ու ամերիկյան հիմնադրանքները, բարեգործական հաստատությունները, միսիոներները՝ անկեղծ սրտով ձեռք կարկառելով աղետյալներին: Քանի՛-քանի՛ վիրավորներ հրաժեշտ կտային կյանքին, եթե վրա չհասնէին Կիլիկիայում գտնվող օտար հաստատությունները: Հատկապես լայն գործունեություն էր ծավալել Աղանայի անգլիական հիմնադրանքը, որի աշխատանքներն անձամբ ղեկավարում էր հյուպատոսի կինը: Բազմաթիվ վիրավորներ իրենց կյանքի համար պարտական էին հենց այս տիկնոջը³:

Քանի որ վիրավորների թիվը միայն Աղանայում հասնում էր մի քանի հազարի, ուստի բարեգործական հաստատությունների և օտար հյուպատոսությունների ազդու միջամտություններ, հա-

սարակական շատ հիմնարկությունների չենքեր, վարժարանների մասնաչենքեր հիմնադրանքների վերափոխվեցին:

Բայց ձևոնարկված միջոցները մի կաթիլ էին համատարած դժբախտություն ծովում: Թե՛ աղգային և թե՛ օտար հիմնադրանքները բժիշկների, ղեղամիջոցների, վիրարուժական գործիչների սուր կարիք ունեին: Դա էր պատճառը, որ, ստիպված, վիրարուժական գործողություններ էին կատարում նաև առաջին անգամ հերձաղանակ բռնած մարդիկ: Վիրարուժական սեղանների ղեր էին կատարում կոպիտ տաշվածքով շտապ պատրաստված փայտյա կառուցվածքները: Այդ պայմաններում հնարավոր էր լինում վիրավորների միայն մի մասին քիչ թե շատ օգնություն հասնել: Նրանց մեծ մասը մահվան սեմին էր:

Նախորդ էջերում արդեն նշվել է, որ Փարիզում լույս տեսնող «Ֆիզարո» լրագիրը տպագրել էր Մերսին նավահանգստում խարխիս նետած «Վիկտոր Հյուգո» ֆրանսիական զրահակրի մի սպայի նամակները Աղանայում իր տեսած դարհուրանքների մասին: Դրանցից մեկում նա գրել էր. «Մենք զնացիներ ֆրանսիական կոյսերի հիմնադրանքը, որը լցուած էր սարսափահար, յուսահատութեան հասած և ցնցոտիներով ծածկուած հայերով: Մեր գայուց երկու օր առաջ հիմնադրանքում ապաստան գտած հայերի թիւը 3000 հոգուց անց էր: Հայուհիները լաց էին լինում և զանգատում, իսկ հենց զրանց կողքին անհոգ խաղում էին նրանց երեխաները, լուր ու հանգիստ նստած էին տղամարդիկ: Մենք մտանք հիմնադրանքին յատկացրած շինութիւնը: Քիչ-միչ բժշկութեանը ծանօթ մի հայ կապում էր մի պառաւ կնոջ վէրքը: Նա գլխի վրայ ութը վէրք ունէր, որոնցից մի քանիսը մերկացնում էին ուղեղի թաղանթը: Չարդարարները կտրել էին նրա մի ձեռքը և մի ոտքը: Նրա աչքի առաջ բռնաբարել էին նրա աղջկան և ապա սպանել: Արդեօք պէ՞տք է աւելացնեն, որ թշուառ կինը խելագարուեց...

Ապա մենք անցանք բակի միջով, կանայք, համարեայ բոլորն էլ պառաւ, ընկնում էին մեր ոտքերը, քաշում մեր փէշերից որպէս սրբութեան, կարծես թէ այդ փէշերը ի վիճակի են իրենց պաշտպանել թուրքերից: Նրանք լաց էին լինում, խնդրում և

¹ Տե՛ս «Բիզանդիոն», № 3851, 11 (24) Հունիսի 1909 թ.:

² Սուրէն Պարթևեան, Կիլիկեան արհաւիրքը, էջ 129:

³ Տե՛ս Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 145:

աղերսում մեզ՝ փրկել. բայց որպիսի խոնարհութեամբ են նրանք խնդրում: Մի քանի դժբախտներ գրկել էին իմ ոտքերը. համբուրում էին ... իմ ոտքերի հետքերը: Այո՛, իմ քայլերի հետքերը ... Եւ այդ բանն անում էին սպիտակահեր կանայք...: Կոկորդս սեղմում էր, եւ ես չէի կարողանում բառ անգամ արտասանել»¹:

Անհամար վէրքերով ծածկուած մի ուրիշ հայ կնոջ «բուժ-վելն» այսպես է նկարագրել ականատեսը. « ... սրունքները կտրեցին, մէկ բաղուկը հանեցին ... աչքերը կուրցած էին, կուրծքին վրայ ամէն ուղղութեան՝ դաշոյնի եւ այրուցքի հետքեր ունէր ... իր մարդկային ձևին կէսը դեղձուած էր գրեթէ ... այլ սակայն երկար ապրեցաւ այդպէս, եւ ուղեգր արթուն մնաց ... մինչեւ վերջին շունչը՝ ամէն օր մէյ մէկ մաս կը կտրուէր, կը բաժնուէր մարմինէն, որովհետեւ բոլոր վէրքերը նեխած էին գրեթէ, ու մինչեւ վերջին շունչը իր սարսափելի կացութեան գիտակցութիւնը ունեցաւ ... Զարմանալի է...»²:

Հիվանդանոցներից ամեն օր տասնյակ հանգուցյալների գերեզմանատներ էին տանում:

Ահա Աղանայի գերմանական հիվանդանոցում մեռնելուց առաջ հաճրնցի Մարտիրոս Տումանյանի գրած հրատեղութի հուզիչ նամակը՝ ուղղված ծնողներին.

«... Միրելի՛ ծնողքս.

Զարնուեցայ եւ կը մեռնիմ: Ինձ համար հոգ մի՛ ընէք, ես պիտի երթամ հոն, ուր շատ հանգիստ տեղ մ'է: Ես ալ 30.000 անմեղ նահատակներու տետրակին մէջ արձանագրուեցայ: Ես գնդակէն չեմ ցաւիր, ինձ ցաւ պատճառող կէտը չէ թէ մէկ գնդակով մեռնիս է, այլ իմ կրթութեանս համար Զեր ըրած դժոգութիւններուն փոխարէն Զեղի բարիք մ'ըրած չըլլալս է: Հիմա ես դեռ 26 տարեկան երիտասարդ տարիքիս մէջ կը մեռնիմ, ասոր չեմ ցաւիր, ազգիս եւ հայրենիքիս պարտական ըլլալով, ծառայութիւն մը չընելով մեռնիս աւելի ցաւ կ'ազդէ ինձ, եւ մանաւանդ կը ցաւիմ, որովհետեւ վատի մը ձեռքով կը մեռնիմ: Ես մահէ չի

վախնալով կը մեռնիմ, Տէրը այսպէս կարգադրեր է, թող Անոր կամքն ըլլայ, բոլոր բարեկամներուս եւ ազգականներուս բարեներով: Մնաք բարեա՛ւ առ յաւէտ ...

Ատանա

13 Ապրիլ 1909»¹:

Թրիփանիների գործարանում եւ նրա մերձակայքի գերմանական ձեռնարկութեան մէջ պարփակված 20 հազարի չափ հայերը չէին կարող երկար ժամանակ այնտեղ մնալ: Գործարանատերերը թեև չէին բողոքում, բայց ամեն օր ֆինանսական մեծ վնասներ էին կրում:

Բարեգործական կազմակերպութիւնների ջանքերով բերվեցին հարյուրի չափ վրաններ, եւ գործարաններից ոչ շատ հեռու, բաց դաշտում հիմնվեց ճամբար, ուր եւ տեղափոխվեցին աղետյալները՝ ամեն վրանի տակ հանգրվանելով 30-40 հոգի: Մնացածները շարունակում էին մնալ բաց երկնքի տակ:

«Վրանաբաղարը» իսկական դժոխքի նման էր: Վրաններից ներս մղձավանջային պատկեր էր. գետնին փոփած էին մարդկային վտիտ արարածներ՝ արյունոտ ու արցունքոտ, ցնցոտիների մեջ:

Իսկ վրաններից դուրս, հողի վրա պառկած էին արեւից չորացած ու վշտից տառապակոծ, դալուկ ու տխրամած հազարավոր ուրվականներ²: Ամբոխը գալարվում էր հուսահատութեան մեջ: Մարդիկ սիրտ չունեին բարձրացնելու տառապանքից հոգնած ճակատները: Բոլորի հոգում սպանված էր ապրելու, վերածնվելու հույսը: Ահափոր իրականութիւնը դուրս էր մարդկային երեակայութեան սահմաններից: Պատահական չէ, որ մեռնելուց առաջ շատերը խելագարվում էին:

Սովն առատ հունձք էր անում հատկապես մանուկների ու պատանիների շրջանում: Դրան գումարվեց մի ուրիշ պատուհաս. տարածվեց կարմրախտի պես մի համաճարակ, որն օրական տասնյակ մանուկների կյանքն էր խլում: Փոքրիկ, հիվանդ երեխաները, մայրերի ծնկներին ընկած, հոգեվարք էին ապրում.

¹ Հոգվածի թարգմանութիւնը տե՛ս «Մշակ», № 93, 5 մայիսի 1909 թ.:

² Զապէլ Եսայեան, Աւերակներուն մէջ. էջ 54:

¹ Տե՛ս Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը. էջ 852-853:

² Տե՛ս Զապէլ Եսայեան, Աւերակներուն մէջ. էջ 65:

իսկ քիչ այն կողմ ուրիշ փոքրիկներ խաղում էին՝ անգիտակից իրենց չուրջ անցած-դարձածին: «Մայրերը ցամքած աչքերով ու դժբախտութեան չափադանցութենէն սրտմտած, առանց նոյնիսկ քահանայի դիմելու՝ փոս մը կը փորէին վրանին քով ու հոն կը թաղէին մեռած տղարը», - գրում էր այդ ամենին ականատես Զապէլ Եսայանը¹:

Մեռած երեխաները թաղվում էին հենց վրանների մոտերքը փորված փոսերի մէջ՝ իրար վրա դարսելով: Անձանոթի այն հարցին, թե վրանների չորսրոյորը տարածված հողակույտերը ինչի՞ համար են, հետեւի էր պոռթկացող հեծկտանքը զսպել անկարող մայրերից մեկի պատասխանը.

«Մեր մեռած պղտիկներն են, մեր մեռած պղտիկներն են, որ հոս, մեր վրաններուն քովիկը թաղեցինք սարսափի օրերուն՝ չի համարձակուելով հեռուն, գերեզմաննոց տանիլ զանոնք ... Մէկ ձևորով անոնց աչուկները կը գոցէինք, մինչ միւսով քիչ մը հող կը փորէինք անոնց դիակները թաղելու համար...»²: Ի տես այդ ողբերգութեան, անձանոթը գրել է. «Ու կը փախչիմ, կը հեռանամ այդ վրաններէն ու հողակույտերէն, սրտիս փլատակը, արցունքս ու հեծկտուքս տանելու համար մեկուսի անկիւն մը...»³:

Բարեգործական կազմակերպութիւնների ու անհատների ուժերից միանգամայն վեր էր ճամբարում գտնվող սովյալներին օրական գոնե 200 գրամ հաց հասցնելը: 20 հազար ամբոխին՝ յուրաքանչյուրին օրական բաշխվում էր 45 գրամ հաց, 35 գրամ բրինձ⁴:

Պատահական չէ, որ սննդի չնչին չափարածնից, հիվանդութիւններից, հոգեկան անբուժելի ցնցումներից իրենց մահկանացուն էին կնքում օրական 50-70 մարդ:

Ճամբար եկած Զապէլ Եսայանը փորձել էր սփոփել զրժ-բախտ կանանցից մեկին, բայց սա խելահեղ բարկութեամբ ասել էր. «Երեք գաւակներովս հուրի եւ սուրի մէջէն ազատեցայ, ու

¹ Տե՛ս Զապէլ Եսայան, Աւերակներուն մէջ, էջ 69:

² Սուրէն Պարթեւեան, Կիլիկեան արհաւիրքը, էջ 163:

³ Նույն տեղում:

⁴ Վեր. Համբարձում Յ. Աշճեան, Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր, Նյու Յորք, 1950, էջ 122:

այս սեւ հողին վրայ երեքն այ մէկիկ-մէկիկ կորսնցուցի: Աչքերուս մէջ արցունք չէ մնացեր, ձայնիս մէջ ողբ չէ մնացեր, սիրտս քարի պէս կարծր է, թող աշխարհ աւեր-աւերակ դառնայ, իմ ինչո՞ւս է պէտք...»⁵:

4. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՑԻՆ ԻՇՆԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Զարդը զաղարելուց անմիջապես հետո, ապրիլի 15-ից սկսած, կիլիկյան աղետայններին օգնութիւն հասցնելու համար գործի յովեցին Կ. Պոլսի հայկական իշխանութիւնները:

Մինչև ապրիլի 19-ը պատրիարքարանը Աղանա եւ Կիլիկիայի զանազան կողմեր 1600 օսմանյան ոսկի ուղարկեց⁶: Նույն ժամանակ, նրա կոչով տարբեր տեղերից Աղանա հասան գումարներ՝ Մանչեստրից 1200, Իզմիրից 800 ոսկի:

Դեռևս 1908 թ. նոյեմբերին պատրիարքարանը Կ. Պոլսում կազմել էր մի նպաստամատույց հանձնախումբ, որի նպատակը Հայաստանի եւ Կիլիկիայի զավառների կարոտյալ հայերին աջակցելն էր: Կիլիկիայի աղետից հետո այդ հանձնախումբը կարողացավ Աղանա հասցնել 1000 օսմանյան ոսկի միայն:

Պոլսի հայութիւնը, կիլիկյան կսկծայի աղետի յուրերից չվարած, բացել էր իր կիսազատարկ քսակը՝ նպաստ հասցնելու իր եղբայրներին, քույրերին, գաղանային վայրագութիւններից, սրերից, կրակի բոցերից փրկված փոքրիկներին:

Ամեն շարաթ հակերով յաթեղեն էր ուղարկվում Աղանա եւ Հայեպ: Պոլսի հայ պատանիները, խմբեր կազմած, շրջում էին իրենց թաղերում եւ հավարում ամեն տեսակ հագնելիք՝ կոշիկ, շապիկ, վարտիկ, ինչ-որ տալիս էին, ինչ-որ կարելի էր տալ: Պոլսեցի տիկիները տալիս էին իրենց ունեցածներից՝ յայով ու կսկծայով:

⁵ Զապէլ Եսայան, Աւերակներուն մէջ, էջ 86:

⁶ Տե՛ս «Կոհակ» (Կ. Պոլիս), № 15, 5 սեպտեմբերի 1909 թ.:

Որոշ ժամանակ անց տեղ հասան նաև Կ. Պոլսից ուղարկված բժիշկները:

Հ. Յ. դաշնակցությունն Կ. Պոլսի կոմիտեի հովանավորությամբ կազմվել էր «Կարմիր խաչի» առողջապահական խումբը, որը մայրաքաղաքից շտապ հասել էր Ադանա և այնտեղ հիվանդանոց ու դեղարան հաստատել: Խումբը մեծ աշխատանք ծավալեց ոչ միայն Ադանայում, այլև ամիսներ շարունակ գործում էր նաև շրջակա գավառներում:

Կիլիկիայի կոտորածներն ամեն ինչից դատ անարգանք էին հայերի ազգային ինքնասիրությունը: Դա էր պատճառը, որ մայրաքաղաքի հայ համայնքը կառավարությունն իր բողոքն ու ցասումը ցույց էր տալիս դժգոհություն զանազան արտահայտություններով:

Հայոց ազգային ժողովի վարչությունը ապրիլի 19-ին հիշատակագրեր ներկայացրեց մեծ վեղիր Հուսեին Հիլմի փաշային, ազատարար բանակի հրամանատար Մահմուդ Շեքելթ փաշային և օսմանյան պառլամենտի նախագահին՝ առաջարկելով շտապ օգնություն հասցնել աղետյալներին:

Ապրիլի 20-ին Կ. Պոլսի հայոց մայր եկեղեցում տեղի ունեցավ հոգեհանգիստ՝ Կիլիկիայի կոտորածների զոհերի և Կ. Պոլսի հետադիմական շարժումը ճնշելու ու երիտթուրքերի իշխանությունը վերականգնելու ժամանակ սպանվածների համար: Եկեղեցում ու հարակից տարածքում հավաքվել էր շուրջ 4000 մարդ: Հոգեհանգստին ներկա գտնվելու համար սուլթան Մուհամմեդ Ե-ն ուղարկել էր իր առաջին քարտուղարին: Ներկա էին նաև իթթիհազական զինվորական պարագլուխներ էնվեր բեյը և Ահմեդ Նիադի բեյը:

Մայր եկեղեցում տեղի ունեցած հոգեհանգիստը վերջանալուց հետո, նույն օրը՝ ապրիլի 20-ին՝ մի խառը պատգամավորություն, բաղկացած առաքելական, ավետարանական և կաթոլիկ հայերից, ապրիլի 21-ին՝ մի ուրիշ հայ պատգամավորություն, կազմված Կ. Պոլսի հայ երեկյիններից, և ապրիլի 22-ին՝ հայ երեկյինների մի ուրիշ պատգամավորություն ներկայացան Դուստաբազի պալատ և նոր գահ բարձրացած Մուհամմեդ Ե-ին

ներկայացրին իրենց հիշատակագրերը՝ Ադանա քաղաքում ունահանգում տեղի ունեցող հայերի և այլ քրիստոնյաների կոտորածների, ինչպես նաև առանձին տեղերում շարունակվող խժոժությունների մասին: Դրանցում արձանագրված էին, որ լրագրերի հաղորդումների համաձայն, թուրքերի և քրդերի ձեռքով սպանությունները շարունակվում են Ադանայի շրջակա բնակավայրերում, ապրիլի 14-ին անկարգություններ են եղել Լաթարիայում և մերձակա հայկական գյուղերում, որոնք կողոպտվել ու հրդեհվել են: Քրդերի ձեռքով տասնյակ հայեր են սպանվել Դիարբեքիում և այլուր:

Սուլթանը խոստացավ հարկ եղած հանձնարարությունը տալ կառավարությանը: Նա նաև ասաց, թե բանակի ընդհանուր հրամանատար Ֆերիկ Մահմուդ Շեքելթ փաշան արդեն Կ. Պոլսից գորքեր է ուղարկել Կիլիկիա, թեև կարծում է, որ երկար ժամանակ կպահանջվի, մինչև դրանք հասնեն այդ երկրամասի այլևայլ կողմեր:

Մեծ վեղիր Հիլմի փաշան ապրիլի 22-ին պառլամենտի հաստատմանը ներկայացրեց նախարարների դահլիճի նոր կազմը: Նախկին նախարար Ֆերիկ փաշան հաստատվեց ներքին գործերի նախարար, Սալիհ փաշան՝ զինվորական, Պալի Համադա փաշան՝ վակրեֆների, Գաբրիել էֆ. Նորատունկյանը՝ առևտրի և հանրօգուտ շինությունների, Արիստիդի փաշան՝ երկրագործություն, հանքերի և անտառների, Ռաիֆ փաշան՝ Պետական խորհրդի նախագահ և այլն:

Նոր կառավարության հրամանով՝ Ադանայի ջարդարար կուսակալ Մահմեդ Ջևադ բեյն ազատվեց պաշտոնից և նրա փոխարեն նշանակվեց քուրդ Բարան գաղե Մուստաֆա Ջիհնի փաշան, որը Ադանա եկավ 1909 թ. ապրիլի 28 (մայիսի 11)-ին¹:

Ապրիլի 24-ին Կ. Պոլսում հավաքվեց Հայ ազգային ընդհանուր ժողովը, որը վարում էր Քաղաքական ժողովի ատենապետ Ստեփան Գարայանը: Կիլիկիայում տեղի ունեցած դեպքերի և ահուկի արյունալի արարքների մասին զեկուցումով հանդես

¹ Տե՛ս Վեր. Համարձում Յ. Աշճեան, Ատանայի եղեռնը..., էջ 30:

եկավ Հայոց ազգային ժողովի Քաղաքական ժողովի անդամ Հարություն Շահրիկյանը: Նա հիշեցրեց, որ ապրիլի 19-ին Ազգային ժողովի վարչություն՝ կենտրոնական իշխանություններին ուղարկած հիշատակագիրը մինչ այժմ արձագանք չի ունեցել, միաժամանակ նշեց, որ արդեն ապրիլի 15-ին Ազգային ժողովի վարչությունը ձեռնարկել է դրամահավաքի գործը, բայց հավաքված գումարը շատ անբավարար է, ուստի դրամահավաքը պետք է ավելի մեծ ետանդով շարունակել: Շահրիկյանը նաև դժգոհություն հայտնեց, որ Կիլիկիա ուղարկելու համար կառավարությունը բանավոր խոստացել է առանձնացնել 30.000 օսմանյան ոսկի, բայց ոչ ոք չգիտի, թե ե՞րբ է ուղարկվելու և ինչպե՞ս է բաշխվելու: Ձեկուցման վերջում նա առաջարկեց իշխանություններին ներկայացնել վեց կետից կազմված բանաձևի նախագիծ՝ հետևյալ պահանջներով.

1) Վերադարձնել թուրքերի ու քրդերի գերի տարած հայ կանանց, աղջիկներին ու պատանիներին, 2) Կոտորածների հեղինակներին երևան հանելու գործը չվստահել Ադանայի և Հայլայի վիլայեթների իշխանությունների պաշտոնյաներին, այլ քննությունը կատարել ուրիշ՝ դանադան ազգությունների անաչառ անձերից կազմված և բոլորովին անկողմնակալ մարմինների միջոցով, 3) Թալանածն ու կողոպտածը վերադարձնել իրենց տերերին կամ նրանց ժառանգներին, 4) Կառավարության բաց թողած նպաստը բաժանել ազգային խառը կազմ ունեցող մարմինների ձեռքով, 5) Պատասխանատվության ենթարկել կողոպտած ունեցվածքը վաճառողներին և գնողներին, 6) Որպեսզի Հայարնակ նահանգներում չկրկնվեն Ադանայի և Հայլայի վիլայեթների ցավալի դեպքերը, որոնց մեծապես նպաստեց հին ռեժիմի ոստիկանական պաշտոնեությունը, իրենց պաշտոններից հեռացնել հանցանքներ կատարած ոստիկանական ծառայողներին և նրանց փոխարեն տեղական բնակչության վստահելի ու սահմանադրության ջատագով տարրերից, ազատական սպանների հրամանատարությունում կազմակերպել քաղաքապահ խմբեր:

Ձեկուցման շուրջ ծավալված մտքերի փոխանակությունը

մասնակցեցին Տիգրան Աճեմյանը, Միհրան Գարազայանը, Հմայակ արք. Դիմարսյանը, Գրիգորիս վրդ. Բայաքյանը, Արամ Հայաջյանը, Գրիգոր Զոհրապը և ուրիշներ:

Ելույթ ունեցողների մեծ մասը խիստ քննադատության ենթարկեց կառավարությունը՝ Կիլիկիային օգնելու դանդաղ ընթացքի համար:

Իր ելույթում Գրիգոր Զոհրապը չի համաձայնում այն պատգամավորների հետ, ովքեր գտնում էին, որ իշխանությունները բնավ չահազրգոսված չեն օգնելու աղետի ենթարկված հայերին և մյուս քրիստոնյաներին: «Ես պիտի խնդրէի, - ասում էր նա, - որ հաւատք ունենաք այդ գերագոյն մարմինին (պառլամենտի: - Չ. Ս.) բարի տրամադրութեանց վրայ...»: Հմայակ սրբադանն ընդմիջում է Զոհրապին՝ ասելով. «Սո՛ւտ է, կե՛ղծ է, ես չե՛մ հաւատար»: Զոհրապը շարունակում է, նկատելով, որ Օսմանյան խորհրդարանի արարքները քննադատելը վեր է Հայ ազգային ընդհանուր ժողովի իրավասություններից և վիրավորական է «մեր թուրք հայրենակիցներուն»: Նա հիշեցնում է, որ խորհրդարանը միաձայնությամբ ընդունել է նպաստ ուղարկելու պատգամավորների առաջարկը և ավելացնում. «Այս բարեացակամ տրամադրութեան դէմ անտեղի կերպով յարձակումը լաւ չեմ տեսներ ես, ինչ որ քաղաքականութեան ալ դէմ է»: Նա գտնում էր, որ պետք է «ոչ թէ յուսահատիլ, այլ սիրտերնուս սուզը եւ կսկիծը պահելով հանդերձ, ամէն ժամանակէ աւելի փարիլ օսմանեան սահմանադրութեան, որ աւելի ուժովցած է հիմա»: Ապա առաջարկում է կազմել խառն ու վստահելի մի հանձնաժողով և ուղարկել Կիլիկիա՝ 30.000 ոսկի նպաստի գումարը արդարապես բաշխելու համար:

Հարցի բաղմակողմանի քննարկումից հետո Շահրիկյանի ներկայացրած բանաձևի նախագիծը լրացվում է ևս ութ կետով, և 14 պահանջներից բաղկացած փաստաթուղթը նույն Շահրիկյանի առաջարկով Ազգային ժողովն ընդունում է որպես հիշատակագիր՝ ուղարկելու համար կայսրին, Օսմանյան պառլամեն-

¹ Տե՛ս Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 525-527:

տին ու կառավարությունը: Հիշատակագրում, մասնավորապես, ասված էր՝ Արդուլ Համիդի բռնապետական շրջանի սովորությունն էր համաձայն, հայերն այլևս չպետք է անիրավարար հանցավոր նկատվեն ամեն ինչի համար և ենթարկվեն խստությունների. բռնի մահանդականացված հայերին վերադարձնել ազգին. ձերբակալել Աղանայի նահանգի այն պաշտոնյաներին, որոնք ղեկավարել են ջարդերը կամ ուղղակի մասնակից են եղել կոտորածին. պաշտոնանկ անել նորանշանակ նահանգապետ Մուստաֆա Զիհնի փաշային. կողոպտված գույքը վերադարձնել տերերին. արագացնել կառավարությունն ավանդ 30.000 ոսկու նպաստի ստացումը և այլն¹:

Մայիսի 4-ին Պոլսում տեղի ունեցավ հայ եկեղեցականների ժողով, որը նույնպես հիշատակագրի բանաձև ընդունեց. ուր բարձրացված էին հարցեր, որոնց մեծ մասը տեղ էր գտել ապրիլի 24-ին Հայոց ազգային ժողովի ընդունած և կենտրոնական իշխանություններին ուղարկած հիշատակագրի մեջ:

4. Պոլսի հայ ազգային իշխանությունների առաջին պահանջն էր Կիլիկիա ուղարկել պաշտոնական քննիչ հանձնախմբեր, որոնք կոչված լինեին ուսումնասիրելու աղետի պատճառները և ջարդերի ծավալները, հայտնաբերելն պատասխանատուներին ու վերադաս մարմիններին զեկուցագրեր ներկայացնելն:

Գործն առաջ մղելու համար պատրիարքարանը կազմեց մի նոր հանձնաժողով ևս՝ ազգամիջյան օգնություն հանձնաժողով՝ հայ, հույն, թուրք և մյուս օտարազգի վաճառականների ու ակաճավոր անձնավորությունների շրջանում դրամահավաք անցկացնելու համար: Այդ նախաձեռնությունն օգտակար եղավ, հավարվեց ավելի քան 7000 օսմանյան ոսկուն համարժեք գումար, որով գնվեցին բժշկական գործիքներ, դեղեր, վիրակապեր, սննդամթերք, սպիտակեղեն, վերմակներ, ամանեղեն և առաջին անհրաժեշտությունն այլ պարագաներ: Այդ գումարից նաև վճարվեցին Կիլիկիա մեկնող բժիշկների ու հիվանդապահ-

ների ճանապարհի և կեցությունների ծախսերը:

Թեև ջարդից հետո առաջին օրերին տեղագին աշխատանք էր տարվել աղետյալներին սովից մի կերպ փրկելու համար, բայց թափված ջանքերը միանգամայն անբավարար էին: Այդ պատճառով՝ կրոնական, քաղաքական և մտավորական ուժերը տազնապ էին հնչեցնում, ամենուր հարց էին ուղղում, թե թշվառություն ծովածավալ հոսանքի դեմն ո՞վ պիտի առնի: «Կշտացնել, պատսպարել, ապրեցնել պետք է վերապրողները¹,» - «Լուսարեր - Արև» (Կահիրե) թերթին ուղարկած նամակում գրում էր Սուրեն Պարթևյանը: Նույն գործիչը Ամերիկայում լույս տեսնող «Ազգ» թերթին Մերսինից հղած նամակում ցավով նշում էր. «Պոլսոյ մեր Ազգային Վարչութեան կողմէ ղրկուած օգնութեան յանձնախումբին տրամադրած ճղճիմ միջոցները կաթիլ մը ջուր են կարօտութեան օվկիանոսին առջև: Այսչափով միայն Մերսինի ապաստանեալներուն իսկ կարելի չէ չոր հաց տայ քանի մը շարաթ: Պէտք է ամբողջ ազգը Կիլիկիա դարձնէ իր ուշադրութիւնը եւ հոն տեղացնէ իր նիւթական բոլոր հնարաւոր օժանդակութիւնը: Եւ ասիկա՝ ոչ թէ աղէտքը դարմանելու միամիտ յաւակնութեամբ, այլ անոր արդէն ահագնավիթխար համեմատութիւնները կասեցնելու եւ անոր ահարկու հետեանքները - սովամահութիւն, համաճարակ, անբարոյացում, արտագաղթ եւն. - կանխելու, արգիլելու համար»²:

Ապա Կիլիկիայի ազգակիցների վերքերը բուժելու թախանձագին կոչ ուղղելով ամերիկահայությունը՝ Պարթևյանը գրում էր. «Թո՛ղ ամերիկահայ բոլոր կազմակերպությունները այս կենսական գործին նուիրուին անմիջապես: Թո՛ղ «Ազգ»-ը, «Հայրենիք»-ը, «Երիտասարդ Հայաստան»-ը, «Կոչնակ»-ը, «Ասպարէզ»-ը, հանգանակություն սիւնակներ բանան: Թո՛ղ մեր քաղաքական կուսակցությունները, որոնք վերջերս այնքան անուշ եւ ունայն երգեր հրամցուցին կիլիկեցիին, համերաշխարար գլուխ կանգնին այս օգնություն գործին եւ ամէն զնով

¹ Տե՛ս Ցակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 517-518:

¹ Սուրէն Պարթևեան, Կիլիկեան արհաւիրքը, էջ 49-50:

² Նույն տեղում, էջ 44:

Ջանան որ յաջողի ան, և շուտով...:

Կր խնդրեմ Ամերիկայի ու արտասահմանի բոլոր հայ թերթերէն որ արձագանգ տան այս ճգնաժամային կոչին, որ ահագանգ մըն է միանգամայն, զի դեռ խելայեղ հնահուրն ունինք նորանոր զարհուրելի գոյներու ... Գէթ ազգային այս մեծ ցաւին մէջ հոգեխառնուիլ. և զարայրակցիլ գիտնա՛նք:

Արիւնի մէջ թալթլող կիլիկեցիին աղերսանքն է ասիկա...»¹:

Աղետայններին օգնութեան հասնելու միջոցների անբավարար լինելն էր պատճառը, որ Աղանայի թեմակալ առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսը 1909 թ. մայիսի 25-ին Կահիրեից արյունաղանգ կոչ ուղղեց արտասահմանի և ամբողջ հայութեանը՝ Կիլիկիայի հայերին օգնութեան փութալու խնդրանքով: Կոչում ասված էր.

«Քաղաքին ու գիւղերուն մէջ հայկական կամ քրիստոնէական ո՛չ մէկ չէնք, ո՛չ մէկ տուն, ո՛չ մէկ եկեղեցի, ո՛չ մէկ վարժարան. ամէնքն ալ մոխիրի վերածուած են: Եկեղեցիները պղծուած, սեղանները, խաչերը խորտակուած, սուրբ անօթները թալլուած, ամէն սրբութիւն ոտնակոխուած. ու հիմա այդ համատարած մոխիրներուն գերեզմանադուրկ բիրաւոր դիակներուն նեխումներուն վրայ մինարէները միայն կը ցցուին՝ հայութեան ուսին կապուած զարհուրելի խաչերու պէս...»²:

Աղանայի առաջնորդ եպիսկոպոսի կոչը վերջանում էր այսպիսի խոսքերով.

«Արիւնով ու արցունքով շաղուած հրաւերը քեզ ուղղուած է, ո՛վ հայութիւն: Վաղն արդէն իսկ ուշ է. ձեր ամենազոյզն անտարրերութիւնը գերեզմաններով պիտի փակէ արիւնաղանգ դրուագը այն մեծ և զեռնին զոր թիւրք մոլեռանդութիւնը վերստեղծեց Կիլիկիոյ սրտին մէջ, և որ իր հրէշտութիւններովը պատմութեան բոլոր ոճիրները կը գերազանցէ:

Օգնութիւն ... այդ խոչտանգուած, խաչուած, կենդանույն այրուած, մահուան տանջանքին ու չարչարանքին, բոլոր վայ-

րագ տեսակներու փորձը իր վրայ կրած, մարտիրոսացած ժողովուրդի մը մնացորդ դաւակներուն, անժառանգներուն, որբերուն, այրիներուն, որոնց անունով ու ձայնով կոչում կ'ընեն ձեռքի, անոնց ցաւը իմ կուրծքիս տակ ու անոնց արիւնոտ արցունքը աչքերուս խորը:

Օգնութիւն, օգնութիւն, օգնութիւն ... Եթէ չէք ուզեր որ ի սպառ ընաջնջուի Կիլիկիան»¹:

Կիլիկիան ջարդերի խնդիրը Հայոց ազգային ընդհանուր ժողովը կրկին քննութեան առավ 1909 թ. հունիսի 12-ի նիստում, որին նախագահում էր նորրնտիր պատրիարք Եղիշե արք. Գուրյանը: Ժողովը նորից կանգ առավ կողոպտված գույքը հետ առնելու, ապահովագրական գումարները վերադարձնելու, բռնի կրոնափոխ արված կանանց ու աղջիկներին իրենց ազգին ու մայր եկեղեցուն վերադարձնելու և կարոտայններին նպաստի արդար բաշխում կատարելու խնդիրների վրա. հատկապես կարևորեց որբերի խնամքի հարցը:

Հանդես գալով՝ Հարություն Շահրիկյանը տեղեկացրեց, որ խանութներից կողոպտած ապրանքները և տներից տարված կահ-կարասին իրենց տերերին վերադարձնելու նպատակով կենտրոնից հրամաններ են ուղարկվել Աղանա, բայց այդտեղ դրանց որեւէ նշանակութիւն չեն տվել, որովհետև հրամանները ստացել են մարդիկ, որոնք իրենք և զել են կողոպուտի եռանդուն մասնակիցներ: Երկար քաջաչուկներից հետո՝ կենդանի մնացած հայերի մի մասը հետ էր ստացել ավարառուների տներից հանված մի բարձ կամ մի աթոռ և ոչ ավելին:

Ազգային ժողովի հունիսի 19-ի նիստից հետո պատրիարքարանի կողմից կառավարութեան առջև բարձրացվել էր Կիլիկիայի աղետի զոհերի կյանքի ապահովագրական գումարները վերադարձնելու հարցը: Կառավարութիւնը, դժկամութեամբ, ի վերջո անդրադարձավ այդ խնդրին և կայացրեց հետևյալ որոշումը.

¹ Սուրէն Պարթեւեան, Կիլիկիան արհաւիրքը, էջ 45:

² «Մշակ», № 112, 28 մայիսի 1909 թ.:

¹ «Մշակ», № 112, 28 մայիսի 1909 թ.:

ա) Իրենց կյանքը ապահովագրած և Կիլիկիայի աղետի ժամանակ մեռած անձանց ապահովագրումները վճարել ժառանգներին,

բ) Անժառանգ մեռածների ապահովագրական գումարները թողնել ապահովագրական ընկերություններին, իսկ

գ) Հրդեհի դեմ ապահովագրյալների փոխարժեքները չվճարել, քանի որ կնքված պայմանագրերում նշված չի եղել, որ փոխհատուցվելու են խոռվությունների կամ խուժանային հարձակումներից առաջ եկած հրդեհների վնասները:

Կոչերն ու խնդրանքները որոշ դրական ազդեցություն ունեցան: Զեռնարկված դրամահավաքները շոշափելի էին: Կիլիկիայի աղետյալներն որոշ օգնություն ստացան նաև արտասահմանյան երկրներից: Օրինակ՝ ԱՄՆ-ի կառավարությունը հատկացրեց 50000, Բելյուժի ամերիկյան քոլեջը՝ 5000 դոլար:

Վնասները Կիլիկիայում արտահայտվում էին միլիոններով, ուստի դրանց դիմաց այնտեղ ուղարկված գումարները չնչին էին: Այդ գումարներով անհնարին էր սովի առաջն առնել, աղետյալների վերքերը բուժել, չխոսելով արդեն ազդեցությունների ու վարժարանների նորոգման մասին: Ավերված եկեղեցիների, դպրոցական շենքերի ու բնակելիների վերականգնման ու նորոգման համար քրիստոնյաներից երկար տարիներ ու մեծ գումարներ պահանջվեցին:

Քրիստոնյաների կոտորածից հետո Կ. Պոլսից բազմաթիվ հայ անհատներ և պատվիրակություններ եկան Կիլիկիա, որոնց նպատակն էր տեղում ծանոթանալ իրավիճակին և հայ հասարակությունը ճշմարտությունը պատմել:

Կ. Պոլսի պատրիարքարանի խնդրանքով առաջիններից մեկը Կիլիկիա եկավ գրող ու հրապարակախոս **Զապել Եսայանը**: Առաջին իսկ օրից նա մխրճվեց իր ազգակիցների ցավերի մեջ և շուտով հրապարակ հանեց «Աւերակներուն մէջ» գիրքը, ուր չիկացած զգացմունքներով նկարագրեց ողբերգությունյան պատկերները՝ շոշափելիության չափ տեսանելի:

Կիլիկիա եկավ նաև **Արչակունհի Թեոդիկը**՝ հայ գրող, հրա-

տարակիչ ու խմբագիր, 1907-ին հիմնադրված «Ամէնուն տարեցոյցը»-ի հեղինակ և դանադան այմանախներ կազմած Թեոդիկի (Թեոդոս Լարջինջյան) տիկինը: Արչակունհի մինչ այդ հեղինակել էր «Վերջիշումներ ուսանողուհի կեանքէն» գողտրիկ պատմվածքների գիրքը: Եվ հիմա, հոկտեմբերի 20-ին, ափ իջնելով Մերսինում (Զեփյուռիոն), նա չըջեց աղետավայրում, եղավ ամենուր, ահավոր պատկերներ տեսավ, ականատես եղավ կեղեքված, հարստահարված ու սովից լլկված ժողովրդի թշվառությունը: Հենց այդտեղ իր տեսածի և յաածի մասին սկսեց շարադրել «Ամիս մը ի Կիլիկիա» գրքում: Գրողի լեզուն չէ, որ այդ գրվածքում խոսում է, այլ՝ նրա կրակված սիրտը, որի պոռթկումը հիմա էլ, մեկ դար անց, վարակում է ընթերցողին:

Զ. Եսայանի հետ էր ոուսահայ օրիորդ Սաթենիկ Սահանջանյանը, որը, ինչպես և իր երկու ընկերուհիները, մտան բանտերը, մխիթարեցին շղթայի դարկված հայերին, սրտապնդեցին զրկվածներին, սրբեցին նրանց արցունքները, լացեցին նրանց հետ:

ԶՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ

Որոշ չափով ուշքի գալուց հետո հայերն ուզում էին պարզել, թե իրենց կորուստները որքա՞ն են: Դա հատկապես անհրաժեշտ էր այն պատճառով, որ թուրքական վարչակարգն չտապել էր իրողությունը լսեղաթյուրված ներկայացնել:

Առաջինը հանրությունը կեղծ փաստեր հաղորդեց նորանշանակ կուսակալ Բարան զաղե Մուստաֆա Զիհնի փաշան: Բնականից տհաս ու անխելք, նա չկարողացավ ըմբռնել ստեղծված կացությունը և ըստ այդմ կառուցել իր գործողությունները, ուստի շատ շուտով գործիք դարձավ ուրիշների ձեռքին և հենց նրանց թելադրանքով Կ. Պոլիս սխալ, միտումնավոր հեռագրեր ու տեղեկագրեր ուղարկեց: Բարձր Դոանը մայիսի 1-ին ուղարկած հեռագրով նա հաղորդել էր. «Աղանայի նահանգում սպանված իսլամների թիվը 1924 է, վիրավորներինը՝ 533, իսկ

Հայերից սպանվել է 1455 հոգի, վիրավորվել 383-ը»¹:

Ազանայից Կ. Պոլիս հաղորդած աներևակայելի ստապատիր այդ թվերը կառավարությունը նախնական տվյալներ համարեց և Մուստաֆա Զիհնի փաշային «Հանձնարարեց» կորուստները վերջնականապես «ճշտել»: Ամեն տեսակ «ստուգումներից» ու «քննարկումներից» հետո օսմանյան «սահմանադրական» կառավարությունը վերջնականապես «չտկեց» զոհերի թիվը, աշխարհով մեկ պաշտոնապես հայտարարելով, թե կիլիկյան ջարդերի ժամանակ սպանվել է 5538 հոգի, որից քրիստոնյաներ՝ 3502, մահմեդականներ՝ 2036 հոգի²: Իշխանություններ կայացուցիչները օտար մամուլի թղթակիցների հետ հանդիպումների ընթացքում համառորեն պնդում էին այդ «ճշտված» թվերի վրա:

Թուրքական կառավարությունը մոտավորապես նշված թվերով գրույթյուններ էր ուղարկել նաև օտար երկրների դեսպաններին՝ դրանք տարրեր լեզուներով հրապարակելու և հասարակական կարծիքը թյուրիմացություն մեջ գցելու համար:

Փարիզի օսմանյան դեսպանությունյան տարածած հայտարարությունն առաջինը տպագրել էր Կ. Պոլսի երիտթուրքական «Թանհին» օրաթերթը 1909 թ. մայիսի 15-ի համարում (№ 264), որին հետևել էին Ֆրանսիայի մայրաքաղաքի ուրիշ թերթեր: Հայտարարություն մեջ շեշտված էր, որ կիլիկիայում բոլոր կողմերի զոհերի թիվը չի անցել 4000-ից, և որ 20 կամ 30 հազար զոհերի մասին խոսակցությունները տեղի քրիստոնյաների երևակայություն արդյունք են³: Հայ զոհերի թիվը 10-20 անգամ նվազ ցույց տալու համար, թուրք բարձրաստիճան պաշտոնատարները Ազանայի վիլայեթի 150-200 հազար հայոց թիվը հայտարարում էին իրը շուրջ 48 հազար, նույնիսկ՝ 40 հազար հոգի⁴:

Տասնյակներ էին դուրս հայ բնակչություն ունեցող այն գյուղերը, որոնցում հայ ընտանիքների թիվը փոքրացել էր 10-20 անգամ կամ ամբողջովին ոչնչացվել էին: Ավերված ու ջնջված հայկական գյուղերում այլևս տղամարդիկ չկային, բոլորն սպան-

ված էին⁵: Մտնելով գյուղ, նախքան ջարդն սկսելը, խուժանն առաջին հերթին փնտրել էր ուժեղ ու քաջ երիտասարդներին և նշանավոր հարուստ հայերին: Սրանց սպանել էին «անուն ունեցող» ոճրագործները, որոնք իրենց պատվից ցածր էին համարել աղքատ, խեղճ ու կրակ հայ սպանելը՝ վերջիններիս բաժին թողնելով շարքային մարդասպաններին: Հայկական շատ բնակավայրերում երեք տարեկանից վեր հայ արու մարդ էր մնացել⁶: Տների ու եկեղեցիների հրդեհման պատճառով շուրջ 8000 հոգի զոհվել էր կրակների մեջ: Առույզ, ուժեղ ու կենսապից ամեն ինչ անխնա ջարդվել էր:

Ի պատասխան Փարիզի թուրք դեսպանի՝ իրականությունը չհամապատասխանող հայտարարությունյան, կիլիկիայի տարբեր հարանվանությունների քրիստոնյա առաջնորդները ֆրանսերեն «Թան» թերթի խմբագրությունը բողոք ներկայացրին, նշելով, որ կիլիկյան զոհվածների թիվը նվազագույնը 20 հազար է, բայց կարող է նաև 30 հազար լինել⁷:

Եվրոպացի թղթակիցները ղեռ ջարդի ընթացքում և դրանից հետո մամուլի իրենց օրգաններին հաղորդել էին թուրք պաշտոնյաների ներկայացրած թվերից միանգամայն ուրիշ թվեր: Նրանց հիմնական եզրակացությունն այն էր, որ ապրիլի 1-ից մինչև ապրիլի 14-ը կիլիկիայում 30-35 հազար մարդ է սպանվել⁸: Նույնը վկայում է Բեյրութում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս իշխան Գազարինը, ըստ որի՝ հայերն ավելի քան 30 հազար զոհ էին տվել⁹:

Օտար թերթերի տվյալներին մոտ էին հայկական մամուլի օրգանների բերած թվերը: Այսպես, «Արևելքը» միայն Ազանա քաղաքում և շրջակա բնակավայրերում սպանված քրիստոնյաների թիվը համարում էր 25.000, որից 23.000-ը՝ հայ¹⁰: «Ազատամարտ» թերթի (№ 249) տվյալներով՝ միայն Ազանա քաղաքում զոհ էր գնացել 18627 մարդ: Կորուստների թվով երկրորդը

¹ «Արևելք», № 7085, 29 ապրիլի 1909 թ.:

² Տե՛ս «Հորիզոն», № 64, 23 մարտի 1910 թ.:

³ Վեր. Համբարձում Յ. Աշճեան, Ատանայի եղեռնը..., էջ 42:

⁴ «Բիզանդիոն», № 3834, 11 (24) մայիսի 1909 թ.:

⁵ «Արևելյան մամուլ» (Իզմիր), № 22, 26 մայիսի 1909 թ., էջ 517:

⁶ Տե՛ս «Հորիզոն», № 45, 27 փետրվարի 1910 թ.:

⁷ Տե՛ս Վեր. Համբարձում Յ. Աշճեան, Ատանայի եղեռնը..., էջ 42:

⁸ ՀԱԱ. Փ. 57, ց. 3, գ. 19, թ. 6:

⁹ Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», № 2 (102), 2003, էջ 17:

¹⁰ «Արևելք», № 7075, 17 ապրիլի 1909 թ.:

Ջերեյ-Բերեքեթի սանջակն էր, ուր, ըստ «Հորիզոն» թերթի, 5800 հոգի էր սպանվել¹: Վիլայեթի մյուս՝ Կողանի սանջակում, նույն «Հորիզոնի» համաձայն, սպանվել էր շուրջ 1000 հոգի²:

Այսպիսով, հայ մամուլի օրգանների բերած սպանվածների տվյալները տատանվում էին 31.000-32.000-ի սահմաններում, որից հայեր՝ 29.000-30.000:

Սուրեն Պարթևյանը միայն Աղանայի վիլայեթում հաշվել էր 20.000 սպանված³: Վեր, Համբարձում Աչճյանը Աղանա քաղաքում և մերձակա բնակավայրերում սպանված հայերի թիվը հաշվել էր 20 հազար⁴: Ըստ Հակոբ Թերզյանի հայթայթած տվյալների՝ Կիլիկիայում զոհվել էր 22.512 քրիստոնյա, որից՝ 21.361-ը՝ Աղանայի նահանգում, 1151-ը՝ Հայեպի նահանգում, ըստ որում՝ հայոց զոհերը կազմել էին 18.839, հույներինը՝ 1250, ասորիներինը (սյուրիանի)՝ 850, քաղղեացիներինը (քիլզանի)՝ 422 (վերջին երեք ազգությունների զոհերի տվյալները Թերզյանը վերցրել էր նրանց առաջնորդարաններից)⁵:

Կիլիկյան զոհերի խնդրով զբաղվել էր նաև Կ. Պոլսի Հայոց ազգային վարչությունը, որի կազմած տեղեկագրում հայոց զոհերի թիվը նշված է 22,5 հազար⁶: Բայց նույն Հայոց ազգային ընդհանուր ժողովի Քաղաքական ժողովի անդամ Հարություն Շահրիկյանի տվյալներով՝ Կիլիկիայում բոլոր սպանվածների թիվը անցել էր 30 հազարից⁷: Վերջապես, Օսմանյան պառլամենտի անդամ Հակոբ Պապիկյանը քրիստոնյա զոհերի ընդհանուր թիվը նշել է 21.000, որից հայեր՝ 19.479, հույներ՝ 250, ասորիներ՝ 850, քաղղեացիներ՝ 422⁸: Միայն առաջին ջարդի ժամանակ Աղանայի խաներում սպանվել էին 2762 պանդուխտներ⁹:

¹ Տե՛ս «Հորիզոն», № 73, 2 ապրիլի 1910 թ.:

² Նույն տեղում:

³ Սուրեն Պարթևեան, Կիլիկյան արհաժիրքը, էջ 32:

⁴ Տե՛ս Վեր, Համբարձում Յ. Աչճեան, Ատանայի եղեռնը..., էջ 27:

⁵ Տե՛ս Յակոբ Յ. Թերզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 278-281:

⁶ Տե՛ս, ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 19, թ. 9:

⁷ Տե՛ս Յակոբ Յ. Թերզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 514:

⁸ Տե՛ս «Ատանայի եղեռնը: Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի», Կ. Պոլիս, 1919, էջ 48:

⁹ Տե՛ս Բիւզանդ Եղիայեան, Ատանայի հայոց պատմութիւն, Անթիլիաս, 1970, էջ 232:

Այսպիսով, ըստ հայկական աղբյուրների՝ Կիլիկիայում հայ զոհերի թիվը տատանվում է 20-25 հազար, իսկ մյուս քրիստոնյաներինը՝ 1500-2500 հոգու միջև:

Փամանակին տարրեր հրատարակություններում հրապարակված այս բոլոր թվերը մոտավոր լինելով, ճշգրիտ պատկերացում չեն տալիս մարդկային ահուկի կորուստների մասին:

Շատ դժվար էր, իհարկե, որոշել զոհերի իրական թիվը հետևյալ պատճառներով. 1) Ե՛վ իշխանությունները, և՛ մարդասպանները հաճախ թաքցնում էին դիակները, 2) Որևէ մեկը չէր մտածում զոհերի թիվը հաշվառել սարսափի օրերին. դժբախտներին հողին էին հանձնում որքան կարելի է շուտ, 3) Սպանվածներից շատերի մարմիններն ընկած էին անտառների խորքերում, ջրհորներում, քարանձավներում կամ գետերը տարել ու թափել էին ծովը, 4) Հազարավոր անձանոթ պանդուխտ-մեռելիների ինքնությունը պարզելու հարցով որևէ մեկը չէր զբաղվում, 5) Անհայտ կորածներից շատերը համարվում էին Կիլիկիայից հեռացածներ, բայց իրականում մինչև նավերին հասնելը նրանց մեծ մասը ջարդվել էր ճանապարհներին:

Այս ամենն էր պատճառը, որ այնպես էլ ճշգրիտ տեղեկագիր չկազմվեց կոտորածների օրերին զոհերի թվի մասին, քանի որ հազարավոր մարդիկ կորել էին՝ առանց որևէ հետք ձգելու:

Միայն բարրարոտությունը չէ, որ սրի ու տապալի, հրացանի ու հրդեհի միջոցով հայերից ահուկի զոհեր խլեց: Զարդը վերջանալուց հետո քաղցից, ցրտից ու հոգեկան տառապանքներից հազարավորներ մեռան: Միմոն Զավարյանը հաշվել էր, որ, օրինակ, եթե Աղանա քաղաքի հայ ավետարականների համայնքում նախկինում տարեկան լինում էր 30-35 մահվան դեպք, ապա կոտորածից հետո այդ թիվը կտրուկ աճել էր. ջարդից անմիջապես հետո եկած երեք ամիսների ընթացքում նույն համայնքից մահացել էր 55 հոգի, իսկ հետագա 9 ամիսներին (1909 թ. հուլիս-1910 թ. մարտ)՝ ևս 110 հոգի, այսինքն 12 ամսում՝ 165 հոգի, ասել է թե՛ նորմալ ժամանակից 5 անգամ ավելի¹:

¹ Տե՛ս «Հորիզոն», № 73, 2 ապրիլի 1910 թ.:

Միայն Աղանա քաղաքում օրական մեծությամբ էր 40-50 հոգի, գլխավորապես՝ երեխաներ: Մեծածնների մեծ մասը թաղվում էր առանց քահանայի, որովհետև քահանաներն անկարող էին բողոքի հասնել, բաղձաթիվ, քահանաներ էլ սպանվել էին: Շատ մայրեր իրենք էին գերեզման փորում իրենց փոքրիկի համար, բայց նրան հողով չէին ծածկում, որովհետև մեռնելու վրա էր նաև իր մյուս սիրելին, որը պիտի նույն փոսն իջնեցվեր:

Մոտավոր հաշվով՝ Չարդից հետո հողին էր հանձնվել սովից կմախքացած, ցրտից սառած և հիվանդություններից նվաղած ավելի քան 8000 մարդ¹:

Այսպիսով, 1909 թ. ապրիլի 1-13-ը տեղի ունեցած Չարդի դոհերի և դրանից հետո ստեղծված անտանելի պայմանների հետևանքով մեռած մարդկանց ընդհանուր թիվը կարելի է մոտեցնել 40 հազարի², իսկ ըստ Աղանայի հայոց առաջնորդարանի քարտուղար Քերովրե Փափաղյանի՝ ամեն ղեպքում՝ այս թվից ոչ պակաս³:

Իհարկե, այս թիվը նույնպես մոտավոր է, ինչպես մոտավոր են բերված մյուս թվերը:

Ապրողները ողորմ էին կորուստները, բայց անհուն վիշտն անհնար էր ամոքել:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

Հայերի կրած նյութական կորուստները հսկայական էին: Միայն Աղանա քաղաքում դրանք կազմել էին 300.000 օսմանյան ոսկի (1909 թ. գներով)⁴:

«Բիւզանդիոնը» գրում էր. «Մենք ի դուր Չանացիք մեր խղճով ձայնով եւ անբաւական միջոցներով պոռալ եւ հասկցնել թէ «Այլեւս պէտք է ջնջել Ատանայի անունը քարտէսներու վրայէն իսկ», վասն զի այսօր չէն ու կոկիկ այն քաղաքն ոչ եւս

¹ Տե՛ս «Հորիզոն», № 73, 2 ապրիլի 1910 թ.:

² Տե՛ս «Բիւզանդիոն», № 3827, 1 (14) մայիսի 1909 թ.:

³ Նույն տեղում, № 3839, 16 (29) մայիսի 1909 թ.:

⁴ Տե՛ս «Արեւելք», № 7075, 17 ապրիլի 1909 թ.:

է. այսօր հոն կայ մոխիր, յիշատակ, լճացած հայի արիւններ»¹:

Աղետի ընթացքում քաղաքի քրիստոնյա վաճառականների խանութներից զողացված մեծաքանակ ապրանքները իսլամների վաճառատները տեղափոխվեցին: Թուրք վաճառականներից շատերը մի օրից մյուսը մեծ հարստությունների տեր դարձան: Ապրանքների մի մասը նրանք սայլերով, ուղտերով ու ջորիներով փոխադրեցին չրժակա գյուղերն ու քաղաքները և նույնիսկ հեռավոր նահանգներ՝ երկյուղ կրելով, թե հանկարծ իշխանություններն իրենց կստիպեն զոգոնը վերադարձնել:

Աղանայի վիլայեթում քրիստոնեական գյուղերի մեծ մասը բառացիորեն հավասարվել էր հողին: Թեև իշխանություններն ամեն կերպ թաքցնում էին աղետի իսկական չափերը, բայց նրանցից ոմանք ստիպված էին որոշ տվյալներ հրապարակել: Օրինակ՝ Աղանայի նոր նահանգապետ Մուստաֆա Զիհնի փաշայի բերած նվաղագույն տվյալներով հաստատվում էր, որ միայն նշված նահանգի հանրային հարստության երկու երրորդը փչացել էր: Նահանգի հայ բնակչության տների մոտ կեսը հրդեհված ու քանդված էր: Պատկերը մոտավորապես նույնն էր Հայկապի վիլայեթում²: Բայց նյութական կորուստների իսկական չափերն անհնար էր որոշել: Բոլոր հայերը, հարուստ թե աղքատ, ապրուստի միջոցներից զրկված էին:

Դառն հարվածները, արյան ճապաղիքների կենդանի պատկերները թմրեցրել էին կիլիկիա-հայոց ուղեղները, քարացրել զգացմունքները: Մյուս կողմից՝ տնտեսական թշվառ կացությունը, որի մեջ թավալզուր հեծում էր Կիլիկիայի կիսաքաղց հայ գյուղացիությունը, նրան ստիպում էր աչքերը վեր չրարձրացնել դիտելու իր ավերված գյուղի սահմաններից անդին, քանզի նա ոչ ուժ և ոչ էլ սիրտ ուներ մտածելու եղբոր, հարևանի, ազգակցի դառն վիճակի մասին: Դա բնական էր, քանզի դեռ թարմ մխուժ էր վերքն իր սրտում, իսկ սովամահությունից դժխեմ հեռանկարը կմախքի պես շարունակում էր ցցված մնալ իր տան շեմին:

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3827, 1 (14) մայիսի 1909 թ.:

² Տե՛ս «Հորիզոն», № 22, 30 հունվարի 1910 թ.:

ՆՈՐ ԳԱՂԹ

Զարդերի և զրան հաջորդած սովի ու հիվանդությունների հետևանքով կիլիկիա հայություն թիվը պակասեց 30-35 հազարով: Բայց դա ամենը չէր. զրան գումարվեցին բյուր եղբայրների, բույրերի ու զավակների նահատակության սոսկալի կսկիծը և հայրենի մոխրացած օջախների սգավոր հիշատակը սրտում ներփակած բազմահազար հայերի փախուստը նախճիրի ու արյան երկրից:

Գաղթը կամ արտագաղթը Հայաստանի հին վերքն էր: Անվերջ պատերազմները և տիրող տարրի կեղեքումներն ու երկրի ընդհանուր անապահով վիճակը որպես քրիստոնյաների հայածված ու նշավակ հայերին ստիպում էին գաղթել անձանոթ օտար աշխարհներ՝ այնտեղ կյանքի տարրական պայմաններ գտնելու հույսով:

Եվ ահա այժմ կիլիկիայում, ուր յուրաքանչյուր հայ կորցրել էր այնտեղ այսուհետ ապրելու հույսը, ձգտում էր փախչել ու ժամ առաջ ազատվել մահաշխարհից, որը խելագարության աստիճանի հոգեկան ցնցումի էր հասցրել նրան: Մոռացած տունն ու գործ, հարազատ ու բարեկամ՝ հայերը հավաքում էին ինչ-որ կարող էին և բռնում փախուստի ճամփան՝ առանց իմանալու, թե ո՞ւր են գնում և որտե՞ղ պետք է հանգրվան գտնեն:

«Սպանենցի՛ն, սպանենցի՛ն ու աղատուողները շղթայի դարկին, դիմադրողները կախեցին ... Փախի՛նք, փախի՛նք ... Հոգերդ առնեմ, այս երկրիս արևը սեւցած է մեզի համար...», - սրտի մորմորով ասում էին իրենց բնակավայրերը լքող մարդիկ:

Ազանա քաղաքի առաջին կոտորածն իսկ ծնունդ տվեց կիլիկիա հայություն խուճապահար գաղթին՝:

Կիպրոսից մի հույն մտավորական այդ օրերին գրում էր. «Հայերը շարունակ կր փախչին, միշտ կր փախչին: Անոնք կր փախչին ոչ միայն դաշտյններէն ու բոցերէն, այլև արդարութեան անունով կաղմուած այն դատական ատեաններէն, որոնք յանցաւորները պատժելու տեղ տակաւին միջոցը կը գտնեն անմեղները տանջահարելու...»²:

Մերսինի նավահանգստում խոնավել էին հուր ու սրից հրաչ-

քով փրկված հայերը, որոնց թվում հատկապես շատ էին այրիներն ու որբերը՝ բորիկ, կիսամերկ, փոշիների մեջ թաթախված, սարսափից ընդլայնված բիրերով, յուրաքանչյուրը կրած անյուր տառապանքները՝ իր ուրույն պատմություններով ու ցավերով:

Նավահանգստում խարխալ գցած եվրոպական ապրանքատար նավերը դադարել էին ապրանք տեղափոխել, որովհետև զրանց բոլոր ներքնահարկերն ու տախտակամածները լիքն էին հայ փախստականներով, որոնք հաղիվ մի քանի լաթ ու փոթի շտապ հավաքած, հեռանում էին՝ անիծելով իրենց երկիրը, իրենց բախտը, իրենց աստծուն: Գաղթողներին փրկելու հարցում մեծ մարդասիրություն էին դրսևորում հատկապես ֆրանսիացի նավապետներն ու նավաստիները:

Ապրիլի 25-ին ֆրանսիական «Մեսսեների մարիտիմ» ընկերության Կիպրոսից եկող «Նիժեր» չոգենավի նավապետ Լաֆոնը Միրիայի ափերից նավն էր առել Ազանայի ջարդից փախչող 2200 հոգու և նրանց նկատմամբ խնամք տարել: Գաղթողները երախտապարտ էին «Վիկտոր Հյուգոյի» նավապետին, որը 2000-ի չափ փախստական իր նավի վրա էր վերցրել՝: Նույնպիսի մարդասիրական վերաբերմունք ցույց տվեցին «Ժյուլ Ֆերրի» և «Լա վերիթե» մարտանավերի անձնակազմերը՝ մահից փրկելով հարյուրավոր աղետոյալների, նրանց տեղափոխելով Լաթաքիա՝ Ֆրանսիայի «բարոյական» հովանավորության տակ: Իրենց օգնությունը չէին դրանում անգլիացի, ռուս, գերմանացի նավապետերը: Նավերը փախստականներին տանում էին Լիրանան, Եգիպտոս, Կիպրոս:

Ապրիլի երկրորդ կեսին եվրոպական նավերով միայն Բեյրութ էր փախել 5000 հոգի, մոտավորապես նույնքան հայ իջել էր Կիպրոս: Ավելի քան 3000 փախստական հանգրվանել էր Ալեքսանդրիայում (Եգիպտոս): Նավերը որոշ թվով հայերի Կրետե կղզի հասցրին*:

¹ Զապել Եսայան, Աւերակներուն մէջ, էջ 214:

* Նշենք, որ 1895-1896 թթ. թուրքահայությունը ջարդերի ժամանակ Կովկաս անցած 40 հազար հայերին ռուսական կառավարությունը ժամանակին (1898-1899 թթ.) մտադիր էր բնակություն ուղարկել Կրետե (տե՛ս «Դրոշակ», № 6 (97), հունիս, 1899, էջ 89-90), բայց ռուսական առաջադիմական հասարակայնությունը ճնշման տակ իշխանություններն այդ մտքից հրաժարվեցին:

¹ «Արևելք», № 7133, 25 հունիսի 1909 թ.:

² «Դրոշակ», № 9, սեպտեմբեր, 1909:

Կիպրոս և Եգիպտոս ապաստանած հայերը դիմեցին տեղի ուսական դիվանագիտական ներկայացուցչություններին և հանձնառու եղան ուղղափառություն (պրավոսլավություն) ընդունել, հույս ունենալով, որ այդ միջոցով կկարողանան պաշտպանություն գտնել ոուսաց ցարի հովանու ներքո, ուսաների օգնությամբ վերադառնալ իրենց ավերված բնակավայրերը և նորոգել օջախները:

Օրինակ, Կիպրոսում ապաստանած Ավետիս Գյուլբենկյանը և ուրիշ երեք կիլիկիահայեր նամակ էին ուղղել Ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Իզմիրյանին, որով հայտնում էին, թե «այլևս վստահություն չունենալով Կ. Պոլսի սահմանադրական կառավարություն վրայ», իրենք վճռել են «ոուսադաւանութիւն ընդունել՝ ոուսական կառավարութեան պաշտպանութեան տակ Ադանայում ապրելու համար»¹: Ստանալով նամակը, կաթողիկոսը դրա վրա մակագրել ու հորդորել էր. «Այդօրինակ մտքերէ հեռու մնալ»²:

Նույն նպատակով, համատարած էր նաև կաթողիկ եկեղեցուն կամ այս ու այն ավետարանական եկեղեցուն անդամագրվելու տրամադրությունը:

Իսկ փախստականների նորանոր խմբերը շարունակում էին Կիլիկիայի ափերից հեռանալ: Ծառերը կանգ չէին առնում նշված հանգրվաններում և ձգտում էին Օսմանյան կայսրությունից ավելի հեռու գնալ՝ Եփրոպա և Ամերիկա³: Թուրքական չոզենավերի գործակալություններին հրամայված էր Բեյրութի և ուրիշ որևէ օսմանյան նավահանգստի համար տոմսակ չտալ հայերին, այլ տալ միայն ուրիշ երկրներ գաղթողներին:

Անտանյի էր փախստական հայերի փիճակը թուրքական նավերի վրա: Դրանցում բոլոր նավաստիները իսլամ էին, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում մուսուլմաններ ու վայրագ լազերը (իսլամացած վրացիներ): Այնքան դրիա գնացող այդ նավերից մեկի վրա գտնվող ականատեսը գրել է.

«[Լազ նաւաստիները] թրքական սահմաններէն դուրս ալ չեն կրնար զսպել իրենց կատաղի ատելութիւնը ողորմելի հայ

¹ Մատենադարան, Մատթեոս Իզմիրյանի արխիվ, մատյան 34, թղթ. 14, վավ. 521:

² Նույն տեղում:

³ Տե՛ս «Բիզանդիոն», № 3849, 9 (22) հունիսի 1909 թ.:

գաղթականներուն դէմ՝ դորս նախատելու, ծաղրելու, նեղելու առիթ ու պատրուակ կը փնտռեն օրն ի րուն: Քանի՜ անգամ լսեցի այդ մարդակերպ գաղանները, որոնք հեզնական քրքիջներով կ'ըսէին իրարու.

Հայերը Ատանան գրաւեր են ... Հայերը պէյլիք (ինքնիշխանություն): - Հ. Ս.) հաստատուր են ... քա՛հ քա՛հ քա՛հ ...:

Բայց անգամ մը համբերութիւնս կը հատնի, երբ անոնցմէ մէկը գաղթականներէն հայ կնկան մը ուղղելով խօսքը՝ կը պոռար.

- Տահա պի՞թմէտինիդ մի, խրնդրոյա՛ր (ղեռ չի հատա՞ք, չի լմնցա՞ք, խոզե՛ր...):

Նաուպետին կ'երթամ կը բողոքեմ, բայց անիկա անտարբերութեամբ մտիկ կ'ընէ ինծի...»¹:

Գաղթի լայնածավալ երևույթը տագնապալի էր: Հայոց պատմական Կիլիկիան բոլորի աչքի առաջ դատարկվում էր: Աղետայիններին սովից փրկելու ճիգերը բավական չէին կանգնեցնելու գաղթը: Հարկավոր էին ավելի արմատական միջոցներ:

Ստեղծված կացությունը քիչ թե շատ բարվոքելու և գաղթը եթե ոչ կասեցնելու, բայց գոնե դանդաղեցնելու համար անհրաժեշտ էր կենտրոնական կառավարություն միջամտությունը: Սուրեն Պարթևյանը գրում էր. «Եթէ Պոլսոյ կեդրոնական կառավարութենէն անմիջական ու ամենախիստ հրամաններով այս սարսափի ընթացքին վերջ չի տրուի, ամբողջ ժողովուրդը ծովը պիտի թափի՝ փախչելու, հեռանալու համար: Արդէն հարիւրաւորներ ամէն նաւով կը փախչին ընտանեօք, ճիժ ու պիժով»²:

«Լուսաբեր-Արև» (Կահիրե) թերթին 1909 թ. ապրիլի 19 (մայիսի 2)–ին հղած նամակում նույն գործիչը նշում էր. «Պէտք է կիլիկեցի աղետալներուն վաղուան ճակատագրովն ալ զբաղիլ: Ո՞ւր պիտի երթան, ի՞նչ պիտի ընեն, ինչպէ՞ս պիտի կրնան այս քարուքանդ ու այրեացաւեր երկրէն իրենց համար ապրուստի կոտան մը վերստեղծել: Սգնութիւնը, ո՛րքան ալ առատ ըլլայ, չի կրնար ամբողջ բնակչութիւններու կեանքին մնայուն պայմանը դառնալ: Պիտի թոյլ տրուի՞, որ կիլիկեցիներ զանգուածովի գաղթէ ու արտասահմանի օվկիանոսին մէջ լուծուի, կորսուի, թէ՞ պիտի կարելի ըլլայ վերապրողները իրենց

¹ Սուրեն Պարթևեան, Կիլիկիան արհատիրքը, էջ 148-149:

² Նույն տեղում, էջ 40:

Հայրենի հողին կառչած պահել՝ իրենց մոխրացած օճախները վերականգնելով և իրենց ապրելու միջոցներ ստեղծելով»¹:

Կառավարությունը և Հայոց պատրիարքարանը պետք է մտածեին ոչ միայն աղետյայներին սովից փրկելու, այլև այնքան զուժարներ Հայթայթելու մասին, որպեսզի հնարավոր լիներ ավերված տնտեսությունը վերականգնել:

Կիլիկյան ջարդերը հայերի արտագաղթի նոր ալիք բարձրացրին նաև Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի ուրիշ վայրերում: Օսմանյան խարուսիկ սահմանադրությունը հայ բնակչությունը որևէ բարելավում չըրեր: Հայաչափ գավառներում հետզհետե ավելի էր դժվարացել կյանքը երիտթուրքերի կառավարման կարճատև ժամանակահատվածում: Դա անտանելի էր հատկապես աղգային գիտակցությունը ու ձգտումներով հասակ առնող երիտասարդ սերնդի համար, որի գլխին դամոկլյան սրի պես կախվել էր պարտադիր զինվորագրությունը:

Կիլիկիահայերի գաղթը խթանում էր Ադանայի ջարդարար իշխանությունների նոր նախաձեռնությունը՝ ջարդերից հաշված օրեր և տր, արհավիրքից ուշքի չեկած, սովի և հիվանդությունների ճիրաններում հայտնված հայերից զանազան տուրքերի, այդ թվում՝ զինվորական տուրքի խստիվ հավաքումը՝ չվճարողներին ունեզրկելու սպառնալիքով²:

Քիչ թև չատ հնարավորություն ունեցող Հայ երիտասարդները ձգտում էին հեռանալ Թուրքիայից՝ «էսկեր»ությունից խույս տալու համար³:

Նոր թափ առավ մեծ մասամբ ամուրի երիտասարդների հեռանալը Ռուսաստան և Պարսկաստան: Բայց այս անգամ նրանց հիմնական հոսքն ուղղվեց դեպի Եվրոպա և Ամերիկա: Կիլիկիան լրեցին նաև 1908 թ. օսմանյան հեղափոխությունից հետո Ամերիկայից բնօրրան վերադարձած փոքրաթիվ հայ երիտասարդները: Նրանք, որ այնքան մեծ կարոտով էին վերադարձել Երկիր, նորից տրամադիր դարձան վազել դեպի չոզենավերը և նորից մեկնել աղատություն ինքնարավ նոր Աշխարհ: Նրանցից

¹ Սուրեն Պարթևեան, Կիլիկիան արհավիրքը, էջ 49-50:

² «Բիսդանդիտն», № 3832, 8 (21) մայիսի 1909 թ., նույն տեղում, № 3841, 19 մայիսի (1 հունիսի) 1909 թ.:

³ Տե՛ս «Նոր Հաճրն պատմագիրք. 1921-1973», Բուենոս-Այրես, 1974, էջ 28:

չատերը հաստատվեցին Հարավային Ամերիկայում:

Ամերիկյան մայրցամաք մեկնածները նոր ուժ, նոր եռանդ ու ավյուն էին ներարկում այդտեղ գործող հայրենակցական բնակչություններին, միաժամանակ զանազան նոր մասնաճյուղերի կազմակերպմանը նախաձեռնում:

Մի քանի հազար կիլիկիահայերի հաջողված փախուստը երկրից՝ հայկական մամուլի որոշ օրգանների ու աղգային գործիչների առիթ բնծայեց կարծելու, թե Կիլիկիայի հայությունը փրկելու համար պետք է նրան ամբողջապես գաղթեցնել մի որևէ օտար պետություն, ուր նա կյանքի, պատվի, ունեցվածքի ապահովություն կգտնի և մարդավայել կապրի:

Դեռևս 1895-1896 թթ. հայոց մեծ կոտորածներից հետո այդ խնդիրը հայություն առջև բարձրացրել էին ամերիկացի ու եվրոպացի մի շարք հայասերներ: Նրանք առաջարկել էին Օսմանյան կայսրության ողջ հայությունը գաղթեցնել մասնավորապես Ամերիկա՝ այնտեղ մի բարեբեր տարածք հատկացնելով նրանց: Ահա այդ անիրականանալի գաղափարն էր, որ նորից կրկնվեց կիլիկյան արհավիրքից հետո՝ իրական հնարավորության պատրանք տալով ոմանց:

Դա նշանակում էր, որ Կիլիկիայի և բովանդակ Հայաստանի ջարդերից չատ ավելի սոսկայի կարող է լինել Հայ հոգու և մտայնության սկիզբ առած ավերմունքը, որն ամեն գնով պետք է կասեցվեր: «Տասնչորս տարի առաջ», - գրում էր Վահան Թեքեյանը, - անկումի այս աստիճանի վրայ չէինք դեռ, մեր ցար աւելի ազնուական կերպով մը գիտցանք կրել այն ատեն... [Ատանայի] ջարդէն ևտքը, կարելի չէր բնդհանուր կերպով այսքան թոյլ և առնադուրկ ըլլալ՝ արդէն գրեթէ ջնջուած դգալու համար ինքզինքնիս և մեր կրօնքէն, աղգայնութենէն ու երկրէն դուրս փախուստներով ինքզինքնիս ապահովելու համար»⁴:

Երկիրն աղգովին լրելու առաջարկի դեմ վճռականապես

⁴ Նկատի ունենալով 1895-1896 թթ. հայոց զանգվածային կոտորածները Օսմանյան կայսրության հայկական վիլայեթներում:

⁵ «Շիրակ» (Կ. Պոլիս), № 14-15, 16 մայիսի 1909 թ., էջ 297:

Հանդես եկան Հայ եկեղեցին, կուսակցությունները և մտափորական շատ գործիչներ:

Հնչակյան կուսակցությունը ղեկավարությունը գտնում էր, որ սպառնալից ժամանակն էր Թուրքիայի կայսրությունը աստիճանաբար մարդկայնանալու և սահմանադրությունը իրական ուժ դառնալու հնարավորությունները: Կուսակցությունը պաշտոնաթերթը «Կոհակ» շարաթերթը (Կ. Պոլիս) գրում էր. «Յորչափ Թուրքիան կը մնայ սահմանադրական երկիր մը եւ բոլոր քաղաքացիներուն յառաջդիմութեան արգելք չի հանդիսանար, ցորչափ ազգերու ինքնորոշումն ու ֆիզիքական գոյութիւնը կը մնան անձեռնմխելի, ցորչափ օսմանցի ժողովուրդներն անխտիր ու հաւասարապէս հնարաւորութիւն կ'ունենան ազատ-անկախ վայելելու արդար օրինաց հովանաւորութիւնը եւ իւրաքանչիւր ոք տէրը կ'ըլլայ իր կեանքին, գոյրին, պատուին ու վաստկածին, - Հայը միշտ կ'ըլլայ այս գեղեցիկ երկրին շինող, ծաղկեցնող, պատուարներ ու անձնուէր տարրը»¹:

Թերթը նշում էր, որ եթե Հայ ժողովուրդը լիներ մի քանի հազար ընտանիքներից կազմված, բախտասնդիր ու թափառաշրջիկ ցեղ, թերևս մասամբ ներկի կլիներ մտածել մի տեղից մյուս տեղ նրան փոխադրելու մասին, բայց, բարեբախտաբար, այդպես չէ: Նա ունի իր անցյալը, իր պատմությունը, իր հարուստ մշակույթն ու գրականությունը, ուրույն ավանդույթներն ու սովորույթները՝ չաղախված հազարամյակների քրտինքով ու արյունով, և այդ ամենը՝ ամուր կապերով շղթայված իր հայրենի աշխարհին²:

Դարերով նստակյաց, քաղաքակիրթ ու երկրագործ մի ժողովուրդ, որն ունի տուն-տեղ, հող ու կայված, ինչպես կարող էր այդ ամենը թողնել և ազգովի գաղթել: Իսկ գաղթելու պարագային նյութական, ֆիզիկական, քաղաքական դժվարությունները, օտար երկրում լեզվի, սովորույթների, ապրուստի, կլիմայի և այլ դժվարությունները:

¹ «Կոհակ» (Կ. Պոլիս), № 1, 30 մայիսի 1909 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

Չնայած ազգային կազմակերպությունների թափած ջանքերին, նրանք ի վիճակի չեղան ոչ միայն կանգնեցնելու, այլև դանդաղեցնելու արտագաղթը: Նոր ջարդերի ուրվականը հազարավոր մարդկանց քշում էր անձանթ հեռուներ: Անդրադառնալով այդ իրողությունը՝ պատմարան Արշակ Ալպոյաճյանը գրել է. «Հայ ազգային եկեղեցական իշխանությունները եւ կուսակցական առաջնորդները, տեսնելով հայութեան պարպումի կարծեցեայ (նկատի ունի՝ հավանական: - Հ. Ս.) վտանգը՝ ամեն ինչ ի գործ դրին արտագաղթի առաջն առնելու համար: Սակայն ի դուր: Որովհետեւ մեր ժողովուրդի բնածին բնազդը շատ աւելի դժուար եւ պերճախօս էր, քան բոլոր կարծեցեայ հոռտորներու ճառախօսութիւնները եւ փիլիսոփայութիւնները:

Շատ մօտիկ ապագան (1915 թ. ցեղասպանությունը: - Հ. Ս.) եկաւ ցոյց տալու, [որ] հայու բնածին բնազդը դինք չէր խաբած»¹:

Հնուցուց հայերի փոխարեն Կիլիկիայում էին հաստատվում օտար տարրեր, այդ թվում՝ ըստ «Իթիդայ» թերթի՝ 300 հրեա բնտանիք, որոնք պիտի դրազեկին առևտրով ու երկրագործությամբ²:

ՈՎՔԵՐ ԷՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Ի վերջո, ովքե՞ր են եղել կիլիկյան ջարդերի կազմակերպիչները. ովքե՞ր են ուղղություն տվել արյունաբերու խուժանի գործողություններին:

Արդեն անցել է մեկ դար, բայց այդպես էլ մինչև այժմ հստակ պատասխան չկա այդ հարցերին:

Կոտորածների հենց առաջին օրերից հասարակական գիտակցություն մեջ գոյացավ այն համոզումը, թե եղածը համիդյան խմբակի վերջին հանցագործություններից մեկն է, որի գլխավոր դերակատարներն են Աղանայի կուսակալը, այնտեղի դորքերի հրամանատարը և վիլայեթի համիդյան հայատյաց մյուս բռնակալ ուժերը: Քանի որ Կիլիկիայի կոտորածները տեղի

¹ Արշակ Ալպոյաճյան, Պատմութիւն Մայաթիոյ Հայոց, Բեյրութ, 1961, էջ 1317-1318:

² «Բիւզանդիոն», № 3856, 17 (30) Հունիսի 1909 թ.:

էին ունեցել Կ. Պոլսում զինվորական ապստամբութեան հետ միաժամանակ, այդ հանգամանքը շատերին զայիս էր համոզելու, որ կոտորածն արել են սուլթան Արղույ Համիդի կողմնակիցները՝ Ելզրդից եկած հրամանով:

Այդ կարծիքն առաջինն առաջ էր քաշել Ն. Յ. դաշնակցութիւնը, որն այդ ժամանակ արդեն չորս մեկ ու կես տարի բարեկամական կապերով կապված էր երիտթուրքերի Իթթիհադ կուսակցութեան հետ: Դաշնակցութեան պաշտոնական տեսակետն այն էր, որ Կիլիկիայի աղետը Արղույ Համիդի վերջին փորձն էր վերականգնելու նախկին իր անսահմանափակ իշխանութիւնը, որ դա պատահական մի «թյուրիմացութիւն» և առանձին մարդկանց արարք էր: Բողոքելով կիլիկյան ջարդերի մասին Փարիզի թերթերում հայտնված սխալ հաղորդումների դեմ, Ն. Յ. դաշնակցութեան Ժնեւի կենտրոնատեղին 1909 թ. մայիսին հանդես եկավ հայտարարութեամբ, ուր մասնավորապես ասված էր. «Երբ նոյն իսկ նոր ուժիմը ներկայացնող անձանց կողմէ այնչափ վկայութիւններով եւ միաձայն կերպով կը հաստատեն թէ ջարդերը մարտ 31ի պետական հարուածէն առաջ իսկ համիտական պաշտօնէից կողմէ պատրաստուած եւ կազմակերպուած են, յիրաւի, անկուր բան է որ արդի կառավարութիւնը կ'աշխատի պատասխանատուութիւնները բաժնել...»¹:

Հայ պատմարան Հրանտ Բաստրմաջյանն իրավացի էր, գրելով, որ «հատկապես դաշնակցութիւն կուսակցութիւնը, որը երիտթուրքերի հետ սերտորեն գործակցել էր համիդյան ուժիմի դեմ ընդհանուր պայքարում, այժմ, նրա տապալումից հետո, նախընտրում էր արյունահեղ սպանող վերագրել մեռնող հին ուժիմին»²: Դաշնակցութեան մամուլի օրգանները շարունակում էին հայերին ներշնչել, որ, իբր, երիտթուրքերն ու համիդականները որեւէ ընդհանրութիւն չունեն, որ նրանք հակոտնյա ուժեր են: Բայց հիմա այդ հերթաթիւն քչերն էին հավատում: Բոլորը հիշում էին, որ համիդյան բռնապետութեան տապալումից հետո Իթթիհադը փորձում էր տպավորութիւն ստեղծել, թե

կայսրութեան մեջ ազգային խտրականութիւնն իսպառ վերացած է և օսմանյան բոլոր հպատակները հավասար են օրենքի առջև: Մինչդեռ 1908 թ. հուլիսին իշխանութեան գլուխ անցնելուց հետո երիտթուրքերը ոչ միայն իրենց տված խոստումները մոռացան, այլև ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման բացահայտ թշնամիներ դարձան: Նրանք ամբողջապես որդեգրեցին Արղույ Համիդի արյունարբու քաղաքականութիւնը՝ իրենց դաժանութեամբ գերադանցելով նրան: Այդպիսի հարցը լուծելու համար երիտթուրքերն ընտրեցին ազգերի ոչնչացման ճանապարհը, և նրանց հանցավոր գործունեութեան առաջին այլանդակ դրսևորումն եղավ կիլիկյան արհավիրքը:

Կիլիկյան արհավիրքների պատասխանատուները երիտթուրքերն էին, իրենք էին, որ հրահրեցին մոլեռանդ ժողովուրդն ու զինվորը՝ հայերի դեմ: Դա ուղեկցվում էր փաստերի քողարկումով կամ աղավաղումով: Այսպես, «Տպագրական տեսուչը» 21 ապրիլի 1909 թ. իր «պաշտօնական ղեկուցագրով» թերթերից պահանջում էր Ադանայի ղեպերի մասին «չափազանցուած եւ մտքերը յուզող հրատարակութիւններուն» վերջ տալ¹: Այս հիման վրա՝ ճշմարտութիւնը բացահայտող «Բիւզանդիոնը» պատժվեց. թերթի հրատարակութիւնը խափանվեց 28 մայիսից (10 հունիսից) մինչև 9 (22) հունիսը: «Հավասարութեան» սկզբունքը պահպանելու համար, իշխանութիւնները նոյն ժամանակահատվածում պատժեցին նաև «Իթիդալ» սաղրիչ թերթը:

1907 թ. վերջերից Իթթիհադի հետ դաշնակցած Ն. Յ. դաշնակցութիւնը «խնայում» էր ոճրագործների այդ կուսակցութեանը և շարունակում էր իր քննադատութիւնն ուղղել բացառապես Արղույ Համիդի՝ որպես կիլիկիահայերի ջարդի կազմակերպչի դեմ²: Եվ դա այն դեպքում, երբ ինքը՝ Իթթիհադը՝ հանձնա Կիլիկիա ուղարկած իր «քննիչ» հանձնաժողովների, առաջվա պես պաշտպանում էր սուլթանին՝ նույնիսկ 1909 թ. մարտի 31-ի հեղաշրջման փորձը ձախողվելուց հետո: Ադանայում ընթացող պաշտոնական «քննութիւնը» չհաստատեց նախկին սուլթանի մեղավորութիւնը: Զինվորական գլխավոր դատարանը հրատարակեց մի հաղորդագրութիւն, որով Կիլի-

¹ «Բիւզանդիոն», № 3841, 19 մայիսի (1 հունիսի) 1909 թ.:

² H. Pasternadjian, Histoire de l'Arménie depuis les origines jusqu'au Traité de Lusanne. Paris. 1964, p. 396.

¹ «Բիւզանդիոն», № 3819, 22 ապրիլի (5 մայիսի) 1909 թ.:

² Տե՛ս «Արևելեան մամուլ», № 22, 26 մայիսի 1909 թ., էջ 518:

կիայի կոտորածների համար պատասխանատու թյունից ամբողջապես ազատ համարեց նախկին սուլթանին: Բայց այդ եզրակացության եկած դինֆորական դատարանը հարկ չէր համարել պարզելու և հասարակությանը հաղորդելու, թե, վերջապես, ովքեր են կոտորածները կազմակերպել:

Մուշեղ սրբազանը գրում էր, թե Իթթիհազր «որքա՞ն պատասխանատու թեան բաժին ունի այս ոճիրներուն մէջ, չենք կրնար առ այժմ ճշդել այդ պարագան: Լուրջ եւ անաչառ քննութիւն մը, սակայն, եթէ գոյութիւն ունենայ, պիտի կրնայ խնդրոյն այս մութ կողմերն այ յօստարանել»¹:

Օրեր անց, այնուամենայնիվ, հարցեր էին ծագել, արդյոք որեւէ կապ կա՞ կիլիկյան ջարդի ու «Միություն և առաջադիմություն» կոմիտեի միջև:

Արչակ Չոպանյանն արդեն նկատել էր, որ «նոր ըսուած բեժմին մէջ ինչքան մեծ չափով կենդանի կը մնար հին բեժմը, հին բարբարոս մտայնութիւնը»²:

Իթթիհազի գործիչ Հակոբ Պապիկյանի հետ ունեցած մի գրույցի ժամանակ Վեր. Համբարձում Աշճյանը նրան հարցրել է. «Պապիկեան էֆենտի, այս Ատանայի դէպքին մէջ ձեր եղբայրները՝ մատ ունի՞ն»: Պապիկեանը պատասխանել էր. «Անոնք աղէկ մարդիկ են, այսպիսի բան մը չեն ըներ»: Աշճյանն ավելացրել էր. «Կ'ընեն եւ աւելի առաջ այ կ'ընթան: Բնականաբար, ձեզի այդ մասին բան մը չեն ըներ, որովհետեւ ինչ այ ըլլայ՝ դուք հայ մըն էք: Անոնց մէջ փոքր քիչ մը կայ, որ ա՛ն գիտէ այս բանը»: Յակոբ էֆենտի երբ խնդիրը քիչ մը քննեց՝ տեսաւ թէ խնդիրը ճիշդ այդ հանգամանքը ունի ... Ծատ յուզուեցաւ»³: Վերապատվելին համոզված է, որ «Ատանայի ջարդին բուն պատասխանատուն Միութեան եւ Յոռաջդիմութեան Կոմիտէն է, թիւրք ազգայնամոլութիւնն ու չովինիզմն են»⁴:

Իհարկեւ, հայերն սկզբում տակավին ակնհայտ ապացույցներ չէին գտնում, թե կոմիտեն է կազմակերպել և իրականացրել ջարդը:

¹ Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, էջ 57-ի տողատակը:

² «Անահիտ» (Փարիզ), № 5-6, օգոստոս-սեպտեմբեր, 1909, էջ 141:

³ Նկատի ունի Իթթիհազ կուսակցության անդամներին, հնարավոր է՝ մասուններին: Իթթիհազի ղեկավարների մեծագույն մասը մասուն էր:

⁴ Վեր. Համբարձում Յ. Աշճեան, Ատանայի եղեռնը..., էջ 51-52:

⁵ Նույն տեղում, էջ 152:

նացրել ջարդը: Նրանք ավելի շատ հակված էին ընդունելու դաշնակցության կարծիքը, որն ուժգնորեն քարոզվում էր այդ կուսակցության մամուլի բոլոր օրգաններում: Նույնիսկ դաշնակցության երդվյալ հակառակորդներից մեկը՝ Սուրեն Պարթևյանը ջարդերից անմիջապես հետո մեղավոր էր համարում Արդույ Համիդի սև ուժերին և միամտաբար խոսում մինչև իսկ հայ-թուրքական «եղբայրութիւն»-ից¹: Բայց օրեր անց ի հայտ եկած նորանոր փաստերն աստիճանաբար գալիս էին հիմնավորելու եղեռնագործությանը Իթթիհազ կոմիտեի մասնակից լինելը²:

Որո՞նք էին դրա հիմնական ապացույցները.

Ա) Կոմիտեն Աղանա քաղաքում և վիլայեթում ուժեղ կազմակերպություն ուներ, և եթե ցանկանար, կարող էր արգելք հանդիսանալ աղետին թե՛ իր ազդեցութեամբ և թե՛ գորավոր միջոցների կիրարկումով: Մինչդեռ նրա անդամներից որեւէ մեկը ջարդն արգելելու ճիշդ չարեց, ընդհակառակը՝ նրանցից շատ շատերը միացան իրենց հակառակորդ համիդական բռնակալ ուժերին և մասնակցեցին կոտորածին:

Որ, իրոք, Իթթիհազի Աղանայի կոմիտեն ոչ միայն արգելք չի եղել ջարդերին, այլև ինքն է դրանց եռանդուն մասնակիցը եղել, հաստատվում է բազմաթիվ փաստերով, այդ թվում այդ կուսակցության ղեկավար գործիչներից մեկի՝ Մեկան զադե Ռիֆաթի վկայությամբ: Նա նշել է, որ նույնիսկ արդույհամիդյան հեղաշրջման տագնապայի օրերին Իթթիհազ կուսակցությունը հայերին չէր մոռացել. «Ատանայի մասնաճիւղը կեղրոնէն ստացած հրահանգին համաձայն Կիլիկիոյ, մասնաւորապէս Ատանայի մէջ ընդհանուր ջարդ մը պատրաստելու սկսած էր»³: Նույնը վկայում էր Հերբերտ Աղամս Գիբբոնսը, գրելով. «Աղանայի կոտորածը հայերի ոչնչացման առաջին փորձն էր նրանց կողմից, ովքեր զավթելով իշխանութիւնն Արդույ Համիդից՝ ժողովրդի նաև նրա գործելակերպը»⁴: Նույնը հաստատում էր Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Ջերալդ Լոուիթըրն իր պե-

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3823, 27 ապրիլի (10 մայիսի) 1909 թ., տե՛ս նույն տեղում, № 3834, 11 (24) մայիսի 1909 թ.:

² ՀԱԱ, ֆ. 424, ց. 2, գ. 8, թ. 21:

³ Ռիֆաթ Մեկան զատէ, Թուրքական յեղափոխութեան մութ ծալերը, Բեյրութ, 1975, էջ 171:

⁴ Г. А. Гиббонс. Последниие избуение в Армении, Петроград, 1916, с. 26.

տուժյան արտաքին գործերի նախարար Չարլի Հարդինգին հղած 1910 թ. մայիսի 29-ի թվականով «գաղտնի, անձնական և խորհրդակալական» նշումները կրող ղեկուցագրում, ուր գրում էր, թե իթթիհաղականները «հայերին հանգստացրեցին Ադանայի կոտորածով (1909 թ.)»¹:

Բ) Ադանայի կոտորածներում ամենամեծ դերը խաղաց «Իթիդալ» լրագիրը, որը տեղի երիտթուրքական կոմիտեի օրգանն էր: Այդ թերթն էր, որ ջարդին նախորդած շրջանում կուսակալին խստիվ քննադատում էր հայերին դիմագրավելու անկարողության մեջ, իսկ ջարդից հետո սկսել էր գովարանել նրան ու նրա վարչությունը՝ վիլայեթում «կարգ ու կանոն հաստատած լինելու» նպատակով թափած ճիգերի համար: Ադանայի առաջին ջարդի ժամանակ «Իթիդալը» գրել էր, թե հայերը համարյա կորուստներ չեն ունենում, մինչդեռ քաղաքի փողոցները ներկված են թուրքերի արյունով, ու վերջիններիս ոգեշնչել էր ձեռնամուխ լինել հայերի երկրորդ՝ է՛յ ավելի լայնածավալ ջարդին: Պարզվեց նաև, որ թերթի խմբագիր Իհսան Ֆիքրին մշտական կապի մեջ էր եղել քաղաքի երիտթուրքական կոմիտեի հետ:

Գ) Ադանայի երկրորդ ջարդը գործադրվեց երիտթուրք ղեկավարության հրամանի և տրամադրության տակ գտնվող Սալունիկի երկրորդ զորաբանակին պատկանող զորամասի ձեռքով: Իրենց եղկելի արարքներն այդ զորամասի հրամանատարներն արդարացնում էին անհավատալի պատճառաբանությամբ, թե հայերն, իրր, դինված դիմադրություն են ցույց տվել իրենց և իրենք ստիպված են եղել ղենքի ուժով հակադարձել²:

Դ) Եվրոպական մամուլը զորավոր ապացույցներով ցույց էր տալիս, որ Կիլիկիայի ջարդերին «Միություն և առաջադիմություն» կոմիտեն մասնակից է եղել, ավելին՝ չէր բացառում, որ երիտթուրք շատ ղեկավար գործիչներ կոտորածների կազմակերպիչներից էին: Հենց այդպես էր բանը ներկայացնում Փրանսիական «Թան» թերթը 1909 թ. մայիսի 9-ի առաջնորդող հոդվածում: Հայերի արյունայի ջարդը հոդվածագիրը երիտթուրքական իշխանությունների ծրագրածն էր համարում: Նա գրում էր, թե Ադանայի վիլայեթի վալին կոտորածները կազմա-

կերպել է «բարձրից ստացած ցուցմունքի համաձայն, որի ապացույց կարող է ծառայել ներքին գործերի նախարարությունն խորհրդական պաշտոնակալ (մուսթեշար՝ խորհրդական: - Հ. Ս.) Ադիլ բեյի հեռագիրը (Ադանայի վալին: - Հ. Ս.), որում պարզ ասուած է՝ «Երուպացիներին ձեռք չտալ»: Պարզ է, որ հասկացնել էր տրուած, թէ «հայերին ձեռք տուէր»: Դրանից մի քայլ էր մնացել հայերին կոտորելը, որը և մուսուլման բնակչությունը կատարեց»³: Ադիլ բեյի սույն հեռագրին անդրադառնալով, հայերի նկատմամբ միշտ համակիր եղած Սուլեյման Նազիֆ բեյը «Սամանյը» թերթում 1909 թ. մայիսի 3-ին շեշտում էր. «Այս կոտորածն ո՛չ Աստուած կ'ընդունի և ո՛չ քաղաքակիրթ մարդկությունը: ... Պատասխանատուութեան մեծը կը պատկանի Բ. Դրան»⁴:

«Բիւզանդիոնը» գրում էր, թե երիտթուրք-դաշնակցություն «եղբայրութիւնը յուղայական էր», որովհետեւ երիտթուրքերն «առաւել կամ նուաղ չափով կը հետեւէին Համիտի հայաջինջ քաղաքականութեան, երբ առիթը ներկայանար...»⁵:

Կիլիկիայի աղետից հետո իթթիհաղ կուսակցությունը ջարդը դատապարտող պաշտոնական որևէ հայտարարություն չարեց, կուսակցության որևէ գործիչ ցավ չհայտնեց: Ավելին, իթթիհաղի՝ Փարիզում գտնվող պարազուլս և Սամանյան պառլամենտի նախագահ Ահմեդ Ռիդան Ադանայում ծայր առած ջարդի հենց սկզբին հայտարարել էր, թե մեղավորը հայերն են⁶: Սուրեն Պարթևյանը նշում էր. «Կիլիկեան աղէտներու վաղորդայնին՝ մենք անձկագին կը սպասէինք սրտի ինքնաբուխ ու խելայնդ աղաղակ մը յսել Երիտասարդ Թուրքիոյ վարիչներուն ու գործիչներուն կողմէն, կը սպասէինք, այո՛, որ Ահմէտ ըիդաներն ու Հիւսէին ճահիտներն՝ իրար անցնէին, յառաջ նետուէին ցաւի

¹ «Թանի» առաջնորդող հոդվածի թարգմանությունը տե՛ս «Մշակ», № 94, 6 մայիսի 1909 թ.:

² «Բիւզանդիոն», № 3818, 21 ապրիլի (4 մայիսի) 1909 թ.:

³ Նույն տեղում, № 3827, 1 (14) մայիսի 1909 թ.:

⁴ Տե՛ս «Եիրակ», № 12-13, 2 մայիսի 1909 թ., էջ 288:

⁵ Հուսեին Զահիդ բեյը թունդ իթթիհաղական պատգամավորէր, ղեռնմն հրեա, մասն, խմբագրապետը հայաստաց «Թանին» թերթի:

¹ «Զգուշացե՛ք կեղծ բարեկամներից», Երևան, 2002, էջ 70:

² Տե՛ս «Եիրակ», № 11, 18 ապրիլի 1909 թ., էջ 259:

ու կարեկցութեան անկեղծ խոյանքի մը մէջ:

Բայց անոնք բառ մը չարտասանեցին, «վախ» մը չի հեւացին գործուած դարհուրելի Զուլումին հանդէպ. ու անչարժ, կարծես քարացած՝ լոնցին... Եւ երբ այ պէտք եղաւ բերաննին բանայ, բաներ մը ըսել՝ իրենց կցկտուր խօսքերը, տարտամ վանկերը. կամ աշխատաւոր դարձուածքները նուիրուեցան չարաշուք իրականութիւնը պարտկելու»¹:

Երբ մի անգամ կիլիկիահայ փաստաբան Սնդիկ Սիմոնյանին հարցրին, թե Յուսուֆ Քեմալ բեյն ինչպիսի՞ ժեռն (երիտասարդ) թուրք է, նա պատասխանել էր. «Այս մարդը հայ չսպաննէր, սակայն երբ հայ մեռնի՝ կ'ուրախանայ»²:

Երիտթուրք գործիչներից մեկը ազանացի մի իսլամի հետ ունեցած խոսակցութեան ժամանակ նրան նախատել էր ասելով. «Երբ մենք ձեզի ըսինք, թէ հայերուն քիթը քիչ մը գետին քսեցէ՛ք, չուղեցինք ըսել, թէ այդպէս բոլորին բնաջնջեցէ՛ք»³:

Եթե նույնիսկ ճիշտ լինեին հայերին վերագրված դավադրական ձգտումները, եթե նրանց դեմ նետված զրպարտությունների մեջ թեկուզ փոքր ճշմարտություն լիներ, եթե ոմանց մոտ նույնիսկ խմորված լինեին ապստամբական տրամադրություններ, ապա դրանք պատճառներ չէին, որպեսզի երիտթուրքերը չդատապարտեին հայերի նկատմամբ իսլամների գործած ահուկ խժոժությունները:

Հետզհետե հրապարակ նետվող մերկացումները, որ կոտորածները կազմակերպելու մեջ եռանդուն մասնակցել է «սահմանադրական» կառավարությունը, որեւէ կասկած չէր թողնում հայ ժողովրդի նկատմամբ Կ. Պոլսի երիտթուրք վարիչ շրջանակների թշնամական տրամադրությունների մասին: Անդրադառնալով գնալով ու ժեղացող այդ տրամադրություններին, Փարիզի «Լա ռեվյու» («La Revue») պարբերաթերթն իր 1910 թ. օգոստոսի 11-ի համարում հրատարակած «Հայկական նոր ջարդերը» վերնագրով հոդվածում հայոց կոտորածների կազմակերպումն ու

իրականացումը վերագրելով երիտթուրքերին և նրանց կառավարությունը, միաժամանակ շեշտում էր, որ այդ կոտորածները վերջինը չեն, այլ սկզբնավորությունը իթթիհադի կազմակերպելիք նոր ջարդերի:

Պոսահայ մտավորականության շրջանում կարծում էին, որ եթե կիլիկյան ջարդը լիներ Արդուլ Համիդի բռնակալության օրոք, թուրքահայ ժողովուրդը թերեւս այնքան ծանր չտաներ տեղի ունեցածը, ինչպես այժմ՝ նոր ուժի մի պայմաններում, որի կերտիչներն իշխանություն եկան հակահամիդյան կարգախոսներով: Ճիշտ է, նա դարձյալ կցնցվեր. բայց, միաժամանակ, դա հերթական սովորական դժբախտություն կհամարեր ու հուսահատություն գիրկը չէր բնկղմվի:

Ընդհանուր վճատությունն ու հուսահատությունն մեջ էր ոչ միայն կիլիկիահայությունը, այլև գրեթե բոլանդակ հայությունը՝ Կ. Պոլսից մինչև Արևմտյան Հայաստանի գավառները, Կովկասից մինչև արտասահմանի հայ գաղութները¹:

Սահմանադրություն վերահաստատումից հետո, երբ թուրքահայերը խայտում էին երկարամյա տառապանքի վերջնական վախճանի հույսով, նրանց գլխին իջեցված երկաթալախտի այդ ահավոր հարվածը կարծես անղառնալիորեն կտրատել էր և նրանց ջղերը: Հայածանքին ու չարչարանքին կուրծք տվող դարավոր կորովը կքվել էր, և հայությունն առաջին անգամ տաժանքի փշոտ գառիվերի վրա հուսահատ ընկնելով՝ հեիհե գոչում էր. «Է՛յ չեմ կարող քայել»:

Գրող ու հրապարակախոս Երվանդ Օտյանը, որն ընդհանրապես կայսրության բոլոր դժբախտությունների հիմնական պատճառը միշտ համարել էր արդուլհամիդյան հետադիմությունը², այժմ գրում էր. «Այո՛, մեր պատրանքը սոսկալի եղաւ, որովհետեւ միամտաբար կարծեցինք, թէ ա՛յ կատարին հասած էինք ու ահա՛ նորանոր գառիվերներ ցցուեցան մեր դէմը: Մենք նմանեցանք դատապարտելի մը, որ տարիներով մութ դնտանի

¹ Սուրէն Պարթեւեան, Կիլիկեան արհաւիրքը, էջ 118:

² Վեր. Համբարձում Յ. Աչճեան, Ատանայի եղեռնը..., էջ 90:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 91:

¹ Տե՛ս «Հնչակ» (Փարիզ), № 4-5, ապրիլ-մայիս, 1909, էջ 23:

² Տե՛ս, օրինակ՝ «Շիրակ», № 11, 18 ապրիլի 1909 թ., էջ 241-243:

մը խորը շղթայուած՝ օր մըն ալ կ'արձակուի եւ հազիւ ազատ օդը կը սկսի չնչել ու յոյս արեւին դարձնել աչքերը, 'ահա' նորէն կը բռնեն օձիքէն ու կը նետեն զնտանին մէջ»¹:

«Ու վրէ՞ր էին կաղմակերպել ջարդը» հարցը մնացել էր օդից կախված: Իսկապէս՝ ու վրէ՞ր էին՝ սուլթան Արդուլ Համիդը և յուրայինները, թե՞ Երիտթուրք «հեղափոխականները» և նրանց գաղափարակիցները: «Մեր տեսածին համաձայն՝ մէտն (Երիտասարդ) թուրքին եւ հին (ծեր) թուրքին միջև, բացի իրենց անունէն, ուրիշ ոեւէ տարբերութիւն չկայ,- գրում էր Ադանայի հայ ավետարանականների հոգևոր հովիվ վեր. Համբարձում Յ. Աչճյանը: Երկուքն ալ քրիստոնեայի թշնամի են, երկուքն ալ կը խորհին թէ թուրքիա՝ նախ թուրքերուն եւ իսլամներուն համար է: Քրիստոնեաներու՝ այս երկրին մէջ բնակելու համար չնորհք մը եղած է: Պէտք է իրենց բախտէն զոհ ըլլան, հոգ չէ, թէ ջարդ ըլլայ կամ կոխ»²:

Դրանք արժանի էին մեկը մյուսին: Երկուսն էլ հայերի ռես-բիւմ թշնամիներն էին: Զարդը կաղմակերպել և իրականացրել է թուրքական զարավոր բռնակալութիւնը:

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Աղգային մեծ ողբերգութիւնն անհուն ցավ և հուսահատ դայրույթ պատճառեց գաղութահայերին, որոնք մի քանի օտար թերթերում իրականութիւնը ճիշտ ներկայացնող հոդվածների տպագրութիւն հաջողացնելուց և մեկ-երկու երկրում մի քանի հանրահավաքներ կաղմակերպելուց բացի ոչինչ անել չկարողացան³:

Զարդերը ղեռ շարունակվում էին, երբ Փարիզի Ստրասբուր-

գի պողոտայի վրա գտնվող Կաֆե դյու Գլոր դահլիճում ապրիլի 12 (25)-ին հայերը հանրահավաք կաղմակերպեցին⁴: Ներկա էր 800 հոգի, այդ թվում՝ բազմաթիվ ֆրանսիացիներ: Նախագահող Տիգրան խան Քելեկյանի հաղորդումից հետո եղան կույթներ, որոնցում նկարագրվում էր այն անտանելի վիճակը, որի մեջ հայտնվել էին կիլիկահայերը: Ելույթներ ունեցան նաև ֆրանսիացիներ, որոնք դատապարտում էին Եվրոպայի անտարբերութիւնը կամ քննադատում երիտթուրքերին, որոնց թողտվությամբ ջարդը ղեռ շարունակվում էր: Հանրահավաքի վերջում կաղմվեց երկու պատվիրակութիւն, որոնցից մեկը գնաց բողոքելու արտաքին գործոց նախարար Պիչոնին, իսկ մյուսը մեկնեց հանդիպելու Փարիզի օսմանյան դեսպան Նաում փաշային: Հանրահավաքից հետո կաղմվեց նպաստահավաք հանձնաժողով, որը պետք է գումարներ ժողովեր ողջ մնացած վիրավոր ու հիվանդ, որրացած կամ սովահար կիլիկահայերին օգնութիւն ցույց տալու համար⁵: Ընդունված փաստաթղթերից մեկը հասցեագրված էր Մերսինի բրիտանական հյուպատոսին, ուր ասված էր. «Փարիզի հայ գաղթականութիւնը իր կաղմակերպած այս մեծ միթիւնկին միաձայնութեամբ քուէարկեց իր ջերմագին երախտագիտութիւնը Ձեր համակ անձնուիրութեան, երբ դուք փորձ ըրիք պաշտպանել հայերը վերջին ջարդին պահուն»⁶:

Կիլիկիայի հայերի և մյուս քրիստոնեաների 1909 թ. ջարդերն այնպիսի յայն արձագանք չունեցան Եվրոպայում, Ռուսաստանում և արտասահմանյան ուրիշ երկրներում, ինչպես 1895-1896 թթ. տեղի ունեցած հայերի յայնածավալ կոտորածները, որոնց զոհ էր գնացել ավելի քան 300.000 մարդ: Եվրոպան հայկական հերթական կոտորածների գույժը լսեց անտարբեր ու ձանձրացած ականջով⁷: Ողբերգութիւնը միայն մի կարճ ժամանակ դրազեցրեց պետութիւնների քաղաքական շրջաններին և մամուլին:

¹ «Արևելք», № 7112, 1 հունիսի 1909 թ.:

² Վեր. Համբարձում Յ. Աչճեան, Ատանայի եղևոնը..., էջ 90:

³ Մատենադարան, Մատթևոս Իղմիրյանի արխիվ, մատյան 34, թղթ. 14, փավ. 206:

⁴ Տե՛ս «Անահիտ» (Փարիզ), № 1-2, ապրիլ-մայիս, 1909, էջ 47:

⁵ Տե՛ս «Արևելք», № 7076, 18 ապրիլի 1909 թ.:

⁶ Տե՛ս «Բիզանդոն», № 3818, 21 ապրիլի (4 մայիսի) 1909 թ.:

⁷ Տե՛ս «Շիրակ», № 16, 25 մայիսի 1909 թ., էջ 334:

Պատմաբան Լեոն (Առաքել Բարախանյան) գրել է. «Աղանայի կոտորածը և րոպական զիվանագիտությունների ու շաղրու-թիւնը չգրաւեց անգամ նախ և առաջ այն պատճառով, որ և րոպական մամուլի մի մասը հայերին էր պատճառ համարում, իսկ երկրորդ՝ Դաշնակցությունն այլևս ազմուկ չհաննեց այդ առիթով միջազգային հրապարակում, զիւանագիտական առաքելություններ և այլ այսպիսի անճար հնարքներ չսարքեց»¹:

Կիլիկիայի և Հատկապես Աղանայի կոտորածներին քիչ թե շատ անդրադարձան Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի և Շվեյցարիայի պառլամենտները:

Ֆրանսիական խորհրդարանում մայիսի 17-ին բողոքի ձայն բարձրացրեց պատգամավոր Դենի Կոչենը (Denis Cochin)՝ նկարագրելով տեղի ունեցած սարսափները²: Նա կարդաց ապրիլի 13 (26)-ին մի ֆրանսիացու գրած նամակը Մերսինից, ուր ասված էր. «Իմ կարողությունն է վեր է նկարագրել մեր նահանգի վերջին դէպքերը, որոնց պատմությունը պիտի յիշատակուի ամենասու գոյներով: Արդարև, մարդու միտքը չի կրնար ճշգրիտ պատկերացնել տեղի ունեցած անհաստատի վայրենությունն ու վայրագությունն ուղիղ պատկերը: Տխրահուշակ թիմուրլէնկեր չէր համարձակուի քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ նմանօրինակ խժովություններ կատարել: ... Ատանայի առջև զետր նետուած բազում դիակները հասան մինչև Մերսին և ծածկեցին ծովի երեսը»³: Մեծանուն ֆրանսիացին իր կորովի ճառում ցավ հայտնեց, որ կոտորածի մատնված ժողովրդին ազատելու համար ֆրանսիական կառավարությունը ուժեղ և ազդու միջամտություն չի արել, միաժամանակ՝ կառավարությունից պահանջեց վճռական քայլերի դիմել, եթե ջարդի նոր բռնկում լինի: Այդ դեպքում, ասում էր նա, Միջերկրական ծովի ֆրանսիական մարտանավերին պետք է անմիջապես հրաման տալ Կիլիկիայի

ափերին գործ իջնցնել՝ պաշտպանություն տակ առնելու հայ բնակչությունը⁴:

Երբ Կոչենը պառլամենտին առաջարկեց Աղանա գործ ուղարկելու համար դիմել կառավարությունը, տեղի ունեցած հետևյալ երկխոսությունը նրա և Ֆրանսիայի սոցիալիստների առաջնորդ Ժան Ժորեսի միջև.

«Ժորես. - Առաջին միջամտությունը (ոսգմանավեր ուղարկելը: - Ն. Ս.) բավական է:

Կոչեն. - Բավական չէ, այս հարցում Ձեզ հետ համամիտ չեմ:

Ժորես. - Ես կատարելապես համամիտ եմ Ձեզ, մաղթելով, որ Ֆրանսիան իր հնարավորությունների չափ ավելի ազդու պաշտպանի հայերին: Բայց համոզված եմ, որ ցամաք գործ հանելով կարելի չէ ցանկալի նպատակի հասնել, որովհետև դրանով իսկ իսլամների կրոնամոլությունը ավելի կզրզոնեք հայոց դեմ:

Կոչեն. - Եթե ջարդերը վերսկսվեն ֆրանսիական գործը փոխելուց հետո, ապա գործը պետք է կրակ բացի ջարդարարների վրա՝ անմիջապես և առանց խնայելու: Տեղի ունեցող ջարդերի ու խայտառակությունների հեղինակները պետք է պատասխանատվության կանչվեն»⁵:

Հանդես գալով, արտաքին գործերի նախարարը հավանություն է տալիս Կոչենի հարցադրումներին, միաժամանակ հիշեցնում, որ երբ կառավարությունը տեղեկություն ստացավ կոտորածների մասին, Կիլիկիայի ափերը անմիջապես մի քանի մարտանավեր ուղարկեց: «Ժյուլ Միշլյե», «Ժյուլ Ֆերրի» և ուրիշ մարտանավեր ջանքեր գործադրեցին և մեծ թվով հայերի տեղափոխեցին անվտանգ վայրեր»⁶:

Այնուհետև ելույթներ են ունենում արտգործնախարար Ստեֆան Պիչոնը, պատգամավոր էդուար Վայյանը և ուրիշներ⁷:

Կիլիկիայի դեպքերը մի պահ միայն արժարձվեցին Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատում: Պատգամավոր Հենրի Լինչը

¹ Լէօ, Թիւրքահայ յեղափոխությունն զազափարարանությունը, հտ. Բ, Փարիզ, 1935, էջ 59:

² Տե՛ս «Անահիտ», № 1-2, ապրիլ-մայիս, 1909, էջ 48:

³ Ցակոր Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 627-628:

⁴ Տե՛ս «Անահիտ», № 1-2, ապրիլ-մայիս, 1909, էջ 18:

⁵ Ցակոր Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 639-640:

⁶ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3833, 9 (22) մայիսի 1909 թ.:

⁷ Տե՛ս Ցակոր Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 640-641:

արտաքին գործերի նախարարին հարցրեց, թե Ադանայի դեպքերի ընթացքում որքա՞ն մարդ է սպանվել և նրանցից քանի՞սն է հայ ու քանի՞սը՝ թուրք: Նա նաև ցանկացավ իմանալ, թե կառավարությունը այդ մասին մտադիր չէ՞ տեղեկացնել Համայնքների պալատին:

Արտգործնախարարը պատասխանեց, որ Ջարդերի մասին եղած տեղեկությունները թերի են և հակասական: Մերսինի բրիտանական հյուպատոսի ապրիլի 14-ի տեղեկագրի համաձայն, ասաց նա, Ադանա քաղաքում սպանվել է 20.000 մարդ, որոնցից 600-ը իսլամ են: Ծրճակա բնակավայրերի դոճերի հետ՝ Ադանայում սպանվածները 25.000 են հաշվվում:

Այդ կարճ երկխոսությունից հետո բրիտանական պառլամենտը Կիլիկիայի ողբերգությունն այլևս չանդրադարձավ, իսկ կառավարությունը կատարյալ լռություն էր պահպանում, որովհետև վստահություն ուներ երիտթուրքերի նկատմամբ, հավատում էր Իթթիհատ կոմիտեի անկեղծությունը և «նրա գործը դժվարացնել» չէր ուզում:

Ավելի անտարբեր էին Գերմանիայի պառլամենտը և կառավարությունը: Այս երկիրն ամեն կերպ ճգնում էր Օսմանյան կայսրության նոր ուժի միջոցով ազդել և նրա ամեն արածը օրինական էր համարում: Ո՛չ պառլամենտը և ո՛չ էլ կառավարությունը որևէ դիտողություն չարեցին Օսմանյան կայսրության՝ ցույց տալու համար, թե միայն Գերմանիան է նրա իսկական բարեկամը:

Ցավոք, եվրոպական պատգամավորական ժողովների բողոքներն ու վիճաբանությունները որևէ դրական արդյունք չունեցան, և վիճակը միշտ մնաց անփոփոխ՝ օրվա կառավարությունների քմահաճությին ենթակա:

Սուրեն Պարթևյանը դառնությունամբ նշում էր, որ «ևրոպական դիւանագիտությունն էլ ի սպառ լքուած եւ անկէ ա՛յ յոյսը կտրած հայութիւնը այս անգամ, իր անհուն կսկիծին մէջ, չունեցաւ նոյնիսկ անոր մխիթարանքը եւ համակրանքը, այլ՝ միանգամայն անտարբեր մնաց հայերուն պատահած ահուկի դժբախտությունն հանդէպ»¹:

¹ Սուրեն Պարթևյան, Կիլիկիան արհաւիրքը, էջ 5:

Եվրոպական հասարակության վրա քիչ թե շատ ազդեցություն էին թողնում մամուլի հրատարակումները: Թերթերի էջերում հանդես էին գալիս քաղաքական ու մշակութային գործիչներ, ինչպես նաև Ջարդերի ականատեսներ: Հոգվածներ էին տպագրվում սրատված անմեղների, անթիվ-անհամար որբերի, արտագաղթի գավազանը կրկին ձեռքերն առած հուսահատ ու խելակորույս բազմությունների մասին:

Վերը նշած Դենի Կոչներ Փարիզի «Ժուռնալ օֆիսիկլի» («Պետական պաշտոնաթերթ») 1909 թ. մայիսի 9-ի համարում դատապարտում էր հայերի նկատմամբ թուրքերի եղեռնագործությունը, գրելով. «Աննկարագրելի հրեշային տեսարաններ են առաջ եկել: Համայն Կիլիկիան կործանվեց՝ դոճ գնալով սովի ու թշվառության ... Եվրոպական նավերի ներկայությունը կոտորածներին արգելք չեղավ»:

Այնուհետև դիմելով Ֆրանսիայի կառավարությանը՝ Կոչները շարունակում էր. «Հանուն մարդկության՝ խնդրում ենք այս ողբերգական վայրկյանին անհրաժեշտ անել: Ամենից արդյունավետ միջոցը պետք է լինի հայկական գավառների զինվորական պետերի ու կառավարիչների պարտավորությունների և պատասխանատվության ճշտումը»:

Կիլիկիայի կոտորածների առթիվ զայրույթի ու բողոքի ազդակ արձակեցին նաև ֆրանսիական մամուլի ուրիշ օրգաններ²:

Բայց եվրոպական մամուլի մեծ մասը արձագանք տվեց խեղաթյուրված յուրերին, անճիշտ հավաստիացումներին, որոնք նպատակ ունեին եթե ոչ արդարացնելու կատարված բարբարոսությունները, ապա դրանք հայտնի չափով բառնայու աղետոյալ հայերի ուսին, մյուս կողմից խղճահարություն առաջ բերելու ոճրագործների նկատմամբ³: Այդ թերթերից էին, օրինակ, ֆրանսիական «Ֆիգարոն» ու հատկապես «Ժուռնալը», Լոնդոնի «Թայմսը», գերմանական «Ռայնիշ ցայտունգը» և այլ պարբերականներ: Այդ և նմանօրինակ թերթերի շատ հոգվածագիրներ պնդում էին, թե սահմանադրական հեղաշրջումից հետո հայերը հանդուգն ու անտանելի են դարձել, և հենց դրանով էլ բացատ-

¹ Տե՛ս «Անահիտ», № 1-2, ապրիլ-մայիս, 1909, էջ 48:

² ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, № 2175/1, թ. 2:

րում էին մուսուլման աղգարնակչություն կատաղությունը քրիստոնյա հայերի նկատմամբ: Ավելին, իբր հայերը ցուցադրաբար խոսում են իրենց հետոն գնացող նպատակների մասին, այն է՝ Օսմանյան կայսրությունից անջատվել ու հայկական անկախ պետություն կազմել և այդ նպատակով իսկ տարածում են իրենց աղգային հերոսների պատկերները, թատրոններում ներկայացնում են այնպիսի պիեսներ, որոնց մեջ ծաղրվում են թուրքերը, խտացված գույներով են ներկայացվում օսմանյան սուլթանների գաղանթությունները և այլն: Իհարկե, նույնիսկ այս կերպ մտածող եվրոպացի թուրքասերները, վկայակոչելով նրչված «իրողությունները», ստիպված էին ընդունել, որ այդ ամենը թուրքերի համար պատրվակներ էին սկսելու կոտորածը, որից ամենից շատ տուժեց քաղաքական քարոզչությունում ամենեին մաս չունեցող հայ գյուղական աղգարնակչությունը, որն զրաղված էր իր հոգսերով:

Սակայն թուրքերի օգտին Եվրոպայում քարոզչություն մղող թերթերի թվում հատկապես առանձնանում էր գերմանականը: Այս երկրի մամուլն Ադանայի ղեկավարի առթիվ հայոց նկատմամբ միևնույն չար լեզուն գործածեց, ինչպես 1895-1896 տարիներին հայոց ահուկ ջարդի առթիվ: Հայ կրոնավոր Բաղիյը (Բարսեղ) Մյունխենից մայիսի 25-ին Կ. Պոլսի «Բիւզանդիոն» թերթին գրում էր, որ Բեռլինում օսմանյան ղեկավարն իր հրապարակումներում կիլիկյան կոտորածների դոհերի ընդհանուր թիվը համարում է 4000-ից պակաս, ըստ որում՝ մուսուլմաններինը երկու անգամ ավելի՝ քրիստոնյաների համեմատ: Բաղիյը ցավով ավելացնում էր, որ գերմանական թերթերի էջերից չեն իջնում հայ ժողովրդի հասցեին վիրավորական ամբաստանություններն ու զրպարտությունները: Հայերը հիմնականում մեղադրվում էին ապստամբ լինելու համար¹:

Գերմանական թերթերի բացարձակ մեծամասնությունը հրաժարվում էր թուրք անկողմնակալ մամուլի հրապարակումները գործածել: Իսկ այդպիսի մամուլ կար, որը դատապարտում էր արյունահեղությունը և մատնացույց անում բուն մեղավորներին: Հայերը երախտագիտություն էին հայտնում եղևոնագործությունը հետևողականորեն դատապարտող Կ. Պոլսի «Սեր-

վերթ ֆունուն», «Սիրերի սայիբայի հյուրիկթի» և ես 2-3 ուրիշ թերթերի խմբագրություններին՝ անաչառության համար¹:

Հողվածներից բացի՝ Եվրոպայում յույս տեսան այնտեղ հեղինակած գրքեր, որոնք էին՝ վերը հիշատակված Փրանսիացի լրագրող, աղգություն հույն Ա. Ադոսիդեսի աշխատությունը՝ *A. Adossidés, Arméniens et Jeunes-Turcs. -- Les Massacres de Cilicie (Paris, 1910), Ժորժ Բրեզոլի* (Պետրոս Աղնավուր), *Les Turcs ont Passé la... Recueil des Documents, Dossiers, Rapports, Requetes, Protestations, Supplices et Enquêtes Établissant la Vérité sur les Massacres d'Adana en 1909 (Paris, 1909)* փաստաթղթերի ժողովածուն, *Duckett Ferriman and Frederick Zaccheus, The Young Turks and the Truth about Holocaust at Adana in Asia Minor during April 1909 (London, 1913)* գրքույկը՝ Հետազայում դրանց ավելացան՝ *Emile Doumergue, L'Arménie, les Massacres et la Question d'Orient (Paris, 1917)*, Հերրերտ Ադամս Գիրբոնսի հետազոտությունը՝ «Վերջին ջարդերը Հայաստանում» (Փարիզ, 1915), Փրանսիացի միսիոներ Պոլ դյու Վեուիի «Կիլիկիայի չարչարանքը» (Փարիզ, 1913) գիրքը և այլն²: Թեև այս գրվածքներում չի ներկայացված կոտորածի ու բռնությունների լիակատար պատկերը, այնուհանդերձ, հեղինակները կատարվածի մասին մեծ հուզմունքով ու ցավով են խոսում:

Ջարդերի ականատես Գիրբոնսը, դայրույթով նկարագրելով թուրքական գաղանթությունները հայերի, այդ թվում նաև ծերերի, կանանց ու երեխաների նկատմամբ, գրել է. «Այդ ջարդն ավելի սարսափելի էր, քան Արդույ Համիդի ժամանակներում», «Այն հայերը, որոնց հաջողվել էր փրկվել առաջին ջարդի ժամանակ, այժմ ոչնչացվեցին», «Ադանան դժոխք է դարձել»²:

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3828, 2 (15) մայիսի 1909 թ.:

² 2008 թ. Փրանսերենով յույս տեսավ Շամպինյիում (Ֆրանսիա)՝ Ժան Պարիկյանի թարգմանությունը:

³ Այս գրքի մասին Արչակ Զուպանյանը գրել է հանգամանալից ջերմ գրախոսական (տե՛ս ԳԱԹ, Արչակ Զուպանյանի անձնական ֆոնդ, թղթ. 421, թթ. 1-8), որն անտիպ է մնացել:

⁴ «1909ի կիլիկիայի հայկական կոտորածները Փրանսիական պատմագրության գնահատմամբ» վերտառությունը հետաքրքիր ուսումնասիրություն է յույս ընծայել երևանցի պատմաբան Վարուժան Պողոսյանը (տե՛ս «Հայկազնի հայագիտական հանդէս», հտ. ԻԷ, Բեյրութ, 2007):

⁵ Г. А. Гудбонс, Последнее издание в Армении, Петроград, 1916, с. 26.

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3839, 16 (29) մայիսի 1909 թ.:

Ջարդերը դատապարտեցին թուրքական, արարական, հունական, բույրարական մամուլի օրգաններ, բաղմաթիվ իսլամ կրոնական, հասարակական, քաղաքական գործիչներ:

Եզիպտացի նշանավոր արձակագիր, հրապարակախոս, կրոնագետ Մուհամմեդ Լուիֆի ալ-Մանֆալուիին տպագրել էր «Ջկա վայրագություն իսլամի մեջ» վերնագրով հոդվածը, որով նախատինքի սյունին էր գամում հայերի դանգվածային սպանությունների մեղավորներին: Դիմելով քրիստոնյա անմեղ հայերին կյանքից զրկած մահմեդականներին, նա հարցնում էր. «Այդ ի՞նչ քարից, ի՞նչ վեմից եք քանդակել ձեր սրտերը, որ չեն սարսափում արնաթաթախ զոհերի տեսքից և ընկածների տնքոցներից, ինչի՞ց են տաշել ձեր աչքերը, որոնց միջոցով կարող եք նայել փոքրիկ երեխաների մարմինները հափրող կրակին, որի մայրը կողքին՝ անկար է օգնել, որովհետև կրակը նրան չի թողել շարժունակ ձևեր կամ քայլող ոտքեր:

Ես չեմ շնորհավորում ձեր հաջողությունն ու հաղթանակը, քանզի կարծում եմ, որ անմեղներին սպանելը վախկոտի ու անզորի արարք է, քանզի վայրագությունը արյուն հեղելու համար ձեզ պետք է սզալ ու ցավակցել»¹:

Կահիրեի ալ-Ազհար կրոնական-բանասիրական համայնարանի ղեկավար և գերագույն իմամ շեյխ Սելիմ ալ-Բահրին, զգացված Ադանայի և Հայկազի վիլայեթներում տեղի ունեցող քստմենլի արարքներից, գրեց խրատական մի ֆեթվա, որի պատճենները հեռագրելով ուղարկեց կայսրությունյան բոլոր նշանավոր կրոնապետներին, կուսակալներին, մեծ քաղաքների կառավարիչներին, արարական և թուրքական բոլոր լրագրերի խմբագրություններին՝ անձնապես վճարելով հեռագրերի և ֆեթվայի տպագրությունյան բոլոր ծախսերը²: Ֆեթվայով՝ համայնարանի ղեկավարը հետևյալ դիմումներն էր հղում.

«... Իսլամական կրօնքը կ'արգիլէ սպանությունները, բռնությունները, յարձակումներն և թալաններն հաւասարապէս իսլամին, քրիստոնէին և հրէին համար: Ով այդ կողմերն և ուրիշ կողմեր բնակող իսլամներ, զգուշացէ՛ք Աստուծոյ՝ իր Շէրիաթին միջոցով արգիլած ընթացքներէն: Մարդասպանութիւն, հրդեհ

առաջ բերել հարամ է... Եթէ ճիշդ են Ատանայի մէջ և ուրիշ կողմեր տեղի ունեցող սպանութիւնները, այդ դէպքերուն հետեւնակներն Աստուծոյ և Մարգարէին բարկութիւնն իրենց վրայ հրաւիրած և Շէրիաթն անարգած են: Իսլամութիւնը կը խորշի այս կարգի հարամ գործերէ և գործողներն իսլամութեան փառքէն կը հեռացնէ: Կր յուսամ թէ իսլամ եղբայրներն այս խօսքերը լսելով, այս բարձր կրօնքին հետևողներն արատաւորող և թշնամիներու ձեռքին՝ ալ շարիքի միջոց եղող այս կարգի ցաւառիթ ընթացքներու կրկնութենէն կը զգուշանան»³:

Անշուշտ, ոչ բոլոր մահմեդականները ողջունեցին ալ-Ազհար համայնարանից ստացած հեռագիրը: Դրանցից էր կոտորածի կազմակերպիչներից մեկը՝ Ադանայի մուֆթին, որն ալ-Ազհարի ղեկավարին գրած նամակում արդարացնում էր հայերի ջարդը: Նա ստում էր, թե ղեկավարը առաջ նրանք արդեն ընտրել էին իրենց թագավորին և ուր որ է Կիլիկիայում անկախ հայկական պետություն ստեղծելու վրա էին: Ապա, ուրեմն, կմնար երկու ելք՝ փեշերը ժողովել ու փախուստ տալ հայկական բանակների առջև կամ հայերին անխտիր ու անխնա պատժել: Եվ հայրենիքը փրկելու համար իսկական հայրենասերներն ընտրեցին վերջին ուղին²:

Կահիրեում հրատարակվող «Ժոնոնայ դյու Քեո» թերթի խմբագիր Ֆերնան Բրաունն իր պարբերականում խստորեն դատապարտել էր մուֆթի մարդատյաց վերաբերմունքը, գրելով. «Ջարդոցները ի դուր պիտի ջանան ինքզինքներին չքանդել. երբեք պիտի չյաջողին ատոր: Ոչինչ կ'արդարացնէ բարբարոսութիւնն և անասնական մոլուցքը մարդուն որ կը տանջէ և կը դիտէ հոսուճ արեան: Գաղանը կրնայ բնագոյական հաճոյք մը գտնել ատոր մէջ, բայց զազանը բանականութենէ զուրկ է և իր բնութեան կը հետեւի անդիմադրելիօրէն: Մարդը կաղմաւորեալ ուղեղ մը ունի, կը խորհի: Բայց կարելի՞ է մարդկային սեռին մէջ դասել այն բոլոր ջոյիւրները մարդակերներու, որոնց գործած խժոժութեանց ընթացումն իսկ, այնքան օրերու և մղոններու հեռաւորութեամբ, արհաւիրք և զուժ կը յարուցանեն մեր մէջ»³:

¹ Ֆեթվայի հայերեն թարգմանությունը տե՛ս «Բիզանդիոն», № 3819, 22 ապրիլի (5 մայիսի) 1909 թ.:

² «Դրոշակ», № 6, հունիս, 1909, էջ 67:

³ Թարգմանությունը տե՛ս «Շիրակ» (Կ. Պոլիս), № 20, 20 հունիսի 1909 թ., էջ 441:

¹ «Ազգ» (Երևան), 24 ապրիլի 2008 թ.:

² Տե՛ս «Բիզանդիոն», № 3831, 6 (19) մայիսի 1909 թ.:

Եզրիպտացի նշանավոր մուսուլմանական գործիչ, ազգությամբ թուրք հայտնի մտավորական Վելիլղդին Յեկենը եզրիպտական «այ-Մուգաթթամ» շարաթաթթերթի № 18, 1909 թ. ապրիլի 16 (29)-ի համարում տպագրել էր հետևյալ բողոքագիրը.

«Ո՛վ իսլամներ.

Աստծուց չվախեցա՞ք, մարդկանցից չամաչեցի՞ք ձեր քրիստոնյա եղբայրներին սպանելու և թշնամացնելու համար: Ձեր այս արարքը, ո՛վ անիրավներ, ամենամեծ ապացույցն է այն բանի, որ ձեր մեջ չկա մի խելացի իսլամ և ոչ էլ ազնիվ սրտի տեր մեկը: Ձեռքներդ չդողա՞ց. ի՞նչ չահեցիք այդ խոռովությունից, որի նմանը տեսնված չէ դարերի ընթացքում: Բարբարոս ազգերից ո՞րն այդպիսի ոճիրների դիմեց. ափսո՛ս այն ծնողները, որոնք ձեզ աշխարհ են բերել և ափսո՛ս այն պատվական երկիրը, որ ձեզ սնել է իր պտուղներով, ձեզ ջրով հագեցրել իր գետերով և ձեզ պահել իր հովանու տակ:

Ո՛վ ուլեմներ.

Այն փաթթոցները, որոնցով ծանրացրել եք զուլաներդ և որոնց գործիք եք դարձրել տղետներին խարելու համար, շատ չանցած ամոթով պիտի ծածկեն ձեր տեսողությունը և մինչև ձեր բերաններն իջնելով՝ պիտի թունավորեն ձեզ: Ալլահը, Մուհամմեդը և Ղուրանը անպարտ են, այդ երեքից ոչ մեկը չի ների ձեր արարքները: Յույց տվեք ձեր գրքերն ու օրենքները, որոնք արտոնել են ձեզ ի գործ դնելու այդ անիրավություններն ու սպանությունները: Մենք չգիտենք մի որևէ կրոն, որը թույլատրելի համարի այդպիսի խժղժությունները: Իսկ եթե դրանց մեջ գտնվի այդպիսի մի բան, ապա երես կդարձնենք և կատենք այն: Քա՛վ լիցի, անպարտ կլինենք նրանից, ինչպես որ մաքուր ու անարատ է Երկնից Ալլահը:

Ո՛վ թուրքեր.

Աշխարհն սքանչացավ, և ազգերը փառարանեցին ձեզ: Իմ երակներում հոսող արյունը հոսում է նաև ձեր երակների մեջ: Ինքս ինձ ասում եմ, թե Ալլահն ինձ թուրք ստեղծած լինելով, պետք է որ թուրք էլ մեռնեմ: Բայց այսօր ամոթից կարմրում եմ և ուզում եմ վարագույրի հետևում թաքնվել ու որևէ մեկի աչքին չերևալ: Կփափագեի իմանալ, թե ի՞նչ կապ կա ձեր և մարդ-

կային խղճմտանքի միջև, այսինքն՝ կուղենայի պարզել, թե մարդկային գութ ունե՞ք, թե՞ ոչ: Կցանկանայի, որ երակներես մեջ չհոսեր այն արյունը, որը եղբայրասպանությունն է մղում: Այսպես մտածողը միայն ես չեմ, այլ ինձ հետ է ամեն մի օսմանցի, քա՛վ լիցի, բոլո՛ր մարդիկ, ովքեր հարգում են մարդարարածին:

Ո՛վ օսմանցիներ.

Հիմարացա՞ք արդյոք, մի՞թե չեք տեսնում, թե ուր եք դիմում: Այսօր, այս վայրկյանիս, երբ սույն տողերը կարդում եք, մեր դրկյալ եղբայրները նույն պահերին ջարդվում են, այրվում են նրանց տները և ենթարկվում են այնպիսի տառապանքների, որոնց պես մարդկային որևէ արարածի կողմից չէին ենթարկված: Հիմա մեր աչքի առջև պատկերանում է մի ազգ, որի միակ հանցանքն այն է եղել, որ միշտ երախտագետ վատահույժություն է տածել իր դրացիների ու հայրենակիցների հանդեպ, որոնք այսօր մորթում են նրանց, ինչպես հազարների արդեն մորթել են: Այդ կարմիր ու եռացող արյունները հոսում են նրանց հայրենի հողի վրա:

Ո՛վ բանաստեղծներ, ո՛վ գրողներ.

Մի կողմ թողեք սև մազերի, կարմիր այտերի և այլնի մասին երևակայություններն ու նկարագրությունները: Ելե՛ք, և ոչ թե ինձ հետ, այլ արդարության հետ պարսավենք միասին սև արարքներն ու կարմիր օրերը: Գրիչներդ գործածեցե՛ք թղթի վրա, նկարագրե՛ք խուժուժ գործողությունները, զի բանաստեղծի ու գրողի պարտքն է պարսավել անիրավներին ու մխիթարել աղետայններին: Նախ պետք է փղձկալ, որպեսզի կարողանաք փղձկեցնել ձեզ յսողների սրտերը: Արյունահեղությունն մեջ նախնական արյունահեղությունը վերադարձանք, ուստի այդ պայմաններում հարկ է վերադառնալ նաև հին ժամանակների ողբերի ձևին: Եղճուկ այն ազգը, որի հետ դարերով ապրեցինք, բայց որն այսօր խժղժությունների գոհ է դառնում:

Ելե՛ք, ո՛վ ազատականներ, ելե՛ք:

Դուք փոքրաթիվ եք, իսկ մոլեռանդները՝ բազմաթիվ: Եթե նրանց ցիրուցան անելու, բղկտելու և անիրավված եղբայրների

վրեժը լուծելու հույս չկա, ապա մարտիրոսացվածներին հետևելու նվազագույն չափը մեր մահն է: Ապրում ենք այնպիսի մի ժամանակում, որից խոսափել է պետք դառնում մահով: Մենք կորած ենք մեր ունայնությունում և կեղծ արժանիքներով: Այդ պայմաններում ապրելը տանջանք է:

Ո՛վ արևմտյան ազգեր.

Հանդես եկե՛ք մեր դեմ, որովհետև արժանի ենք մեղադրանքի, բայց երբ գրիչ շարժեք՝ հիշեցե՛ք, որ այնտեղ (Թուրքիայում: - Հ. Ս.) կան օսմանցիներ, որոնք [արցունքի տեղ] արյուն են լացում, չեն փափագում ունեցած կյանքը և երբեք չեն հանդուրժի այդ պատմական երկրի մեջ կատարված դեպքերը:

Ո՛վ Եգիպտոսում բնակվող օսմանցիներ.

Շտապե՛ք այստեղ մի միություն կազմել, որն այս պատմական երկրում կարողանար հաստատել կառավարման օրենքներ և արդարություն քարոզող հասներ այն բանին, որ բոլորս կամավորապես մեկնեինք Անատոլիա: ... Գնանք Ադանա և այլուր և մարենք այդ երկրներում բոցավառվող կրակը, բարձրանանք լեռները, հավաքենք ու պաշտպանենք կենդանի մնացածներին, ինչպես նաև սպանվածների վրեժն առնենք: Եվ եթե դա չանենք, ապա մեզնից ոչ ոք հայրենասեր կոչվելու իրավունք չպիտի ունենա: Ընտանիք ու զավակ ունենալու առարկություններն անընդունելի են: Ես էլ ընտանիք ու զավակներ ունեմ, թո՛ղ դո՛ւ լինեն հայրենիքին ու ողջակեզ՝ խողխողվածներին: Մ՛ն, մեռնենք, և թո՛ղ ապրի հայրենիքը, բայց վրեժ առնենք զուլումից և նրա հետքն անգամ չթողնենք»¹:

Թուրք աղնվագույն մտավորականի սույն հոդվածը մի բացառիկ, ցնցող փաստաթուղթ է, մարդկային ջինջ ու մաքուր հոգու եղակի պոթիկում:

Եգիպտական թերթերը լայնորեն արձագանքել էին Կահիրեի թուրքերի ցույց տված մարդասիրական վերաբերմունքին: Քա-

ղաքի թուրքերն ապրիլի վերջերին կազմել էին մի պատվիրակություն, որը հայոց եկեղեցի էր գնացել և ցավակցություն հայտնել հայերի դանգվածային ջարդերի կապակցություն: Եկեղեցու քահանան շնորհակալություն էր հայտնել, որին հետևել էր պատվիրակության ղեկավարի պատասխանը. «Մենք ձեզի ցուցակցություն յայտնելու եկանք, հետևաբար շնորհակալություն պետք չկայ: Դեպքն որքան ձեզի՝ նոյնքան այ մեզի վիշտ պատճառած է, որովհետև ամէնքս այ օսմանցի ենք, մեր հայրենիքը մէկ է, նոյն վիշտով համակուած ենք ամէնքս այ, միայն սա կէտը կ'ուղենք ի վեր հանել, որ իսլամական կրօնքն այս կարգի ցուառիթ ղէպքերը կը մերժէ: Պատմական ղէպքեր կ'ապացուցանեն, որ իսլամական կրօնքը, մարդասիրություն, արդարություն և բարեացակամություն կրօնքն է: Սակայն ցուայի է, որ կարգ մը տղէտ անձեր այսօր իւլէմայի կերպարանքին տակ ժողովուրդը խարելու կ'աշխատին: Սակայն վստահ եղէ՛ք, ասոնց ջանքերն ամուլ ձգելու կարող ուսեալ իւլէմաներ ունինք, ճշմարտութեան լոյսով անոնց յառաջ բերած մթութիւնը փարատելու կարող են: Առ այժմ մեր ձեռքէն եկածը, կարօտելոց անմիջապէս օգնութիւն հասցնելու համար պէտք եղած տեղերը հեռագիրներ քաշել է: Այս այ անմիջապէս գործադրեցինք, նպաստի համար ամբողջ հոգուով կ'աշխատինք»²:

Հայ հոգևոր ներկայացուցիչները իրենց վերաբերմունքն արտահայտել էին «Կեցցե՛ օսմանյան հայրենիքը», «Կեցցե՛ եղբայրությունը» խոսքերով²:

Հայերի դանգվածային կոտորածները մի շարք հոդվածներով դատապարտած թուրքական թերթերից էր «Միրերի սայիքայի հյուրիկներ»-ն: Ա. Ճ. ստորագրությունը կրող «Մեր հայ հայրենակիցները» վերնագրով հոդվածում ասված էր, որ հակառակ սահմանադրության ինն ամիսների ընթացքում հայերի և թուրքերի միջև աղդարարված եղբայրության, «Ատանայի ահաուր ղէպքը ծագեցաւ և բոլոր ճշմարիտ օսմանցիներուն հոգիները

¹ Վելիէզդին Յեկենի հոդված-բողոքն առաջին անգամ հայերեն թարգմանությունում լույս է տեսել «Արևելք» (Կ. Պոլիս) թերթի 1909 թ. № 7085-ում (29 ապրիլի), արտատպվել «Բիւզանդիոնում» (№ 3834, 11 (24) մայիսի 1909 թ.), հետագայում գետնով վեր. Համբարձում Յ. Աչճյանի «Ատանայի եղևոնը...» գրքում, էջ 80-82:

¹ «Բիւզանդիոն», № 3822, 25 ապրիլի (8 մայիսի) 1909 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

լացին: Ցարդ այն ղէպրին յառաջ բերած խորին վիշտը չանհետացաւ. որովհետեւ մեր ընկերութեան մարմնոյն մէջ բացուած այն արինոտ վերքը դիւրաւ բուժուելիք վերք մը չէ: Մինչ մենք այստեղ ընտիր համադամներով մեր փորը կը պարարենք, հանգստաւէտ անկողիններու մէջ եսասէր կեանք մը կ'անցընենք, այնտեղ, հայրազուրկ որբեր, եղբայրազուրկ, անամուսին կիներ, անօթի, մերկ ու բոկոտն կը պտտին եւ հաղարաւոր ընտանիքներ փախուստ կու տան մեր հայրենիքէն: Համոզուած ենք, թէ կառավարութիւնը կ'աշխատի, բայց պատահածն ա'յն աստիճան մեծ դժբախտութիւն մ'է, որ տարիներով կրնայ դրադեցնել տէրութիւն մը: Մենք ո'րքան անձնուիրութիւն ցոյց տանք, դարձեալ քիչ է, որովհետեւ այսպիսի արինոտ վերքերու ժամ առաջ բուժուելէն միայն կախում ունի հայրենիքին երջանկութիւնը»¹: Շարունակելով, թերթը գրում էր. «Հայերուն հանդէպ Կառավարութեան պարտականութիւնը շատ մեծ է ու շատ ծանր: Բոլոր օսմանեան ազգը պարտաւոր է պաշտպանել ու պահպանել այս զրկեալ ցեղը, որովհետեւ մեր այսօր վայելած ազատութիւնը մեծ մասամբ կը պարտինք հայ արեան: Պէտք չէ մոռնանք, թէ տակաւին մինչեւ երէկ խժոժութիւն միայն տեսաւ այս հէգ ցեղը, որ տասներկու տարիէ ի վեր շարունակ հարստահարուեցաւ, ճգմուեցաւ եւ հաղարաւոր զոհեր տուաւ: Այլեւ պէտք է աշխատինք դիրենք փստահեցնելու համար, թէ վերջ գտած են ջարդի շրջանները, եւ մեր բոլոր գոյութեամբ, մեր հոգիին բոլոր գորութեամբ պէտք է դիրենք հանդարտեցնենք: Կառավարութեան ընծայելիք պաշտպանութեան պարտականութիւնն այ շատ ծանր է, որովհետեւ մեր հայ հայրենակիցները կ'ապրին վաչկատուն ցեղերու միջեւ ... Պէտք է յայտարարուի հրապարակաւ եւ պարբերաբար, թէ օսմանեան ազգին ամէնէն թանկագին գործերէն մէկն է ուրիշ ցեղերու հետ նաև հայերուն շահերը, կեանքն ու ինչքը, որոնք նուիրական իրաւունքներ են, պաշտպանել ու պահպանել»²:

¹ Հոգվածի հայերեն թարգմանութիւնը տե՛ս «Բիւզանդիոն», № 3861, 23 Հունիսի (6 Հուլիսի) 1909 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

Նույն թերթի մեկ ուրիշ համարում, Օսմանյան պառլամենտում Սերաստիան ներկայացնող Ահմեդ Շյուքրի Լֆենդին ողջունում էր «Սիրերի սայիբայի հյուրիեթի»-ի աղնիվ կեցվածքը և կոչ էր անում ամօքել Կիլիկիայի հայութեան խոր վերքերը¹:

Կայսրութեան մեջ հրատարակվող թերթերի, այլ երկրների մամուլի օրգանների, քիչ թե շատ շանթալից, հրապարակումները, պառլամենտականների ելույթները, քաղաքական, հասարակական, գիտական ու մշակութային գործիչների դիմումներն ու ահագանգերը մնացին որպես օդի մեջ հնչող մի սին դողանջ:

Ինչպես տեսնում ենք, Կիլիկիայի հայութեանը չունեի պաշտպաններ, որոնք ուժ ունենային բռնելու ոճրագործի ձեռքը, իսկ ովքեր ունեին այդ ուժը, հեռու եվրոպաներում բավարարվում էին դալուկ բողոքներով: Ընդհանուր մարդասիրութեան վրա հիմնված համակրական և ցավակցական այն զգացմունքները, որոնք արտահայտվում էին այս ու այն կողմից, դրական որևէ քայլի չէին վերածվում: Արտահայտված զգացմունքները մնում էին իբրև բարոյական սփոփանքներ, որոնք երբեմն նոր զըրգրումների առիթներ էին դառնում հայկական ջարդերի կազմակերպիչների և իրականացնողների համար:

Ո՞ւր էր վախճանն այս ահափոր, այս անհանդուրժելի կայսրութեան: Եթե կիլիկիահայոց կոտորածները գոնե լինեին Մերձավոր Արևելքի խոր ճգնաժամի վերջին բռնկումները՝ դեռ կարելի էր ունենայ մի հեռավոր ու թվացյալ մխիթարութիւն՝ թե թուրքահայն իր վերջին զոհերն է տալիս յափազույն ապագայի համար պահանջվող զոհասեղանին:

Ահա հենց այդտեղ էր ձակատագրական հարցը, արդյո՞ք Կիլիկիայի կոտորածները թուրքահայութեան վերջին ջարդերն են:

Իսկ եթե ո՞չ...

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3863, 25 Հունիսի (8 Հուլիսի) 1909 թ.:

ԿԻԼԻԿՅԱՆ ԱՂԵՏԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏՈՒՄ

Կիլիկիայի ողբերգությունը, որպես «ղեպրեր», Օսմանյան պառլամենտի ու շահրուժյանն «արժանացավ»:

Պատգամենտի Պատգամավորական ժողովի 1909 թ. ապրիլի 18-ի նիստը. – Պատգամավորական ժողովն առաջին անգամ Կիլիկիայի աղետին անդրադարձավ ապրիլի 18-ին (նոր տոմարով՝ մայիսի 1-ին): Նիստը վարում էր Ահմեդ Ռիզա բեյը, ատենապետն էր Մեհմեդ Թայեաթ բեյը:

Բացելով նիստը՝ Ահմեդ Ռիզան հայտնեց, որ ինքը ժամանակին հարցում է արել Աղանայի կուսակալ Մեհմեդ Ջևադ բեյին՝ պահանջելով հեռագրով հաղորդել վիլայեթի իրավիճակի մասին, մասնավորապես ներկայացնել ջարդի պատճառները: Եվ կարդում է Ջևադ բեյի ապրիլի 13-ի պատասխան հեռագիրը, որով պնդում էր, թե ղեպրերի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է մի քանի հայ ֆիդայիների վրա¹:

Հեռագրի չորջ ծագեցին կրակոտ վիճաբանություններ:

Երիտթուրք պատգամավորների մի մասը, հայերի տեղեկատվության աղղեցություն տակ, տրամադրված էր Աղանայի վիլայեթի վարչախմբի անդամներին խստորեն պատժելու որոշում ընդունել՝ առաջին հերթին պաշտոնանկ անելով նահանգապետ Ջևադ բեյին:

Առաջինը խոսք առավ պատգամավոր դոկտ. Արիֆ Իսմեթ բեյը, և հայտարարեց, որ Ջևադ բեյի հեռագրում միանգամայն խեղաթյուրված է ներկայացված ճշմարտությունը Աղանայի ցավալի ու ողբալի աղետի մասին: Իր զգայացուցիչ ելույթում նա կատարվածը «սրտակեղեք եղեոնագործություն» համարեց: «Կուսակալները վարժված են բառերի հետ խաղալով աշխատել արդարանայ ... Մեր եղբայրները խողխողվեցին, ջարդվեցին ... Այս ջարդի, այս հոգեցուցիչ դրամային պատճառ և մասնակից եղողները պետք է պատժվեն»: Ընդգծելով, որ Պատգամավորա-

կան ժողովը չի կարող կատարվածի հանդեպ անտարբեր մնալ, «երբ արյունը հոսել է գետի պես և հաղարավոր մարդիկ են մեռել», Արիֆ Իսմեթ բեյն առաջարկեց պառլամենտական մի հանձնախումբ ուղարկել Կիլիկիա՝ վիճակը տեղում քննելու, պառլամենտին առաջարկություններ ներկայացնելու, ղեպրերի մեղավորներին խստիվ պատժելու համար¹:

Արիֆ Իսմեթ բեյի ելույթից հետո ձայն է վերցնում Վարդգեսը (Հովհաննես Սերենցյույան): Նա մխտում է հայ ֆիդայիների մասին սաղրիչ վարկածը, ասելով, թե կատարվածը հետադիմականների արարք է: Իր խոսքն ուղղելով «սահմանադրութիւն բերող բանակին և կառավարութեան», նա շեշտում էր. «Ո՞ւր են ձեր գեղեցիկ սկզբունքները, որոնց համար կոտեցար և երդուցար անեղծ պահել: Ինչո՞ւ թոյլ տուիք ջարդել անմեղ ժողովուրդ մը, որ փարած էր սահմանադրական կարգերուն. ինչո՞վ պիտի զանազանուիք ոճրագործ Ապտիլ Համիտէն ... Կ'ուզէք որ մե՞նք ալ գէն ի ձեռին հրապարակ ելենք ... Այս ոճիրը աններելի է ձեզի...»²: Վարդգեսն առաջարկեց Աղանայում ռազմական դրություն հայտարարել, Սալոնիկի բանակի և պառլամենտի կողմից Կիլիկիա քննիչ հանձնախմբեր ուղարկել, կողոպտված ինչքերը հետ առնել ավարառուների ձեռքից, և քանի որ նախկին սուլթանի մատն էլ խստն է այս սև գործի մեջ, ուստի նրա ստացվածքների մի մասը նույնպես վերցնել և տալ վնասներ կրած ժողովրդին:

Նույնանման հարցադրումներով ու առաջարկություններով ելույթներ են ունենում նաև Նազարեթ Տաղավարյանը և Մեծն Մուրադը (Համբարձում Բոյաջյան)³: Վերջինս մասնավորաբար ասում էր. «Բռնապետութեան օրերուն լեռներու մէջ կոտեցանք, մի՞թէ սահմանադրութեան այս շրջանին հարկադրուած պիտի ըլլանք նորէն լեռ բարձրանալ...»⁴:

Այդ ելույթներից հետո քննարկման դրվեց պատգամավոր-

¹ «Ատանայի եղեոնը: Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի», Կ. Պոլիս, 1919, էջ 9:

¹ Տե՛ս Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 593-595:

² Վահան Փափազեան (Կոմս), Իմ յուշերը, հտ. Բ., Բելյուրթ, 1952, էջ 119:

³ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3818, 21 ապրիլի (4 մայիսի) 1909 թ.:

⁴ Վահան Փափազեան (Կոմս), Իմ յուշերը, էջ 119:

ներ Արիֆ Իսմել բեյի, Վարդգեսի, Մուրադի, Գեղամ Տեր-Կարապետյանի, Այի Զենան բեյի, Վահան Փափազյանի, Հակոբ Պապիկյանի և Նադարելի Տաղավարյանի համատեղ ստորագրած գրությունը, որով առաջարկվում էր զինվորական դատարանի առաջ դատել Աղանայի կուսակալ Զևադ բեյին, ներքին գործերի նախարարության խորհրդական Աղի բեյին և մյուս հանցագործ պաշտոնյաներին, որոնք թերացել էին իրենց ժողովրդական պարտականությունների մեջ՝ առաջ բերելով կոտորածներ կամ ուղղակի մասնակցություն ունեցել ջարդերին:

Գրությունն ստորագրողները առաջարկում էին նաև. Ա) Պաշարման վիճակ հայտարարել Հայեպի նահանգում, Անտիոքում, Զեյթունում և աղետի ենթարկված մյուս վայրերում, Բ) Կիլիկիա ուղղադաշտային դատարան ուղարկել ոչ թե Սայունիկից, այլ Կ. Պոլսից, Գ) Հեռագրով հրահանգել Դեորթ-Յոյի շարունակվող պաշարումը վերացնել, Դ) Առանց ժամանակ կորցնելու օգնություն հասնել սովյալներին ու անապաստաններին¹:

Օսմանյան պառլամենտում մերկացումներով հանդես եկավ և հայերին պաշտպանեց նաև պատգամավոր զոկտ. Ռիզա Թեֆիրը: Նա փաստերով ցույց տվեց ոչ միայն համիդականների, այլև Իթիհազ կոմիտեի խաղաղած եղկելի դերը Կիլիկիայի կոտորածների մեջ, շեշտելով, որ արյան մեջ թաթալված են Բարձր Դուռը, կուսակալը, տեղական զինվորականությունը, մուսուլման երեկիները, քաղաքական շատ գործիչներ, ուստի պահանջեց պառլամենտ կանչել ներքին գործերի նախարարին՝ բացատրություն տալու համար²:

Ինչպես Արիֆ Իսմել բեյը, այնպես էլ Ռիզա Թեֆիր բեյը հայ պատգամավորներից ավելի եռանդով էին պաշտպանում և արդարացնում կիլիկիահայերին³:

Շատ չանցած՝ ներքին գործերի նախարար Ֆերիզ փաշան ներկայացավ պառլամենտի նիստին:

Թվում է, թե պատգամավորների մեծ մասը հակվում էր, փո-

փոխություններով հանդերձ, բնորոշելու ներկայացված որոշման նախագիծը, բայց ներքին գործերի նախարարության խորհրդական Աղի բեյի ելույթը փոխեց հարցի քննարկման ընթացքը: Բարձրանալով ամբիոն՝ նա կարգաց Աղանայից, Կոզանից, Զերել-Բերեքելից և ուրիշ տեղերից վայրերի և մութասերիֆների ուղարկած հեռագրերն ու տեղեկագրերը, որոնք միաբերան մեղադրում էին հայերին՝ մահմեդականների վրա հարձակումներ գործելու, ումրեր նետելու և հրդեհումների մեջ: Տեղեկագրերի համաձայն, մահմեդականները միայն ստիպված են եղել բռնություններին պատասխանել բռնությամբ⁴:

Այսպես, Աղի բեյը կարգաց Աղանայի կուսակալ Զևադ բեյի ապրիլի 2-ի հեռագիրը, ուր ասված էր, թե քաղաքում թուրքերի համարյա բոլոր տները հայերը հրդեհել են: Նա կարգաց կուսակալի ևս երկու ուրիշ հեռագիր, որոնցից մեկում նշված էր, թե քաղաքում ծագած հրդեհի պահին, երբ հրչեջները փորձել են այն մարել, հայերը, իբր, կրակ են բացել նրանց վրա: Հաջորդ հեռագրում գրված էր, թե խոտովության առաջն առնելու համար Հաճրնից Աղանա գորք է ուղարկվել, բայց քրիստոնյաները նրա վրա նույնպես կրակ են բացել:

Աղի բեյը պառլամենտից թարցրեց այն իրողությունը, որ Զերել-Բերեքելի սանջակի մութասերիֆ Ասաֆ էսադ բեյը Աղանա քաղաքում սկսված ջարդերի յուրն առնելուց անմիջապես հետո ամեն միջոց ձեռնարկել էր, որպեսզի կոտորածները տարածվեն սանջակում: Դա քիչ համարելով, ջարդի ընթացքում և զրանից հետո նա հեռագրեր էր հղել ամենուր, ամենից առաջ ներքին գործերի նախարարություն, թե հայերն ապստամբել են ու ամեն ինչ տակնուվրա են անում: Աղի բեյը կարգաց այդ հեռագրերը: Դրանցից մեկում Ասաֆ էսադն անամթարար հաղորդել էր, թե թուրքերի ջարդը սկսելու համար Աղանայում 5000 հայեր նախապես զինվել են ումրերով և «Մարթին» հրացաններով: Մյուս հեռագրով՝ Ասաֆ էսադ բեյը կառավարությունից պահանջել էր առանց ուշացնելու զորքեր ուղարկել

¹ Տե՛ս «Արևելք», № 7097, 14 մայիսի 1909 թ.:

² Տե՛ս Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 559:

³ Տե՛ս «Արևելք», № 7097, 14 մայիսի 1909 թ.:

⁴ Տե՛ս «Գործ» (Թիֆլիս), № 81, 21 ապրիլի 1909 թ.:

Աղանայի վիլայեթ, այսպես ամբողջ «իսլամ ժողովուրդը կկանգնի գլխովին ոչնչանալու վտանգի առաջ»: Շարունակելով սաղրանքները՝ այդ շարագործը ապրիլի 13-ին Պոլիս ուղարկած Հերթական հեռագրով հաղորդել էր. «... Այսօր Դեորթ-Յոլի շրջանում 4000-ի չափ հայեր, «Մարթին» հրահաններով գին՝ վաճ, ամրացել են գյուղաքաղաքի շուրջը, կտրել ճառերը և պատնեշներ են սարքում»¹: Նույն օրը մի ուրիշ հեռագրով հայտնել էր. «Կացու թյունը գնալով վատանում է. Բախչեի մեջ ոստիկանությունն իսկ վստահելի չէ: Դեորթ-Յոլում «Մարթիններով» գինված մոտավորապես 5000 հայ կա: Նրանք ամբողջություններով շրջապատել են գյուղաքաղաքը և ձեռնարկել են հետզհետե պաշարելու շրջակայքի [մուսուլմանական] գյուղերը: Սանջակի կենտրոնը սոսկայի սպառնալիքի տակ է: Կանայք լալիս են: Սանջակը թնդում է ողբ ու կոծով: ... Բախչեի գայմազամը ծանուցում է, թե Ջեյթունից ու Մարաշից եկած բազմաթիվ հայեր պետք է այրեն գյուղախումբը: Խնդրում ենք այս վտանգը խափանելու համար կտրուկ հրամաններ տալ Հայկալի իշխանություններին»²:

Կարդալով հայերի հասցեին Ասաֆ էսաղ բեյի լալիրը մեղադրանքները՝ Աղի բեյն այնուհետև ասաց. «Ապրիլի 17-ին հեռագիր եմ ստացել նաև Աղանայի նոր կուսակալ Մուստաֆա Զիհնի փաշայից, ուր նույնպես ասված է, թե հայերը ջրի խողովակներից թնդանոթներ են պատրաստել՝ մեծաքանակ ոռոգելով»³:

Վերջացնելով տեղեկագրերի ընթերցումը՝ Աղի բեյը ձեռքերը տարածելով ասում է, թե ինքն ի վիճակի չէ գոնե իր համար պարզելու, թե, վերջապես, ո՞վ է արդարը և ո՞վ՝ մեղավորը, ուստի ճիշտ է համարում, որ պառլամենտն առայժմ որևէ որոշում չընդունի քննարկվող հարցի առթիվ:

Աղի բեյի ելույթի ժամանակ թուրք և քուրդ պատգամավորներից շատերը հավանություն ծափեր էին նվիրում նրան⁴:

Վերջապես, ձայն է վերցնում պատգամավոր Գրիգոր Զոհրապը և ամենաբուռն կերպով մերժում է հայերի հասցեին արված զրպարտությունները՝ Աղանայի կոտորածների մեջ մեղսակից ճանաչելով կառավարությունը և տեղական իշխանություններին: Նա ասում է. «Ատիլ պեյ, իբրև վստահելի վաերաթուղթեր, հոս կարգաց Ատանայի, Լազգրյէի կառավարիչներու քաշած հեռագիրները, որ կ'իմացնեն թէ դէպքին սկզբնապատճառները հայերն են, թէ ասոնք «Մարթիններով», պոմպաներով յարձակուեր ու վնասներ գործեր են: Լա'ւ, բայց այդ ջարդերուն մէջ ընդհանրապես քանի՞ հոգի սպաննուած են, իսկ հայերն իրենց քանդիչ ու սպանիչ դէներով քանի՞ հոգի մեռցուցած են: Խղճալի է կեղրոնի իշխանութիւնը, որ 15 օրուան մեջ տակաւին տեղեկութիւն չունի թէ որքա՞ն է զոհերուն թիւը: Ատիլ պեյ ... տեղեկութիւն չունի թէ ո՞րչափ մարդ սպաննուած է, ուրեմն ես իրեն տամ տեղեկութիւն, զոր քաղած եմ անկողմնակալ ու պաշտօնական աղբիւրէ մը՝ Մերսինի ֆրանսական հիւպատոսին, որ յոյն մըն է, Պոլիս քաշած հեռագրէն: Ֆրանսական հիւպատոսը կը գրէ որ 20-30 հազար հոգի անխնայ ջարդուած են»⁵:

Զոհրապի ասածը չափազանցություն համարելով՝ Աղի բեյը և պատգամավորներից շատերն սկսում են խնդմնդալ: Զոհրապը շարունակում է. «Փոխանակ լալու՝ կը խնդա՞ք: Այս տեղեկութիւնը անկողմնակալ ու պաշտօնէական անձէ մը քաղած ըլլալուս համար է որ վստահութեամբ կ'իմացնեմ ժողովիդ. եթէ կ'ուզէք լսել հայերու հասած յուրերը, անոնք ամէնքն այ միարեւրան կը յայտնեն, թէ հայերէն բան մը չէ մնացած, ո՛չ տուն, ո՛չ շէնք, ո՛չ եկեղեցի»⁶:

Ապա անդրադառնալով հայերին ներկայացվող մեղադրանքներին՝ Զոհրապն ասում է, որ զրանք «ամէնքն այ բացարձակ յերիւրանք են: Ատանայի ջարդը տեղական իշխանությունը ընկ տուեր է, յարձակող առաջին խումբներ կառավարիչին պաշ-

¹ Տե՛ս **Ցակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 292:

² Տե՛ս նույն տեղում, էջ 293-294:

³ Տե՛ս «Արևելք», № 7097, 14 մայիսի 1909 թ.:

⁴ Տե՛ս «Կոհակ» (Կ. Պոլիս), № 6, 4 հուլիսի 1909 թ.:

⁵ «Արևելք», № 7077, 20 ապրիլի 1909 թ.:

⁶ Նույն տեղում:

տօնատունէն մեկներ է «Եաշարն Սուլթան Համիտ» պոռչտա-
լով»¹:

Զոհրապր կարգում է Հայկալի գինժորական հրամանատար
Հասան Բահրի փաշայից ստացված հեռագիրը, ուր ասված էր,
թե Աղանա քաղաքի ու չրջանների ջարդերը օրեր առաջ էին նա-
խապատրաստվել նահանգի իշխանութունների կողմից, և այդ
գործում մեծ բաժին ունեն գինժորները, որոնք, խուժելով գինա-
պահեստները, կողոպտել են զենքերը և միացել խուժանին: Կար-
դայով հեռագիրը, Զոհրապր վճռականորեն ասում է. «Բովան-
դակ էութիւնովս կը մերժեմ հայերու վերագրուած չարախօսու-
թիւնը»²:

Ելույթի վերջում Զոհրապր հայտարարում է, որ ներքին գոր-
ծերի նախարարութեան խորհրդական Աղիլ բեյը, որն անձնա-
կան թշնամութիւն ունի իր ղեմ, անմիջական մասնակից է
ջարդերին, քանի որ նախապես հեռագիր է ուղարկել Աղանա և
փրայեթի վարչակազմի ղեկավարութեանը հանձնարարել է, թե
կոտորածն ինչպես պետք է կազմակերպել:

Աղիլը տեղից ռեպրիկներ է բարձրաձայնում: Դրան հետևում
են թուրք և քուրդ պատգամավորների ծափերն ու հավանու-
թեան բացականչութիւնները: Զոհրապր դայրացած գոչում է.
«Ուրեմն գաղտնի գիտաւորութիւն մը նոյնիսկ այս ժողովին
մէջը կայ հայերը բնաջինջ ընելու: Եթէ այդպէս է, մենք գործ
չունինք նման փառլամենթի հետ»³:

Այդ բողոքի վրա մի քանի թուրք պատգամավորներ ցավ են
հայտնում կատարված ղեպրերի առթիւ, գտնելով նաև, որ
գործադիր իշխանութեանը կարելի է թուլատրել զրամական
օգնութիւն հասցնելու ջարդից փրկվածներին:

Պատլամենտի ապրիլի 18-ի նիստում, ի վերջո, ընդունվեց
հետևյալ անորոշ որոշումը, որն արձանագրային մաս չուներ.

«Կառավարութիւնը պառլամենտին առաջարկում է Աղա-

նայի և Հայկալի նահանգներ ուղարկել 20.000 ոսկի՝ վնասվածնե-
րին օգնելու համար: Պատժել գեպրին պատճառ եղած մեծ ու
փոքր պաշտօնյաներին: Իսկույն ուղարկել գինժորական ատ-
յան»¹:

Այս որոշումն էլ գուցե չընդունվեր, եթե Եվրոպայի հանդեպ
եղած երկյուղը չլիներ: Պատգամավորական ժողովը քաղաքա-
կան գնահատական չտվեց Կիլիկիայում տեղի ունեցած ջարդե-
րին և դրանց ոգեշնչած ու մասնակից անձանց՝ անկախ պաշտո-
նական դիրքից ու սոցիալական դրութիւնից: Ավելին՝ ժողովն
ըստ էութեան սկիզբ դրեց հայերի մեղավորութեան պաշտոնա-
կան շինծու վարկածին:

Այո՛, ստույգ մահվան ղեմ-հանդիման մինչև վերջին րոպեն
հայերը շատ տեղերում անում էին ինչ կարող էին՝ խուժանի
հարձակումներին դիմակայելու համար: Աղանայի կոտորածները
հայերին առիթ տվեցին ցույց տալու թուրքերին, որ հայ ազգա-
րնակչութիւնն այնպես անօգնական չէ, ինչպես անցյալում, որ
եթե նա կազմակերպվում է, ընդունակ է յիսում պաշտպանելու
իր կյանքը և գույքը: Նրանք ոչխարական հլութիւնով իրենց
պարանոցը չէին երկարել մերկացած սրերի ու արձակած գրն-
դակների առաջ: Հենց դա էր, որ մարտել չէին կարողանում
թուրքերը՝ մեծից փոքր, իսկ Բ. Դուռը, շատ շանցած, գործադ-
րելու էր բոլոր ջանքերը ա-լա-թուրքա եղանակով «ապացու-
ցելու», թե հայերն են հանցավորները, նրանք են թուրքեր
ջարդել: Նա Եվրոպայում իր ղեսպաններին հրահանգել էր պե-
տութիւնների կառավարութիւններին տեղյակ պահել, որ Կիլի-
կիայում հայերը թուրքերի ղեմ կոխ են սկսել նրանց կոտորելու
և դուտ հայ բնակչութեամբ պետութիւն ստեղծելու համար:

Օսմանյան պառլամենտի ապրիլի 18-ի նիստի ընթացքի մա-
սին հաղորդագրութիւնները ցավալի արձագանք գտան հայ
հասարակութեան մեջ՝ առաջ բերելով նրա հիասթափութիւնն
ու դայրույթը:

Ի պատասխան թուրք գործիչների զրպարտութիւնների,

¹ «Արևելք», № 7077, 20 ապրիլի 1909 թ.:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

¹ «Արևելք», № 7077, 20 ապրիլի 1909 թ.:

Հ. Յ. դաշնակցությունն ի կենտրոնն հետևյալ հայտարարությունն արեց.

«Զարմացմամբ կր յսենք, թե Երեսփոխանական ժողովոյ Ապրիլ 18-ի (մայիսի 1-ի) նիստին մէջ կառավարութիւնը հիմնուելով տեղական իշխանութեանց կողմէ տրուած ստայօղ տեղեկութեանց վրայ, Ատանայի նահանգին մէջ կատարուած վերջին ջարդը կր վերագրէ հայ յեղափոխականներուն և առաջին յարձակողները կր ներկայացնէ հայերը: Կր բողոքենք այս չարամիտ վերագրումին ղէմ, որ նպատակ ունի պարտկելու ճշմարիտ ոճրագործները. ատիկա նախատինք մըն է տանջուած և օրհասական հայ ժողովուրդին: Հայ յեղափոխականները որեւէ մասնակցութիւն չունին այդ անարգ ջարդին մէջ, որ մոլեռանդ խուժանի մը կողմէ կատարուած է վերին իշխանութեանց թելադրութեամբ: Կոչում կ'ընենք ողջմտութեան և անաչառութեան, որպէսզի Երեսփոխանական ժողովը ազդեցիկ միջոցներ ձեռք առնէ, յանցաւորները պատժէ: Հին ոճիրներու անպատիժ մնալը կը խրախուսէ ջարդին հեղինակները: Տեղական վարչութեան գլուխ գտնուողները, որոնք Համիտի արարածներն են, մշտնջենական ազդիւրը պիտի ըլլան ոճիրներու և այդ պատճառաւ երկրին անդորրութիւնը միշտ պիտի խանգարուի»¹:

Պատգամավորական ժողովի ապրիլի 28-ի նիստը. – Ուրիշ հարցերի քննութեան ընթացքում այս նիստում հարեանցիորեն կարճատեւ անդրադարձ եղավ նաև կիլիկյան ղեպրերին: Ժողովում ընթերցվեց ներքին գործերի նախարար Ֆերիդ փաշայի մի պաշտոնագիրը, ուր տեղ էր գտել ընդամենը մի պարբերություն այդ ղեպրերի մասին: Ֆերիդ փաշան գրում էր, թե Պատգամավորական ժողովի անդամներից մեկը, առանց սպառիչ տվյալներ ունենալու, պնդում է, թե Ադանայի վիլայեթում 25-30 հազար հայ է ջարդվել: Սպանվածների և փրավորների ճիշտ հաշիվը որոշելը կարոտ է ժամանակի, գրել էր նա և ավելացրել, որ իր տվյալներով՝ աղետի ընթացքում սպանվել է 1924 իսլամ և փրավորվել 500-ը, իսկ ոչ իսլամներից մահացել է ընդամենը

1455 հոգի (469-ով պակաս) և փրավորվել 382 հոգի (151-ով պակաս):

Պաշտոնագրի ընթերցումից հետո մտքերի փոխանակություն չեղավ: Դա ընդունվեց ի գիտություն:

Ժողովի ապրիլի 30-ի նիստը. – Մեծ վեղիը Հուսեին Հիմի փաշան մի գրությունը Պատգամավորական ժողովին տեղեկացնում էր, որ ներքին գործերի նախարարի նախաձեռնությամբ որոշված է Ադանա ուղարկել չորս հոգանոց քննչական մի հանձնախումբ՝ երկու հայ և երկու իսլամ կաղմով: Նրանցից երկուսը պիտի լինեն պաշտոնյա, իսկ մյուս երկուսը՝ պառլամենտի պատգամավոր: Քանի որ կառավարությունը հանձնաժողովի կաղմում առաջադրել էր երկու հոգու՝ Բեհաա բեյին և Հարություն Մոստիչյան էֆենդուն, Հիմի փաշան վարչապետական թեղքերով (պաշտոնագրով) ժողովի պատգամավորներից խնդրում էր իրենց կողմից ևս երկու հոգու առաջադրել՝ հանձնախմբի կաղմի համար: Միաժամանակ տեղեկացնում էր, որ կառավարությունը որոշել է քննիչների աշխատավարձի չափը:

Սկսվեց վիճարանություն մեծ վեղիրի առաջարկի շուրջ՝ թե և ղեմ առաջարկներով: Հայ պատգամավորներից ոմանք (Զոհրապ, Վարդգես) պահանջում էին հանձնաժողովի կաղմն անմիջապես լրացնել և առանց ուշացնելու Ադանա ուղարկել: Իսլամ պատգամավորների մի մասը (Իսմայիլ փաշա, Արիֆ Իսմեթ բեյ, Վեհիբ էֆենդի և այլք) համաձայն էր խառը պատգամավորական հանձնախումբ ուղարկելու մեծ վեղիրի տեսակետին, և գտնում էր, որ հանձնախմբի մեջ ընդգրկվելիք երկու պատգամավորները գաղտնի քվեարկությամբ պետք է ընտրվեն: Իսլամ պատգամավորների մյուս մասը (Մուստաֆա և էմրուլլահ էֆենդիներ) այն կարծիքին էր, որ ավելի ճիշտ կլինի, եթե օրենսդիր իշխանությունը Ադանա ուղարկելու համար անկախ խորհրդարանական քննիչ հանձնախումբ կաղմեր, այլ ոչ թե պառլամենտի որոշ անդամներ մասնակցեին կառավարական քննիչ հանձնախմբին:

Պատգամավոր Թալեաթ բեյը հայտարարեց, որ ինքը որևէ

¹ «Արևելք», № 7080, 23 ապրիլի 1909 թ.:

քննիչ Հանձնախումբ ուղարկելուն ընդհանրապես ղեմ է¹:

Ի վերջո, խառը Հանձնախումբ կազմելու առաջարկը (Համաձայն վարչապետական թեղքերեի) դրվեց գաղտնի քվեարկության, որի արդյունքում Ադանա գնացող քննիչ Հանձնախմբի Համար Պատգամավորական ժողովն ընտրեց Երկու հոգի՝ Հակոբ Լ.Փ. Պապիկյան և Շեֆիկ րեյ²:

Ժողովի մայիսի 10-ի նիստը. - Այլ հարցերի քննության ավարտին Պատգամավորական ժողովն անդրադարձավ մեծ վեղիր Հիլմի փաշայի՝ Ժողով ուղարկած պաշտոնագրին, որի ընթերցումից պարզ դարձավ, որ քննիչ խառը Հանձնախմբի Համար ընտրված պատգամավոր Շեֆիկ րեյը հրաժարվել է և անհրաժեշտ է շտապ նոր ընտրություն կատարել, այն հաշվով, որպեսզի նոր ընտրված պատգամավորը նաև լինի խառը Հանձնախմբի նախագահ:

Էռմեր Ֆեզի Լ.Ֆենդին առաջարկեց Հանձնախմբի անդամ և նախագահ ընտրել Թայեաթ րեյին, որը, սակայն, հրաժարվեց իր թեկնածությունը քվեարկության ղնել: Դրանից հետո Ֆեզի Լ.Փ. չպնդեց իր առաջարկի վրա, իսկ Պատգամավորական ժողովի նախագահ Ահմեդ Ռիդան հայտարարեց, թե Ադանայի խնդրի առնչությամբ անհրաժեշտ է ընտրել մի այնպիսի պատգամավորի, որը տիրապետում է ֆրանսերենին, քանի որ Ադանայի և Հայկապի օտար հյուպատոսների հետ հարկ է լինելու այդ լեզվով հաղորդակցվել:

Գաղտնի քվեարկությամբ ընտրվում է Փաստարանական պալատի նախագահ և Քասթեմունիից պատգամավոր ընտրված Յուսուֆ Քեմալ րեյը³:

Ժողովի մայիսի 11-ի նիստը. - Այս նիստին անձամբ ներկայացել էր մեծ վեղիր Հիլմի փաշան՝ պառլամենտին ղեկուցելու, հաշվետվություն տալու իր դահլիճի կատարած աշխատանքի և առաջիկա ծրագրերի մասին: Զեկուցման մեջ նա անդրադառնում է Ադանայի աղետի հետևանքների վերացման խնդրին:

¹ Տե՛ս Ցակոբ Ց. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 610:

² Տե՛ս նույն տեղում, էջ 611:

³ Տե՛ս նույն տեղում:

Մեծ վեղիրը նշում է, որ աղետը տարածվել էր Ադանայի նահանգի չորս սանջակներից երեքում (Իշիլի սանջակը բացառություն է եղել) և Հայկապի նահանգի Մարաշ ու Անթարիա գավառներում: Նա շեշտեց, որ այդ վայրերի ցավերը դարձանելու համար Պատգամավորական ժողովի հաստատած 20.000 օսմանյան ոսկին արդեն տեղ է հասել, ինչպես նաև կարիքավոր հողագործներին օգնելու նպատակով նույնքան գումար (20.000 ոսկի) է հատկացրել «Զիրաաթ» (գյուղատնտեսական) բանկը՝ հետ վերադարձնելու պայմանով:

Հիլմի փաշան պատգամավորներին տեղեկացրեց, որ Ադանայի կուսակալը և Զերեյ-Բերեքեթի մութասերիֆը պաշտոնադրվել են, իսկ Մերսինի մութասերիֆը վարձատրվել է՝ իր ենթակայության տակ գտնվող տարածքում աղետը կանխելու համար: «Ոճրագործները պիտի պատմվեն, որպեսզի ցավայի ղեպքերն այլևս չկրկնվեն», - խոստացավ մեծ վեղիրը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՀԱՄՄԵԴ Ե-Ի ՄՈՏ

Թուրքահայ Հասարակական-քաղաքական շրջանակները մեծապես դժգոհ էին Օսմանյան պառլամենտի ապրիլի 18-ի, 28-ի և 30-ի նիստերում Կիլիկիայի ղեպքերի սխալ արձագանքներից, խորապես վիրավորված՝ օրենսդիր մարմնի գործելակերպից: Իր հերթին, Կ. Պոլսի հայությունը Հայոց պատրիարքարանից համառորեն պահանջում էր ստեղծել պատգամավորություն, որպեսզի կայսրին ներկայանա և արդարություն հայցի: Շատերն էին հավատում, որ այդպիսի մի պատգամավորությունը հաջողություն կունենա, քանի որ նախօրյակին պառլամենտում արտասանած իր գահակալական ճառում սուլթանն անդրադարձել էր նաև Ադանայի կոտորածներին և հետևյալն ասել.

«Ադանայի ղեպքերն ինձ շատ վշտացրին: Այժմ այդ ղեպքերը վերջացել են և մեղաւորները պէտք է պատժուեն, վնասուածների կարիքներին պէտք է բաւարարուիթիւն տրուի:

Աստուծոյ ողորմածութեամբ՝ այսուհետև այդօրինակ դէպքեր, որոնք հակառակ են կրօնին, հայրենասիրութեան և միութեան, չեն կրկնուի այլևս: Իմ ցանկութիւնն է դրա համար ձեռք առնել համապատասխան միջոցներ: Որպէսզի ազգութիւնների խոսքովութիւնները դադարեն և ժողովուրդը երջանկութիւն վայելէ. անհրաժեշտ են վարչական, դատական, ֆինանսական բարենորոգումներ, հարկ է ուժեղացնել դինուորական և ծովային ոյժերը, դարգացնել յուսաօրութիւնը և արդիւնարեւութիւնը»¹:

Կատարելով հասարակական պահանջը, պատրիարքարանը կազմեց պատգամավորութիւն հետևյալ կազմով. պատրիարքի տեղապահ Հովհաննէս եպիսկ. Արշարունի, Կրօնական ժողովի ատենապետ Հմայակ արք. Դիմաքսյան և անդամներ Գնել ծ. վրդ. Գալեմբարյան ու Գրիգորիս վրդ. Բալաքյան, Քաղաքական ժողովի ատենապետ Ստեփան ԼՓ. Գարայան, Ազգային ժողովի վճռարեկ ատյանի դատավոր Խնդիր Սիմոնյան, ժողովի պատգամավոր Հակոբ Բահրի, վաճառական Արամ Հալաջյան և «Բիւզանդիոն» թերթի խմբագիր Բյուզանդ Քեչյան²:

Պատվիրակութիւնը մայիսի 2 (15)-ին մեկնեց Դոմարախչեի պալատ, ուր համակրանքով ընդունվեց Մուհամմեդ Ե-ի կողմից: Սուլթանը պատրիարքական տեղապահ Արշարունի սրբազանին հարցրեց, թե պատվիրակութիւնն ի՞նչ խնդիր ունի: Սրբազանն իր խոսքը փոխանցեց Ստեփան ԼՓ. Գարայանին, որը երկար-բարակ պատմական մի տեսութիւն ներկայացրեց ավելի քան վեց դարե ի վեր օսմանյան գահին հայ ազգի հավատարմութեան ու անձնվեր ծառայութեան մասին: Նա շեշտեց, որ հայ տարրը օսմանյան հայրենիքից անջատվելու տրամադրութիւն երբեք չի ունեցել, օսմանյան տերութեան հովանու տակ վստահ է եղել, որ պահպանելու է իր ազգութիւնը, եկեղեցին, լեզուն, ցեղային ավանդույթները: Բայց վերջին քսան տարիների ընթացքում անտեղի դրպարտութիւններով հայութիւնը անզոր հալածանքների ու ջարդերի ենթարկվեց: Սահմանադրութեան հռչակումից

հետո մի պահ նա ազատ չունչ քաջեց, բայց ահա վրա հասավ մի նոր, սոսկալի տղետ՝ Աղանայի հայերի արյունալի ջարդը: Դա պատասխան էր սահմանադրութեանը հավատալու հայերի միամտութեանը:

Կայսրը միջամտում է. «Շատ դարմանալի է այդ: Սահմանադրութիւնը քաջալերող (միշտ վիզ) բլլայն ինչէ՞ն յանցանք կր սեպուի եղեր: Սահմանադրութիւնն ի՞նչ բանի համար է, բոլոր երկրին բարւոյն համար չէ՞ միթէ»¹:

Քաղաքական ժողովի ատենապետ Ստեփան Գարայանը պատասխանեց, թե այն պահին, երբ Պոլսում հեղաշրջման փորձ արվեց, Կիլիկիայում սկսեցին հայերին ջարդել սե սաղրանքներով: Հիմա նույնպես ուրիշ զավառներում վտանգ կա հայերի համար: Նրանց շարունակում են հայածել: Կողոպուտի համն առած խուժանը միշտ պատրաստ է հայերին ջարդելու, «եթէ այս բարձր կեղրոնէն ազգու արգելք մը չըլլայ: Այդ է պատճառը, որ հայոց տառապեայ ազգի ներկայացուցիչները պարտ սեպեցին գալ յայտնել իրենց բարեգութ ճօր որ պաշտպանէ տառապեայ հայ ժողովուրդը»:

Մուհամմեդ Ե կայսրն արձագանքում է. «Անշուշտ, ամէն պաշտպանութիւն պիտի ընծայուի: Անանկ բան չըլլար, անհանդուրժելի են ձեր պատմած այդ բաները»:

Գարայան ԼՓենդին շարունակում է և խնդրում կայսրից, որ «հրովարտակ մը շնորհուի ծանուցանելու համար ամէն կողմ, որ ա՛լ այդ ջարդերու, թալաններու, բռնութիւններու շրջանն անցած է, թէ նոր գահակալ Սուլթանին ու Խալիֆային հրամանն է որ թուրքի և հայու խտիր չըրուի, այլ ամէն կողմ հաստատ իմացուի թէ Սահմանադրութիւնն այ, Շէրիաթն այ, Կայսեր ու Խալիֆային հրամանն այ կը պահանջեն որ վերջ տրուի հայերուն դէմ ի գործ դրուող հալածանքներուն»²:

Կայսրի պատասխանը. «Շա՛տ իրաւացի են այս խօսքերը: Ես անմիջապէս վաղն առտու իսկ, պիտի կանչեմ Մեծ Եպարքոսը, և պիտի բնեմ որ ի նկատ առնէ այս խնդիրը, և ինչ որ հարկ

¹ «Ախուրեան» (Ալեքսանդրապոլ), № 34, 10 մայիսի 1909 թ.:

² Տե՛ս «Բիւզանդիոն», № 3829, 4 (17) մայիսի 1909 թ.:

¹ «Բիւզանդիոն», № 3829, 4 (17) մայիսի 1909 թ.:

² Նույն տեղում:

է ի դիր առնուի, և գործադրուի: Ի՞նչ բան է ատանկ ջարդ, թա-
լան, բռնաբարում: Ես բնա՛ւ չեմ բնդունիր որ իմ օրովս ատանկ
տգեղ բաներ ըլլան: Իմ հպատակներուս մէկ կաթիլ արիւնն որ
թափի՝ իմ սիրաւէս կը հոսի: Բոյոր երկիրը մէկ մարմնոյ պէս է,
մէկ անդամին ցաւն ի հարկէ բոլոր մարմինը կ'իմանայ: Ես իմ բո-
լոր հպատակներս հաւասար գիտեմ: Ծատ կը ցաւիմ այս եղած
բաներուն վրայ, և կը դարմանամ այ: Իմ հօրս օրով, ատանկ բա-
ներ բնաւ չէինք լսեր: Մեր գերդաստանին ճարտարապետներն
հայեր էին, կը ճանչնայի զանոնք: Աշխատաւորներուն մեծ մասն
հայեր էին: Վառօղապետներ և այլ բարձրաստիճան պաշտօնա-
տարներ և արհեստապետներ հայ էին: Հայերուն և իսլամներուն
միջև կատարեալ սէր և համերաշխութիւն կար: Մէկ հայրենիքի
զաւակներ էին ամէնքն այ: Մենք խտիր չենք դներ անոնց միջև:
Բայց սա վերջին երեսուն տարիին մէջ Ի՞նչ անցեր դարձեր է, որ
այսչափ փոխուեր է ամէն բան, իրա՛ւ որ չեմ կրնար հասկնայ:
Ասկէ ետքը կը յուսամ, որ շարիքին դարման կը տրուի: Ատանայի
ոճիրներուն հեղինակներն այ անշուշտ պիտի պատժուին, և կո-
ղոպտուած բաներն իրենց տէրերուն ետ պիտի տրուին: Սահմա-
նադրութիւնն Ի՞նչ է, Եւրիպիան Ի՞նչ է, եթէ ոչ՝ ժողովուրդին
բարեկեցութիւնը, արդարութիւնը, հաւասարութիւնը: Իմ օրովս
կ'ուզեմ որ ատանկ ըլլայ: Ինչպէս որ բարի հայր մը իր զաւակնե-
րուն բարիքը կը կամենայ, ևս այ կ'ուզեմ, որ իմ օրովս բոլոր
երկիրն երջանիկ ըլլայ: Վստահ եղէ՛ք, որ հոգ պիտի տարուի»¹:

Մուհամմեդ Ե-ի խոսքից հետո տեղապահ Հովհաննես
սրբազանը նրան մատուցում է մի խնդրագիր՝ բռնի կրօնափոխ-
ված հայերին ազատ արձակել, վերադարձնել առեանգված կա-
նանց, բանտարկյալներին ազատել, ինքնապաշտպանութիւնը
հանցանք չորակել, կողոպտված ապրանքները հետ դարձնել, որ-
բերին պաշտպանութեան տակ առնել: Վերցնելով խնդրագիրը՝
սուլթանը խոստանում է. «Ես անշուշտ ի նկատ պիտի առնեմ
այս գրուածները, և ըստ այնմ գործադրել պիտի տամ»²:

Կես ժամ տեւած ունկնդրութիւնից հետո պատվիրակութիւնը
հետանում է՝ երախտագիտութեան և օրհնութեան խոսքերով:

Իսկ Իթիհադականները քթի տակ խնդմնդում էին՝ ասելով.
«Այս հայերը տարիչ դրազմունք չունի՞ն, որ կը դիմեն փառա-
մենթին, պատուիրակներ կ'ուղարկեն կայսեր մօտ, անհանգիստ
կ'ընեն վարչապետին: Կոխը մեր վերմակին վրայ է եղած», այլ
ոչ թե պատգամնտում կամ կառավարութեան մեջ³:

Սուլթան Մուհամմեդ Ե-ի հետ հանդիպումը որեւէ զրական
ազդեցութիւն չունեցաւ: Սուլթանի միակ գործնական քայլն
այն եղաւ, որ իր բարձր հովանավորութեամբ ստեղծված նպաս-
տից միջազգային հանձնաժողովին նվիրարեւեց պետրոյ ջեից
իրեն հատկացված գումարի 1/50-ը՝ 500 օսմ. ոսկի, թեև հավաս-
տիացրել էր, թե «եթէ կարելի ըլլար, այս նպատակին համար
ամբողջ ստացուածքս կը նուիրէի»⁴: Ավելին, Օսմանյան պառ-
լամենտն իր հետագա նիստերում ուղղակի անկացրեց կիլիկյան
ջարդի խնդիրը, ցույց տալով, թե երկրի իսկական տերը Իթիհ-
հադի կոմիտեն է միայն:

ԹՈՒՐԲԱԿԱՆ «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ» ԳՈՐԾԻ ՎՐԱ

Ներքին գործերի նախարար Ֆերիդ փաշան Ադանայի սոս-
կումների առաջին օրերի թարմ ու ծանր տպավորութեան տակ
երկյուղ ունենալով եվրոպական մեծերի կոչւած միջամտութիւնից,
նրանց կառավարութիւններից խնդրել էր «սպասել և վստահել
իրենց (երիտթուրքական իշխանութիւններին: - Հ. Ս.) արդա-
րադատութեանը»⁵: Թուրք նախարարը ղեռ համոզված չէր, որ
խուժանային բնազդների և արյունայի ոճիրների հանդեպ Եվրո-
պան հիմնականում անխոտ է մնալու, ինչպես և եղաւ:

Զարդերից անմիջապես հետո Ադանայի վիլայեթի տեղական
կառավարութիւնը նշանակեց մի քննիչ հանձնախումբ, որն իբր,
պետք է անկողմնակալ քննութիւն կատարեր և մեղավորներին
պատժեր, բայց որի իրական նպատակը եղածի հանցանքը

¹ «Բիւղանդիւն», № 3829, 4 (17) մայիսի 1909 թ.:

² Նույն տեղում:

³ «Արեւելեան մամուլ», № 22, 26 մայիսի 1909 թ., էջ 518:

⁴ «Բիւզանդիւն», № 3848, 27 մայիսի (9 Հունիսի) 1910 թ.:

⁵ Տե՛ս «Դրօշակ», № 6, Հունիս, 1909, էջ 67:

Հայերի վրա բարդելն էր: Ենթադրվում էր, որ Հարցաքննությունների ընթացքում կուտակվելու էին մեծ թվով մեղադրական նյութեր, որոնք վիդայնթի ղեկավարներին հնարավոր պատասխանատվության կանչելիս՝ նրանց արդարացմանը պիտի նպաստեին:

Այանքի կոչվելուց անմիջապես հետո այս քննիչ հանձնախումբը, աչքի անցկացնելով կենդանի մնացած Հայ տղամարդկանց, իր ցանկությունը ձեռնարկելու և խստագույն քննության էր ենթարկում նրանց¹: Քննիչները ձեռնարկված Հայերին տալիս էին արդեն կանխատեսելի հետևանքներով հարցեր. «Առաջին ջարդից հետո պատուհանի առջև նստած՝ իսլամների վրա հրացանաձգություն անողը դու էիր, չէ՞. դու ո՞ր հեղափոխական կուսակցություն անդամ ես, քո հրամանի տակ քանի՞ ֆիդայի կա, դու եղել ես Եվրոպայից այստեղ գնալու ղեկավար անդամներից մեկը՝ ասա տեսնենք թե որքա՞ն գնալ երբ երբ: Մի՛ ուրանա, վկա ունենա, չգիտե՞ս, թե հետո ինչ կարող է քեզ հետ պատահել...»:

Աղանայի տեղական կառավարչության ստեղծած քննիչ հանձնախմբի գործունեությունը երկար չտևեց: Շատ չանցած՝ մեկ ամիս հետո, նրան փոխարինելու եկան Կ. Պոլսի ուղարկված հանձնախմբերը:

Եվրոպայի Հայոց Հոգևոր առաջնորդ Գևորգ Լալիսկ. Ութուկյանը Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Իզմիրլյանին նամակով տեղեկացնում էր, որ ի պատասխան իր հարցման, Օսմանյան պառլամենտի նախագահ Ահմեդ Ռիզայից ստացել է ինքնագիր մի տոմսակ, որով Հայտնել է, թե Աղանայի կոտորածի հեղինակներից ոչ մեկն անպատիժ չի մնալու: Դա հուսադրող է և պետք է սպասենք կենտրոնական իշխանությունների որոշակի քայլերին²:

Օսմանյան խորհրդարանը Աղանա ուղարկեց իր քննիչ հանձնախումբը, որի անդամները երկու հոգի էին՝ պատգամա-

վորներ Հակոբ բեյ Պապիկյանը և Յուսուֆ Քեմալ բեյը, որոնք Աղանա հասան մայիսի 16 (29)-ին:

Կիլիկիա եկավ նաև մի ուրիշ քննիչ հանձնախումբ՝ կառավարության կազմած հանձնախումբը (հեյեթի թահկիկիե): Նա ընդգրկում էր երեք հոգի՝ Պետական խորհրդի անդամ Ֆաիզ բեյը (նախագահ), Մանասթրրի դատական քննիչ Հարություն Մոստիչյանը և սրանց միացած Մերսինի մութասերիֆ էսադ Ռեուֆ բեյը¹:

Կառավարական հանձնախումբը սկզբում անկողմնակալ քննություններ էր կատարում: Դրա վկայություններից մեկը մեծ վեղիրին ու ներքին գործերի նախարարին մայիսի 28-ին էրզինից հանձնախմբի անդամ Հարություն Մոստիչյանի տված կարևոր հեռագիրն էր, որի տակ իրենց ստորագրություններն էին դրել նաև հանձնախմբի մյուս երկու թուրք անդամները՝ Ֆաիզ և էսադ Ռեուֆ բեյերը: Սրանք աղետյալ ժողովրդի անունից մեծ վեղիրից խնդրում էին՝ ա) հնարավորինս շուտ սաստել ռազմական ատյանին՝ դատաքննությունները անաչառ անցկացնելու համար, բ) միջոցներ ձեռք առնել, որպեսզի այդ ատյանի կողմից «անիրաութեանց ենթարկուած բանտարկեալներն կարելի եղածին չափ շուտ արձակուին»²:

Հունիսի 27-ին Ֆաիզ բեյի, Հարություն Մոստիչյանի և էսադ Ռեուֆ բեյի ստորագրությամբ պաշտոնական առաջին ընդարձակ տեղեկագիրն է ուղարկվում կենտրոնական կառավարությանը, որտեղ շարադրված էին այդ քննիչ հանձնախմբի անկողմնակալ քննության արդյունքները: Նույն օրը Ֆաիզ բեյի և Հ. Մոստիչյանի ստորագրությամբ նույն հասցեով հղվում է նաև հանձնախմբի կազմած ամբաստանագիրը:

Հանձնախմբի տեղեկագրի և ամբաստանագրի հիման վրա նախարարների խորհուրդը Հունիսի 29-ին քննեց հանձնախմբի արդար ու ստուգապատում տեղեկագիրը և որոշեց Աղանայի ռազմական ատյանի դատին հանձնել հետևյալ անձանց՝ նախկին վայի Ջևադ բեյին, դորարանակի հրամանատար (Ֆրրգա գոմանտանը) Մուստաֆա Ռեմդի փաշային, Ջերել-Բերեքեթի

¹ Տե՛ս «Ախուրեան», № 33, 7 մայիսի 1909 թ.:

² Մատենադարան, Մատթեոս Իզմիրլյանի արխիվ, մատյան 34, թղթ. 14, վավ. 507:

¹ Վեր. Համբարձում Յ. Աչճեան, Ատանայի եղևուր..., էջ 30:

² Նույն տեղում:

կառավարիչ Ասաֆ էսադ բեյին, «Իթիղայ» թերթի խմբագրապետ Իհսան Ֆիրբիին, նույն թերթի խմբագիր Իսմայիլ Սևֆային, Աղանայի թուրք երեկիններից Բաղդադի դադե Արգույ Կադերին և Բոսնայր (Բոչնագ) Սայիհին: Որոշման համաձայն՝ դրանից դատ բոլոր այն պետական պաշտոնյաները և տեղի ազդեցիկ անձինք, որոնք թերացել էին իրենց պաշտոնում և ժողովրդին գրգռելով «վրդովել էին անդորրությունը», նույնպես ենթակա էին ձերբակալման և հանձնվելու ռազմական ատյանի դատին: Բայց, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, նախարարների խորհուրդն այդ որոշումն ընդունել էր ձևականորեն, հատկապես Եվրոպային թյուրիմացության մեջ գցելու համար: Ինչպես կտեսնենք՝ որոշումը չգործադրվեց:

Կառավարական հանձնախմբի երկու թուրք անդամները ժամանակի ընթացքում ավելի ու ավելի կողմնակալ դիրք բռնեցին: Մյուս կողմից, երբ թուրք հանրությունը հայտնի դարձավ, որ Աղանայում զոհվել են նաև բավական թվով մահմեդականներ, երիտթուրքերը, նույնիսկ մինչ այդ հայերին պաշտպանողները, այժմ կանգնեցին ցեղակից ազգայնամոլների և խոջաների պաշտպանության կողմը: Վերջիններս չէին հաշտվում այն մտքի հետ, որ հայերը որոշ տեղերում, հատկապես Աղանայի առաջին ջարդի ժամանակ, ոչ միայն կարողացել էին ղեկավարել պաշտպանվել, այլև սպանել 350-400 երուզակների: Հայերի կազմակերպված դիմադրությունից կատաղած՝ հին և նոր թուրքերը դադարեցին այլևս քրիստոնյաների գանգատները լսել:

Իր հերթին, ռազմական բարձրագույն իշխանությունը Աղանա ուղարկեց Ռումելիի դինվորական սպաններից կազմված մի ռազմական ատյան (ռազմադաշտային դատարան): Ատյանի (ղիվանք հարրի էորֆի) նախագահն էր միրյիվա՝ Քենան փաշան, անդամները՝ Իսմայիլ Ֆադրլ փաշան, միրայայ՝ Ջիա բեյր, էոմեր Նարիհ բեյր, Օսման Այի բեյր, Լութֆի բեյր, Մուստաֆա էֆենդին, յուզրաչի՝՝ Ջիա բեյր, յուզրաչի Ռեֆիհ բեյր¹: Աղանա

¹ Միրյիվա - գններայ-լեյտենանտ:

² Միրայայ - գնդապետ:

³ Յուզրաչի - հարյուրապետ:

⁴ Տե՛ս Վեր. Համբարձում Յ. Աչճեան, Ատանայի եղևոնը..., էջ 30:

հասնելուն պես այդ գլխավոր ռազմական ատյանն ստեղծեց միայն երիտթուրք դինվորականներից կազմված երեք դատական ատյան (ղիվանք հարրիներ)¹: Աղանայի, էրդինի և Անտիոքի: Սրանք, իրենց հերթին, ստեղծեցին հանձնախմբեր, որոնք հիմնականում հանցագործ տարրերից կազմված էին: Վերջիններս խնդիրն էր նյութեր հայթայթել ռազմական ատյանի համար²:

Ռազմական ատյանի՝ դատական հետաքննություններ սկսելուց մի քանի շաբաթ հետո միրյիվա Քենան փաշային փոխարինեց Իսմայիլ Ֆադրլ փաշան:

Քննությունների ընթացքը խորապես հիասթափեցրեց հայերին, որոնք մեծ հույսեր էին կապել հատկապես ռազմական ատյանի հետ: «Արևելքը», մինչև այդ հանձնախմբի ժամանումը Աղանա, գրել էր. «... Համբերությունամբ սպասենք այն արդյունքին զոր պիտի տայ՝ Պոլսէն, ազատարար բանակին կողմէն արիւնի վայրը դրկուած դինվորական յանձնախումբին քննութիւնը: Այս տեսակ մարմին մը, զոր կը կազմեն Ռումելիի հոյակապ բանակէն ընտրուած անաչառ, անխարդախ, արդարամիտ եւ ուղղախոհ սպաներ, անկարելի է, որ ճշմարտութիւնը երեւան չհանէ եւ անարգութեան սիւնին չկապէ: ... Մեր բոլոր յոյսը կը կեդրոնանայ այս դինվորական ատեանին վրայ»³:

Բայց հայերի սպասելիքներն ի ղերև ելան:

Ռազմական ատյանն ամեն ինչ անում էր մի կողմից խեղդամահելու ճշմարտությունը, հերքելու զորքի ակներև մասնակցությունը կոտորածին, մյուս կողմից՝ պատասխանատվությունը ձգելու հայերի վրա՝ արհամարհելով նվազագույն ողջամտություն պահանջները: Նրա բոլոր վճիռները հիմնված էին կոտորածները կազմակերպողների ու իրականացնողների «վկայությունների» վրա: Սրանք ոչ միայն անամոթաբար ամեն ինչում մեղավոր էին համարում հայերին, այլև անդադար սպառնալիքներ էին հղում կառավարությունը և հոխորտում, որ Անատո-

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3847, 26 մայիսի (8 հունիսի) 1909 թ.:

² «Հայրենիք» (Բոստոն), № 34 (539), 17 օգոստոսի 1909 թ.:

լիայում հայության բնդհանուր, ավելի սոսկայի կոտորած առաջ կրերեն, եթե ռազմական աստանը համարձակվի որևէ թուրքի դատապարտել¹: Թուրքական վարչական շրջանակների արած բոլոր հավաստիացումները, թե դատավարություններն անաչառու անկողմնակալ կանցնեն, կեղծիք դուրս եկան: «Սամանեան արդարությունը հայուն օգնությունն չի հասա», - գրում էր «Դաչինք» թերթը²:

Կառավարական հանձնախմբի անդամ Հարություն Մոստիչյանը, ինչպես ուրիշ բազմաթիվ հարցերում, այնպես էլ հատկապես ռազմական աստանի գործողությունների գնահատման հարցում խիստ տարակարծիք էր իր երկու թուրք գործընկերների հետ: Նա վերջիններիս հիշեցնում էր, որ դատելով ռազմական աստանի դատական վարույթներից, Կիլիկիայի հայերը և բոլոր քրիստոնյաները այսօր էլ՝ ջարդերից հետո, հանգիստ չունեն, նրանք վախ ունեն, որ կարող են կոտորածները նոր ուժով սանձադերժվել:

Դատական մարմիններն ամեն ինչ անում էին, որպեսզի հազարավոր ոճրարեո ճիվաղներն ազատության մեջ մնան: Վերջիններս, ըստ էության, անպատիժ էին հռչակված³:

Դեպքերին քաջատեղյակ տիտղոսավոր (տիտուլյար) խորհրդական Շելկովնիկովը 1909 թ. հունիսին լինելով Ադանայում, գրում էր ընթացող դատավարությունների մասին. «Թսկական մեղավորներն ու մարդասպանները, այսինքն՝ իշխանություններն ու մակեդոնական (երիտթուրքական) զորքերը չեն էլ մտածում թաքնվել, զրա կարիքը նրանք չեն զգում, քանի որ հենց իրենք են ռազմական դատարանի և հետաքննչական հանձնաժողովների անդամները, հենց իրենք էլ այժմ պաշտպանում են կարգն այն երկրում, որտեղ իրենց ձեռքերով կոտորեցին մինչև 25-30 հազար քրիստոնյայի»⁴:

Ոչ մի կարևոր մուսուլման մահվան չդատապարտվեց⁵: Ճիշտ է, Կ. Պոլսում կախեցին մի զորապետի, մի քանի ուրիշ զինվորականների, կառավարական պաշտոնյաների ու սոֆթանների, բայց նրանք պատժվել էին մարտի 31-ի համիդական հեղաշրջման օրերին մայրաքաղաքում հակաթիթհադական աշխույժ գործունեություն ծավալելու և այն բանի համար, որ թափել էին ոչ թե քրիստոնյաների, այլ՝ իսլամների արյունը:

Ջդատվեց ոստիկանության ոչ մի ղեկավար, թեև նրանցից շատ-շատերը ջարդերի ծավալմանը մեծապես նպաստել էին: Ավելին, բազմաթիվ թուրք ոստիկաններ խուժանին խրատներ էին տվել, թե ինչպես պետք է առավել մեծ արդյունավետությամբ կոտորել անգն քրիստոնյաներին:

Ինչպես վերը նշվել է, Սենեմ խանումն իր արբանյակներով Սայրըր գյուղում և շրջակա ազարակներում կոտորել էր հայ տղամարդկանց, կրակների մեջ այրել կանանց ու երեխաների: Այդ ոճրագործները մնացին ազատության մեջ՝ նույնիսկ չենթարկվելով նախատինքի⁶:

Արյունայի ջարդի պատճառ դարձած Ադանայի վայի Մեհմեդ Ջևադ բեյը «պատժվեց» պետական պաշտոններ վարելուց վեց տարի զրկվելով, իսկ վիլայեթի զորքերի հրամանատար Մուստաֆա Ռեմզի փաշան, որը բավականաչափ զինվորական ուժ ուներ ջարդը թույլ չտալու, բայց չարեց, ընդամենը երեք ամսվա բանտարկության դատապարտվեց³:

Ջերեյ-Բերեքեթի սանջակր տակնուվրա արած մութասերիֆ Մեհմեդ Ասաֆ էսադ բեյը լիովին անմեղ ճանաչվեց⁴ և նա, նախաքննության արգելարանից ազատվելով, փախուստ տվեց անհայտ ուղղություններ⁵:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 1 և շրջերես:

² Տե՛ս **Ցակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 428:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 427:

⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 2:

⁵ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 3-ի շրջերես:

¹ Տե՛ս «Դրօշակ», № 5, մայիս, 1909, էջ 56, № 6, հունիս, 1909, էջ 66:

² «Դաչինք» (Իգմիր), № 228, 5 (18) մայիսի 1910 թ.:

³ Տե՛ս «Հայրենիք», № 34 (539), 17 օգոստոսի 1909 թ.:

⁴ "Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов", Ереван, 1966, с. 172.

ՍոսոկաՆույզ հրատարակություններով իսլամները քրիստոնյաների դեմ գրողած «Իթիդալ» լրագրի անբարո խմբագիր Իհսան Ֆիրքին և թերթում տպագրած «Մի սոսկայի ապստամբություն» վերնագրով հոդվածի հեղինակ Իսմայիլ Սեֆան, որի հրապարակումը Ազանայի երկրորդ ջարդի գլխավոր պատճառներից էր, դատապարտվեցին միայն մեկ տարվա բանտարկություն¹:

Ջարդերից հետո, մինչև ձերբակալվելը, անբարո ու մորթապաշտ Ֆիրքին վախից իր թերթում սկսել էր զրական արտահայտվել հայերի մասին, միաժամանակ քննադատել «միամիտ ու անհեռատես» քրդերին, որոնք հայոց տները այրելով, զրանցում կուտակված ղենք-դինամիթերի հսկայական պաշարների փչացման ու անհետացման պատճառ դարձան: Դա դարձանք էր պատճառել հայ գործիչներին: Սուրեն Պարթևյանը նողկանքով այսպես էր պատասխանել նրան.

«ՄՎ անխիղճ Ֆիրքի, ո՛վ ամենէն անարգն Ատանայի դահիճներէն, զի գաղափարի՛ ալ դաւաճան, զո՛ւն որ, ղեռ քանի մը ամիս առաջ, հայերուն Յուդայի համրոյրներ տալով՝ անոնց հետ եղբայրաբար Ատանայի անիծապարտ վալին կ'ամբաստանէիր թերթիդ մէջ իբրև **խթիպատատի** (բոնապետական: - Ն. Ս.) ու Երլտրդի ստորնագոյն արարած, ինչպէ՞ս կրցար, զո՛ւն, ո՛վ զազրելի դրուժան, ինչպէ՞ս կրցար ձեռք-ձեռքի տալ անոր հետ հայուն մուխը մարկու համար, եւ հիմա անոր զովքը կ'ներգես սինիքօրէն. ինչպէ՞ս լեզուդ փոխեցիր, ինչպէ՞ս կրցար մոռնալ այս երկրին մէջ հայուն եղած զրկանքներուն, հայուն հասցուած զուլումներուն վրայ քու երկկուան բողբոջերդ, միեւնոյն կեղտոտ քուրջիդ մէջ, զոր հայուն արիւնին ու աւերին վրայ իբրև զրօշակ տնկեր ես հիմա...»²:

Բայց երբ Ֆիրքին ու Սեֆան համոզվեցին, որ ուղղմական

¹ Տե՛ս **Յակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 428, «Կոհակ», № 15, 5 սեպտեմբերի 1909 թ.:

² **Սուրէն Պարթևեան**, Կիլիկեան արհաւիրքը, էջ 63-64:

ատյանը հազիվ թե իրենց պատիժ տա, նորից «Իթիդալի» էջերը լցրեցին հայերի մասին նողկալի նյութերով³:

Երբ քրիստոնյաները որևէ անգամ ու վայրագ ոճրագործի դեմ արդար բողոք էին ներկայացնում, դրան որևէ նշանակություն չէր տրվում: Դատավարությունների արդյունքում մահվան պատիժ ստացան շուրջ հինգ տասնյակ մուսուլմաններ, որոնցից միայն մոտ 20 ոճրագործի նկատմամբ կիրառվեց կախադանով մահապատիժ: Նրանք հիմնականում կրոնական հիպոնոզից կուրացած անգիտակից ոճրագործներ էին, որոնք գործիք էին եղել բարձր դիրք ունեցող ջարդարարների ձեռքին: Մնացած 30-ի պատիժը փոխարինվեց ցմահ բանտարկությամբ, իսկ որոշ ժամանակ անց, 1912 թ. ղեկտեմբերի 20-ի ընդհանուր ներումով, նրանք բոլորն ազատ արձակվեցին:

Ձևականության համար՝ այլևայլ աստիճաններով բանտարկության դատապարտվեցին Կիլիկիայի ջարդերին մասնակցած տասնյակ հազարավոր կատաղի ոճրագործներից միայն 200 մարդակերպ ճիվաղներ: Նրանց մեծ մասին շուտով ներում չնորհվեց, իսկ բանտերում մնացած 86 հանցագործները ազատվեցին վերը նշված ընդհանուր ներումով:

4. Պոլսի և կովկասահայ մի քանի թերթեր տպագրել էին Անտիոքի հայ կանանց հետևյալ աղբխարչ հեռագիրը՝ պատրիարքարանին. «Անտիոքին աղէտին նմանը եւ ոչ մի տեղ տեսնուած է: Պատերազմական ատեաններ կազմուեցան, բայց ոճրագործներու մահուան վճիռները չգործադրուեցան: Մեր այրերը եւ դաւակները մեր աչքերուն առջևը սպաննող ու տուներնիս կողոպտող Հիւսնի, Նիհատ (Սայեֆ աղա զաղե Վահիդ: - Ն. Ս.) և Ռաֆեթ (Բերեքեթ զաղե Ռիֆաթ: - Ն. Ս.) աղաները, որոնք աքսորի դատապարտուած էին, ազատ արձակուած են: Մեր յափշտակուած գոյքերը չկրցանք ետ առնել: Խեղճ ու թշուառ վիճակի մը մատնուած ենք: Մեր թափած արիւնները եւ հառաչանքները մինչև երկինք կը բարձրանան: Որի՞ն դիմենք»⁴:

³ Չարագործ Իհսան Ֆիրքին երկար շապրեց: Նա մեռավ 1910 թ. մարտի 27-ին, Բեյրութի հիվանդանոցում, կոկորդի չյուծախտից:

⁴ «Հորիզոն», № 15, 22 հունվարի 1910 թ.:

Դիմում-բողոքներին ուշադրություն դարձնող չկար: Եվ դա պատահական չէր: Ձե՞ որ Կիլիկիայի ավելի քան 30 հազար անմեղ հայ նահատակների հաշիվն ըստ Լուիջան արզեն մեկրնդմիշտ փակված էր:

Իսկ ո՞վ էր հանցավորը: Իհարկե՝ հանցանքը նրանն էր, ով տկար էր ու անտեր: Հանկարծ որեւէ մեկի մտքով չպետք է անցներ, թե ջարդի մեջ մեղք ունեն թուրքական իշխանությունները, որովհետեւ նրանք «օրինապահ» են ու «անկողմնակալ», իսկ շարքային իսլամներից ընդհանրապես այդպիսի բան չի կարելի ակնկալել, դի նրանք համարյա սրբեր են:

Փոխանակ ձերբակալելու իսկական ոճրագործներին, ռազմական ատյանն ամբողջ Կիլիկիայով մեկ տմարդի հայաձանքներ սկսեց բարբարոսների ձեռքից մազապուրծ հայերի նկատմամբ:

Վերը հիշատակած Ծելկովնիկովը գրում էր. «Այն, ինչ կատարվում է ռազմական դատարանում, հատկապես Ադանայում, արդարադատության պատրվակի տակ, հանդիսանում է չարագույն զավեշտ արդարության նկատմամբ ... Ստացվում է այնպիսի տպավորություն, կարծես թե հայերն են 30 հազար անգեն մահմեդական ջարդել և հիմա դրա համար պատժում են նրանց»¹:

Ձերբակալվածները, ղեռ չհարցաքննված, բիրտ խոշտանգումների էին ենթարկվում: Թուրքերի հին, եղևոնախանձ մոլուցքը և կրոնական մոլեռանդությունը այսքան նախահիրներից ու արյունարբու լինելուց հետո էլ ղեռ չէին հագեցել:

Ատյանի անդամների մտքով անգամ չէր անցնում արդարացի քննություն կատարելը և հանցագործներին պատիժների ենթարկելը՝ նրանց գործած հանցանքների չափի համաձայն: Հանցագործների նկատմամբ ռազմական ատյանի վերաբերմունքի միակ չափանիշը ազգային-կրոնականն էր, այսինքն՝ մեղադրյալը հայն էր, արդարը՝ թուրք, քուրդ կամ չերքեզ:

Ամբողջ Կիլիկիայում բացարձակապես արգելվեց հայերի

երթևեկելը, նրանց տները ապօրինի վայրագ խուղարկությունների էին ենթարկվում: Բ. Դուան որոշմամբ, «Պոլսէն եւ գաւառներէն ընկերութեանց անունով զրկուած գրգոիչ հեռագիրները» խափանվեցին «մինչև որ անդորրութիւնը հաստատուի»¹:

Ռազմական ատյանը և Ադանայում նրա ստեղծած դատական երեք ենթատյանները հետաքննության առաջին իսկ օրերին սկսեցին բարձրաձայնել, որ իրենք մինչև այժմ չեն կարծել թե «հայերը նույնպես մեղավոր են»: Արդեն երեք-չորս օր անց նրանք սկսեցին պնդել այն կարծիքի վրա, թե գլխավոր մեղավորները հայերն են, քանի որ հենց «նրանք են նախահարձակ եղել»: Այդ պահից սկսած՝ նրանք գործի քննությունն այնպես էին տանում, որպեսզի «հանցավորները խստորեն պատժվեն»: Սկզբում պատիժներ կիրառվեցին ոչ միայն թուրքերի, այլև հայերի նկատմամբ, իսկ որոշ ժամանակ անց՝ միայն հայերի:

Հայերին ամեն տեսակի արտաոտց մեղադրանքներ էին ներկայացվում: Բոլոր ոճիրները կատարել են հայերը, նրանց կտրրված, թե ղեռ չկտրված վզին է ծանրացած աղետի մեղքը՝ հայերն են կրակի մատնել իրենց վերջին ապավենը հանդիսացող օտար հաստատությունները. նրանք են իրենք իրենց ջարդել (ցանկացան մեռնել՝ մեռան). կամենալով աղքատանալ՝ հայերը հրկիղեցին սևփական իսկ տները, իրենց ձեռքով փողոցներ նետեցին սևփական գույքն ու կահ-կարասին, ավերեցին իրենց ազգային հանրային շենքերը, և այդ ամենն արեցին՝ մեղքը իսլամների վրա բարդելու համար:

Ռազմական «արդարադատ» ատյանը չէր բավականանում ղերերը չրջելով, այլ նաև հանձնառու էր անարգել զոհերը, դրանով իսկ սրտաբեկել ու ծայր հուսահատություն մղել հայ տարրը: Այդպիսով, երիտթուրքական իշխանությունը հզորագույնի իրավունքով բռնադատում էր իրավագուրկ զոհին՝ նրան ստիպելով կուլ տալ արցունքները և լուել:

Որոշակի անձերի ներկայացված ամբաստանություններից դատ, հայություն ղեմ հարուցված էին քաղաքական բնույթի երեք ծանր մեղադրանքներ: Դրանք էին. 1) Տարիներ շարունակ հայերը մեծաքանակ զենք ու զինամթերք են ձեռք բերել և կու-

¹ "Геноцид армян...", с. 172.

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3818, 21 ապրիլի (4 մայիսի) 1909 թ.:

տակել, իրենց տների նկուղները իսկական զինանոցների վերածել, 2) Նրանք ապստամբություն են բարձրացրել Աղանայի ու Հայկապի նահանգները Օսմանյան կայսրությունից անջատելու և այդ տարածքների վրա իրենց անկախ թագավորությունն ստեղծելու համար, 3) Բոլոր գործողությունները ղեկավարել են Հայ ազգային հեղափոխական կուսակցությունները:

Այդ ամենը ցինիկ ու անհեթեթ էին:

Հայ քաղաքական ու կրոնական գործիչները, գրողներն ու լրագրողները որոշակի փաստերով ու տրամաբանությունով ուժով ապացուցում էին մեղադրանքների սուտ ու չինձու լինելը:

Հայերի՝ մեծաքանակ զենք ու զինամթերք ունենալու սաղարանքին իրենք իսկ՝ թուրքերը չէին հավատում:

Սուլթան Աբդուլ Համիդի օրոք թուրքերը Կիլիկիայում «գյավուրների» մոտ երեք զենք չէին տեսել: 1895-1896 թվականներին Հայերը Թուրքիայում զենք չունեին, ուստի կրավորապես ենթարկվեցին իրենց ճակատագրին և մորթվեցին: Դա մեկ անգամ ևս հաստատել էր այն ճշմարտությունը, որ Թուրքիայում Հայր միշտ ենթակա է բնաջնջման վտանգի, եթե զուրկ է զենքից կամ զենք գործածելու ունակությունից ու ցանկությունից: Թե՛ զենք չունեցող բնակավայրերում տեղի ունեցած ջարդերը և թե՛ ինքնապաշտպանական կոիվները մի ավելորդ անգամ ապացուցել էին, որ թուրք և քուրդ ամբոխը վայրագ է ու անդիջում, «քաջ է» ու արյունարբու, երբ իր առջև տեսնում է անդեն ու թույլ հոգիների, բայց նույնքան անվճռական է, երկչուտ ու վախկոտ, երբ իր համար ամենաչնչին վտանգ է տեսնում:

Սահմանադրական կառավարության օրոք, երբ կայսրությունում ազատ զենք էր վաճառվում, Աղանայի վիլայեթում Հայ չափահաս տղամարդկանց մի աննշան մասը կարողացել էր փոքրաքանակ զենք Հայթայթել, հիմնականում՝ որսորդական հրացաններ: Այդ մի խումբ Հայերը մի քանի ողորմելի զենքերով զինվեցին այն ժամանակ, երբ տեսան, թե երիտթուրքերն իրենց երկղիմի քաղաքականությունը խուժանին ինչպես են քաջայերում զինվել:

Կիլիկիայի Հայերի մի մասն ստիպված էր զենք ձեռք բերելու:

որովհետև՝ մեծաքանակ զենք ու ռազմամթերք էր փոխադրվում Կիլիկիայի պետական զորանոցները: Պոլսից ուղարկված վառողը վաճառվում էր միայն թուրք տարրին, մի քանի հազար ոսկի մայրաքաղաքից նվեր էր ուղարկվել տեղի համիդիներին, թուրքական կուսակցությունների միջև գոյություն ունեցող կոիվներն ու անձնական հակասությունները նպաստավոր հող էին պատրաստում հակասահմանադրական պոթկումի համար, չարիաթի պաշտոնյաներից շատ-շատերը նույնպես չէին թաքցնում, որ պատրաստվում են վճռական հարված հասցնել սահմանադրությանը: Աղանայի Հայոց հոգևոր առաջնորդը գրում էր. «Կիլիկիոյ Հայր թէպէտ զինուեցաւ, բայց մէկ կողմէն Սահմանադրութեան վրայ չափազանց վստահ, միւս կողմէն աղքատ ու անօթի ըլլալուն համար նիհարօրէն զինուեցաւ, որովհետեւ ան տարիներէ ի վեր արիւնոտ փորձառութիւնը ունէր, թէ քաղաքային (քաղաքական: - Հ. Ս.) ներքին ռեւէ շփոթութեան մը պահուն, ինչ որ այ ըլլար անոր հանգամանքն ու բնոյթը, խուժանական բարբարոսութեան առջև. նետուելիք առաջին ողջակէզը Հայերը պիտի ըլլային»:

Երբ սկսվեց կիլիկյան կոտորածը, անդեն Հայ համայնքները կամ զենքն անհաշվենկատորեն վար ղնողները անխնա ջարդվեցին խուժանի կողմից: Օրինակ՝ Տարսոնում Հայերը մի որսորդական հրացան անգամ չեն ունեցել, հետևապես զենք չեն պարպել: Ուրիշ տեղերում, ինչպես Համիդիեում, Բախսեում, Անտիոքում, Սուեղիայում, Քեսապում, թեև ունեցել են քիչ-միչ զենք, բայց շատ քչերն են դա գործածել կամ առհասարակ չեն գործածել և «պատժվել են» անխնա կոտորվելով:

Եթե Հայերն իմանային, որ ենթարկվելու են իրենց հարևանների հարձակումներին ու տմարդի արարքներին, ապա կմտածեին զենք-զինամթերքի պաշարներ ունենալու և ռազմական դիրքեր ստեղծելու մասին:

Աղանայում, ուր առաջին ջարդի օրերին Հայերը բավական

¹ Մուշեղ Խախկոպոս, Ատանայի ջարդը և պատասխանատուները, Բոստոն, 1910, էջ 59:

դինական դիմադրություն ցույց տվեցին, ռազմամթերքի մասնավոր պատրաստություն ընամ չէին տեսել, և դարմանայի չէ, որ քաղաքի ավելի քան 20 հազար համախումբ հայությունն ուներ ընդամենը 50-60 «Մարթին» և նույնքան էլ այլ տեսակի հրացաններ: Ինչ վերաբերում է ռազմական դիրքերին, այդ «դիրքերը» տներն էին: Թուրք խուժանի և զորքի հարձակումներից պաշտպանվելու համար հայերը քաշվել էին իրենց տները, շատերը փախել ու հավաքվել էին օտարահպատակների տներում կամ եվրոպական ու ամերիկյան հաստատությունների շենքերի մեջ: Իսկ ուտելիքի պաշար ստեղծելու մասին քաղաքի հայ բնակիչներն ընդհանրապես չէին մտածել, որի պատճառով՝ արդեն ջարդերի չորրորդ օրվանից մարդիկ սկսել էին սովից մեռնել:

Ձինված էր եղել միայն Ջեյթունը, և դա ոչ թե ապստամբություն բարձրացնելու նպատակով: Ջեյթունցին միշտ էլ ղենք էր ունեցել՝ փտանգներին դիմազրավելու համար: Բայց այս անգամ նա իր ղենքը չէր գործածել, քանի որ ջարդարարները չէին համարձակվել արծվարույնի վրա գնալ: Նա մնաց անառիկ և հպարտ:

Աննշան թվով ղենք ունեցող, բայց թշնամու ճանապարհը պատնեշած հայորդիները մի շարք վայրերում հազարավոր հրոսակների ղեմ հաղթող դուրս եկան: Օրինակ՝ Աղանան փչացավ, բայց մինչև վերջ ժողովուրդն արևց այն, ինչին ընդունակ էր: Դեռթ-Յոյր (Չորք-Մարգպան) թույլ չտվեց, որ մի քանի անգամ թվական գերակշռություն ունեցող խուժանը ներս մտնի կոտորելու և կողոպտելու: Ինչպես նշվել է, հարձակվողները կտրել էին Դեռթ-Յոյ մտնող ջրի ակունքը և մարդիկ ծարավից մեռնելու վրա էին: Բայց չէ՞ որ եթե իմանային, թե ինչ է գալու իրենց գլխին, ապա նախապես ջրի պատրաստություն կտեսնեին: Հաճընը քիչ կորուստներով փրկվեց: Այստեղ ժողովուրդը լեռնաբնակ էր, հետևաբար՝ ղենք ուներ, բայց անհրաժեշտ քանակի դինամիթերը չուներ: Հաջող դիմադրության համար նա պարզապես պարտական էր իրեն ունեցած անառիկ դիրքերին: Նույնիսկ եղան գյուղեր, որոնք օրերով դիմադրեցին ջարդարարներին: Դրանցից էր, օրինակ, Հաճընին մոտ գտնվող և 120

տուն ունեցող Շար գյուղը, որը 13 օր անընդհատ դիմադրեց 6000-ից ավելի ջարդարարների վայրագ հարձակումներին՝ ուսուցիչ Հակոբ Չայյանի գլխավորությամբ: Եղան նաև բազմաթիվ աննշան գյուղեր, որոնց բնակիչները թեև պարտվեցին, բայց իրենց կյանքը շատ սուղ ծախսեցին:

Այս իրողությունները տանել ու մարսել չէին կարողանում ո՛չ խուժանը, ո՛չ զորքը և ո՛չ էլ իշխանությունները: Ո՞վ էր գյավուրը, որ գյուլս չծոխի իր տիրոջ ոտքերի տակ:

Դիմելով թուրք սաղրիչներին, որոնք միալար հանկերգում էին հայերի գլխովին դինված լինելու մասին, Սուրեն Պարթևյանը գրում էր. «Արուներբան ստախոսանն՝ր, ձեր աչքերովը տեսա՛ր, թե առաջին երեք օրերուն [Ատանա քաղաքի] պաշտպանողական դիմադրությունն էն ետք տապանճաներուն (ատրճանակ: - Ն. Ս.) փամփուշտը հատեր էր եւ ձեր երկրորդ խուժանին դէմ մէկ հատիկ դէնքի արձակուիլն ալ չի լսեցիք ձեզի դէմ»¹:

Կիլիկյան ղեպքերը կրկին ամբողջ մերկություն ցույց տվեցին, որ դինված թուրքերի և քրդերի հետ հայերի անվտանգ ապրելը պայմանավորված է այն բանով, թե վերջիններս ինչպես կարող էին նրանց հակադրել իրական ուժ: Եթե հայերը կարևոր պահերին ի վիճակի լինեին երևան հանել այդ ուժը, ապա կարող էին կոտորածներից խուսափել: Հայը կարող է գոյատևել իր դինված հարևանների հետ իրական ուժերի հավասարակշռություն ստեղծելու ղեպքում միայն:

Թուրքիայում բոլոր ժողովուրդները կա՛մ պետք է զինվեին՝ հանուն խաղաղության, կա՛մ բոլորը պետք է զինաթափ լինեին՝ դարձյալ հանուն նույն խաղաղության: Այլ միջոց, ցավոք, չկար:

Նույնքան անմիտ ու արտառոց էր հայկական ապստամբության վարկածը:

«Իթիղայ», «Հյուրիկթ», «Մուսավաթ», «Աղալթ» և ուրիշ թերթեր «հայկական ապստամբության» մասին ստերով ողողել էին իրենց էջերը. իսկ դրանցից «Իթիղայ» թերթի խմբագիր, հայատյաց Իհսան Ֆիրրին «հայերի բարձրացրած ապստամբու-

¹ Սուրեն Պարթևյան, Կիլիկյան արհաւիրքը, էջ 63:

թյունը» կոտորածների միակ (ոչ թե գոնե հիմնական կամ գլխավոր) պատճառն էր համարում¹:

Ի պատասխան այդ զրպարտություն, «Արեւելքն» իր խմբագրականներից մեկում հարց էր տալիս. «Ի՞նչ փաստերու վրայ յենուելով եւ ի՞նչ տրամաբանություններ կ'ելլէր կ'ըսէր, թէ հայր անկախություն ձեռք ձգելու համար այսպէս բրաւ: Վեց հարիւր տարուան պատմություն մը գոնէ կրնայ ապացուցանել, թէ հայրերէր այդպիսի միտում մը չէ ունեցած: Հայր ամէն միջավայրի մէջ իր ինքնայատուկ պարկեշտություններ կրցած է վաճառական ու արհեստաւոր ազգ մը ըլլայ: ... Մենք Թուրքիոյ հայոցս համար կը հարցնենք քեզ, դիմակաւո՞ր խմբագիր, թէ Թուրքիոյ հայր ե՞րբ և ո՞ր օր (600 տարիներէ ի վեր) ըմբոստություն մը ունեցաւ: Եւ եթէ վերջին քառորդ դարուն մերթ ընդ մերթ բողոքի ճիչեր բարձրացան, ատոնք այ պարզապէս համիտիէական կառավարութեան սոսկալի ուժիմի դէմ արդարացի ընդվզումներ էին, ուժիմ, որ ամէն ինչ կ'ընէր Պեոլիսի դաշնագրի 61-րդ յօդուածը չէզոքացնելու համար»²:

Աղանայահայոց առաջնորդ Մուշեղ սրբազանը նույնպէս հարց էր տալիս՝ հայերն ինչո՞ւ պետք է ապստամբություն բարձրացնեն: Չէ՞ որ նրանք էին առաջինը ողջունել սահմանադրությունը, անկեղծորեն փարել նրա գաղափարներին և այժմ էլ տրամադիր են զոհվելու դրա պաշտպանություն համար: Հայությունն, իր բոլոր կուսակցություններով, որևէ անջատողական ծրագիր չունի: Թուրք գործիչները և ժողովուրդը պետք է մինչ այսօր համոզմունք ունենային, որ հայոց անկեղծությունը օսմանյան հայրենիքի հանդեպ անուրանալի ճշմարտություն է: Կիլիկիայի հայությունը նույնպէս, իրեն հայ ազգի կարևոր հատվածը, ուրիշ նպատակ չունի. քան իր վաճառականությունը, իր ձեռարկեստով, իր երկրագործությունը երկրի բարգավաճմանն օժանդակել: Սրբազանը գրում էր. «Ատանայի եւ շրջակայ-

քի պաշտօնական շրջանակները եւ իրենց կամակատար ոճրագործները, եթէ քիչ մը դատողութեան տէր եղած ըլլային, այդօրինակ ձրի եւ շնական ամբաստանություններ պիտի չուզէին ինքզինքնին ծիծաղելի դարձնել, խորհելով թէ ապստամբությունն ապստամբութեան ժողովուրդը պիտի չուզէր ջարդի առտուն իր այնքան սիրած գաւակները արտերն ու այգիները դրկել, դանոնք թուրքերու զնդակին ու սուրին նշուակ ընելու համար, պիտի չուզէր իր վարժարանները բանայ, իր հաղարաւոր անմեղ մանուկները վայրագութեան որս ընելու համար, ու պիտի չուզէր մանաւանդ այդ տեսակ երեւակայական ապստամբությունն մը դրօշակը պարզել անանկ ժամանակ մը, երբ իր հարստությունը դաշտերու եւ այգիներու մէջ կը հասուննար, եւ երբ եղանակին բերմամբ 60-70000 թուրք, քիւրտ գործաւորներ ներքին գաւառներէ Ատանայի դաշտը թափած՝ կու գային իր թշնամիին արդէն ահաւոր թիւը կրկնապատկելու»³:

Նույն փաստն օրինակ բերելով. «Արեւելքի» խմբագիրը տրամաբանում էր, որ եթէ հայերը ապստամբելու կանխամտածում ունենային, բնականաբար, այնքան շատ ազգակիցներ անզեն չէին գնա այգիները, և եթէ գնային դինված, այդ դեպքում վերադարձին չէին խողխողվի անգութ խուժանի կողմից, շրջակա գյուղերից Աղանա եկած հայերին զենք կտային, եթէ ոչ խանութների ապրանքը, ապա գոնե ունեցած դրամները, եղած դարդեղներն ու զոհարեղներ և այլ արժեքներ կպահանջեն աննշմարելի, ապահով տեղերում: Ո՞վ է տեսել, որ ջարդի կազմակերպիչները ապաստանեն տներում կամ թաքնվեն չինությունների անկյուններում, իսկ ջարդի ենթարկվողները նախահարձակ լինեն: Վերջապէս՝ ինչո՞ւ հայերը ջարդվեցին և հայոց տները մոխիր դարձան, իսկ թուրքերի և քրդերի տները կանգուն մնացին»⁴:

«Բիւզանդիոնը» հարց էր տալիս. «Ենթադրենք այս ամբաստանությունը ճիշդ է, ապա ինչո՞ւ Մուշեղ եպիսկոպոսը եւ իր ըն-

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3861, 23 Հունիսի (6 Հուլիսի) 1909 թ.:

² «Արեւելք», № 7092, 8 մայիսի 1909 թ.:

³ Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, էջ 55:

⁴ Տե՛ս «Արեւելք», № 7092, 8 մայիսի 1909 թ.:

կերները չձերբակալուեցան և յեղափոխական գաղափարը ժամանակին չխափանուեցաւ: Ասկէ դատ, քանի մը հոգիի եղևունական գաղափարին համար ո՞ր տեսնուած է որ ձեռնարկուի ամբողջ քրիստոնեաները ջարդելու»¹:

Կիլիկիայի անկախութեան համար «հայերի բարձրագրած ապստամբութեան» մեղադրանքը, դանազան հանգամանքներ վկայակոչելով, ժխտում էին նաև հայկական մամուլի ուրիշ օրգաններ թե՛ Թուրքիայում և թե՛ Կովկասում ու գաղթօջախներում:

Երիտթուրքական մամուլում չըջանաովել էր այն զրպարտութիւնը, թե Կիլիկիայի հայերը մարտի 31-ին սկսված հետադիմական շարժման հենց սկզբից միացել էին Արդուլ Համիդին և համիդականներին՝ երիտթուրքերի դէմ: Այս տխմար պատճառարանութիւնը միայն հեզնանք կարող է առաջացնել, գրում է «Արևուկը» և ավելացնում. «Բացատրութիւն չենք տար՝ այնքան յիմարական է այս ննթաղութիւնը: Կարելի է որ Աստուած միանայ սատանայի հետ, սակայն կարելի չէ, որ հայը միանայ այդ սատանաներու սատանային հետ»²:

Ապստամբութեան անհիմն մեղադրանքի առթիվ Սուրեն Պարթևյանը գրում էր. «... «Ապստամբութիւն» ... Ատանայի մէջ սա քանի մը տասնեակ հրացաններով, սա ափ մը «րեւուկ» բռնող տղաքներով, որոնց թիւն ապահովարար հարիւրով չի համրուիր, «ապստամբութիւն»՝ քառապատիկ աւելի ստուար ու բիւրապատիկ աւելի յաւ դինուած իսլամ տարրին դէմ. «Ապստամբութիւն»՝ հազարաւոր ռազմամթերք տրամադրող կառավարութեան մը դէմ. «ապստամբութիւն»՝ երբ տեսաք թէ ժողովուրդը քանի մը օրուան հացի պատրաստութիւն անգամ չունէր, քաղաքին կեղրոնը, ամէն կողմէ ձենէ պաշարուած հայնոցին մէջ ... Հո՞ղ էր, որ «թագաւորութիւն» պիտի հռչակէին Ատանայի հայերը ... Աւանդ, իրենց «թագաւոր» ցուցնողը մէջերնին չէր գոնէ...»³:

¹ «Բիւզանդիոն», № 3861, 23 հունիսի (6 հուլիսի) 1909 թ.:

² «Արևուկը», № 7097, 14 մայիսի 1909 թ.:

³ Սուրեն Պարթևյան, Կիլիկեան արհաւիրքը, էջ 63:

Ինչ վերաբերում է հայկական ազգային երկու կուսակցութիւնների՝ հնչակյան և դաշնակցութեան կոմիտեների գործունեութեանը Կիլիկիայում, ապա այն երբեք դուրս չէր եկել օրինականութեան սահմաններից: Հայկական կուսակցութիւնները, որոնք համիդյան ուժի մի տակ իսկ անկախութեան հասնելու, թագաւորութիւն ունենալու երազ չէին փայփայել, այլ միայն տարրական բարեկարգութեան իրականացման էին ձգտել, Օսմանյան հեղափոխութիւնից հետո հանդիսաւորապես հրաժարվեցին այդ համեստ պահանջից անգամ:

Նրանցից ամեն մեկն իրրև առաջին սկզբունք ուներ Օսմանյան կայսրութեան անբաժանելիութիւնը: Ինչպես նախկինում, նույնպես և օսմանյան կիսակատար սահմանադրութեան հռչակումից ի վեր որևէ անջատողական շարժում կամ գաղափար չի նկատվել նրանց գործելակերպի մեջ: Ապակենտրոնացման նրանց քարոզած գաղափարը ոչ թե անջատողականութիւն էր, այլ բազմազգ կայսրութեան հետագա զոյութեան միակ գրավականը*:

Հայկական կուսակցութիւններին որպես ապստամբութեան կազմակերպիչների ներկայացնելու բոլոր փորձերի անհիմն լինելը հայկական մամուլի օրգանները ժխտում էին բազմաթիվ որոշակի փաստերով: Օրինակ՝ նրանք ցույց էին տալիս, որ, ասենք, Հաճրնում կուսակցական որևէ կազմակերպութիւն չկար: Դեռ թե՛ Յուլում հնչակյան և դաշնակցական կազմակերպութիւններ կային, բայց դրանք զինվորական որևէ ուժ չէին ներկայացնում: Թեև Ազանայում այդ երկու կուսակցութիւնները զորավոր կազմակերպութիւններ ունեին և բազմականաչափ դրամ, բայց նախապես ռազմամթերքի որևէ պատրաստութիւն չէին տեսել: Նույնիսկ առաջին ջարդի օրերին հայկական թաղերը պաշտպանող 100-120 երիտասարդների թվում միայն 30-40 կուսակցականներ կային, թեև երկու կուսակցութիւնների անդամների թիվը քաղաքում մոտ 1000-ի էր հասնում: Միայն հնչակյանները Տարսոնում ունեին կազմակերպութիւն, որի դե-

* Նշենք, որ հայկական ազգային ազատագրական պայքարը Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրութեանից անջատելու նպատակ չի հետապնդել ընդհանրապես, այլ՝ բարենորոգումների է ձգտել:

կավարր զոկտ. Թումանյանն էր: Նա առաջիններից մեկն էր, որ ճահիճների միջով փախուստի դիմեց՝ իր հետ ունենալով իր կուսակիցների մի խումբ, որի անդամներից որևէ մեկը զենք չպարպեց: Մերսինում հնչակյանների ղեկավարը Համբարձում Տեր-Մարտիրոսյանն էր, զաչնակցականներին՝ Գևորգ Քեչիչյանը, ռամկավարներին՝ Մարտիրոս Մոստիչյանը, որոնք առաջին իսկ առիթով փախան և ապաստանեցին օտար չոզենավերի վրա: Կիլիկիայի ուրիշ տեղերում կուսակցական կազմակերպություններ չկային, թեև կային առանձին կուսակցականներ:

Ահա այս իրողությունները բավական էին հաստատելու, որ հայկական կուսակցությունների՝ ապստամբություն կազմակերպելու որևէ գաղափար գոյություն չի ունեցել:

Այո՛, հայ կոմիտեներն ունեցել են միամիտ սխալներ, կատարյալ թեթևամտություններ կարծելով, թե երկրում իսկապես հաստատվել են ազատության և հավասարության սահմանադրական կարգեր, որոնց պայմաններում ցույցեր, հանրահավաքներ, ժողովներ կազմակերպելն ու անցկացնելը սովորական բաներ են դիտվում: Կոմիտեների ազդեցություն տակ գտնվող հայ «տղերքը», իրոք, Օսմանյան հեղափոխությունից հետո առաջին ամիսներին Ադանայում և Կիլիկիայի ուրիշ քաղաքներում դուրս գալով փողոցներ՝ մանկական միամտություններ գում էին ազատաշունչ երգեր, ցույց տալիս, թե իրենք երեկվա զահիճներից այլևս վախ չունեն: Բայց մի՞թե պատանեկան-երիտասարդական այդ անմեղ պարծենկոտությունը, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ երկարատև ճնշումներից ու շղթաներից միանգամից ձերբազատված ժողովրդի հոգու բնական պոթիվում ու արտադեղում, պետք է պատճառ դառնար Ադանայի սոսկավիթխար հրեշտություն: Չէ՞ որ «պոռալեն, կանչուրուտելեն, սոնքալեն պիտի յոզնէին տղաքը, - գրում էր Սուրեն Պարթևյանը: - Ազմուկը հետզհետէ պիտի դադրէր, պիտի հատնէր ինքնին, եւ ամէն մարդ իր բանին-գործին պիտի բլլար: Կ'երևի թէ այսքան մը քաղաքական իմաստություն Թուրքիոյ նոր վարիչներէն սպասելն ալ տարապայման խստապահանջություն մըն է մեր կողմէն»¹:

¹ Սուրեն Պարթևյան, Կիլիկյան արհաւիրքը, էջ 67-68:

Որքան էլ շատ լինեին հայկական կոմիտեների մարտավարական սխալները, բացարձակապես կասկածից վեր էր նրանց հայտարարությունների անկեղծությունը, որոնցով ամեն անջատողական ձգտում ու ամեն դավադրական-ապստամբական առաջադրություն մերժում էին: Այլ խոսքով, հայկական կուսակցությունները և Կիլիկիայում նրանց կոմիտեները եթե իրենց գործունեություն մեջ ինչ-որ թերացումներ էին դրսևորել մարտավարական հարցերում, ապա ռազմավարության մեջ նրանց վարքն անբասիր եղել էր:

Իր մտորումները թղթին հանձնած Ս. Պարթևյանը շարունակում էր. «Բայց եթե կառավարությունը սահմանադրությունն ու ազատությունն չեն գիտէր ինչ ըմբռնումով կասկածելի կամ վնասակար կը գտնէր քոմիթէներու գոյութիւնն ու գործունէութիւնը, ինչո՞ւ թոյլ տուաւ Թուրքիոյ մէջ անոնց մուտքը: Եւ եթէ վերջէն անդրադարձաւ այդ անգոյ վտանգին վրայ՝ ինչո՞ւ իր խստութիւնները միմիայն քոմիթէներուն չի սահմանեց: Ի՞նչ կ'ուզէին խաղաղ ժողովուրդէն, ի՞նչ կ'ուզէին կիներէն ու ծերերէն ու երախաներէն»¹:

Հիրավի, կուսակցությունների կամ դրանց կոմիտեների հետ ի՞նչ առնչություններ ունեին քաղաքականությունից անտեղյակ հազարավոր եղբարբայտ հայերը: Ո՞ր կոմիտեի հետ էր գործ ունեցել պատուհասի ենթարկված տիկին Պուլտուզյանը, որին խաչեցին, կրակի բոցերի մեջ նետեցին ամուսնուն, որի ստինքները կտրատելուց հետո տվեցին դավակների ձեռքը, ապա մոր աչքերի առջև նրանց մեկիկ-մեկիկ մորթեցին: Այդ ամեն սարսափներից հետո խելագարության հասած ու հոգեվարքի մեջ գտնվող մորը զահիճները ծանակեցին՝ նրա երեսին պոռալով. «Դե՛, իջի՛ր ու ազատի՛ր յակոտներից»: Հապա ահոեյիորեն դժբախտ տիկին նաջարյա՞նը, որի ձեռքում դանակ զրեցին և այդ անկար ձեռքն իրենց գաղանի մագիլների մեջ բռնած՝ ստիպեցին, որ մայրը խողխողի իր դավակներին: Ի՞նչ գաղափար ունեին տիկինն ու նրա դավակները հայկական կուսակցու-

¹ Սուրեն Պարթևյան, Կիլիկյան արհաւիրքը, էջ 66:

Թյունների ու նրանց կոմիտեաների գործունեության մասին...:

Զարդից փրկված հայերը հարց էին տալիս՝ սա¹ էր «հայ-թուրքական եղբայրությունը», որ այնպես եռանդազին տարփողում էին որոշակի հայկական քաղաքական ուժեր, մամուլի օրգաններ, հատկապես դաշնակցություն կուսակցության ղեկավարները, կուսակցության թերթերն ու հանդեսները: Իրականում՝ թուրքերն այնպես էլ բանի տեղ չղրեցին այդ «եղբայրության» արժեքը, դույզն անգամ չղգացին, թե ինչ անդամանելի բան է Կիլիկիայի կոտորածը, ավելին, «փոխանակ արցունքոտ աչքերով մեր խոցոտուած սրտերն ողորելու՝ խեթի կր նային հայերուն», և այդքանից հետո հիմա էլ ատամ են կրճտացնում գոհերի ղեմ²:

Հայերի մեծ մեղքը եղել էր անկեղծորեն ու միամտությամբ սահմանադրությանը բոլորանվեր տրվելը: Այդպես է եղել նաև Աղանայի հայոց առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսի պարագայում, որն օսմանյան սահմանադրության վերականգնումից հետո Կ. Պոլսից Աղանա մեկնելուց առաջ², 1908 թ. հոկտեմբերի 28-ին, հինգ կեսից բաղկացած հատուկ գրությունը դիմել էր նահանգի հայությանը, շեշտելով թուրքերի և հայերի միջև անկեղծ համերաշխություն հաստատելու անհրաժեշտությունը: Իր թեմի հավատացյալներին նա մասնավորապես հանձնարարել էր. «Տեղույդ թուրք ժողովուրդներու հանդէպ բարեացակամ տրամադրութիւններ ունենաք: Իրաւ է թէ անոնք ասկէ առաջ մեզի շատ ու շատ զրկումներ րրին, բայց անոնք պատասխանատու չէին իրենց բրածներուն: Երլտրդի արիւնարրու խմբակը եղած է այդ կատարուած բոլոր ոճրագործութիւններուն հեղինակը: Մէկ կողմ թողունք վրէժխնդրութեան զգացումները, որովհետեւ եթէ բռնապետութեան արգասիքը վրէժխնդրութեան զգացումն եղաւ, ազատութեան պտուղը սէրն է, և իբրև մէկ Հայրենիքի գաւակ ապրինք թուրքերուն հետ, որչափ ատեն սահմանադրասէր ըլլան անոնք: Եւ սիրով և համերաշխութեամբ ինքզինքնիս

նուիրենք մեր երկրին, մեր Օսմանեան Հայրենիքին յառաջդիմութեանը»¹:

Գրութեամբ սրբազանը վստահություն էր հայտնում, թե հին ուժիմի ներկայացուցիչներին երբեք չի հաջողվի սահմանադրական կառավարությանը հայերի դեմ հանել: Նա գրում էր.

«Ես վստահ եմ, թէ քանի որ երկրին արդի ազատական վարչութիւնը և բանակը բարեկամ են ազատութեան, այդ վատ և չահախնդիր մարդիկ պիտի չի յաջողին բնաւ իրենց չար մտադրութիւններուն մէջ: Անոնց ականջ մի՛ դնէք, և արթուն մնալով ձեր և երկրին շահերուն պաշտպանութեանը համար, ձեր գործովը պարապեցէ՛ք: Ամէն պարագայի մէջ օժանդակեցէ՛ք տեղական կառավարութեան, երկրին անդորրութիւնը պահպանելու համար: Եւ գործնապէս ցոյց տուէ՛ք, թէ Օսմանեան Հայրենիքին հանդէպ մեր տածած յարգանքը և թուրք հայրենակիցներու հանդէպ մեր բարեացակամութիւնները անկեղծ են և տեսական: ... Եթէ երբեք անհատական կամ հաւաքական զրկումներու և անիրաւութեան հանդիպիք, համարձակ և աներկիւղ դիմեցէ՛ք տեղական կառավարութեան»²:

Թեմակալ առաջնորդի գրությունը թարգմանվել էր թուրքերեն և ուղարկվել Աղանայի նահանգի մուսուլման կրօնական պետերին, իսկ հայերեն բնագիրը կարդացվել էր հայկական բոլոր եկեղեցիներում և տպագրվել հայ մամուլում:

Ռազմական ատյանի ապօրինի գործողությունները համբերությունից հանել էին Աղանայի քրիստոնյա հոգևոր պետերին, որոնք գլուխ-գլխի տալով որոշեցին միջամուխ լինել դատական գործընթացին: Այդ նպատակով համատեղ կազմեցին միասնական մարմին, որի կազմի մեջ մտան հայ կաթոլիկների առաջնորդ Պողոս եպիսկ. Թերոյանը, ասորի կաթոլիկների պատրիարքական փոխանորդ Փիլիպոս Շազգայ քահանան, քաղղեացիների պատրիարքական փոխանորդ Իստեֆան Մաքսարուհ քահանան, հայոց առաջնորդական փոխանորդ Արսեն քահանա

¹ Մուշեղ Գարթեան, Կիլիկեան արհաւիրքը, էջ 67-68:

² Տե՛ս «Բիւզանդիոն», № 3855, 16 (29) հունիսի 1909 թ.:

¹ Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը և պատասխանատուները, էջ 27-28:

² Նույն տեղում, էջ 28:

Եմենի՝ ճայ ավետարանականների հոգևոր հովիվ վերապատվելի Համբարձում Յ. Աչճյանը, հին (Հակոբիկյան) ասորիների պատրիարքական փոխանորդ Մանսուր քահանան, հույն ուղղափառների առաջնորդական փոխանորդ պապա Ավրամ քահանան¹ հույն կաթողիկոսների հոգևոր հովիվ Իլիաս քահանան:

Կրոնապետների այդ խումբը մայիսի 7 (20)-ին զինվորական ատյան ուղարկեց 15 կետից կազմված բողոք, որը, սակայն, որևէ ուշադրություն չարժանացավ:

Ինչպես նշված կրոնապետները, այնպես էլ տարրեր կազմակերպությունների ղեկավարներ ու մասնավոր անձինք ռազմական ատյանի անարդար քննությունների ղեմ բողոքի բազմաթիվ հետագրեր հղեցին Կ. Պոլիս՝ սուլթանին, մեծ վեղիրին, պառլամենտի նախագահին, ներքին գործերի նախարարին, բայց այդ բոլոր բողոքները նույնպես մնացին անհետևանք:

Կ. Պոլսի հայոց ազգային իշխանությունները ռազմական ատյանի որոշումներն անօրենն էին համարում: Դիմելով կառավարությանը և պառլամենտին՝ պահանջում էին չեղյալ հայտարարել նրանց ու ներքին գործերի նախարարության հանձնախմբերի ընդունած որոշումները, կազմել նոր հանձնախմբեր ու նոր ռազմական ատյան՝ անկողմնակալ քննություններ կատարելու համար: Բայց կենտրոնական իշխանությունները, ինչպես և սպասելի էր, որևէ ուշադրություն չդարձրին այդ պահանջին: Նրանք, ինչպես նաև թուրք հասարակայնությունը, զնայով ավելի եռանդուն պաշտպանություն տակ առան ռազմական ատյանի գործունեությունը:

Թերևս բացառություն եղավ մեծ վեղիր Հուսեին Հիլմի փաշան, որը նախարարների խորհրդի աշխատանքային ծրագրերի կատարման մասին մայիսի 11-ին հանդես գալով պառլամենտում, անդրադարձավ նաև Կիլիկիայի աղետին, և, ըստ էության, հայերին անմեղ համարեց, միաժամանակ ջարդերի զլխավոր պատասխանատու գտավ տեղի պաշտոնյաներին:

Մեծ վեղիրը խնդրին կրկին անդրադարձավ հունիսի 1-ին,

¹ Տե՛ս Սուրէն Պարթևեան, Կիլիկեան արհաւիրքը, էջ 116:

հատուկ հայտարարություն, որ չեղյալ էր. թե բացահայտ կերպով ապացուցված է, որ հայ ժողովուրդը օսմանյան մեծագոր կառավարության հանդեպ իր ունեցած հավատարմությունից երբեք չի շեղվել²: Վերջապես, նա խնդիրը շոշափեց նաև հուլիսի 31-ին հրապարակած հատուկ հայտարարություն, ասելով, թե կատարվածի մեջ հայերը մեղավորություն չունեն³:

Հիլմի փաշայի այդ ելույթից հետո կառավարությունը աջ ու ձախ մի շարք հրամաններ արձակեց արդեն վերը նշված մի քանի ոճրագործների (Մեհմեդ Ջևադ բեյ, Մուստաֆա Ռեմզի փաշա, Իհսան Ֆիրրի, Մեհմեդ Ասաֆ էսադ բեյ և այլք) ձերբակալման մասին, որը թեկադրված էր եվրոպական կարծիքի առջև սահմանադրական պետության վարկն ու պատիվը փրկելու, այլ ոչ թե հանցագործներին արդար դատելու մտահոգություն:

Հայերի կոտորածներին՝ կառավարության նույնիսկ կիսատպատ արձագանքը խիստ դժգոհություն առաջ բերեց առավել անդիմում իթիհադականների մոտ, չխոսելով արդեն միապետականների մասին:

Մի քանի ոճրագործների ձերբակալման Հիլմի փաշայի կառավարության նույնիսկ ձևական հրամանները խիստ քննադատության ենթարկեց Աղանայի եղեռնահիշատակ «Իթիդալ» թերթը, որին ձայնակցեցին մի շարք թուրքական պարբերականներ: Այսպես, իր խմբագրությունը Պոլսի մերձակա Գազր գյուղում, հայոց ս. Թագավոր եկեղեցու դիմաց հաստատած «Նեջաթ» թուրքական թերթը կառավարության «հայանպաստ» գործողությունների առթիվ գրում էր, թե որևէ մուսուլման չպետք է դատվի, քանի որ հայերը ապստամբությունը բարձրացրել են Կիլիկիան կայսրությունից անջատելու համար, որ, իրր, ապստամբությունից առաջ նրանք բաժանել էին իրենց հին թագավորության դրոշները՝ ոչխարի զլխի պատկերներով³ և դա, իրր, իսլամների կտրված գլուխներն էր խորհրդանշում:

¹ Տե՛ս Վեր. Համբարձում Աչճեան, Ատանայի եղեռնը... էջ 56:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 2, նաև՝ Բիզանդ Նիլայեան, Ատանայի հայոց պատմություն, Անթիլիաս, 1970, էջ 263:

³ Տե՛ս Սուրէն Պարթևեան, Կիլիկեան արհաւիրքը, էջ 116-117:

Օսմանյան հեղափոխության իղեպաններին անվերապահ հա-
վատ բնծայած հայությունը պարզ էր դարձել, որ «սահմանա-
դրական» Թուրքիայի պաշտոնեությունը և մոլեռանդ իսլամու-
թյունը ղեկ մաղի չափ անգամ հաչտված չեն սահմանադրու-
թյան ոգու հետ: Հայացքների միջև արմատական տարբերու-
թյունները նոր կնճիղներ հրապարակ հանեցին երիտթուրքերի և
հայկական քաղաքական ուժերի հարաբերություններում:

«ՀԱՆՑԱԳՈՐԾ» ՀԱՅԵՐԻՆ ՊԱՏԺԵԼԸ

Չբավականանալով ոճրի պատասխանատվությունը ամբողջ
հայություն վրա ծանրացնելով՝ ռազմական ատյանը ամեն կերպ
ջանում էր ստեղծել նաև մտացածին ապստամբություն անձ-
նական պատասխանատուներ և նրանց առաջին հերթին փրկու-
թյուն էր հնչակյան և դաշնակցական կուսակցությունների շար-
քերում:

Հարցաքննությունների կանչված հայերին ձերբակալում էին
ամեն տեսակ սուտ վկայություններով: Այդ «վկայությունները»
ռազմական ատյանն ընդունում էր որպես անառակելի ճշմար-
տություններ: Հարցաքննողները «վկաների» պակաս չունեին
իսլամների շրջանում: Նրանք «վկաներ» գտան նաև մորթա-
պաշտ հայերի միջավայրում: Անհանդուրժելի ստորացում և ան-
սփոփելի կսկիծ էր, որ ռազմական ատյանը կարողացել էր
հավաքագրել այդքան շատ դավաճանների, որոնք զանազան
առասպելներ ու վարկածներ հնարելով՝ մատնում ու դրպար-
տում էին մեղադրյալներին ու ողջերին: Նրանց տված սուտ ցուց-
մունքներով՝ քննիչները ձերբակալվածներին բռնի միջոցներով
ստիպում էին ստորագրել նախապես կազմած արձանագրու-
թյունների տակ, որպեսզի կոտորածների պատասխանատվու-
թյունը բեռնեն հայություն ուսերին: Տասնյակ անմեղ մարդիկ
այդպիսի «վկայություններով» ամեն օր ձերբակալվում ու դա-
ժան կտտանքների էին ենթարկվում:

Բարոյական այլասերման այս երևույթը ռազմական ատյանը
բարձր գնահատեց: Կենտրոնական կառավարությունն ուղար-

կած տեղեկագրերի մեջ նա գովեստով էր հիշատակում «ան-
գնահատելի» ծառայություն մատուցող փոժվածք մատնիչներին:
Ատյանի որոշմամբ՝ դավաճաններն իրենցից կողոպտված ունեց-
վածքի մի մասը հետ ստացան:

Ժամանակավորապես ձերբակալված իսլամները պահվում
էին ձերբակալված հայերից առանձին: Կայանավորված հայերի
անտանելի փճակը մոտիկից ղննող Զապել Եսայանը, գրում էր.
«... Մերինները դիրին է որոշել, ամէնքն ա՛յ չղթայակապ են ...
Ամէնքն ա՛յ, այո՛, նոյնիսկ խեղճուկ քահանայ մր. ու մինչ թուրք
բանտարկեալները ազատ էին իրենց շարժումներուն մէջ, հայե-
րը խստութեամբ կապուած են չղթաներով»¹:

1909 թ. մայիսի 26 (հունիսի 7)–ին Հակոբ Պապիկյանը հե-
տևյալ հեռագիրն է ուղարկում մեծ վեղիր Հիլմի փաշային. «Կր
խնդրուի Ձեր վսեմություննէն, որ բարեհաճիք յետաձգել Պատե-
րազմական Ատենի վճիռներուն գործադրութիւնը՝ մինչև որ
մեր քննութիւնը աւարտի: Յակոբ»²: Բայց հեռագիրը որևէ նշա-
նակություն չունեցավ: Պատժական օրենսգրքի 56-րդ հոդվածը
վկայակոչելով՝ ռազմական ատյանը մահվան դատապարտեց 12
հայի, որոնցից մայիսի 28 (հունիսի 11)–ին Աղանա քաղաքում
կախաղան հանվեցին 6 աղանահայեր՝ Հովհաննես (40 տարե-
կան), Հարություն (26 տ.) և Կարապետ (24 տ.) Պուլտուզյան
եղբայրները, Ղասար (մսագործ: – Հ. Ս.) Միսաքը (Սարգիսյան,
28 տ.), Ուաչիկ (Ուաչո) Կարապետյանը (24 տ.) և Գևորգ Չենե-
սիզյանը (50 տ.)³: Նրանք բոլորը մսավաճառներ էին և սուտ
վկայություններով մեղադրվել էին, որ, իբր, քաղաքի Բողլու
խան պանդոկին մեջ թուրքեր են սպանել: Իրականում, նրանց
«հանցանքն» եղել էր այն, որ ճիգ էին արել իրենց և մտերիմների
կյանքը պաշտպանել: Կ. Պոլսի ազգային իշխանությունները
մահապարտների ինքնությունն իմացան մահապատժի գործադ-
րումից հետո միայն⁴:

¹ Զապել Եսայեան, Աւերակներուն մէջ, էջ 214:

² «Ատանայի եղևոնք: Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի», էջ 48:

³ Տե՛ս «Դաշինք» (Իլմիր), № 228, 5 (18) մայիսի 1910 թ.:

⁴ Տե՛ս «Բիզանդիոն», № 3850, 10 (23) հունիսի 1909 թ.:

Մահվան դատապարտված մյուս հայերը հաճրեցիներ էին՝ Գարեգին Աճեմյանը (24 տ.), Հրանտ Պիրլայանը (27 տ.), Զատիկ (28 տ.) և Սարգիս (32 տ.) Զգրրգյան եղբայրները, Ասատուր Փաշափանտյանը (15 տ.) և Նադարեթ Շխրտմյանը (28 տ.): Վերջին չորսի մահվան պատիժը փոխարինվեց ցմահ բանտարկությունով՝:

Մայիսի 28-ին աղանահայ վեց մահապարտներին կախաղան հանեցին Ազանա քաղաքի երեք կենտրոնական տեղերում՝ կամրջի մոտ, Բուդղա բաղարում և երկաթուղային կայարանում:

Մսազործ Միսաք Սարգիսյանին կախելու տարան կամրջի մոտ: Տեղ հասնելով՝ նա տեսավ կախաղանը և դրա մոտ կանգնած մի հայ քահանայի, որին թուրքերը բերել էին, որպեսզի մահապարտը նրան խոստովանի իր մեղքերը: Երբ քահանան սկսում է մխիթարելու փորձեր անել, Միսաքը նրան կանխում է, ասելով. «Տե՛ր հայր, անմեղ կը կախուիմ, յանցանք չունիմ: Խընդրանքս է, որ ազգս ընտանիքիս տէր կանգնի: Մերունի անտէր մայրս, կինս և զաւակներս կը յանձնեմ ազգիս խնամքին...»²:

Երբ Միսաքը բարձրանում է կախաղանի տակ դրված աթոռի վրա, չրջակա տների պատուհաններից մի քանի բարեսիրտ թրքուհիներ, որոնք տարաբախտ երիտասարդին լավ գիտեին, դինվորներին բարձրաձայն աղաչում են. «Մեղք է Միսաքի երիտասարդությունը, խղճացէ՛ր Աստուծոյ սիրոյն, այդ աննման տղային»³: Աղանայում չկար մեկը, որ չճանաչեր բարհամբույր, քաղցրալեզու Միսաքին: Երբ պարանն անցկացնում էին մահապարտի վիզը, նա, դառնալով դինվորների գլխավորին, խնդրում է իրեն թույլ տալ ոտանավոր ասել: Ու նա յայահառաջ ձայնով թուրքերեն և արաբերեն ասում է իր մահվան՝ սիրտ ճաքեցնող երգը՝, ապա դինվորների գլխավորին ասում է. «Գրպանս մեծիտիչէ մ'ունիմ, վաղն առտու այս դրամով երկու սնտուկ կաղող (դովացուցիչ ջուր: - Հ. Ս.) առ և մէկը մեր եկեղեցւոյ դուռը, միսը մզկիթին դուռը տանելով հայրենակիցներուս խմեցուր իմ հոգ-

ւոյս համար: Իսկ սա կօշիկս ու ֆէսս մօրս տուր, ուրիշ բան չունիմ անոր տալիք: Ասոնց վրայ թող նայի և յիշէ իր Միսաքը: Մնաք բարով կ'ըսեմ ամէննուր և անմեղ կը մեռնիմ...»⁴:

Հետևյալ օրը քաղաքում կայծակի պես տարածվեց Միսաքին մեղցնելու շանթահարիչ յուրը, ցնցելով հայերի առանց այն էլ նվազած սրտերը: Ականատեսը գրել է. «Փարթամ կաղծով Միսաքը կը ճօճուէր օդին մէջ ... Անոր անշունչ դիակն իսկ սարսափ կ'ազդէր թշնամիներուն: Հետաուր գիղացիներ անգամ վաղած եկած էին տեսնելու Ատանայի անուանի կտրիճ Միսաքը կախաղանի վրայ»⁵:

Նույն պահին Բուդղա բաղարի հրապարակի վրա կախվեցին Պուլտուզյան երեք եղբայրները: Նրանցից երկուսը դինվորներին աղաչեցին իրենց կախել նույն վայրկյանին՝ միմյանց տանջանքները չտեսնելու համար: Այդպես էլ եղավ:

Մյուս երկու հայերին կախեցին երկաթուղային կայարանի մոտ, բրիտանական հյուպատոսարանի ուղիղ դիմացը: Նրանց վերջին աղաղակները եղան. «Օգնութիւն, տէ՛ր հիւպատոս», բայց սա նախապես արդեն տեղյակ էր մահապատժին և պատրչգամրից հանգիստ դիտում էր. թե ինչ է կատարվում:

Ականատեսն այնուհետև գրել է. «Կախաղաններու վրայէն ... փայտացած դիակները վար առնելով, աղբի կառքերով փոխադրուեցան զերեղմանատուն, որոնց ետևէն կ'երթային կախաղան ելլողներուն ազգականներն ու բարեկամները և անթիւ հայեր՝ լաց ու կոծելով: Մանաւանդ Պուլտուզեան երեք եղբայրներուն և Միսաքին մայրերը խելակորոյս փիճակով, մաղերնին կը փեթտէին և քարերով կուրծքերնին կը ձեծէին գոռում-գոչումներով, որոնց հանդէպ չի յուզուող և չի լացող մարդ չի մնաց»⁶:

Ինքնապաշտպանության ժամանակ մի թուրքի սպանած և մահվան դատապարտված հաճրեցի Գարեգին Աճեմյանին էր դինում կախաղանի մոտ բերեցին Բախչեի մուֆթի Իսմայիլի հետ, որը նույնպես մահվան էր դատապարտվել: Գարեգինն

¹ Տե՛ս **Ցակոր Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 377:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 16, թ. 4 (թերթի կտրոն):

³ **Ցակոր Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 285:

⁴ Երգի հայտատու թուրքերեն չարադրանքն ու հայերեն թարգմանությունը տե՛ս «Աղղակ» բացատիկ (Բեյրութ), 1 հունվարի 2009 թ., էջ 133:

¹ **Ցակոր Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 285:

² Նույն տեղում, էջ 390:

³ Նույն տեղում, էջ 391-392:

իրեն պահեց խիղախարար, իրավ հայի արժանատուությունը: Իրեն մտտեցած քահանային նա խնդրեց աղոթել իր հոգու համար, որից հետո կատարյալ սառնասրտությունը բարձրացավ աթոռի վրա ու գոչեց. «Կեցցե՛ք արդարությունը, կեցցե՛ք ազատությունը, կեցցե՛ք ազգս»: Ապա ինքն իր ձեռքով պարանը հագցրեց իր պարանոցին և կողքին կանգնած զինվորին պատվիրեց ոտքի տակից քաշել աթոռը: Քիչ անդին, տեսնելով այդ ամենը, ճիվաղ թուրք մուֆթին գոռու՝-գոչումներով իրեն զետնին էր տալիս, լաց ու աղաղակով խնդրում խնայել կյանքը, բայց իզուր: Գետնին թավալվող և կյանք աղերսող ոճրագործին զինվորները բռնի ուժով քարշ տվին ու կախաղան բարձրացրին:

Անմեղ հայ երիտասարդներին կախաղան բարձրացնելը նոր հուսախարություն և հուսալքություն առաջ բերեց հայերի մոտ: Կ. Պոլսի հայոց պատրիարք Եղիշև արք. Գուրյանը Ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Իղմիրյանին գրում էր. «Կառավարությունն կամ պատերազմական ատեաններու բռնած ընթացքը յուսախար կը թողու զմեզ արդար արդիւնք մը ձեռք բերելու մասին, եւ չկրնայով այդ պայմաններով օգտակար ըլլալ իմ պաշտօնի մէջ, կը հրաժարէի...»¹:

Այս 12 հայերից բացի, հեռակա կարգով մահվան դատապարտվեց նաև Աղանայի հայոց առաջնորդ Մուշեղ եպիսկ. Սերոբյանը: Նրան մեղադրանք էր հարուցվել, որ, իբր, «ապստամբություն զլխավոր կազմակերպիչներից» և հայկական հեղափոխական կուսակցություններից մեկի տեղի կազմակերպության ղեկավարն է:

Մուշեղ սրբազանին ռազմական ատյանը ներկայացրել էր որպես խոտվարարի ու ապստամբության քարոզչի: Այդ անձնությունը թափանցել էր Փարիզի «Ֆիգարո» և «Ժուռնալ» պարբերականների էջերը, որոնց ձայնակցել էր «Թան» լրագիրը՝ մի ծանրախոհ խմբագրականով:

Մուշեղ եպիսկոպոսը երիտասարդ էր, հնչակյան, ապա՝ վերակազմյալ հնչակյան հայտնի գործիչ²: Նա արդուհամիդյան

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 3:

² Վկայությունը՝ Աղանայի հայոց առաջնորդարանի 1905-1915 թթ. քարտուղար Քերովրե Փափաղյանի. տե՛ս **Բիւզանդ Եղիայեան**, Ատանայի հայոց պատմություն, էջ 296:

չարիքի ժամանակ հաջողել էր թե՛ սրբազանը և՛ հին, և՛ նոր ուժերի ժամանակ նպաստել էր համայնքի տնտեսական ու մտավոր վերելքին՝ իրեն հանձնված հոտի խաղաղ զարգացումն ապահովելով:

Երիտասարդ սրբազանը և՛ հին, և՛ նոր ուժերի ժամանակ նպաստել էր համայնքի տնտեսական ու մտավոր վերելքին՝ իրեն հանձնված հոտի խաղաղ զարգացումն ապահովելով:

«Ֆիգարո» թերթի թղթակիցը գրել էր, թե Մուշեղ սրբազանը ջարդերի միջոցին փախել է Կիլիկիայից: Իրականությունը, սակայն, այն էր, որ աղետից գրեթե մեկ ամիս առաջ զնացել էր Եգիպտոս, որպեսզի այնտեղ հայ ունեւորներից գումար հայթայթի՝ լրացնելու համար Աղանայում երկրագործական վարժարան բացելու համար ստեղծված դրամագլուխը³: Առաջին ջարդի գույժն առնելուն պես, պարտականության թեյադրանքով, սրբազանը մեկնեց Աղանա, բայց թուրքական իշխանությունները խիստ արգելեցին նրա մուտքը նահանգ, և նա, ստիպված, Ալեքսանդրիա վերադարձավ⁴:

Մուշեղ եպիսկոպոսը Ալեքսանդրիայում էր, երբ Աղանայի նախկին նահանգապետ Ջևադ բեյն իր հերթական դրապարտագրով տարածել էր այն սաղրանքը, թե Աղանայի հայոց առաջնորդի «թեյադրությունները պատճառ եղան, որ հայերը բորբոքվեցին ու լարվեցին իսլամ ժողովրդի և կառավարության դեմ», ուստի վերջինս Ալեքսանդրիայից 1909 թ. մայիսի 14-ին պատասխան գրեց⁵: Սրբազանը նշում էր, որ ոճիրներ կատարելուց հետո, բորենու «խղճմտանքով» օժտված արարածներից

³ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3818, 21 ապրիլի (4 մայիսի) 1909 թ.:

⁴ Տե՛ս նույն տեղում, № 3861, 23 հունիսի (6 հուլիսի) 1909 թ.:

⁵ Մուշեղ եպիսկոպոսի մասին հետազոտում նույնպիսի կարծիք է հայտնել Աղանայի կուսակալ, երիտթուրքերի պարագլուխներից Ահմեդ Ջեմալ փաշան, գրելով, որ շատ է ափսոսում, որ չի կարողացել նրան բռնել և Բախչեի մուֆթի կողքին կախաղան հանել (տե՛ս **Ջեմալ փաշա**, Հայկական հարցը, Երևան, 1927, էջ 25, 29, նաև ՀԱԱ, ֆ. 413, ց. 1, գ. 869, թթ. 11-15, նաև՝ **Բիւզանդ Եղիայեան**, Ատանայի հայոց պատմություն, էջ 275):

⁶ Այդ պատասխանի հիմքի վրա Մուշեղ սրբազանը գրեց գրքույկ, որը որոշ ժամանակ անց լույս տեսավ Ալեքսանդրիայում՝ «Ատանայի ջարդը և

մեկի՝ Մեհմեդ Զեադ բեյի զրպարտագիրն անսպասելի չէր, քանի որ ինքնարդարացման նրա ճիգերն անհետևանք չեն մնալու: Այդ համոզմունքն ունենալով, Մուշեղ սրբադանը միամտաբար հույս էր տածում, թե «ուշ կամ կանուխ, երբ արդարութիւնը Կիլիկիոյ ահաւոր գորղեանը՝ քակել սկսի, դուք պիտի չկրնաք երբեք արդարացումի ունէջանքով սրբուիլ բիրաւոր անմեղներու արիւնէն, որուն հետքերը իբրև յաւիտենական դատակնիք դրոշմուած պիտի մնան ձեր ճակտին վրայ, որուն ետին կրկնուեցան օսմանեան հայրենիքը արիւնոտող եւ արատաւորող եղենները»¹:

Բայց ինչպես կյանքը ցույց տվեց, Մուշեղ եպիսկոպոսի լավատեսութիւնը ցնդեց օգոստոսյան ամսի պես:

Գրանից հետո էլ սրբադանը թուրքական իշխանութիւններից հեռագրով ու նամակներով խնդրում էր թույլատրել իր մուտքը Աղանա²: Չնայած դա նրան չհաջողվեց, բայց ռազմական ատյանը նրա մահվան պատիժը նախ փոխարինեց 101 տարվա բանտարկութեան³, ապա, ի վերջո, ստիպված եղավ սրբադանին անպարտ ճանաչել՝ հանցակազմի բացակայութեան պատճառով⁴:

Տասնյակ ուրիշ հայեր հնարովի մեղադրանքներով դատապարտվեցին տարրեր ժամկետներով բանտարկութեան՝ հիմնականում 10, 15, 20 տարով կամ ցմահ:

Անողոր, անագորույն վճիռները հայերի համար ազդովին դատապարտութեան հոմանիչ էին: Կատարված վիթխարի ոճրի

պատասխանատուները» վերնագրով: Գրքույկի երկրորդ տպագրութիւնը, նույն վերնագրով, իրականացվեց Բոստոնում: Առաջին տպագրութիւնը թարգմանվեց ֆրանսերեն եւ լույս տեսավ դարձյալ Ալեքսանդրիայում («Les Vêpres Ciliciennes – Les Responsabilités – Faits. Documents»)՝ Կահիրեի «Լը պրոգրես» («Le Progrès») թերթի տնօրեն կոմս Մարս դը Քոյանթոյի առաջարկով: Ֆրանսերեն այս հրատարակութեան մեջ հեղինակը փաստաթղթերի կարևոր հավելումներ էր կատարել:

¹ Գորղեան հանգույց:

² Ցակոր Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 755:

³ Մուրէն Պարթեւեան, Կիլիկեան արհաւիրքը, էջ 66:

⁴ Տե՛ս «Ախտրեան», № 47, 1 հուլիսի 1909 թ.:

⁵ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3862, 24 հունիսի (7 հուլիսի) 1909 թ.:

պաշտոնական արդարացումն ու նվիրագործումը նրանց շատ ավելի հուսահատեցնող էր, քան կոտորածը, քանզումն ու քայքայումը:

Ի հիմնավորումն իր անմարդկային գործողութիւնների, այսինքն՝ երկու ամսվա ձերբակալումներից ու դատաւարութիւններից հետո, ռազմական ատյանը 1909 թ. հուլիսի 24-ին կենտրոնական իշխանութիւններին ներկայացրեց զրպարտայի ընդարձակ տեղեկագիր, որով, բաց էութեան, կիլիկեան ջարդերի քննութեանը վերջակետ էր դնում: Ամբողջ տեղեկագիրը ծայրից ծայր լեցուն էր հայերի հասցեին չարարանութեամբ, քնն ու ոխով: 1895 թ. դեպքերից դաս չառնելով, ասված էր զաղրագրում, Աղանայի վիլայեթի հայերը, իսլամներից վրեժ լուծելու համար, տարիների ընթացքում մոտիկ եւ հեռու նահանգներից Աղանայի վիլայեթում կենտրոնացրել էին մեծ թվով իրենց ազգակիցների, այնպես որ մեկ հայ տան մեջ բնակվում էր չորսհինգ բնտանիք, որոնք չէին արձանագրվում մարդահամարի տոմարի մեջ: Իբր թուրքիայի հայերը եւ նրանց կոմիտեները ճիշտ էին բնտրել ապստամբութեան վայրը, ծովեզերք ունեցող վիլայեթում եվրոպացիների, իբրև քրիստոնյաների, շահերը բաղդատարար ավելի սերտորեն էին միահնչուած հայերի շահերի հետ:

Շարունակելով վայրարանել՝ փաստաթղթի հեղինակները գրում էին, թե վիլայեթում հայերի թվի անընդհանրապես աճին դուրսնալով նրանք սկսեցին իրենք իրենց Աղանայի տերը կարծել եւ ապստամբութիւն բարձրացրին: Այնուհետեւ փաստաթղթում թվարկվում էին բազմաթիւ սուտ, չեղած «տվյալներ»: Միաժամանակ, որևէ թիւ լսուք չէր ասվում իսլամների հասցեին¹:

Ռազմական ատյանի տեղեկագրին հետևեց Աղանայի վիլայեթի նախկին վայի Զեադ բեյի՝ կենտրոնական կառավարութեանն ուղղված նույնքան զրպարտչական տեղեկագիրը², որտեղ նա կատարվածի ամբողջ պատասխանատվութիւնը դարձյալ նետում էր հայերի ուսերին: Այս տեղեկագիրն շտապ տպա-

¹ Տե՛ս Ցակոր Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 714-741:

² Տե՛ս նույն տեղում, էջ 743-754:

գրվեց՝ թուրք բնակչության միտքը նորից գրգռելու համար:

Այն ժամանակ, երբ Ադանայում անմեղ հայերին կախաղան էին բարձրացնում և բանտերը հարյուրներով լցնում՝ պարզապես **ինքնապաշտպանություն** իրենց տարրական իրավունքը գործադրած լինելու համար, այդ նույն ժամանակ Կ. Պոլսում և այլուր ադանասպանները ցնծում էին: Մայրաքաղաքի փողոցներում և սրճարաններում հպարտություն մատնացույց էին անում այն «հայրենասերներին», որոնք Կիլիկիայի ջարդի բնթմացքում աչքի բնկնող դեր էին ունեցել: Մի առանձին պարծենկոտություն մի հրճվանքով սրանք ասում էին, թե իրենց կատարած «գործի» արժեքը գիտակցելով, իշխանություններն իրենց պաշտոնները բարձրացրել են: Արդարև, Ադանայից փոխադրված պատասխանատու պաշտոնյաներն ավելի մեծ ոռճիկով բարձր դիրքեր էին զբաղում Բուրսայում, Կոնիայում, Ադրիանապոլսում և այլուր¹: Դա հայակեր «հերոսների» հրապարակային պետական վարձատրությունն էր: Եվ այդ բոլորը կատարվում էր արդար զայրույթով լցված հայ ժողովրդի աչքի առաջ:

«Պետություն չէ սա, այլ՝ պետական սպանդանոց»², – գրում էր պոլսահայ թերթերից մեկը:

Այդ պայմաններում Հ. Յ. դաշնակցությունը, փոխանակ կիրիկյան արհավիրքներից դաս առնելու և մտածելու ազգի առողջ ուժերի հետ ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու մասին, ցավոք, թույլ տվեց հերթական կոպիտ սխալը՝ հավելյալ ջանքեր գործադրեց է՛լ ավելի ամրապնդելու երիտթուրքերի հետ ունեցած դաշինքը՝ իրը հայությունը սպառնացող հետագա «ջարդի մը վտանգը կանխելու համար»:

1909 թ. օգոստոսի 11 (24)-ին Դաշնակցությունը նոր համաձայնագիր կնքեց Իթթիհատի հետ, որտեղ Ադանայի եղևոնը ներկայացված էր որպես պատահական մի թյուրիմացություն,

¹ Տե՛ս Ստեփան Սապահ-Գիւլեան, Պատասխանատուները, Բ տպագրություն, Բեյրութ, 1974, էջ 109:

² «Ազդակ» (Կ. Պոլիս), № 17, 11 (24) ապրիլի 1909 թ.:

առանձին անպատասխանատու մարդկանց արարք, այլ ոչ թե նախապես ծրագրված պետական-կուսակցական եղևոնագործություն: Համաձայնագրի շարադրանքում կարգում ենք. «Հայրենիքի ազատությունը ապահովելու, անոր հողային ու քաղաքական ամբողջությունը մշտապես պահպանելու, կարգ մը անձներու մէջ գոյացած թիրիմացութիւնները փարատելու նպատակով, Իթթիհատ վէ Թերաքքը կուսակցութիւնը և Հ. Յ. Դաշնակցութիւնը միասին կատարեալ համաձայնութեան եկան հետեւեալ հիմնական կէտերուն շուրջ. 1) Պիտի աշխատին սահմանադրութիւնը կիրառել և պիտի պայքարին միացած ույժերով, խնայելով ոչ մէկ ղոհողութիւն, 2) Յեղաշրջական շարժումներու հաւանականութեան դէմ, օրէնքին թոյլատրած բոլոր կարելիութիւններու սահմանին մէջ, պիտի գործեն միասնաբար, հաստատակամութեամբ և որոշ ուղղութեամբ, 3) Օսմանեան նուիրական հայրենիքը անջատումէ և բաժանումէ զերծ պահելու երկու կազմակերպութեանց միացած գործունէությունն նպատակակէտը ըլլալով, պիտի աշխատին գործնականապէս ցրուել հանրային կարծիքին մէջ բռնակալ ուժիմէն ժառանգ մնացած զրոյցները, թէ հայերը անկախութեան կը ձգտին, 4) Երկու կուսակցութիւնները համաձայն են նահանգային իրաւանց ընդարձակման, որ կ'երաշխաւորէ Օսմանեան ընդհանուր հայրենիքի զարգացումն ու յառաջդիմութիւնը»¹: Ապա համաձայնագրում հետևում էին հետևյալ տողերը. «Միություն եւ Յառաջդիմությունը և Հ. Յ. Դաշնակցությունը իրեն խրատական նախադրույցում ընդունելով Մարտի 31-ի դէպքը և Ատանայի ցաւալի ջարդերը, որոշեցին աշխատիլ ձեռք-ձեռքի տուած՝ վերոյիշեալ հիմնական կէտերու իրագործման համար»²:

Հետագայում, անդրադառնալով այդ ամոթալի գործարքին, «Հովիտ» պարբերականը գրում էր. «Հայ մամուլն այն ժամանակ (կիրիկյան ջարդերից հետո: – Հ. Ս.) ո՛չ ինքնապաշտպանութեան համար զինուելու պրօպագանդ էր մղում, ո՛չ եւրոպական

¹ «Բանբեր Հայաստանի արխիվներ» (Երևան), № 3 (55), 1979, էջ 72:

² Նույն տեղում:

պետութիւններին հրաւեր էր կարգում՝ գայ եւ Հայաստանը գրաւել: Ընդհակառակը, այն սեւ օրերում Հայ աղգի փրկութիւնը իր մենաշնորհը շինած մի կուսակցութիւն - «Հայ Յեղափոխական կցութիւնը» - Կիլիկիայում թափուած բիրաւոր անմեղ հայերի տար արիւնի մէջ թաթախեց իր գրիչը եւ Կիլիկիան կործանող եւ արիւնի մէջ խեղդող երիտասարդ թիւրք կոմիտէի հետ զաչնագիր ստորագրեց: Եւ որ սոսկային է, այդ նոյն յեղափոխական անուանուած կուսակցութեան պարագլուխները - անշուշտ ի կատարումն իրենց կնքած զաչնագրի - Կիլիկիայի ծովացած հայկական արիւնի միջով անցնելով գնացին մինչեւ Ամերիկա՝ Կիլիկիան կործանող երիտասարդ թիւրքերի համար **կոմի-վոեաժորի** (ուղեկցի: - Ն. Ս.) պաշտօն ստանձնած»¹:

Մինչ զաչնակցութիւն կուսակցութիւնը նոր համաձայնութիւն էր կնքում ձեռքերը Կիլիկիայի հայութեան արյան մեջ թաթախած Իթիհազի հետ, Հայ ժողովրդի ազգային հերոս Անդրանիկը հայութեան ղեկն ստանձնած բոլոր քաղաքական գործիչներին կրկին ու կրկին հիշեցնում էր զինված ինքնապաշտպանութեան նախապատրաստվելու մասին:

Դեռ Ադանայի եղեռնից մոտ մեկ ու կես ամիս առաջ Անդրանիկը Բուրջաբազից գաղտնորեն եկել էր Կ. Պոլիս եւ տեսակցել Դաչնակցութեան առաջնորդներից մի քանիսի հետ: Վերջիններս հերոսին առաջարկեցին մնալ Թուրքիայում եւ իրենց պես պայքարել օսմանյան սահմանադրական «հայրենիքի» առաջնթացի համար: Անդրանիկը կտրականապես մերժեց առաջարկը, միաժամանակ Դաչնակցութեան ներկայացուցիչներին հորդորեց ընդհատակ մտնել կամ արտասահման անցնել: Նա համոզված էր, որ երիտթուրքերն առաջիկայում կաղծակերպելու են հայերի ավելի սոսկալի ջարդեր, որոնց դո՛հ են գնալու նաև իրենք՝ երիտթուրքերի հետ նոր հույսեր կապող զաչնակցական ղեկավարները:

«... Այս գաղանները,- ասում էր նա,- մեզ դարձեալ կը կոտորեն, բրածնին դարձեալ կեղծիք է, դուք կը խաբէք մեր ժողովուրդը: Ինքնապաշտպանութեան գաղափարը երբեք մի՛

¹ «Հովիտ» (Թիֆլիս), № 36, 16 սեպտեմբերի 1912 թ.:

լքանէք եւ պատրաստեցէ՛ք ժողովուրդն այ այդ ուղղութեամբ: Տիգրանակերտէն սկսելով մինչև պարսից սահմանագլուխը 160.000 զինուած քիւրտ կայ: Ժէ՛ոն թուրքերը զինաթափ չեն ընել դանոնք եւ կը պահեն մեզ յարմար առթիւ կոտորել տալու համար»²:

Ադանայի հայերի կոտորածից առաջ արած զինված ինքնապաշտպանութեան հորդորը Անդրանիկը բազմիցս կրկնել է հետագա տարիներին, ընդհուպ մինչև 1915 թ. հայոց ցեղասպանութիւնը, որին Դաչնակցութեան բաղձաթիփ նշանավոր գործիչներ եւս դո՛հ գնացին:

ՀԱԿՈՒ ՊԱՊԻԿՅԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Ինչպես վերը նշվեց, Օսմանյան խորհրդարանը Կիլիկիա էր գործուղել նաև իր քննիչ հանձնախումբը՝ Հակոբ (Նշան) Պապիկյան եւ Յուսուֆ Քեմալ բեյ կաղծով, ըստ որում՝ Պապիկյանին տրված էին հանձնախմբի առաջին ղեկքի լիազորութիւնները:

Ո՞վ էր Հակոբ Պապիկյանը: Ծնվել էր 1856 թ. փետրվարի 23-ին Ազրբայձաղուսում (էդիրնէ): Ավարտել էր տեղի ազգային եւ Փրանսիական դպրոցները: 1887-ից սկսած երկու տարի Բոսնիայում վարել էր Օսմանյան կայսրութեան արտաքին գործերի տեսչութեան ղեկավարի օգնականի պաշտոնը: Վերադառնալով ծննդավայր՝ երկու տարի առևտրական դատարանի քարտուղար էր աշխատել: 1881 թվից հետեւելով իրավագիտութեանը՝ էդիրնէում պաշտոնավարել էր որպես վերաքննիչ ատյանի անդամ: 1891 թվից Կ. Պոլսում աշխատում էր իբրև փաստաբան, իսկ 1902-ին կրկին վերադարձել էր էդիրնէ եւ դարձյալ զբաղվել փաստաբանութեամբ:

Ծագումով Հայ լինելով՝ Պապիկյանը հայտնի էր իր թունդ թուրքասիրութեամբ²: Օսմանյան անկեղծ հայրենասեր էր եւ ջերմ

¹ Ժէնէրալ Անդրանիկ, Հայկական առանձին հարուածող զօրամարտ, Բոստոն, 1921, էջ 227:

² Տե՛ս Համբարձում Երամեան, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ, Ալեքսանդրիա, 1929, էջ 109:

իթթիհադական: Նա համոզված էր, որ կայսրության ամբողջությունը, անբաժանելիությունը, նրա ապագան պայմանավորված են օսմանցիություն, այսինքն՝ միասնական օսմանյան հայրենիքի գաղափարի վերջնական հաղթանակով: Պապիկյանը քաջ գիտակցում էր, որ կայսրությունը, բաղկացած լինելով տարրեր ժողովուրդներից, ազգային տեսակետով չի կարող միասնականանալ: Նաև կրոնի տեսակետով միացումն անկարելի էր, որովհետև տարրեր և նույնիսկ թշնամական են երկրում գոյություն ունեցող կրոնները՝ իրենց բազմազան ճյուղավորումներով: Ուրեմն մնում էր միայն հայրենիքի գաղափարը, որի շուրջն էլ պետք է համախմբվեն բոլոր օսմանցիները՝ անկախ իրենց ազգային ու կրոնական պատկանելությունից:

Մինչև Կիլիկիայի աղետը Հակոբ Պապիկյանը երբևէ չէր գրադվել հայկական խնդիրներով՝ թեև իր շրջապատում, այդ թվում՝ ազգակիցների մոտ, ճանաչված էր իրրե ուղղամիտ ու ազնիվ, հաստատակամ ու անկողմնակալ, բարոյական բարձր արժանիքների տեր մարդ:

Մայրաքաղաք Կ. Պոլսից ոչ հեռու, Մարմարա ծովի եզերքին գտնվող Ռոդոստոյի նահանգում հայ բնակչությունը թուրքերի համեմատ շատ սակավաթիվ էր, բայց քանի որ Պապիկյանը վաղուց այնտեղ անդամագրված էր «Միություն և առաջադիմություն» օսմանյան կոմիտեին, ապա այս վերջինը Պատգամավորական ժողովի անդամների նախընտրական շրջանում նրա թեկնածությունը պաշտպանեց և պառլամենտ անցկացրեց: Պատգամավորական ժողովի նիստերի ընթացքում նա հազվադեպ էր ամբիոն բարձրանում, որը թեկադրված էր իր համեստ ինքնաստվերացումով՝ իրրե նկարագրի հատկանիշ, բայց եռանդով գործում էր հանձնաժողովներում և հատկապես օսմանյան սահմանադրության քննիչ հանձնաժողովում, որի անդամ էր: Որպես իթթիհադական, նա անկեղծորեն պաշտպանում էր թուրքական շահերը խորհրդարանում:

Իրրե իթթիհադ կոմիտեի անդամ, Հակոբ Պապիկյանը միշտ հավատարիմ էր մնացել «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը՝ նույնիսկ երիտթուրքերի համար ճակատագրական ժամանակ, այդ թվում՝ մարտի 31-ից անմիջապես հետո,

երբ ուրիշ հայ պատգամավորներ՝ Զոհրապը, Վարդգեսը, Գեղամը և ուրիշներ, ահարար (աղատական) պատգամավորական խմբակցություն հարեցին:

Երբ պառլամենտի ղեկավարները Պապիկյանին նշանակեցին Աղանայի քննություն գործի պատվիրակ, մեծապես վստահ էին նրա օսմանցիական տրամադրություններին, հավատում էին, թե թուրքի չարածը նա կանի անպայման՝ տարամերժորեն ծառայելով թուրքական շահերին և առհասարակ կառավարության միտումներին:

Ընդհակառակը, Պապիկյանին քննիչ նշանակելը, հաշվի առնելով նրա թուրքասեր լինելը, առաջ էր բերել Աղանայի հայ համայնքի դժգոհությունն ու բողոքը: Կիլիկիայի հայերը համոզված էին, որ նա չի կարող անկողմնակալ ու արդարացի քննություն կատարել և ճշմարտությունը երևան հանել: Նույն տրամադրությունն անցել էր Կ. Պոլսի հայկական թերթերի էջերը, ուր քանիցս լույս տեսան Պապիկյանին ավել կամ պակաս անհամակիր հոդվածներ¹:

Հակոբ Պապիկյանը, Ֆաիզ բեյը, Հարություն Մոստիչյանը և Յուսուֆ Քեմալ բեյը մայիսի 12-ին նավով ուղևորվել էին Պոլսից և մայիսի 16-ին Աղանա հասել: «Մեկնելու ատեն կը մտածէի, որ այս ցաւայի եղելութիւններու վերաբերեալ լուրերը չափազանցուած էին»², - գրել է Հ. Պապիկյանը:

Հասնելով աղետի վայր՝ Պապիկյանը տեսնում է գործված ոճրի ահռելի մեծությունը, և սկսում է գործի քննությունը տանել աներկյուղ և անկողմնապահ: Թեև նա փափուկ սիրտ ու զգայուն հոգի ուներ, բայց չէր կարողանում տանել անարդարությունը և համարձակորեն ծառանում էր նրա դեմ: Գործված աներևակայելի խժժություններն անհուն կսկիծ ու ցավ էին պատճառել նրան: Ինչպե՞ս կարելի է թույլ տալ տեղական և անհատական մի միջադեպի հետևանքով ամբողջ մի նահանգ մատնել սրի ու արյունի, ասում էր նա: Եթե ամեն նահանգում մի չնչին միջադեպ առիթ տա այդպիսի սպանդանոցային տեսարանների, ապա մեկ շարաթ բավական է, որ ամբողջ հայությունը սրբվի օսման-

¹ Տե՛ս «Ծիրակ», № 25-26, 15 օգոստոսի 1909, էջ 469:

² «Ատանայի եղեռնը: Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի», էջ 12:

յան հողի վրայից: «Իր ցեղին անտարրեր եւ անկէ գրեթէ ուրացուած հայր,- գրեյ Է Սուրեն Պարթևյանը,- արիւն-արցունք լացաւ կիլիկեան գերեզմաններուն վրայ, որոնց մէկիկ-մէկիկ այցելեց: Որբութեան, թշուառութեան, անօթութեան եւ ամբողջ այդ վերապրող տառապանքին առջև ո՛չ ոք իրեն չափ ցաւագնորէն զայարուեցաւ:

- «Ասիկա դիմանայիք ընդ չէ», - կ'ըսէր ան՝ հողին ակուաներուն մէջ սեղմած»¹:

Նշանավոր հայ մտավորական Թյկատինցին (Հովհաննես Հարությունյան) այդ օրերին Աղանայում գտնված ժամանակ անդրադառնալով Հ. Պապիկյանի հոգեկան տվայտանքներին, գրում էր. «Այս խեղճ մարդը, նոյն ատեն այդ ընտիր ու ճշմարիտ հայը, կրակին դէմ բռնուած մոմի մը պէս կը հալէր, երբ բաները աչքովը կը տեսնար ու մօտէն ականջովը կը լսէր...»²:

Հայերի անմեղութեան մասին հավաքած սարսափազդու փաստերի քննութեան ընթացքը գաղափարական խոր հեղաշրջում առաջ բերեց նրա գիտակցութեան մեջ: Պապիկյանի մտտարթնացումը իր ցեղի դարավոր ոգին եւ մոգական գաղափարների հարվածով նրանից դուրս մղեց ու անէացրեց թուրքասիրութեան զգացմունքները³: Շատ չանցած՝ «Արեւելքը» գրում էր. «Կ'երեւայ, որ այս մարդը ճշմարտասէր եւ արդարասէր ոգիի տէր մէկն է ամէն բանէ առաջ»⁴: Ուսումնասիրութեան ընթացքում նա ընդհարումներ ունեցավ հանձնախմբի երկրորդ անդամի՝ իր ընկերակից Յուսուֆ Քեմալ բեյի հետ եւ չքաչվեց հրապարակավ հայտարարութիւններ անել իր եզրակացութիւններին մասին՝ անկաշառ ու անվախ:

Աղանայի հայ ամենտարանականների հոգևոր հովիվ վերապատվելի Համբարձում Աչճյանը հետագայում վերհիշել է. «Քանի մը անգամներ իմ ներկայութեանս իր ընկերոջ՝ Եուսուֆ Քեմալ պեյի հետ հակաճառութեան բռնուեցաւ: Իրեն ըսի. «Պապիկեան է ֆենտի, այդպէս մի՛ վարուիք. եղածը՝ եղաւ, գացողը՝

գնաց. ընկերոջդ հետ այդչափ մի՛ հակառակիր. յետոյ ձեր միասնաբար տայիք տեղեկագիրը չստորագրէր»: Ան ինծի պատասխանեց. «Պատուելի՛ է ֆենտի, ես այս չեմ կրնար տանիլ. ասոնք մեր երեսին՝ տարրեր, մեր բացակայութեան՝ տարրեր կը վարուին. ես չեմ կրնար այսպիսի կեղծաորութեան համբերել»⁵:

Ահոնի իրականութեան դեմ ընդվզելու քաջութիւնը մարդկային այդ սքանչելի տիպարը բացահայտորեն ի հայտ բերեց արդեն մայիսի 25-ին մեծ վեղիւր Հիւմի փաշային ուղղված առաջին հեռագրով: Կիլիկիայից Կ. Պոլիս եւ այլուր հեռագրական մանրամասն եւ ճշգրիտ տեղեկութիւններ հաղորդելն անկարելի էր, որովհետեւ գրաքննիչները հեռագրերի շարադրանքները փոխում էին⁶: Չնայած դրան, Պապիկյանն իր շարադրանքը կազմել էր այնպես, ինչպես մտածում էր: Որեւէ մեկը չհամարձակվեց հենց Աղանայում դահիճների երեսին իր դայրոյթը, զգվանքն ու կատաղութիւնը այնպես ժայթքելու, ինչպես դա արեց կյանքում միշտ խոհեմ եղած այդ արիասիրտ մտավորականը: Հեռագրով նա մեծ վեղիւրից խնդրում էր կարգադրութիւն անել, որպէսզի ռազմական ատյանը ժամանակավորապէս դադարեցնի գործունեութիւնը, մինչև որ իր հանձնախումբը կավարտի քննութիւնները: Հաղորդել էր, որ ատյանը չըջանցել է իսկական մեղավորներին, նրանց թողել ազատութեան մեջ, իսկ անմեղներին դատի է քաշում: Բազմաթիւ փաստերից նա բերում էր մեկը. «Վստահելի ազդիւրէ մը տեղեկացած եմ որ, Հաճրնի չըջանակին մէջ, մեծ թիւով հայեր 7-8 հոգիանոց խմբերով շղթայի զարնուած՝ ամենագէջ վարմունքներու զոհուած են»⁷:

Երկու հոգուց կազմված պառլամենտական հանձնախմբի քննութիւնները ղեռ չաւարտած՝ Պապիկյանը կազմեց Հիւմի փաշային ուղարկվելիք, փաստարկված ու բովանդակալից հեռագրի մի ուրիշ շարադրանք եւ հանձնախմբի մյուս անդամին՝ Յուսուֆ Քեմալ բեյին առաջարկեց իր հետ ստորագրել այն: Աղետի չափերը նվազեցնելուն հակված թուրք գործընկերը

¹ Սուրեն Պարթևեան, Կիլիկեան արհաւիրքը, էջ 107:

² «Անահիտ» (Փարիզ), № 11-12, մարտ-ապրիլ, 1909-1910, էջ 273:

³ Տն'ս Մանուկ Գ. Ճիզմէճեան, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրեդնո, 1930, էջ 174:

⁴ «Արեւելք», № 7132, 24 հունիսի 1909 թ.:

⁵ Վեր. Համբարձում Յ. Աչճեան, Ատանայի եղեռնը..., էջ 53:

⁶ Տն'ս «Բիւզանդիոն», № 3815, 17 (30 ապրիլի) 1909 թ.:

⁷ Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի Զարդը եւ պատասխանատուները, էջ 46-47:

հրաժարվեց ընդունել առաջարկը, և Պապիկյանը, ստիպված, հունիսի 8-ին հեռագիրն ուղարկեց միայն իր ստորագրությամբ:

Այս երկրորդ հեռագրով Պապիկյանը կրկին բարձրացնում էր ռազմական ատյանի հարցը, գրելով. «Կր խնդրուի Ձեզ[մէ՛] որ բարեհաճիք յետաձգել Պատերազմական Ատեանի վճիռներուն գործադրութիւնը՝ մինչև որ մեր քննութիւնը աւարտի»:

Նա մեծ վեղիրին նորից հայտնում էր այն ազադակող անարդարությունների մասին, որոնք տեղ էին գտել ռազմական ատյանի գործողություններում: «Պատերազմական Ատեանը, - գրել է նա, - դրադուած է լոկ ղէպքին մասնակցած քաղաքային եւ զինուորական պաշտօնեաներուն եւ ամենէն վատ մարդոց յայտնութիւններուն վրայ յենուելով՝ հայոց ապստամբութիւնները քննել, եւ անձնապաշտպանութեամբ իրենց անձերը ազատած հայերը դատապարտել: ... Ճէպէլի Պէրէքէթի սանճագին մեջ հայոց կողմէ բնաւ եւ երբէք ունէ ղէպքի տեղի չէ տրուած, իմ վեր ի վարոյ րրած հաշուոյս համեմատ, այս սանճագին մէջ երեք հազար հայեր ջարդուած են, եւ անձնապաշտպանութեամբ ազատած Տէլորթ-Եօյէն դատ, ուրիշ ոչ մէկ կողմը հայու բնակարան չէ թողուած»:¹ Նշելով հայերի կրած անհաշիվ կորուստների և ռազմական ատյանի՝ նրանց նկատմամբ շարունակվող անմարդկային վարքագծի մասին՝ Հ. Պապիկյանը մեծ վեղիրին ուղարկած հեռագիրը վերջացնում էր հետևյալ խոսքերով. «Եթէ մնացած հայերուն մասին Պատերազմական Ատեանի կողմէ այսպէս հայածուծներու ենթարկուելուն առաջըր չառնուի, եւ եթէ այս մասին անմիջական միջոց մը չի խորհուի, թէ՛ ներկային եւ թէ՛ ապագային համար դարմանումն անկարելի եղող վէրքեր բացուիլը անկասկած ըլլայրն՝ վերջին անգամ ըլլալով Ձեզ[ի] կը յայտնեն: Այլևս այս մասին պէտք եղած հրամանը Ձերն է»:² Ապա՝ «Ճշմարիտ օսմանցիի իմ զգացումներս զիս կը մղեն եզրակացնելու որ՝ այդ կարգի ղէպքեր անկարելի կը դարձնեն

տարրերու միջև բարեկամական յարաբերութիւնները ո՛չ միայն այս տեղերուն՝ այլև ամբողջ Կայսրութեան մէջ»:

Քննությունը վերջացնելուց հետո Պապիկյանը Կիլիկիայից ծովով մեկնում է մայրաքաղաք՝ րովանդակ հայության խոտվոր կրելով իր մեջ: Ճանապարհին, երբ նավը կանգ է առնում Իդմիրում, տախտակամած է բարձրանում Կ. Պոլսում լույս տեսնող երիտթուրքերի «Իթթիհաղ» թերթի Իդմիրի թղթակիցը և հետևյալ հարցադրույցն է տեղի ունենում նրանց միջև.

«Նմբագիր. - Ատանայի մէջ Ձեր պաշտօնը վերջացա՞ւ թէ՞ դարձեալ այնտեղ պիտի դառնաք»:

Պապիկեան էՖ. - Իմ ընելիք գործս վերջացաւ, ա՛յ քննելիք խնդիր չի մնաց ինձի համար:

Նմբագիր. - Քննութեանց արդիւնքն ի՞նչ եղաւ, ջարդերուն պատճառն ի՞նչ էր:

Պապիկեան. - Իմ քննութեանցս արդիւնքին նայելով, Աղատութեան հռչակումէն ի վեր, բռնապետութեան կուսակիցները ղժժոհութեան նշաններ ցոյց տուեր են, եւ մտադրեր են ջարդել քրիստոնեաները, ասիկա բացայայտ է եւ դատական պաշտօնաթուղթերով հաստատուած:

Նմբագիր. - Սուլթան [Ապտուլ] Համիտը մասնակցութիւն ունի՞ այս գործին մէջ:

Պապիկեան. - Այս մասին այլևայլ տարածայնութիւններ կան Ատանայի մէջ, բայց ես գործին քննութեան պահուն չկրցայ ապացոյց մը գտնել այս մասին:

Նմբագիր. - Ջարդին մէջ մասնակցութիւն ունի՞ նաև տեղական կառավարութիւնը կամ կեդրոնի իշխանութիւնը:

Պապիկեան. - Կեդրոնական կառավարութիւնը մասնակցութիւն չունէր, բայց պատճառ եղած է: Իսկ տեղական իշխանութիւնը մասնակցութիւն ունին: Մանաւանդ կուսակալ ճէվատ պէյ, զինուորական հրամանատար Մուսթաֆա Ռեմդի փաշա, ճէպէլի Պէրէքէթի մութասէրիֆ Ասաֆ պէյ, Պաղտատի դատէ

¹ Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, էջ 48:

² Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 442-446:

³ Նույն տեղում, էջ 446:

¹ Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, էջ 45 (տողատակը):

[Ապտուլ] Գատիր էֆ., Պօչնագ Սալիհ էֆ. և «Իթիդայ» թերթին տէր Իհսան Ֆիրրի էֆ. բացարձակապէս մասնակցութիւն ունին:

Նմբազիր. – Քրիստոնեայք պատճառ եղա՞ն ջարդերուն:

Պապիկեան. – Քրիստոնեայք ի սկզբան պատճառ չեղան, ես բացարձակապէս համոզուեցայ ասոր:

Նմբազիր. – Ձեր ընկերներուն համոզումն ի՞նչ է:

Պապիկեան. – Ընկերներս համամիտ են ինձի, միայն Եուսուֆ Քէմալ պէյը քիչ մը տարակարծիք էր ինձի, բայց ի վերջոյ անիկա ևս համոզուեցաւ:

Նմբազիր. – Ասկէ ետք խաղաղութիւնը տեւական պիտի կրնա՞յ ըլլայ Ատանայի մէջ, միջոցներ ձեռք առնուա՞ծ են այսպիսի դէպքերու կրկնութիւնն արգիլելու համար:

Պապիկեան. – Կառավարութեան խիստ եւ արդար միջոցներուն շնորհիւ, խաղաղութիւնը, անդորրութիւնն ու կարգապահութիւնը կրնան պահպանուիլ Ատանայի մէջ: Պատերազմական Ատեանն անկողմնակալութեամբ չի շարժիր: Եթէ անկողմնակալ ըլլայ, հոգ պատճառելիք խնդիր չպիտի մնայ»¹:

Նույնքան հետաքրքիր էր «Թասվիրի էֆքեար» օրաթերթի խմբագիրներին մեկի բավական երկար հարցադրույցը Պապիկեանի հետ, որից ընթերցողին ներկայացնում ենք ընդամենը մի քանի հատված:

«Նմբազիր. – Ի՞նչ տեսաք, երբ Ատանա ժամանեցիք:

Պապիկեան. – Գալով տեսածներուս, Ձեզի սա կրնամ ըսել համառօտիւ թէ երոպական թերթերուն մէջ Ատանայի դէպքերուն մասին հրատարակուած մանրամասնութիւններն իմ տեսածներուս համեմատութեամբ ո՛չ թէ չափազանցուած չեն, այլ թերևս պակաս են:

Նմբազիր. – Ձեր կարծիքով, ի՞նչ է դէպքին ծագման շարժառիթը:

Պապիկեան. – Ատանայի դէպքն երկու զօրաւոր պատճառ ունեցած է. – Ռէպրսիօն և Բոնապետութիւն: Յուլիսի սկիզբները սկսած են տեսնուիլ բոնապետական հակամէտութիւններ: Պաղ-

չէի նախորդ միւֆթին՝ ասդին-անդին չըջելով սկսած է յայտարարել թէ Ազատութիւնն ու Սահմանադրութիւնը քրիստոնեաներուն գործն են, թէ անոնք Շէրիաթի հակառակ են, և այսպէս սկսած է զրգոյ ժողովորդը, որով սկսաւ իսլամներն հանել քրիստոնեաներուն և Սահմանադրութեան դէմ: Սահմանադրութեան առաջին օրերուն ժողովրդեան ամէն դասակարգերուն մէջ տեսնուած ուրախութեան և ցնծութեան տեղ, ոչ-իսլամներուն հանդէպ վրէժխնդրութիւն և թշնամութիւն սկսած են տարածուիլ:

Նմբազիր. – Կր պնդեն թէ հայերը պատճառ եղած են խռովութեան, ճի՞շդ է ասիկա:

Պապիկեան. – Քովս գտնուած վաւերաթուղթերով պիտի ապացուցուի թէ այս ենթադրութիւնը բացարձակապէս սխալ է:

Նմբազիր. – Կր պնդեն թէ հայերն ուղեր են անկախութիւն հռչակել Կիլիկիոյ մէջ, ճի՞շդ է:

Պապիկեան. – Քննութիւնները կ'ապացուցանեն այս ենթադրութեան բացարձակ անհիմն հանգամանքը: Հայերուն անկախութեան ձգտած ըլլալուն մասին գրուածներն ու լսուած խօսքերն արդիւնք են կա՛մ պակասաւոր քննութեան և կա՛մ ճշմարտութիւնը խեղաթիւրելու համար թափուած ճիգերու:

Նմբազիր. – Վնասուած մարդիկը ասկէ ետքը ինչպէ՞ս պիտի ապահովեն իրենց ապրուստը:

Պապիկեան. – Առ այժմ ապրուստի ո՛րէն միջոց չկայ: Հայոց մեծ մասը կր պատրաստուի գաղթել Ամերիկա և ուրիշ տեղեր...»¹:

Այդ պահին Իզմիրում էին գտնվում Օսմանյան պառլամենտի՝ Եվրոպա մեկնող մի խումբ պատգամավորներ, այդ թվում զոկտ. Ռիդա Թեֆիզ, Թայեսաթ, Սուլեյման ալ-Բուստանի (արար) բեյերը, Նեսիմ Մազլիահ էֆենդին (հրեա) և ուրիշներ: Սրանք տեղեկանալով, որ Պապիկեանը գտնվում է Իզմիրում, հանդիպում են ունենում նրա հետ, շահագրգռությամբ ու «համակրությամբ» լսում նրա պատմածները և քաջայերու՞մ²:

¹ «Բիւզանդիոն», № 3861, 23 հունիսի (6 հուլիսի) 1909 թ.:

¹ ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, № 2175/Մ. թ. 3:

² Սուրէն Պարթեւեան, Կիլիկեան արհաւիրքը, էջ 109:

Այդ հանդիպումից հետո Պապիկյանի մոտ խորանում է այն համոզումը, թե ինքր մայրաքաղաքում կարող է արդարություն հասնել:

Պապիկյանի հետ ունեցած հարցադրույցից հետո «Թասվիրի և Ֆրեսար» թերթի թղթակիցը հանդիպում է նաև Աղանայից վերադարձած կառավարական հանձնախմբի ղեկավար Ֆաիզ բեյի հետ, որը հայտարարում է, թե իր ուսումնասիրությունների համաձայն, Կիլիկիայում սպանվել է 6000 հոգի, որի մեծ մասը եղել է մուսուլման: Թղթակիցը նշում է, որ այդ թիվը շատ հեռու է Պապիկյանի նշած թվերից, որին հետևում է Ֆաիզ բեյի այս պատասխանը. «Կրնայ ըլլայ որ Պապիկյանն է ֆենդի այս մասին անձնական կարծիք մը ունենայ, բայց Պապիկյանն է ֆ. -ի այսպիսի կարծիք մը ունենալը առաջնորդ չի կրնար ըլլայ քննիչ յանձնաժողովին: Ամէն պարագայի մէջ, դարձեալ կը կրկնեմ, քննիչ յանձնաժողովն (կառավարական: - Հ. Ս.) երբեք անվստահութիւն չունի Պատերազմական Ատեանին վրայ»¹:

Հասնելով Կ. Պոլիս՝ Հակոբ Պապիկյանը ֆրանսերեն կազմում է բնդարձակ տեղեկագիր և ներկայացնում Պատգամավորական ժողովին: Նկատենք, որ Իզմիրում տված հարցադրույցի համեմատ, տեղեկագրի ձևակերպումները շատ ավելի արմատական էին, ավելի համարձակ: Ի՞նչ էր ասված այնտեղ:

Ա) Պատգամավորի գլխավոր եզրակացությունն այն էր, որ Աղանայի ղեպքերի մեջ քրիստոնյաները որևէ մեղք չունեին: Նա շեշտել էր, որ այդ քաղաքում կոտորածը գրգռողը և պատճառը հայերը չեն եղել, որ նրանք ղեկի են դիմել միայն ինքնապաշտպանություն համար, իսկ բուն զրդիչներն ու ջարդի հեղինակները հանդիսացել են տեղի թուրք իշխանավորները²:

Բ) Ջարդերի համար պատասխանատու է կենտրոնական կառավարությունը, իսկ տեղական իշխանությունը ուղղակի մեղսակից է: Նա գրում էր. «Ես պէտք է աւելցնեմ ամենամեծ փաստանքով, որ «Միութիւն Եւ Յառաջդիմութիւն» կոմիտէի անդամներն ու պարագլուխներն Ատանայի մէջ կ'օգնէին

կազմակերպելու և իրագործելու յարձակումը հայերու վրայ»³:

Գ) Պատերազմական ատյանը (ոսղմադաշտային դատարանը), որ քննություն է կատարում Աղանայում, անաչառ չէ⁴:

Դ) Հայերի և մյուս քրիստոնյաների կոտորածը իրականացվել է ամենազազիր մեթոդներով ու անընկալելի դաժանություններով: Պապիկյանը շեշտում էր, որ ինքը սուլթան Արդույ Համիդի ժամանակներում ականատես է եղել ջարդերի Բույղաբիայում, Հերցեգովինայում, էդիրնեում, բայց երբեք չի տեսել «Ատանայի նահանգին մէջ կատարուած ջարդին և աւարառութեան նմանը», որոնք «իրենց սարսափով գերազանցած են» նախորդ բոլոր ջարդերը, «որովհետև այդ բեժիմին տակ գոնէ կարգապահութեան մը կը հետեւուէր: Ծերերուն, տկարներուն, կիներուն և մանուկներուն կը խնայուէր, աւարը այս ծայրայեղ աստիճանին չէր հասներ, և վնասը այսքան ահագին երբեք չէր եղած: Մինչդեռ Ատանայի մէջ այրած են հիւանդ և վիրաւոր ինչ որ գտնուած է: Միսիսի, Համիտիէի և Պաղչէի, Հասան Պէյլիի և Օսմանիէի մէջ 12 տարեկանէն վեր բոլոր արուները զլլատած են» և այլն⁵:

Տեղեկագրում մանրամասն տվյալներ բերելով զոհերի, վիրավորների, ավերածությունների և նյութական կորուստների մասին՝ Հակոբ Պապիկյանը շեշտում էր. «Ուղեցի ոչինչ ծածկել ճշմարտութենէն զոր գիտէի իրբև արդիւնք իմ կատարած քննութիւններու և երբեք չեմ խեղաթիւրեր իմ անձնական համոզումներս Ատանայի արիւնտ շարժումին մասին»⁶: Ավելին, տեղեկագրում նա բացեիքաց հայտարարում էր իր հետագա նպատակների մասին. «Ես պիտի ջանամ ապացուցանելու հետեւեալ կերպով, [որ] այս ջարդին նպատակն էր բնաջնջումը հայերուն և քրիստոնեաներուն»⁷:

¹ Տե՛ս «Ատանայի եղևոնը: Տեղեկագիր **Յակոբ Պապիկյանի**», էջ 35-38: Նաև՝ «Արևելք», № 7132, 24 հունիսի 1909 թ.:

² Տե՛ս «Ատանայի եղևոնը: Տեղեկագիր **Յակոբ Պապիկյանի**», էջ 38-40:

³ Նույն տեղում, էջ 13-14:

⁴ Նույն տեղում, էջ 17-21:

⁵ Նույն տեղում:

¹ «Բիզանդիոն», № 3866, 29 հունիսի (12 հուլիսի) 1909 թ.:

² «Ատանայի եղևոնը: Տեղեկագիր **Յակոբ Պապիկյանի**», էջ 12-16:

Բարձր գնահատելով Պապիկյանի կատարած գործը, «Արև-ելլեր» «ճշմարտությունը կը քայլ» առաջնորդող հողվածում գրում էր, որ նա «ատանց բան մը ի նկատի առնելու կ'ըսէ ճշմարտությունը, ոճիրը կը բնորոշէ, յանցաւորները կը մատնանշէ անողոր դատաւորի մը պէս: Դեռ առաջին մարզն է, որ ոճիրի հնոցէն դուրս կ'ելլայ ուղղամտութեան դափնին առնելու համար»¹:

Տեղեկագրի եզրակացություններն սկզբում համառորեն մերժեց Իթթիհադի կոմիտեն, բայց հավաքած փաստերն այնքան ցցուն էին ու անողոր, որ, ի վերջո, երիտթուրք ղեկավարությունը տեսք ընդունեց, թե ընդհանուր առմամբ համաձայն է Պապիկյանի եզրակացությունների հետ: Դրան հակառակ, տեղեկագիրը պառլամենտի թուրք պատգամավորները և պետական պաշտոնյաները սփիններով ընդունեցին:

Պապիկյանը չէր կարող տեղեկագիրը հրատարակել այնքան ժամանակ, քանի ղեռ Պատգամավորական ժողովը դա չէր քննարկել: Որոշ ժամանակ անց նա արդեն կասկածում էր, թե պառլամենտն իր ղեկուցումը երբեք կ'սխալի: Ուստի որոշեց տեղեկագրի համառոտ բովանդակությունը փոխանցել Կ. Պոլսի մամուլին:

«Թասվիրի էֆքեսար» թերթի 1909 թ. հունիսի 25-ի համարում յույս տեսավ նրա թղթակցի հարցազրույցը Հակոբ Պապիկյանի հետ: Այդ ընդարձակ հարցազրույցի պատասխանները ընդհանուր գծերով արտահայտում էին տեղեկագրի բովանդակությունը:

«Հարց. – Այդ գրգռությունը (Աղանայի ջարդը: – Հ. Ս.) սարքողներուն նպատակն ի՞նչ կրնար ըլլալ:

Պատասխան. – Ինչպէս պիտի երեսայ կատարուած քննութիւններէն, պատճառը սա է, որ կարգ մը ետադիմականներու անձնական շահերը կը փտանգուէին Աղատութեան հռչակումովը: Այդ ետադիմականներուն անունները և ինքնութիւնները արձանագրուած են հետոս բերած թուղթերուս մէջ:

¹ «Արևելք», № 7132, 24 հունիսի 1909 թ.:

Հ. – Կը պնդեն, որ հայերը եղած են խոռովութեանց պատճառ: Այդ պնդումը ստո՞յգ է:

Պ. – Քույս գտնուած հաստատող թուղթերով երեսայ պիտի ելլէ, թէ այդ պնդումը (խտտիա) ճշմարտութեան հակառակ է:

Հ. – Կ'ըսուէր թէ հայերը Կիլիկիոյ շրջակայքը անկախութիւն հռչակել փորձած էին: Իրա՞ն է ասիկա:

Պ. – Քննութիւնները հաստատած են, թէ այդ պնդումն ալ սնտտի է: Անկախութեան մասին գրուածներն ու խոստածները կա՛մ նպատակ ունէին ճշմարտութիւնը խեղաթիւրելու և կա՛մ քննութիւնները թերի կատարուելէն առաջ եկած են»:

Խորհրդարանական պատմիրակի՝ հարցազրույցի ընթացքում արած արդարակորով ու զորդագին հայտարարությունները Կ. Պոլսում ահագին ցնցում առաջ բերեցին¹: Դրանց անդրադարձան նաև թուրքական մամուլը և պառլամենտը:

1909 թ. հուլիսի 7-ին պառլամենտի Պատգամավորական ժողովն այլևայլ հարցեր քննելուց հետո անդրադարձավ նաև Կիլիկիայի խնդրին: Նիստում կարգացվեց պառլամենտի ֆինանսական հանձնաժողովի տեղեկագիրը Աղանայի կոտորածների մասին: Հանձնաժողովը հավանություն էր տվել քանդված ու այրված տների վերաշինության համար Աղանայի նահանգին 100.000 ոսկի և Հայկապի նահանգին 20.000 ոսկի տրամադրելու կառավարության առաջարկին:

Հանձնաժողովն իր կողմից նաև առաջարկեց հավելյալ 50.000 ոսկի փոխ տալ Աղանայի վաճառականներին ու խանութպաններին՝ իրենց գործը վերականգնելու համար, ինչպես նաև հրդեհի մատնված վարժարանները վերաշինելու համար:

Հարցի վերաբերյալ ելույթ ունենալով՝ Աղանայից ընտրված պատգամավոր Մունիֆ բեյն առաջարկեց նշված 50.000 գումարը բարձրացնել 100.000-ի, որովհետև «Աղանայում վաճառականներ կան, որոնք 50.000 ոսկուց ավելի հարստություն են կորցրել»:

Հակոբ Պապիկյանի հետ պառլամենտական հանձնախմբի

¹ Տե՛ս «Արևելեան մամուլ», № 29, 14 հուլիսի 1909 թ., էջ 671:

մեջ գտնված և Աղանայից նոր վերադարձած Յուսուֆ Քեմայ բեյը հայտնեց, որ ինքը մի քանի օր անց իր տեղեկագիրը կներկայացնի ժողովի քննարկմանը, բայց քանի որ նպաստի խնդիրը ամենահամայնականն է, ուստի առաջարկում է անհապաղ օգնություն հասնել այրիներին ու որբերին՝ նրանց ապրուստի միջոցներ հայթայթելով: Նա պաշտպանեց Մունիֆ բեյի առաջարկը՝ տուժած վաճառականներին ու խանութպաններին 100.000 ոսկու նպաստ տալ, որովհետև «Աղանան այնպիսի նահանգ է, որ ունակ է մեկ-երկու տարում գումարը վերադարձնել»:

Պատգամավորական ժողովը միաձայնություն ընդունեց ներկայացված առաջարկները:

Պառլամենտի որոշումը կատարելու նպատակով կառավարությունը կազմեց մի նպաստարաչխ մարմին և նրան հատկացրեց որոշ գումար, իսկ մի քանի օր անց 100.000 օսմանյան ոսկի փոխանցեց Աղանայի օսմանյան դրամատուն: Բացի այդ, տուժած երկրագործների ու վաճառականների համար «Զիրաաթ» (գյուղատնտեսական) բանկը 50.000 օսմանյան ոսկի փոխ տվեց: Կառավարությունը նաև որբերի ու այրիների համար, հինգ տարվա կտրվածքով, տրամադրեց 25.000 ոսկի, որի չափը, սակայն, չուտով իջեցրեց 10.000 ոսկու:

Թուրքական կառավարության հատկացրած օգնության գումարները բաշխվում էին շատ անարդար. առյուծի բաժինը հատկացվում էր սպանված մահմեդականների ընտանիքներին, վերքեր ստացած իսլամներին: Նպաստի բաժանման ընթացքում կատարվում էին լայնածավալ ղեղձումներ, որոնց հեղինակների մեծ մասը Աղանայի նպաստամատույց մարմնի անդամներն էին, այսինքն՝ Ջարդի եռանդուն կաղնակերպիչներ:

Հուլիսի 8-ի նիստը. – Օրակարգային հարցերի քննության ժամանակ պատգամավոր Իսմայիլ Հազգր բեյը (որն, ի դեպ, Աղանայի պաշտոնանկ վայրի Մուստաֆա Զիհնի փաշայի որդին էր և հետագայում այդ պաշտոնում հաջորդեց Ահմեդ Զեմալ բեյին) ներքին գործերի նախարարից պահանջեց բացատրություն տալ, թե ի՞նչ հիմքերով է հրաման տրվել Աղանայում ձերբակալել «Իթիդալ» թերթի խմբագրապետ Իհսան Ֆիքրիին և

տեղի երեսկիներին Բաղդադի դաղե Արդույ Կաղերին: Պատգամավորներից մեկը Հազգր բեյին խորհուրդ տվեց փոխանակ պարզ հարցում ուղղելու նախարարին, գրավոր հարցապնդում անել:

Հուլիսի 13-ի նիստը. – Այս նիստում ընթերցվեց Իսմայիլ Հազգր բեյի արած հարցման գրավոր պատասխանը, որ Իհսան Ֆիքրին և Բաղդադի դաղե Արդույ Կաղերը ձերբակալվել են, որովհետև նրանք նույնպես ջարդի մասնակիցներ են եղել:

Այդ պատասխանը չբավարարեց Հազգր բեյին, շեշտելով, թե սահմանադրությունը խախտված է, որովհետև կառավարությունը իրավունք չունի հրաման տալ ձերբակալելու նշված երկու հոգուն: Դա իրավասու էր անելու միայն ղատական իշխանությունը: Իսմայիլ Հազգրին աջակցում է ժողովի պատգամավորների կեսից ավելին: Հակոր Պապիկյանը և Վարդգեսը դարձանք են հայտնում, որ Հազգրի առաջարկին հավանություն տվող պատգամավորները ելել ու պաշտպանում են նշված երկու հոգուն այն պատճառով, որ նրանք իսլամ են, այն դեպքում, երբ Աղանայում 21.000 մարդ է սպանվել, և այդ մասին խոսող չկա:

Հազգրին ասում է, թե այդքան մարդ ջարդված լինելը Պապիկյանի երևակայության արդյունք է, իսկ Թայեաթն ավելացնում է, թե ջարդերի մասին ստույգ որևէ տեղեկություն չկա և թե «Պապիկյանն էֆենտին կ'ըսէ թէ՛ 21.000 հոգի մեռած են կ'ըսուի»: Պապիկյանը դայրացած գոռում է. ««Կ'ըսուի» չէ, այլ ի՞նչ կ'ըսէ»:

Նախագահ Ահմեդ Ռիդան սպառնալիքով աշխատում է լուցանել Վարդգեսին, որը փորձում էր պաշտպանել Պապիկյանին: Վարդգեսը հարց է ուղղում նրան, թե ինքը «իրատունք չունի՞ խօսելու, ինչպիսի իրատունք ունին [իսլամ] պատգամավորները»:

Պատգամավորներից մեկն առաջարկում է հարցին անդրադառնալ, երբ Աղանայից վերադարձած պատգամավորները տեղեկագրեր կներկայացնեն պառլամենտի քննությանը:

Ինչպես վերը նշվեց, Հակոր Պապիկյանի տեղեկագիրը չա-

¹ «Ատանայի եղևոնը: Տեղեկագիր **Յակոբ Պապիկյանի**», էջ 13-14:

² Մինչև ձերբակալվելը, այդ ջարդարարը նախագահում էր աղետյայների նպաստարաչխ մարմինը Աղանայում:

փազանց անհաճո էր երիտթուրքական կուսակցության և կառավարության համար: 1909 թ. Հուլիսի 20-ին Հակոբ Պապիկյանը «Հանկարծամահ» եղավ, իսկ տեղեկագիրն «անհետացավ»: Ոչ ոք չէր հավատում այդ շինծու վարկածին: Կասկած չկա, որ նրան սպանել էին՝ թունավորելով:

Անդրադառնալով հանգուցյալի մահվան հանգամանքին՝ ֆրանսիացի հայասեր Ֆրանսիս դը Պրեսանսեն փաստանքով նշել է, որ «ղեպքերը ուսումնասիրած ու գրի առած լինելու և իր եզրակացություններից մի քանիսը հանրային ուշադրությունը հանձնելու անխոհեմության համար տարարախտ Պապիկյանի կյանքը խլացին»:

Երբ Պապիկյանի մահվան գույժը հասավ Ադանա, տեղի երախտապարտ հայությունը, վշտի և փաստանքի խոր զգացումով, քաղաքի ավերակված եկեղեցիներից մեկն շտապ կիսատ-պոատ «կարգի բերեց» և օգոստոսի 8 (21)-ին հոգևհանգիստ կատարեց: Մասնավոր պաշտամունքներ կատարեցին նաև Ադանայի հույներն ու ասորիները¹: Բոլորի շուրթերը մրմնջում էին փաստանքով:

Պապիկյանի մահը ազգային սգի ու կսկիծի պատճառ եղավ: Ամբողջ ազգն իր հոգով ու մտքով ներկա էր կիլիկիացի հայի արյունազանգ դատի մեծ պաշտպանի թաղմանը: Ափսոսանքը բազմապատկվում էր, երբ մարդիկ հիշում էին, թե ազգակիցներն ինչպես էին նրան այպանում, որ, իբր, նա Ադանա է եկել ջարդարարների չարագործությունները կոծկելու: Այդ օրերին հայ մտավորականներից մեկը նկատում էր, որ այդ պատվական մարդը կյանքում երբևէ չի խոսել հայրենասիրության և ազգասիրության մասին, բայց երբ եկավ պահը՝ նա կյանքը զոհեց իր ազգի մի հատվածի մեծ աղետի մասին ճշմարտությունն ասելուն²:

Միաժամանակ, Պապիկյանի կյանքի վախճանը հայերին թելադրում էր ամեն քայլափոխի գերազույն զգուշություն

հանդես բերել: «Մենք պէտք է չափաւոր ըլլանք մեր ուրախութիւններուն ու մեր ատելութիւններուն մէջ. - գրում էր «Ազգակր», - որովհետեւ միտքերու և հոգիներու այս գերզգոռուած վիճակին մէջ, բոլոր հրատարակուած տողերը ու բոլոր արտասանուած բառերը շարժումներու կը փոխուին ու ամէն շարժումի տակ արին կայ»¹:

Հակոբ Պապիկյանի հուղարկավորությունից հետո Օսմանյան պառլամենտը 1909 թ. Հուլիսի 23-ի, 25-ի և 26-ի նիստերում հպանցիկ անդրադարձավ իր վախճանված պատգամավորի բազմանդամ ընտանիքին օգնելու հարցին:

Կանխավ այրիացած լինելով, Հակոբ Պապիկյանն ինքն էր խնամում իր չորս աղջիկ ու երկու տղա զավակներին: Նա ոչ միայն տիպար մարդ էր, այլև ընտանիքի տիպար հայր: Եվ ահա այժմ երեխաները մնացել էին որր ու անօգնական:

Պատգամավորական ժողովի Հուլիսի 23-ի նիստում, օրակարգի հարցերի քննարկումը վերջանալուց հետո, թուրք պատգամավորներից մեկը Պապիկյանի մահվան առթիվ ցավ հայտնեց, որին որևէ արձագանք չհետևեց: Այնժամ նախագահ Ահմեդ Ռիդան հայտնեց, թե պառլամենտական խմբի անդամ Յուսուֆ Քեմալ բեյը Ադանայի ղեպքերի մասին իր տեղեկագիրը ներկայացրել է Պատգամավորական ժողովին, որը նախատեսված է հրապարակել հաջորդ նիստում: Վարդգեսը պահանջեց նույն նիստում հրապարակել նաև հանգուցյալ Պապիկյանի տեղեկագիրը: Նախագահը նրան հարց ուղղեց. «Տեղեկագրի հեղինակը կենդանի չէ, եթե նրա արձանագրած փաստերի շուրջ պատգամավորների մոտ հարցեր ծագեն՝ այդ ղեպքում ո՞վ պետք է դրանց պատասխանի»: Հետևում է Վարդգեսի պատասխանը. «Թող տեղեկագիրը կարդացվի, և եթե հարցեր ծագեն, այն ժամանակ կարծիքների փոխանակում տեղի կունենա»: Ժողովը որոշեց երկու տեղեկագրերը կարդալ Հուլիսի 25-ի նիստում: Հուլիսի 25-ի նիստի ժամանակ Յուսուֆ Քեմալը և ուրիշ երեք թուրք պատգամավորներ գրություն փոխանցեցին ժողովի

¹ Վեր. Համբարձում Յ. Աչճեան, Ատանայի եղեռնը... էջ 52:

² Գ.Ա.Թ., Գրիգոր Զոհրապի ֆոնդ, № 2175/II, թ. 1:

¹ «Ազգակ» (Կ. Պոլիս), № 19, 8 (25) մայիսի 1909 թ.:

նախագահին՝ խնդրելով օգնել Պապիկյանի բնտանիքին, հաշվի առնելով պատգամավորի հայրենասիրական ծառայությունները, ինչպես նաև այն, որ նա ապրուստի միջոցներ չի թողել իր որրերին: Գրություն հեղինակներն առաջարկում էին դիմել կառավարությունը, որպեսզի նա Պապիկյանի երեսաներին կենսաթոշակ նշանակի՝ մինչև նրանց չափահաս դառնալը, ինչպես նաև աջակցի, որպեսզի հանգուցյալի 10 տարեկան որդին՝ Պապիկը, Գալաթա-սերայի լիցեյ ընդունվի:

Գրություն ընթերցումից հետո պատգամավորներից շատերը տեղերից հավանություն են հայտնում, իսկ պատգամավոր Ասրմ բեյը կարծիք է հայտնում, թե ժողովը միաձայնությամբ հավանություն կտա առաջարկին:

Բայց կատարվեց հակառակը: Պատգամավոր Նաջի փաշան բողոքեց գրություն հեղինակներից, ասելով. «Պատգամավորներն ընտրվել են ոչ թե ավելորդ դրամներ ծախսելու, այլ պետական գանձարանի չահերը պաշտպանելու համար»: Սրան ձայնակցելով՝ պատգամավոր Շյուքրի էֆենդին բարկացկոտ շեշտով ասաց. «Արդույ Համիդի ժամանակներն անցել են, այլևս անկարելի է սրան-նրան ամսական հատկացնել»:

Ոգևորված, որ իր տեսակետը պաշտպան ունի, Նաջի փաշան նորից է կրկնում, թե անկարելի է ազգի դրամը ծախսել ոչ էական բաների վրա: Իսմայիլ Հազգի բեյը սաստում է Նաջի փաշային՝ «Լո՛ի՛ր» ասելով: Հայեպից պատգամավոր ընտրված Մուստաֆա բեյը տեղից բարկացած ծառս է լինում և արագ վազելով Իսմայիլ բեյի կողմը, գոռում է. «Հիմա բերանդ կպատռեմ, ի՞նչ իրավունք ունես մարդուն սաստելու և լուցնելու, նախագահ էս, ի՞նչ էս»: Իսմայիլ բեյը հարցնում է. «Դո՞ւ ով էս»: Հետևում է Մուստաֆա բեյի գրգռված պատասխանը. «Սա խայտառակություն է: Միայն նախագահն իրավունք ունի ժողովի կարգապահությունը հսկելու»: Այդ ասելուց հետո նա լքում է դահլիճը²:

¹ Տե՛ս Յակոբ Յ. Քէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 621:

² Տե՛ս նույն տեղում, էջ 622-623:

Դրանով իսկ Օսմանյան պառլամենտում վերջ է դրվում հանգուցյալ պատգամավոր Հակոբ Պապիկյանի մասին որևէ խոսակցություն:

Հուլիսի 26-ի նիստը վերջինն էր, որ անդրադարձավ կիլիկյան աղետին: Նախագահ Ահմեդ Ռիզան այդ նույն նիստը փակելիս պատգամավորներին հայտնեց, թե Ադանայի ղեպրերի մասին Յուսուֆ Քեմալ բեյի տեղեկագիրը, որը նախատեսված էր կարդալ այդ օրը, նպատակահարմար է նախ քննարկել մի հանձնախմբում, որից հետո միայն ներկայացնել Պատգամավորական ժողովին: Այդ նպատակով նրա առաջարկով ընտրվեց 13 հոգանոց հանձնախումբ, որը, սակայն, չգործեց, իսկ Յուսուֆ Քեմալի տեղեկագիրն այդպես էլ չընթերցվեց, չխոսելով արդեն Հակոբ Պապիկյանի կազմած և անհետացած տեղեկագրի մասին:

Այսպիսով, Պատգամավորական ժողովի Հուլիսի 26-ի նիստով իշխանությունների համար ընդմիշտ փակվեց կիլիկյան կոտորածների ու ավերների խնդիրը:

Որ խորհրդավոր մահվանից առաջ տարարախտ Պապիկյանը տեղեկագրություն էր ներկայացրել պառլամենտին՝ հայտնի էր հանրությունը, բայց գաղտնի էր մնացել ոչ միայն փաստաթղթի բովանդակությունը, այլև բնագիրը: Միայն մի քանի տարի հետո հայերին հաջողվեց ձեռք գցել Պապիկյանի տեղեկագրի սևագրությունը և գաղտնարար տպագրություն տալով՝ ցրել: Դրա մի օրինակն ընկել էր անգլիական «Թայմս» թերթի թրդթակցի ձեռքը, որն ընդարձակ մեջբերումներով ու վերլուծական նախարանով հրատարակել էր թերթում: Տեղեկագիրն առաջին անգամ ամբողջությամբ լույս տեսավ Փրանսերեն, Փարիզում, «Պրո Արմենիա»-ի (“Pro Armenia”) էջերում՝ Ֆրանսիս դը Պրեսանսեի՝ 1913 թ. ապրիլի 25-ին թվագրած առաջարանով:

Համոզված լինելով, որ Ադանայի ջարդերի ամենամեծ պատասխանատուն թուրքական կառավարությունն է, հայ ժողովրդի մեծ բարեկամը ողջ թուրքահայությունը գոյաչացնում էր, որ Ադանայի ջարդը կարող է է՛լ ավելի լայնածավալ կոտորածների նախերգանքը լինել: «Որևե՛ մէկն իրաւունք չունի ուրանալու այն ճշմարիտ փտանգը, որ կը ծանրանայ Հայաստանի և,

հետևաբար, ողջ քաղաքակիրթ աշխարհի վրայ»¹, - գրում էր նա:

Աղանայի նահանգը կործանողներից առաջին տեղը հատկացնելով քրդերին՝ Պրեսանսեն տազնապ էր հայտնում, որ վերջիններս, հավանական է, հայերի համար նորից պատուհաս են դառնալու: Ներքին գավառներից հասած յուրերը հետզհետե ավելի վրդովիչ են դառնում, շեշտում էր նա: Հայտնապես երևում է, որ քրդերը մտադրված են վերանորոգելու իրենց քսան տարվա շահատակությունները: Աշխատավոր ժողովրդի՝ հայերի մեծամասնությունը ապրում է անստուգուծյան մեջ, հարվածի մշտնջենական սպառնալիքի տակ: Պոլսում թուրքական իշխանությունները ո՛չ ժամանակ, ո՛չ ուժ և ո՛չ թերևս հաստատ կամք ունեն Գուրդիստանի ավազակ ցեղերին հարկադրելու, որպեսզի նրանք հարգանք տաձեն կարգապահության և խաղաղության նկատմամբ²:

Շեշտելով, որ Օսմանյան կայսրությունը, ինի դա Արդույ Համիդի բռնակալությունը թե երիտթուրքերի սահմանադրական կառավարությունը, ի վիճակի չէ երաշխավորել հայության կյանքի և ունեցվածքի անվտանգությունը, Պրեսանսեն ելքը համարում էր թուրքիայի հայկական գավառների վրա Եվրոպայից ընտրված մի կառավարչի նշանակումը³:

Հակոբ Պապիկյանի տեղեկագիրը հայերեն առաջին անգամ առանձին գրքով լույս տեսավ 1919 թ. 4. Պոլսում, Հակոբ Սարգիսյանի թարգմանությամբ:

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԴԵՄ ՄԱՐԴԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ

Կիլիկյան աղետի օրերին միակ սփոփիչ իրողությունը մարդասեր անձանց անձնագոհությունն էր:

Ինչպես արդեն բաղմիցս նշվել է վերը, կոտորածի ժամանակ հայերին և մյուս քրիստոնյաներին փրկելու գործում բացառիկ

¹ «Ատանայի եղևոնը: Տեղեկագիր Ցակոբ Պապիկյանի», էջ 8:

² Նույն տեղում, էջ 8:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 11:

ղեր են խաղաղել մարդասեր անձինք¹, որոնց անունները կրկին հիշատակելը հոգու պարտք է մեզ համար:

Մեծ եղավ Կիլիկիայում գտնվող եվրոպացի և ամերիկացի միսիոներների, օտար միսիոներական ու բարեգործական կազմակերպությունների ղերը: Թեև իրենց հնարավորություններից քիչ, բայց և այնպես ղժրախտություն մեջ հայտնված անձանց աջակից եղան նաև տերությունների հյուպատոսությունները, Կիլիկիայի ափերին հայտնված նավերի անձնակազմերը:

Երբ 1895-1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ եվրոպական պետությունների ղեսպանները Կ. Պոլսում բողոքներ էին ներկայացնում սուլթան Արդույ Համիդին, սա պատասխանում էր. «Ինչո՞ւ եր գանգատվում, չէ՞ որ ձեր հպատակներից ու պաշտոնյաներից որևէ մեկի քիթը չի արյունոտվել»: Բայց ահա այժմ Կիլիկիայում զոհվել էին ոչ միայն եվրոպացիներ, այլև ամերիկացիներ:

Աղանայում սպանվել էին տասնյակի չափ բողոքական միսիոներներ, հիմնականում Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Նրանց թվում էին հայտնի միսիոներներ **Դեյվիդ Ռոջերզը և Հենրի Մորերը**: Դա ԱՄՆ-ի կառավարությանը մեծ անհանգրստություն էր պատճառել: Նախագահ Վիլյամ Հովարդ Թաֆտը Կ. Պոլսից պահանջել էր հայտնել, թե ի՞նչ միջոցներ են ձևարկված ամերիկացի միսիոներներին պաշտպանելու համար:

Իրենց կյանքը վտանգի ենթարկելով՝ Աղանայում քրիստոնյաներին ամեն կերպ օգնում էին ամերիկացի միսիոներներ **Գիբբոնսը, Քենեդին, Չեմբրսը, Վալասը, Էլիզաբեթ և Մեյրի Վեպ քույրերը** և ուրիշներ:

Տարսոնում հայերին օգնության հասան տեղի ամերիկյան բոլեջի տնօրեն դոկտ. **Թոմաս Քրիստին**, նրա տիկինը՝ **Քարմելայթը**, նրանց **ղուստրը** և ուրիշ ամերիկացիներ: Սրանց ջանքերով ջարդից 5000-ից ավելի մարդ փրկվեց²:

Մերսին քաղաքից ապրիլի 1-ին Աղանա էին եկել բրիտանական հյուպատոս, մայրը **Դաուլթի Ուիլին** և նրա աղնիվ ու բարև-

¹ Մանրամասն տե՛ս «Բիզանդիոն», № 3815, 17 (30 ապրիլի) 1909 թ.:

² Տե՛ս **Ցակոբ Ց. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 801:

տես **տիկինը**: Երբ ջարդից վերապրող հայերը դուրս էին քշված քաղաքից և զրկված էին կյանքի համար բոլոր պայմաններից, տիկին Ուիլին Օսմանյան զրամատանը գրավ դրեց իր զոհարեղենը և դրա դիմաց վերցրած փողով կերակրեց կարոտյալներին, մինչև որ Պոլսից ու արտասահմանից նպաստներ հասան: Բացի այդ, ստանձնելով հիվանդապահի պարտականություններ՝ նա մեծ անձնավիրություն կապում էր վիրավորների վերքերը, խնամում նրանց¹:

Անգնահատելի եղավ Փրանսիացի միսիոներների և պաշտոնյաների ծառայությունը: Նրանք իրենց տների և հիվանդանոցի դռները լայնորեն բացել էին աղետյալների առջև: Երախտագիտության են արժանի Քեսապի Փրանչիսկյան հայրերից փաղրե (հայր) **Սարատինո դել Գայծոյի**, Համիդիևում բամբակագործի գործարան հիմնած պարոն **Դոդե Սաբաթիեի**, նրա **տիկնոջ**, նրանց դուստր **Անթուանեթի** և որդի **Շարլի** կատարած գործերը, որոնք կոտորածից ազատեցին ավելի քան 300 հայի՝ ապաստան տալով իրենց տանը: Անմոռանալի են հիսուսյան (Ջիդվիտ) հայրերի կատարած բարեգործությունները: Կարելի է ասել, որ ամբողջ Հաճրենն ազատեց **Ռոզ Լամբերթը**: Ջիդվիտների պես **Ժյուլը** և հայր **Ռեկալը**, իրենց հետ ունենալով ողջ մի քանիստ ծայրեր, անմեղ մարդկանց փրկում էին: Հայկափ Փրանսիական հյուպատոս **Ֆերդինանդ Ֆերիեն**, դժբախտ հայերին անմիջական օգնության փութալուց հետո, մեծ հուզում ապրեց, անկողին ընկավ և երեք ամիս հետո մահացավ հոգեկան տանջանքների մեջ: Հայերին փրկելու համար անչափ ջանքեր գործադրեցին նաև լադարիստ հայր **Դիլանժը**, հայր **Էթիեն Լապաուտենը**, մարիստ եղբայր **Անթուան Դիոսկորը**, **Մ. Ռեսիլոն**, «Սեն Ժոզեֆ» վարժարանի քույրերից մայրապետ **Մելանին**, երկրաչափ **Շաթրեն**, «Ռեմի»-ի տնօրեն, քրիստոնյա արար **Աբբուղը** և ուրիշներ: Այդ բոլորից հայերին ամենամեծ ծառայությունը մատուցեց Դիոսկորը, որը, կյանքը փտանգի ենթարկելով, փրկեց Ադանայի ս. Ստեփանոս եկեղեցում փակված և նրա շրջակայքում խոնկված, ստույգ ջարդի ենթակա շուրջ 5000 հոգու²:

¹ Վեր. Համբարձում Գ. Աչճեան, Ատանայի եղևոնը..., էջ 52:

² Տե՛ս Յակոբ Գ. Քէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 493 (տողատակը):

Մասնավոր հիշատակության արժանի են գերմանացի դործարանատերեր **Շթոքելը** և **Լյուքսը**, ռուսական հյուպատոսարանի թարգման **Արթեմիս (Արթեմ) Յանզոն** և նրա **մայրը**, գերմանական հյուպատոսարանի թարգման **Վորիսը**, Լաթարիայի հույն հասարակությունը, տեղի Փրանսիական ու իտալական հյուպատոսները, Ադանայի ամերիկյան հիվանդանոցի տնօրեն դոկտ. **Պիլլը** և ուրիշներ, որոնք տառապյալ հայերին ամեն կարգի օժանդակություններ չէին դանում³:

Այլ էր, սակայն, մեծ տերությունների պաշտոնական վարքագիծը: Երիտթուրքական կառավարության հետ իրենց հարաբերությունները չփչացնելու համար նրանք ոճրագործների ձեռքը չբռնեցին: Այլալեզու պաշտոնյաները Բեռլինից, Լոնդոնից, Պետերբուրգից, Փարիզից անտարբեր դիտում էին Կիլիկիայով մեկ ծավալված ահավոր իրադարձությունները: Այբքսանդրեթի ծովածոց մտած եվրոպական ռազմանավերի՝ մահվան առջև կանգնած մի քանի հազար հայերին փրկելը կատարվեց այդ նավերի հրամանատարների անձնական նախաձեռնությամբ: Մերսինի և Ադանայի եվրոպական դիվանագիտական ներկայացուցչությունները, բացառությամբ բրիտանականի, պաշտոնական որևէ բողոք չներկայացրին թուրքական իշխանություններին, իսկ Ադանայում գերմանացի դիվանագիտական աշխատողները իրենց հաճույքի համար հյուպատոսարանի պատու հանններից հացի փչրանքներ էին նետում սովահար հայերի առաջ և տեսարանը նկարահանում²:

Երբ կոտորածից անմիջապես հետո Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի միջոցներով գնված ցորենը հասցվել էր Մերսինի նավահանգիստ՝ այնտեղից Ադանա փոխադրելու՝ կենդանի մնացածներին սովից փրկելու համար, երկաթուղու գերմանացի տնօրենը կտրուկ մերժել էր պատրիարքարանի ներկայացուցիչների խնդրանքը և հրաժարվել էր վագոններ տրամադրել³:

¹ Տե՛ս Յակոբ Գ. Քէրզեան, Կիլիկիոյ աղէտը, էջ 804:

² Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես» (Երևան), № 4, 1988, էջ 24:

³ Տե՛ս նույն տեղում:

Եվրոպական կառավարությունները յուրջ փորձ չարեցին իրենց պաշտպանությունն առնելու այն հայերին, որոնք տարրեր ժամանակներում թողել էին Հայ առաքելական եկեղեցին և կաթոլիկություն կամ բողոքականություն ընդունել¹:

Ճշմարտության դեմ անարդար է մեղանչելը, անարդար է նաև Կիլիկիայի ջարդի պարագայում: Հայր երբևէ երախտամոռի եղել, նա երբևէ չի մոռանում այն հաղվազյուտ մարդասիրական վերաբերմունքի ղեպերը, որ այդ արյունամած օրերին դժբախտության մեջ հայտնված հայերին ցույց տվեցին նաև դանազան մահմեդական անհատներ:

Հիրավի, Թուրքիայի պայմաններում, ուր անկուշտ բորենիների եղևնագործությունն ղեպերը հաջորդում էին իրար, անկարելի կլինեին ապրել, եթե բոլոր թուրքերը կամ քրդերը գիշատիչներ լինեին, իսկ հայերը՝ մորթապաշտ դո՛հ-հակների նման: Բարբախտաբար, այդպես չի եղել: Հաղարավոր գազանային, բարբարոսական ղեպերի կողքին եղել են նաև մարդասիրական ղեպեր, որոնք, ցավոք, քիչ էին, աննշան, բայց հայերին հուսադրող էին ու հոգևսփոփ, և նրանց խորհելու առիթ էին տալիս, թե միգրացիոն կզան ժամանակներ, երբ Թուրքիայում հայր կարող է մարդավայել ապրել, չտազնապելով իր կյանքի համար:

Փոքրաթիվ մուսուլման անհատներն իրենց մարդասիրական պահվածքով առաջնորդվում էին ազնիվ զգացմունքներով: Նրանցից շատերը հայերի նկատմամբ ցուցաբերած իրենց վարմունքով կրոնակիցների զայրույթն են առաջ բերել, մինչև անգամ անձր վտանգել: Հասկանալի է, որ եթե չլինեին մարդկոչվելու արժանի այդպիսի մահմեդականներ, ապա հայերի կորուստները շատ ավելի մեծ կլինեին:

Թուրքերը հայերին օգնություն են ցույց տվել մի քանի տեղերում:

Ադանա քաղաքում 45 հայի ազատեցին **Ռալի** ադան և նրա **Օսման, Մուստաֆա, Ալի և Շյուքրի** զավակները: Ադանայի

¹ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1988, էջ 24:

հարիմը փրկեց երկրորդ ջարդի ժամանակ կառավարչության դռանը հավաքված հայերին: Քաղաքի էսկի Համամ թուրքական թաղի բնակիչներից մեկը՝ **Գաղեմ զաղե Հաջի Օսման Էֆենդին** Ադանայի առաջին ջարդի ժամանակ իր տան մեջ ապաստան տվեց ու փրկեց մոտ 70, իսկ երկրորդ ջարդի օրերին՝ 100 հոգու:

Նաջարլիում **Քեռը Ահմեդ** անունով բարի մարդն իր տանն ապաստան տվեց ու փրկեց 32 հաճրնցի հայի: Կարախայիի գայմազամը փրկություն ձեռք մեկնեց մահվան դիմաց կանգնած 140 հայի: Տարսուսում (Տարսոն) նույնպես գտնվեցին բարի մարդիկ, դրանցից մեկը **Էսազ ադան** էր, որը մեծ թվով հայերի ազատեց, իսկ մի ուրիշը՝ **Աբիդին զաղե Շեֆիկը**, ավելի քան 200 հայի կյանք փրկեց: Նույն Տարսոնում **Գյուվենդ զաղե Մուխթարը** ջարդից փրկեց 23 հայի, իսկ մի ուրիշ խղճմտանքով թուրք, իր կյանքը վտանգի ենթարկելով, մահից փրկեց 50 հայի, դա **Մոմոճան** անունով մի մարդասեր էր: Չնայած իր համար ստեղծված վտանգավոր կացությանը, Բախչեի իսլամ երեսիլիներից **Փոյրազ օղլու Մեհմեդ Էֆենդին** մահից փրկեց 168 հոգու: Կարս-Քաղաքի մոտերքում՝ Մյուրֆեստում, խոջա **Մահմուդ Էֆենդին** 200 հայի ազատեց: Հեքիմ-խանի մուղիր **Ղարիբ աղա զաղեն** 62 հայ ընտանիք փրկեց: Նույնպիսի մարդասիրական գործեր կատարեցին էյրի-Բուջաքից խոջա **Մուստաֆա Էֆենդին** և Օսմանիևի մուլա **Ահմեդ Էֆենդին**: Նույն Օսմանիև գյուղում մանրավաճառ մի թուրք շուրջ 50 հայի թաքցրել էր իր մոտ, կերակրել, մինչև որ կրքերը հանդարտվել էին, որից հետո նրանց ճանապարհել էր իրենց տները: Համիդիևի ջարդի ժամանակ թուրք պաշտոնյաները փակել էին խուժանի ճանապարհը և երկար ժամանակ նրան արգելում էին բնակավայր մտնել: Միայն այն բանից հետո, երբ ամբոխի միջից սպառնական ձայներ հնչեցին, թե պաշտոնյաները հավատափոխ են եղել և քրիստոնեություն ընդունել, սրանք այլևս անկարող էին դիմադրել և կյանքը վտանգի չենթարկելու համար՝ ստիպված տեղի տվեցին: Չնայած դրան, Համիդիևի մի թուրք կալվածատեր կարողացել էր տասնյակ

Հայերի իր տանը 20 օր շարունակ պահել ու կերակրել:

Սառնրի չրջանում մի քանի Հայկական գյուղեր ջարդից ազատվել են իրենց թուրք հարեանների շնորհիվ:

Երբ Զերեյ-Քերեքեթի սանջակի Իսլահին (Քելլեր) Հայկական գյուղը ենթարկվում է հարձակման, բնակիչները կարողանում են ժամանակին փախչել լեռները, բայց չորս օր անց, քաղցից հալածված, բոլորն ստիպված իջնում են դաշտ, ուր ապաստան են գտնում թուրք հարեանների մոտ: Վերջիններս նրանց խնամում են և խաղաղություն հաստատվելուց հետո հանձնում իշխանություններին:

Նույն սանջակի մութասերիֆը գինել էր էրզինի գավառակի կենտրոն էրզին գյուղի թուրքերին, որոնք խանի մեջ ապաստանած մոտ 200 հայի չրջապատել էին և սպառնում էին կոտորել: Երկու թուրք կրոնավորներ, կանգնելով ամբոխի առաջ, Ղուրանից կարդում են զանազան կտորներ՝ ապացուցելով, որ անմեղ մարդ սպանելը հանցանք է, և Մուհամմեդ մարգարեն ոճրագործներին երբևր չի կարող ներել: Թուրք խուժանը հեռանում է, և հայերը փրկվում են ջարդից¹: Նույն գավառի Տելի-բեյ գյուղի 80 հայ ջարդվում են, բայց 61 հոգի փրկվում է շնորհիվ գյուղի թուրք բնակիչ **Բայթարո Ալի էֆենդու**, որը նրանց ապաստան է տալիս իր տանը, ապա ուղևեցում Դեռթ-Յոլ:

Ինչպես արդեն իր տեղում նշվել է, Միսիսի հաղարապետը **Լութֆի բեյն** էր, որ տեղացի և դրսից եկած մի քանի հարյուր հայերի իր պաշտպանություն տակ էր առել, չնայած այն բանին, որ կատաղի խուժանը ամեն թույլ սպառնում էր բոլորին կոտորել: Այդպես էլ եղավ, երբ Լութֆի բեյն իր զորամասով մեկնեց Հաճրն՝ փրկելու այնտեղ գտնվող 7 ամերիկու հիներին:

Այնթապի գայմազամ **Քեմալ բեյը** կարողացավ ստույգ ջարդը կանխել: Քեսապի կոտորածի ժամանակ իրենց մարդասեր վերաբերմունքը դրսևորեցին բազմաթիվ իսլամներ: Ահա նրան-

ցից մի քանիսը. Լաթաքիայի մութասերիֆ **Մուհամմեդ Ալի բեյը**, փրկեց քաղաք խուժած հաղարավոր փախստական հայերի կյանքը: Սրտածնյիկ տեսարաններից խորապես ղգացված այդ բարի այրը փղձկալով գիրկն էր վերցնում ու ժասպատ մանուկներին, չոյում նրանց մաղերը և լաց լինում: Ծայրահեղ հոգածությունը նա խնամք տարավ, որպեսզի աղետոյալները Լաթաքիայում եղած ժամանակամիջոցում հաց ու ջուր ունենան: Ալի բեյին ենթակա հարյուրապետ **Սուբհի բեյը** եռանդով աջակցում էր իր պետի մարդասիրական ձեռնարկներին՝ անթերի կատարելով իրեն բաժին ընկած պարտականությունները: **Հաջի Ահմեդը** Քեսապից 15 կմ հեռու Ֆարքի Հասան թուրքմենարնակ գյուղից էր, որն իր տան մեջ մեծ թվով հայերի պատսպարեց և պաշտպանեց: Իր եղբայրների հետ նա, լեռներն ընկած, հավարում էր թաքնված հայերին և անվտանգ տանում ու հանձնում աղատարար շոգենավերին: Օրդու ավանի թուրքմեն երեկյիներից **Սադըզ** խոջան իր մարդկային պարտքի թելադրանքով ամեն ինչ արեց, որպեսզի կասեցնի գյուղում համախմբված թուրք երիտասարդների արշավը Քեսապի վրա: Երբ այդ բանը չհաջողվեց, նրան մնաց անեծքներ տեղալ արյան հոտն առած ջարդարարների վրա: Օրդուի մարդասեր անձերից էր նաև **Լաթիֆ** աղան, որը մահվան սպառնալիքների առջև չատ բան արեց մեղմելու քեսապցիների զրկանքներն ու վիշտը¹:

Քեսապցի հայտնի բժիշկ Սողոմոն Արեյանի տիկինն իր ութը գավակներով և անտիոքցի երկու որբերով ու քրոջ հետ չորս օր շարունակ թաքնված է մնում մի քարայրում՝ անթի, ծարավ ու սարսափի մեջ: Մի քանի թուրք գտնում են թաքստոցը և ունեցած-չունեցածը կողոպտելուց հետո նրանց նկատմամբ ամենապիղծ արարքներ են կատարում: Հանկարծ վրա է հասնում այդտեղով պատահարար անցնող օրդուցի հայտնի ոճրագործ, կյանքի մեծ մասը բանտերում անցկացրած Արիֆը, որը տեսնե-

¹ ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, № 2175/II, թ. 1:

¹ Տե՛ս **Յակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 803-804:

յով խայտառակ պատկերը, վեհանձն ասպետի պես հարձակվում է իր ցեղակիցների վրա, մեկին սպանում է և մյուսներին փախուստի մատնում, ապա երախտագիտություն լեցուն հայերին առաջնորդում Օրդու և նրանց տեղի հունաց քահանայի խնամքին հանձնում¹:

Կեսարիայի հայերը չենթարկվեցին կոտորածի՝ մարդասեր նահանգապետ **Ֆերիդ փաշայի** ամուր կամքի շնորհիվ²: Այս պատմական այրը հայտարարել էր, որ իր համար թուրքը, քուրդը, հայր կամ հույնը օրենքի առջև պիտի հավասար պատասխանատվություն կրեն և մեկի կորուստը ցավ պիտի պատճառի մյուսին: Կեսարիացի մի հայի Կ. Պոլիս ուղարկած նամակում կարդում ենք. «Արդէն հոս այ մեծ վտանգ մը անցուցինք, եւ եթէ Ֆէրիտ փաշա չըլլար, ո՛վ գիտէ ի՞նչ մեծ աղէտներ պիտի պատահէին: Ֆէրիտ փաշա խիստ հրամաններ տուաւ, եւ բաւական ձերբակալութիւններ եղան, պօսպաններ գտնուեցան, եւ չարագործներն ալ Սեւանիկ զրկուեցան զինուորական ատեանով դատուելու համար»³:

Հայերին զանազան տեղերում փրկել են նաև Կիլիկիայի քրդերը: Այդ ծանրագույն օրերին նրանցից ոմանք տարրերվեցին բուն Հայաստանի՝ հայերի թշնամիներ հանդիսացող քրդերից: Որոշ վայրերում քրդերը ոչ միայն չմասնակցեցին ոճիրներին, այլև հայերին թաքստոցներ տվեցին, վտանգավոր վայրերից ապահով տեղեր փախցրին:

Չերքեզների մեջ նույնպես եղան անհատներ, որոնք այդ օրերին հայերի փրկեցին: Չերքեզ **Մեհմեդ բեյը** Կոկիսոնի շրջանի աղետյալ մի քանի գյուղերի հայերին վերադարձրեց իր աղգակիցների կողոպտած ապրանքները: Հաճրնի շրջանի շատ գյուղեր, ավերի չենթարկվելու համար, պարտական էին չերքեզներին ու չերքեզուհիներին: Եթև Վահկայի շրջանում ջարդեր չե-

ղան, դրա պատճառն այն էր, որ չերքեզ զայնագամը քուրդ խուժանին խստիվ արգելել էր հայաբնակ գյուղերը մտնել:

Բայց մարդասեր անհատների թիվը, մահմեդական մուլեռանդ բնակչության շրջանում, ցավոք, քիչ էր: Մեծամասնությունը կույր գործիք լինելով մոլլաների ու պաշտոնյաների ձեռքերում, աշխուժորեն իրագործում էր նրանց հայաջինջ քաղաքականությունը:

ԱՅՐԻՆԵՐՆ ՈՒ ՈՐԲԵՐԸ

Ջարդից հետո Աղանայում և Կիլիկիայի մյուս հայկական բնակավայրերում հիմնականում այրիներ ու որբեր էին մնացել:

Ցուցակագրված **այրի կանանց** (ամուսինները կորցրածներ, չափահաս աղջիկ-ղավակներ, անղավակ հարսներ) թիվը 10.000-ից անցնում էր⁴: Ի տես այրի կանանց՝ անհնար էր դսպել արցունքը: Նրանք, համարյա բոլորը, ենթարկված էին անգութ ըռնությունների և անլուր կեղեքումների:

Հայ կնոջ կյանքը, մասնավորապես Արևմտյան Հայաստանում, միշտ անմոռն է մարտիրոսություն է եղել: Հնագույն ժամանակներից սկսած՝ կյանքի անապահովությունը, օտարների մոլի ու լկտի ոտնձգությունները, թուրքի ու տգետ քրդի վավաչոտ նայվածքը շարունակ հայածել են նրան, բայց նա միշտ արիարար կանգնած է եղել իրեն հետապնդող օտարի դեմ, եղել անմատչելի՝ մարուր ու անբիծ պահելով իր և բնտանիքի անունն ու պատիվը: Իր անսպառ աշխատասիրությունը ու հոգեցունց վեհությունը՝ հայ կինը հայկադյան ցեղը հավերժացրել է զարավոր մղձավանջի մեջ:

Արդույ Համիդի բռնապետության շրջանում, հատկապես 1895-1896 թթ., երբ Հայաստան աշխարհը սպանդանոց էր դարձել, թուրքերը նաև նպատակ էին դրել հայ կնոջը տևական մուրացկանություն ենթարկել, դրանով իսկ բարոյապես ստորացնել

¹ Տե՛ս **Յակոբ Յ. Քերզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 685-686:

² Տե՛ս «Բիւզանդիոն», № 3824, 28 ապրիլի (11 մայիսի) 1909 թ.:

³ Նույն տեղում:

⁴ ՀԱԱ. ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 18:

նրան: Այդ բանը, սակայն, նրանց չհաջողվեց, որովհետև հայ որրևայրին մահը գերադասեց անպատիվ մուրացկանությունից: Մի կողմից նա ողորմ էր իր կորուստները, մյուս կողմից իր մեջ ուժ էր գտնում աշխատանքով սովից փրկելու իր որրերին, բարձր ու մարտի պահելու իր ցեղի արժանապատիվությունը:

Կիլիկյան աղետի օրերին Ադանայի դաշտում, Տավրոսի ու Ամանոսի բարձունքներում, Ջեյթունում և Քեսապում հայ կիներ հերթական անգամ անվահեր ու անձնագոհ հողի, պատվի անրոնարարելի նախանձախնդրություն ցույց տվեց:

Իրենց կյանքն ու պատիվը վավաչու ձեռքերի չհանձնելու համար հայ կանայք նախամեծար համարեցին ողջ-ողջ նետվել կրակի բոցերի, Սիհուն և Զիհուն գետերի ալիքների մեջ, իրենց ամուսինների հետ հռչակել կացիների ու յաթաղանների տակ:

Այդ ամենը հիացում ու ապշություն էր պատճառում հայուհու պատիվը բոնարարել ցանկացող մարդակերպերին:

Ո՞վ կարող էր չափել վշտակոծ սրտի տառապանքը, նրա ծով ցավերի խորությունն ու դառնությունը: Ո՞ւր էին սիրելի ամուսինը, կաթոգին դավակները, թանկագին եղբայրները...

Թվում էր, թե ամեն ինչ կորած է: Բայց ո՛չ: Անօրինակ աղետի ենթարկված որրևայրին այժմ՝ «խաղաղություն» օրերին, ցմբուր խմելով զուլումի դառնաղի բաժակը, մոխիրների վրա նստած, գերագույն պարտք էր համարում սովից ու հիվանդություններից փրկել անչափահաս դավակներին: Նա իր մեջ ուժ պիտի գտներ ոչ միայն մաքառելու կյանքի համար, այլև՝ բարոյական մոլորանքների ու անկումների դեմ: Չէ՞ որ հայ կիներ միշտ իմացել է համբերել վշտի մեջ և արիանալ փոթորիկների հորձանքում: Հիմա նա պարտք ուներ խնամելու ու փրկելու ազգի գալիքը՝ նշանարան ունենալով անվհատ ու համառ աշխատանքը, որը կյանքի հիմնական պայմանն է:

Հաճրնի հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոսը հայ կանանց հիշեցնում էր. «Ծուլությունը, անգործությունը ամեն տեսակ չարիքներու, ամեն մոլությունների մայրն է ու արմատը, մանաւանդ կիներու համար: Ծոյլ ու անգործ կիները ա՛լ աւելի չուտ կը մոլին ու կը մոլորին: Չաշխատող ձեռքերը պէտք չէ որ

բերան ունենան, վասնզի անոնք արժանի չեն ապրելու»¹:

Տնից-տեղից դրկված, չորարեկ հացի կարուտ մնացած, հայ կնոջ ու նրա դավակների փրկություն ճանապարհը դարձյալ աշխատանքն էր: Դիմելով իր «տարաբախտ այրի քոյրերին»՝ եպիսկոպոսն ասում էր. «Գիտցէ՛ք ու լաւ համոզուեցէ՛ք որ, նպաստը, ձեռքէ տրուած ողորմութիւնը Ձեր բարոյական կորուստը կը ջլատէ, կը սպաննէ ձեր մէջ արժանապատուութեան աղնիս զգացումը, կ'աւրէ, կը ցեխոտէ ձեր պարկեշտ ամօթխածութիւնը, որ հայ կնոջ փառքն է ու մեր տառապալ ցեղին մխիթարութիւնն ու պարծանքը: Հայ կիներ մուրացիկ չի կրնար ըլլալ, ու չէ եղած երբէք»²: Միաժամանակ, եպիսկոպոսը հուսադրում էր, որ իրենք անտեր չեն մնա: «Ձեր ամուսինները մորթող, ձեզի այրիացնող խուժանին հայ ազգը հասկցուց թէ՛ եթէ աշխարհ ու Աստուած մոռնան հայ ցեղը, հայր չմոռնար իր ընտանիքը, նոյնիսկ եթէ աշխարհի վրայ մէկ հատիկ մնայ ան»³:

Ահա թե ինչու, երբ դժբախտ աղետայններն սկսել էին իրենք իրենց վերագտնել աստիճանարար, հայկական քաղաքական, հասարակական, բարեգործական կազմակերպությունները, առաջին հերթին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը ձեռնարկեցին հայ այրիների համար աշխատատեղերի ստեղծման գործին: Նրանց օգնության եկան քաղաքակիրթ մի քանի երկրների կառավարությունները: Կիլիկիայի աղետայններին 50.000 դոլար իշխանական նվիրատվություն արեց ԱՄՆ-ի կառավարությունը⁴: Բացի այդ, ամերիկյան կանանց օգնության կոմիտեները ավելի քան 18.000 կարիքավորների հագուստեղեն բաժանեցին⁵: Տարսոնի, Ադանայի, Մերսինի, Անտիոքի Փրանսիական և բրիտանական հյուպատոսություններն իրենց կառավարություններին հրահանգ էին ստացել աջակից լինել հայերին:

¹ Ներսէս եպիսկոպոս, Դանիէլեան, Կաթիլ մը ջուր այրած սրտերու, Կ. Պոլիս, 1912, էջ 56:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 57:

⁴ Տե՛ս Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, Դ տարի, Կ. Պոլիս, 1910, էջ 40:

⁵ Տե՛ս Շ. 3., Аданские черные дни, Баку, 1909, с. 37.

Օգնություն էր գալիս արտասահմանի հայկական զաղութներից, քաղաքական և հասարակական կազմակերպություններից: Հյուսիսային Ամերիկայի հայերը Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տրամադրության տակ էին դրել 60.000 դոլար, իսկ Եգիպտոսի հայերը տվել էին ավելի քան 40.000 ֆրանկ¹:

Ամենից առաջ պատրիարքարանը կազմեց այրիախնամ ու որբախնամ հանձնաժողովներ՝ Սարգիս ԼՓենդի Սուինի գլխավորությամբ, որոնք ժամանելով Ադանա, գործի անցան պատասխանատվության մեծ զգացումով:

Այրիախնամ հանձնաժողովի տվյալներով՝ Ադանայի նահանգում այրի էր մնացել 3285, Հայեպի նահանգում՝ 787 կին, ընդամենը՝ 4072 կին²: Միայն Հաճրնում կար 4-5 դավակի տեր 1500-ից ավելի այրի: Պատրիարքարանի միջոցներով կամ աջակցությամբ նրանց համար այստեղ բացվեցին գորգագործության, ասեղնագործության, գուլպայագործության և այլ արտադրատեսակների աշխատանոցներ: Նույն միջոցներով՝ կարի ու գուլպայի աշխատանոցներ բացվեցին նաև Ադանայում, Տարսոնում, Միսիսում, Գոդ-Օլուքում և ուրիշ բնակավայրերում, ուր աշխատել սկսեցին հարյուրավոր այրիներ³:

Այրիների համար աշխատատեղեր ստեղծելուն կառավարությունը որոշ աջակցություն էր ցուցաբերում:

1909 թ. ապրիլի 28 (մայիսի 11)-ին Ադանայի վալի Մեհմեդ Ջևադ բեյին փոխարինած Բարան զադե Մուստաֆա Զիհնին անկարող եղավ քիչ թև չատ դրական աշխատանք կատարել, ուստի երեք ամիս հետո կառավարությունը նրան հետ կանչեց և նրա տեղը նշանակեց Սկյուտարի կառավարիչ Ահմեդ Ջեմալ բեյին⁴ (հայոց 1915 թ. եղևոնի դահճապետներից Ջեմալ փաշան: - Ն. Ս.): Օգոստոսի 6-ին նա ժամանեց Ադանա: Նրա առաջին քայլերից մեկն եղավ այն, որ տեղական բյուջեից հատկացում կատարեց

որբերի խնամքի ու այրիների պաշտպանության համար¹:

Ամերիկացի միսիոներ Վիլյամ Ն. Չեմբրսը և բժիշկ Համբարձում Սայիրյանը կառավարության հատկացրած միջոցներով Ադանայում բացեցին մի մեծ ջուլհականոց, որտեղ մեծ թվով այրի կանայք աշխատանքի ընդգրկվեցին: Ջուլհականոցում, բացի զաղզահների վրա կտորներ գործելուց, հյուսվում էին ժանյակներ, ասեղնագործվում թաշկինակներ, պատրաստվում անձեռնոցիկներ և այլն²:

Հայ հասարակության մեծագույն հոգսերից մեկը **որբերի խնդիրն** էր: Սովալլուկ, սիրտ ըղկտող որբ մանուկները նահատակ ամուսինների սուրբ հիշատակն էին, նրանց խոշտանգված ու խորտակված կյանքի միակ մխիթարությունը, մարած օջախների վերջին կայծը, միաժամանակ, Հայ մայրերի վերավոր սրբտերի միակ հույսն ու սփոփանքը:

Ընկած դժբախտության ծովի մեջ՝ մատղաշ ու մաքուր թշվառ հոգիները փրկություն էին տենչում: «... Թշնամիէն հայածուած դժբաղղ հայ կոյսերու, փոքրիկ անմեղ մանուկներու սրտաճմլիկ լացքն ու կոծանքը կ'արձագանգեն կարծես դեռ մինչև հիմա», - Զարդերից բավական ժամանակ հետո գրում էր Ներսես եպիսկոպոսը³:

Կ. Պոլսի հայոց պատրիարքական տեղապահ Հովհաննես եպիսկոպոս Արչարունու ստորագրությամբ 1909 թ. մայիսի 23-ին Բարձր Դռանը մատուցված հիշատակագրում նշվում էր, թե որբերի ընդհանուր թիվը Կիլիկիայում հաշվվում է 10.000, որոնցից 2000-ից ավելին միայն Ադանա քաղաքում և չրջակայքում⁴: Այս թվերն իրական չէին, քանի որ հետագա ուսումնասիրություններն ուրիշ, ավելի բարձր թվեր ցույց տվեցին⁵: Որբերի ընդհանուր թվից ավելի քան 4000-ին առևանգել էին քուրդ, թուրք և

¹ Տե՛ս Կ. Յ., *Адапские черные дни*, с. 37.

² Տե՛ս **Յակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 833:

³ Տե՛ս **Ներսէս եպիսկոպոս Դանիէլեան**, Կաթիլ մը ջուր այրած սրտերու, էջ 58, «Բիւզանդիոն», № 3836, 13 (26) մայիսի 1909 թ.:

⁴ **Վեր. Համբարձում Յ. Աշեան**, Ատանայի եղևոնը..., էջ 30, 73:

¹ Տե՛ս **Վեր. Համբարձում Յ. Աշեան**, Ատանայի եղևոնը..., էջ 73:

² Տե՛ս նույն տեղում, էջ 122:

³ **Ներսէս եպիսկոպոս Դանիէլեան**, Կաթիլ մը ջուր այրած սրտերու, էջ 50-51:

⁴ Տե՛ս **Յակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 560:

⁵ ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, № 2175/II, թ. 2:

չերքեղ հրոսակները¹: Մեծ թիվ էին կազմում անտերունջ որբերը՝ զրկված և՛ հորից, և՛ մորից: Ո՞վ պետք է փրկեր որբ մանուկներին, ովքե՞ր էին սրբելու նրանց արցունքը:

Ուժից վեր խնդիր համարելով այդքան մեծ թվով որբերի նկատմամբ հոգ տանելը՝ Հովհաննես եպիսկ. Արշարունին այդ օրերին ասում էր. «Այլևս Աստուծոյ զիմելէն ուրիշ ճար չէ մնացած հայութեան»²:

Չնայած այդ հոռետեսությանը, ազգը, սակայն, սատար կանգնեց իր ճնողազուրկ զավակներին, փութաց ու հասավ այնտեղ, ուր կարոտյալ ու յացող որբ կար³:

Աղանայի հայոց առաջնորդ Մուշեղ եպիսկ. Սերոբյանը 1909 թ. մայիսի 25-ին Կահիրեից կոչով դիմում է համայն հայությանը՝ կիլիկիահայ որբերին, այրիներին ու ծերունիներին սովից փրկելու հորդորով: «Օգնութիւն բոլոր որբերուն և որբու հիներուն, ասված էր կոչում,- որոնք տառապանքը սնունդի տեղ կը խմեն և աւերակները, մոխիրները իրենց արցունքով կը թրջեն, մահուան ու արիւնի բաժակը մինչև մրուրը քամած:

Օգնութիւն անհայր-անմայր մանկիկներու, որոնց սնունդ մատակարարող ստիւնները չորցած ու կատաղօրէն փրցուած են թիւրք մոլեռանդներու ձեռքով...

Օգնութիւն այդ խոչտանգուած, խաչուած, կենդանւոյն այրուած, մահուան տանջանքին ու չարչարանքին բոլոր վայրագ տեսակներու փորձը իր վրայ կրած, մարտիրոսացած ժողովուրդի մը մնացորդ զուակներուն, անժառանգներուն, որբերուն, այրիներուն, որոնց անունով ու ձայնով կոչում կ'ընեն ձեզի, անոնց ցար իմ կուրծքիս տակ ու անոնց արիւնոտ արցունքը աչքերուս խորը:

Օգնութիւն, օգնութիւն, օգնութիւն ... եթէ չէք ուզեր որ ի սպառ բնաջնջուի Կիլիկիան»⁴:

Առաջինը որբերի խնամքին ձեռնարկեցին Կիլիկիայի օտար հաստատութիւնները, որոնք յայնօրէն բացեցին իրենց ունեցած որբանոցների դռները, ինչպէս նաև արագօրէն հիմնեցին նոր որբանոցներ և հանձն առան որբերին պահել այնքան ժամանակ, մինչև ազգային որբանոցներ կ'հաստատվեն: Բայց եղած որբանոցներն ի վիճակի եղան իրենց տանիքի տակ ընդունելու ծնողազուրկ երեխաների չնչին տոկոսին միայն: Ուստի ապաստարանների, փրկութեան օաղիսների վերածվեցին հյուպատոսութիւններին և միսիոներական դպրոցներին կից շինութիւններն ու այգիները, որտեղ հավաքված փոքրիկները ստանում էին այնքան ուտելիք, որբ գոնե հնարավորութիւն էր տալիս սովից չմեռնել:

Չնայած Կիլիկիայի նյութական ու բարոյական պայմանները բոլորովին աննպաստ էին որբանոցներ բացելու համար, բայց պատրիարքարանն ու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, այնուամենայնիվ, գերադասեցին որբերի հիմնական զանգվածը Կիլիկիայում պահել: Այդ մասին Ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Իգմիրլյանին իր նամակով տեղեկացնում էր Կ. Պոլսի հայոց պատրիարք Եղիշե արք. Դուրյանը¹:

Որբերի հավաքման և նրանց ապրեցնելու դժվարագույն գործը զլուլս բերելու համար Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը ստեղծեց «Կիլիկիոյ կեղրոնական որբախնամ յանձնախումբը», որն անմիջապէս ձեռնարկեց իր պարտականութիւնների կատարմանը²: Հանձնախումբը սրտառուչ կոչով դիմեց ամբողջ հայությանը՝ «Ատանայի որբոց համար» հանգանակութիւն կազմակերպելու նպատակով: Կոչում կարդում ենք. «Տակաւին թաց են աչքերնիս այն լեղի արցունքներով, որոնք թափուեցան մեր հազարաւոր եղբայրներուն ու քոյրերուն համար, որոնց արիւնալից ու խողխողուած մարմինները ահաւոր և կսկծեցուցիչ վայրի մը փոխեցին Կիլիկիոյ գեղեցիկ երկիրը. բայց մեր անհուն ցար պէտք չէ որ թմրեցնէ մեզ և մոռցնել տայ մեր պարտա-

¹ Տե՛ս «Հորիգոն», № 9, 15 հունվարի 1912 թ.:

² **Յակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 560:

³ Տե՛ս «Արեւելեան մամուլ», № 21, 19 մայիսի 1909 թ., էջ 600-601:

⁴ «Տարազ» (Թիֆլիս), № 5-6, մայիս-հունիս, 1909:

¹ ՀԱԱ. Փ. 57. ց. 5, գ. 14, թթ. 7-11:

² «Արեւելեան մամուլ», № 17, 21 ապրիլի 1909 թ., էջ 583-584:

կանութիւնը ասանկ անօրինակ տարարողութեան մը մէջ. ու պէտք չէ որ վայրկեան մը իսկ կորսնցնենք: Աչքերնուս առջև բերենք այն հաղարատը մատողաչ, փափուկ և անօգնական մանկիկները, որոնց սրտակեղէր ձայները մինչև մեզի կը հասնին, անոնք ի գո՛ւր կը փնտռեն գուրգուրտ մայրեր ու գորովալից հայրեր. Կիլիկիոյ ապատածները տխուր արձագանգ մը միայն ունին իբր պատասխան այդ լայազին ձայներուն ու հատաչնորուն: Անոնց հայրերը արիւնաշաղախ դիակներ եղան, ու անոնց մայրերը, եթէ երբէք ողջ են, տխուր, վտիտ գիրկեր ունին միայն, հոն դանոնք ողողելու իրենց յուսահատ և տրտմաթախիժ արցունքներով: Ի՛նչ աղետարչ պատմութիւններ ունին այս պղտիկները: Անոնցմէ մէկը, իր մօր կարօտով այրած, այ չկրցաւ դիմանալ և գիչերով որբանոցի որմերէն դուրս նետուեցաւ, իր մայրը գտնելու և անոր գիրկը դառնալու համար: Կը համարձակի՞ւնք մեր երեսը մէկդի դարձնել թափառայած որբերուն տխուր տեսարանէն: Անոնք մերիններն են արդեամբ: Յորչափ հայ ազգը կը մնայ, անոնք պէտք չէ որ լքուած և որբ մնան, մենք ենք անոնց հայրն ու մայրը: Անոնց ծնողքը մեր եղբայրներն ու քոյրերն էին, որոնք հոն՝ արիւնաթաթաւ Կիլիկիոյ մէջ ինկան իբր նահատակ ու մարտիրոս, ու իրենց ջախջախուած ձեռներով մեզի աւանդ տուին այս որբերը»¹:

1909 թ. հունիսի սկզբներից ազգային որբանոցներ բացվում են աստիճանաբար²: Մինչև տարվա վերջն ստեղծվեց յոթը որբանոց՝ Աղանայում, Հաճրնում, Հասանբեյիում, Չորք-Մարդպանում, Այնթապում, Մարաշում և Մերսինում: Վերջինիս որբանոցը շուտով փակվեց՝ հանգանակած միջոցներն անբավարար լինելու պատճառով: Այդ վեց հաստատություններում 1500 որբ էր պատասպարվել³: Ուրիշ 2500 որբեր ցուցակագրված էին, բայց տակավին չարունակում էին իրենց մայրերի մոտ մնալ: Որբանոցներում ընդգրկված և ցուցակագրված 4000 որբեր

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թ. 28:

² Տե՛ս «Բիւզանդիոն», № 3848, 27 մայիսի (9 հունիսի) 1909 թ.:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 1202, թ. 18:

պահելու համար տարեկան 24 հազար օսմանյան ոսկի անհրաժեշտ էր ունենալ, բայց առայժմ որբանոցների համար կարողացել էին 10.000 ոսկի հավաքել¹:

Քանի որ այլևս հնարավոր չէր որբանոցների թիվը մեծացնել, ուստի ազգային մարմինները որբերին տեղափոխում էին Բևյութ, Ալեքսանդրիա, Կիպրոս, Կ. Պոլիս, Իզմիր և հայաբնակ այլ վայրեր: Պատրիարքարանը և քաղաքական ու հասարակական կազմակերպությունները ազգակիցներին կոչ էին անում հնարավորություն սահմաններում որբեր որդեգրել: Ինչպես դեպքերը ցույց տվեցին, կոչն արդյունավետ եղավ:

Որբերին հավաքելու և խնամելու գործում անգնահատելի եղավ պատրիարքարանի ստեղծած Որբախնամի և նրա ղեկավար՝ վերը հիշատակած Սարգիս էֆ. Սուինի ղեկը: Նա իր գործակիցների հետ շրջեց Կիլիկիայով մեկ՝ գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, անձնագոհ ջանքերով հավաքեց փոթորկի բռնված, բորիկ, գլխարաց ու կիսամերկ հաղարավոր որբերի և տեղավորեց նորաբաց որբանոցներում: Այդ նպատակով Կ. Պոլսում, Իզմիրում և այլուր կազմակերպվում էր դրամահավաք՝ հատկապես հայ ունեոր դասի շրջանում: Կազմակերպվում էին թատերական ներկայացումներ, որոնց ամբողջ հասույթը որբանոցների բացման էր տրամադրվում: Օրինակ՝ հայ մեծ դերասան Վահրամ Փափաղյանը Կ. Պոլսի Սկյուտարի թատրոնում մայիսի վերջին ներկայացրեց «Կորբաղո» դրաման, որի հասույթը հանձնվեց Սուինի գլխավորած որբախնամ կազմակերպությանը: Որբախնամն ամեն օր հայկական տարբեր համայնքներից գանազան բնույթի նվիրատվություններ էր ստանում²:

Պատրիարքարանը և տեղի բարեգործական հաստատություններն անկարող էին ապահովել որբերի նորմալ սնունդը, որի պատճառով, սկզբնական շրջանում, երևիսաններն օրը կիսաքաղց էին անցկացնում: Ականատեսը նկարագրել է որբերի ընթերթի պահը. «Մէյ մէկ պատառ հաց ու պանիր կը բաշխուի

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թթ. 17-18:

² Տե՛ս «Բիւզանդիոն», № 3839, 16 (29 մայիսի) 1909 թ.:

իրենց: Ու կր սկսին ուտել ... Ա՛հ, որբերուն այդ ընթրիքը եւ անոնց անհուն, անպատմելի տխրութիւնը...: Բայց կերուած հացը կարծես նոր կենդանութիւն մը կու տայ որբերուն, ոմանք կր սկսին խնդայ ու իրարու հետ կատակել: Ուրիշներ, աւելի փոքրիկները կու լան, իրենց մայրիկները կր կանչեն, քանզի դեռ չեն հաշտուած անոնց ի սպառ մեկնումի, անվերադարձ անհետացումի գաղափարին հետ, դեռ չեն վարժուած անոնց անհացման անյեղի իրողութեանը, դեռ չեն ըմբռնած անոնց մահը...»¹:

Չնայած որբանոցների այդ ծանր վիճակին, սկզբնական շրջանում, կենդանի մնացած ոչ բոլոր մայրերին էր հաջողվում իրենց մանուկներին այնտեղ տեղավորել: Ահա այդ դժբախտ մայրերից մեկի աղիոգորմ խնդրանքը. «Հոգերդ առնեմ, ճար ու տէրման չունիմ... Աչխարհիս մէջ մինակ դաւակս է մնացեր, ես պահելու-պահպանելու վիճակ չունիմ, աչքերս կուրնան ... Այսպէս մայր կ'ըլլա՞յ, միլէթին (ազգին: - Հ. Ս.) միայն կր յանձնեմ քանի մը տարի...»²:

Որբերի շատ քիչ մասը հնարավոր եղավ պատսպարել որբանոցներում: Մեծ մասը մնում էր այրի մայրերի մոտ՝ հացի ու դգեստի կարոտ:

Որբանոցները բացվում էին բացառապես հայ և օտար նվիրատուների միջոցներով: Բացառություն էր օսմանյան իշխանութիւնների՝ Աղանայում բացած տղայոց որբանոցը, ուր 500 որբ էր հավաքվել³: Նյու Յորքում յույս տեսնող «Արագած» չարթթաթերթը գրում էր, թե այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ այդ որբանոցում պայմանները ծայրահեղորեն անմխիթար են մանուկների կյանքի համար և որ թուրք դաստիարակների խնդիրը նրանց թուրքացնելն է, որբերի՝ կենդանի մնացած մայրերը, «լսելով յուրը, թափեցան որբանոց եւ իրենց տղաքները ետ առնել ուղեցին...: Անոնց արցունքէ և թշուառութենէ տոչորուած դէմքերուն վրայ նորատեսակ սարսափ մը կար ...

– Հո՛գ չէ, կ'րակին, թող մեր քովիկը մեռնին, միթէ միսներուն մեռնիք չտեսա՞նք, բայց տիւշմանին մի՛ յանձնէք...»⁴:

Նույն «Արագածը» «Կիլիկիոյ մեր որբերը» խմբագրականով նախատում էր հայութեանը, որ չի կարողանում այնքան գումար հայթայթել, որպեսզի արցունայի արհավիրքից փրկված մանուկները ձեռք չերկարեն այն պետութեանը, որը և՛ կազմակերպել, և՛ իրականացրել է իրենց ծնողների սպանութիւնը⁵: Նույն բողոքը բարձրացնում էին Կ. Պոլսի «Ազգակը»⁶, Իգմիրի «Արեւելեան մամուլը»⁷ և այլ պարբերականներ:

Ռեալիստական կուսակցութեան երկու ղեկավար գործիչներ՝ Լևոն Մկրտիչյանը և Վահան Մալեղյանն իրենց նամակագրութեան մեջ մտահոգութիւն էին հայտնում, որ Կ. Պոլսում, Իգմիրում և այլուր, ինչպես և արտասահմանի հայ գաղութներում կազմակերպված դրամահավաքները սպասված արդյունքը չէին տվել: Հանդանակութեանը հիմնականում մասնակցում էին Կ. Պոլսի, Իգմիրի և այլ վայրերի հայ խոնարհ խավերը:

Վ. Մալեղյանին գրած նամակներից մեկում Լևոն Մկրտիչյանն աններելի էր համարում, որ Կիլիկիայի այրիներին ու որբերին անուշաղբութեան են մատնել հատկապես հայ ունեւորները⁸:

Մի հրապարակման մեջ դառը խոսքեր էին ասված սովահար հայ մանուկներին օգնութեան ձեռք չմեկնողների հասցեին: Դիմելով ազգասիրական զգացմունքներից դուրկ, բայց փողի քսակի տեր այդպիսիներին, հրապարակման հեղինակը գրում էր. «Գիտենք, թէ ձեր ոսկիները ձեր կեանքէն աւելի կ'արժեն... Դուք մեծանձնութիւն չունեցար 500, 600, 1000 ոսկի միանուագ նուիրելու այսպիսի աղեկտուր վայրկեանի մը, չմտածեցիք թէ ձեզի նման հարուստներ կային Ատանա եւ չրջակաները, որոնք այսօր հացի կարօտ են, եւ կրնայ ըլլայ որ օր մ'այ դուք անոնց վիճակակից ըլլաք եւ օրուան հացի կարօտ, չմտածեցիք այս

¹ Սուրէն Պարթեւեան, Կիլիկեան արհաւիրքը, էջ 137:

² «Արագած» (Նյու Յորք), № 17, 17 օգոստոսի 1911 թ., էջ 197:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս «Արագած», № 17, 17 օգոստոսի 1911 թ., էջ 197:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 193-194:

⁶ Տե՛ս «Ազգակ» (Կ. Պոլս), № 23, 25 հունիսի (8 հուլիսի) 1909 թ.:

⁷ «Արեւելեան մամուլ», № 20, 12 մայիսի 1909 թ., էջ 557-559:

⁸ Գ.Ա.Թ. Վահան Մալեղյանի ֆոնդ, ց. 1, թղթ. 381, թ. 8:

ամէնն. Եւ Եթէ մտածեցիք իսկ՝ չկրցաք ունենալ նուիրելու, տալու գեղեցիկ շարժումներ: Դուք դիզելու հաճոյքը ունիք, բայց երբեք չպիտի կրնաք նուիրելու հաճոյքին վսեմութիւնը բմբռնել, որովհետեւ ձեր հարստութիւնը անդիի աշխարհը տանելու միամտութիւնը ունիք:

Այս տազնապալի բուսկին, երբ ամբողջ Կիլիկիա կորսուելու վրայ է, այսինքն հայութեան ամէնէ աւելի բարգաւաճ մէկ դանգուածը, չպիտի կրնայ մոռնալ ժողովուրդը, որ մեր հարուստները կրնային հազարաւոր ոսկիներ նուիրել եւ քանի մը տասնակներով բաւականացած են: Այս ոչ միայն ամօթ մ'է, այլ նախատինք մը, թուք մ'է նետուած հայութեան երեսին: Ո՞վ պիտի վերցնէ մեր հարուստներու՝ թշուառութեան դէմքին նետած այս ձեռնոցը: Անշուշտ՝ ժողովուրդը, և ժողովուրդը չմոռնար երբէք:

Շարժեցէ՛ք, ո՛վ հարուստներ, շարժեցէ՛ք, Կիլիկիա կորսուելու վրայ է, Կիլիկիոյ հայութիւնը հոգեվարքի մէջ է, լիաձեռն օգնութեան հասէ՛ք անոնց, ինքնակամ, սիրայօժար կերպով: Աճապարեցէ՛ք: Դեղ, դարման, սպեղանի պէտք է Կիլիկիոյ ձեր հայրենակիցներուն: Տուէ՛ք: Ա՛յ բաւ է որքան խօսեցաք: Ունեցէ՛ք գէթ անգամ մը՝ կեանքերնուդ մէջ՝ ինքնաբեր շարժում մը...»:

Իր հերթին, Սուրեն Պարթևեանը գրում էր.

«... Ազգին արիւնագանդ թշուառութեան նկատմամբ այսօր քան ժլատ մեր հարուստները այս ամառ ալ ինքզինքնին չի զրկեցին դէպի Եւրոպա իրենց տարեկան հաճոյախնդիր ճամբորդութիւններէն, որոնց համար իրենցմէ իւրաքանչիւրը վերապրող Կիլիկիոյ տուածնին հնգապատիկը - Եթէ ոչ տասնապատիկը - պիտի խարճէ... (ծախսէ: - Հ. Ս.) Վիչիի, Մարիէնպատի կամ էքսի ջուրերուն մէջ իրենց հեշտաւէտ լողանքն առած ատեննին Կիլիկիոյ արիւնին յաճախանքէն պիտի չի հայածուին... Բ՛նհ, ասանկ չրլլալիք բաներ մտքէ անցնելու համար գրական-

¹ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 2378, վազ. 323, թ. 6 (թերթի կտրոն, որի վրա չկան պարբերականի անվանումը, ամսաթիվը. հեղինակի անունը):

նութիւնը ո՛րքան միամիտ, տիրացու կ'ընէ երբեմն մարդս, չըսելու համար ապուշ...»:

Կիլիկիան դժբախտներին դրամական ու նյութական աջակցութիւն ցուցարեւելու հրատապ գործից դարմանալիորեն հետու էր կանգնել ռուսահայութիւնը:

Դեռ 1909 թ. մայիսի 29-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կազմած Կիլիկիոյ որբախնամ կեդրոնական հանձնաժողովը (ԿՈԿՀ) դիմել էր ս. էջմիածին՝ դրամական օգնութիւն փութացնելու խնդրանքով: Նույնպիսի բովանդակութեամբ մի նամակ էջմիածին էր ուղարկվել հունիսի 5-ին: Որպես այդ երկու նամակների պատասխան, էջմիածնի սինոդը Կ. Պոլսի ԿՈԿՀ-ին տեղեկացնում էր, որ ուղարկում է իր անդամներից հավաքած 100 ռուբլին: Հոկտեմբերի 25-ին ԿՈԿՀ-ը դիմում է անձամբ կաթողիկոսին՝ խնդրելով աչքաթող չանել կիլիկիան որբերին, որոնք «կը հիւծին անմոռնչ, կարօտ պատառ մը հացի»:

Նոյեմբերի 25-ին հանձնաժողովին էջմիածնից պատասխանում են, որ կազմված է «զնոր մարմին հանգանակութեան՝ ի նպաստ կարօտ ժողովրդեան Ատանայի»: Իրականում դա թուրքաց Հայաստանի հայ աղետոյալներին օգնող նախկին «Հանգանակիչ մասնաժողովն» էր, որը վերսկսել էր իր գործունեութիւնը: Այդ մարմինը կոչով դիմեց ողջ ռուսահայութեանը, ուր ասված էր. «... կայսերական բարձր կառավարութիւնից ստացած թոյլտուութեան համաձայն՝ սրանով կոչ է արուում կայսրութեան բոլոր հայ աղգարնակութեանը՝ փութալ օգնութեան ձեռք կարկառել ... Ազանայի սոսկալի ջարդերից յետոյ անօգնական, անտէր մնացած թշուառ որբերին, ... ամօքել [նրանց] դառն վշտերը, եւ փրկել»:

Սակայն դրամահավաքը սպասված արդյունքը չտվեց.

¹ «Արևելեան մամուլ», № 25, 16 հունիսի 1909, էջ 577:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թ. 3 և շրջերես:

³ Նույն տեղում, թ. 5:

⁴ Նույն տեղում, թթ. 6-7:

⁵ «Լուծայ» (Թիֆլիս), № 5-6, մայիս-հունիս, 1909, էջ 87:

Կովկասում և Ռուսաստանում բնդամենը 3000 ուրլի հավաքվեց¹։

4. Պոլսի հայոց հրաժարյալ պատրիարք Եղիշե արք. Դուրյանը Ամենայն հայոց կաթողիկոսին ղեկտեմբերի 23-ին շնորհակալություն հայտնելով 3000 ուրլի ուղարկելու համար, միաժամանակ գրում էր, որ ճիշտ կլիներ, եթե «Ձեր Վեհափառության միջոցառման Ռուսիոյ պատուական մեր եղբայրները վիճակին մօտեն տեղեակ լինեն և ըստ այնմ շարունակեն տաճել գույթ և հոգածություն իրենց տառապեալ եղբայրներու մասին»։

1910 թ. հունվարի 15 (28)-ին ԿՈՎԷ-ի ղեկավարությունը վերջին անգամ դիմեց էջմիածնին և խնդրեց «Ռուսաստանի եղբարց որբասէր զգացումը ուղղել դէպի Կիլիկեան որբերը»։

Բայց, ավանդ, ռուսահայությունից ստացված 3000 ուրլին առաջին և վերջին օգնությունը եղավ Կիլիկիայի որբերին ու այրիներին։

«Մշակ», «Բարու», «Հորիզոն», «Լուծայ» և այլ պարբերականներ անդրադառնում էին այդ տարօրինակ երևույթին և պատճառները փնտրում։

Դաշնակցական «Հորիզոնը» 1909 թ. № 9-ում երևույթի պատճառը տեսնում էր նրանում, որ հայ ժողովուրդը, հատկապես նրա մտավորականությունը, հոժար կամքով բարեգործություն անելու սովոր չեն, ուստի հեղափոխական կազմակերպությունները ստիպված դիմում են բռնություն։ Կովկասահայ մամուլի ուրիշ օրգաններ այլ պատճառներ էին փնտրում։ Պարբերականներից «Լուծան» էր, որ ի մի էր բերում պատճառների հիմնավորումները, հաստատում կամ մխտում դրանք։

Հակադարձելով «Հորիզոնի» տեսակետին, «Լուծան» նկատում էր, որ հայոց պատմության սկզբնական օրերից փաստերը հակառակ են ապացուցում։ «Հայ ժողովուրդը, բայց ոչ ներկայի հայ աֆերիստ ինտելիգենտները (խարերա մտավորականները։

- Հ. Ս.) և հարուստները, միշտ յօժարակամ է բարեգործություններ արել։... Երբ ոչ դաշնակցականներ կային և ոչ հնչակյաններ, հայ ժողովուրդը բոլորովին յօժարակամ տալիս էր իր տաժանակիր և միխօնաւոր արժեքող աշխատանքի արդիւնքները...»։

Բարեգործությունը հայերի արյան մեջ է եղել վաղնջական ժամանակներից, իսկ Հայաստանում քրիստոնեությունը տարածվելուց հետո դա ապրելու կերպ էր դարձել։ Դեռ Քրիստոսի ծննդյան չորրորդ-հինգերորդ դարերում, բարեգործ հայերի հոժարակամ նվիրատվությունների հաշվին Հայաստանի շատ գյուղերում ու քաղաքներում հիմնվել էին հիվանդանոցներ ու աղքատանոցներ։ Այդ մասին են վկայում վաղ միջնադարյան հայ պատմիչներ Մովսես Սորենացու, Փավստոս Բուղանդի, Ագաթանգեղոսի և այլոց հաղորդած տեղեկությունները²։

Բարեգործության ավանդությունը մինչև ուշ միջնադար և դրանից հետո կենդանի էր մնացել։ Հայտնի է նույնպես, գրում էր «Լուծան», որ հայերը մեծամեծ ու հոժարակամ նվիրաբերություններ են արել նորագույն ժամանակներում։ Նվիրատվությունների շնորհիվ են կյանքի կոչվել Բաքվի, Թիֆլիսի և այլ քաղաքների բարեգործական բնակրությունները, Կալկաթայի, Մոսկվայի Լազարյան, էջմիածնի ճեմարանները, բազմաթիվ տպարաններ, լրագրեր, հասարակական հաստատություններ։

Իսկ ինչո՞ւ այժմ հայերը չեն օգնում աղանացիներին, հարցնում է պարբերականը և վկայակոչում մի շարք պատճառներ.

1) Ռուսահայերը հոգնել են թուրքահայերին օգնելուց։

2) Թուրքահայերի փրկության համար զենք հայթայթելու նպատակով հայ հեղափոխական երկու կուսակցությունները՝ Դաշնակցությունը և Հնչակը ռուսահայ ունեւորների շրջանում բազմաթիվ բռնություններ են կատարել, դիմել են նույնիսկ սպանությունների (ժամհարյաններ, Ազամովներ և այլք), որի պատճառով ոչ միայն մեծահարուստները, այլև հասարակ մար-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թ. 3 և չրջերես։

² Նույն տեղում։

³ Նույն տեղում, թթ. 17-18 և 18-ի չրջերես։

¹ «Լուծայ», № 7-8, հուլիս-օգոստոս, 1909, էջ 89-90։

² Տե՛ս Փաւստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 63-64, Ագաթանգեղայ պատմութիւն, Թիֆլիս, 1883, էջ 146-148։

դիկ հրաժարվում են այլևս նվիրատվություններ անել թուրքահայերի համար՝ նույնիսկ Ազանայի ողբերգությունից հետո: Չէ՞ որ «բոնություններ չի կարելի համակրություն առաջացնել դէպի այն գործը, որի անունից կատարուել է բոնությունը»¹.- գրում էր «Լուսնան»: «Ոչ մի ազգի մեջ յեղափոխականները յանուն գաղափարի եւ փողի մասնաւոր սպանություններ չեն կատարում: Ցոյց տուէ՛ր որ Անգղիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի եւ նույնիսկ ուս յեղափոխականները բուն Ռուսաստանում մասնաւոր մարդկանցից փող պահանջած լինէին յանուն գաղափարի եւ մերժման դէպքում սպանություն կատարէին: Բայց այս բոլոր կարելի է համարում մեղանում, այսինքն՝ հայերի, վրացիների եւ թուրքերի մէջ, որովհետեւ իսկական կույտուրայից մենք ղեռ շատ հեռու ենք եւ մեր յեղափոխականները գաղափարի մարդիկ չեն»²:

3) «Վերջին քսան և հինգ տարուայ ընթացքում,- շարունակում էր «Լուսնան», - ռուսահայերը տուել են թուրքահայերին մի քանի միլիոններ: Միայն հանգուցեալ Արծրունին սովելոց համար երկու հարիւր հազարից աւելի ժողովեց: Մենք ռուսահայերս էլ ունեցել ենք մեր դժբաղդությունները, մեր Ախալքալաքը և Շամախին էլ երկրաշարժից կործանուեցին, հազարաւոր մարդիկ զոհուեցին եւ հազարաւոր ընտանիքներ զժրաղղացան հայթուրքական կոտորածների ժամանակ, բայց արդեօք մի հարիւր բուրլի ուղարկեցի՞ն մեզ թուրքահայերը, որոնց մեջ կան շատ հարուստներ, որոնք մեր Մանթաշովներից պակաս հարուստ չեն»³:

Որպես այդ մտքի յրացում, պարբերականը բերում էր մի ուրիշ օրինակ ևս: 1905 թ. հեղափոխությունն նախօրյակին ռուսաց կառավարությունն, ի դեմս իշխան Գոլիցինի, մի անմիտ գործողություն կատարեց: Կարծելով թե էջմիածնում միլիոններ կան, որոնք իրր գործածվում են հեղափոխության համար, նա

¹ «Լուսնայ», № 7-8, հուլիս-օգոստոս, 1909 թ., էջ 89-90:

² Նույն տեղում, էջ 90-91:

³ Նույն տեղում, էջ 88:

1600 տարիներ գոյություն ունեցող Հայոց եկեղեցու ղեմ կատարեց եղկելի արարք՝ խլեց ս. էջմիածնի բոլոր կայվածները՝ հազարավոր մարդկանց սոված թողնելով: «Արդեօք ազգային այդ մեծ աղէտի օրերում, երբ ռուսահայերը ոչ միայն հարիւր հազարներ դրեցին իրենց կաթողիկոսի տրամադրությունն տակ, այլև հազարաւոր մարդիկ աքսոր գնացին, բանտարկուեցին եւ սպանուեցին, արդեօք այդ ժամանակ թուրքահայ մեր եղբայրները մի կոպեկ ուղարկեցի՞ն մեզ: Բացի այս՝ այդ ժամանակ ռուսահայերի մէջ չգտնուեց ոչ միայն ոչ մի դաւաճան եւ մատնիչ, այլ եւ ոչ մի երէցփոխան, որ կատարէր իշխան Գոլիցինի հրամանը (բայց եթէ կարելի լինի հրատարակել թէ այսօր բանտարում գտնուած մարդկանց գործում որքան տաճկաստանցիների դոնտաներ (մատնություններ: - Հ. Ս.) կան): Տաճկահայերի մէջ գտնուեց միայն մի անձնաւորություն, որ մեծ բարոյական օգնություն հասցրեց էջմիածնին եւ այդ մարդուն տաճկաստանցիները սոսկալի ապերախտութեամբ անարգեցին. այդ մարդը պատրիարք Օրմանեանն էր, որ իւր մի քանի հոգևորականներով ամենագորեղ եւ ամենախելօք բողոքը գրեց իշխան Գոլիցինի կարգադրութեան դէմ»:

4) Թերթը գրում էր, որ ի տարբերություն Արդուլ Համիդի ժամանակների, այժմ երիտթուրք կառավարությունը զգալի միջոցներ է հատկացրել Կիլիկիային, որի միջոցով հնարավոր կլինի բուժել վերքերը*:

5) «Մենք չենք օգնում աղանացիներին, որովհետև ռուսահայերի այժմեան դրությունը տաճկահայերի դրությունից շատ աւելի վատ է: Հայ ազատամիտ կուսակցությունների մէջ շատ մեծ համակրություն ունեցող Միմէօն Զաւարեանի ռուսերէն լեզուով գրած (հրապարակի վրայ Երևացող եւ ղեր խաղացող հայ ազգասէրները մեղանում առհասարակ չգիտեն եւ մայրենի լեզուով խօսել եւ գրել չեն սիրում) "Экономическое положение крестьянъ Эриванской губерніи" գրքից յայտնի է, որ Երևանի

¹ «Լուսնայ», № 7-8, հուլիս-օգոստոս, 1909 թ., էջ 88-90:

* Նախորդ շարադրանքից տեսանք, որ օսմանյան կառավարության հատկացրած գումարների չնչին մասն էր հասնում հայերին:

նահանգում հայ գիտաֆիլ խիստ հողադուրկ են և սոսկալի գրութեան մէջ: Մեր Զանգեզուրը, մեր Ախալքալաքը, Քայագիտը, Ապարանը յետին ազրատութեան մէջ են և մեր Ազուլիսի լեռնային գիւղերը ամեն մի թիղ հողի վրայ տաժանակիր աշխատանքի չնորհի միայն կարողանում են ժայռերի մէջ հաց բուսցնել:

Կարող ենք արդեօք այսօր մենք այսպիսի տնտեսական կրիդիսի (ճգնաժամի: - Հ. Ս.) ժամանակ այնպիսի առատութեամբ օգնել մեր տաճկահայ եղբայրներին, ինչպէս առաջ էինք անում, երբ մենք չէինք զգում Գոլիցիներան բեժիմի և այլ և այլ հայ յեղափոխականների գործունէութեան հետեւանքները: Իհարկէ՞՝ ո՛չ»¹:

Սրանք էին ռուսահայերի՝ Կիլիկիայի հայերին անհրաժեշտ օգնություն ցույց չտալու հիմնական պատճառարանությունները, որոնք արձարծվում էին կովկասահայ թերթերի, առավել ցայտուն՝ «Լուծայի» էջերում²:

Այսպես թե այնպես՝ թուրքահայ կրոնական, հասարակական, քաղաքական, բարեգործական կազմակերպությունների թափած ջանքերը տալիս էին դրական արդյունքներ: Ազգային որրանոցների թիւը գնալով մեծանում էր: Արդեն 1909 թ. աշնանը Կիլիկիայի մի քանի խոշոր հայ համայնքներում գործում էին մեկ տասնյակից ավելի օտար և ազգային որրանոցներ:

Հետագա երկու-երեք տարիներին նույնպես, Կ. Պոլսի և ամբողջ արտասահմանի հայությունը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունն ու մյուս բարեգործական կազմակերպությունները նպաստներ և օգնություններ էին հասցնում կիլիկիահայ այրիներին ու որբերին:

ԱՌԵՎԱՆԳՎԱԾ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ԲՈՒՆԻ ԻՍԼԱՄԱՑՈՒՄԸ

Նախորդ էջերում ցույց տրվեց, որ կիլիկիահայերի ջարդերն ուղեկցվում էին հաղարավոր հայ կանանց և աղջիկների գերեվարումով, բռնի իսլամացումով կամ ամուսնացումով: Այս ելուղակային արարքները իշխանությունների քաջայերման պայմաններում շարունակվում էին ջարդերից ամիսներ հետո իսկ: Արձանագրվել են բազում դեպքեր, երբ կոտորածից հետո պետական աստիճանավորները շարունակում էին հափշտակել հայ կույսերի, նորահարսերի և այրիների՝ նրանց ստիպելով ամուսնանալ իրենց կամ իրենց որեւէ հարազատի հետ: Իսլամահետոյ այդպիսի փաստերի մասին էր Կ. Պոլսի պատրիարքարան հաղորդում Այնթապի առաջնորդական փոխանորդ Հարություն քահանան, խնդրելով միջոցներ ձեռնարկել վերջ տալու «այս ահոնի վիճակին»³:

Այդուհանդերձ, բռնի իսլամանալու մտքի հետ համակերպումն իսկ հային, հատկապես հայ արական սեռին, չատ դեպքերում չէր փրկում ստույգ մահից⁴: Օրինակ, Գրորգ խանի վրահարձակող բաշիրողուկները «կր ստիպեն ժողովուրդը որ թուրք ըլլայ. խեղճ հայերը կը հաւանին այս առաջարկին, և սակայն իրենց դաւանափոխութիւնը օրինաւոր ըլլալու համար կը ստիպեն որ Մուսթաֆա փաշայի մղկիթը երթան. ժողովուրդը դարձեալ կը հաւանի, և երբ հազիւ քաղաքէն քիչ մը կը հեռանան, վայրագ խուժանը բոլոր էրիկ մարդիկը կը սպաննէ և կիներն ու աղջիկները իրենց մէջ կը բաժնէ»⁵: Այս բնակավայրից հափշտակված և բռնի իսլամացված-ամուսնացված հինգ հայ կանանց անվանական մի ցուցակ «Բիւզանդիոնին» էր հղել Ալեքսանդրեթից փաստարան Նաղարեթ Դերեջյանը⁶: Այդ հայուհիներից մեկի՝ սպանված Գայուստ Մելքիսեթյանի Վերթորիա անունով հարսին առեանգել էր քուրդ մոլլա Սայմանը և իրեն կին դարձ-

¹ «Լուծայ», № 7-8, հուլիս-օգոստոս, 1909, էջ 91:

² Ձեռնագրահ ենք մնում «Լուծայի» պատճառարանությունները մեկնաբանելուց՝ դա թողնելով ընթերցողին:

³ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3828, 2 (15) մայիսի 1909 թ.:

⁴ Զապէլ Եսայեան, Աւերակներուն մէջ, Կ. Պոլիս, 1910, էջ 115:

⁵ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3818, 21 ապրիլի (4 մայիսի) 1909 թ.:

⁶ Տե՛ս Նույն տեղում, № 3831, 6 (19) մայիսի 1909 թ.:

րել: Երբ Գալուստի եղբայրները պահանջում են իրենց հարսին, ավաղակր լիտիարար հայտնում է, թե «անիկա թրքացաւ և ինձ հարսնացաւ, ինձմէ գո՛հ է»: Մեկրիսեթյաններն ստիպված դիմում են Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հյուպատոսների օժանդակութեանը¹, բայց ի դուր:

Հաղարավոր հայուհիների վիճակված այս դատն ճակատագիրը խորապես հուզում էր հայ ազգային իշխանություններին: Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն ու թեմակալ առաջնորդներն ամեն կարելին անում էին այս դժբախտներին ազգի և Հայ եկեղեցու ծոցը վերադարձնելու համար: Կ. Պոլսի հայոց ազգային ժողովի պատվիրակությունն այս հարցը բարձրացրեց 1909 թ. մայիսի 2 (15) ին սուլթան Մուհամմետ Ե-ի, մեծ վեզիր Հուսեին Հիլմի փաշայի, ներքին գործերի նախարար Ֆերիդ փաշայի, չեյն-ուլ-իսլամ Սահիր բեյի և խորհրդարանի նախագահ Ահմեդ Ռիդայի հետ իր հանդիպումների ընթացքում՝ ստանալով միայն խոստումներ, որոնք երբեք չիրականացան: Մեծ վեզիրը պատվիրակութեանը հավաստեց, որ «բոնի իսլամացում պիտի չընդունուի և զանգատողներն ազատ պիտի կացուցուին», սակայն պատվիրակութեան անդամ, «Բիզանդիոնի» խմբագիր Բյուզանդ Քեչյանը, հայտնելով թե այդ կանայք «հիմա բոնութեան տակ են, ձայն հանելու կը վախնան», պահանջեց կրոնափոխ հայուհիներին ազատ արձակելու հրաման ուղարկել Կ. Պոլսից: Հիլմի փաշան չյսելու տվեց այս պահանջը... Իսկ Ֆերիդ փաշան պատվիրակութեանն ասաց. «Կարդացինք Ատանայի կուսակալին հեռագիրը, որ կը հերքէ հայուհիներուն բոնի իսլամացումը: Հայ կիներն ու աղջիկները ինքնաբերաբար դիմեր են իսլամութիւն ընդունելու համար, բայց կառավարութիւնն արգի պարագայից մէջ անոնց խնդիրքն ընդունիլ չսեպելով, հրամայեւ է որ իրենց հոգևոր պետերուն վերադարձուին»²: Բ. Քեչյանը մեկնաբանելով Ֆերիդ փաշայի այս խոսքը, ծանոթագրել է. «Ձարմանայի է, որ Ատանայի հայ կիներն ու աղջիկները Ատանայի ջար-

դին խոտվեալ ժամանակն ընտրել են ինքնաբերաբար իսլամութեան դիմելու համար»¹: Հայկափ վային ևս փորձում էր հայուհիների բոնի կրոնափոխութեանն արդարացնել իրրե կամավոր կերպով կատարված քայլեր²:

Առևանգված հայուհիներին տարել էին նույնիսկ շատ հեռուները: Օրինակ, Սերաստիայի առաջնորդ Թորգոմ ծ. վրդ. Գուշակյանը տեղեկագրում էր, թե «Տարէնտէցի Մուսթաֆա (որ մասնակցել էր Սայ-Գեչիտում հայ ավետարանական հոգևորականների ջարդին: - Ն. Ս.)՝ Գրրոգ-խանէն Քէչիչեան Պողոսի 16 տարեկան աղջիկը յափշտակած և Տարէնտէ բերելով նիքեահ՝ եղած էր: Այս աղջիկը կուսակալութեան կեղրոնը բերուած էր, և հոն կառավարատան մէջ հարցարնուելուն, յայտարարած է թէ իր կամքովն իսլամութիւնն ընդունած է»: Առաջնորդը Կ. Պոլսի ազգային իշխանություններից խնդրում էր տեղեկացնել, թե «ի՞նչ տեսակ ընթացք պէտք է բոնել այն հայուհիներուն համար, որոնք այսպէս կը յայտարարեն թէ իրենց կամօք իսլամացած են»³:

Բոնի իսլամացված հայուհիների ճակատագրով չափազանց մտահոգված էր հատկապես Հայեպի առաջնորդ Շահե վրդ. Գասպարյանը, որը հեռագիր հեռագրի հետևից հասցնում էր Կ. Պոլսի պատրիարքարան, խնդրելով, որ նա հարցը բարձրացնի կենտրոնական իշխանությունների առաջ: Առաջնորդի՝ կոտորածի ավարտից ավելի քան մեկուկես ամիս ետք ուղարկված հերթական հեռագրի առթիվ «Բիզանդիոնը» գրում էր, թե «բոնի իսլամացման ճնշումները կը շարունակեն շատ տեղեր և արդեն եղածներն այ վերջացած գործողութիւններ կը նկատուին»⁴:

Մամուլում բազմաթիվ էին հայ կանանց և աղջիկների

¹ Տե՛ս «Բիզանդիոն», № 3829, 4 (17) մայիսի 1909 թ.: Ընդգծումը թերթին է: - Ն. Ս.:

² Նույն տեղում:

³ Նիքեահ - մուսուլմանական ամուսնական ծիսակատարություն:

⁴ Տե՛ս «Բիզանդիոն», № 3841, 19 մայիսի (1 հունիսի) 1909 թ.:

⁵ Տե՛ս նույն տեղում, № 3843, 21 մայիսի (3 հունիսի) 1909 թ.:

¹ Տե՛ս «Բիզանդիոն», № 3832, 8 (21) մայիսի 1909 թ.:

² Տե՛ս նույն տեղում, № 3829, 4 (17) մայիսի 1909 թ.: Ընդգծումը թերթին է: - Ն. Ս.:

առևանգման, բոնի կրոնափոխման ու ամուսնացման ղեկավարի արձանագրությունները¹: Այս հարցի վերաբերյալ բազմաթիվ էին հատկապես «Բիւզանդիոնում» յույս տեսած յուրերը, ինչը հարուցել էր իշխանությունների կատաղությունը: Թերթի՝ նախապես հիշատակված տասնօրյա խափանման ընթացքում տեղի է ունենում նրա արտոնատեր և խմբագիր Բյուզանդ Քեչյանի դատաւարությունը Կ. Պոլսի պատերազմական ասյանի առջև: Գատական նիստին, նախագահողը «ցավ է հայտնում» թերթի մայիսի 21-ի խմբագրականի այն հատվածի համար, ուր «ըստ էության է թէ թուրքերն երբեմն բոնի կ'իսլամացնէին քրիստոնեաները»: Խմբագրականում Բ. Քեչյանն ի միջի այլոց գրել էր. «Թուրքերը ժամանակաւ իսլամացուցին քրիստոնեաներն որչափ կրցան: ... Եւ այսօր Կիլիկիոյ մէջ հայ կիները, աղջիկներն ու տղաքները գերի վարող և իսլամացնող խուժանն առհաւութեամբ մը (atavisme) իր թուրք նախահարց նոյն սիրական մէթոտին կը վերադառնայ պարզօրէն»²: Թուրք զինվորական դատավոր փաշան գտնում է, որ նման հայտարարությունը չի համապատասխանում իրողությունների և մերժում է բոնի կրոնափոխությունը՝ թուրքական պետական քաղաքականություն լինելու «Բիւզանդիոնի» մեղադրանքը: Քեչյանը պատմական փաստերով հերքում է նախագահողի հաստատումը, ավելացնելով թե Հայոց ազգային ժողովի պատվիրակություն կազմում մայիսի 2-ին բարձրաստիճան իշխանավորների հետ հանդիպումների ժամանակ ինքն արժարձել է բոնի կրոնափոխությունից անթույլատրելիություն հարցը, որ արժանացել է թուրք մեծավորների բարձրագույն մոտեցումին³:

Իրենց սեռակիցների ճակատագիրը շատ հուզում էր նաև աղետոյայ Հայոհիներին: Ուշագրավ է հետևյալ զրվագը: Երբ Կարս-Քաղարում Զապել Եսայանը հանդիպում է տեղի հայ կանանց, վերջիններս հարց են տալիս. «Թրա՞ւ է որ իսլամացած

հայ կիները չեն ուզեր վերադառնալ»: Եսայանը պատասխանում է, թե վախի պատճառով ոչ բոլորն են վերադառնում: Սրա վրա, մի հայուհի, հայ կնոջ հազարամյակների պատվախնդրություն թարգմանը հանդիսանալով, բղավում է. «Ղարս-բաղարցի ոչ մէկ հայ կին թուրքի չերթար... միսերը կտրտէին՝ տեղէն չէր շարժեր... մեր կտրիճները տեսնողը իսլամի չերթար...»⁴:

Հայուհիներին իրենց անասնական կրքերի բավարարման համար գործածելու նպատակով, մարդակերպ գաղանները ջարդերից շարաթներ հետո նորանոր սպանություններ էին գործում և մնում անպատիժ: Նման մի դեպք Հայկապի առաջնորդարանը տեղեկագրում էր պատրիարքարան: Զարդարար ոմն Թոխյուջ օղլու Մեհեմեդը Գրրրգ-խանից առևանգել էր Թրֆանդա էրչիյանին (որի ամուսինն սպանվել էր ջարդի ժամանակ) և Ազապի Ջիլերսիդյանին: Այս ճիվաղը առաջին հայ կնոջը բոնի իսլամացնում է և իրեն կին դարձնում, ապա ցանկանում է ամուսնանալ նաև Ազապիի հետ: Վերջինս ընդդիմանում է, ասելով, թե էրիկ՝ ունի, որ ողջ է և ահա այստեղ է: Մեհեմեդը նույն վայրկյանին կրակում և գնդակահար գետին է փոում Ազապիի ամուսնուն, ապա դառնալով կատարվածից սարսափահար կնոջը, ասում է. «Իշտե կոջանըն հիսարընը քեստիմ»⁵: Առաջնորդ Շահն վրդ. Գասպարյանն իր տեղեկագրում ավելացնում է, որ ինք զիմել է Բեյյանի կառավարչություն, բայց այդ սևարախտ կնոջը մերժել են հանձնել իրեն: Հայկապի վային ևս մերժում է առաջնորդի զիմումը՝ պատճառարանելով թե արդեն մուսուլման դարձած կնոջը քրիստոնյա կրոնավորին հանձնելը զրգոելու է մուսուլմաններին: Շահն վարդապետը հայտնում է, թե նման հարյուրավոր պարագաներ կան ու պահանջում է, որ «բացարձակապէս արգիլուի առ այժմ իսլամութին ընդունիլ, ինչպէս արգիլուեցաւ 1895ին»⁶: 1894-1896 թթ. արդույհամիդյան կոտորածների ժամանակ իսկ իշխանությունները երբեմն իրենց ազ-

¹ Տե՛ս օրինակ. «Բիւզանդիոն», № 3833, 9 (22) մայիսի 1909 թ., № 3837, 14 (27) մայիսի 1909 թ.:

² Տե՛ս նույն տեղում, № 3843, 21 մայիսի (3 Հունիսի) 1909 թ.:

³ Տե՛ս նույն տեղում, № 3849, 9 (22) Հունիսի 1909 թ.:

⁴ Զապել Եսայան, Աւերակներուն մէջ, էջ 210-211:

⁵ էրիկ - Խոսակցական արևմտահայերենում՝ օրինական ամուսին:

⁶ Ահապատիկ փակեցի քո ամուսնու հաշիվը:

⁷ Տե՛ս «Բիւզանդիոն», № 3833, 9 (22) մայիսի 1909 թ.:

զին ու եկեղեցուն էին վերադարձրել մահվան սպառնալիքի տակ կրոնափոխ եղած հայերին, հետևաբար, սահմանադրությունն և ազատությունն, արդարությունն ու հավասարության կեղծ կարգախոսներով հանդես եկող երիտթուրքերը այս հարցում ևս գերազանցեցին Կարմիր սուլթանին, ինչը հետագային խոստովանելու է հայոց ցեղասպանության դահճապետներից Թայևաթ փաշան՝ հպարտանալով, թե հայերի հարցում իրենք՝ իթթիհադականները ընդամենը մի քանի տարում կարողացան անել այն, ինչ Արդուլ Համիդը չկարողացավ անել իր գահակալության երեսուներեք տարիների ընթացքում:

Հակառակ հայոց ազգային մարմինների համառ ջանքերի, կենտրոնական կառավարությունը կրոնափոխ հայերի բռնի իսլամացումը չեղյալ հռչակող որևէ հրահանգ չուղարկեց տեղեր, և բռնի իսլամացված հայուհիները, սպառնալիքների ազդեցությամբ և իշխանությունների մեղսակցությամբ, համակերպվեցին իրենց սև ճակատագրին ու անհետ կորան հայության համար...

ՎՇՏԱՌԱՏ ԵՐԳԵՐ

Կիլիկիահայոց կոտորածներից հետո հայաշխարհի բանաստեղծները ձոնեցին բազում եղերերգեր, ժողովրդական ողբասացները երկնեցին ասքեր, գուսանները հառաչում էին ու աղգի սև բախտը սգում:

Կիլիկիայի հայոց ողբերգություններ առաջինը չափածո արձագանքեց (1909 թ. հունիս-հուլիսին) մեծատաղանդ Սիամանթոն (Ատոմ Յարճանյան): Իր ապրումները նա արտահայտեց բանաստեղծական յուրահատուկ ձևով՝ «բարեկամից ստացած» չափածո առաջախոսքի («Սուգ») և 11 նամակների տեսքով՝ ունենալով հետևյալ վերնագրերը՝ «Պարր», «Քաուլթիներ», «Չալակր», «Լոզանբր», «Դաշոյնը», «Մաչը», «Իրենց երգը», «Կոյրը», «Թթենին», «Մեղղամահ», «Յաղթանակ մը»: Բանաստեղծությունների այդ շարքը լույս տեսավ առանձին գրքով՝

«Կարմիր լուրեր բարեկամէս» [սորազրով (Կ. Պոլիս, 1909): Այդ վերնագրերից յուրաքանչյուրի տակ հորդում են մեծ բանաստեղծի վիշտը, դայրույթն ու տագնապը: Նա համոզված էր, որ չինգիլխաններն ու լենկթիմուրները կնախանձին կիլիկյան ջարդերի դերակատարներին՝ նրանց գործադրած աներևակայելի վայրագությունների համար:

Ականատեսները սոսկումով են պատմել 1894-1896 թթ. Արևմտյան Հայաստանում կենդանի թաղվածների, ողջ-ողջ հրկիզվածների, բռնաբարվածների մասին, բայց այդ բոլորն այնքան քստմնելի ու այնքան դարհուրելի չեն եղել, որքան Կիլիկիայում, ասում էր բանաստեղծը: Այստեղ խեղված մարդկային միտքը գործում էր միայն մի ուղղությամբ՝ հնարել ոճիրներ իրականացնելու առավել սոսկալի ձևեր՝ գոհին տանջելու, իր զազանային բնազդներին գոհացում տալու համար:

Իր առաջախոսքով, Սիամանթոն իր ցեղի արյուն ու սուգ տեսած մարդկանց կոչ է անում չվհատվել այն ամենից, ինչ գրված է իր բարեկամի նամակներում:

Բայց դուարթութեան ո՛չ մէկ բիծ եւ ո՛չ մէկ չիթ արցունքի,
Պէտք չէ որ գան մեր տրտմութեան վեհութիւնը պղծելու...
Որովհետեւ պարտուածին համար արցունքը վատութիւն է,
Եւ յաղթողին համար սնտոի ժպիտը՝ կնճիո...

(«Սուգ»)

Բարեկամին վերագրած առաջին նամակում Սիամանթոն անպատմելի պատմություն է անում. «Դիակները դիզուած էին մինչեւ կատարը ծառերուն», իսկ քիչ անդին թուրք տղամարդիկ քսան հարսների մտրակելով ստիպում էին ... պարել: Եվ երբ հոգնությունից բոլորը «գետին ինկան պարտասաճ...», այնժամ դահիճները նավթ թափեցին նրանց վրա և «բոնկեցուցին մերկ մարմինները»: Նկարագրելով հայոց նորագույն նահատակների կրած տանջանքները և դատապարտելով աշխարհի հզորների քար անտարբերությունը Կիլիկիայում կատարված հերթական

արյունալի խրախճանքի հանդեպ՝ բանաստեղծը, իր խոսքերը դնելով ականատես գերմանուհու բերանում, անհուն դառնությամբ ու դայրայից վշտով գոչում էր.

Ո՛վ մարդկային արդարութիւն, թո՛ղ ես թքնեմ քու ճակատիդ...
(«Պարբ»))

Երկրորդ նամակում («Քաուտիներ») բանաստեղծը մտրակում է փոքրողիներին, որոնք իրենց կյանքի փրկության համար ամեն ստորության պատրաստ են: Էպիկական խորհրդանշաններով հաջորդ նամակում («Զուակր») Սիամանթոն հաստատում է այն ճշմարտությունը, որ ջարդարարից հայի միակ փրկությունը նրա դեմ անգիջում կոբլն է: Հայ կույսերի նահատակության պատկերը գծելուց հետո («Լոգանք»), բանաստեղծը հաջորդ արարում («Դաշոյն») պատմում է կիլիկյան ջարդերի օրերին շատ սովորական բաներից մեկի մասին. մարդասպանը հայ մորն ստիպում է դաշույնը խրել իր զավակի սիրտը: Մոր սիրտը պատուվում է սարսափից, և նա անչնչացած գետին է ընկնում: Ոճրագործն ինքն է կատարում իր իսկ հրամանը՝ դաշույնով խառնելով մեռած մոր զավակի սիրտը: Հետևում է վեցերորդ արարը («Ուաչր»), ուր խոսքը «որը ցեղի ու դաւաճան մարդկութեան» աչքերի առաջ կատարված հերթական սովորական դարհուրանքի մասին է: Եկեղեցի խուժած արյունակղակ խաժամուժը մորթում է մոր սիրասուն զավակին: Հրոսակներից մեկն արյունաթաթախ շապիկը չպրտում է մոր առջև, ասելով. «... սուրբ խորանին վրան էր, որ քու դաւակը գոհնեցինք...»: Ապա արյունոտ շապիկը «աղօթատան պատին վրայ, ցնորակոծ մօրը առջև» պարզում են խաչի տեսքով և նրան ստիպում խաչակնքել, ծնկի գալ ու աղոթել...

Յոթերորդ նամակում («Իրենց ևրգր») Սիամանթոն գրում է, որ մարդակերպ գաղաններն իրենց կատարած անլուր ոճիրները «արդար գործ», աստվածային կամքի կատարում էին համարում: Դահիճներից մեկը հետևյալ խորհրդածությունն է անում.

Օրէնք չի կայ: Ոյժն է միայն ստրուկներուն արքան...
Խմեցէ՛ք սա բաժակէս, թարմագեղ կոյսերուն արիւնն է այս...
Ես ծոնցայ եւ մեր գիւղին առուակներէն խմեցի դայն...
Լուսնկայի պայծառութեամբ հայ կոյսերուն արիւնն է այս...
Վայրկեանը կը փախչի, արդարութիւնն իր ճանապարհը
կը փոխէ...

Խմեցէ՛ք, այս բաժակս կոյսի մը գանկէն այս առաւօտ եմ
պատրաստած...

Ի՞նչ է ոսկին, ի՞նչ է արծաթն, ի՞նչ է աղամանդն ասոր քով...
Գինիներուն սրբազանը լեցուցած եմ այս գանկին մէջ.

խմեցէ՛ք այս բաժակէս,
Ես ծոնցայ եւ մեր գիւղին առուակներէն խմեցի դայն անյազուրդ...

Կիլիկիայում հակահայ մոլուցքը վարակել էր մեծին թե փոքրին, նույնիսկ հաշմանդամներին, անգամ կույրերին: Նրանք բոլորը գենք էին վերցրել «Աստուծոյ կամքը կատարելու համար»: Ութերորդ նամակում («Կոյր») այդ երևույթը ներկայացված է մի տիպիկ օրինակով:

Յուպի ծայրով արյունածարավ ամբոխի մեջ ճամփա ճեղքելով՝ ի ծնն կույր ութսունամյա մի թուրք ծերունի ցնծության մեջ էր, որ «արդարութեան այդ օրերուն» իր հավատակիցները չորս կողմերում «անհաւատներու» անթիվ-անհամար դիակներ են փռել: Մարդասպանների մեջ էր նաև նրա զավակը, որին «ոտքէն զլուխ դինել տալով», ուղարկել էր «սուրբ կոտի»: Բայց կույր ծերունին ափսոսում է, որ ինքն անկարող է եղել մասնակից լինելու կոտորածին:

Որչա՛փ կ'ուղեմ ձեռքերովս գոնէ մեռել մը չօչափել...
Մոխիրներուն հոտը առի, հաղար ապրի՛ք, օրհնեալներ...

Եվ կույրը պահանջում է. «Ուարտեաչ աղջիկ մը ինձ բերէք որ մարմինը թարմ ըլլայ»:

...
«Պահ մը յետոյ երիտասարդ մը՝ հայ կոյսի մը ծամէն բրունած», նրան հանձնում է կույր հրեշի: Մերունու բուռնցքի մեջ

դաշույն են դնում: «Միրտը ո՞ւր է, գաւակներս», - հարցնում է նա: Նրան օգնում են ճշտելու հարվածի տեղը՝ «ձախ ստինքէն քիչ մը վա՛ր...»: Երբ հայ կույսի աստվածային արյունը բոցավառվում է և ժայթքում թշվառականի դեմքին, նա երջանկացած աղաղակում է.

Այս, կարծես թէ յոյսը տեսա՛յ, ես այսօր իսկ յոյսը տեսայ...
Կարծես կոպերս կը բացուին, մեռա՞ւ աղջիկը, շո՛ւտ ըսէք,
Իմ քարացած աչուրներուս սև թաղանթն անօսրացա՛ւ...
Ահաւասիկ թէ ինչ է բարիքը. գաւակներս, արղեօք լո՞յսն էր
որ տեսայ...

«Թթենին» վերտառութեամբ նամակում Սիամանթոն ցույց է տալիս սպանված թոռնիկի դիակը այգում թաղող կորաքամակ ձեր կնոջ վիշտը: «Թո՛ղ աշխարհս քանդէին, բայց թոռնիկս ինձի մնար», - ողբում էր նա: Դահլիճները ոչ միայն սպանել էին թոռնիկին, այլև սղոցել նրա սիրած թթենին և, այդպիսով, ջնջել նրա վերջին հիշատակը:

«Այ տուն չի կայ, տնոր չի կայ, մահուանս հետ մինակ եմ», - հեծկտում էր ձեր կինը և անիծում բախտը, որ ինքը կենդանի է մնացել: Վերհիշելով թոռնիկի զարհուրելի սպանութեան պատկերները, նա կոծում էր.

Թոռանս տեղը դի՛ս մեռցուցէք, դի՛ս մեռցուցէք,
գոռացի, լսող չեղաւ...

Աղաչանքիս լսող չեղաւ ... և կիսամեռ պատանին...
Դիակներու սահմանուած սայլի մէջ նետելով...
Վանքին ճամբէն հեռացուցին. ա՛յս իր աչքերը, իր աչքերը
դեռ կը տեսնեմ...

Երկար ատեն աչքերը բաց, հոգին տալով, ինձ նայեցաւ,
Սայլին ձայնը դեռ կ'իմանամ, ճոնչելով կը թափալի...

«Սնդղամահ»՝ այս է վերնագիրը տասներորդ նամակի: Մի գետնափոր նկուղի մէջ թաքնվել էր 40 անձ՝ «արջառներու

սարսափահար հօտի մը պէս, որ աւաղահողմին հարուածներէն կը հալածուի»: Եվ ահա՝

Բաց արեւին տակ հաղարաւոր անասնաղէմ բարբարոսներ՝
Բերրի դաշտերն ու գիւղերն աւերելէ դեռ չի յոգնած...

նկել էին գտնելու թաքստոցը: Բոլորը նկուղում սահմուկ էին հուսակտուր:

Շշուկ չի կար. շնչող չի կար. չրթունքները փակ էին...

Այդ պահին՝ նորածինը մոր գրկի մեջ սկսում է սուր ճիչերով լալ. նա մայրական կաթ էր ուզում, որը չկար: Ահուղողը պատել էր ամենքին: «Կա՛թ տուր», - փսփսում էին մահվան դիմաց տերևի պես դողահար մարդիկ:

Ա՛յ կաթիլ մը կաթ չունիմ, ինչ որ կ'ուզէք վճուցէ՛ք...

- Պետք է խեղդել,- լինում է վճիռը:

Եվ մայրը խեղդում է մանկանը: Դաղարում է ճիչը, և արյունախում խուժանը տղամաթաթավ հայհույներով հեռանում է: Նկուղի լեղաճաք թաքնյալները փրկվում են:

Ստրուկները կը փրկուի՞ն:
Այսպէ՞ս պէտք է փրկուիլ...,-

հեզնում է բանաստեղծը:

Իսկ մանկասպան մա՞յրը...

Ու ամէն օր այդ խեղճ կինը կիսամերկ՝ ճամբաներուն վրայ կեցած, Անծանօթին, անցորդին, թշնամիին և օտարին
Քղանցքներուն փաթթուելով, խնթի պէս կ'աղաղակէ.
- Սա՛ ձեռքերս կը տեսնէ՞ք. կը տեսնէ՞ք սա ձեռքերս,
Ես էի որ ասոնցմով, նկուղին մէջ, իմ նորածինս խեղդեցի...
Հաւատացէ՛ք, ես էի, որ դայն խեղդեցի, ինչ անարդար մարդեր էք.

Դուք այ գոնե՛ղ զի՛ս խեղդեցե՛ք, իմ ձեռքերս անդօր են,
ես էի որ նորածինս նկուզին մէջ բոլոր ոյժովս խեղդեցի...
Սիրտ չունի՞ք դուք, խեղդեցե՛ք զիս, իմ ձեռքերս ա՛յ ոյժ չունին...

Եթե «Կարմիր յուրեր բարեկամէս» բանաստեղծական շարքի տասը նամակները հունցված են արցունք-արյան շաղախով, ապա վերջինին՝ տասնմեկերորդին, Միամանթոն դրել է «Յաղթանակ մը» խորագիրը, և նվիրել Չորք-Մարդպանի (Դեորթ-Յոյի) հերոսական պաշտպաններին:

Բանաստեղծը խոր վիշտ է ապրում, որ Կիլիկիայի հայերը չկարողացան զանգվածաբար հանդես գալ թշնամու դեմ, պաշտպան կանգնել իրենց իսկ կյանքին, պատվին ու մարդկային իրավունքներին:

Բաւական է որչափ որ լուսթիւնով աղերսեցինք...
Եւ խունկերէն եւ խաչերէն եւ Աստուծմէն շարածիծաղ,
Եւ մարդակեր մարդկութենէն մոյսխանձ,
Բաւական է որչափ որ մուրացիկներու նման,
Այս բոլորին առջեւ ձեռքերնիս բաց, ծնրաղիբ,
Պաղատեցանք, սիրտ կոծեցինք մեր աչքերը փորելէն...
Ինչ որ տեսանք այս օրերս, դարերն իսկ չեն տեսած.
Եւ ոչ ալ իսկ պատմութիւնը հին բարբարոս օրերու...

Վերջապես, Չորք-Մարդպանը ամոթի խարանք մարբեց հայութեան ճակատից: Քաղաքի պաշտպանների կամքը դրահափորված էր հաղթանակի հանդեպ խոր հավատքի զորութեամբ: Բանաստեղծը գովերգում է այդտեղի կտրիճներին, որոնցից ամեն մեկը շեկ կտոր էր երկաթի: Բոլորը ոտքի վրա էին՝ ծեր ու պատանի, տղամարդ թե կին:

- Բոլոր պղինձն, բոլոր կապարն, բոլոր թիթեղն եւ արույրն
այս քաղաքին,
Հնոցներու մէջ հրավառ, մեր կիներն քաջարի, գնդակներու,
սուփներու վերածեցին...

Ամենքը համոզված էին, որ պետք է գինվել «ամեն բանով, կայծաքարերով կամ բահերով»:

Գերանդին այ, բրիչն այ եւ երկաթ կոթն արօրին,
Կրնան դմեց յաղթանակին մօտեցնել:

Հաղթանակը եկավ, որովհետեւ մի քաղաքի բոլոր հայերը բռնեցրվել էին: Նրանք ցույց տվեցին, որ ցեղն անպարտելի է, եթե միարան է, համախումբ:

Բանաստեղծութեան խորհուրդն է. հայութեանն իր փրկութեան հույսը պետք է յծորդի սեփական ուժերին և փրկագործ զենքին:

Հայոց մահվան ահափոր պատկերները սրտի մրմուռով է նկարագրել **Դանիել Վարուժանը**: «Յեղին սիրտը» բանաստեղծական շարքի «Կիլիկեան մոխիրներուն» հատվածում նա գրում էր.

Ծուխերն են հոն եւ բոցերն՝ որ տակաւին բոլորէն վեր
Հովին չունչով այնժուպի կը սողոսկին, կ'ամփոփուին,
Յետոյ նորէն յեղուի պէս կատարն ի վեր կ'երկրնանան:
Կը վառի հողմն իսկ, նայէ՛, բորբ հորիգոնը մեր շուրջ
Հըրափողփող պըսակ մ'է որուն կեղրոնը կանգուն
Մենք կը դողանք սրգաւոր ոգիներու պէս օտար:
Կը յսե՞ս ձայնն հեռաւոր եղէգներուն բրորնկած՝
Որոնց միջեւ կ'ածխանան յաւերժահարսերն անտառին:
Ինչ մոխրացող այգեստան, տատրակի ինչ փոփոններ:
Բոցը կ'անցնի, ու քամին գալով անոր ետեւէն
Խանձած սէզները առած սարերէն վեր կը մրրրրկէ...

Հեռուներից եկած դավթիչներն են, որ խոչտանդեցին, մեղքորին հայերին իրենց իսկ հայրենի հողի վրա, ուր Տավրոսի ստորոտում երգում էին «կեանքին աստուածացումը», ուր դարեր շարունակ «Հեթումներն յաղթանակներ գրեցին», ուր Ռուրիկյան դավակների շինարար բազուկները ճամփաներ էին բացում.

որոնցով «սայլերը ճրոնչող», իրենց «վրայ բեռցուցած մարմարն յուռթի լեռներուն, այգիներուն յորդ գինին», և հայի ստեղծագործ ոգու ուրիշ բարիքները, տանում էին հեռուներ՝ Արևելքից Արևմուտք:

Մարդակերպ գաղանը, սակայն, հուշ դարձրեց այդ ամենը՝ մոխրակույտի վերածելով չքնաղ Կիլիկիան:

Անցա՛ւ հիմա բոլոր այդ գեղեցկութիւնը կեանքին,
Կրակի ցեղը, աւա՛ղ, ժամանակէն աւելի՛
Եղաւ քանդող, ժանտախտէն ևս աւելի՛ կոտորիչ:
Ան կը սիրէ տէրվիչի պէս միշտ նրստիլ գոհունակ
Քարի մը վրայ փլատակի և կըրծել ոսկրն իր շոպած:

Լըսէ՛, քաղքին պատուարին մէջէ ձայներ մեղ կու գան. –
Դահիճ Ցեղն ա՛յ կը տօնէ իր յաղթանակն արիւնոուշտ,
Կիներ, տղաներ մորթելու յաղթանակն իր վատողի:
Հէգ ոստանին, որուն վրայ յուսինն ահա կ'արտասուէ,
Մէկ մասն է արդ գերեզման, հանդիսավայր մասը միւս.
Տաճիկն ահա բրորնկցուց իր խարոյկներն հրճուանքի,
Հեծեճագին կմախքներ հանդիսարար կը վառին.
Շուրջը սոթտուած թևերով խուժանն ուրախ պար կու գայ.

Գաղանատիպ թուրքէն ևտ չմնաց վաչկատուն քիւրտը.
Արիւնազարդ քրրտու հին հինայագեղ մատներով
Կը գարնէ դափ, և իսլամն, օտարակա՛ն, առջի հեղ
Այսօր գինի կը խմէ մոխիրներուն ի պատիւ:

Այսքան ոճիրներ տեսած հայերը հետայսու ինչպե՞ս պետք է ապրեն այն հողի վրա, որը ներծծված է իրենց կանանց ու անմեղ երեխաների հորդ արյունով, այն հողի, ուր «տատրակները մեռա՛ն, և դեղձենին խամրեցաւ»: Չղիմանայով Մեծ Ցավին՝ շատ-շատերը լքում են հայրենի հողը և «կ'երթան հեռու աշխարհներ գարուն մ'ուրախ ծաղկեցնել»:

Բանաստեղծին անհուն ցավ է պատճառում եվրոպացիների անկարեկից վերաբերմունքն իր դժբախտ ժողովրդի հանդեպ:

Նրանք «Մեծագոգ նաւերով» եկան մեր «ծովախորչերն արգա-ւանդ» երր մորթվում էր Կիլիկիան: Այդ ուղամանավերով

Գայ պիտ' ուզեն ... օգնութեա՞ն ... ո՛հ, ո՛չ ... մահուան մնացորդին.
Պիտ' ուզեն գալ լոկ մեր կոյս, ատո՞ք լեռները պեղել,
Եւ մեր ծոցաւոր հանքերէն կրթել մետաղն հրաշափառ,
Կրթել մետա՛ղն ու իրենց եսին կուռքերը կերտել...

Իսկ անագորույն այս կյանքում ի՞նչ է անելու Կիլիկիայի կոտորակված հայը.

Կ'իջնեմ ևս ալ աւասիկ
Այս բարձունքէն, ու փաթթուած տառատոկիս մէջ տըրտում՝
Նորէն կ'երթամ թափառիլ քաղաքին մէջ զոհերուն:
Մեռելներն հարկ է թաղեմ, և ողջակէզն օճանեմ:
Վիրաւորի մը զըլուխ որձաքարին կը հեծէ...
Աղբիւրին քով քոյր մը, ո՛հ, կ'ոգևվարի անտէրունջ...
Պէտք է փորեմ այս գիշեր գերեզմաններ անհամար,
Եւ լուսեղէն պատանքներ հենում մինչև առաւօտ:
Պէտք է կերտեմ շիրիմներ, յուշարձանները կանգնեմ,
Եւ մարմարին վրայ երգերս տապանագիր քանդակեմ:

«Բիւզանդիոնի» 1909 թ. 19 մայիսի (1 հունիսի) համարում (№ 3841) լույս տեսավ **Արչակ Չոպանյանի՝** Փարիզում մայիսի 10ին գրած «Տեսիլ» բանաստեղծութիւնը՝ նվիրված կիլիկյան աղետի զոհերին: Անվանի գրողն ու հասարակական գործիչը կիլիկիահայերին նմանեցնում է Կիլիկիայի արգավանդ հողի գլխավոր բարիքներից խաղողին և ցորենին, որոնց տրորել և փոշիացրել են անմարդկայնացած վայրենիները.

Ձեռքե՛ր, ձեռքե՛ր կու գան, բի՛րտ, կրտրել գլուխներն այն անմեղ,
Ու կը տանին հրձանին մէջ նետել, դէ՛ղ ողբական.
Եւ գարչապարն անողորմ դահիճներուն՝ մոլեգին՝
Կը բըզըքտէ ողկոյզները լի հոյզով սրբազան...
Ահա հոփուն տակ կ'օրոտի՝ օրհնէնքով ու սիրով լի՝

Ուարտիչագեղ հասկերուն այնձուփ ծո՛վր պայծառ:
Կր շողայ սուր մանգաղին կապոյտ փայլա՛կր ցրրտին,
Ու հասկերուն կր թափին վար զըլուխներն՝ անջատուած,
Եւ կային մէջ կամնուած, եւ փրչրուած՝ երախին
Մէջ ջաղացքին, կր դառնան փոշի անշարժ ու մեռած...

Չուպանյանը ողորում է ստեղծագործ հայ ժողովրդի դարեր ի վեր դառն ճակատագիրը թուրքական մահասփյուռ բռնակալության լծի տակ.

Այսպէս եւ դուն, ցե՛ղ Հայոց, ցե՛ղ տարաբախտ ու վըսեմ,
Ցեղ լի հոյզո՛վր փափուկ՝ րստեղծագործ Կորովին,
Դատապարտուած դարերէ՛ ի վեր բախտի մը դրժխեմ,
Սեւ ճիրանին մէջ Չարին կր յօշոտուիս՝ ցաւագին,
Կը ճրմըրիս՝ կոխտտուած, կը փրչրուիս անխընայ,
Ու դառնատանջ կը հատնիս՝ գամուած խաչի մը վայրագ...

Ռուբեն Սևակը 1910 թ. «Ամէնուն տարեցոյցը»-ում տպագրել էր «Վերջին օրօր» բանաստեղծութիւնը, ուր պատմում էր, թե՛ բազում վերքերի մէջ տվայտող հայ մայրն ինչպէս էր վերջին նանիկն անում աշխարհի անցուդարձից անտեղյակ իր մանկիկին, որպէսզի նա քնանա և վիրավոր հոր ճիչերը չլսի: Մահվան սեմին հասած ըմբոստ մայրը ոչ թե՛ ողորում է իր կյանքի դժբախտ վերջալույսը, այլ որդուն կտակում է կամք, կորով, համառութիւն՝ կառչած մնալու Կիլիկիայի հողին:

Բազուկներուս պարան, ոտքիս ալ կացին,
Ստինքիս զոյգ պտուկներն ա՛հ, կտրեցին,
Վէրքէս արինս ծծէ, որգեա՛կ միածին...:

Օրճր բսեմ՝ քնանաս:

...

Հօրրդ վրայ եթէ անշունչ չինկայ ես
Զի ուխտեցի Հոովմի էզ գային պէս,
Նոր Ռոմուլոս մը դիեցնել ստինքէս...:

Օրճր բսեմ՝ քնանաս:

Արի՛ն Հեղեղ յորգեց այս սուրբ ձորերէ,
Բայց չի փախիս, փարէ երկրիդ, գայն սիրէ,
Հողիդ վրայ գերի մ'ըլլար, այլ տիրէ...:

Օրճր բսեմ՝ քնանաս:

Ահա կ'իյնամ...: Հայաստանը մայր քեզի:
Կտակ կու տամ այս կոտորած սուրն երկսայրի՝
Ուր հայրիկիդ զեռ տաք արիւնը կ'այրի...:

Օրճր բսեմ՝ քնանաս:

«Դէպի Սիհուն» բանաստեղծութիւնն մեջ **Լևոն Եսաջանյանը** նդովում էր «արդարութիւնը պոռնիկ», «արդարութիւն», որն արյունամած օրերին անտարրեր պառկած էր «քրով խուժանին», գոնջ ու տոփոտ: Հեղինակը Կիլիկիայի հայոց մնացորդացին վրեժի կոչ էր անում.

Պիտի չ'ըսենք թէ այսքանը կը բաւէ,
Մեր պատիւին վրայ բրած ենք երզում,
Թէ անպատճառ պիտի տանք մենք պատասխան,
Մեր պատիւին վրայ ըրած ենք երզում:

Նույն ըմբոստ ու վրիժառու ոգին է խոսում **Էդուարդ Գոլանջյանի՝** գալիք հայ սերունդներին ուղղված «Ատանայի նոր ամոյներուն» բանաստեղծական կտակում (1911 թ.).

Նոր ա՛յր եւ նոր հա՛րս կեանքին խորանին
Հրդեհէն խանձած հագուստներ առէ՛ք,
Եւ նոր ծալքերով՝ ծալքերու մէջ հին,
Վաղուան սերունդին, օ՛հ, Շարժումն եղէ՛ք:
... Վաղուան սերունդին արիւնն հնչեցէ՛ք:

Քերթվածի հեղինակը երազում է տեսնել այնպիսի նոր հայ այր և նոր հայ կին, որոնց աչքերում թշնամու սրերը ջարդելու ունակ կայծեր ցոլանան: Գովքը հյուսելով Գեղեցիկ Ուժին՝ նա նորեկներին կոչ է անում կայծերի անտառները դարձնել անկողին, ամուր փարվել արյունոտված մահճին և հայ մանուկներ լափած բոցերի մէջ վաղվան սերնդի մկանները մարզել:

Նոր ա՛յր եւ նոր հա՛րս անգութ ամայրին,
Տաճարներուն տեղ որ ինկան ի սպառ,
Ծունրը դրէ՛ք, օ՛ն, գանկերու բուրգին,
Վաղուան Սերունդին Մտածման համար:

Նոր ա՛յր եւ նոր հա՛րս նոր մեծ Հաւատքին,
Փրցուած ծիծերէն ծննդայ շինեցէ՛ք,
Անաստուածութեամբն իսկ ձեր աղէտքին՝
Վաղուան Սերունդին, յ՛ն, Աստուածն եղէ՛ք:

Կիլիկիահայոց Մեծ Գողգոթան իր արտահայտութիւնը գտավ հետագայում՝ 1915 թ. ցեղասպանութիւնն ժամանակ նահատակված գրող և խմբագիր **Սմբատ Բյուրատի** «Ատանայի երգը» բանաստեղծութիւնում, որը ժողովուրդը վերածեց երգի և լայնորեն տարածեց:

Կոտորածն անգութ հայերը թող յան,
Անապատ դարձաւ շքեղ Ատանան,
Կրակն ու սուրբ, խուժանն ու թայան
Ռուբէնի տունը, ա՛յս, ըրին վիրան:
...

Երեք օր գիշեր, կրակը մէջէն,
Թշնամւոյն սուրբ, գնդակը դրսէն,
Ջնջեցին Հայր երկրին երեսէն,
Արիւն կը վազէ մեր ջինջ գետերէն:

Հայերն այսօր էլ երգում են «Ազանայի երգը»:

Ասպարեղ եկան նաև թուրքերեն ողբեր, որոնց հեղինակները նույնպես հայեր էին: Դրանցից էր, օրինակ, **Ատոն Էպեյանի** «Ատանանըն տեսթանը»-ն, որը ժողովրդի կողմից երգի վերածվելով՝ տարածվեց Կիլիկիայի և բուն Հայաստանի թուրքախոս հայերի շրջանում:

Ընդամենը յոթը տարի հետո՝ 1915 թվականին, իրադարձութիւնների բերումով Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրութիւնն այլ տարածքների հայութիւնն հետ Կիլիկիայի հայութիւնը ևս ենթարկվեց մարդկութիւնն պատմութիւնն մեջ եղակի

չարագործութիւնն՝ 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնն:

Հայ ժողովրդի հիշողութիւնն մեջ Կիլիկիայի 1909 թ. կոտորածն ընկալվեց ու շարունակում է ընկալվել իրրե 1915 թ. ցեղասպանութիւնն նախափուլը: Դա արտացոլվել է նաև երևանարնակ երաժիշտ Արա Գևորգյանի նախաձեռնած «Ազանա» խտասայիկում՝ նվիրված ցեղասպանութիւնն դոհերի հիշատակի 90-ամյակին: Երգի բառերի հեղինակն է ծագումով իսպանացի, ամերիկացի Դանիել Դեկերը: Երգը 2005 թ. ապրիլի 24-ին առաջին անգամ հնչել է Երևանում՝ շուրջ 10 երկրներից օտար երգիչների կատարմամբ: Երգում ասվում է նաև.

Հայատյաց թուրքը՝ արնոտ աչքերով,
Ջնջել էր ուզում հային ի սպառ:
Ցասկոտ, մոլեգին, թրերով զինված,
Եկան նրանք անպաշտպան մարդկանց վրա:
Ճիշ ու աղաղակ յսվեց ամենուր,
Արնով ներկվեցին դաշտ ու սար:
Ընկան անարդար
Ծեր, մանուկ ու մայր¹:

Արյունայի ոճիրներից հրաչքով փրկված և աշխարհի տարբեր կողմերում ցրված կիլիկիահայերի շրջանում նոր իմաստ ստացավ «Կիլիկիա» կսկծայի երգը: Կիլիկիահայոց այսօրվա ժառանգներից ոչ բոլորը գիտեն երգի մեղեդին, բայց բոլորի մտքում նրա այս տողերն են.

Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արև:

Տարարա՛խտ սերունդներ...

¹ «Ազգակ» բացառիկ (Բեյրութ), 1 հունվարի 2009 թ., էջ 134-136:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի հավաքական կյանքի շարունակականությունը դարեր ի վեր խաթարվել է աշխարհաքաղաքական և պատմական աննպաստ պայմանների հետևանքով: Կիլիկիայի հայությունը 1909 թվականի աղետն այդ ընդհանուր կացությունը դրսևորումները մեկն էր:

Թուրք-քրդական ջարդարարների կողմից Կիլիկիայում իրականացրած լայնածավալ կոտորածները և առանձին տեղերում հայերի դիմադրությունը կրկին վկայեցին, որ հայությունը մշտապես պետք է պատրաստ լինի գոյապայքարի, ունակ՝ համարժեք դրսևորումներ հանդես բերելու հնարավոր նոր մարտահրավերների հանդեպ:

Ըստ արժանվույն գնահատելով դիվանագիտական և այլ կարգի աջակցությունը, որ ներկայումս միջազգային հանրությունը ցուցաբերում է Հայաստանի Հանրապետությանը, հայ ժողովուրդը, սակայն, չի կարող վստահություն տաձել տարբեր կողմերից հնչող հավաստիացումներին, թե իր երկու թուրք հարևաններն արդեն քաղաքակրթվել են, ուստի ստեղծված են տևական երաշխիքներ թուրք-հայ հարաբերությունների զարգացումը կայուն հիմքերի վրա դնելու, հետևապես նաև հանուն ապագայի անցյալի սարսափները մոռացության տալու համար:

Թեև վերջին հարյուրամյակում թուրքիայում փոխվել են պետական կառավարման ձևերը՝ օսմանյան միապետությանը հաջորդել են իթթիհական և հանրապետական (քեմալական) վարչակարգերը, բայց նույն է մնացել թուրք պետական մտայնությունը և մանավանդ այլազգիների և այլակրոնների նկատմամբ թուրքերի գերակայության զգացումը, որը ժամանակ առ ժամանակ կարող է պոթթկալ որպես ջարդարարական կիրք:

Դարավոր փորձառությունը հայ ժողովրդին սովորեցրել է հավատ չտաձել այն պետության «խաղաղասիրական» ձգտումների հանդեպ, որը վճռականապես ժխտում է ոչ հեռավոր անց-

յալում երիտթուրք ոճրագործ կառավարության կողմից իրականացրած հայոց Ցեղասպանությունը, շարունակում է թոնադավթած պահել նրա հազարամյակների հայրենի երկիրը, ուրանալով անցյալի մեղքերը, միաժամանակ նորանոր խոչընդոտներ է ստեղծում Հայաստանի նորանկախ հանրապետության համար՝ փորձելով խափանել նրա առաջընթաց զարգացումը:

Անցյալի դաժան փորձությունները նաև սովորեցրել են գերագույն զգուշություն ցուցաբերել օտարների կողմից մեզ տրվող զանազան խոստումներին ու «երաշխիքներին»: Դրանց նկատմամբ մեզանում ձևավորված անվերապահ հավատը, եվրաչինովնիկների անհարկի միջամտությունները Հայաստանի ներքին գործերին, անխուսափելիորեն թուլացնում են հայության զգոնությունը, հետևապես նաև նրա ինքնապաշտպանական դիմադրողականությունը՝ դուռ բացելով հնարավոր նոր աղետների առջ և:

Ակնհայտ է, որ չէին լինի թուրքիայում հայերի 1895-96 թթ. ահռելի կոտորածները, 1909 թ. կիլիկյան ջարդերը, առավել ևս՝ 1915 թ. ցեղասպանությունը, եթե հայ ժողովուրդն ունենար ազգային պետականություն: Դրանից հետևում է, որ ներկայումս ամեն մի հայ պարտավոր է աչքի լույսի պես պահպանել դժվարին երկունքով ծնված Հայաստանի Հանրապետությունը, ուժերը ներածին չափով նպաստել նրա օրավուր ամրապնդմանն ու զարգացմանը: Աշխարհաքաղաքական արտակարգ բարդ պայմաններում գտնվող հայկական պետականության անվտանգությունը նրա ժողովրդի գոյատևման հիմնական երաշխիքն է: Ահա թե ինչու հայոց պետության թուլացմանը, նրա հիմքերի սասանմանն ուղղված ամեն գործողություն, ինչ պատճառարանությամբ էլ կատարվի այն, պետք է հանդիպի վճռական հակահարվածի:

Կիլիկիահայոց 1909 թ. արհավիրքից արվելիք հիմնական հետևությունն է՝ հավատալ ու ապավինել ազգի ոգուն և սեփական ուժերին: Այդ դեպքում միայն պարտությունների և աղետների հավանականությունը նվազում է, իսկ հաղթանակների և ապահովության հավանականությունը՝ մեծանում:

Կիլիկիայի Հայերի կոտորածներին արձագանքած եվրոպական և ամերիկյան մամուլի օրգաններից ստորև վկայակոչված է միայն «Նյու Յորք թայմս» թերթը՝ իր մի քանի հոդվածներով ու թղթակցություններով:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՔՈՒՐՔԵՐՆ ԵՐԿՈՒ ԱՄԵՐԻԿԱՑՈՒ ԵՆ ՍՊԱՆԵԼ

Միսիոներներ Ռոջերզը և Մորերը Աղանայում ամբոխի սպանած 1000 զոհերի թվում

Ապստամբութուն մայրաքաղաքում

«Թայմսի» թղթակիցը նկարագրում է քաղաքացիների խուճապը և ապստամբ զորքերի անկարգությունները

Սալոնիկի զորքերը ճնշում են

Ցանկանում են իրավիճակի վերականգնում – Առաջապահները Կ. Պոլսից տասնհինգ մղոն հեռավորության վրա են

Գահից հրաժարվելու խոսակցություններ

Հատուկ հեռագիր «Նյու Յորք թայմսին»
Ճեպագիր «Լոնդոն թայմսին»

Կ. Պոլիս, 18 ապրիլի – Ըստ նոր ստացված հեռագրերի, որոնք հաստատում են նախորդ հաղորդագրությունները, երկու ամերիկացի միսիոներներ՝ Ռոջերզը և Մորերը Աղանայում հազարավոր սպանվածների թվում են: Ավելացվում է, որ առաքե-

լությունը մեծ վտանգի մեջ է, բայց առաքելության մյուս ան-
զամենրը մինչ հիմա չեն վնասվել:

Իրավիճակը Կիլիկիայում ակնհայտորեն ծանր է, և Աղանա-
լից եկող ճեպագրերը հավաստում են իրավիճակի անհուսալիտ-
թյունը: Քաղաքի մեծ մասն այրվել է, ներառյալ՝ հայերով բնա-
կեցված թաղամասը, որոնք անհուսալիտորեն դիմադրել են և
ծանր կորուստներ հասցրել հակառակորդին՝ մինչև վերջնակա-
նապես պարտվելը:

Տարսուս քաղաքն այրվում է: Քրիստոնյաներն այնտեղ խա-
ղաղ են, բայց մահամեղականներն սպանում են և կողոպտում:
Մերսինում իրավիճակը վտանգավոր է, այնտեղ առկա է միայն
փոքրաքանակ զորք, իսկ մահամեղական քարոզիչները լայն գոր-
ծունեություն են ծավալում: Անկարգություններ են առաջացել
նաև Այասում և Ալեքսանդրեթի մերձակայքում:

Քանի որ ակնհայտ է, թե տեղի իշխանություններն ի վիճակի
չեն շտկել իրավիճակը, բրիտանական ռազմանավերի հրամա-
նատարները, որոնց հրամայվել էր գալ Մերսին, իրենց նախա-
ձեռնությունները գործելու հրահանգներ են ստացել: Հույս կա, որ
Մերսինում եվրոպական 8 ռազմանավերի կուտակումը կարող է
քաղաքը փրկել այն սարսափներից, որոնք կլանել են Աղանան:

19 ապրիլի 1909 թ.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԱՆԱՆՑ ՎՏԱՆԳ Է ՍՊԱՌՆՈՒՄ ՀԱՃԸՆՈՒՄ

**Ամբողջովին անպաշտպան հինգ միսիոներ հապշտապ
օգնություն խնդրանք են հղել**

Հերթական քաղաքը ոչնչացված է

**Գրրեզ-խանի ամբողջ բնակչությունը՝ բնաջնջված – Հրդեհ
և կողոպուտ շրջաններում – Անօրինականություններ?
որպես երիտթուրքերի թուլացման արդյունք**

Բեյրութ, 22 ապրիլի – Հինգ ամերիկացի կին միսիոներ
վտանգված են Հաճրնում, Աղանայի վիլայեթ, Ասիական Թուր-
քիա: Նրանցից մեկը՝ օրիորդ Լամբերթը, անհապաղ օգնության
խնդրանքով հաղորդագրություն է ուղարկել ծովեզերք: Հաղոր-
դագրությունը թվագրված է ապրիլի 22-ով: Նրանում ասվում է.

«Մեկ շաբաթ է ինչ Հաճրնը շրջապատված է այս շրջանի
գյուղացիներով, ովքեր հարմար առիթի են սպասում գրոհելու
այս տարածքը: Բոլոր ճանապարհները փակ են, և փամփուշտ-
ներ են կրակվում քաղաքի ուղղությամբ՝ անկանոն կերպով:
Սահմանային տներն այրվել են: Դիմվել է Աղանայի իշխանու-
թյուններին՝ օգնության համար, որը չի ուղարկվել: Դրսից եկող
լուրերի համաձայն՝ այս գիշեր հարձակում է լինելու այս տա-
րածքի վրա»:

Կանայք ամբողջովին միայնակ են և անպաշտպան: Հաճրնը
շրջապատող գյուղերը կրակի մեջ են, իսկ ինքը Հաճրնը պաշար-
ված է քոչվոր ցեղերի կողմից: Իշխանությունները բռնազրավում
են ներքին դրություն մասին բոլոր հաղորդագրությունները:

Իրավիճակը երկրում՝ Ալեքսանդրեթից հյուսիս, արևելք և
արևմուտք բնկած վայրերում անչափ լուրջ է՝ կապված հակա-
քրիստոնեական ոտնձգությունների հետ:

Հալեպի և Ալեքսանդրեթի միջև ընկած Գրրեզ-խանի ողջ
բնակչությունը կոտորվել է: Նույնիսկ նորածին երեխաներին չեն
խնայել:

Մոլեոանդ մահմեդականները պաշարել են Էրբեղի Փրանսիական առաքելությունը:

Գեորգ-Յոլ հայկական գյուղը շրջափակված է, և բառ օգնություն համար գիշերը սողոսկելով Հայկա փախած մի սուրհանդակի, դրությունն այնտեղ անհուսալի է: Երբ նա փախել է՝ քաղաքի սահմանային շենքերն արդեն պատված են եղել հրդեհով:

Ջարդեր և կողոպուտ են եղել նաև Անտիոքում, իսկ Բիրեջիկում՝ ապստամբություն: Հայկալը խուճապի մեջ է: Քաղաքում կա միայն 400 թուրք զինվոր: Քաղաքի գործունեությունը կանգնած է, և յուրջ պատճառներ կան վախենալու անկարգությունների սանձադերձումից: Քաղաքը լի է արաբ բեղուիններով, քրդերով և չերքեզներով:

Ազատ արձակված մարդասպանները միանում են ամբոխին

Ալեքսանդրեթի ծոցի արևմտյան ափում՝ Այասում (ճիշտը՝ Փայասում: - Ն. Ս.), 418 մարդասպան ազատ է արձակվել բանտից: Նրանք միանգամից միացել են ամբոխին և սկսել կողոպուտը:

Տարսուսում 100 մարդ է սպանվել: 800 տուն այրվել է, և այսօր 5000 մարդ անօթևան է մնացել:

Այնթապից մի քանի տեղացի հոգևոր հովիվներ սպանվել են այն ժամանակ, երբ փորձում էին գնալ մասնակցելու շրջանի միսիոներական հավաքին Ադանայում:

Ջարդերը դաժանություններ են ուղեկցվում: Նույնիսկ կանանց և երեխաներին չեն խնայում: Մահմեդականների նշանարանն է. «Անիծված ցեղի և ոչ մեկ ճյուղ չպետք է ապրի»:

Հայերը, կարծելով, թե ջարդերն իրականացնում են թուրքական հին ուսման կողմնակիցները, երիտթուրքերից են հետագա պաշտպանություն ակնկալում:

Թուրքական կառավարության պաշտոնյաները Մերսինում ամեն հնարավորն արել են վերահսկելու իրավիճակը: Նրանց գործադրած ջանքերի արդյունքն աննշան է, բայց չնայած դրան, նրանք արժանի են գովասանքի իրենց աշխատանքի համար:

Ջարդերի իրականացման վայրերը

Հաճրն գտնվում է Ադանայից ութսուն մղոն դեպի Հյուսիս՝ Ադանայի վիլայեթի Հյուսիսային անկյունում: Անտիոքը, Բիրեջիկը և Հայկալը, Ալեքսանդրեթի հետ համեմատած, ոչ ծովափնյա տարածքներ են և երկաթուղային կապ չունեն ավաներձ գոտու հետ: Անտիոքը Ալեքսանդրեթից 40 մղոն հարավ է և ունի 23000 բնակչություն, որից 16000-ը մահմեդական է, իսկ 7000-ը՝ քրիստոնյա, այդ թվում՝ 4000 հայ: 10000 բնակչությամբ Բիրեջիկը Ալեքսանդրեթից 115 մղոն Հյուսիս-արևմուտք է գտնվում: Հայկալը Ալեքսանդրեթից 70 մղոն հարավ-արևելք է, ունի 125000 բնակչություն, և երկար ժամանակ Օսմանյան կայսրության առևտրային գլխավոր կենտրոններից է եղել: Առևտուրը մեծ մասամբ հայերի և հույների ձեռքում է: 25000 բնակչությամբ Տարսուսը գտնվում է Մերսինն ու Ադանան իրար կապող երկաթուղու վրա:

Որոշ քանակի բողոքականներ են եղել Անտիոքի քրիստոնյաների թվում, բայց հաղորդագրություններում այնտեղ ամերիկյան որևէ առաքելության մասին նշում չկա: Բայց այնտեղ կա իտալական և շոտլանդական երիցական եկեղեցու մի կայան՝ երեք միսիոներներով և յոթ տեղաբնիկ աշխատողներով:

Հայեպում կա բավական մեծ եվրոպական գաղութ և Հոմեական Կաթոլիկ եկեղեցու զորավոր տարր բնակչության մեջ: Անգլիայի երիցական եկեղեցու օտարերկրյա առաքելությունը մի կայան ունի Հայկալում:

Տարսուսում կա «Սեյնթ Պոլ» ինստիտուտը, որը հիմնադրվել է Նյու Յորքից հանգուցյալ էյիթթ Ֆ. Շեֆրդի ֆինանսական աջակցությամբ: Ինստիտուտն այժմ Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի (American Board of Commissioners for Foreign Missions) խնամակալության տակ է, և ծառայում է որպես նախապատրաստական դպրոց Կենտրոնական Թուրքիայի քոլեջի համար Այնթապում:

23 ապրիլի 1909 թ.

**ԱՆՏԻՌՔԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԸ
ՈՋՆՁԱՑՆՈՒՄ ԵՆ ՀԱՅԵՐԻՆ**

15000 կարիքավորներ – Ալեքսանդրեթի չրջանի գրեթե բոլոր հայկական բնակավայրերն այրած են

Վտանգը Հաճրնում նվազել է

Թուրք նահանգապետը հրաժարվում է թուլյատրել բրիտանական ռազմանավից ավիանումը՝ օգնություն ցուցաբերելու հայկական գյուղին

Բեյրութ, 23 ապրիլի – Անտիոքի և չրջակայքի հայ բնակչությունը փաստորեն ոչնչացվել է վերջին մի քանի օրերին մոլեռանդ մահճակալների կազմակերպած ջարդերի ընթացքում: Հազարավոր հայ անօգնական այրիներ և որբեր դեռևս փողոցներում են և չեն կարողանում հեռանալ, միաժամանակ՝ քաղաքում և նրա մերձակայքում իսպառ բացակայում է անվտանգությունը:

Բեյրութում դեռ հանգիստ է, բայց առկա է մեծ լարվածություն քրիստոնյա և մահճակալական բնակիչների միջև: Ձորեր են ժամանում այստեղ, իսկ իշխանություններն ազդու միջոցներ են գործադրում կարգուկանոնը պահպանելու համար: Շատ մարդիկ լքում են Բեյրութը և տեղափոխվում Լիբանան (նկատի ունեն Լեոնայիրանանը: – Հ. Ս.):

Այսօր բրիտանական «Դայանա» ռազմանավը հանգրվանեց նավահանգստում:

24 ապրիլի 1909 թ.

30000 ՍՊԱՆՎԱԾ ԶԱՐԴԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ*

Ադանայի վիլայեթում թուրքական մոլեռանդության զոհերի նախնական գնահատականը

Մահացու գործողությունները շարունակվում են

Քոչվորները պաշարում են քաղաքները և շարժվում այլ քաղաքների ուղղությամբ – Ամերիկացի կանանց սուրհանդակները՝ սպանված

Բախման վտանգ Բեյրութում

Դրուզները հավաքվում են վրեժխնդիր լինելու պատգամավորի սպանության համար, իսկ մահճեղականները պատրաստվում են դիմակայելու նրանց

Բեյրութ, Ասիական թուրքիա, 24 ապրիլի – Նախնական գնահատականով՝ Ադանայի վիլայեթի հայկական ջարդերում սպանվածների թիվը հաշվում է 20000-30000: Ծովափի երկայնքով ամենուր օգնության կարիք է դգացվում:

Ադանա քաղաքում ավելի քան 100 աղջիկ կորել է: Հայտնի է, որ տեղացի քսանմեկ հոգևոր հովիվ սպանվել է: Վախի զգացում կա, որ բացի ամերիկացի միսիոներների արդեն հայտարարված սպանությունից, հնարավոր է, որ ուրիշ միսիոներներ էլ են սպանվել: 15000 գաղթական կա Ադանայում և Տարսուսում, ևս 5000՝ Մերսինում:

Իրավիճակը ծայրահեղ է դառնում Հաճրնում, որտեղից հաղորդվել էր, թե երկու օր առաջ 5 ամերիկացի կին վտանգված էին քոչվորների կողմից: Երկու օր առաջ 4. Պոլիս օգնության դիմում ներկայացրած ամերիկացի միսիոներ օրիորդ Լամբերթի՝ օգնության համար ուղարկած սուրհանդակը սպանվել է փողո-

* Հատված հրապարակումից:

ցում: Երկրորդ սուրհանդակի՝ մի ղինվորի վրա նույնպես կրակել են: Նահանգապետն, այնուամենայնիվ, անվտանգություն կրաչխիբներ է տվել ամերիկացիներին, և հաղորդագրություններ կան, որ ապստամբները հետ են քաշվում: Քաղաքը սննդի կարիք ունի:

Բրիտանական, ֆրանսիական և գերմանական ռազմանավերի հրամանատարներն ու Մերսինի ամերիկյան և ֆրանսիական հյուպատոսությունների պաշտոնյաներն այսօր խորհրդակցել են նահանգապետի հետ՝ կապված առկա անկարգությունների հետ: Նրանք հատուկ ուշադրություն դարձրեցին Հաճրնի շտապ օգնություն ցույց տալու հարցին: Նահանգապետը խոստացավ հնարավոր ամեն ինչ անել՝ հանգստացնելու մահմեդականներին: Բրիտանացի փոխհյուպատոսը հեռագրեց Հաճրնի առաքելություն՝ համոզելու քաղաքի հայերին չկրակել պաշարողների վրա, քանի որ նրանք հավանաբար կհեռանան նահանգապետի հրամանով:

Դեռ թիվը ղինվորում է:

Օգնություն խնդրանք է ստացվել Լաթաքիայից, որտեղ ամբողջ մոտենում է քաղաքին և ամերիկացիների ունեցվածքը վտանգի տակ է:

Անտիոքում հանգիստ է, քանի որ այդ քաղաքում որևէ հայ չի մնացել:

Հայկական Քեսապ գյուղն այրվել է և շատ մարդիկ սպանվել են այնտեղ: Քեսապի կանայք և երեխաները փախել են շրջակա սարերը՝ ենթակա սովին ու ամբոխի դաժանություններին:

Իրավիճակը ամենածայրահեղն է Այեքսանդրեթից փոքր-ինչ հարավ գտնվող Բեյյանում:

Տեղացի հորդաները շարժվում են Անտիոքից տասնութ մղոն հարավ-արևմուտք գտնվող Սուեդիայի վրա:

25 ապրիլի 1909 թ.

«ԱՐՅՈՒՆՈՏ ԱՐԵՎԵԼՔԸ»

Հայկական ջարդերի ժամանակ ամերիկացիների անգործությունն արժանի է նախատիևքի

«Նյու Յորք թայմսի» խմբագրություն,

Կարո՞ղ եմ «Թայմսի» և նրա ընթերցողների ուշադրությունը հրավիրել Վիլյամ Վաթսոնի մի խումբ սոնետների վրա, որոնք կրում են «Արյունոտ Արևելքը» անվանումը: Սոնետները մեծ բանաստեղծի սրտի թև ըողոքներն էին 1895 թվականին թուրքերի դժհերի համար, թուրքեր, որոնք քրիստոնյաներին նորից սպանում են 1909-ին: Եթե այն ժամանակ մարդկությունն ոտքի կանգներ, ապա կկանխարգելվեր այն ամենն, ինչ կատարվում է այժմ: Անգլիացիներն ասում են, որ Վաթսոնը ղափնեկիր կլիներ, եթե նրա ակնհայտ կարեկցանքն ու խիղախությունը չստիպեին նրան նախատել իր կառավարությունը, այլ փոխարենը՝ ղովերգել: Այն ժամանակ և այժմ նրա նախատիևքներին արժանի են ըլոյր այսպես կոչված քրիստոնյա տերությունները: Սա հատկապես վերաբերում է Միացյալ Նահանգներին:

«Վեր հառնող դուստր,

Արևմուտքի տիտան,

Անվտանգ փրփուրների հազարավոր միացությունների ետևում»:

Մենք ունենք անսահման ռեսուրսներ, հռչակված զաղափարներ, մենք պարտավոր ենք վրեժ լուծել մեր հասարակ քաղաքացիների համար և պաշտպանել որևէ ցեղի թույլին: Մենք ղերծ ենք թուրքական բարդությունների խոչընդոտներից, որոնք երկար ժամանակ խղճուկ պատրվակ են հանդիսացել Եվրոպայի անգործություն համար: Արդյոք քրիստոնյա տերությունները ղեռ միասնակա՞ն են՝ պահպանելու Բարձր Դուան

ամբողջականությունը և հանդուրժողակա՞ն են թուրքերի և քրդերի հանցագործությունների նկատմամբ:

«Արդյոք ես իմ եղբոր պահապա՞նն եմ», այս խոսքերը Կալենի անձա՛հ, հոնտորական խոսքերն են:

Այդ պատճառով, պարոնա՛յք, մենք պետք է փրկություն ձեռք մեկնենք անօգնականներին:

Մ. Բ. Բ.

Նյու Յորք, 24 ապրիլի 1909 թ.

28 ապրիլի 1909 թ.

Ռիդինգ, Փենսիլվանիա, 27 ապրիլի – Հաճրնում տեղակայված «Քրիստոսի մենոնական եղբայրների» (Mennonite Brethren in Christ) եկեղեցու հովիվ, և ամերիկյան որբանոցի ու առաքելության նախագահ Ք. Հ. Բրուններն այսօր ստացավ հետևյալ ճեպագիրը Վաշինգտոնից՝ Պետական ղեկարտամենտից.

Դեպքանը 25 ամսաթվով հեռագրում է, որ զավառից եկող նորությունները թույլ են տալիս մտածելու, որ անկարգությունները շարունակվելու են այնքան, մինչև դրությունը հանդարտվի Կ. Պոլսում: Իրավիճակը յուրջ է համարվում Անտիոքում, Հաճրնում և Դեորթյուում, հատկապես վերջին վայրում: Դեպքանը բոլոր հնարավոր քայլերը ձեռնարկում է ահաբեկված քաղաքներին օգնություն ուղարկելու համար, բայց կենտրոնական կառավարությունն ամբողջապես տարված է Կ. Պոլսի անկայուն դրությամբ: Մերսինի հյուպատոսը ևս հեռագրել է, որ ինքն ազդու կերպով դիմել է իշխանություններին՝ Հաճրնում ամերիկացիներին պաշտպանելու խնդրանքով:

28 ապրիլի 1909 թ.

ԹՈՒՐԳԱԿԱՆ ԶՈՐՔԵՐ ԱԴԱՆԱՅԻ ՀԱՄԱՐ

Երկու գունդ ճանապարհին են՝ ճնշելու համար ջարդերը

Հատուկ հեռագիր «Նյու Յորք թայմսին»

Մերսին, Փոքր Ասիա, 26 ապրիլի, Կիպրոսով, 28 ապրիլի – Շարաթ օրն այստեղ ափ ելած թուրքական երկու զինվորական զնդեր ուղղվեցին դեպի Ադանա, որտեղ ապրիլի 14-ին սկսվել էին քրիստոնյաների ջարդերը և շարունակվում էին մինչև անցած գիշեր, ուղեկցված հայերի դանդաճածային սպանություններով և նրանց ունեցվածքի հրկիզումով:

Հաղարավոր հայեր կենդանի այրվել են, դորքերը միանգամից սպանել են փախուստի փորձ անողներին: Ադանայի ոչնչացումն ավարտված է, իսկ ամբողջ Ադանայի նահանգում զոհերի թիվը հասնում է 30,000-ի: Եվրոպացիների նյութական կորուստներն ահեղի են: Բրիտանական և այլ օտարերկրյա ռազմանավերն այստեղ աշխուժություն չեն ցուցաբերում:

Հաճրն քաղաքում 15000 մարդ, այդ թվում՝ հաղարավոր հայեր և երեք ամերիկացի կին, չըջափակված են մահճական գորքերի և խուժանի կողմից:

Նախապես հաղորդվել էր, որ չորս գերմանացի մահացել է Բախչևում, բայց նրանք անփտանգ ժամանել են Մերսին: Այդ քաղաքի հայ բնակչությունը բնաջնջված է:

29 ապրիլի 1909 թ.

ՍՈՒԼՔԱՆԸ ԽԱԿԻՒ ՄԵՋ ԳՆՈՒՄ Է ՄՋԿԻՔ*

Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի ներկայացուցիչ, Ասիական Թուրքիայում՝ Կիլիկիայում տեղի ունեցած ջարդերից տուժածների հարցերով դադարող Ու. Փիթը 12 տոննա ալյուր և 150000 ֆունտ բրինձ Ադանա է ուղարկել: Պարոն Փիթը ստացել էր 1000 դոլար Ամերիկյան կարմիր խաչից, 1100 դոլար՝ Ամերիկյան առաքելությունների խորհրդից, 2750 դոլար՝ Հայերի բարեկամների միությունից, և ասում է, որ ինքը կարիք ունի 15000-20000 դոլարի՝ իր հրատապ պահանջները հոգալու նպատակով:

Տարսուսից ստացված մի նամակում, որը ապրիլի 20-ի ամսաթվով գրել է ղոկտոր Թոմաս Դ. Քրիստին Հարթֆորդից, Կոնստանթնուպոլիսում է:

«Ես հաշվել եմ Ադանայում և Տարսուսում 1000 զոհ, ևս 300 զոհ հարևան քաղաքներում, բայց սկսում եմ մտածել, որ գյուղական վայրերում այս զոհերն ավելի շատ են: Մեր բանկիրը՝ Շաքեր Բուրոսն, օրինակ, Տարսուսից հարավ-արևելք ունի ազարակներ, որտեղ աշխատում էր 81 մարդ, որոնցից 1-ը՝ հույն, 80-ը՝ հայ: Այդ հույներ եկավ ու պատմեց, որ բոլոր 80 հայերը մեկ առ մեկ սպանվել են: Նույնատիպ պատմություն եկավ նաև Գոզ-Օլուքից:

Նախաճաշում, ճաշում և ընթրում ենք սարսափի ու ահի մեջ: Ես երբեք չեմ հավատացել, որ մարդիկ կկատարեն այնպիսի դաժանություններ, ինչպիսիք տեսա շարաթ առավոտյան: Երբ ուղևորվում էի գնացքով Ադանայի այդ մասի գինու այգիներով և պարտեղներով, դրանք նման էին Շիլոհի, Կորինթոսի, Վիկտորի և Ատլանտայի մարտադաշտերին: Ամենուր պառկած դիակներ էին և տասը կամ քսան կույտեր, ըստ երևույթին՝

* Հատված հրապարակումից:

թաղման արարողության համար: Ադանայում սայլերը դատարկվում էին գետի մեջ: Կայարանից սկսող երկար փողոցում չուրջ մեկ մղոնի վրա հանդիպեցի ավելի քան երեսուն դիակի, որոնց դեռ չէին վերցրել:

Երկու ամբողջ օր տեղի էին ունենում փողոցային կոիվներ, ջարդեր, հրդեհներ: Մեր մեծ Ադանա քաղաքից մնացել է միայն անցյալը»:

Ամերիկյան թերթի թղթակից Ֆրեդերիկ Մուրը, ում սահմանադրականները վրդից վիրավորել էին քաղաքի վրա հարձակման ժամանակ, արագորեն ապաքինվում է:

1 մայիսի 1909 թ.

**ԲՐՈՒՔԼԻՆՑԻ ՄԻ ՄԱՐԴ ՏԵՍԵԼ Է ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ
ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Ստեֆան Թրոուրրիջը նկարագրում է Ադանայում Ռոջերզի
և Մորերի սպանությունը մահճակալանների կողմից**

Երեքն էլ պայքարելիս են եղել հրդեհի դեմ

**Անցել են փողոցը կրակոցների միջով՝ հանգցնելու աղջիկ-
ների ամերիկյան միսիոներական դպրոցին սպառնացող
հրդեհը**

4. Պոլիս, Մայիսի 1 – Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի միսիոներ Ստեֆան Ռ. Թրոուրրիջը՝ Բրուքլինից, Նյու Յորք, Ադանայի առաքելության իր գործընկերների՝ Դ[ելյվիդ] Մ. Ռոջերզի և Հենրի Մորերի սպանության իրական ականատես միակ ամերիկացին կամ եվրոպացին է: Պարոն Թրոուրրիջը մեծ վեգիրին տրամադրել է, ինչպես նաև միսիոներական խորհրդին ներկայացրել է Ադանա, ապրիլի 24-ի ամսաթվով հետևյալ ղեկույցը: Պարոն Թրոուրրիջը գրում է.

«Մահճակալանների և հայերի միջև կրակոցներն ու կոիվներն սկսվեցին ապրիլի 14-ին, ինչը հանգեցրեց երկու կողմից զոհերի և վիրավորների: Գիշերվան մոտ պարզ էր, որ գործի էին դրվել հրձիգները. քանի որ քաղաքի մի քանի շրջաններ ծածկված էին ծխի քույաներով, որոնք տարածվում էին քաղաքից շատ հեռու, որտեղ այրվում էին նաև խաղողի այգիներն ու տնակները: Ամբողջ գիշեր բոլոր կողմերից կրակահերթեր լսվում էին: Գործածվում էին տների տանիքները, մինարեթները, փայտե ծածկով պատուհանները և այլ դարաններ: Ամենաշարունակական և փտանգավոր կրակոցները գալիս էին հայկական հատվածի սահմանի մինարեթներից մեկից:

Հաջորդ առավոտ՝ ապրիլի 15-ին, կործանիչ հրդեհը տարածվել էր այնպիսի չափերով, որ ստիպված էինք հսկողություն տակ պահել աղջիկների դպրոցի շենքի և Վիլյամ Ն. Չեմբրսի նստավայրի շրջակայքը: Բոլոր փողոցները լրվել էին, իսկ դարաններից կրակոցները շարունակվում էին ողջ առավոտյան ընթացքում:

Աղջիկների դպրոցի մոտակայքում ծխի թարմ հոտը զգուշացնում էր, որ հրդեհը սպառնում էր մեզ: Քամու ուղղությունը նպաստում էր, որ կրակը, տների միջով անցնելով, գա մեր ուղղությամբ: Պարոն Ռոջերզն ամբողջ փողոցի երկայնքով հսկում էր օրիորդ Վալյասի տունը և դարձանատունը: Պարզ էր, որ աղյուսից և փայտից շինված այդպիսի մեծ դպրոցը փտանգի տակ է: Ամբողջ առավոտ փորձում էինք ազատվել մուտքի փայտերից: Ծուտով պարզ դարձավ, որ անհրաժեշտ է ուղղակի ջանքեր գործադրել հրդեհը հեռու պահելու համար: Մինչ այդ որևէ մեկը չէր փորձում դուրս գալ փողոց՝ մահճակալանների և հայերի միջև կրակոցների պատճառով: Մահճակալան ավազակները, գինված և հուսահատ տրամադրությամբ, կողոպտում էին այրվող շենքերի դիմաց ընկած տները:

Մորերը հրդեհի անցման կետում

Պարոն Մորերն ու ես վերցրինք մի երկաթաձող և կացին ու անցանք փողոցը, որպեսզի կտրենք հրդեհի և աղջիկների դպրոցի միջև ընկած տների փայտե չքամուտքերը, պատուհաններն ու աստիճանները: Դույլերով ջուր էինք կրում և դրանք լցնում այնտեղ, որտեղ կրակն իրեն ճանապարհ էր բացում:

Այս ամբողջ ժամանակ կողոպուտը և հրդեհը զազարեցնելու որևէ ջանք չէր նկատվում կառավարության և իշխանությունների կողմից: Չերևաց որևէ գինվոր կամ ոստիկան, ոչ էլ բերվեց հակահրդեհային տեխնիկա՝ կրակը հանգցնելու համար: Միակ նորությունը գինվորներն էին, որոնք ժանգոտ հրացաններով կրակում էին մինարեթներից: Այս կրակոցներն ակնհայտորեն

ուղղված էին այն տները վրա, որտեղ հայերը դիմադրում էին պատասխան կրակով:

Երբ սկզբից բարձրացա հրդեհին մոտիկ տանիքների վրա, կարճ հեռավորություն վրա դիմված մահճակալաններ հայտնվեցին երևա կողմից: Երբ նրանք հասկացան, որ ես չեմ կրակում իրենց վրա, այլ եկել եմ կանգնեցնելու հրդեհ, իջեցրին հրացանները և տարրեր նշաններով վստահեցրին ինձ, որ կարող եմ անվտանգ հեռանալ: Այնուհետև երևա թուրք հայտնվեցին դիմացի մայթի տան պատուհանների մոտ, և իմ անվտանգությունը վստահեցնելուց հետո, նորից վերադարձան իրենց կողոպուտի գործին: Այդ տան ետևում, լավ պաշտպանված վիճակում, փաթթոցավոր մի մահճակալան այդ գողերին ծածկում էր իր հրացանով և հաճախ կրակահերթեր էր արձակում նրանց պաշտպանելու համար: Հանկարծ երկու ուրիշ մահճակալաններ հայտնվեցին իմ ձախ կողմում, բայց գիտակցելով իմ նպատակը, իմ նկատմամբ որևէ վերարևմուտք չցուցաբերեցին:

Այդ ընթացքում, աղջիկների դպրոցի բակից ջուր բերող պարոն Մորերը բարձրացավ ինձ մոտ ու երկաթաձողով կտրեց մի պատ, որի մի կողմն ուժգին այրվում էր: Մեկ ժամից ավելի աշխատեցինք ջրի դույլերով, երկաթաձողով և կացնով: Օգնություն կարիք ունեինք: Մահճակալանների կրակոցներից փողոցի անկյուններում պահ մտած մի քանի հայ երիտասարդներից մի քանի անգամ խնդրեցինք վայր դնել իրենց ղեկերը և գալ փրկելու դպրոցի շենքը:

Մեր մտքով անցնող իրական վտանգը ոչ թե շենքի հավանական կորուստն էր, այլ այն ծանր վիճակը, որում կհայտնվեին մեր ամերիկացի ընկերները, հարյուրավոր քրիստոնյա փախստականներն ու դպրոցի ութսուն աղջիկները՝ շենքն այրվելուց հետո:

Բոլոր ուղղություններով անկարգություններ և կրակոցներ էին: Զկար որևէ ապաստան բացառությամբ բողոքականների՝ որոշ հեռավորություն վրա գտնվող եկեղեցուց, բայց նույնիսկ նրան էլ երևա կողմից սպառնում էր կործանիչ հրդեհ:

Երկու մահճակալանների կրակոցը

Ուստի, ետ դարձանք դպրոց և կամավորներ խնդրեցինք: Պարոն Ռոջերզն եկավ միանգամից: Նա օրիորդ Վալյասի տանն էր, և չէր խմանում, թե հրդեհն ինչքան է մոտեցել: Նա երևա անգամ ջուր տարավ-բերեց: Պարոն Մորերն երկաթաձողով բացում էր պատը, իսկ ես տանիքից ջուր էի լցնում կրակի նոր աղբյուրի վրա: Այդպես աշխատեցինք բավական ժամանակ առանց մահճակալաններից վնասվելու, երբ հայերը փողոցի մյուս ծայրից սկսեցին կրակել այն տների ուղղությամբ, որտեղ կողոպուտիչներն էին գործում: Հանկարծ երկու կրակոց լավեց մեր աշխատած տեղից ոչ ավել քան ութ յարդ հեռվից: Փողոցով ջուր բերող պարոն Ռոջերզը մահացու վիրավորվեց: Նա կանչեց ինձ անունով, ապա բնկավ հենց փողոցի մեջտեղում: Մյուս փամփուշտը վիրավորեց պարոն Մորերի ձախ թորք, սրտի մոտ, և ահավոր ցավ պատճառեց նրան: Երկաթաձողն ընկավ նրա ձեռքից: Ապա նա ցած իջավ աստիճաններով և ընկավ պարոն Ռոջերզի կողքին:

Այդ երկու կրակոցից անմիջապես հետո, կրակոցներն արձակած մահճակալաններից ևս մի քանի փամփուշտներ սուլեցին իմ կողքով: Ես պառկեցի տանիքին և սողոսկեցի մինչև ծայրը, այնպես որ կարողանում էի տեսնել պարոն Մորերին, որը մեծ դժվարություններով փորձում էր իջնել աստիճաններից: Ես նաև լսում էի պարոն Ռոջերզի տնքոցը: Իմ մոտ ծագած առաջին միտքն էր օգնել իմ ընկերներին՝ հասցնել տուն և դարմանել նրանց վերքերը: Այնուհետև, առանց բացահայտելու իմ մտադրությունը, ոտք դրեցի ներքևի տանիքին, ապա ցած իջա պարոն Մորերի իջած նույն աստիճաններով: Ակնհայտ էր, որ երկուսին էլ պետք էր ներս տանել: Արագ զնացի դպրոց, որպեսզի պատահածի մասին պատմեմ ղոկտոր Թոմաս Դ. Քրիստիին և պարոն Ֆրեդերիկ Ու. Մաքալլումին:

Հենց այդ ժամանակ Մերսինի բրիտանական փոխհյուպատոսը՝ մայոր Դաուլթի Ուիլյան ժամանեց քսան թուրք դինավորների հետ՝ քաղաքը չրջելու համար: Նրանք ձիավարեցին և պարոն Ռոջերզին ու պարոն Մորերին գտան փողոցում պառկած: Ամբողջ մերձակայքը դատարկված էր: Զինվորներին հրաման տրվեց տանիքները բարձրանալ և կրակել մի քանի ուղղություն-

ներով, բայց այդ ժամանակ մարդասպաններն արդեն աներևութացել էին:

Պարոն Մորերը մահացավ մի քանի րոպե անց, դպրոցի շենքում, իսկ պարոն Ռոջերը, գիտակցութեան չզալով, նրանից մի քանի րոպե երկար ապրեց միայն:

Երկուսն էլ խաղաղորեն մահացան: Նրանք մահացան որպես Հիսուս Քրիստոսի յավ գինվորներ:

Վերապատվելի Ստեֆան Ռ. Թրոուրրիջը, որի պատմությունը Աղանայի ջարդերի մասին տպագրված է վերևում, Բրուքլինից է, Նյու Յորք, որտեղ նա նախկինում Ժողովական կենտրոնական եկեղեցու հովիտի օգնականն էր:

Իր կյանքը նման ահավոր հանգամանքներում կորցրած վերապատվելի Հենրի Մորերն Ինդիանայից էր, և Թուրքիա էր ուղարկվել «Քրիստոսի մենտնական եղբայրների» (Mennonite Brethren in Christ) կողմից, որը համակարգում է միսիոներական աշխատանքը Հաճրնում, Աղանայում և այլ կետերում: Պարոն Մորերի հետ սպանված վերապատվելի ղեկավոր Մայնր (Դեյվիդ: - Հ. Ս.) Ռոջերը Նյու Բրիտեյնից է, Կոննեքթիկետ, որդին այժմ այնտեղ բնակվող Դ. Օ. Ռոջերի: Նա նախկինում հովիտ էր Իսթ Դորսեթի Ժողովական եկեղեցում, Վերմոնթ և Թուրքիա էր ուղարկվել Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի կողմից:

Վիլյամ Ն. Չեմբրսը նախապես ապրել է Քինգստոնի մոտ, Օնտարիո, և Թուրքիա է ուղարկվել Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի կողմից: Նա տեղի Երիտասարդ տղամարդկանց քրիստոնեական միավորման քարտուղարն էր նաև:

Պարոն Թրոուրրիջի պատմության մեջ նշված օրիորդ Վալլասն անգլիացի բուժբույր է և կցված է ամերիկյան առաքելություններ՝ աշխատելու Թուրքիայում: Վերապատվելի Ֆրեդերիկ Ու. Մաքայլումը Տորոնտոյից է, Օնտարիո, և Թուրքիա է ուղարկվել Ամերիկյան խորհրդի կողմից, մինչդեռ ղեկավոր Թոմաս Դ. Քրիստին Հարթֆորդից է, Կոննեքթիկետ, և ղեկավարում է ամերիկյան գործերը Աղանայի ճյուղային կայաններից մեկում՝ Տարսուսում:

2 մայիսի 1909 թ.

ԾՐԱԳՐԵԼ ԷՐ ԲՈԼՈՐ ԴԵՍՊԱՆՆԵՐԻՆ ՍՊԱՆԵԼ

Հաստատվեցին այն տարաձայնությունները, թե Աբդուլ [Համիդ]ի կուսակցությունը օտարերկրացիների ընդհանուր ջարդ էր ծրագրել

Աղանայի նահանգապետի ձերբակալությունը

Թուրքական պառլամենտը ռազմական դատարանին հրահանգում է դատել Փոքր Ասիայի ապստամբներին – Նրանց ապստամբությունը նույն դավադրության մի մասնիկն է

Կ. Պոլիս, 1 մայիսի – Ներքին գործերի նախարարությունը համոզված է, որ Կիլիկիայի տարածքում հայերի վրա հարձակումները կազմակերպվել են Կոստանդնուպոլսից: Նրանք այստեղ համրնկել են զորքերի՝ ամբողջատիրության վերականգմանն ուղղված ապստամբության հետ:

Ֆելդմարշալ Ղադի Մուխթարն այսօր հաստատեց վերջին երկու օրերին շրջանափոխ տարաձայնությունները, թե բոլոր օտարերկրացիների, այդ թվում Կոստանդնուպոլսի ղեկավարների ջարդը ծրագրվել էր չարաթ օրվա համար՝ ապրիլի 24-ին: Սահմանադրական բանակի հրամանատար Շեքեթ փաշայի սկզբնական ծրագիրն էր Կ. Պոլիս մտնել կիրակի օրը՝ ամսի 25-ին, բայց երբ քաղաքից հաղորդագրություն ստացավ, որ ցածրաստիճան կրոնավորները, սպայադուրկ գինվորականությունը և մոլեռանդ ամբոխի ղեկավարները ծրագրել են սպանել օտարերկրացի քաղաքացիներին, խուսափելու համար տերությունների միջատությունից՝ իր բանակին հրահանգեց քաղաք մտնել չարաթ առավոտ:

Մեծ բանակի պայթուցիկ նյութեր էին պատրաստվել բանկերի, ղեկավարների և ամուր պաշտպանված այլ շենքերի դեմ կիրառելու համար:

Բուժն վիճարանություններից հետո, որոնց բնթացքում Ազանայի նախկին նահանգապետը և ներքին գործերի նախարարի օգնականը մեղադրվեցին որպես համիդյան ուժերի ծնունդներ, Պատգամավորների պալատն այսօր բնդունեց մի բանաձև, ըստ որի՝ մի պատյաննետական հանձնաժողով պետք է ուղարկվի Ադանա՝ հետաքննելու ջարդերը և ստեղծելու ուղեմական դատարան՝ մեղավոր անձանց դատելու նպատակով: Հարյուր հազար դոլար է հատկացվել այդ շրջանի կարիքավորների համար: Պատգամավորները նաև քննության են առել Կ. Պոլսի վերջին կոիվների ժամանակ դոճվածների կամ վիրավորների բնտանիքներին հոգ տանելու առաջարկությունը:

Նախարարների խորհրդի և այլ պաշտոնատարների ներկայությունը բնթերցվեց կայսերական հրովարտակր, որով հաստատվեցին մեծ վեղիր Թեֆիկ փաշայի և շեյխ-ուլ-իսլամ Զիալդին և Ֆենդիլի՝ այդ պաշտոններում նշանակումները: Հրովարտակր հակիրճ անդրադառնում էր հեղափոխությանը և վերջին ջարդերին՝ սահմանադրության և շարիաթի օրենքների համընդհանուր կիրառում պահանջելով:

Հասան Ֆեհմի փաշայի փոխարեն արդարադատության նախարար նշանակվեց Սալոնիկի հասարակական դատախազ Ալի Ղալիբ բեյը:

2 մայիսի 1909 թ.

ԶԱՐԴԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԱԴԱՆԱՆ ԱՀԱԲԵԿՎԱԾ Է

Հազարավոր զինվորներ կողոպտում են, կրակում և այրում – Ֆրանսիական դպրոցներն ավերված են

Կրակի վրա նավթ են գցում

Հաճընը և Տարսուսը վտանգված են – Մահացածների թիվը 30000 է – Հայ կանանց փոխանակում են ձիերի հետ

Ադանա, 3 մայիսի, Լաոնակայով, Կիպրոս, 4 մայիսի – Անօրինականություններն Ադանայում զեռ շարունակվում են: Երեկ ավելի շատ մարդ է սպանվել քաղաքում:

Ադանային ահարեկում են 4000 զինվորներ, որոնք կողոպտում են, կրակում և այրում: Որևէ հարգանք չի ցուցաբերվում օտարերկրյա ունեցվածքին: Ֆրանսիական երկու դպրոցներն էլ ավերվել են, և վախ կա, որ ամերիկյան դպրոցը, առևտրական և միսիոներական շահերն Ադանայում լիովին ավերված են:

Նոր նահանգապետը տակավին մտահոսություն չի ներշնչում: Պատճառներ կան համոզված լինելու, որ իշխանությունները ղեռնա մտադիր են բոլոր քրիստոնյաների ոչնչացումը թույլատրելու:

Չորքերն այստեղ կարծես թե «ջուր» են լցնում կրակի վրա. ջրի փոխարեն նրանք գործածում են նավթ, այդ կերպ դիտավորյալ կերպով նպաստելով կործանիչ հրդեհի բնդարձակմանը:

Ակնկալվում է նաև վտանգի սպառնալիք ամերիկյան առաքելություններին Հաճընում և Տարսուսում:

Թուրքական հաղորդակցական միջոցներով ուղարկվող բոլոր նամակներն ու հեռագրերը գրաքննվում են:

Ջարդերի հետևանքով 30000 սպանված կա Ադանայի նահանգում: 35000 տնանկ և բնչադուրկ գաղթականներ թափառում են ամբողջ վիլայեթի տարածքում: Չոհերի թիվը միայն Ադանա քաղաքում հասնում է 6500-ի:

5 մայիսի 1909 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԵՐ

Կայզերը մասնակիորեն պատասխանատու է դրանց համար

«Նյու Յորք թայմսի» խմբագրություն,

Հասարակական կարծիքը բոլոր երկրներում Արդուլ Համիդին պատասխանատու է համարում հայկական ջարդերի համար: 1894-96 թվականների դաժանությունների ծրագիրը, որ գալիս էր Ելզըզի պալատից, և վերջին ջարդը Կիլիկիայում, չնայած չէին վերահսկվում կենտրոնական կառավարության կողմից, հենց նրա ստեղծած իրավիճակի արդյունք էին: Այս ամենը ճշմարիտ է, բայց նաև ոչ բոլորին է հայտնի, որ [Արդուլ] Համիդը չէր գնա իր ժողովրդին սպանելու ծայրահեղ քայլին, եթե չլիներ անձնական և քաղաքական բարեկամությունը Գերմանիայի կայզերի (Վիլհելմ Բ Հոհենցոլերն: - Ն. Ս.) հետ:

Կայզերի արտաքին քաղաքականությունը գուրկ է մարդասիրական զգացմունքներից: Նա կոպիտ ուժ է ներկայացնում: Նա հայտարարել է, որ ամբողջ Արևելյան հարցը արժանի չէ պոմերանացի մեկ նոնակաձիգի ոսկորներին: Այլ կերպ ասած, նա ավելի շուտ կհամաձայնվեր ոչնչացնել քարտեղի մի մասը, քան վտանգել գերմանացի մեկ զինվորի առողջությունը: Հրապարակայնորեն նա բազմիցս հայտարարել է իր համակրանքը սուլթանին՝ հպատակ ցեղերի դեմ խաչակրություն մեջ: Այն ժամանակ, երբ Անգլիան և Ամերիկան բարոյական վերաբերմունք էին ցուցաբերում Թուրքիայում զանգվածային ոչնչացումների դեմ հանդիման, նա ցանկալի հյուր էր [Արդուլ] Համիդի պալատում: Նույնիսկ նրա այցելությունը Սուրբ Երկիր քաղաքական բնույթ էր կրում: Դամասկոսի մահմեդականներին նա ասաց, որ նրանց տիրակալը և մահմեդական աշխարհը կարող են գերմանացի կայսեր բարեկամությունը վստահել: Սուլթանի բոլոր հպատակները՝ հավատացյալները և «գյավուրները», հին, ինչպես նաև

երիտասարդ թուրքերը լավապես տեղյակ են այս իրողություններ, ինչը նրանք ջարդերի իսկական պատճառն են համարում:

Արևելյան բոնակալի և արևմտյան միապետի այսպիսի համակցումը, եղակի երևույթ ինելուց բացի, համիդյան կառավարման բնութագրական հատկանիշներից է: Վերջին 30 տարում աստիճանաբար մեծանում էր գերմանական ազդեցությունը Կ. Պոլսում: Կայզերը հաջողացրեց տեղ գտնել սուլթանի սրտում: Կայզերը աչք էր դրել Թուրքիայի արդյունաբերական ռեսուրսների վրա, այնինչ սուլթանը ձգտում էր ինքն իրեն գերազույնը դարձնել մահմեդական աշխարհում: Այնուամենայնիվ, նրանք՝ երկու կողմերն էլ բավարարված էին, ու նրանց չէր հետաքրքրում, որ Հայաստանի և Կիլիկիայի անմեղ բնակչությունը արյունոտ և արցունքոտ դրամով է վճարելու այդ ամենի գինը: Կայզերը արդյունաբերական և առևտրական արտոնություններ ձևով բերեց Թուրքիայում, իսկ սուլթանը դրա դիմաց իրավունք ստացավ իր քրիստոնյա հպատակներին վերաբերվել համիդյան ձևով: Ունենալով Եվրոպայի ռազմականորեն ամենահզոր թագավորի նեցուկը, [Արդուլ] Համիդը կարող էր իր ընտրած ամեն բան անել նրանց հետ, և նա ընտրեց նրանց սպանելը: Ոտնակոխելով պայմանագրային բոլոր պարտավորությունները և մարդասիրական բոլոր նկատառումները, նա ստեղծեց սպանություն համակարգ այն նույն մարդկանց համար, որոնց բարեկեցությունը Եվրոպայի ու իր միջև կնքված յուր համաձայնությունների առարկան էր: Մեծ մարդասպանն իր գործը կատարեց հետևողականորեն, մինչ նրա օգոստոսափառ ընկերը ցույց տվեց Գերմանիայի ուժը օտար պատմիչ բնույթի որևէ միջամտություն դեմ:

Ինչ որ վերևում հաստատել եմ, մասնավորաբար վերաբերում է հայոց ճակատագրին, բայց դա ճիշտ է նաև Կրետեի հարցի համար, Հունաստանի դեմ պատերազմի, Մակեդոնիայի անկարգությունների և երիտթուրքական կուսակցությունից սպառնալիցի համար: Ու երբևէ դարձանայի չէ, որ երբ երիտթուրքերն անցած Հուլիսին առաջին հաղթանակը տարան սուլթանի նկատմամբ, նրանք սկսեցին վատ վերաբերվել Գերմանիայի քա-

դաքականությունը 4. Պոլսում:

Երբ խոսում ենք հայկական ջարդերի մասին, եկեք արդարորեն բաժանենք պատասխանատվությունը: Գերմանացի ժողովուրդը նույնքան լավն է, ինչ մյուս ժողովուրդները, բայց նրանց կայդերն ոչ նվազ պատասխանատու է համիդյան քաղաքականության համար, որը կործանեց մի երկիր, ինչպես նաև ի վերջո կործանեց նույնինքն [Արդույ] Համիդին:

Մ. Գ. Փափաղյան

Նյու Յորք, 8 մայիսի 1909 թ.

10 մայիսի 1909 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐ

Մահմեդական մոնղոլների գործ

«Նյու Յորք թայմսի» խմբագրություն,

Թուրքական կառավարությունը ոչ միայն չի խոչընդոտում, այլև օժանդակում է այն մահմեդական մոնղոլներին, ովքեր մեր ռասայից հաղարավոր հայերի չարչարում և սպանում են: Բեռլինի պայմանագրի համաձայն՝ հայերի պաշտպանությունը դարձել է միջազգային պարտավորություն:

Քանի որ Եվրոպայի «քրիստոնյա» տերությունները վախենում են որևէ գործողություն կիրառել, արդյո՞ք որպես համաշխարհային հզորության միակ տերությունը, որ դա կարող է անել առանց ուրիշի հետ կոփելու, Միացյալ Նահանգների պարտականությունը չէ անմիջական և ազդու քայլերի դիմել՝ կանխելու հետագա դանդաղացի դաժանություններն անդեն տղամարդկանց, կանանց և փոքրիկ երեխաների նկատմամբ:

Վիլյամ Զ. Վայթինգ
Նյու Հեյվրն, Կոննեկտիկուտ, 6 մայիսի 1909 թ.

10 մայիսի 1909 թ.

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Եվրոպական տերութիւնները հետագա հարձակումները կանխարգելելու իրավունք ունեն

«Նյու Յորք թայմսի» խմբագրութեան,

Թուրքերի՝ հայերի նկատմամբ վերջին դաժանութիւնները կրկին արթնացրել են աշխարհին, և պետութիւնները կարծես թե ապշած են քրդական հորդաների և մոլեռանդ մահմեդականների իրականացրած աննկարագրելի հանցագործութիւններից և վայրագութիւններից: Այնուամենայնիւ, այս դանդաղացած ջարդերը, ինչպես և նախորդները 1895-ին և 1896-ին, ժամանակ անց կմոռացվեն: Ողջ մնացած հայերի՝ արդարութեան վերականգնման համար աշխարհի պետութիւններին խնդրանքները նորից կմնան անյսելի, իսկ ամբողջ գործընթացը, ինչպես միշտ, կրնի թանա վատ հունով:

Հարց է առաջանում. ի՞նչ պետք է արվի Թուրքիայի հետ՝ ստիպելու նրան հարգել իր քրիստոնյա հպատակների իրավունքները: Մեծ պատասխանատվութիւն է ընկած Բեռլինի պայմանագիրն ստորագրած եվրոպական տերութիւնների վրա, որոնք առանց որևէ հապաղման և քաղաքական լարախաղացութիւնների, պետք է համաձայնութեան գան իրար հետ առ այն, որ հայաբնակ վայրերը միջազգային դինսոմի հսկողութեան տակ առնվեն մինչև դանազան քրդական ցեղերը որոշ չափով կքաղաքակրթվեն և իրենց խաղաղ ու արդյունաբերող հարևանների անվտանգութիւնը կերաշխափորեն:

Տերութիւններն անցած փորձից պետք է գիտակցեն, որ հայկական նահանգներում բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ թուրքական կառավարութեանը ներկայացված պահանջը որևէ արժեք և նշանակութիւն չունի, մինչդեռ այդ նույն տերութիւնները շարունակում են իրենց անօգուտ և ան-

հարիր քաղաքականութիւնը և անտարրեր հետևում իրադարձութիւններին: Ինչո՞ւ փոխադարձ համաձայնութեամբ դեմքի չդիմել և Թուրքիային կարգի չհրավիրել:

Վերջին պոթիկումների ժամանակ տերութիւնները, եթե ցանկանային, կկարողանային ռազմանավերի մի որոշ քանակ ուղարկել և վերականգնել կարգուկանոնն ու վերահսկել դանդաղացած ջարդերը: Դա, ի պատիվ իրենց, կլինէր մարդասիրական արարք և վերջ կդներ հայերի նկատմամբ մահմեդականների հետագա ոտնձգութիւններին: Թուրքիայի հայերին պաշտպանելու վերաբերյալ հողվածներ ստորագրած տերութիւնները մի թղաչափ անգամ առաջ չզննացին կանխելու անօրինականութիւնները: Հայ ժողովուրդը գոյատևել է դարերի հայաձանձրների միջով, և այսօր նրանք ապրում են որպես աշխարհի հնդկութեան քրիստոնյա ազգերի ներկայացուցիչներից մեկը, մտափոր ունակութիւններով գերազանցելով իրենց հարևաններին: Աշխարհը կարող է գալիք տարիներին ականատես լինել նոր հայաձանձրների, բայց հայ ժողովուրդը երբեք չի կորցնի իր կրօնը, լեզուն և գաղափարները ամեն դժվարութեան ներքո:

Մ. Հ. Քերաբյան
Նյու Յորք, 3 մայիսի, 1909 թ.

16 մայիսի 1909 թ.

Բեռոյին, 4 հունիսի – «Բեռոյին» օրաթերթի հատուկ թղթակիցը Մերսին, Ադանա, Ալեքսանդրեթ և Անտիոք այցելւոյց հետո իր թերթին այսօր հետագրել է Հայկալից՝ ասելով, որ երկիրը չափազանց հանգիստ է, բայց ամենուր առկա է անհանգստութիւն մոտ ապագայի նկատմամբ: Հայերն ու սիրիացիները մեկնում են հարչուրներով, իսկ բոլոր ներածողները չեղյալ են համարում իրենց պատվերները: Հենց որ Կ. Պոլսի կառավարութիւնը վստահելի դորքեր ուղարկի, Հայկալում հայտարարվելու է ռազմական դրութիւն, ինչից հետո հետադիմական և անջատողական շարժումների ղեկավարները կկանգնեն ռազմական աստանի առջև:

Թղթակիցը շարունակում է, որ սիրիական բանակի ջոկատներն աստիճանաբար փոխարինվում են մակեդոնացիներով: Բայց այս միջոցառումներով հանդերձ, առկա է ապստամբութեան սկսման վախ, և ամեն մարդ զինվում է: Օսմանյան բանակի տեղի մասնաճյուղը 150000 դոլար է փոխանցել միայն այս շրջանի արդյունաբերողներին՝ ղենքի համար:

5 հունիսի 1909 թ.

ԱԴԱՆԱՅԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐԸ ԴԱՏՎԵԼՈՒ ԵՆ

Մեղադրվում են անցած ապրիլին հայկական ջարդերին մասնակցելու համար

Կ. Պոլս, 13 հուլիսի – Կայսերական հրովարտակով այսօր հրաման արձակվեց ռազմական աստանում դատական գործ սկսել Ադանայի նախկին նահանգապետ Զեադ բեյի, Ադանայի զինվորական հրամանատար Մուստաֆա փաշայի և Ադանայի վիլայեթի Զերեյ-Բերեքեթի կառավարիչ Յուսուֆ բեյի (ճիշտը՝ Մեհմեդ Ասաֆ էսադ բեյ: - Հ. Ս.) նկատմամբ:

Նրանք մեղադրվում են անցած ապրիլին հայերի ջարդերի մեջ ներգրավված լինելու համար:

14 հուլիսի 1909 թ.

**ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ
ԶԱՐԴԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:
ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍՈՒՄԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

«Սանդեյ թայմսն» այսօր շարունակում է բացատրությունը Փոքր Ասիայում քրիստոնյաների ջարդերի Ջեյմս Քրիլմանի հետաքննության: Արդեն նկարագրվել են վերջին դաժանությունները Ադանայում՝ համաշխարհային պատմության մեջ փատթարագույններից մեկը: Պարոն Քրիլմանն առաջարկում է իմանալ այսպիսի սարսափների հիմնարար պատճառները և սահմանել պատասխանատվությունը: Նրա առաջին աշխատանքն արվել է 4. Պոլսում, որտեղ նա տեսնվել և զրուցել է Նոր Թուրքիայի մի քանի բարձրագույն պաշտոնյաների հետ: Հետևյալ հոդվածում պարոն Քրիլմանն ամբողջությամբ ներկայացնում է այն կարևոր հարցազրույցը, որը նա կատարել է մեծ վեզիր Հիլմի փաշայի հետ:

1 օգոստոսի 1909 թ.

**ՀԱՅԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ ԹՈՒՐԿԱԿԱՆ
ՆՈՐ ԻՇՈՒՆՈՒԹՅԱՆԸ**

Նրանք ասում են, որ երիտթուրքերն սպանում են այնքան շատ, որքան սպանվել է հին վատ ուսուցիչի ժամանակ

Նախկին սուլթանը սարսափելի էր

Երիտթուրքերը, այլ ոչ թե սուլթանի մարդիկ էին պատասխանատու Ադանայի ջարդերի համար – Բողոքի հավաք

Բողոքելով, որ երիտթուրքական կուսակցությունն Նոր Հաստատած իշխանությունը Թուրքիայի հայերին Փոքր Ասիայում ենթարկել է նույն ծանր հալածանքներին, ինչ սուլթանի օրոք, այս քաղաքի 700 հայեր անցած գիշեր հավաք կազմակերպեցին Լիրիկական Սրահում, 6-րդ պողոտա, 41-րդ փողոց: Ելույթ ունեցողներն այս քաղաքի, Բոստոնի և Պրովիդենսի Վերակազմյալ Հնչակյան (Ադատություն) կուսակցության (բնագրում՝ բնկերություն: - Հ. Ս.) անդամներ էին:

Բոլորը միակարծիք են, որ Փոքր Ասիայի հայերը թուրքական պառլամենտում պատշաճ ներկայացուցչություն չեն ստանում, որ նրանց ղեռ բանտարկում են և սպանում նոր կառավարության ներքո, և որ այդ բանտարկություններն ու սպանություններն իրականում կատարում է այն նույն դատարանը, որն անցած մայիսին ցուցադրարար նշանակվել էր՝ պատժելու անցած ապրիլին Ադանայի ջարդերի ժամանակ հայերին սպանողներին:

«Երիտթուրքերի վարչակարգը քաղաքակիրթ աշխարհին մեծապես խարում է, - ասում է ղեկավար Միհրան Սվադյիկ Բոստոնից: - Երիտթուրքերի կուսակցությունը շարաշահում է սահմանադրությունը: Նրանց իշխանությունն ներքո՝ սահմանադրությունը պարզապես խեղկատակություն է՝ ինչը հատկապես

վերաբերում է հայերի պաշտպանությունը: Հայկական ջարդերի ժամանակ իրենք իրենց և իրենց թույլ ազգակիցներին պաշտպանելու մեջ աչքառու մասնակցություն ունեցած բոլոր հայերը կա՛մ սպանվել են, կա՛մ բանտ նետվել:


Հուլիսից սկսած՝ երկու հարյուր հայ է բանտարկվել: Մի քանիսը կախաղան են հանվել իրենց իսկ ազգակիցների ապրիլյան ջարդերը հրահրելու անհեթեթ հիմքով: Լեոնարնակ հայերի առաջնորդները վերջերս ծանուցագիր են ստացել ներկայանալու Աղանայի ռազմական ատյան՝ պատասխան տալու ապստամբություն հրահրելու ամբաստանություն համար: Նրանք հրաժարվել են ներկայանալ, և հնարավոր է, որ կոիվը նոր թափով բորբոքվի շուտով: Երիտթուրքերը վախենում են, որ հայերը նոր սահմանադրությամբ չափազանց շատ ազատություն են ստանում: Հաճրնի հայ եպիսկոպոսը, ում երիտթուրքերը վերջերս ձերբակալել են, գրել է Աղանայի իր ընկերներից մի քանիսին՝ պատրաստ լինել պաշտպանելու իրենք իրենց: Կիլիկիայի Սահակ եպիսկոպոսապետն ընդամենը մի քանի օր առաջ բողոքի հեռագիր է հղել նոր սուլթանին:

Հայկ Բ. Հովսեփյանի կարծիքով՝ հայերը վերջերս պարզել են, որ գահընկեց արված սուլթանը որևէ առնչություն չի ունեցել Աղանայի ապրիլյան ջարդերի հետ. այդ ժամանակ հայերի դանդաղաձային սպանությունները նույնինքն երիտթուրքերի գործն էին:

20 սեպտեմբերի 1909 թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԿԻԼԻԿՅԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ




Պանծալի Այասը



Անանուր ամրոցը



Լանսկա (Յրլան-Կալա բերդը կամ «Օձի ամրոցը») Կիլիկյան Հարթավայրի կենտրոնում



Ալայայի բերդը



Լանսկայի աշտարակները



Վահկա (այժմ Ֆեքե) բերդը



Լամբրոնի բերդը




Անազարրա բերդը




Կոռիկոսի ծովային բերդը



**Այաս նավահանգիստը Մարկո Պոլոյի նկարագրած ծաղկուն
ժամանակաշրջանում**



Միջոց հսկեցեղի աշտարակներից մեկը



Միսի բերդը



Բողրուն-Կալա բերդը



Կիլիկյան զինանշան



Էջմիածնի ճեպարանի պատահաբանություն

Լևոն Դ Թագավորը և Թագավորական ընտանիքը
Աստծո առջև ծնկաչոք:


(Թորոս Ռոսլինի՝ 1272 թ. Ստում կրկնօրինակված ավետարանում
զետեղված մանրանկարը)



Քրիստոսի իջնուանը խաչից և Թաղուանը
 (Մանրանկարը վերագրվում է Թորոս Ռուսիսին)



Լևոն Դ Թագավորը՝ դատավոր
 (Մանրանկար)



Խաչելութիւն

(Մանրանկար Սմբատ Գունդատարի պատվիրած ձեռագրից)




Հովհաննես Կանցլերը Աստվածամոր և Մանկան առջև ծնկաչոր

(Ենթադրվում է, որ պատկանում է Սարգիս Պիծակի գրչին և զետեղված է 1230 թ. ընդօրինակված մի սաղմոսարանում)



Դժոխքի ավերումը

(Մանրանկարը ղետեղված է Ակների վանքում 1287 թ.
ընդօրինակված ավետարանում)



Հովհաննես Ավետարանիչ

(Մանրանկարը՝ Թորոս Ռոպինի)



Թորոս Ռոսլինի մանրանկարներից




Մագաղաթի արծաթե կազմ



**Կիլիկյան ճամփորդական ջրաման՝ պատրաստված
արծաթից և ծովային խեցուց
(Գտնված է Ազովի ծովի ափին)**



Թասի Հատակին արված պատկերներ



**Արծաթե թաս
(Գտնված Մերձուրալյան շրջանում)**



Սկևռայի մասնատուփը

(Ոսկերչության այս գլուխգործոցը ստեղծվել է 1293 թ. Կիլիկիայի Սկևռա վանքում և այժմ պահպանվում է Սանկտ Պետերբուրգի էրմիտաժում)



Աջ փեղկի ցածի վարդակի վրա պատկերված է Հայոց Հեթում Բ արքան:

Կիլիկիայի Հայոց արքաների դրամները



Լևոն Ա-ի (1198-1219) պղնձյա դրամները




Հեթում Ա-ի (1226-1269) պղնձյա դրամը



Լևոն Ա-ի արծաթյա դրամները



Հեթում Ա-ի արծաթյա դրամը



Լևոն Ա-ի դրամները լատիներեն գրություններով



Հեթում Ա-ի երկեզվյան (Հայերեն-արաբերեն) դրամները



Հեթում Ա -ի ոսկյա դրամը



Կոստանդին Ա-ի (1298-1299) ոսկյա դրամը



Լևոն Ա թագավորի կնիքը




Կիլիկյան դրամ



Կիլիկիայի հայկական բանակի հեծյալ զինվոր



Կիլիկիացի հայ



G. Mizrahi - Adana

Ադանա քաղաքի ընդհանուր տեսքը արհավիրքից առաջ



Ադանայի Հայ դպրոցներից մեկի աշակերտների խմբանկար կոտորածներից առաջ. կենտրոնում՝ կուսակալ Բահրի փաշա, նրա աջ կողմում՝ Սահակ Բ Սապայան կաթողիկոս



Աղանայի Հայ երիտասարդների խմբանկար (1903 թ.)



Հրդեհված տներ Հայկական թաղամասերից մեկում



Հայոց բուժարանը հրդեհից հետո



Ադանայի հրդեհված առաջին տներից մեկը Ամերիկյան
Հյուպատոսության հարևանությամբ



Աղանայի կոտորածի օրերին չարաղետ դեր կատարած «Իթիզակ» լրագիրը



Աղանայի առաջին ջարդից հետո 2-րդ զորաբանակի այնտեղ ուղարկված զորամասը




Աղանան բոքերի մեջ
(մի գերմանացու կողմից կատարված լուսանկար)



Ադանայի հայոց կենտրոնի թաղը այրվելուց առաջ



Նույն թաղամասը՝ ջարդից հետո



Ադանայի հայկական ավերակված թաղամասերից մեկը



Թուրադա Գալեսի (Շաարանիս) հայկական թաղը ջարդից հետո



Աղետից հետո



Աղանայի հայոց առաջնորդարանին կից փողոցը հրդեհից հետո




Աղանա, ափերակների առջև



Մի պատկեր Ադանայի հայոց հրկիզված թաղերից մեկում



Ադանա, ավերակների մեջ



հրկիզված հայկական տներ Ադանայում



Ադանայի հրկիզված հայկական թաղերից մեկը



Աղանայի Մուշեղյան-Արզարյան վարժարանը



Նույն վարժարանը հրդեհից հետո



Հայոց աղջկանց Աշխենյան վարժարանի՝ Աղանայի աղետի ժամանակ այրված շենքի կմախքը



Աղանա քաղաքի 4 կմ² ձգված ավերակներից մի պատկեր

Aut. Ch. Traugott
2/15. 600



Աղանայի Հայ կաթոլիկ Թեոզյան վարժարանը Չարդից առաջ



Նույն վարժարանը Չարդից
Հետո




Ֆրանսիացի Հիսուսյանների դիչերթիկ վարժարանի՝
Աղանայի աղետի ժամանակ այրված շենքը



Նույն Հաստատությունը՝ ավերված 1909 թ. ապրիլի 13 (26)-ին




Աղանայի ս. Ստեփանոս եկեղեցու չրջակայքը աղետից հետո



Աղանայի ս. Ստեփանոս հրկիզված եկեղեցին ներսից



Աղանայի հայկական թաղամասերից մեկի ավետարանական եկեղեցին




Նույն եկեղեցին՝ ավերված



Աղանայի հայոց ս. Աստվածածին եկեղեցու չրջակայքը՝ ավերված



Աղանա, քաղաքի հրդեհված տներից մեկը մետաղե ծամված հեծանները և քայքայված սյուները վկայում են կրակի ուժգնության մասին: Միայն Աղանա քաղաքում 1078 տներ և խանութներ արժանացել են նույն ճակատագրին:



Աղանայի ֆրանսիական հյուպատոսին պատկանած շենքի ավերակները



Կարապետ Լաչինյան

Աղանայի հայոց ինքնապաշտպանության ղեկավար՝ ծանոթ «Սաչը ֆեղայի» («Երկարամազ ֆիղայի») մականունով



Միսաք Թուրսարզիայան
Աղանայի ինքնապաշտպանության հերոսներից



Տիգրան Պզտիկյան
Աղանայի առաջին ջարդի ինքնապաշտպանության հերոսներից



Հովհաննես եպիսկոպոս Արշարունի
Կիլիկիայի աղետի ժամանակ Կ.
Պոլսի պատրիարքական տեղապահ



Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան
Կիլիկիայի աղետից հետո
Կ. Պոլսի հայոց պատրիարք



Սահակ Բ Ռապայան
Կիլիկիայի հայոց
կաթողիկոս



Մուշեղ եպիսկոպոս Սերոբյան
Ադանայի հայոց առաջնորդ



Ադանայի քրիստոնեական տարրեր հարանվանությունների հոգևոր
պետերը, որոնք բողոքի հանրագրեր էին ուղարկում Թուրքիայի
կառավարությանը՝ պահանջելով դադարեցնել հայերի կոտորածը



Դավիթ Ուրֆալյան
Աղանայի առաջին կոտորածի
առաջին զոհը



Հռոն Մանուկյան
Անասնավաճառ



Միքայել ծ. վրդ. Աջապահյան
Կիլիկիայի կաթողիկոսության
միաբաններից



Սահակ Տեր-Սահակյան
Իրավարան



Տիրան Առաքելյան
Նշանավոր մտավորական



Վեր. Հովակիմ Գալայան
Բանաստեղծ



Մարտիրոս Տումանյան
Ուսուցիչ



Վահան Գալայան
Հանրահայտ մտավորական



Պողոս Պզտիկյան
Աղանա քաղաքի
դատական ատյանի անդամ



Մարտիրոս Բոյաջյան
Ուսուցիչ



Պողոս Թագվորյան
Աղանայի նահանգի ավագ
երկրաչափ



Ստեփան Զահրեճյան
Վաճառական



Սիհուն գետի կամուրջը, որի վրայից հազարավոր հայերի
դիակներ չպրտում էին գետը




Աղանայի ջարդից 50 օր անց ջրհորից հանված հայերի դիակներ




Միս քաղաքի ընդհանուր տեսքը



Միսի կաթողիկոսական նստավայրը, վերևը՝ Միսի բերդի ավերակները



Միսիս (Մամեստիա)



Ջիհուն գետը և Միսիսի կամուրջը



Մերսին



Մերսինի նավահանգիստը



Դեռլթ-Յոլ գյուղաքաղաքի մի հատված



Մի տեսարան Համիդիե գյուղաքաղաքից



Ճակատհողային հանքի հանքավայրի հանրահայտը




Ներսես Տ. վրդ. Դանիելյան


Աղետի ժամանակ հանրահայտի
առաջնորդ



Գրուտ ծ. վարդապետ
Մխիթին ինքնապաշտպանութեան
ղեկավար



Ղևոնդ ծ. վրդ. Յուրարգիայան
Մխիթին ինքնապաշտպանութեան
կազմակերպիչներից



Զին Յորոս (Տաղտաղանյան)
Կարս-Բաղարի Հերոս



պրոֆ. Սարգիս Լևոնյան
Գերմանական Համալսարանա-
նավարտ, Այնթապի քոլեջի
ուսուցիչ, սպանված Օսմանիկուժ



Պատ. Ասատուր Թովաթյան
սպանված Սայ-Գեչիտ գյուղում



Պատ. Լևոն Սողովմեյան
Սայ-Գեչիտի
նահատակներից



Միքայել Այճյանը տիկնոջ հետ, պատվելի Մելիտոն Մայան,
պատվելի Կոստանդին Սիյահյան, պատվելի Արտաշես Բոյաջյան

Սայ-Գեչիտ գյուղի ջարդի ժամանակ նահատակվածներ



Սամվել, Հովհաննես և Արմենակ
Մթրայան եղբայրները, որոնք
սպանվեցին Օսմանիեում



Կիլիկյան կոտորածների նախօրեին սպանված Տարսոնի ամերիկ-
յան քոլեջի աշակերտ Առաքել Բերբերյանի դին՝ շրջապատված Համի-
դիների հայերով: Սրանք մի քանի օր հետո ամբողջովին կոտորվեցին
իրենց գյուղաքաղաքում:



Կիլիկիայի Հնագույն մայրաքաղաք Տարսոնը




Տարսոնի Հայոց եկեղեցին մոլեռանդ խուժանի կողմից պղծված



Տարսոնի քրիստոնեական Հատվածը



Տարսոնի Հայկական մի ուրիշ եկեղեցու ավերակները



Տարսոնի Հայկական ավերված դպրոցը



Զեյթունի ընդհանուր տեսքը




Մարաշի ս. Կարապետ եկեղեցու ավերակները



Զեյթունի թաղերից մեկը



Զեյթունի՝ ժայռակտերը կապող կամուրջը ճեղք ձեռք




Զեյթունի թուրքական գորանոցը



Զեյթունի թուրքական գորանոցն իր սպայակազմով



*Ջեյթունի
ինքնապաշտպանական
խմբերից մեկը*



*Հայ «Հանցագործները» կախաղանների վրա
Աղանայի երկաթուղային կայարանի հրապարակում*



Ղասսար Միսաք (Սարգիսյան)
Աղանայում անձնեղորեն կախաղան հանված



Աղանայում կախաղան հանված Պուլտուզյան երեք մսավաճառ
եղրայրներից Հարությունը և Կարապետը




Հակոբ Պապիկյան



Հարություն Մոսատչյան




**Հույն Թրիփանի եղբայրներից մեկը,
որոնց գործարանում Հազարավոր
Հայեր ապաստան գտան ու փրկվեցին**



Հայ աղետյալները Ամերիկայից ուղարկված Հագուստներով




Հացի բաշխում Ադանայի գերմանական գործարանում



Ադանայի ամերիկյան հիվանդանոցը, որն իր դռները լայն բացել էր վերափորների առջև: Ամերիկացի հիվանդապահները տքնաջան աշխատում էին աղետյալների վերբերելու համար:



Տիկին Ուխի՝ իր բացած հիվանդանոցում




*Աղանայի Ջարդերից հետո բրիտանական հյուպատոսի կինը՝
տիկին Ուխին անձամբ խնամում է վիրավորներին*



Վերադարձ այ կանայք Դաութի Ուիլիի Ջանքերով բացփած
հիվանդանոցի շտապ սարքփած փայտաշեն «օպերացիոն
սեղաններին»



Մարմնի վրա բազմաթիվ վերքերով և կիսամեռ վիճակով
հիվանդանոց տեղափոխված հայուհի



Հալածական Հայերի վրանները Ադանա քաղաքից դուրս



Շարլ Սարաֆիին



Սարաֆիին ընտանիք



Վեր. Դեյվիդ Ռոջերզ

Ազանապուստ գրահաված ամերիկացի
միախոններ



Վեր. Դեյվիդ Ռոջերզի այրին՝ Մերի Ռոջերզը և
դուստրը



Վիլյամ Ն. Ջեմբրան իր ընտանիքով



միսս Ռոզ Լամբերթ

ամերիկացի միախոններուհի



Ֆրեր Անթուան Դիուպոր



**Աղանայում զրհված ամերիկացի
միսիոներ վեր. Հենրի Մորեզը տիկնոջ
Հետ**



**Տեր և տիկին դոկտ. Թոմաս և Քարմելայթ Քրիստիններ, որոնց
Ջանքերի շնորհիվ կատարածներից փրկվել են Հազարավոր Հայեր
Տարսնում**





Հաղ Ռեուֆ բեյ

Մերսինի կառավարիչ, որը մեծ ջանքեր
գործադրեց տեղի հայութեանը ջարդի
փտանդեց պաշտպանելու համար



Քերբալայի գաղե Հաղ

Տարտուսի թեքքե թաղի թուրք
քնակիչներին, որը փրկել է
բազմաթիվ հայերի կյանքը



Ատեֆան Պիշոն

Կիլիկիայի աղետի ժամանակ
Փրանսիայի արտաքին
գործերի նախարար, որը
բազմիցս հանդես է եկել
կիլիկիահայերի կոտորածները
դատապարտող
հայտարարություններով



Գենի Կոչեն

Փրանսիայի Ազգային ժողովի անդամ,
որը քանիցս դատապարտել է հայերի
կոտորածը և կառավարությունից
պահանջել ազդու կերպով մեջամտել
արյունալի իրադարձություններին



Ֆրանսիական «Վիկտոր Հյուգո» ռազմանավի նավաստիների մի խումբ Մերսինում: Նրանց նավը հարյուրավոր հայերի տեղափոխեց ապահով վայրեր:



Գյավուր-Քեոյ գյուղաքաղաքի հայ որբերի մի խումբ



Հաճրնում այրիացած հայուհին իր յոթ զավակներով



*Աղանայի ս. Աստվածածին եկեղեցու բակում ապաստանած
ճնողազուրկներ ջարդերից հետո*



Աղանայի ջարդերից վերապրած բեկորներ



Հայ այրիներ ու որբեր Տարսնում




Անտերունչ որբեր



*Քեսապի ջարդի ժամանակ 8 օր շարունակ
բարայրում թաքնված Հայ կանայք*



Քեսապցի Հայ որբուկներ



Հաճընի արեւոյալ երկաւս որբերի մի ճասը



Հայ որբեր Աղանայում



Զույգ որբեր



Մի որբ



Գնդակից վիրավորված և աջ բազուկը կորցրած 4 տարեկան Նաթուն Վանուդյանը: Եղեռնագործները սպանել էին նրա տատին, հորը, նաև 18 ամսական եղբորը: Ընտանիքից փրկվել էր միայն մայրը:

Գիրքը պատրաստ էր տպագրություն, երբ բոլորովին վերջերս համացանցային կայքում հայտնաբերվեց սույն արարատառ թուրքերեն փաստաթուղթը, որը գտնվել է թուրքական արխիվում, օտար հետազոտողի կողմից: Ուստի 2-րդ հավելվածից հետո փաստաթղթի տեղադրելը պայմանավորված է վերը նշված հանգամանքով:

**ԱԴԱՆԱՑԻ ՔՐԻՍՏՈՆՑԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ՝
ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՀԱՄՄԵԴ Ե-ԻՆ ՀՂԱԾ
17 ՀՈՒՆԻՍԻ 1909 Թ. ԽՆԴՐԱՆՔ-ԲՈՂՈՔԱԳԻՐԸ**

Ձերդ վեհափառություն,

Ազանայի և շրջակայքի քրիստոնյաների արժանապատվությունը, անձը, դրամը և անշարժ գույքն ամբողջապես վնասվեցին՝ առանց որևէ պատճառի: Այս պայմաններում՝ նրանց կեցությունն ու կյանքի ապահովությունը պատերազմական ատյանի արդարադատության ու միջոցառումներին թողնվել էին: Սակայն մինչև հիմա իրականացված միջոցառումները մեր հույսը ջնջեցին և մեր հուսահատությունն առաջացրին, քանի որ բնաջնջում և ավերակում պատճառողները փնտրելու և, ի զգուշացում հանրության, նրանց պատժելու փոխարեն, սովորական մարդասպաններն են հետախուզվում: Դեպքին մասնակից մուսուլմաններից քիչ ձերբակալվածներ կան, դրանք էլ հրահանգներին ենթարկված մի խումբ տգետ գյուղացիներ են: Քրիստոնյաներից ձերբակալվել են մի խումբ մատնիչների սուտ վկայությունների զոհ դարձածներ կամ ինքնապաշտպանության դի-

մած անմեղ քաղաքացիներ, որոնք բերման են ենթարկվում և դատապարտվում: Պատերազմական ատյանը բացառապես բրիտանացիներին մեղավոր հայտարարելու քաղաքականությունն է հետապնդում: Այս վիճակում, մեր ցավն ո՞ւմ լացենք, մեր անճար համայնքին ինչպե՞ս ապահովեցնենք և ինչո՞վ դրադեցնենք: Ի սեր Աստուծո՜ գութ ցուցաբերեք:

4 հունիսի [1]325 [17 հունիսի 1909 թ.]

Ասորի կաթոլիկների պատրիարքական փոխանորդ՝ Փիլիպոս [Շագգալ] քահանա

Բողոքականների հոգևոր պետ՝ [վեր.] Համբարձում [Աշճյան]

Հայ կաթոլիկների առաջնորդ՝ Պողոս եպիսկոպոս [Թերզյան]

Հին ասորիների պատրիարքական փոխանորդ՝ Մանսուր քահանա

Հույն կաթոլիկների հոգևոր պետ՝ Իլիաս քահանա

Հայոց առաջնորդական փոխանորդ՝ Արսեն քահանա [Եմենիճյան]

Քաղղեացիների պատրիարքական փոխանորդ՝ Իստեֆան [Մաքսաբուհ] քահանա

[Հեռագրական բլանկ: Փաստաթուղթը վերցվել է Թուրքիայի վարչապետության աորնթեր պետական արխիվից: Օսմաններենից լատինատառ թուրքերենի վերածումն ու անգլերեն թարգմանությունը հավանաբար կատարել են հիշյալ արխիվի աշխատակիցները՝ սխալներ թույլ տալով: Այսպես, առաջին նախադասության մեջ շփոթվել են արաբերեն-օսմաներենի «աարտ» (արժանապատվություն) և «արտ» (հող) բառերը, բնագրի նախավերջին տողի առաջին բառը՝ արաբերեն-օսմաներենի «ջեր» (colb, բերման ենթարկել) բայը, «ջ» տառի կետի բացակայության պատճառով ընթերցվել է «ս» և բառը շփոթվել է «սուր» (sulb, խորք, էություն) բառի հետ, որն անգլերենում չի էլ թարգմանվել: Նույն տողի նախավերջին բառը՝ արաբերեն-օսմաներենի «թաակիր» (tâkir, հետապնդել) բայն ընթերցվել է «թաթրիկ» (tatbik, կիրառել): Վերջին տողի չոր-

բորդ բառը՝ օսմաներենի «աղլայալիմ» (ağlayalım, լացենք) բայն ընթերցվել է «անլաթալիմ» (anlatalım, հասկացնենք, պատմենք):

Անգլերեն թարգմանությունից ժամանակ թույլ են տրվել քրիստոնյա հոգևոր պետերի վրդովմունքի տարողությունը նվազեցնելու միտված վրիպակներ, նաև՝ թարգմանական սխալներ: Օրինակ՝ արաբերեն-օսմաներենի «ջեմաթ» (համայնք) բառը անգլերեն թարգմանվել է congregation (կրոնական միարանություն):

Լատինատառ թուրքերենի վերածման տակ, «Հարցը» վերնագրով բացատրություն է տրվել փաստաթղթի մասին: «Աղանայի չրջանի դեպքերի» առնչությամբ Պատերազմական ատյանի անարդար քայլերի հանդեպ «չրջանի ասորի, բողոքական, հայ, հույն և կաթոլիկ ներկայացուցիչներն» այսպիսի բողոքագիր-հեռագրերով «պահանջում են վիճակին արդար լուծում բերել»: Ակնարկություն իսկ չկա բյուրավոր քրիստոնյա (հայ) կոտորվածների մասին:

Լատինատառ թուրքերենն ու նրան կցված բացատրությունը կրում են Y.PRK.AZN 25 / 40 նշումը: Ենթադրում ենք, որ «AZN» թուրքերեն «ազինլիբլար» (փոքրամասնություններ) բառի հապավումն է:

Հեռագրական բլանկի վերևի աջ կողմում կա «Բարձրագույն պալատի փոստատու» նշումով կնիքը:

**ARMENIAN, ASSYRIAN AND HELLENIC
GENOCIDE NEWS ***

1909: Ottoman Archives Related to the Adana Massacres
by Dr. Racho Donef — Sydney, Australia. 2008.
Posted: Thursday, July 17, 2008 at 05:11 PM CT

Document

Source: Prime Ministerial Ottoman Archives, Y.PRK.AZN 25/40;

Transliteration cited at Iris Muzaffer, *Bütün Yönleriyle Süryani-
ler*, 2003, Ekol Yayimcilik, Istanbul

Imperial Palace Telegraph Office 1327

To the Imperial Threshold

In Adana and its bounds without any reason land, people and possessions were subjected to great damages. Now for them [the Christians] to reside in this area and be assured of their safety is up to the judgment of the Court Martial. But what transpired thus far has demolished our hopes and caused us despair. This is because rather than searching for those responsible for the massacres and damages and punish them so it may be a warning to others, common murderers are

* <http://www.atour.com/~aahgn/images/20080717a1.jpg>

being sought. Poor ignorant Muslim villagers who obeyed orders without knowing, and some Christians who were convicted due to malicious false testimonies or innocent citizens, who defended their lives, are being convicted. The Court Martial is pursuing the policy of absolutely finding the Christians at fault. In this predicament, who can we tell about our affliction? How can we provide assurances and comfort to our helpless congregation?

For the love of God, show mercy.

Syrian Catholic Patriarchate Representative: Head Priest Father Filipos

Protestant Clerical Leader: Hampersom

Armenian Catholic Bishop: Bishop Bagos

Syrian Orthodox Patriarchate Representative: Father Mansur

Greek Catholic [Melkite] Clerical Leader: Father Ilias

Armenian Bishopric Representative: Father Aras

Chaldean Patriarchate Representative: Father Stephan.

17 June 1909

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՑՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արխիվային փաստաթղթեր

1.1. Եղիշե Ջարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ)

Արչակ Չոպանյանի անձնական ֆոնդ, թղթապանակ 421, թերթեր 1-8:
Գրիգոր Չոհրապի ֆոնդ, № 2175/1, թերթ 2, № 2175/II, թերթեր 1, 2, 3:
Վահան Մայեղյանի ֆոնդ, ցուցակ 1, թղթապանակ 381, թերթ 8:

1.2. Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ)

Ֆոնդ 56, ցուցակ 15, գործ 576, թերթ 67:
Ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1202, թերթեր 3 և չրջերեսը, 5-9, 14, 17, 18 և չրջերեսը, 28:
Ֆոնդ 57, ցուցակ 3, գործ 19, թերթեր 6, 9:
Ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 14, թերթեր 1 և չրջերեսը, 2, 3 և չրջերեսը, 7-11, 18:
Ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 16, թերթ 4:
Ֆոնդ 413, ցուցակ 1, գործ 869, թերթեր 11-15:
Ֆոնդ 424, ցուցակ 2, գործ 8, թերթ 21:

1.3. Մեսրոպ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ – Մատենադարան

Արչակ Ալպոյաճյանի արխիվ, թղթապանակ 4, վավերագրեր 736, 739:
Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2378, վավերագիր 323, թերթ 6:
Մատենոս Իզմիրլյանի արխիվ, մատյան 34, թղթապանակ 14, վավերագրեր 206, 475, 476, 507, 521:

2. Մենագրություններ, գրքեր, նյութերի ժողովածուներ և տարեգրքեր

2.1. Հայերեն

Ազաթանգեղայ պատմություն, Թիֆլիս, 1883:
Ալլահվերտեան Յակոբ Յ., Ուլնիա կամ Ջէյթուն, լեոնային աւան ի Կիլիկիա: Նկարագիր տեղական, կենսաբանական, բանասիրական և

լեզուարանական, Կ. Պոլիս, 1884:
Ալպոյաճեան Արչակ, Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Բեյրութ, 1961:
Աճառեան Հրաչեայ, Տաճկահայոց Հարցի պատմութիւնը (սկզբից մինչև 1915 թ.), Նոր Նախիջևան, 1915:
Աշեան Համբարձում Յ. վերապատուելի, Ատանայի եղեոնը և Գոնիայէ յուշեր, Նյու Յորք, 1950:
Առաքելեան Համբարձում, Ջէյթուն: Տեղագրական, ազգագրական և վարչական տեսութիւն, Թիֆլիս, 1896:
«Ատանայի եղեոնը. տեղեկագիր Յակոբ Պապիկեանի», Կ. Պոլիս, 1919:
Գալուստեան Գրիգոր Հ. (Կիլիկեցի), Մարաշ կամ Գերմանիկ և Հերոս Ջէյթուն, Նյու Յորք, 1934:
Գուտուեան Գրիգոր, Հայ լեռը: Կարմիր դրուագներ Կիլիկիոյ աղէտէն, Կ. Պոլիս, 1912:
Դանիէլեան Ներսէս եպիսկոպոս, Կաթիլ մը ջուր այրած սրտերու, Կ. Պոլիս, 1912:
Եղիայեան Բիւզանդ, Ատանայի Հայոց պատմութիւն, Անթիլիաս, 1970:
Եսայեան Ջապէլ, Աւերակներուն մէջ, Կ. Պոլիս, 1910:
Երամեան Համբարձում, Յուշարձան Վան-Վասպուրականի, Հտ. Բ. Ալեքսանդրիա, 1929:
«Ջգուչացե՛ք կեղծ բարեկամներից», Երևան, 2002:
Ջէյթունցի (Սեմերճեան Մնացական), Ջէյթունի անցեալէն և ներկայէն. Վիեննա, 1900:
Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը. Դ. տարի. Կ. Պոլիս, 1910:
Թէոդիկ Արչակուհի, Ամիս մը ի Կիլիկիա. Կ. Պոլիս, 1910:
Թէրզեան Յակոբ Յ., Կիլիկիոյ աղէտը, Կ. Պոլիս, 1912:
Ժէնէրալ Անդրանիկ, Հայկական առանձին Հարուածող զօրամասը, Բոստոն, 1921:
Լէօ, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Հտ. Բ. Փարիզ, 1935:
Նրլուպեան Տիգրան Ճ. վերապատուելի, Ոսկեմատեան Հայ աւետարանական միութեան, Հտ. Ա, Բեյրութ, 1950:
«Կիլիկիա. փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ», Պետերբուրգ, 1894:
«Կիլիկեան կսկիծներ – Վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն», Բեյրութ, 1927:
«Հայ ժողովրդի պատմություն», Հտ. III, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Հրատ., Երևան, 1976:
«Հայկական Կիլիկիա», Նյու Յորք, 1919:
Ճիզմէճեան Մանուկ Գ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կու-

սակցութեանց, 1890-1925. Ֆրեդնո, 1930:

Մելան զատէ Ռիֆաթ, Թուրքական յեղափոխութեան մութ ծայրերը, Բեյրութ, 1975:

Միքայելյան Գրիգոր, Կիլիկիայի Հայկական պետութեան պատմություն, Երևան, 2007:

«Նոր Հաճրն պատմագիրք. 1921-1973», Բունես-Այրես, 1974:

Չոլաքեան Յակոբ, Անտիոքի մերձակայ Ռուճի Հովիտի Հայերը (պատմա-ազգագրական ուսումնասիրություն), Անթիլիաս, 2006:

Չոլաքեան Յակոբ, Քեսապ, Հտ. Ա, Հայեպ, 1995:

Չոլաքեան Յակոբ, Քեսապ, Հտ. Գ, Հայեպ, 2004:

Պարթևեան Սուրէն, Կիլիկիան արհաւիրքը, Կ. Պոլիս, 1909:

Ջեմալ փաշա, Հայկական Հարցը, Երևան, 1927:

Սապահ-Գիւլեան Ստեփան, Պատասխանատուները, Բ տպագրություն, Բեյրութ, 1974:

Սերոբեան Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի Գարդը եւ պատասխանատուները, Բոստոն, 1910:

Միսեոեան Միսաք (Մ. Ուլնեցի), Պատմություն Ալեյթունի (1409-1921), Լիբանան, 1996:

Վարժապետեան Մամիկոն, Յուշիկը Ալեյթունի, Մարզուան, 1912:

Փաւստոս Բիւզանդացոյ պատմություն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Փափազեան Վահան (Կոմս), Իմ յուշերը, Հտ. Բ, Բեյրութ, 1952:

2.2. Ռուսերեն

“Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов”, Ереван, 1966.

Гиббонс Г. А., Последние избиение в Армении, Петроград, 1916.

С. З., Аданские черные дни, Баку, 1909.

Саркисян Е. К., Экономическая политика Османской империи в Закавказья накануне и в годы Первой мировой войны, Ереван, 1962.

2.3. Անգլերեն

Karpat Kemal H., Ottoman Population: 1830-1914. Demographic and Social Characteristics, London, 1985.

2.4. Ֆրանսերեն

Pastermajian Hrant, Histoire de l'Arménie depuis les origines jusqu'au Traité de Lausanne, Paris, 1964.

2.5. Թուրքերեն

Arıçoğlu Damar, Hatıralarım – Milli Mücadele Çukurova'da, Fransız İsgali ve Nanti Savaşlar, İstanbul, 1961.

3. Պարբերական մամուլ

3.1. Հայերեն

«Ազգ» (Երևան), 24 ապրիլի 2008 թ.:

«Ազդակ» բացառիկ (Բեյրութ), 1 Հունվարի 2009 թ.:

«Ազդակ» (Կ. Պոլիս), № 17, 11 (24) ապրիլի, № 19, 8 (25) մայիսի, № 23, 25 Հունիսի (8 Հուլիսի) 1909 թ.:

«Ախուրեան» (Ալեքսանդրապոլ), № 28, 17 ապրիլի, № 33, 7 մայիսի, № 34, 10 մայիսի, № 47, 1 Հուլիսի 1909 թ.:

«Անահիտ» (Փարիզ), № 1-2, ապրիլ-մայիս, № 5-6, օգոստոս-սեպտեմբեր, 1909, № 11-12, մարտ-ապրիլ, 1909-1910:

«Արազած» (Նյու Յորք), № 17, 17 օգոստոսի 1911 թ.:

«Արարատ» (ս. Էջմիածին), № 4, ապրիլ, № 5-6, մայիս-Հունիս, № 7-8, Հուլիս-օգոստոս, 1909:

«Արեւ» (Կահիրե), 13 մարտի 1936 թ.:

«Արեւելեան մամուլ» (Իզմիր), № 17, 21 ապրիլի, № 20, 12 մայիսի, № 21, 19 մայիսի, № 22, 26 մայիսի, № 25, 16 Հունիսի, № 29, 14 Հուլիսի 1909 թ.:

«Արեւելք» (Կ. Պոլիս), № 7075, 17 ապրիլի, № 7076, 18 ապրիլի, № 7077, 20 ապրիլի, № 7080, 23 ապրիլի, № 7085, 29 ապրիլի, № 7090, 5 մայիսի, № 7092, 8 մայիսի, № 7097, 14 մայիսի, № 7112, 1 Հունիսի, № 7132, 24 Հունիսի, № 7133, 25 Հունիսի 1909 թ.:

«Բանբեր Հայաստանի արխիվների» (Երևան), № 3 (55), 1979, № 2 (102), 2003:

«Բիւզանդիոն» (Կ. Պոլիս), № 3719, 17 (30) դեկտեմբերի 1908 թ., № 3806, 6 (19) ապրիլի, № 3809, 9 (22) ապրիլի, № 3815, 17 (30) ապրիլի, № 3818, 21 ապրիլի (4 մայիսի), № 3819, 22 ապրիլի (5 մայիսի), № 3820, 23 ապրիլի (6 մայիսի), № 3821, 24 ապրիլի (7 մայիսի), № 3822, 25 ապրիլի (8 մայիսի), № 3823, 27 ապրիլի (10 մայիսի), № 3824, 28 ապրիլի (11 մայիսի), № 3825, 29 ապրիլի (12 մայիսի), № 3827, 1 (14) մայիսի, № 3828, 2 (15) մայիսի, № 3829, 4 (17) մայիսի, № 3831, 6 (19) մայիսի, № 3832, 8 (21) մայիսի, № 3833, 9 (22) մայիսի, № 3834, 11 (24) մայիսի, № 3836, 13 (26) մայիսի, № 3839, 16 (29) մայիսի, № 3841, 19 մայիսի (1 Հունիսի), № 3843, 21 մայիսի (3

Հունիսի), № 3847, 26 մայիսի (8 Հունիսի), № 3848, 27 մայիսի (9 Հունիսի), № 3849, 9 (22) Հունիսի, № 3850, 10 (23) Հունիսի, № 3851, 11 (24) Հունիսի, № 3855, 16 (29) Հունիսի, № 3856, 17 (30) Հունիսի, № 3861, 23 Հունիսի (6 Հուլիսի), № 3862, 24 Հունիսի (7 Հուլիսի), № 3863, 25 Հունիսի (8 Հուլիսի), № 3866, 29 Հունիսի (12 Հուլիսի) 1909 թ.:

- «Գարուն» (Կ. Պոլիս), № 17, 19 մարտի (2 ապրիլի) 1909 թ.:
- «Գործ» (Թիֆլիս), № 81, 21 ապրիլի 1909 թ.:
- «Դաշինք» (Իզմիր), № 228, 5 (18) մայիսի 1910 թ.:
- «Դրօշակ» (Ժնև), № 6 (97), Հունիս, 1899, № 5, մայիս, № 6, Հունիս, № 9, սեպտեմբեր, 1909:
- «Լուսնայ» (Թիֆլիս), № 5-6, մայիս-Հունիս, № 7-8, Հուլիս-օգոստոս, 1909:
- «Կոհակ» (Կ. Պոլիս), № 1, 30 մայիսի, № 6, 4 Հուլիսի, № 15, 5 սեպտեմբերի 1909 թ.:
- «Կոչնակ» (Թիֆլիս), 23 Հոկտեմբերի 1909 թ.:
- «Հայկազնան Հայագիտական Հանդէս» (Բեյրութ), Հտ. Իէ, 2007:
- «Հայրենիք» (Բոստոն), № 34 (539), 17 օգոստոսի 1909 թ.:
- «Հնչակ» (Լոնդոն), № 4-5, ապրիլ-մայիս, 1909:
- «Հովիտ» (Թիֆլիս), № 36, 16 սեպտեմբերի 1912 թ.:
- «Հորիզոն» (Թիֆլիս), № 15, 22 Հունվարի, № 22, 30 Հունվարի, № 45, 27 փետրվարի, № 52, 9 մարտի, № 54, 11 մարտի, № 55, 12 մարտի, № 64, 23 մարտի, № 66, 25 մարտի, № 72, 1 ապրիլի, № 73, 2 ապրիլի 1910 թ.:
- «Մշակ» (Թիֆլիս), № 228, 16 Հոկտեմբերի 1908 թ., № 93, 5 մայիսի, № 94, 6 մայիսի, № 112, 28 մայիսի 1909 թ.:
- «Շիրակ» (Կ. Պոլիս), № 11, 18 ապրիլի, № 12-13, 2 մայիսի, № 14-15, 16 մայիսի, № 16, 25 մայիսի, № 20, 20 Հունիսի, № 25-26, 15 օգոստոսի 1909 թ.:
- «Պատմա-բանասիրական Հանդես» (Երևան), № 4, 1988:
- «Սուրահանդակ» (Թիֆլիս), № 40, 9 դեկտեմբերի 1909 թ.:
- «Տարազ» (Թիֆլիս), № 5-6, մայիս-Հունիս, 1909:

3.2. Անգլերեն

«Նյու Յորք Թայմս» (Նյու Յորք), 19 ապրիլի, 23 ապրիլի, 24 ապրիլի, 25 ապրիլի, 28 ապրիլի, 29 ապրիլի, 1 մայիսի, 2 մայիսի, 5 մայիսի, 10 մայիսի, 5 Հունիսի, 14 Հուլիսի, 20 սեպտեմբերի 1909 թ.:

3.3. Թուրքերեն

«Իթիզակ» (Ադանա), 7 ապրիլի 1909 թ.:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

- Աբրուզ (քրիստոնյա արար, Ադանա) – 312
- Աբդուլ Խալո (Խայրլը պոլ) – 103
- Աբդուլ Ազիմ (Թուրք ոստիկան) – 92
- Աբդուլ Համիդ Բ (Ապտիլ Համիտ, Կարմիր սուլթան, Համիտ) – 3, 30, 32, 34, 44, 75, 84, 129, 161, 178, 183, 196, 216, 217, 219, 221, 223, 224, 231, 241, 246, 248, 266, 272, 297, 301, 308, 310, 311, 319, 335, 342, 377, 380-382, 419
- Աբդուլ Քերիմ (գնչունների մարդասպան ցեղապետ, Ադանա) – 87
- Աբեյյան Սողոմոն (քեսապցի բժիշկ) – 317
- Աբեյյան Ֆերիդ – 174
- Աբիդին դադե Շեֆիկ (Թուրք մարդասեր, Տարսոն) – 315
- Ազաթանգեղոս – 333
- Աղամովներ (Հայազգի բարեգործ) – 333
- Աղիլ բեյ (ներքին գործերի նախարարության խորհրդական) – 57, 221, 242-246
- Աղոսիդես Ա. (ազգությամբ Հույն Փրանսիացի լրագրող) – 81, 231
- Աղրիանոս (Հոռմենական կայսր) – 66
- Աղնավուր Պետրոս (Բրեզոլ ժորժ) – 231
- Ալի (որդի Խալիլ աղայի, Ադանա) – 314
- Ալպոյաճյան Արշակ – 48, 66, 105, 106, 215
- Ալի Ղալիբ բեյ (նախարար) – 378
- Ալի Ջենան բեյ (օսմանյան խորհրդարանի անդամ) – 242
- Ալի Ռեֆիկ (բժիշկ, Տարսոն) – 107
- Ալիշան Ղևոնդ Հայր – 9
- Ալլահվերտեան Յակոբ Յ. – 9, 106, 111, 159
- Ահարոն (գող-օլուքցի նահատակ նորափեսա) – 92
- Ահարոնյան Հովհաննես Լֆենդի – 165
- Ահմեդ բեյ (Ադանայի ոստիկանապետ) – 55
- Ահմեդ Լֆենդի (Օսմանիկի մուլլա) – 315
- Ահմեդ Նիսադի բեյ (իթթիհադական գինվորական պարագլուխ) – 192
- Ահմեդ Շյուքրի Լֆենդի (օսմանյան խորհրդարանի անդամ) – 239
- Ահմեդ Ջեմալ բեյ (ապա՝ փաշա, 1915-ի Հայոց դահճապետներից) – 285, 304, 322, 421
- Ահմեդ Ռիդա (օսմանյան խորհրդարանի նախագահ) – 221, 240, 250, 256, 305, 307, 309, 338, 420
- Աղազարյան Կարապետ – 120
- Աղազարյան Հաջի – 120
- Աղազարյան Մկրտիչ – 120
- Աղազարյան Սարգիս – 120
- Աղազարյան Սիմոն – 120
- Աղայան Մատուր – 11
- Ա. Ճ. (Թուրքական թերթի Հրապարակագիր) – 237

Աճառեան Հրաչեայ – 25, 54, 56, 125, 144
Աճեմյան Գարեգին – 282, 283
Աճեմյան Տիգրան – 195
Այճյան Միրայել – 452
Անդրեասյան Աստվածատուր աղա – 165
Անդրանիկ (տե՛ս Օզանյան Անդրանիկ)
Աշճյան Համբարձում Յ. վերապատվելի – 8, 20, 30, 44, 45, 48, 49, 51, 61, 63, 64, 66, 69, 76, 77, 84, 190, 193, 202-204, 218, 222, 224, 236, 257, 258, 278, 279, 294, 295, 306, 312, 322, 323, 490
Ապպասրն օղլու Ալի Քէճեայ (Հայուհու հափշտակիչ, Գայփար գյուղ) – 135
Ապտիյ Համիտ (տե՛ս Արդուլ Համիդ)
Աջապահյան Միրայել վարդապետ (նահատակված Միսիսում) – 98, 440
Առաքելյան Համբարձում – 9, 12, 19, 20, 23, 24, 26, 30
Առաքելյան Տիրան Էֆենդի – 66, 441
Ասրմ բեյ (օսմանյան խորհրդարանի անդամ) – 308
Ասլան բեյ (չերքեզ) – 150
Ավրամ քահանա (Հույն ուղղափառ, Աղանա) – 278
Ատիլ պէյ (տե՛ս Աղի բեյ)
Արար Մեհմեդ (թուրք արյունախում մարդասպան, Օսմանիկ) – 115
Արզումանյան Մակիչ – 11
Արիժօղլու Դամար – 74
Արիստիդի փաշա (նախարար) – 193
Արիֆ (Հայեր փրկած հանցագործ, Օրդու) – 317
Արիֆ զադե Էսադ (մարդասպան, Աղանա) – 86

Արիֆ Իսմեթ բեյ (օսմանյան խորհրդարանի անդամ) – 240-242, 249
Արծրունի Գրիգոր («Մշակի» խմբագիր) – 334
Արմաս (ֆրանսիացի, «Նիժեր» շոգենավի կոմիսար) – 171
Արշակունի Վաղարշակ ծայրագույն վարդապետ – 164, 165
Արշակունիներ (արքայական տոհմ) – 19
Արշարունի Հովհաննես Լպիսկոպոս – 252, 254, 323, 324, 438
Բարսեղյան Առաքել – 40
Բարան զադե Մուստաֆա Զիհնի փաշա – 193, 196, 201, 202, 207, 244, 304, 322, 421
Բազիլ (Բարսեղ) (Հայ կրոնավոր, Մյունխեն) – 230
Բալաքյան Գրիգորիս վարդապետ – 195, 252
Բակուրան (տե՛ս Քյուրքչյան Վահան)
Բահրի փաշա (Աղանայի կուսակալ) – 285, 417
Բահրի Հակոբ – 252
Բայ-Բահրի Սեյիմ շեյխ – 232
Բաղդադի զադե Արդուլ Կադեր Էֆենդի – 51, 52, 258, 297, 305
Բաղդադօղլու Կարապետ (Արզօղլուի գյուղապետ) – 94, 95
Բամբուկչի Մուտիլի (մարդասպան, Աղանա) – 86
Բայազիդ զադե Գադրի փաշա – 156
Բայթար զադե Հասան (թուրք մարդասեր, Դեռթթ-Յուլի շրջան) – 132, 133
Բայթարո Ալի Էֆենդի (թուրք մարդասեր, Տեյի-Քեոյ) – 128, 316
Բայրաքդար զադե Բեքիր (մարդա-

սպան, Աղանա) – 86
Բասիլոսյան Պապա աղա – 165
Բասմաջյան Ֆերիդ – 174
Բաստրմաջյան Հրանտ – 216
Բարբի (Եվրոպացի ճանապարհորդ) – 20
Բեհաա բեյ (կառավարական քննչական Հանձնաժողովի անդամ) – 249
Բենեթ (անգլիացի միսիոներ) – 133
Բերբեր Գարբել (Միսիս) – 98
Բերբերյան Առաքել (նահատակ) – 40, 453
Բերեքեթ զադե Ռեշիդ (թուրք մարդասպան) – 169
Բերեքեթ զադե Ռիֆաթ (թուրք մարդասպան) – 169, 263
Բեքիր չավուշ (Բեյլան) – 177
Բիլեգիկչյան Արմենակ – 164
Բիլեգիկչյան Նազարեթ – 164
Բյուրատ (Տեր-Ղաղարյան) Սմբատ – 354
Բյուրեան Նուրի (սաղրիչ հրապարակագիր, Աղանա) – 71, 72
Բոյաջյան բնտանիք (Աղանա) – 54
Բոյաջյան Արտաշես պատվելի – 452
Բոյաջյան Համբարձում (Մեծն Մուրադ) – 241, 242
Բոյաջյան Մարտիրոս (նահատակ, Աղանա) – 442
Բոսնայր Մեհմեդ (մարդասպան, Աղանա) – 86
Բոսնայր Սալիհ (մարդասպան, Աղանա) – 86, 258, 298
Բուխրոս Շաքեր (լիբանանցի արարքրիստոնյա, Աղանա) – 39, 370
Բուստանի Սուլեյման բեյ (օսմանյան խորհրդարանի անդամ) – 299
Բուրհանէզզին (որդի Արդուլ Համիդ Բ-ի) – 179
Բրաուն Ֆերնան – 233

Բրեղոյ Ժորժ (տե՛ս Աղնավուր Պետրոս)
Բրուններ Ք. Հ. (ամերիկացի միսիոներ, Հաճրն) – 368
Գաղարին (իշխան, Ռուսաստանի զլխավոր Հյուպատոս Բեյրութում) – 203
Գաղեմ զադե Հաջի Օսման Էֆենդի – 315
Գալեմբեարյան Գնել ծայրագույն վարդապետ – 252
Գալուստեան Գրիգոր Հ. (Կիլիկեցի) – 9, 12, 158, 163, 168
Գայայան Հովակիմ – 441
Գայայան Վահան – 441
Գայծո Սարատինո զեյ (ֆրանչիսկյան վարդապետ) – 312
Գասպարյան Շահն վարդապետ – 339, 341
Գասպարյան Ռուբեն (պատմաբան) – 11
Գարագաչյան Միհրան – 195
Գարայան Ստեփան Էֆենդի – 193, 252, 253
Գրասաճրգ Իսօ (Արմալը Հյույուր գյուղ) – 135
Գիրբոնա Հերբերտ Աղամս – 219, 231, 311
Գյուլբենկյան Ավետիս – 210
Գյուլբենդ զադե Մուխթար (թուրք մարդասեր, Տարսոն) – 108, 315
Գյուտ ծայրագույն վարդապետ (Կիլիկիայի կաթողիկոսության միաբան, Միս) – 450
Գոլանջյան Էդուարդ – 353
Գոլիցին Գրիգորի (իշխան) – 334-336
Գուլակյան Թորգոմ ծայրագույն վարդապետ – 339
Գուտուլյան Գրիգոր – 6, 7, 12, 41,

136-142, 165
 Գրիգոր (Հաճրնցի երիտասարդ Շեյխ-Մուրադում) – 102
 Գրիգորիս (մատենագիր, Կիլիկիա) – 16
 Գևորգյան Արա (երևանարնակ երաժիշտ) – 355
 Դարբազ դադե Հաջի Ալի (մարդասպան, Աղանա) – 86
 Դարբազ դադե Ռեուֆ (մարդասպան, Աղանա) – 86
 Դանիել վարդապետ (Կտուց անպատի նահատակված միարան) – 169
 Դանիելյան Ներսես ծայրագույն վարդապետ, ապա՝ եպիսկոպոս – 6, 80, 147, 320-323, 449
 Դավիթ Էֆենդի (ազարակատեր, Իսլաշիբի գավառակ) – 143
 Դավուդ (ղոկտոր, պոլսեցի արսորական Միսիսում) – 99
 Դերեջյան Նազարեթ – 337
 Դեկեր Դանիել – 355
 Դեսիս (եվրոպացի ճանապարհորդ) – 20
 Դիանթ Հայր (լազարիստ վարդապետ) – 312
 Դիմաքսյան Հմայակ արքեպիսկոպոս – 195, 252
 Դիոսկոր Անթուան Հայր (ֆրանսիացի մարիստ վարդապետ) – 83, 312, 476
 Դուրյան Եղիշե արքեպիսկոպոս – 7, 199, 284, 325, 332, 438
 Դեկս (եվրոպացի ճանապարհորդ) – 20
 Եղիայան Բյուզանդ – 8, 20, 59, 66,
 114, 204, 279, 284, 285
 Եմենիջյան Արսեն քահանա – 277, 490
 Եուսուֆ Քեմալ պէյ (տե'ս Յուսուֆ Քեմալ բեյ)
 Եսայեան Զապէյ – 6, 94, 95, 100, 102, 113, 114, 118, 119, 123, 126, 127, 130, 131, 149, 151, 153, 154, 188-191, 200, 201, 209, 281, 337, 340, 341
 Եսաջանյան Լեոն – 353
 Երամեան Համբարձում – 291
 Եփրեմ աղա (Միսիս) – 99
 Զահրեճյան Ստեփան – 442
 Զաւարեան Սիմէօն (տե'ս Զավարյան Սիմոն)
 Զավարյան Սիմոն – 205, 335
 Զէյթունցի (տե'ս Սեմերճեան Մնացական)
 Զիա բեյ (յուզբաշի, ռազմական առյանի անդամ) – 258
 Զիա բեյ (միսլայ, ռազմական առյանի անդամ) – 258
 Զիաէղդին Էֆենդի (չեյխ-ուլ-իսլամ) (տե'ս Մուհամմեդ Զիաէղդին Էֆենդի)
 Զինովե Իվան Ալեքսեևիչ (Ռուսաստանի ղեսպան Կ. Պոլսում) – 109, 110
 Զոհրապ Գրիգոր – 117, 133, 195, 229, 245, 246, 249, 293, 299, 306, 316, 323
 Էդհեմ փաշա (Զէյթունի վրա արշաված զորահրամանատար) – 162
 Էմրուլլահ Էֆենդի (օսմանյան խորհրդարանի անդամ) – 249
 Էնվեր բեյ (Իթիհազական զինվորական պարագլուխ, 1915-ի Հայոց

դահապետերից) – 192
 Էոմեր Նարիճ բեյ (ռազմական ատյանի անդամ) – 258
 Էոմեր Ֆեղի Էֆենդի (օսմանյան խորհրդարանի անդամ) – 250
 Էպեյան Լեոն – 354
 Էսազ աղա (Թուրք մարդասեր, Տարսոն) – 315
 Էսազ Ռեուֆ բեյ (Մերսինի մութասերիֆ) – 257, 478
 Էքչիյան Թրֆանդա (առևանգված Հայուհի, Գրրբգ-խան) – 341
 Թագվորյան Պողոս – 442
 Թաշճյան Հակոբ Էֆենդի – 165
 Թաքելի գաղե Օսման բեյ (Աղանա) – 60, 61
 Թաֆտ Վիլյամ Հովարդ (ԱՄՆ-ի նախագահ) – 311
 Թեյլալյան Կարապետ քահանա – 117
 Թեոդիկ (տե'ս Թէոդիկ)
 Թեոդիկ (Թէոդիկ, Լափջինջյան) Արշակուհի – 6, 69, 70, 98, 108, 118, 121, 122, 127, 129, 132, 133, 150, 178, 200, 201
 Թերգյան Հակոբ – 6, 7, 9, 38, 43, 51, 57-62, 65, 67, 70, 79, 90-93, 95, 97-100, 103, 104, 106, 109, 114, 115, 122, 124, 147, 155, 157, 166, 168, 169, 175-177, 186, 189, 195, 196, 204, 226, 227, 241, 242, 244, 250, 261, 262, 282, 283, 286, 287, 296, 308, 311-313, 317, 318, 322-324
 Թերգյան Հովհաննես (Միսիս) – 98
 Թերգյան Պողոս եպիսկոպոս – 277, 490
 Թերելի Արդուլլահ (մարդասպան, Աղանա) – 86
 Թերեյան Վահան – 32, 213

Թէոդիկ (Թեոդիկ, Լափջինջյան Թեոդոս) – 81, 201, 321
 Թէրդեան Յակոբ (տե'ս Թերգյան Հակոբ)
 Թիմուրլէնկ (Լենկթիմուր) – 68, 226, 343
 Թլկատինցի (Հարությունյան Հովհաննես) – 294
 Թոխլուջ օղլու Մեհմեմեդ (Թուրք ջարդարար) – 341
 Թորոս Ռոսլին – 16, 401, 402, 407, 408
 Թումանյան (ղոկտոր, Տարսոնի Հնչակյանների ղեկավար) – 274
 Թուրսարգիսյան Ղևոնդ ծայրագույն վարդապետ – 145, 450
 Թուրսարգիսյան Միսաք – 437
 Թոփալյան Ասատուր պատվելի – 452
 Թրիփանի եղբայրներ (Հոյն, Աղանա) – 59, 182-185, 189, 465
 Թրոուրիլ Ստեփան Ռ. վերապատվելի – 372, 376
 Թևֆիկ փաշա (մեծ վեդի) – 378
 Ժամհարյաններ (բարեգործներ, Ռուսաստան) – 333
 Ժեոֆրուա Էդգար – 174
 Ժյուվ Հայր (Հիսուսյանների պետ) – 312
 Ժորես Ժան – 227
 Իբրահիմ Ռասրխ (մարդասպան, Աղանա) – 86
 Իդմիրլյան Մատթեոս Բ կաթողիկոս Ամենայն Հայոց – 54, 56, 210, 224, 256, 284, 325, 332
 Իլիաս քահանա (Հոյն կաթողիկ, Աղանա) – 278, 490
 Իհսան Ֆիքրի (սաղրիչ խմբագիր-հրատարակագիր, Աղանա) – 72,

220, 258, 262, 263, 269, 279, 298, 304, 305
Ինքն Արար (խուժանապետ, Դերթ-Յոյ) – 129
Իսկանդարյան էֆենդի (ագարակատեր) – 128
Իսմայիլ (Բախչի հայակեր մոֆթի) – 134, 137, 139, 283
Իսմայիլ փաշա (օսմանյան խորհրդարանի անդամ) – 249
Իսմայիլ Հազր րեյ (օսմանյան խորհրդարանի անդամ) – 304, 305, 308
Իսմայիլ Սեֆա (սադրիչ հրապարակագիր, Աղանա) – 71, 258, 262
Իսմայիլ Ֆադր փաշա (ոսմանական ատյանի անդամ) – 258, 259
Իսֆենդիար (թուրք մարդասպան, Աղանա) – 42, 43
Լաթիֆ աղա (թուրքմեն մարդասեր, Օրդու) – 317
Լամբերթ Ռոզ (միսիոներուհի) – 149, 312, 361, 365
Լանգրուս Վիկտոր (Եվրոպացի ճանապարհորդ) – 20
Լաչինյան Կարապետ («Սաչր ֆեդայի») – 436
Լապառտեն էթիեն Հայր (ֆրանսիացի վարդապետ) – 312
Լաֆոն (ֆրանսիացի, «Նիթեր» շոգենավի նավապետ) – 171, 209
Լենկթիմուր (տե՛ս Թիմուրլենկ)
Լեո (տե՛ս Լէօ)
Լէօ (Լեո, Առաքել Բարախանյան) – 33, 226
Լինչ Հենրի – 227
Լյուքս (գերմանացի գործարանատեր, Աղանա) – 313

Լոուիթր Զերալդ – 219
Լուիֆի րեյ (թուրք հաղարապետ, Միսիս և Հաճրն) – 96, 149, 316
Լուիֆի րեյ (ոսմանական ատյանի անդամ) – 258
Լուիֆիլ (Աղանայում սպանված կեսարացի ատղաձագործ) – 43, 44
Լևոն Ա թագավոր – 413
Լևոն Դ թագավոր – 401, 403
Լևոնյան Սարգիս պրոֆեսոր – 113, 451
Նայեֆ աղա զադե Վահիդ – 169, 263
Նալի աղա (թուրք մարդասեր, Աղանա) – 314
Նալի Համաղա փաշա (վակրֆների նախարար) – 193
Նապայան Սահակ Բ կաթողիկոս Կիլիկիո – 6, 8, 38, 145, 146, 181, 390, 417, 438
Նրլազյան Հակոբ աղա – 164
Նրլուպեան Տիգրան Ճ. վերապատուելի – 169
Մերենց (Շիչմանյան Հովսեփ) – 20
Կայեն (առաջին մարդասպանը) – 368
Կարա Ալի (թուրք ավազակ, Աղանա) – 39
Կարապետ (աղանարնակ բալուցի) – 41, 43
Կարապետյան Նաչիկ (Նաչո) (կախաղան հանված, Աղանա) – 281
Կարմիր սուլթան (տե՛ս Աբդուլ Համիդ Բ)
Կերկելի Ալի (մարդասպան, Աղանա) – 86
Կիլիկեցի (տե՛ս Գալուստեան Գրիգոր Հ.)
Կիլիբս (փյունիկեցի զորավար) – 13

Կիրակոս (մարաշցի հայ վարպետ) – 123
Կոմս (տե՛ս Փափազյան Վահան)
Կոչնե Դենի – 226, 227, 229, 479
Կոստանդին Ա թագավոր Կիլիկիայի – 413
Կոստանդին Բ թագավոր Կիլիկիայի – 110
Կոստանդին Սրիկ – 16
Հարիր էֆենդի (հայազգի իթթիհադական) – 29
Հաղարապետյան (մարաշցի երեկելի) – 165
Հալաջյան Արամ – 195, 252
Համալ զադե Հասան (մարդասպան, Աղանա) – 86
Համբարյան Ազատ – 11
Համիդ («Արար-կյուրի») նախագահ, Տարսոն – 107
Համիտ (սուլթան) (տե՛ս Աբդուլ Համիդ)
Հայկունի Սարգիս – 20
Հաջի Ահմեդ (թուրքմեն մարդասեր, Ֆաքքի Հասան) – 317
Հաջի Հինդի (պոլսեցի թուրք մարդասպան Համիդիում) – 117
Հաջի Հուսեյն էֆենդի (թուրք մարդասպան, Օսմանիս) – 112, 115
Հասան Բահրի փաշա (Հալեպի դինվորական հրամանատար) – 246
Հասան Ֆեհմի փաշա (նախարար) – 378
Հարդինգ Ջարլի – 220
Հարուժյուն քահանա (Տեր-Մելքոնյան) (Այնթապի առաջնորդական փոխանորդ) – 337
Հարուժյունյան Արսեն վարդապետ – 169
Հեթում պատմիչ – 16

Հեթում (Կիլիկիայի թագավորներ) – 349
Հեթում Ա թագավոր – 413
Հեթում Բ թագավոր – 412
Հիսուս Քրիստոս – 79, 165, 333, 368, 376, 402, 405
Հիսալյն Ճահր (տե՛ս Հուսեյն Ջահր րեյ)
Հիսնի աղա (տե՛ս Հյուսնի աղա)
Հյուգո Վիկտոր – 69, 81, 187, 209, 480
Հյուսնի (հիսնապետ Կարս-Բաղարում) – 152
Հյուսնի աղա (մարդասպան, Անտիոք) – 169, 263
Հոհնեցուրն Վիլհելմ Բ (Գերմանիայի կայսեր) – 380
Հոմերոս – 12
Հովհաննես (աղանարնակ բալուցի զաչնակցական) – 42, 43, 45
Հովհաննես (մարաշցի Համիդիում) – 120
Հովհաննես Ավետարանիչ – 407
Հովհաննես Կանցյեր – 405
Հովսեփ Դրաղարկցի – 16
Հովսեփյան Հայկ Բ. (ամերիկահայ) – 390
Հուսեյն էֆենդի (թուրք մարդասեր, Մյուրֆետ գյուղ) – 154
Հուսեյն Հիլմի փաշա (մեծ վեզիր) – 192, 193, 249-251, 278, 279, 281, 295, 338, 388, 420
Հուսեյն Ջահր րեյ – 221
Հուստինիանոս (Բյուզանդիայի կայսր) – 66
Ղազարյան Սերովրե – 174
Ղաթր (մարաշցի թուրք մարդասեր Համիդիում) – 118
Ղասսար Միսաք (տե՛ս Սարգիսյան Միսաք)

Ղասսար դաղե Հուսեին (մարդասպան, Աղանա) – 86
Ղարիր աղա դաղե (Հերիմ-խանի մուղիր) – 315
Ճենկիդ խան – 68, 343
Ճէփատ պէյ (տե՛ս Մեհմեդ Զևադ բեյ)
Ճիղմէճեան Մանուկ Գ. – 127, 294
Մաղլիահ Նեսիմ Էֆենդի (օսմանյան խորհրդարանի անդամ) – 299
Մալլան Մեկրտոն պատմելի – 452
Մալեղյան Վահան – 329
Մախյան Հարություն (Հաճրնցի նահատակ Միսխում) – 99
Մահմուդ Էֆենդի (խոջա, թուրք մարդասեր, Մյուրֆեստ գյուղ) – 154, 315
Մահմուդ Շեքեթ փաշա (ազատարար բանակի հրամանատար) – 73, 192, 193, 377
Մանգուտ (Եվրոպացի ճանապարհորդ) – 20
Մանթաշով Ալեքսանդր – 334
Մանուկյան Լեոն (նահատակ, Աղանա) – 440
Մանսուր քահանա (Հակոբիկյան ասորի, Աղանա) – 278, 490
այ-Մանֆալութի Մուհամմեդ Լուիթֆի – 232
Մաշտոց Մեսրոպ – 11
Մարթին (ղենքի հնարիչ) – 94, 150, 151, 243-245, 268
Մարիամ (նահատակ, Միսիս) – 98
Մարիամ (Աստվածածին) – 405
Մարկո Պոլո – 397
Մարկոս Էֆենդի (Հեռագրատան պաշտոնյա, Համիդի) – 116
Մաքալլում Ֆրեդերիկ Ու. – 375, 376
Մաքսարուհ Իստեֆան քահանա

(քաղղեացի, Աղանա) – 277, 490
Մ. Բ. Բ. – 368
Մելանի (մայրապետ, Աղանա) – 312
Մեկրիսեթյան Գալուստ (նահատակ, Գրրրգ-խան) – 337, 338
Մեկրիսեթյան Եղբայրներ (Գրրրգ-խան) – 338
Մեծն Մուրադ (տե՛ս Բոյաջյան Համբարձում)
Մեհմեդ (մարաջի թուրք մարդասեր երիտասարդ էրդինում) – 122, 123
Մեհմեդ բեյ (չերքեզ մարդասեր, Կոկիսոնի չրջան) – 318
Մեհմեդ Ալի բեյ (թուրք մարդասպան, Օսմանի) – 114
Մեհմեդ Ասաֆ էսադ բեյ (Ջերբի-Բերեքեթի մութասերիֆ) – 111, 122, 129, 130, 243, 244, 258, 261, 279, 297, 387
Մեհմեդ Թալեաթ բեյ (ապա փաշա, օսմանյան խորհրդարանի փոխնախագահ, 1915-ի Հայոց զահճապետներից) – 240, 249, 250, 299, 305, 342
Մեհմեդ Զևադ բեյ (Աղանայի կուսակալ) – 44-46, 50, 51, 53, 55, 61, 65, 84, 193, 240, 242, 243, 257, 261, 279, 285-287, 297, 322, 387, 421
Մեհմեդ Ռեչադ (տե՛ս Մուհամմեդ Ե)
Մելյան դատէ Ռիֆաթ (տե՛ս Մելյան գաղե Ռիֆաթ)
Մթրպյան Արմենակ (նահատակ, Օսմանի) – 453
Մթրպյան Հովհաննես (նահատակ, Օսմանի) – 453
Մթրպյան Սամվել (նահատակ, Օսմանի) – 115, 453
Միդհատ փաշա (օսմանյան սահմանադրութեան մշակող) – 28
Միշլի Ժյուլ – 82, 227

Միտակ (նահատակ սայլապան, Միսիս) – 99
Միրայեկյան Գրիգոր – 10, 14
Մխիթարյաններ (միարանություն, Վենետիկ) – 7
Մյոս Շահեն (Սեֆերյան Մխիթար) – 127
Մկրտչյան Լեոն (ոսմկավար ղեկավար) – 329
Մնացականյան Արամայիս – 11
Մոմոճան (թուրք մարդասեր, Տարսոն) – 108, 315
Մոստիչյան Հարություն Էֆենդի – 249, 257, 260, 293, 464
Մոստիչյան Մարտիրոս (Մերսինի ոսմկավարների ղեկավար) – 274
Մովսես Նորենացի – 333
Մորեր Հենրի վերապատմելի (նահատակ միսիոներ) – 58, 311, 359, 372-376, 476
Մուխթար (Ղազի, Փելդմարչալ) – 377
Մուհամմեդ (խլամի հիմնադիր) – 52, 61, 89, 98, 139, 152, 170, 233, 234, 316
Մուհամմեդ Ե (սուլթան, Մեհմեդ Ռեչադ) – 183, 192, 251-255, 338, 419
Մուհամմեդ Ալի բեյ (Լաթաքիայի արար մարդասեր մութասերիֆ) – 175, 317
Մուհամմեդ Զիաէդդին Էֆենդի (չեյս-ուլ-իսլամ) – 378
Մուհիդդին (թուրք խուժանապետ, Համիդի) – 118
Մունիֆ բեյ (օսմանյան խորհրդարանի անդամ) – 303, 304
Մուսա աղա (թուրք երեսի, Կարս-Բազար) – 152

Մուսա Էֆենդի (թուրք մարդասեր, էրզին) – 122, 123
Մուսթաֆա (մարդասպան, Տարսնոս) – 339
Մուստաֆա (որդի Նայիլ աղայի, Աղանա) – 314
Մուստաֆա Էֆենդի (ոսմկական ատյանի անդամ) – 258
Մուստաֆա բեյ (օսմանյան խորհրդարանի անդամ Հայեպից) – 308
Մուստաֆա Էֆենդի (օսմանյան խորհրդարանի անդամ) – 249
Մուստաֆա Էֆենդի (խոջա, թուրք մարդասեր, էյրի Բուջաք) – 315
Մուստաֆա փաշա (կալվածատեր Գրրրգ-խանի մերձակայքում) – 176
Մուստաֆա Նուրի բեյ (օսմանյան խորհրդարանի նախագահ) – 68
Մուստաֆա Ռեմդի փաշա (Աղանայի զինվորական հրամանատար) – 55, 84, 257, 261, 279, 297, 387
Մուր Ֆրեդերիկ – 371
Մելյան գաղե Ռիֆաթ – 219
Յաղըճյան Գևորգ – 528
Յաղջր Ազիզ (թուրք կեսարացի Տարսոնում) – 107
Յաղուրյան Նաչիկ Էֆենդի – 165
Յանգո Արթեմ (Արթեմիս) – 58, 313
Յափուջի Գևորգ (Աղանա) – 54
Յեկեն Վելիէդդին – 234, 236
Յենիդուռյան Նադարեթ Էֆենդի – 165
Յովհաննէս աղա (էնթիլի գյուղ) – 135
Յուզա [Խակարովտիացի] (Քրիստոսի առաքյալներից, մատնիչ) – 262
Յուսուֆ բեյ (տե՛ս Մեհմեդ Ասաֆ էսադ բեյ)
Յուսուֆ Քեմալ բեյ (օսմանյան

խորհրդարանի անդամ) – 222, 250, 257, 291, 293–295, 298, 304, 307, 309

Նատմ փաշա (օսմանյան զեսպան Փարիզում) – 225

Նաջարյան (Նաճատակ Հայուհի) – 275

Նաջի փաշա (օսմանյան խորհրդարանի անդամ) – 308

այ-Նասեր Մուհամմեդ (մեմլուք սուլթան) – 110

Ներսես Լամբրոնացի – 16

Ներսես Շնորհալի (Կյայեցի, Ներսես Դ կաթողիկոս Ամենայն Հայոց) – 16

Նիհատ աղա (տե՛ս Նայեֆ աղա զազե Վահիդ)

Նորատունկյան Գարրիել էֆենդի – 193

Նուրէղդին (էրզինի գայմագամ) – 117

Նուրի (Թուրք մարդասպան սայլապան, Օսմանի) – 114

Նուրյան էֆենդի (Թուրքամուլ Հայ) – 161

Շագգալ Փիլիպոս քահանա (ասորի կաթողիկ, Աղանա) – 277, 490

Շախրե (երկրաչափ) – 312

Շահրիկյան Հարություն – 194, 195, 199, 204

Շատրիկյան (Շատարեյան) Հարություն – 51, 53

Շելկովսկիով (տիտղոսավոր խորհրդական) – 260, 264

Շերիֆ աղա (քուրդ հրոսակապետ, Օրդու) – 173

Շեփորդ էլլիոթ Ֆ. – 363

Շեֆիկ բեյ (քննչական Հանձնատոզովի անդամ) – 250

Շթոբել (գերմանացի գործարանա-

տեր, Աղանա) – 313

Շիրեջյան Ահարոն – 164

Շյուքրի (որդի Նայիլ աղայի, Աղանա) – 314

Շյուքրի էֆենդի (օսմանյան խորհրդարանի անդամ) – 308

Շխրամյան Նազարեթ – 282

Շեքեթ (Իթթիհադ կոմիտեի զեկափար, Տարսոն) – 107

Շեքի էֆենդի (Թուրք երևելի, Միսիս) – 98

Ոսկերիչեան էմմանուէլ – 9

Ութուջյան Գևորգ եպիսկոպոս – 256

Ուիլի Դաութի (Մեծ Բրիտանիայի Հյուպատոսը Մերսինում) – 59, 63, 83, 311, 375, 470

Ուիլի տիկին (Մեծ Բրիտանիայի Հյուպատոսի տիկին) – 312, 468, 469

Ուլնեցի Մ. (տե՛ս Միսոեան Միսաք)

Ուրֆայյան Դավիթ էֆենդի – 51, 52, 440

Չայյան Հակոբ – 269

Չարենց (Սողոմոնյան) Եղիշե – 11, 117

Չգրրգյան Ջատիկ – 282

Չգրրգյան Սարգիս – 282

Չեմբրս Վիլյամ Ն. (միսիոներ) – 44, 58, 185, 311, 323, 373, 376, 475

Չենեսիգյան Գևորգ – 281

Չինգիդ խան (տե՛ս Ճենկիդ խան)

Չոլաքյան Հակոբ – 8, 169, 173–175

Չոպանյան Արշակ – 218, 231, 351, 352

Չորրաջյան (մարաջցի երևելի) – 165

Պագայյան (Հայ երևելի, Օսմանի) – 113, 114

Պալճյան Կարապետ էֆենդի – 165

Պալճյան Սարգիս էֆենդի – 165

Պաղտատի զատէ Ապտույ Գատիր էֆենդի (տե՛ս Բաղդադի զազե Արդույ Կաղեր էֆենդի)

Պայթար զատէ (տե՛ս Բայթար զազե Հասան)

Պապիկյան Հակոբ – 7, 204, 218, 240, 242, 250, 257, 281, 291–303, 305–310, 463

Պապիկյան Պապիկ – 308

Պարթևկան Սուրեն (Պարտիզականյան Սիսակ) – 5, 87, 174, 185, 186, 190, 197, 198, 204, 211, 212, 219, 221, 222, 228, 262, 269, 272, 274, 275, 278, 279, 286, 294, 299, 328, 330

Պարիկյան Ժան – 231

Պարսամյան Վարդան – 11

Պարտիզականյան Սիսակ (տե՛ս Պարթևկան Սուրեն)

Պերճուհի (զոզուլուքցի նահատակ նորահարս) – 92

Պերպերեան Աւետիս – 9

Պղտիկյան Պողոս – 442

Պղտիկյան Տիգրան էֆենդի – 60, 437

Պիչոն Ստեֆան – 225, 227, 479

Պիֆլ (ամերիկյան Հիվանդանոցի տնօրեն, Աղանա) – 313

Պլրխյան Հրանտ – 282

Պողոս աղա (ղատարանի անդամ, Բախչե) – 137, 139

Պողոսյան Հայկազ – 11

Պողոսյան Ներսես քահանա (Հասանբեյի) – 135

Պողոսյան Վարուժան – 231

Պուլտուգյան (Նահատակ Հայուհի, Աղանա) – 275

Պուլտուգյան Կարապետ – 281, 283, 462

Պուլտուգյան Հարություն – 281, 283, 462

Պուլտուգյան Հովհաննես – 281, 283

Պուրճագյան Եփրեմ – 40

Պրեսանսե Ֆրանսիս դը – 306, 309, 310

Պոչնազ Սալիհ էֆենդի (տե՛ս Բուսար Սալիհ)

Ջեզվեջյան Քերովրե – 44

Ջիլերսիդյան Ազապի (առևանգված Հայուհի, Գրրրգ-խան) – 341

Ջին Թորոս (Տաղտաղանյան Թորոս, Հայ ոստիկան) – 150–153, 451

Ռաիֆ փաշա (Պետական խորհրդի նախագահ) – 193

Ռաֆիկ աղա (տե՛ս Բերեբեթ զազե Ռիֆաթ)

Ռեկալ Հայր (Հիսուսյան վարդապետ) – 312

Ռեկայու էլիդի (Եվրոպացի ճանապարհորդ) – 20

Ռեսիք Մ. – 312

Ռեֆիհ բեյ (յուզբաշի, ռազմական ատյանի անդամ) – 258

Ռիդա Թեֆիք բեյ (օսմանյան խորհրդարանի անդամ) – 242, 299

Ռոմուլոս (Հոմի առասպելական հիմնադիր) – 352]

Ռոջերդ Դ. Օ. – 376

Ռոջերդ Դեյվիդ վերապատվելի (Նահատակ միսիոներ) – 58, 311, 359, 372, 373, 375, 376, 474

Ռոջերդ Մայներ զոկտոր (տե՛ս Ռոջերդ Դեյվիդ վերապատվելի)

Ռոջերդ Մերի – 474

Ռուրեն Ա իշխան (Ռուրիկյան իշխանության հիմնադիր) – 14

Ռուրիկյաններ (Ռուրենի տուն, իշխանական-արքայական տոհմ) – 9, 14, 16, 18, 21, 25, 116, 147, 153, 158, 349, 354

Սարաթիև Հայր (Ֆրանսիացի հիսուսյան վարդապետ) – 58
 Սարաթիև (Դոդեի տիկինը) – 121, 122, 312
 Սարաթիև րնտանիք – 121, 122, 473
 Սարաթիև Անթուանեթ – 121, 312
 Սարաթիև Դոդե – 121, 312
 Սարաթիև Շարլ – 121, 312, 473
 Սաղոց խոջա (թուրքմեն մարդասեր, Օրդու) – 317
 Սալիբյան Համբարձում – 44, 323
 Սալիհ փաշա (Զեյթունի վրա արշաված զորահրամանատար) – 161
 Սալիհ փաշա (զինվորական նախարար) – 193
 Սայման (քուրդ ավազակ մոլլա) – 337
 Սահիր բեյ (չեյխ-ուլ-խայամ) – 338
 Սապահ-Գիլեան Ստեփան – 288
 Սարգիս (Հայ նահատակ ոստիկան Օսմանիում) – 115
 Սարգիս Պիծակ – 16, 405
 Սարգիսյան Հակոբ (պոլսահայ թարգմանիչ) – 310
 Սարգիսյան Միսաք (Ղասսար Միսաք) – 281-283, 462
 Սարգսյան Երվանդ Ղազարի – 109
 Սարը Մեհմեդ (Համիդի մուֆթի) – 117, 118
 Սեմերճեան Մնացական (Զեյթունցի) – 9, 163
 Սենեմ խանում (արյունարբու թրքուհի, Նայրիբ գյուղ) – 103, 261
 Սեոբեյի Նայիդ էֆենդի – 175
 Սերենգոյության Հովհաննես (Վարդգես) – 241, 242, 249, 293, 305, 307
 Սերոբյան Մուշեղ եպիսկոպոս – 6, 37-39, 44, 49, 63, 198, 218, 267, 270, 271, 276, 277, 284-286, 295-297, 324, 438
 Սիամանթո (Յարճանյան Ատոմ) – 342-344, 346, 348
 Սիմոնյան Ննդիր – 222, 252
 Սիյահյան Կոստանդին պատվելի – 452
 Սիսեոյան Միսաք (Մ. Ուլնեցի) – 9, 163, 165
 Սմբատ Գունդատար (տե՛ս Սմբատ Սպարապետ)
 Սմբատ Սպարապետ (Սմբատ Գունդատար) – 16, 404
 Սողոմոնյան Լևոն պատվելի – 452
 Սուրհի բեյ (Հարյուրապետ, Լաթաքիա) – 317
 Սուին Սարգիս էֆենդի – 322, 327
 Սուլեյման Ա (օսմանյան սուլթան) – 110
 Սուլեյման Նազիֆ բեյ – 221
 Սվադլի Միհրան – 389
 Սևակ (Զիլինկիրյան) Ռուբեն – 352
 Վաթսոն Վիլյամ – 367
 Վալլաս (միսիոներուհի) – 311, 373, 375, 376
 Վահրամ Ռարունի – 16
 Վայթինգ Վիլյամ Զ. – 383
 Վայյան էդուար – 227
 Վանլը Ահմեդ (մարդասպան, Աղանա) – 86
 Վանուղյան Նաթուր (որրուհի) – 488
 Վարդան Այգեկցի – 16
 Վարդան Արեւելցի – 16
 Վարդապետյան Կոստան էֆենդի – 164
 Վարդգես (տե՛ս Սերենգոյության Հովհաննես)
 Վարժապետյան Մամիկոն – 9, 158, 159, 163
 Վարուժան (Չպուրյարյան) Դանիել – 349

Վելի էֆենդի (թուրք երեսելի, Կարս-Բազար) – 152
 Վեհիր էֆենդի (օսմանյան խորհրդարանի անդամ) – 249
 Վելյաի փաշա (Մարաշի կառավարիչ) – 161
 Վեու Պոլ դյու – 231
 Վեպ էլիզարեթ (ամերիկացի միսիոներուհի) – 311
 Վեպ Մելյի (ամերիկացի միսիոներուհի) – 311
 Վիթթորիա (այրիացած և առևանգված հայուհի, Գրորգ-խան) – 337
 Վորիս (Աղանայում գերմանական Հյուպատոսարանի թարգման) – 313
 Տաղավարյան Նազարեթ – 241, 242
 Տաղտաղանյան Թորոս (տե՛ս Զին Թորոս)
 Տատրյան Գրիգոր – 40
 Տեր-Կարապետյան Գեղամ (օսմանյան խորհրդարանի անդամ) – 242, 293
 Տեր-Մարտիրոսյան Համբարձում (Մերսինի հնչակյանների ղեկավար) – 274
 Տեր-Պետրոսյան Սահակ քահանա (Մարաշի առաջնորդական փոխանորդ) – 164
 Տեր-Սահակյան Սահակ (նահատակ, Աղանա) – 440
 Տեր-Ստեփանյան Վահան քահանա (Բախչե) – 137-139
 Տոնաթոսյան Արմենակ քահանա (նահատակ, Անտիոք) – 169
 Տումանյան Մարտիրոս – 188
 Փայթաջի էոմեր (մարդասպան, Բախչե) – 139

Փաշափանոսյան Ասատուր – 282
 Փավստոս Բուղանդ – 333
 Փափաղյան Մ. Գ. («Նյու Յորք թայմսի» նամակագիր) – 382
 Փափաղյան Վահան (Կոմս) – 241, 242
 Փափաղյան Վահրամ (ղերասան) – 327
 Փափաղյան Քերովրե – 20, 206, 284
 Փիթ Ու. Ու. (ամերիկացի միսիոներ) – 370
 Փոլաղյան Պողոս աղա – 137
 Փոլրազ օղյու Մեհմեդ էֆենդի (թուրք մարդասեր, Բախչե) – 315
 Քանի զաղե Սալիդ (մարդասպան, Աղանա) – 86
 Քերարյան Մ. Զ. («Նյու Յորք թայմսի» նամակագիր) – 385
 Քել աղա (թուրք մարդասպան Հարյուրապետ, Հասանբեյլի) – 135
 Քելեկյան Տիգրան խան – 225
 Քել-Պողոսյան Սամվել – 173
 Քեմալ (թուրք մարդասպան զարթիկ ոստիկան, Օսմանիև) – 114
 Քեմալ (թուրք մարդասպան մյուլագիմ լեյտնանտ, Օսմանիև) – 114
 Քեմալ բեյ (Այնթապի գայմազամ) – 316
 Քենան փաշա (միրլիվա) – 258, 259
 Քենեդի Ս. վերապատվելի (ամերիկացի միսիոներ) – 311
 Քելչյան Գևորգ (Մերսինի զաչնակցականների ղեկավար) – 274
 Քելչյան Կիրակոս աղա – 134
 Քելչյան Հովհաննես քահանա (Լափաջր) – 136
 Քելչյան Հովհաննես քահանա (Հասանբեյլի) – 135
 Քելչյան Ղևոնդ քահանա – 136

Քեչիչյան Պետրոս քահանա – 135
 Քեչիչյան Պետրոս Կիրակոսի – 134
 Քեոբ Ահմեդ (Թուրք մարդասեր, Նա-
 ջարի) – 315
 Քեչյան Բյուզանդ – 252, 338, 340
 Քերրալաի դադե Էսադ (Թուրք մար-
 դասեր, Տարսոն) – 108, 478
 Քերիմ ադա (մարդասպան, Ադանա)
 – 86
 Քերոմինյան Ղազարոս – 114
 Քերլիկյան Հարություն վարդապետ –
 51
 Քէչիչեան Պողոս (Գրրրգ-խան) – 339
 Քինե Վիթալ (Cuinet Vital) – 9
 Քյուրքչյան Վահան (Բակուրան) – 7,
 10
 Քոլանթո Մարս դը (Կոմս) – 286
 Քրիման Ջեյմս – 386
 Քրիստի Թոմաս զոկտոր – 108, 311,
 370, 375, 376, 477
 Քրիստի Քարմելայթ – 108, 311, 477
 Օզանյան Անդրանիկ (Զորավար Անդ-
 րանիկ) – 290, 291

Օհանջանյան Սաթենիկ – 201
 Օսման (որդի Սալիլ աղայի, Ադանա)
 – 314
 Օսման Ալի բեյ (ռազմական ատյանի
 անդամ) – 258
 Օսյան Երվանդ – 223
 Օրմանյան Մաղաթիա արքեպիսկո-
 պոս – 7, 335
 Ֆաիզ բեյ (Պետական խորհրդի ան-
 դամ) – 257, 293, 300
 Ֆարիս (Թուրք խուժանապետ,
 Համիդիե) – 118
 Ֆեթիթահ դադե Ահմեդ (Թուրք
 մարդասպան, Օսմանիե) – 114
 Ֆերիդ փաշա (ներքին գործերի նա-
 խարար) – 193, 242, 248, 255, 338
 Ֆերիդ փաշա (Ֆէրիտ փաշա, Կեսա-
 րիայի նահանգապետ) – 318
 Ֆերիե Ֆերդինանդ (Հալեպի ֆրան-
 սիական հյուպատոս) – 178, 312
 Ֆէրիտ փաշա (տե՛ս Ֆերիդ փաշա,
 Կեսարիայի նահանգապետ)
 Ֆերրի Ժյուլ – 82, 172, 209, 227

Adossides A. (տե՛ս Ադոսիդես Ա.)
 Aricoğlu Damar (տե՛ս Արիջոզլու
 Դամար)
 Cochin Denis (տե՛ս Կոչեն Դենի)
 Cuinet Vital (տե՛ս Քինե Վիթալ)
 Doumerge Emile – 231
 Ferriman Duckett – 231
 Karpat Kemal H. – 23, 26
 Pastermadjian H. (տե՛ս Բաստրմաջ-
 յան Հրանտ)

Zaccheus Frederick – 231
 Гиббонс Г. А. (տե՛ս Գիբրոնս Հեր-
 րերտ Ադամս)
 С. З. (գրքի Հեղինակ, Բարո) – 5, 93,
 101, 125, 321, 322
 Саркисян Е. К. (տե՛ս Սարգսյան Եր-
 վանդ Ղազարի)

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աստի գետ (Որոնդես) – 169, 174, 178
Արդողլու (գյուղ) – 93, 94, 96
Արիդին–Փաշա (ազարակ) – 142
Ազուլիս – 336
Աղանա – 5–9, 17–20, 22–27, 30, 32–41, 44, 45, 47–50, 55, 57, 59–74, 76–78, 80–82, 84, 86–88, 90, 93, 94, 96, 100–104, 106–109, 111, 113, 114, 116, 122, 124–126, 128, 144, 147, 155, 156, 163, 165, 168, 178, 179, 182–194, 196, 198, 199, 201–209, 211–213, 215, 217–222, 224, 226–228, 230–233, 236, 237, 240–251, 253–262, 264–274, 276, 277, 279, 281–291, 293–298, 300–307, 309–315, 319–326, 328, 329, 331, 334, 338, 353–355, 359, 361–363, 365, 369–372, 376–379, 386–390, 416–418, 421–444, 461, 462, 466, 467, 469, 472, 474, 476, 482, 486, 489
Աղրիանապոլիս (տե՛ս էջիրնե) –
ալ–ԱղՀար (ճղկիթ և Համալսարան) – 232, 233
Ազովի ծով – 140
Աթըզ (գյուղ) – 176, 177
Այարաշ (տե՛ս Արեգին)
Այայայի բերդ – 395
Այափունար (ազարակ) – 144
Ալրիստան – 25, 26, 168
Ալեյան դաշտ – 12
Ալեքսանդրապոլ – 51, 252
Ալեքսանդրեթ (տե՛ս նաև Իսկենդերուն) – 12, 21, 25–27, 81, 110, 125, 129, 131, 133, 313, 337, 360–364, 366, 386
Ալեքսանդրիա – 209, 210, 285, 286, 291, 327
Ալուրոզլու (գյուղ) – 141
Ախալքալաք – 334, 336
Ախուրեան – 51, 65, 252, 256, 286
Ակն – 179
Ակնների վանք – 406
Աղղամ (ազարակ) – 144
Աղղը–Քեոյուք (Հայկական գյուղ) – 100, 103
Աղջա–Գոյուն (գյուղ) – 141
Աղջա–ղաղ (լեռ) – 141
Ամանոսի լեռնաշղթա – 12, 320
Ամերիկա (տե՛ս Ամերիկայի Միացյալ Նահանգներ)
Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ, Ամերիկա, Միացյալ Նահանգներ) – 5, 149, 197, 198, 200, 210, 212, 213, 290, 299, 311, 321, 367, 380, 383, 466
Ամերիկյան կոլեջ (Տարսոն) – 40, 108, 311, 453
Ամիր–Թաթման (ազարակ) – 104
Ամուղա (ամրոց) – 116
Այաշ – 7
Այաս (էգեսոս) – 14, 15, 21, 110, 360, 362, 393, 397
Այնթապ – 22, 25, 26, 113, 134, 136, 316, 326, 337, 362, 363
Անազարրա (Անափարղա) – 14, 21, 396

Անամուր – 15, 23, 393
Անափարղա (տե՛ս Անազարրա)
Անատոլիա – 22, 72, 236, 259
Անգլիա (Անգլիա, տե՛ս նաև Մեծ Բրիտանիա) – 74, 226, 334, 363, 380
Անգլիա (տե՛ս Անգլիա)
Անդերին (տե՛ս Անդերուն)
Անդերուն (Անդերին, Էնդերուն) – 25, 166
Անդրկովկաս – 109
Անրճրք (գյուղ) – 166
Անթապ (տե՛ս Այնթապ)
Անթարիա (տե՛ս նաև Անտիոք) – 26, 168, 170–172, 251
Անթիլիաս – 8, 20, 59, 114, 169, 204, 279
Անտիոք (տե՛ս նաև Անթարիա) – 8, 25, 26, 34, 168–170, 173–175, 177, 242, 259, 263, 267, 321, 362–364, 366, 368, 386
Աշխենյան վարժարան (Աղանա) – 48, 66, 431
Ապարան – 336
Առաջավոր Ասիա – 15
Ասիա – 9, 12, 14, 18
Ասիական Թուրքիա (տե՛ս Օսմանյան կայսրություն)
Ավազկալ (Մխալ) – 167
Ատանա (տե՛ս Աղանա)
Ավրաղ–Մեղերի (Թուրքական գյուղ) – 101
Ատլանտա (ԱՄՆ) – 370
Արարլը (Հայկական գյուղ) – 167
Արարկիր – 179
Արար–Քեոյ – 100
Արազած – 328, 329
Արարատ – 77, 107, 147, 173
Արաքս – 9
Արդատլի (գյուղ) – 166
Արեզ (վանք, Կիլիկիա) – 15

Արեգին (Այարաշ) – 167
Արփալը Հիւլիք (գյուղ) – 135
Արենլը – 231, 350, 367
Արեմուտք – 350, 367
Արեմոյան Հայաստան (տե՛ս նաև Թուրքահայաստան) – 24, 212, 223, 273, 319, 343, 354
Արֆայի (Հայկական գյուղ) – 174
Ափրիկ (տե՛ս Աֆրիկա)
Աֆրիկա – 12, 72, 116
Բար (Միրիա) – 26
Բարեյուն – 13, 84
Բաղարջիկ – 25, 26, 168
Բալու – 41
Բախչև (Բույանբիս, Պաղչէ) – 23, 133, 134, 137, 138, 140–143, 156, 244, 267, 283, 285, 298, 301, 315, 369
Բահր–Ջերբուլ (Միրիա) – 25
Բաղղաղ – 18, 140
Բաղջաղազ (Հայկական գյուղ) – 172
Բայաղիտ (նոր Բայաղիտ) – 336
Բայրը (Թուրքմենարնակ չրջան) – 173
Բանդուղ (տե՛ս Պնդուղ)
Բասիթ (Պասիթ) (ծոց) – 171, 173
Բասրա – 18
Բաբու – 5, 93, 321, 332, 333
Բեյյան – 25, 26, 168, 175, 177, 341, 366
Բեյրութ – 8, 38, 82, 169, 171, 178, 185, 200, 203, 209, 210, 215, 219, 231, 241, 263, 282, 288, 327, 355, 361, 364, 365
Բեչևն (Հայկական գյուղ) – 167
Բեոլին – 18, 140, 230, 270, 313, 383, 384, 386
Բերդան (տե՛ս Կյուղնոս)
Բերդուս (Հայկական գյուղ) – 167
Բեքմնը (Թուրքական գյուղ) – 101

Բիթիաս (Հայկական գյուղ) – 177
 Բիթլիս – 72
 Բիլեյիթ-Գրյրգյար (Թուրքական գյուղ) – 141
 Բիրեջիկ – 25, 362, 363
 Բիզանդիոն – 10, 37, 40, 42, 43, 52, 59, 66, 72, 77, 82, 85, 100, 107-109, 112, 116, 126, 134-137, 139, 144, 146, 170-174, 175, 177, 180, 182, 185, 186, 202, 206, 207, 210, 212, 215-217, 219, 221, 225, 227, 230-233, 236-239, 241, 252-255, 259, 265, 270-272, 276, 281, 285, 286, 295, 298, 300, 301, 311, 318, 322, 326, 327, 337-341, 351
 Բյուզանդական կայսրություն – 18
 Բողլու խան (պանդոկ, Աղանա) – 281
 Բողրում-Կալա (բերդ) – 399
 Բոսնիա – 291
 Բոստան-աղա (ազարակ) – 142
 Բոստոն – 5, 39, 170, 182, 259, 267, 286, 291, 389
 Բունոս-Այրևս – 212
 Բուլանըխ (Կիլիկիայում, տե՛ս Բախ-չե)
 Բուլղարիա – 290, 301
 Բուղղա բազար (Աղանա) – 282, 283
 Բուջաք (Թուրքական գյուղ Գող-Օյուքի մոտ) – 91
 Բուջաք (Թուրքմենստանի շրջան) – 173
 Բուրսա – 288
 Բրուքլին (Նյու Յորք) – 372, 376
 Գաղը գյուղ (Կ. Պոլսի Թաղամաս) – 279
 Գաղը-Քեոյ (Աղանայի սանջակ) – 104
 Գագերլեր Թաղ (Բախչե) – 139
 Գաթրլար (գյուղ) – 124

Գալաթա-սերայ (Կ. Պոլսի Թաղամաս) – 308
 Գալփար (գյուղ) – 135, 143
 Գանլը-Դերե (գյուղ) – 176
 Գարադուրան (Հայկական գյուղ) – 172
 Գարկըլար (Յաղուրյան Թաղ, Ջեյ-թուն) – 159
 Գարս-Բազար (տե՛ս Կարս-Բազար)
 Գեմի-Սյուրեն (գյուղ) – 101, 104
 Գեոդալթ (Քեոդալթ) – 105, 106
 Գեոչյու (տե՛ս Գոչի)
 Գեոք-Չայիր (գյուղ) – 140, 141
 Գեոք-Ջեհի (գյուղ) – 156
 Գեոք սու (Կալիկադոն) – 23
 Գեոքսուն (տե՛ս Կոկիսուն)
 Գերմանիա – 228, 334, 380, 381
 Գերմանիկ (տե՛ս նաև Մարաչ) – 9, 12, 155, 158, 163, 168
 Գըղլաջ (գյուղ) – 141
 Գըրըգ-խան (գյուղ) – 175-177, 337, 339, 341, 361
 Գյալուր-Քեոյ (գյուղաքաղաք) – 481
 Գյուլնար – 23
 Գնիև (Ղնեյ) (Հայկական գյուղ) – 175
 Գոգան (տե՛ս Կոգան)
 Գող-Օյուք – 90, 91, 93, 108, 183, 322, 370
 Գոյակ (Կոյակ) (գյուղ) – 140, 141
 Գոնիա (տե՛ս Կոնիա)
 Գոչի (Գեոչյու) (Հայկական գյուղ) – 174
 Գութազլի (Հայկական գյուղ) – 153
 Գունարլու (ազարակ) – 143
 Գուշլու (Թուրքական գյուղ) – 141, 142
 Գուրդյար (գյուղ) – 143
 Գուրֆալը (ազարակ) – 142
 Գրմթլը (գյուղ) – 141

Դաղ-օղլու-Մեհմեդ (ազարակ) – 142
 Դամասկոս – 380
 Դանըչման (Թուրքական գյուղ) – 100
 Դեղե-Աղաջ – 73
 Դեյլըմեն-Դերե (գյուղ) – 166
 Դեոնկայե (Հայկական գյուղ) – 165
 Դեոթ-Յոլ (Չորք-Մարդպան, Տէ-որթ-Եօլ, Տէօրթ Եօլ) – 23, 24, 125-133, 136, 142, 242, 244, 268, 273, 296, 316, 326, 348, 362, 366, 368, 447
 Դերե-Քեոյ (Հայկական գյուղ) – 157
 Դիարբեքիր (տե՛ս նաև Տիգրանակերտ) – 72, 193
 Դոլմարախչի պալատ – 192, 252
 Դոլուլք (գյուղ) – 167
 Դուղ-Աղաջ (Հայկական գյուղ) – 172
 Դրազարկ – 15, 21
 Եգիպտոս – 12, 17, 37, 209, 236, 285, 322
 Եդի-Դերե (ձոր, Քեսապի շրջան) – 174
 Երտրդի պալատ (տե՛ս Երզրդի պալատ)
 Երզրդի պալատ (Երտրդի պալատ) – 55, 216, 262, 276, 380
 Եղիալար (Հայկական գյուղ) – 167
 Ենիջե-Կայե (Հայկական գյուղ) – 167
 Եվրոպա – 12, 14, 18, 24, 75, 161, 210, 212, 225, 230, 231, 247, 255, 256, 258, 299, 310, 330, 367, 381, 383
 Երե-Բախան (գյուղ) – 153
 Երևան – 10, 11, 14, 33, 109, 110, 220, 232, 260, 285, 289, 313, 335, 355
 Եփեսոս (Էֆսոս, Յարփուղ) (Հայկական գյուղ, Կիլիկիա) – 23, 167
 Եփրատ – 13

Ջանգեղուր – 336
 Ջեյթուն – 8, 9, 11, 12, 17, 19, 20, 23-26, 55, 106, 111, 157-166, 168, 242, 244, 268, 320, 457-460
 Ջեփյուդիոն (տե՛ս նաև Մերսին) – 109, 201
 Էգեսա (տե՛ս նաև Այաս) – 14, 110
 Էդիրնև (Ադրիանապոլիս) – 288, 291, 301
 Էլ-օղլու-Չագալլը (գյուղ) – 156
 Էյրեյլի (գյուղ) – 141
 Էնդերուն (տե՛ս Անդերուն)
 Էնթիլի (գյուղ) – 135, 140
 Էյրի-Բուջաք (գյուղ) – 315
 Էոդերլի (Օղարլի) – 128
 Էջմեղի (գյուղ) – 166
 Էջմիածին (տե՛ս սուրբ Էջմիածին)
 Էսկի Համամ Թաղ (Աղանա) – 315
 Էվերեկ – 179
 Էրզին – 23, 111, 116, 117, 122-125, 257, 259, 283, 316
 Էրզրում (Կարին) – 10
 Էրմենեկ – 23
 Էրմիտաժի Թանգարան (Սանկտ Պետերբուրգ) – 412
 Էրրեկ (գյուղ) – 125, 362
 Էքեղլեր (գյուղ) – 124
 Էքեղ-Օյուք (Հայկական գյուղ) – 172
 Էքս (Ֆրանսիա) – 330
 Էֆսոս (տե՛ս Եփեսոս)
 Թարազլար (Թուրքական գյուղ) – 141
 Թաշճը (Թուրքական գյուղ) – 101
 Թերզյան վարժարան (Աղանա) – 432
 Թեքիրչև (ազարակ) – 144
 Թեքե Թաղ (Տարսոն) – 108, 478
 Թիֆլիս – 9, 12, 30, 49, 85, 163, 243, 290, 324, 331, 333

- Թյան (ագարակ) – 144, 146
Թոմարզա – 179
Թոսրաղա Գալեսի (Աղանայի թաղամաս) (տե՛ս նաև Շաարանիև) – 41, 52, 53, 426
Թուրինջի (գյուղ) – 125
Թուրքահայաստան (թուրքաց չալաստան, տե՛ս նաև Արևմտյան չալաստան) – 48, 331
Թուրքիա (տե՛ս Օսմանյան կայսրություն)
- Ժեն – 42, 183, 216, 248
- Իզլիբ (Սիրիա) – 25, 26
Իզմիր – 10, 32, 41, 72, 191, 203, 260, 281, 297, 299, 300, 327, 329
Ինդիանա (նահանգ, ԱՄՆ) – 376
Ինջիրլիբ (գյուղ) – 104
Ինջիր-Կետիկ (թուրքական գյուղ) – 91
Իչել (տե՛ս Իչիլ)
Իչիլ (Իչել) – 23, 88, 251
Իջադին (գյուղ) – 128
Իսթ Դորսեթ (ԱՄՆ) – 376
Իսլահիե (տե՛ս նաև Քելլեր) – 23, 142, 143, 316, 337
Իսկենդերուն (տե՛ս նաև Ալեքսանդրեթ) – 26, 109, 175, 177
Իսոսի ծոց (Ալեքսանդրեթի ծոց) – 12
Իսպանիա – 15
Իսրայել – 87
Իտալիա – 74, 131, 175, 226
- Լազարյան ճնմարան (Մոսկվա) – 333
Լազգրյե (տե՛ս Լաթարիա)
Լազրիա (տե՛ս Լաթարիա)
Լաթարիա (Լազգրյե, Լազրիա) – 171-175, 183, 193, 209, 245, 313, 317, 366
- Լամբրոն – 16, 396
Լաոնակա – 171, 379
Լափաշլը (տե՛ս Լափաջլը)
Լափաջլը (Լափաշլը) – 136
Լեոնայիրանան – 364
Լիրանան – 8, 9, 163, 209, 364
Լոզան – 216
Լոնդոն – 23, 26, 229, 231, 313, 359
Լեոնկյա (Յրլան-Կալա) – 116, 394
- Նայրլը (թուրքական գյուղ) – 101, 103, 261
Նայիթ (Հայկական գյուղակ) – 172
Նաոնը (գյուղ) – 136, 137, 141, 316
Նասսա – 23
Նաստրիսան (Հայկական գյուղ) – 146, 147
Նարբերդ – 72, 134, 179, 186
Նդրբեզ (Հայկական գյուղ) – 177
Նժոտ (տե՛ս Ֆոնոուզ)
- Մայրագույն Արևելք – 18
- Կադրել (Հաճրն-Կեսարիա ճանապարհի վրա) – 40
Կպե-Գերեսի (գյուղ) – 153
Կալիկադոնոս (տե՛ս Գեոք սու)
Կալկաթա – 333
Կահիրե – 158, 197, 198, 211, 232, 233, 236, 286, 324
Կայաջոբ (Հայկական գյուղ) – 172
Կանչի (Չուգուր-Հիսար, Չուխրասար) – 167
Կապան (Կեպեն) (Կիլիկիա) – 16, 166
Կարագյույներ (գյուղ) – 125
Կարաղաչ (պետական կալվածք) – 105
Կարախալի – 23, 24, 315
Կարա-Հեոյուբ (գյուղ) – 125
Կարամանիա (Կիլիկիա) – 12
- Կարա-օղլան (թուրքական գյուղ) – 101
Կարին (էրզրում) – 10
Կարս (Կիլիկիա) (տե՛ս Կարս-Քաղար)
Կարս-Քաղար (Կարս, Ղարս, Գարս-Քաղար, Կարս-Ջուլիադիրլիք, Ղարս-Քաղար) – 23, 40, 150-153, 315, 340, 341, 451
Կարս-Ջուլիադիրլիք (տե՛ս Կարս-Քաղար)
Կենտրոնական Թուրքիայի քուլջ (Այնթապ) – 363, 451
Կեպեն (տե՛ս Կապան)
Կեսարիա – 40, 179, 186, 318
Կիլիկիա – 4-25, 27, 28, 30, 31, 33-38, 43, 47, 49, 51, 57-62, 65, 67, 69, 70, 72, 74, 75, 79-81, 84, 87, 90-93, 95, 97-100, 103, 104, 106, 108-111, 113-116, 118, 121, 122, 124, 127, 129, 132, 133, 141, 143, 145-147, 149-151, 155, 157, 158, 163, 165-169, 174-179, 182-186, 189-205, 207, 208, 210-213, 215-217, 219-222, 225-229, 231, 233, 239-242, 244, 247, 248, 250, 251, 253, 255, 257, 260-264, 266, 267, 269, 270, 272-276, 278, 279, 282, 283, 285-297, 299, 300, 303, 308, 310-314, 317-332, 335, 336, 340, 342-345, 348, 350-356, 358, 359, 370, 377, 380, 381, 390, 393, 394, 400, 410, 412, 413-415, 420, 421, 438, 440, 453, 454, 479
Կիպրոս – 12, 45, 66, 208, 209, 210, 327, 369, 379
Կյուդոնոս գետ (Բերդան, Տարսուս չայ) – 23
Կոզան (Գոզան) – 23, 143, 146, 204, 243
- Կոկիսոն (Գեոքսուն) – 26, 166, 167, 318
Կոյակ (տե՛ս Գոյակ)
Կոնիա (Գոնիա) – 8, 18, 20, 179, 190, 288
Կոննեթիբեո (նահանգ, ԱՄՆ) – 370, 376, 383
Կոռիկոս – 14, 397
Կոստանդնուպոլիս (Կ. Պոլիս, Ստամբուլ) – 5-7, 9-12, 18, 20, 21, 24, 31-34, 37, 38, 40, 46, 52, 57, 59, 63, 68-70, 72-75, 80, 81, 84, 87, 94, 106, 109, 110, 115, 117, 118, 122, 145, 171, 178, 179, 185, 186, 191-193, 196, 197, 200-202, 204, 210, 211, 213, 214, 216, 219, 222, 223, 230, 233, 236, 240, 242, 244, 245, 251, 253, 256, 259, 261, 263, 265, 267, 276, 278, 279, 281, 284, 288, 290, 291-293, 295, 297, 300, 302, 303, 307, 310-313, 318, 321-323, 325-327, 329, 331, 332, 336-340, 343, 359, 365, 368, 372, 377, 378, 381, 382, 386-388, 438
Կովկաս – 10, 209, 223, 272, 332
Կովկասյան լեռներ – 19
Կորինթոս – 370
Կուլ (Տավրոս) – 17
Կուկյակ – 16
Կտուց անապատ – 169
Կրետե – 209, 381
- Հալեպ – 8, 9, 19, 20, 22, 25-27, 72, 147, 155, 158, 162, 168, 175, 177-179, 191, 194, 204, 207, 232, 242, 244, 246, 247, 250, 251, 266, 303, 308, 312, 322, 339, 341, 361-363, 386
Հաճրն – 22-24, 39, 40, 72, 97, 146-149, 212, 243, 268, 273, 295, 312, 316, 318, 320, 322, 326, 361, 363-

366, 368, 369, 376, 379, 390, 448, 449, 481, 485
Համիդիկ - 24, 40, 113, 116, 117, 120-122, 183, 267, 301, 312, 315, 447, 453
Հայաստան - 3, 10, 13-15, 17, 18, 31, 35, 110, 179, 186, 191, 197, 203, 208, 213, 216, 219, 231, 289, 290, 309, 318, 319, 333, 353, 354, 381, 384
Հայաստանի Հանրապետություն - 11
Հայ լեռ (Գյափուր դաղը) - 6, 12, 41, 136-142, 165
Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն - 11, 14, 109
Հայոց ծոց (Ալեքսանդրեթի ծոց) - 12
Հայոց մարդասիրական ճեմարան (Կալկաթա) - 333
Հայֆա - 109
Հաջի-Հարիրլի (Հայկական գյուղ) - 177
Հաջի-Մուսայր (գյուղ) - 176
Հաջի-Չավուչ (գյուղ) - 142
Հասանրեյլի - 23, 133, 135, 136, 183, 301, 326
Հարավային Ամերիկա - 213
Հարգա (տե՛ս նաև Հաճրն) - 147
Հարև - 25, 26, 173
Հարթֆորդ (ԱՄՆ) - 370, 376
Հեթումի բերդ - 398
Հերցեգովինա - 301
Հեթիմ-խան (գավառակ) - 315
Հիսուսյանների գիշերօթիկ վարժարան (Ադանա) - 433
Հյույուկ (թուրքական գյուղ) - 101
Հյուսիսային Ամերիկա - 322
Հնդկաստան - 18
Հունաստան - 381
Հոռոմ (Հոռոմ) - 352

Հոռոմկա (Ռոմկայի) - 21, 25, 26
Հոռոմ (տե՛ս Հոռոմ)
Ղարաչաղլը (գյուղ) - 141
Ղարխն (գյուղ) - 141
Ղարս (Կիլիկիա) (տե՛ս Կարս-Քաղար)
Ղարս-Քաղար (տե՛ս Կարս-Քաղար)
Ղնեյ (տե՛ս Գնիկ)
Ղուզու-Ուջը (գյուղ) - 128
Ղրիմ - 15
Ճէպէյ (տե՛ս Ջերեյ-Քերեքեթ)
Ճէպէյի Պէրէքէթ (տե՛ս Ջերեյ-Քերեքեթ)
Մաարրաթ-Նուուման (Սիրիա) - 25, 26
Մալաթիա - 134, 215
Մակեդոնիա - 381
Մամեստիա (տե՛ս Միսիս)
Մայր Հայրենիք (տե՛ս Հայաստան)
Մանասթըր - 257
Մանչեստր - 191
Մաչկեռ - 15
Մարաչ - 9, 12, 21, 22, 25-27, 55, 72, 113, 134, 155-158, 161, 163-166, 168, 244, 251, 326, 456
Մարդուան - 9, 158
Մարիէնպատ - 330
Մարմարա ծով - 292
Մեղկիթեռնի (գյուղ) - 176
Մեծ Բրիտանիա (տե՛ս նաև Անգլիա) - 83, 131, 219, 227, 338
Մեմբիջ (տե՛ս Մունրիջ)
Մերձավոր Արևելք - 15, 239
Մերձուրալ - 411
Մերսին - 23, 24, 38, 59, 63, 69, 74, 75, 81, 82, 106, 109, 110, 149, 184, 185,

187, 197, 201, 208, 225, 226, 228, 245, 251, 257, 274, 311, 313, 321, 326, 360, 362, 363, 365, 366, 368, 369, 375, 386, 446, 478, 480
Միացյալ Նահանգներ (տե՛ս Ամերիկայի Միացյալ Նահանգներ)
Միջագետք - 55, 56
Միջերկրական ծով - 12-14, 23, 66, 109, 125, 226
Միջին թաղ (Ջեյթուն) (տե՛ս Սուրենյան թաղ)
Միսիս (Մամեստիա) - 14, 21, 23, 37, 39, 93, 96-100, 113, 301, 316, 322, 445
Մխալ (տե՛ս Ավազկալ)
Մյունխեն - 230
Մյուրֆետ (գյուղ) - 153, 315
Մոպսուեստիա (տե՛ս նաև Միսիս) - 96
Մոսկվա - 333
Մուխ - 23
Մուճուգ-Գերեսի (Հայկական գյուղ) - 167
Մումբիջ (տե՛ս Մունրիջ)
Մունրիջ (Մեմբիջ, Մումբիջ) (Սիրիա) - 25, 26
Մուշեղյան-Արզարյան վարժարան (Ադանա) - 48, 66, 79, 102, 430
Մուսալեռ (տե՛ս Սուեղիա)
Մուսթաֆա փաշայի մզկիթ (Գրրըգխան) - 337
Յակուբիե (Հայկական գյուղ) - 175
Յադ-Ջամի (մզկիթ և թաղ, Ադանա) - 54, 76
Յադըր-Քեոյ (թուրքական գյուղ) - 101
Յադուրյան թաղ (Ջեյթուն) (տե՛ս Գարկըլար)
Յամաղի (Հայկական գյուղ) - 174

Յանրը-Գրչյա (թուրքական գյուղ) - 92
Յանրը-Դեյիրմեն (գյուղ) - 141
Յավր Լֆենդի (ազարակ) - 144
Յարսուվատ (գյուղ) - 121
Յարփուղ (տե՛ս Եփեսոս)
Յենի-Դունիա թաղ (Վերի թաղ, Ջեյթուն) - 159
Յրան-Կալա (տե՛ս Լեռնկա)
Յոզուն-Սուրբ (Հայկական գյուղ) - 177
Յուզբուճյու (գյուղ) - 141
Յուճուրթալը - 23
Նաջարլի - 127, 315
Ներքին Ջորալի (ազարակ) - 144
Նիսի - 171, 172, 174, 209
Նյու Բրիտեյն (ԱՄՆ) - 376
Նյու Հեյվորն (ԱՄՆ) - 383
Նյու Յորք - 7-9, 12, 20, 58, 74, 110, 158, 170, 190, 328, 358, 359, 363, 367-369, 372, 376, 390, 382-385
Նոր Նախիջևան - 25, 54, 125
Շաարանիե (Ադանայի թաղամաս, տե՛ս նաև Թոսրաղա Գալեսի) - 41, 43, 44, 52, 426
Շամախի - 334
Շամպինյի (Ֆրանսիա) - 231
Շար (գյուղ) - 149, 150, 269
Շար-Դերեսի (գյուղ) - 153
Շերեքլի (տե՛ս Շիվիլի)
Շեյխ-Մուրաղ (գյուղ) - 100, 103
Շիլոհ - 370
Շիվիլի (Շերեքլի) (գյուղ) - 166
Շիրակ - 32, 213, 220, 221, 223, 225, 233, 293
Շովրոյան թաղ (Ջեյթուն, տե՛ս Պոզպալիք)
Շուղը - 15

Շվեյցարիա – 226

Որոնդևս (տե՛ս Աասի գետ)
Ույնիա (տե՛ս նաև Զեյթուն) – 9, 17, 106, 111, 157, 159
Ուլու ջամի (մղկիթ, Աղանա) – 38
Ուճաֆիկ-էորա (ազարակ) – 144
Ուրֆա – 25, 155

Չազրլար (տե՛ս Չազր-օղլու)
Չազր-Օղլու (Չազրլար) (Հայկական գյուղ) – 157
Չայր (գյուղ) – 132
Չանազլը (թուրքական գյուղ) – 101
Չանդըրը – 7
Չարչը-Բաչը (չուկա, Մարաչ) – 155
Չարսանջակ – 186
Չարայջոք (Հայկական գյուղ) – 172
Չարուրդաջ (գյուղ) – 166
Չինար (Հայկական գյուղ) – 172
Չյուրյուք-Գոզ (Հայկական գյուղ) – 167
Չոթլու (թուրքական գյուղ) – 101, 141
Չորք-Մարզպան (տե՛ս Դեորթ-Յոլ)
Չուխուր օվա (Դաչտային կիլիկիա) – 12, 24, 74
Չուզուր-Հիսար (տե՛ս Կանչի)
Չուխրասար (տե՛ս Կանչի)

Պայան էֆենդի (ազարակ) – 143
Պաղ Բուչի – 129
Պաղչէ (տե՛ս Բախչե)
Պայաս (տե՛ս Փայաս)
Պառլահոն – 15
Պասիթ (տե՛ս Բասիթ)
Պարսկաստան – 212
Պեռլին (տե՛ս Բեռլին)
Պետերբուրգ (տե՛ս Սանկտ Պետերբուրգ)

Պիեմոնթե – 69
Պիրամուս (տե՛ս Զիհուն)
Պնդուզ (Բանդուզ) – 166
Պողպայիր (Շովրոյան թաղ, Զեյթուն) – 159
Պոնտոս – 13
Պրովիդենս (ԱՄՆ) – 389

Ջահան (տե՛ս Զիհուն)
Ջամս-Նեյուք (գյուղ) – 166
Ջերեյ-Ազրա (լեռ) – 173
Ջերեյ-Բերեթ – 23, 37, 111, 116, 122, 128, 131, 133, 142, 204, 243, 251, 257, 261, 296, 297, 316, 387
Ջերեյ-Մուսա գավառակ (տե՛ս Սուեդիա)
Ջերեյ-Մուսա լեռներ – 174
Ջերեյ-Սեման – 26
Ջերիլ (գյուղ) – 125
Ջեյհան – 23
Ջենովա – 15
Ջիհան (տե՛ս նաև Համիդիե) – 116
Ջիհուն գետ (Ջահան, Պիրամուս) – 23, 81, 82, 94, 96, 100, 122, 320, 445
Ջիսը-Շուդուր – 25, 26, 172, 173

Ռաս-էլ-Սանգիր Հրվանդան – 12
Ռիդինգ (ԱՄՆ) – 368
Ռոդոստո – 292
Ռուճի Հովիտ (Անտիոքի մերձակա) – 8, 169, 175
Ռումելի – 258, 259
Ռումլու (գյուղ) – 146
Ռումկալե (տե՛ս Հոռմկլա)
Ռուսաստան (Ռուսիա) – 74, 80, 121, 203, 212, 225, 332, 334
Ռուսիա (տե՛ս Ռուսաստան)
Սաաթխանե (Հրապարակ, Աղանա) – 43, 76

Սայր Փունար (ազարակ) – 144
Սալչրլար թաղ (Աղանա) – 77
Սալոնիկ (Սելանիկ) – 220, 241, 242, 318, 359, 378
Սայ-Բուռնու (գյուղ) – 140
Սայ-Գեչիտ (գյուղ) – 124, 339, 452
Սանկտ Պետերբուրգ (Պետերբուրգ, Պետրոգրադ) – 10, 12, 219, 313, 333, 412
Սավրանլը (թուրքական գյուղ) – 141
Սարրլար (գյուղակ) – 141, 156
Սարը-Չինար (գյուղ) – 176
Սարը-Մաղ (ազարակ) – 143
Սարուս (տե՛ս Սիհուն)
Սերաստիա – 179, 186, 239, 339
Սելանիկ (տե՛ս Սալոնիկ)
Սելեկիա (Սիլիֆքե) (գյուղ) – 23
«Սելյիթ Պոլ» քոլեջ (ինստիտուտ, Տարսոն) – 107, 108, 363
«Սեն Ժողեֆ» վարժարան (Աղանա) – 312
Սերայ-Ալթըր (չուկա, Մարաչ) – 155
Սիլիֆքե (տե՛ս Սելեկիա)
Սիլիֆքե սուլ (տե՛ս Գեոք սուլ)
Սիհուն գետ (Սարուս) – 23, 47, 65, 66, 69, 75, 81, 82, 146, 320, 353, 443
Սիս – 14, 20, 21, 23-25, 40, 124, 143-145, 152, 164, 181, 398, 401, 444, 450
Սիսուան – 9, 14
Սիրիա – 209
Սկյուտար (Կ. Պոլսի թաղամաս) – 322, 327
Սկևոա – 15, 412
Սոդանջը (գյուղ) – 176
Սուեդիա (Մուսալեռ, Ջերեյ-Մուսա, Սուեդիա, Սվեդիա) – 174, 175, 177, 178, 267, 366
Սուեդի ջրանցք – 18

Սուեյդիա (տե՛ս Սուեդիա)
Սվեդիա (տե՛ս Սուեդիա)
Սուրբ Աստվածածին եկեղեցի (Աղանա) – 58, 435, 482
Սուրբ Երկիր (Պաղեստին) – 380
Սուրբ էջմիածին – 21, 77, 331-335
Սուրբ էջմիածին Հոգևոր ճեմարան – 333
Սուրբ Թագավոր եկեղեցի (Կ. Պոլս) – 279
Սուրբ Կարապետ եկեղեցի (Մարաչ) – 456
Սուրբ Պողոս առաքյալ եկեղեցի (Տարսոն) – 107
Սուրբ Սարգիս լեռ – 149
Սուրբ Ստեփանոս եկեղեցի (Աղանա) – 58, 66, 79, 82, 83, 312, 434
Սուրբ Փրկիչ ազգային Հիվանդանոց (Կ. Պոլս) – 145
Սուրենյան թաղ (Միջին թաղ, Զեյթուն) – 159
Սուրուճ – 25
Ստրասբուրգ – 224
Սև լեռ – 21

Վակըֆ (Հայկական գյուղ) – 177
Վալիդե սուլթան մղկիթ (Աղանա) – 56
Վահկա (Ֆերե) – 16, 23, 153, 318, 395
Վան – 72, 186, 291
Վաչինգտոն – 368
Վասպուրական – 291
Վենետիկ – 7, 15
Վերի թաղ (Զեյթուն) (տե՛ս Յենի-Դունիա թաղ)
Վերին Չորաքլի (ազարակ) – 144
Վերմոնթ (նահանգ, ԱՄՆ) – 376
Վիեննա – 9
Վիկտորիա – 370
Վիչի (Ֆրանսիա) – 330

Տալրոսի լեռնաշղթա – 12, 17, 23, 158, 320, 349
Տարչնուէ (Սերաստիայի նահանգ) – 339
Տարսոն (Տարսուս) – 12, 21-23, 40, 90, 105-109, 183, 267, 273, 311, 315, 316, 321, 322, 360, 362, 363, 365, 370, 376, 379, 453-456, 477, 478, 483
Տարսուս (տե՛ս Տարսոն)
Տարսուս չայ (տե՛ս Կյուղնոս)
Տեմրեք (Հայկական գյուղ) – 167
Տեյի-Քեոյ (գյուղ) – 128, 316
Տէորթ-Եօյ (տե՛ս Դեորթ-Յոյ)
Տէօրթ Եօյ (տե՛ս Դեորթ-Յոյ)
Տիգրանակերտ (տե՛ս նաև Դիարբե-րիք) – 72, 134, 179, 186, 291
Տիգրիս – 13
Տորոնտո – 376
Տրապիզոն – 10

Րակկա (Սիրիա) – 25

Փայաս (Պայաս) – 23, 112, 125, 129, 362
Փարիզ – 9, 33, 70, 187, 202, 203, 216, 218, 221, 222-226, 229, 231, 284, 294, 309, 313, 351
Փննսիվանիա (նահանգ, ԱՄՆ) – 368
Փիրիջիբլի (գյուղ) – 141
Փունար-Քաչը (Հայկական գյուղ) – 167
Փոքր Ասիա – 9, 12, 106, 178, 179, 231, 369, 377, 388, 389

Քասթեմունի – 250
Քերուսիե (Հայկական գյուղ) – 177
Քեղլերեն (գյուղ) – 142
Քեյլեր (գյուղ, տե՛ս նաև Իսլահիե) – 143, 316

Քելչիֆլի (գյուղ) – 157
Քեոզայթ (տե՛ս Գեոզայթ)
Քեոթեքլի (Հայկական գյուղ) – 167
Քեոյօղլուն-Քոչայր (գյուղ) – 125
Քեոր-Ղայս (գյուղ) – 125
Քեորբյունա (Հայկական գյուղ) – 172
Քեօփրյուջեք (ազարակ) – 126
Քեսապ – 8, 168, 172-177, 183, 267, 312, 317, 320, 366, 484
Քեանե (գյուղ) – 142
Քեջմեզ (տե՛ս Գեջմեզ)
Քիթիլի-թաղ (Հայկական գյուղ) – 167
Քիլիս – 25, 26
Քիլիսե-Քեոյ (թուրքական գյուղ) – 101
Քիյիճ (Քիրիչ-Փունար) (գյուղ) – 166
Քինգստոն (Կանադա) – 376
Քիչնազ (գյուղ) – 142
Քիրիչ-Փունար (տե՛ս Քիյիճ)
Քյություքլեր (թուրքական գյուղ) – 101
Քյունեյներ (ազարակ) – 142
Քյուրդ-Քախչեսի (ազարակ) – 142
Քյուրդ-Տալաղըն (գյուղ) – 143
Քուրդիստան – 310
Քրիստիան-Քարիասի (տե՛ս Քրիստիան-Քեոյ)
Քրիստիան-Քեոյ (Քրիստիան-Քարիասի) (գյուղ) – 105

Օզարլի (տե՛ս Էոզերլի)
Օնտարիո (նահանգ, Կանադա) – 376
Օջազը (տե՛ս Օջախը)
Օջախը (Օջազը) – 128
Օսմանիե – 24, 40, 111-113, 115, 116, 301, 315, 451, 453
Օսմանյան Թուրքիա (տե՛ս Օսմանյան կայսրություն)

Օսմանյան կայսրություն (Թուրքիա, Օսմանյան Թուրքիա, «օսմանյան Հայրենիք») – 3, 9-11, 18-20, 22-24, 29-34, 45, 47-49, 72, 87, 109, 146, 178, 179, 210, 212-214, 221, 224, 228, 230, 236, 237, 252, 260, 266, 269, 270, 272-275, 277, 280, 286, 287, 289-292, 297, 310, 314, 354, 361, 363, 365, 370, 376, 380, 381, 384, 385, 388, 389, 420, 439, 490
«Օսմանյան Հայրենիք» (տե՛ս Օսմանյան կայսրություն)
Օվկիանիա – 116
Օրդու (ավան Անտիոքի մոտ) – 172-174, 317, 318

Ֆասըլը (գյուղ) – 125
Ֆաքքի Հասան (թուրքմենարնակ գյուղ) – 317
Ֆեքե (տե՛ս Վահկա)
Ֆնտրճազ – 136, 141, 157
Ֆոոնոս (տե՛ս Ֆրնուզ)
Ֆրանսիա – 15, 74, 121, 131, 175, 202, 209, 226, 227, 229, 231, 334, 338, 479
Ֆրեզնո – 127, 294
Ֆրնուզ (Ֆոոնոս) – 165

Adana (տե՛ս Ադանա)
Armenia (տե՛ս Հայաստան)
Arménia (տե՛ս Հայաստան)
Arménic (տե՛ս Հայաստան)
Asia Minor (տե՛ս Փոքր Ասիա)
Asie (տե՛ս Ասիա)
Asie-Mineure (տե՛ս Փոքր Ասիա)
Cilicie (տե՛ս Կիլիկիա)
Çukurova (տե՛ս Կիլիկիա)
Ermenie (տե՛ս Հայաստան)
Hadjin (տե՛ս Հաճրն)
Istanbul (տե՛ս Կոստանդնուպոլիս)
Lausanne (տե՛ս Լոզան)
London (տե՛ս Լոնդոն)
Orient (տե՛ս Արևելք)
Paris (տե՛ս Փարիզ)
Turquie (տե՛ս Օսմանյան կայսրու-
թյուն)

Адана (տե՛ս Ադանա)
Армения (տե՛ս Հայաստան)
Армянская ССР (տե՛ս Հայկական Սո-
վետական Սոցիալիստական Հան-
րապետություն)
Баку (տե՛ս Բաքու)
Ереван (տե՛ս Երևան)
Закавказье (տե՛ս Անդրկովկաս)
Османская империя (տե՛ս Օսման-
յան կայսրություն)
Петроград (տե՛ս Սանկտ Պետեր-
բուրգ)
Эривань (տե՛ս Երևան)

Շնորհակալություն ենք հայտնում պատ-
մարան և հրապարակախոս **Գևորգ Ցաղրճյա-
նին**՝ Կիլիկիայի թուրքերեն տեղանունների և
անձնանունների մասնագիտական ճշտման,
անգլերեն և թուրքերեն որոշ նյութերի թարգ-
մանության, 3-րդ հավելվածի ծանոթագրման,
ինչպես նաև անձնանունների և տեղանունների
ցանկերը կազմելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՈՒ ՋԱՐԴԵՐԸ ԱԴԱՆԱ ՔԱՂԱՔՈՒՄ	47
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԱԴԱՆԱՅԻ ՎԻԼԱՅԵԹԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՈՒ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ	88
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
ՀԱՅՈՑ ՋԱՐԴԵՐԸ ՀԱԼԵՊԻ ՎԻԼԱՅԵԹՈՒՄ	155
ԳԼՈՒԽ ՋՈՐՐՈՐԴ	
ԱՐՀԱՎԻՐՔԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ	181
ՎԵՐՋԱԲԱՆ.....	356
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	358
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	496
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ.....	501
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ	516

ՀՐԱՋԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ
ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ
(1909 Թ. ԱՊՐԻԼ)**

*Ստորագրված է տպագրության՝ 09.02.2009 թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:
Հրատ. 28.7 մամուլ, տպագր. 27.25 մամուլ + 6 մամուլ ներդիր =
30.92 պայմ. մամուլի: Տպաքանակ՝ 1000: Պատվեր՝ 3:*

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալեք Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արովյան 52